

“ՀԱՄԱԶԳԱՅԻՆ”
ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿԳՈՒԹԻՒՆ



ՄԱՏԵՆՄՇԱՐ “ՀԱՄԱԶԳԱՅԻՆ”
ՊԵՅՐՈՒԹ

ՀԱՅԿԱԶՆ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՑԵՂԱՍԴԱՆ
ԹՈՒՐՔԸ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՊԵՅՐՈՒԹ - 1968

ՀԵՂԻՆԱԿԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

Այս հատորի հեղինակը՝ Հայկազ Ղազարեան մի քանի տասնեակ տարիներ աշխատակից է հայ մամուլի, մասնաւորապէս Ամբարիկայի «Հայրենիք»-ների: Իր գլխաւոր գործը Թուրքիան եւ թուրքը ներկայացնելն է իրական պատկերով — ցեղասպան Թուրքիան եւ ցեղասպան թուրքը — փաստերու եւ բուերու հիման վրայ:

Հեղինակի գործին անցնելուց առաջ՝ ներկայացնենք իր կեանքը իր իսկ խօսքերով, մեր ստիպումով գրուած ինքնակենսագրութիւնը: Ընկ. Ղազարեանը հետեւեալ տեղեկութիւնները հազարդեց մեզ իր կեանքի մասին.

«Ծնած եմ Սեբաստիա քաղաքը Մայիս 20, 1892ին:

Աւարտած եմ տեղւոյն ազգային «Արամեան» վարժարանը:

1907ի աշնան, Հ. Յ. Դ. պատանեկան խումբ մը կազմած ենք, ղեկավարութեամբ ուսուցիչներ՝ Արամ Երանոսեանի, Խաչատուր Կրտումեանի եւ Հայկ Խորիկեանի: Առաջին երկուքը անդամ էին «Սեւ Բլաւր» կեդր. կոմիտէին, որ յետոյ գիտցանք: Մեր խմբապետն էր զինագործ Քրիստափոր Ստեփանեան: Թէ՛ Քրիստափորը, թէ՛ Խաչատուրը եւ թէ՛ Արամը կռուելով հերոսաբար նահատակուած են 1915ին:

Հետեւած եմ փրանսական «Քոլէժ տէ Բառանթ Մարթիո»ի և ապա Կ. Պոլիս հետեւած եմ իրաւաբանական պետական համալսարանին եւ օտար լեզուներու ունիւրն: 1914 Յուլիսին աւարտած եմ եւ մտած եմ Պահեստի Սպայից վարժարանը: Մարզիչ եղած եմ Էտիքնէ: Պատկանած եմ Տրդ կիսաբաժինի: Այդ կիսաբաժինը փնացաւ, բացի 350 հոգիէ, Տարտանելի մէջ: Գերման հրամանատարը՝ Ֆոն Զո-

տեղից կորսնցուց իր սրունքը: Ստույգ մահէ ազատած եմ շնորհիւ անձնուէր ընկերոջ մը:

Գտնուած եմ անգլ. բանակին մէջ 3 տարի: Անգլիական սպաներու հետ եղած եմ Էսֆի-Շեհիր, Աֆիոն Գարահիսար եւ Գոնիա, թուրքերու զինաքափման օրերուն: Թրքական հրացանները լեցուած էին *տեփոն*ներու մէջ, հանուած անոնց *պրիչները* – սիւրկի գոլու –: Քեմալականները *տեփոն*ներու կոնակի պատերը կը ծակէին գիշերանց և կը գողնային հրացանները: Ստիպուեցանք 1920 Մարտի սկիզբը հեռանալ Գոնիայէն, հոն գտնուող իտալական զունդը ֆաշուած էր Ատալիա: Շոգեկառնով իզմիթ հասանք, մեր ետեւէն՝ Պիլեմիֆի շրջանի երկաթուղիի թիւնէլները ֆեմալական պայթեցուցին:

Կ. Պոլսոյ մէջ, հակառակ անգլ. բանակի համագգեստիս, զրկուեցայ անգլ. ծովային հրամանատարութեան կեդրոնը, որ այդ ատեն թրքական ծովային նախարարութեան շէնքին մէջ էր, Գասըմ Փաշա, Վոսիտրի վրայ: Մարմարեայ պալատ մը, որ հայագգի Պալեանները շինած էին:

Ինծի համար աներեւակայելի առիթ մը եղաւ, որ այդտեղ ծանօթանամ կարգ մը փաստաթուղթերու, որոնք կը վերաբերէին հայերու հալածանքին, հայ սպաներու եւ զինուորներու տարագրութեան և սպանութեան, անոնց ընտանիքներու տարագրութեան, պաշտօնեաներու արտաքսման, զինուորականներու կողմէ հայոց տուններու գրաւման եւն., ինչպէս նաեւ միջ-նախարարական շրջաբերականներու: Այդ պարագան կը պարտիմ անգլիացի Պրայմի, որուն հետ կ'աշխատէի: Թրքական «էվրազ-օտասի» (արխիւ) թուղթերը մեր առջեւ էին: Անգլիացիները գլխաւորաբար կը հետաքրքրուէին ծովային պատերազմական գործողութիւններու արձանագրութիւններով, գրահաւորներու, ռազմաթերֆի վերաբերեալ, ինչպէս նաեւ նաւային փոխանցումներով: Զիս լրտեսողն էր Բէուֆ պէյի *եաւերը*, ծովային տեղակալ Նիհատ էֆենտի: Բէուֆ այդ ատեն Քեմալին հետ էր: Նիհատ, անգլիախօս, նեմգամիտ «բարեկամ» մըն էր, որ *լիէզոն օֆիսը*ի պաշտօն կը կատարէր:

Երեք տարի ծառայութեանէ ետք, անգլիացիները, բազմալեզու ըլլալու պատճառով, ուզեցին որ մնամ իրենց մօտ եւ ըլլամ անգլիական հպատակ:

Մեծ եղբայրս ըլլալով Ամերիկա, նախընտրեցի Ամերիկա գալ, քանի որ պատերազմի ատեն մեր ընտանիքը, ծնողք, մեծ ծնողք, 5 եղբայր եւ 1 քույր գոհ գացեր էին թրքական ցեղասպանութեան:

Քանի մը տարի Նիւ Եորք աշխատելէ ետք ամերիկեան ընկե-

րութեան մը մէջ, փոխադրուեցայ Պոսթըն: Եւ «Հայրենիք»ի մէջ եղայ, ուր կը մնամ 30 տարիներէ աւելի, 12 տարի խմբագրութեան եւ միւս տարիները՝ վարչական զանազան բաժիններուն մէջ:

Մարտ 19, 1967 Պոսթըն»

Ինչպէս տեսնում էք, շատ համեստ է ընկ. Հայկազ Ղազարեանի ինքնակենսագրութիւնը: Արտափնով համեստ են ե՛ւ իր գրութիւնները, առաջին հայեացքով՝ աննշան: Բայց ամբողջութեան մէջ՝ ցնցող եւ նշանակալից:

Տասնեակ տարիներ «Հայրենիք»ի մէջ իրար յետեւից լոյս տեսան Հայկազ Ղազարեանի յօդուածները Թուրքիոյ եւ թուրքի մասին, Թուրքիոյ մականի տակ ապրելու դժբախտութիւնը ունեցող քրիստոնէայ ժողովուրդների, մասնաւորապէս հայ ժողովրդի բնաջընջման մասին: Ընթերցողը կարողում եւ անցնում էր, թերեւս առանց յուզուելու: Այժմ երբ այդ գրութիւնները ներկայացուում են մէկ հատորով եւ հայութեան բնաջնջման պատմութիւնը պատկերացուած է փաստերով եւ թուերով, տպաւորութիւնը ահաւոր է: Հայկազ Ղազարեանը առիթ է ունեցել անձամբ ծանօթանալու, իր ձեռքերում ունենալու այն վաւերագրերը, որոնց հիման վրայ, որոշ ծրագրով եւ հետեւողականութեամբ տեղի է ունեցել հայերի բնաջնջումը Թուրքիայում: Իր քիհատը, կատարութիւնը, զօրքը, հոգեւորականութիւնը, թուրք մտաւորականութիւնը, համարեա ամբողջ թուրք ժողովուրդը, մասնակից են եղել հայերի բնաջնջման: Հայկազ Ղազարեանը ցոյց է տալիս — փաստերով եւ թուերով — որ Թուրքիոյ հայութեան բնաջնջումը միայն համաշխարհային պատերազմի հետեւանք էր, — պատերազմը առիթ էր միայն, — այլ պատերազմից առաջ թուրքը որոշել էր բնաջնջել հայերին եւ այդ պատճառով շատ միշտ է հատորիս անունը — «Ցեղասպանութիւնը Թուրքիայում»:

Թուրքը ազգովին ցեղասպան է եւ ազգովին պատասխանատու է ցեղասպանութեան համար:

Կէս դար անցել է Թուրքիոյ հայութեան բնաջնջումից եւ մինչեւ այժմ մէկ թուրք չի գտնուել, որ հրապարակով դատապարտէր գործուած ռեփրները հայերի նկատմամբ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ



ՀԵՂԻՆԱԿԸ

ՀԱՅԿԱԶՆ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՃԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԸ - ԻԹԹԻՀԱՏԸ

«Ճշմարտութիւնը, որքան ալ հողին տակ խորունկ
քաղուի, դարձեալ հողը պատռելով լռյս աշխարհի
կու գայ»:

ԷՄԻԼ ԶՈԼԱ

Թուրքիոյ մէջ իշխանութեան տիրացած Երիտասարդ Թուրքերու ազգայնամոլ եւ այլամերժ շարժումը շարունակութիւնն էր 15էն 18րդ դարերու ենթերիական ոգին, մոլեռանդութեան եւ գործելակերպին, արտաքնապէս շատ շնչին փոփոխութեամբ:

1830ական թուականներէն սկսեալ, Թուրքիոյ ականաւոր վարչապետներէն Բեշիտ Ալի եւ Փուատ փաշաները, թէև ուսեալ անձեր էին, սակայն ո՛րքան զարկացած, նոյնքան ալ՝ մաքիաւելական: Անոնք, Թուրքիա կոչուած «Հիւանդ Մարդ»ը առողջացնելու համար, 1839ին եւ 1856ին (Սուլթան Մեճիտի օրով), երկու խաբքը շերիֆներ (Թագաւորական հրովարտակներ) հրատարակեցին, «քրիստոնեաները իսլամներուն հաւասար» յայտարարելով, ընդդէմ աչքին փոշի փչելու համար: Սակայն մեռեալ տառ մնացին: Իրականութեան մէջ քրիստոնեան նոյն «կեաւոր»ն էր եւ մինչև այսօր ալ Թուրքիա մընացած խլիակները նոյն դրութեան մէջ են, դատապարտուած՝ աստիճանաբար թրքանալու կամ բնաջնջուելու:

Թուրք մակարոյժ պետութիւնը իր կեղեքած տուրքերը ոչ-չինարար նպատակներով մսխած, երկիրը աղքատացուցած եւ սնանկացուցած էր:

Անկողմնակալօրէն քննելով կը տեսնենք որ խալիֆայական՝ միապետական սուլթաններու վարչութիւնները եւ անոնց յաջորդող «սահմանադրական» իթթիհատականներու, քեմալական «միլլիթի»ներու, իսմէթական «խալքճի»ներու եւ ճելալ պայարական «դեմոկրատ»-

ներու վարչութեան մէջ նոյն ողին կը տիրէ, նոյն դազանային արարքները կը կատարուին տարբեր մեթոտներով եւ անուններով, ոչ-թուրք տարբերու գէմ:

19րդ դարու առաջին քառորդէն ետք, որ «թենսիզաթ»ի (վերակազմութեան) շրջան կը կոչուի, մեծարարբառ հրովարտակներու խոստումներով իրր թէ կեանքի, ինչքի եւ պատիւի ապահովութիւն պիտի տրուէր եւ հաւասարութիւն պիտի ըլլար՝ իսլամի եւ քրիստոնեայի միջեւ. ոչ միայն այդ չեղաւ, այլեւ մարդկային ամենատարրական իրաւունքներն իսկ չյարդուեցան, կառավարական անտարբերութեամբ եւ քիւրտ, չեչէն, չերքէզ աւազակներու հարստահարութեամբ: Հայոց Պատրիարքարանը լեցուն էր հարստահարութեանց տեղեկագիրներով:

«Ներտասարդ» կամ «նոր» թուրքեր կոչուածները աւելի թթու ազգայնամոլներ դարձած էին. դառան մորթի տակ իրենց մէջ նստած էր հին դայլը:

Հայ-թուրք փոխյարաբերութեանց ուսումնասիրութեան համար շահեկան է թուրքերու գործադրած կեղեքման մասին տարրական դազափար մը տալ նախ, յիշելով մինչեւ 19րդ դարու կէսը քրիստոնեաներէ եւ հրեաներէ գանձուած տուրքերը, գորս կը քաղենք Հրէական Համայնագիտարանէն (ձուիչ էնսայքրոփետիա):

Սալեանէ տուրք (տարեկան տուրք), օրտու ազչեսի (բանակի համար տուրք), սեսմը-գրսմէք (ժառանգական տուրք), չերախոք ազչեսի (արօտատեղիի տուրք), գագա ազչեսի (կառավարչատան ծախսերու տուրք), գասապ ազչեսի (միսի տուրք), չայիք ազչեսի (թուչնոց տուրք), րապպ ազչեսի (համայնքի - աստուածապաշտական - տուրք), պետէլ կամ պաշ-խարան (գինուորութեանէ գերծ ըլլալու տուրք), ֆելէպ ազչեսի (կայսերական հօտերը սնուցանելու եւ պահելու տուրք), Սուլթանին թղթատարը հոգալու տուրք, Սուլթանին մուշտակը հայթայթելու տուրք եւ տակաւին բերդեր, հանրային շէնքեր, ճամբաներ շինելու աշխատանքներ, նորակոչ գինուորները սնուցանելու պարտաւորութիւն, եւայլն, եւայլն:

19րդ դարու կիսուն, Անդլիա ջանք կը թափէր թուրքեան իր հովանաւորութեան տակ առնելու ընդգէմ Ռուսիոյ: Ոչ-թուրքերու համար բարենորոգման քայլեր առնել տուաւ, որոնք ապարդիւն մընացին:

1870ական թուականներուն, Պալքաններու մէջ գործուած թրքական ճնշումներու, պետական ապիկարութեան եւ ներքին փտութեան հետեւանքով, ապստամբութիւններ ծագեցան: Իրարու ետեւէ կոր-

սուեցան Մորէան (Յունաստանի մէջ), Սերպիան, Ռումանիան, Պոսնիան, Եգիպտոսը, Կիպրոսը, Թեսալիան (Յունաստան), եւլն. եւլն.:

Այդ կորուստներուն ի տես, Երիտասարդ թուրքերուն մէջ շարժում մը ծայր տուած էր, որուն նախակարապետներէն մին էր ճանչցուած Միտհատ փաշան: Այս վերջինը սահմանադրութիւն մը ծրագրեց Գրիգոր Օտեանի եւ այլոց խորհրդակցութեամբ, Նոյ. 27, 1876 թուին. եւ սակայն, Ապտիւլ Համիտի դահակալութենէն վեց ամիս ետք, ջնջուեցաւ Փետր. 15, 1877ին: Այլեւս այդ մասին չխօսուեցաւ մինչեւ Յուլիս 1908:

Սուլթան Ագիզ իրրեւ մսխող վեհապետ վար առնուած էր 1876 Մայիսին եւ Յունիս 4, 1876ին սպաննուած էր Չրազանի պալատին մէջ, յայտարարուելով իրրեւ «անձնասպան»:

Սուլթան Ագիզի չերքէզ թիկնապահը՝ Հասան անունով մէկը, որուն քոյրը Ագիզի «հարձ»երէն մին էր, վեց ատրճանակներով եւ սուրով մը գինուած, առանձինն յարձակած էր Միտհատ փաշայի բնակարանին վրայ, ուր դահլիճի անդամները ժողով կը գումարէին: Հասան նախ գրան առջեւ կեցած պահակը վիրաւորած էր եւ ապա յանկարծակի ժողովարահ մտնելով, սպաննած էր թուրք արտաքին գործոց նախարարը եւ վիրաւորած էր ուրիշ նախարարներ: Հազիւ մի քանիներ փախած էին, լոյսերը մարելու հետեւանքով եւ դուրսէն բերուած զօրախումբի մը միջոցով ձերբակալած էին Հասանը, ապա զայն կախաղան հանած: Այս գէպերուն ընթացքին, Ապտիւլ Համիտէն առաջ, իր մեծ եղբայրը՝ Մուրատ գահ ելած էր, յաջորդելով իր սպաննեալ հօրեղորը՝ Ագիզին, բայց երեք ամիսէն յիմարացած էր եւ Օգոստոս 31, 1876ին գահ բարձրացած էր Ապտիւլ Համիտ: Այդ շրջանին Միտհատ փաշա վարչապետ էր: Համիտ համաձայնելով Նետիմ փաշայի յետաշրջական կողմնակիցներուն հետ, որոնք Միտհատի հակառակ էին, պայտար մղեց Միտհատի եւ միտհատականներուն դէմ եւ պաշտօնանկ ըրաւ Միտհատը: 5 տարի զանազան տեղեր իրր կառավարիչ զրկեց զայն: 1881ին Իզմիրէն ձերբակալելով՝ դատավարութեան ենթակեց Միտհատը 10 ուրիշ փաշաներու ու նախկին նախարարներու հետ եւ մահուան դատապարտեց բոլորը, երեք օրուան մէջ, որպէս սպաննիչներ Սուլթան Ագիզի:

Անգլիական դեսպանը՝ էլիթ, զգուշութեամբ, ոչ-պաշտօնապէս եւ թուրք պետական անձերու հետ խորհրդակցութեամբ, թելադրեց Ապտիւլ Համիտի Միտհատի եւ միւս դատապարտեալներուն պատիժը փոխել ցմահ բանտարկութեան: Միտհատ փաշա աքսորուեցաւ Մեքքէի հարաւը՝ Թայիֆ քաղաքը (Արաբիա), ուրկէ նա-

մականք գրած էր իր աղջկան եւ դաւելին, որոնք իզմիր կը գտնուէին եւ յայտնած էր որ զինք կը հետապնդեն սպաննելու համար: Եւ իրապէս, Լօթը զինուորականներ, 1884ին, խեղդամահ ըրեր էին զայն Արարիոյ մէջ:

Ապտիւլ Համիտ միահեծան տէր դարձած էր: Իր բռնապետական օրերուն, իբր փոխ-վրէժ Պերլինի դաշնագրի բարենորոգման 61րդ յօդուածին, հայերը աւելի ճնշելու համար 80 քապուռ (վաշտ) համիտիներ կազմած էր, քիւրտ, շեչէն, շերքէզ եւ այլ աւազակ տարրերէ:

1880ական թուականներէն սկսեալ Միտհատի համակիր կարգ մը Երիտասարդ Թուրքեր, պաշտօնագրկութեամբ կամ պաղատարական այլ պատճառներով, դժգոհ էին եւ ինքզինքնին անապահով զգալով փախած էին Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսա, Զուլցերիա, որպէս «ազատականներ», հակա-համիտեան դարձած:

Եւրոպական քաղաքներու մէջ անոնք կը հրատարակէին Փրանսերէն պարբերաթերթ մը եւ ուրիշ կարգ մը թուրքերէն թերթեր: Այդ շարժման ղրուխը կեցած էր ԱՀՄԷՏ ՐԻՋԱՆ, որ 13 տարի հրատարակեց ՄԵՇՎԵՐԻԹ (Խորհրդակցութիւն) անունով Փրանսերէն պարբերական մը, Փարիզ, Երբեմն ժրնեւ, Երբեմն Պելճիքա: Կային նաեւ այդ քաղաքներուն մէջ սուկի նման բուսնոզ եւ շուտով դադարող թուրքերէն թերթեր — «Սերպեսթի», «Ալէմ», «Սերվէթ», եւլն.:

Ահմէտ Րիզա Թուրք փաշայի մը աւտորիացի կնոջ խառնածին զաւակն էր: Անցած էր Եւրոպա 1888ին, իր շուրջը հաւաքած իր պաղատարակիցները: Կեդրոնատեղին հաստատած էր Փարիզ, Րիւ Պոնափարթի մէջ, Արուեստից վարժարանին մօտ շէնք մը, եւ Մեշվերթի գուզընթաց կը հրատարակէր թուրքերէն պաշտօնաթերթ մը «Շուրայը Խամէթ» (Ազգ. Խորհուրդներ) անունով: 1908էն յետոյ այդ պաշտօնը կատարեց «Թամիկ»ը Հիւսէյին Ճահիտ (Եալչըն) թթու իթթիհատականին խմբագրապետութեամբ: Երբ թալէաթի սատակը Կ. Պոլիս փոխադրուեցաւ, Ճահիտ մեծ ոճրագործին ղիակին վրայ լացեր էր, ըստ գերման Եթի:

Իրազեկներու գնահատումով, մինչեւ 1908ը, «Իքթիհատ վէթերազգը» (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) կոչուած թուրք կուսակցութեան անդամներուն ընդհանուր թիւը 400ը չէր անցներ:

Փարիզի կեդրոնէն յետոյ, մասնաճիւղ մը հաստատած էին Սելանիկի մէջ, որ 1908էն ետք կուսակցական կեդրոն դարձաւ: Սելանիկ գտնուող անդամները կը մասնակցէին իտալական եւ ֆրանսական Ա-

զատ Որմնադիրներու գաղտնի օթեակներուն:

Իքթիհատական տէօնիները (հաւատափոխները) — Սելանիկի մէջ տեղաւորուած հրեաները իթթիհատի անդամ եղած էին ու անոնք ՏէՕՆՄէներ կը կոչուէին: Ասոնք ժամանակին Սպանիայէն գաղթած հրեաներ էին, իսլամացած, զիրքի եւ զրամի տէր դարձած, Սելանիկ, Էտիրնէ եւ այլ վայրերու մէջ: Ըստ «Աննիւէր Տիւ Իսլամ»ի (էջ 238), անոնք կ'անդամակցէին, իրրեւ իթթիհատականներ, գաղտնի որմնադրական օթեակներուն: Ասոնցմէ ոմանք կը կոչուէին «Իզմիրլի», կ'ածիլէին իրենց կզակը: Կային «Սապաթայի Որդիներ» կոչուածները, որոնք կ'ածիլէին իրենց զլուխը: Կար Յրդ հատուած մը այս տէօնիներուն մէջ, որ կը հետեւէր Օսման Պապա կոչուած լիտըրին: Ասոնք իսլամի կը նմանէին: Արտաքնապէս անոնց սովորութիւններն ունէին, Ուրբաթ օրերը մզկիթ կ'երթային: Ճաւիտ պէլը եւ իթթիհատական ընկերներէն շատերը այս «տէօնի»ներէն էին:

1907 Դեկտ. 27էն 29, Փարիզի մէջ դումարուած ժողովին, Հ. Յ. Դաշնակցութիւն, իթթիհատ եւ Սապահէտի Սպանիացի անդամներուն հետեւեալ պայմաններով համաձայնութիւն մը գոյացուցին.

Ա.— Գահընկեցութիւն Սուլթան Համիտի:

Բ.— Արմատական փոփոխութիւն ներկայ համիտեան վարչաձեւին:

Գ.— Հաստատում ներկայացուցչական վարչաձեւին (խորհրդարանի հաստատում):

Յուլիս 10, 1908 (հ. տ.) Սուլթան Համիտ զիջեցաւ 1876ի Սահմանադրութիւնը վերահաստատելու:

1908 Սեպտեմբերին, իթթիհատի Ընդհանուր ժողովին մէջ, որ գումարուած էր Սելանիկ քաղաքը, Երիտասարդ Թուրքերը որոշեցին ձեռք անցընել վերահաստատուած Սահմանադրութեան Երեսփոխանական ժողովի մեծամասնութեան աթոռները: Նախ պահանջեցին Ապտիւլ Համիտէն, որ Ծերակոյտի անդամներուն 2/3ը քուէներով ընտրուէին, որպէսզի իթթիհատականները կամ անոնց հետեւողները մեծամասնութիւն կազմեն Ծերակոյտին մէջ եւ մնացած 1/3ը միայն նշանակուէր վեհապետին կողմէ:

Ատկէ զատ, Սեպտ. 1908ի այդ Համաժողովին մէջ որոշեցին կարգ մը սկզբունքներ, որոնցմէ շատերը հետագային վատօրէն դըրժեցին:

Այդ որոշումներն էին.— Յարգել 1876ի Սահմանադրութիւնը նոյնութեամբ, որքան ատեն որ փոխուած չէ: Յարգել Ազգային կամ-

քը: Դահլիճը պատասխանատու նկատել Խորհրդարանին առջև: 20 տարեկանները քուչարկու նկատել: Քաղաքական ընկերակցութիւնները թոյլատրել: Ընդարձակել նահանգային վարչական իրաւունքները: Սահմանադրական փոփոխութիւններ կատարել միայն Խորհրդարանի որոշումով: Պաշտօնական լեզուն նկատել թուրքերէնը: Տասը երեսփոխան իրաւունք ունենան սուլթարկելու օրէնքի փոփոխութիւններ: Հաւասարութիւն բոլոր քաղաքացիներուն նոյն իրաւունքով եւ նոյն պարտաւորութիւններով: Զինուորագրել ոչ-իսլամները: Յարգել կրօնական առանձնաշնորհումները: Վերակազմել ծովային եւ ցամաքային ուժերը: Կրճատել զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը: Կանոնադրութիւն պատրաստել զործատէրերու եւ զործաւորներու համար: Կալուածական սեփականութիւնները արձանագրել տոմարներու մէջ կանոնաւոր կերպով: Կրթութիւնը թողուլ ազատ: Թոյլատրել մասնաւոր դպրոցներ: Ազատ թողուլ կրօնական հաստատութիւնները: Երկրագործութեան զարկ տալ: Ընտրութիւնները կատարել ազատօրէն: Ազատութիւն՝ թեկնածու ըլլալու, եւն., եւն.:

Շատ մը նման ոսկեգօծ խօսքերու վրայէն տակաւին երկու տարի շանցած, Իթթիհատը սկսած էր դաւել զաղտնապէս: Քաղաքական կուսակցութիւններու դէմ ոսմագութիւններ եղան, լեզուներու դէմ հալածանք սկսաւ, ընտրութեանց մէջ, ներկայացուցչական սկզբունքին հակառակ, սպառնալիքով արգիլուեցան ընդդիմադիր թեկնածուները: Քրիստոնեաներու դպրոցներու դէմ արգելիքներ յարուցուեցան: Միմիայն Իթթիհատական թեկնածուներու քուչարկելու համար բռնի միջոցներ զործադրուեցան: Կ'ուզէին որ 280 երեսփոխաններուն ճշդ մեծամասնութիւնը թուրք կամ իսլամ ըլլար եւ կամ միայն իրենց զաղափարակիցները ըլլային:

1909 Ապրիլի սկիզբն էր, Ատանայի 2 օր տեւող առաջին ջարդէն 10 օր ետք, Եւրոպական Թուրքիայէն 3 գունդ (ալայ) թուրք զինուորներ բերուեցան Ատանա: Սելանիկի Իթթիհատի Կեդրոնին հրահանգով, ուղղուած Ատանայի Իթթիհատական ակումբի վարչութեան, զինուոր-ջարդարանները քարիւղով հրդեհեցին Ատանայի հայոց տակաւին անվնաս մնացած տունները: Բացի կիներու եւ մանուկներու ջարդէն, հիւանդանոցներն իսկ այրեցին, մէջի հիւանդներով միասին, իրագործելով նաեւ ներքին զործոց նախարար Իթթիհատական Հաճի Ատիլ պէյին եւ իր օղնականին հրահանգը՝ «օտարականներուն խնայեցէք», հասկցնելով թէ միւսները ջարդեցէք: Հաճի Ատիլ պէյ, Էտիրնէի կառավարիչ ըլլալէն առաջ, տարի մը Իթթիհատի

տի ընդհ. քարտուղար եղած էր: Իթթիհատի Սելանիկի կեդրոնին գաղտնի հրահանգը այս էր. «Կարճ ճամբան ընտրեցէք», այսինքն՝ ջարդին պակաս ձգածը զինուորները թող լրացնեն: Ատոր համար 2րդ ջարդը շատ աւելի սարսափելի էր Ապրիլ 12, 1909ին:

1909ի Ապրիլի ան օրերուն, համիտականները Պոլսոյ մէջ շերիաքնի կրօնաւորները եւ զինուորականները կաշառած էին, ջնջելու համար միայն «Կեաւորներուն համար վերահաստատուած Սահմանադրութիւն»ը եւ, 12 օր տեւող խառնակութենէ մը ետք, Իթթիհատը բանակի ուժով իշխանութեան գլուխ եկաւ: Եւ այս անգամ փոխանակ Խորհրդարանի սահմանադրական որոշումներով երկիրը կառավարելու, անցուց 147 առժամեայ կանոնադրութիւններ, որոնց միակ նպատակն էր Իթթիհատի մենատիրութիւնը եւ երկաթեայ վարչութեան մը հաստատումը երկրին ամէն անկիւնները:

Այդ առժամեայ կանոնադրութիւններով ջնջուեցան ընկերակցութիւնները, սեղմումներու ենթարկուեցան քրիստոնեաներու եկեղեցական եւ կրթական հաստատութիւնները:

Ատանայի ամբողջ նահանգին եւ Հալեպի նահանգի հիւսիսային մասին հայկական հատուածը արիւնլուայ ըլլալուն հետեւանքով, Հ. Յ. Դաշնակցութիւնը խզած էր իր յարաբերութիւնը Իթթիհատի հետ: Սակայն նկատի ունենալով եւ անդրադառնալով տիրող ծանր կացութեան, հայութեան սպառնացող ընդհանուր ջարդի մը վտանգին, չարագործները դադարեցին եւ ինքնապաշտպանութեան նպատակով ժամանակ շահելու համար, Հ. Յ. Դաշնակցութիւնը նոր համաձայնութեան մը եկաւ Իթթիհատի հետ 1909 Օգոստոս 24ին (Հ.Տ.) հետեւեալ իմաստով.

«Հայրենիքի ազատութիւնը տպահովելու, անոր հողային եւ քաղաքական ամբողջութիւնը մշտապէս պահպանելու, կարգ մը անձերու մէջ գոյացած թիրիմացութիւնները փարատելու նպատակով, Իթթիհատ եւ Թերապղը կուսակցութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը կատարեալ համաձայնութեան եկան հետեւեալ հիմնական կէտերուն մասին. — Պիտի աշխատին Սահմանադրութիւնը կիրարկել եւ պիտի պայքարին միացած ուժերով, խնայելով ոչ մէկ զոհողութիւն: Յետաջրջական շարժումներու հաւանականութեան դէմ, օրէնքին թոյլատրած բոլոր կարելիութիւններու սահմանին մէջ, պիտի գործեն միասնաբար, հաստատակամութեամբ եւ որոշ ուղղութեամբ: Օսմանեան նուիրական հայրենիքը անջատումէ եւ բաժանումէ զերծ պահելու երկու կողմակերպութեանց միացած գործունէութեան նպատակակէտը ըլլալով, պիտի աշխատին գործնականապէս գրուել հան-

րային կարծիքին մէջ բռնակալ օեթիմէն ժառանգ մնացած այն գրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին:

«Երկու կուսակցութիւնները համաձայն են նահանգային իրաւանց ընդարձակման, որ կ'երաշխաւորէ Օսմանեան ընդհանուր հայրենիքի զարդացումն ու յառաջդիմութիւնը»:

Հետեւեալ յօդուածը, որ շատ յատկանշական է, կը յիշենք իր բնագրով եւ թարգմանութեամբ. անոր համաձայն, թուրքերը նոր Զարդերէ պիտի զուլանային.

«Օսմանը իթթիհատ վէ Թերագզը վէ Դաշնակցութիւն ճեմի-յէթլէրի 31 Մարթ հատիսէսինի վէ Ատանա գըթալը փէճիյէսինի շա-հիտը ինթիպահ քուքարագ, նազարը տըզգաթ վէ իթթիհատլարընը պալատէ մէզգիւր նոգաթը էսասիյէտէն ալըրմամաղա միւլթէրէքէն չալըշաճապար տըր»:

Թարգմանութիւնը.—

«Իթթիհատ վէ Թերագզը եւ (Հ. Յ.) Դաշնակցութիւնը, իբրեւ իրատական նախագգուշացում ընդունելով Մարտ 31ի դէպքը եւ Ատանայի ցաւալի ջարդերը, որոշեցին աշխատիլ ձեռք ձեռքի տուած, վերոյիշեալ հիմնական կէտերու իրագործման համար»:

1910 ՀՈԿՏ. 31ի ԻԹԹԻՀԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Անսպասելի ամենամեծ սրիկայութիւնը տեղի ունեցաւ իթթի-հատի կողմէ: Ստորագրուած նոր համաձայնագրին մեկնը դեռ չէր չորցած, իթթիհատը, 1910 Հոկտ. 31ին, Աւլանիկի մէջ, Ընդհ. Ժողով գումարեց, որ տեւեց 13 օր: Ժամանակադրական տեսակէտով, պատմութեան համար, այդ ժողովի թուականը շատ կարեւոր էր հե-տագայ դէպքերու լուսարանութեան համար: Ժողովին մէջ, կանխա-մտածութեամբ, որոշուած եւ ընդունուած էր բնաջնջման կտրուկ ծրագիր մը: Այդ ժողովին որոշումները հիմը կազմեցին թուրք կա-ռավարութեան ցեղասպանական հետագայ քաղաքականութեան՝ զին-ուորական բռնի ուժով բնաջնջ ընելու ոչ-թուրք տարրերը, թուրք միաձոյլ պետութիւն մը հաստատելու համար: Այդ եղած է ուղղու-թիւնը նաեւ հետագային քեմալականներուն, «հալքեծի»ներուն և «դե-մոկրատ թուրք»ներուն:

Իթթիհատի 1910 Նոյեմբերի այս գաղտնի ժողովին հետեւանքը եղաւ սաստկացում օտար դպրոցներու վրայ թրքական հակալուծի, հալածանք ոչ-թուրք լիզուներու դէմ: Մէկ խօսքով չափեր ձեւեր էին

«Թուրքիան միայն թուրքերուն համար» սկզբունք մը: Այդ մտադրու-թիւնները արձանագրուած էին 1913 Յուլիսին յարուցուած հայկական բարենորոգումներու բանակցութիւններէն երկուք ու կէս տարի ա-ռաջ:

Իթթիհատի 1910ի այդ ժողովին մասնակցած էին չարաշուք անձեր.— Ահմէտ Աղայեւ, որ իր սեւ գործերով ծանօթ էր Կովկասի մէջ, տըթ. Բուսուլի, Նազըմ Զիա Կէօք Ալի, Պէհաէտտին Շաքիր, Ճահիտ, Թալէաթ, Հաճի Ատիլ եւ նմանները:

Այս ընդհանուր ժողովին մէջ ընտրուած էր 7 հոդինոց դաղտ-նի Կեզը. Կոմիտէ մը: Յետոյ ատոնց թիւը բարձրացուցին 14ի, բոլո-րովին գաղտնի անդամներ: Ատոնք բնաջնջումի արիւնարբու զինուո-րականներ կամ քաղաքային պետեր էին: Այդ ժողովին մէջ հետե-ւալ երդումը ընել տուած էին ժողովականներուն.—

1.— Պատուոյս եւ կրօնիս վրայ կ'երդնում, որ ուրիշ կուսակ-ցութեան պիտի չսպասուանիմ:

2.— Որ գաղտնի որոշումները դուրս պիտի չտամ ոեւէ մէ-կուն, որ անդամ չէ:

3.— Պիտի գործեմ Կոմիտէի որոշումներուն համաձայն:

4.— Պիտի չդաւաճանեմ Կոմիտէին եւ պիտի սպաննեմ ան, որ դաւաճանած է Կոմիտէին կամ կը հակառակի անոր ծրագրերուն:

5.— Այն պարագային, երբ այս պաշտօնական խոստումը չեմ կատարեր, այժմէն իսկ արիւնս կու տամ, որ պատժուիմ Կոմիտէին կողմէ մահապատիժով, Կոմիտէի անդամները ո'ւր որ գտնեն զիս (տես «ՄԻՇՐՈՒԹԻՅԷԹ», Մարտ, 1912):

1914-18 արիւնահեղ թրքական ներքին քաղաքականութիւնը շարունակութիւնն էր 1910 նոյեմբերեան գաղտնի ժողովի դաւաճա-նական աշխատանքներուն:

Երեսփոխանական ժողովին մէջ, վիճարանութեանց մասին իթ-թիհատի այս գաղտնի ժողովը որոշած էր որ «Որհնորդարան բերուե-լիք հարցերու պարագային, միմիայն որոշուած քանի մը անձեր պի-տի արտայայտուին», իսկ միւս իթթիհատական երեսփոխանները մի-այն պիտի ձայնակցէին:

1910 Նոյեմբերին հետապնդուած այս չարաշուք ու դաւադիր քաղաքականութեանց զուգընթաց, Զարդեր տեղի ունեցան Պալքաննե-րու մէջ, Իւսքիւպ, Քումանովա, Քոչանա, Մանասթըր եւ այլ վայ-րեր աւելի քան 2,000 հոգի սպաննուեցան, բացի 5,000է աւելի վի-րաւորներէն:

Իթթիհատը, պետութեան մէջ ինքզինք բռնի ուժով զօրացնե-

լու համար, խրաքանչիւր քաղաքային պաշտօնեայի պարտադրած էր իթթիհատական ըլլալ, եթէ կ'ուզէր իր պաշտօնը պահել:

1908ի Սահմանադրութեան սկզբնական օրերուն, իթթիհատի անդամներուն թիւը 400ը չէր անցներ. 1914ին այդ թիւը հասաւ 350·000ի, մէջը հաշուելով բոլոր անդամաւորուած զինուորականները եւ քաղաքային պաշտօնեաները, որոնց հետ կային նաեւ էջրաֆներ, պէյեր, նախկին համիտական անձեր:

Պալքանեան երկիրներէն բերուած եւ քրիստոնեաներու դէմ բռնուած ատելութեամբ լեցուած 5·000 թուրք ոստիկաններ, ոստիկանապետներ եւ աստիճանակիր զանազան զինուորականներ տեղաւորուեցան նախ հայկական նահանգներու հայաշատ կեդրոններուն մէջ, որոնք յետոյ դարձան զործիքները եւ զործակալները ցեղասպանութեան պետական հսկայական ծրագրին:

Օսմանեան կայսրութեան մէջ թուրքերը մեծամասնութիւն չէին կազմեր, բայց բանակը իրենց ձեռքին մէջ էր: Երբ պատահեցաւ որ Երեսփոխանական Ժողովին մէջ ընդդիմախօսութիւններ ըլլան իրենց դէմ, երկու անգամ լուծեցին Երեսփոխանական Ժողովը եւ նոր ընտրութեանց մէջ անտեսեցին բոլորովին համեմատական ներկայացուցչական խոստումը: Գաղտնի կերպով իթթիհատի Կեդրոնը իր ակումբներուն կը հրահանուէր որ միայն իր թեկնածուները կամ համակիրները յաջողցնեն:

Ահմէտ Բիլգա Երեսփոխանական Ժողովի ատենապետ եղած էր: Տասնեակ տարիներ Եւրոպա բնակած: 1915 եւ 1916ի մեծ ջարդերու օրերուն, ան եղած էր ծերակուտական եւ իրեն յաջորդած էր Երեսփ. Ժողովին մէջ հաստատուող Խալիլ պէյը, որ կարճ ժամանակով 1915 Հոկտ.ին եղած էր արտ. զործոց նախարար: Խալիլ պէյ կեղծաւորութեամբ խոստովանած է որ «անարդարութիւններ գործած են հայերուն դէմ»:

Ահմէտ Բիլգա Փարիզի մէջ եղած ատեն իր շուրջ հաւաքած էր թուրք պաշտօնեաներ, զբաղէտներ, զինուորականներ եւ փրոֆեսօրներ, եւ ինքն ալ անոնց նախագահն էր: Այդ «զարգացեալ» թուրքերը, երբ իշխանութեան զլուխ եկան, շուտով մոռցան իրենց փայփայած «ազատական» գաղափարները:

Ահմէտ Բիլգա իր «Լա Քոիդ տ'Օրիան» երկին մէջ (էջ 147) կը գրէ, որ «ինք հպարտ է թուրք ծնած ըլլալուն համար եւ չի փնտրեր իր երջանկութիւնը ուրիշներուն դժբախտութեան մէջ»: Սակայն, երբ տակաւին Եւրոպա կը գտնուէր, շնականօրէն կը ջանար ուրանալ 1894-

95ի ջարդերը, թէեւ արտաքնապէս կեղծաւորարար հայերուն ցաւակցութիւն կը յայտնէր, իրենց ենթարկուած աղէտներուն համար:

Ահմէտ Բիլգա, իրրեւ իթթիհատի ղեկավար թուրք, կը նախանձէր հայերուն եւ յոյներուն վրայ եւ կ'ըսէր, թէ անոնք համայնքներ կազմած են ղեմակրատիկ ձեւով եւ կը յառաջդիմեն, մինչ թուրքերը ամէն ինչ իրենց պետութենէն միայն կը սպասեն եւ ետ մնացած են:

Ան անպիտանալ կը ձեւացնէր երկրին փտութիւնը, որ առաջ եկած էր թուրքերու ծուլութենէն, ոստիկանութեան, դատարաններու եւ պաշտօնեաներու ճրիակերութենէն, նոյնիսկ «սահմանադրական» կոչուած իր շրջանին:

1908ի Սահմանադրութենէն առաջ եղած քանի մը հարիւր իթթիհատականները, զինուորականներ, խոճաներ, փաթթոցաւորներ Պալքաններու մէջ ինքզինքնին զաղտնի պահելու համար կը մասնակցէին Ազատ Որմնադիրներու «Մակեդոնիա», «Բիզորթա», «Լէյպըր», «Լիւքս» խտալական օթեակներուն եւ «Վերթիթաս» Փրոնսական օթեակին, «Փերսեկերանցա» սպանական օթեակին, նոյնիսկ յունական «Ճիլիփոս» օթեակին: Իսկ 1908ի Սահմանադրութեան հռչակումէն ետք, Պալքաններու եւ Փոքր Ասիոյ զխաւոր քաղաքներուն մէջ իթթիհատականները բացին ակումբներ, կուսակցութիւնը վարչական բաժանումներու ենթարկեցին գաղաներու, սանձազներու եւ վիլայէթներու մէջ, ընտրելով տեղական վարչութիւններ: Միայն վիլայէթներու կեդրոնական մարմիններն էին որ կը հաղորդակցէին Ընդհ. Կեդրոնին հետ: Նահանգներէն երկուքական հոգի կը մասնակցէին Ընդհ. Ժողովին: Գաղաներու (դաւառակ) եւ սանձազներու (գաւառ) տեղական մարմինները նահանգային մարմին հետ կապ կը պահէին:

Կուսակցութենէն ներս ընդունուած էին ամէն տեսակ խայտաբղէտ անձեր, օգտագործելու նպատակով էջրաֆները, պէյերը, հին ռեթիմի անձերը, աննկարագիր, ստորին դասակարգի տարրերը, թիւ, ազդեցութիւն եւ ժողովրդականութիւն ձեռք բերելու համար: Անդամներէն անդամատուրք կը դանձէին իրենց շահած դրամին կամ ամսականներուն 2 առ հարիւրը:

1910ին անդամատուրք գանձեր էին 500·000 ոսկի (2·500·000 տոլար), 350·000 անդամներէ:

1910 Նոյ. 1-13ին, երբ որոշուեցան ցեղասպանութեան նպատակները կուսակցութեան գաղտնի ժողովներուն մէջ, ամէն ջանք թափեցին իրենց հակակշիռին տակ առնելու եւ ընդդիմադիրները լըռեցնելու համար:

Որոշեցին նաև նախ մուհաճիւրներ զետեղել հայաբնակ վայրերու մէջ կամ մօտիկ վայրեր:

1911ի առաջին եռամսեային, երբ ջարդեր տեղի ունեցան Պալքաններու մէջ, Իթթիհատի ազդեցիկ անդամներէն Թալէաթը քընուութեան համար զրկեցին, «դարման մը գտնելու համար»: Խնդրէն դուրս եկաւ, որ ան ոչ թէ յանցաւորները երեւան հանելու գացեր էր, այլ գացեր էր քաջալերելու նախորդ ջարդարար զինուորականները եւ նոր ջարդարարներ կազմակերպելու (նոյն ոճրագործ Թալէաթն էր որ 4 տարի ետք, 1915ի աշնան անձամբ այցելած էր Անատոլուի քաղաքները, նահատակաց վայրերը անձամբ ստուգելու):

Ինչպէրու բերումով 1911 Հոկտեմբերին Իթթիհատի Ընդհանուր Կեդրոնը փոխադրուեցաւ Սելանիկէն Կ. Պոլիս:

Եւ 1912ին, զերման «ԼՈՐԸԼԱՅ» պահականաւով, Իթթիհատի որոշումով, Ապտիւլ Համիտը իր չորս կիներով փոխադրեցին Կ. Պոլիս, արգելափակելով զայն Վոսիորի վրայ, Պէյլէր Պէյի պալատին մէջ, մինչեւ իր մահը: Երկուրդի մեծ մարդասպանը երեքուկէս տարի մնացած էր Սելանիկ (Մայիս 1909էն մինչեւ Նոյեմբեր 1912): Պատերազմի ատեն էր, որ մեռաւ Պոլսոյ մէջ, ու թաղման միջոցին Թալէաթը վրան լացեր էր. ինչո՞ւ է, ջարդարարութեան վարպետը կամ արհեստակիցը եղած էր:

Իթթիհատ կուսակցութեան ուղղութիւնը պատրաստողները քառասուն գլխաւոր անձեր էին, գրեթէ հաւասար հեղինակութեամբ: Իթթիհատի այդ կեդրոնական գլուխը կը նմանէր բազմազլխեան Հիդրայի մը, տեսակ մը Լերն-Վիչապ, 40 օձազլուխներով, որ ամէն ընդդիմութիւն ոճիր կը նկատէր եւ կը չքացնէր: Նախապէս լայնամտութիւն կեղծող այդ շէֆերը դարձած էին նենգամիտ, բռնակալ, ուրացող իրենց ստորագրութիւնները եւ մահուան սպառնալիքով լռեցընող իրենց հակառակորդները: Հակառակ անոր, որ Օսմանեան կայսրութեան մէջ թուրք ցեղին թիւը մօտ հարիւրին 25ն էր, անոնք փոխանակ «միութիւն եւ յառաջդիմութիւն» քարոզելու, միակերպութիւն, ձուլում ջատագովեցին՝ դառնալով ամբողջատիրական:

Իտալական եւ Պալքանեան պատերազմներու եւ ձախողութիւններու պատճառով, Իթթիհատը Երեսէ ինկած էր: Բայց անոնք աւելի կատրած վիճակով սպանութիւններ գործեցին եւ նորէն իշխանութեան գլուխ եկան: Սարսափի մատնեցին վարչապետ Քեամիլ փաշան եւ նախարարները եւ Յունուար 9, 1913ին սպաննեցին պատերազմական նախարար չերքէյ Նազըմ փաշան, որ Փրանսական Սէն-Սիլ

զինուորական վարժարանէն ելած էր: Այս Նազըմը Երեսիփոխան Վարդէգէսի նախկին բարեկամն էր:

1913ի Յունուարէն քիչ առաջ Նազըմ փաշա Պալքանեան պատերազմի պարտութիւնը վերագրեր էր զերման մարզիչներուն անփութութեան եւ ապիկարութեան եւ երբ զերման բարձրաստիճան զինուորականներ զինք տեսնելու եկեր էին, մերժեք էր ընդունիլ: Ատիկա արժեց իր կեանքը:

Իթթիհատը ոճիրով իշխանութեան բացարձակ տէր ըլլալէ ետք, իր փողը փչող մակարոյժ պաշտօնեաններով լեցուց կառավարական բոլոր պաշտօնատուները: Գաղտնի գործակալներ եւ լիազօրներ փութացուց Անատոլու եւ հայկական նահանգները, առեւտրական պոյքոթներ կազմակերպելու եւ քրիստոնէաներու դէմ գրգռելու թըրքութիւնը:

Ի՞նչ էր Նաճի Կեդր. Անատոլու զրկուած էր, Մուսթաֆա Նեճիպ Սեւ ծովու եղերքները կազմակերպած էր, Մուսամէր Փոքր Հայքի շրջանի լիազօր էր եւ տոքթ. Նազըմ ընդհ. լիազօր եղած էր Փոքր Ասիոյ:

Իթթիհատի Կեդրոնի գաղտնի ժողովներուն մասնակցած են նախարարներու կարգին Էնվերի հօրեղբայրը՝ Պալիլ, զօր. Նայիմ ձեւատ, Թոփալ Իսմայիլ Հազըր փաշա, Պէհաէտտին Շաքիր եւլն. բոլորը ոճրագործ բորենատիպ արարածներ:

1914 Յուլիսէն ետք, հայոց ճակատագրին դժբախտ ազդակը եղաւ թուրք եւ զերման զինուորական գաղտնի զինակցութիւնը, որուն կարեւոր բնապիրը կու տանք քիչ վերջ, եւ որ կնքուած էր Օդոստ. 2, 1914ին, եւ որուն հետեւանքով 8 օր ետք զերմանական երկու զրահաւորներ գաղտնորէն Տարտանէլէն ներս անցած էին: Այդ եղաւ առաջին չարաշուք ազդակը: Երկրորդ, Տարտանէլի ցամաքահանման անյաջող ելքը, որ աւելի զրգռեց Իթթիհատի ջարդարարները, եւ ուրիշ դժբախտութիւն մը՝ 1914 Դեկտ.ի վերջը, Սարըղամիշի մէջ ռուս բանակները, հակառակ իրենց յաջողութեան, որով գրեթէ ջնջեր էին թրքական Լրեք բանակներ, նահանջելով պարբերաբար, հայ անդէն ժողովուրդը լքեր էին թրքական գայլին բերանը:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԹՈՒՐԿ ԲԱՆԱԿԻՆ ՄԵՁ

Իթթիհատի Սելանիկի համաժողովէն որոշուած եւ ապա թըրքական Փարլամենթէն վաւերացուած քրիստոնէաներու զինուորագրութեան բուն նպատակը, հայրենիքի սահմաններու պաշտպանութե-

նէն աւելի, ոչ-թուրք զինուորները բանակին մէջ հակակշիռի տակ առնելն էր, զիւրացնելու համար անոնց ապագայ բնաջնջումը՝ զինուորական միջոցներով:

Համաշխարհային Ա. պատերազմի ատեն քրիստոնեաներէն կազմուած էին 120 զինուորական գործաւորական վաշտեր (թապուռ), մեծ մասը հայերէ բաղկացած, ըստ արձանագրութեան մարաշխտ Փոմիաքովսքիի, որ աւստրեւհունդարական զինուորական կցորդ եղած էր Կ. Պոլսոյ մէջ 10 տարի: Այդ քրիստոնեայ զինուորները անգէն էին եւ յատկացուած բեռնակրական կամ շինութեանց աշխատանքներուն եւ ապա այդ չարաչար աշխատութեամբ հաւատարմորէն ծառայող բանակի հայ զինուորները վատորէն եւ դաւադրութեամբ սպաննուած էին զանազան զաղտնի վայրերու մէջ: Ատոնց համար է որ ականաւոր անւելիացի պատմիչ եւ մեծ հեղինակ Արնոլտ Ճոզէֆ Թոյնպի կը գրէ, որ «հայ զինուորներու այդ տմարդի ջարդը, թուրք զինուորական և քաղաքային իշխանութեանց գործակցութեամբ եւ միջոցներով, աշխարհի ոճիրներուն ամենէն շնականը, ամենաստորինը եւ ամենավատթարագոյնն է»:

Իթթիհատի կազմած զաղտնի քաղաքական ծրարքին գործադրութեան աշխատողներէն մին եղած էր հին-աղուէս զինուորական Իամէթը, որ յետոյ Ինչօնիւ անունը առաւ: Ան 1907ին Իթթիհատի զաղտնի ճիւղի մը պետը եղած էր էտիրնէի մէջ (թրքական երկրորդ բանակին շրջանին մէջ): Պատերազմի տարիներուն եղած էր Էնվերի խորհրդականը. Լօղանի շարաշուք զաշնադրին կնքման օրերուն, Քեմալի վարչապետն էր, իրեն հետ ընկերակից ունենալով ուրիշ անհնաւայտիսք մը՝ տոքթ. Բիզա Նուր ըսուածը:

Իամէթի նախագահութեան շրջանին ան, որպէս «Հալք»ի ղեկավար, նոյն հալածողական քաղաքականութեան հետեւած էր, ինչ որ այսօր երեսուն տարի իթթիհատական եղող ձեւով Պայարը, որ դեմոկրատի «չապիկ» հալած նոյն աղպանամոլ եւ զիշակեր հակումներով կը գործէր: Իր նախկին արտաքին գործոց նախարարը՝ Ֆուատ Քէօպիւրիլու, «պատմագէտ», «քաղաքագէտ» եւլն. եւլն., նախկին իթթիհատական մըն է եւ Իգմիլի մէջ այդ կուսակցութեան քարտուղարը եղած էր: Ասոնցմէ եւ ոչ մէկը իր իթթիհատականի շնական ըմբռնումներէն հրաժարած է:

Իթթիհատը բանակի ուժով եւ ատելավառ մոլեռանդութեամբ կառավարութիւն եւ պետութիւն մը եղաւ, նման ստալինականներուն, օգտուելու պատերազմի պատեհութենէն, անճիտելու հայ ազգը եւ ընկճելու համար ոչ-թուրք բոլոր տարրերը:

Այդ քաղաքականութեան ղուգահեռ էր Գերմանիոյ քաղաքականութիւնը, որ կը ձգտէր ամէն միջոցով զօրացնել Թուրքիան (տես Տի Կոստէ Փոլիթիք, հատոր 38, Պերլին, 1923-1927):

Գերմանիա, յանձին Դեսպան Վանկենհայմի, զիմեց ամէն միջոցի թուրքը սիրաշահելու, շոյելու, 1913 Յուլիսին հայկական բարենորոգումները ձախողեցնելու: Գերման զինուորական յանձնախումբով Թուրքիան ռազմունակ դարձուց, չփացուց զայն եւ անոր ապագայ մեծութեան համար առատ-առատ խոստումներ շոյելլէ:

1914 Յուլիսի վերջը, երբ անգլիւզերման և Ֆրանքեւզերման պատերազմը պայթեցաւ, թուրք-գերման զինակցութեան բանակցութիւնները փութացուեցան, Իթթիհատի ղեկավարներէն Էնվերի եւ դեսպան Վանկենհայմի միջեւ եւ յանգեցան զինուորական զաղտնի դաշնագրի մը:

Գերման և թուրք այս զաղտնի զինակցութիւնը կը բաղկանայ հետեւեալ 8 յօդուածներէն, որ ստորագրուեցան Կ. Պոլսոյ մէջ Օգոստոս 2, 1914ին. կը քաղենք զայն գերման պետական փաստաթուղթերէն (*), որուն ամբողջական բնագիրը Ֆրանսական կամ անգլիական հրատարակութիւններու մէջ չկայ:—

1.— Երկու պայմանագիր պետութիւնները յանձն կ'առնեն բացարձակ չէզոքութիւն պահել աւստրեւհունդար և Սերպիոյ վէճին մէջ:

2.— Այն պարագային, երբ Ռուսիա կը միջամտէ զինուորական գործօն միջոցներով եւ Գերմանիա կը ստիպուի պաշտպանել Աւստրո-Հունդարիան, քաղաք Փէօտերիսի պայմանով, այսինքն եթէ յարձակում կրէ, նոյն այդ պայմանները հաւասարապէս ի զօրու պիտի ըլլան Թուրքիոյ նկատմամբ ալ:

3.— Պատերազմի պարագային, գերման զինուորական յանձնախումբը պիտի մնայ Թուրքիոյ տրամադրութեան տակ: Թուրքիա կ'երաշխարհէ, որ այդ զինուորական յանձնախումբը գորաւոր ազդեցութիւն պիտի ունենայ քրքական բանակի ընդհանուր ղեկավարութեան գործին մէջ, համաձայն պատերազմական նախարարի եւ գերման զինուորական յանձնախումբի պետին միջեւ եղած համաձայնագրին:

4.— Գերմանիա յանձն կ'առնէ գէնքով պաշտպանել օսմանեան հողամասերը այն պարագային, երբ սպառնալիքի տակ գտնուին:

5.— Այս համաձայնագիրը կնքուած է երկու կայսրութեանց

(*) Ռայխս' Արշիւ:

միջազգային դժուարութիւններու պարագային զիրար երաշխաւորելու համար և ի զօրու պիտի ըլլայ ստորագրուած թուականէն սկսեալ, եւ այս փոխադարձ պարտականութիւնները պիտի տեւեն մինչև Դեկտեմբեր 31, 1918:

6.— Այն պարագային, երբ այդ թուականէն վեց ամիս առաջ որեւէ կողմ չէ ժխտած շարունակութիւնը, այս զինակցութիւնը պիտի շարունակուի յաջորդ ՀԻՆԳ ՏԱՐՈՒԱՆ համար եւս (*):

7.— Ներկայ դաշնագիրը պիտի հաստատուի Գերմանիոյ կայսեր եւ օսմանեան կայսեր կողմէ եւ վաւերացուած պատճէնները պիտի փոխանակուին մէկ ամսուան ընթացքին, ստորագրուած թուականէն սկսեալ:

8.— Այս զինակցութիւնը գաղտնի պիտի մնայ եւ պիտի չհրատարակուի, առանց երկու պայմանագիր պետութեանց համաձայնութեան:

Ստորագրուած՝
Գերման Գեապան Ֆոն ՎԱՆԿԵՆՀԱՅՄ
Թուրքիոյ Վարչապետ ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄ

Այս դաշնագրին ստորագրութենէն 8 օր ետք, Տարտանելէն գաղտագողի ներս մտան գերման երկու զրահաւորները, «Կէօպլըն» եւ Պրեպլաու»։ Էնվէր, Հոկտ. 14, 1914ի ուսուցիչութիւնը պատերազմի սկսելէն առաջ, երեք անգամ փորձեց ժամ առաջ պատերազմի մտնել, մասնաւորապէս Ռուսիոյ դէմ: Թանենպերկի մէջ ուսուցանող պարտութենէն ետք, Օգոստոս 29, 1914ին սակայն յաջող անցաւ իր փորձը, որովհետեւ պայքար բացուեցաւ դահլիճին մէջ, համաձայնական դեպքներու բողոքին վրայ: Էնվերի կողմնակից էր, սկիզբէն, միայն Թալէաթը. ձեւաւ մինչև Հոկտ. 15 չէր զրքութեան դերին մէջ էր: Պատերազմի հակառակ էին Ռուսիոյ Մարտիկեան եւ Սուլէյման էլ Պուսթանի, վարչապետը եւ միւս նախարարները կը տատանէին: Սեպտեմբեր 8ին, Թալէաթ քափիքիւլախոնները եւ Պերլինի դաշնագիրը ջնջուած յայտարարեց, Սեպտ. 16ին դահլիճի մէջ դարձեալ վէճ եղաւ եւ կ'ուզուէր որ Սեպտ. 19ին գերման զրահաւորները յանկարծակի Սև ծով մտնէին՝ հարուածելու համար Ռուսիան: (Մանրամասնութիւնը տեսնել գերման արխիւներու եւ գերման դեսպանի հետագիրներուն մէջ): Հոկտ. 9ին, Յրդ անգամ ըլլալով, էնվեր եւ

(*) Քեմալի օրով այս գաղտնի զինակցութիւնը ի գօրու էր, երբ Քեմալի սպայակոյտին մէջ կային գերման ծպտեալ զինուորակազմեր, իբրեւ գործակցողներ:

Թալէաթ, ըլլալով հանդերձ փոքրամասնութիւն, իրենց կողմը առերէին, բացի հրաժարող նախարարներէն, միւս նախարարները եւ էնվէր Հոկտ. 9ին (հ. տ.) հետեւեալ հետագիրը զրկած է գերման մեծ սպայակոյտին՝ զօրավար Ֆոն Մուլթի անունով:

«Թրքական հարուածող ոյժերը հրահանգ ստացած են հետեւեալ քայլերը առնելու իրրեւ նախապատրաստութիւն.—

1.— Նաւատորմը առանց պատերազմ յայտարարելու պիտի յարձակի ուսական նաւատորմին վրայ, Սև ծովի շրջանին մէջ զերակայութիւն ձեռք բերելու համար: Յարձակման վայրկեանը թողուած է ծովակալ Ջուխուի դատողութեան: Ռուսիոյ դէմ պատերազմի յաջող սկզբնաւորութենէն ետք, Նորին Վեհափառութիւն Սուլթանը Սուրբ Պատերազմ (Ճիհատ) պիտի յայտարարէ Թուրքիոյ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ թշնամիներուն դէմ:

2.— Թուրք բանակը, որ Հայաստանի մէջ կը գտնուի, ամուր կերպով պիտի զարնէ Անդրկովկաս գտնուող ուսական ուժերուն:

3.— Տրդ բանակը, ի հարկին՝ 12րդ բանակին հետ, Եգիպտոս պիտի երթայ, թէեւ վեց շաբաթէն առաջ սահմանազուլու չի կրնար հասնիլ:

4.— Երբ Պուլկարիոյ հետ համաձայնութիւն պոյանայ, Թուրք ոյժերը Պուլկարիոյ հետ Սերպիոյ վրայ պիտի յարձակին: Այս շարժումին նպատակներէն մին ալ է սպիկ Ռումանիոյ եւ Յունաստանի վրայ:

5.— Եթէ Ռումանիա մէջի հետ ըլլայ, Թրքական զլխաւոր ոյժերը, Ռումանիոյ բանակին հետ, պիտի արշաւեն Ռուսիա:

6.— Պատրաստութիւններ կ'ըլլան Յէն 4 բանակներ Օտեսա ցամաք հանելու, ծովային գերակայութիւնը ապահովելու... (ծածկագիր քիւեր). զինուորական ժամկէտը կախում ունի... գերման եւ Աւստրիական յարձակման յառաջացումէն:

Կը ինդրեմ որ Պալքանեան երկիրները միացուին Գերմանիոյ, Աւստրիոյ եւ Թուրքիոյ, անոնք որոնք զեռ միացուած չեն: Գերմանիա ամէն միջոց պործածելով պէտք է փութացնէ ատիկա: Մինչ այդ, Թրքական զինուորական զլխաւոր ոյժերը կը սպասեն Թրակիոյ մէջ, Մարմարայի եղերքները եւ 10րդ բանակը կը մնայ Սամսոնի մօտերը:

Այն պարագային, երբ Պալքանեան պետութիւնները թշնամական դիրք բռնեն, զարնել Պուլկարիոյ:

Թրքական բանակի պատերազմական գործողութիւններուն եւ

ուժերուն մասին այստեղի գերման գինուորական կցորդը ամէն տեղեկութիւն արդէն ստացած է:

Մեր այս նպատակներուն Ձեր համաձայնութիւնը իմացանել:
Ստորագրուած՝
Փոխ-վերին հրամանատար Էնվէր

Էնվէր նոյն ժամանակ, առանց սպասելու իր հեռագրին պատասխանին, հետեւեալ յարձակողականի հրամանը արդէն արձակած է, զոր կը քաղենք գերման ՄԱՌԻՆԷ-ԱՌԽԻԻԷՆ(*) (ծովային զոր-ծողութեանց թղթածրարէն):

Կ. Պոլիս, Հոկտ. 9/22, 1914
ԳԱՂՏՆԻ

«Մեծ Բանակատեղիէն՝

Նաւատորմի հրամանատար ծովակալ Ջուխոնին.

Թրքական նաւատորմը պէտք է Սեւ ծովի վրայ գերակայութիւն ունենայ: Փնտուկէք ուսական նաւատորմը, յարձակեցէ՛ք անոր վրայ ո՛ւր որ գտնէք, առանց պատերազմի յայտարարութեան:

Էնվէր»

Էնվերի այս քայլը կը յիշեցնէ ճափոնցիներուն Փըրլ Հարպըրի վրայ ըրած նման նենգամիտ, գաղտագողի ծանօթ յարձակումը, որ ըրովհետեւ շնականօրէն եւ սուտ յայտարարեցին, թէ «ոուսերը Վոսփորի վրայ յարձակած են» եւ Թուրքիան ինքնապաշտպանութեան դիմած է:

Վերոյիշեալ հրամանին արդիւնքը ՄԱՌԻՆԷ-ԱՌԽԻԻԷՆ մէջ կու տայ գերման դեր-ծովակալ Հեռման Լոռէյ հետեւեալ կերպով.

«Հոկտ. 15/28, 1914ին Օտեսայի վրայ յարձակում զործուեցաւ, կէսօրին, Էնվերի զաղտնի հրամանով: ԿԷՕՊԸՆ մարտանաւը (ԵԱՌՌԶ անուանեալ) նախ հանդիպեցաւ Ջոնկուլտաքի արեւելքը՝ Ամասրա նաւահանգիստը եւ, դէպի հիւսիս երթալով, ուժերակոծեց Սեւաստափորը, Հոկտ. 16/29, 1914ին վերադարձաւ Վոսփոր, ընկերակցութեամբ ԹԱՇՈՉ եւ ՍԱՄՍՈՆ Թորփիլանաւերուն:

«ՀԱՄԻՏԻԷ գրահաւորը գնաց Թէոդոսիա (Րէնֆի դեկավարութեամբ) եւ Օտեսայի ուղղութեամբ վերադարձաւ Վոսփոր: Իսկ Պրեսլաու («Միտիլի» անուանեալը) նախ Թաման, ապա Նովորո-

(*) Մարիմ - Արշիւ:

սիյսք գնաց եւ Սինոպի մօտէն վերադարձաւ Կ. Պոլիս: ՍԱՄՍՈՆ, ՂԱՅՐԷԹ եւ ՄՈՒԱԽԵՆԷԹ Թորփիլանաւերը վերադարձան Օտեսայէն:

Գերման երկու գրահաւորները ընկղմեցին երկու առաջաստանաւեր, «Շուրա» նաւը, «Իտա» չոյկնաւը, 1 սկանաձիգ նաւ՝ «Փըրութ», «Մեծ Իշխան Ալեքսանդր» չոյկնաւը եւ «Վի թիւ 3ը»:

Էնվէրը Թուրքիան կատարուած իրողութեան առջեւ զրած էր, եւ այսպէսով սկսած էր ուս-թուրք պատերազմը: (Մանրամասնութիւնը տես «Մովային պատերազմ», Նօ. 2, հատոր 5) (*):

Թուրքիոյ գահաժառանգին՝ Եուսուֆ Իղդետտինի՝ Սուլթան Ազիզի որդիին՝ ընդդիմութիւնը ոչինչ արժեք էր, զայն ալ իր հօրը նման սպաննած եւ բժիշկներու տեղեկագրով «ինքնասպան» յայտարարած էին: Բժշկական տեղեկագիրը ստորագրողներէն մին ալ տղթ. Պէհաշտտին Շաքիր կոչուած բորենին էր, որ հայերու ջարդին ամենազխաւոր պատասխանատուներէն մին էր:

Ինչպէս Էնվերի Հոկտ. 9, 1914 թիւ 2 հեռագրին մէջ յիշուած էր, արդէն պատրաստուած էր ճիհատը, հայասպանութեան զխաւոր զործիքներէն մին, 5·000 բառերէ լաղկացած, արիւնահոտ վաւերաթուղթ մը, որուն արարերէն բնագրին մէջ կան բառ առ բառ հետեւեալ քանի մը տողերը.

«Մաքրել երկիրը անրադձայնիւրէն: Ասիկա միակ առիթն է»:
(Լեպասսանու ավ տանի հիւմ մին: Ղայիլէք էլ գեւալ):

«Անհաւատներու արիւնը սնարժէք է»:
(Վա էննէ տէմ էլֆիֆար էսպահ հէտէրէն):

«Երգում տուէք սպաննելու առնուազն երեք կամ չորս անհաւատներ»:
(Ֆէյէն պըզի էնն ահետ ֆիւլլի):

«Ատկէ աւելի բարի զործ չկայ»:
(Վա իի լէմիէֆիւն լէհու մինն ամէլ էլ խայրը սիվա հատա):

Նման արիւնաշունչ հրահանգներուն զուգահեռ է, Փետր. 2/15, 1915 Թալէաթի տեսակցութիւնը՝ գերման ղեսպան Վանկենհայմի հետ, հայերը բնաջնջելու մասին, ուր Թալէաթ «ճիհատի» բառերով, Ֆրանսերէն, հայկական խնդիրը վերջացնելու մասին կ'ըսէր. «Միակ յարմար առիթն է հիմա». իր բառերով. «Սէ լը սէօլ մուման փոսփիս»: Էնվերի հեռագրին մէջ յիշուած ֆիհատը եւ Թալէաթի տեսակցութիւնը Ֆրանսերէնով նոյն արիւնոտ բառերը կը պարունակեն:

Նենգամիտ Թուրք կառավարութիւնը, հայասպան ոճիրը վարա-

(*) Տէր Քրիզ գիւր սի:

գուրելու եւ ժողովուրդի աչքին փոշի փչելու համար, թերթերու մէջ սպեց երեք յօդուածով ծանուցաւիր մը (յօդ. 1, 2 եւ 8) քանի մը տողով, թէ «կասկածելի հայերը առանձին կամ խմբովին այլուր պիտի փոխադրուին»: Դիմադրողները արմատական կերպով պիտի պատժուին:

Մայիս 14, 1915ին հրատարակուած այդ գրութիւնը, երեւցած թերթերու մէջ, թուրք կառավարական արձանագրութեան մէջ, գաղտնի շրջաբերականի մը աղճատեալ մասերն են: Բուն գրութիւնը կը բաղկանայ 8 յօդուածներէ: Յօդուած 3, 4, 5, 6, 7 կը վերաբերին հայոց տարագրութենէն յետոյ, անոնց բնաջնջման, անոնց անշարժ կալուածներու գրաման, անոնց թողած տուններուն մէջ մուհաճիրներ, թուրք սպաներու կիներ եւ գաւակներ զետեղելուն:

Այդ շրջաբերականը բոլոր նախարարութեանց ղրկուած է, մանիշակապոյն մեխնով, ձեռագիր մէկ էջի վրայ խտացուած, բազմադրուած եւ վրան գրուած է «ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ» (զայէք մուսիբի) բառերը:

Կառավարութեան բոլոր նախարարութիւնները եւ բանակը միշտ գործակցեր են ցեղասպանութեան այս գործին մէջ, եւ Ֆրանսական, անգլիական եւ ամերիկեան հրատարակութիւններ թեթեւ կերպով անցեր են այս կէտին վրայէն:

Պատերազմական նախարարութեան գործակցող «Թեշքիլաթը Մախսուսէ» կոչուած քարդերու զինուորական մարմինը, որ պատրաստած է մարդասպանութեան քարտէսները, ոճիրի մանրամասնութիւնները, ստացած էր հարկ եղած ղէնքերն ու միջոցները պատերազմական նախարարութենէն:

Այդ արարքներուն ղուզընթաց, Կ. Պոլսոյ Նուրը Օսմանիէի Իթթիհատի Կեդրոնին մէջ գաղտնի ժողովներու ընթացքին (Փետր. 1915ին) յաւելուածական հրահանգներ պատրաստուեցան եւ գործարարութեան ղրուեցան, երկու տեսակ գաղտնի բանալիներ՝ ծածկազիր հաղորդակցութեանց համար: Այդ բանալիներէն առաջինը կեդրոնէն ղրկուած հրահանգներու գործադրութեան համար էր, որ, ըստ ցուցակի խառն Յական թիւերով, արարական այրուբների վրայ շինուած է: Երկրորդ գաղտնի բանալին գաւառներէն եւ գաւառակներէն ստացուած հաղորդակցութեան համար է, դարձեալ այրուբների կարգով, այս անգամ միայն Չական զանազան թիւերով, իւրաքանչիւր տառի ղիմաց:

Պարզ օրինակ մը Կեդրոնէն գաւառները ղրկուած ծածկազրի մը.— 320, 317, 430, 327 կը նշանակէ. «Բնաջնջել թուրքիոյ բոլոր

հայերը»: Նման ձեւով պատրաստուած են հայ մանուկներու թրջացման, փճացման համար ղլխաւոր հրահանգները:

Իսկ կողոպտուած սպարանքներն ու դրաւուած կալուածները իւրացնելու եւ պաշտօնական գողութիւնը օրինականացնելու համար, Մերակոյտէն վաւերացուած է ԻՄՎԱԼԸ ՄԵԹՐՈՒՔԷ ԳԱՆՈՒՆԸ անունով «լքեալ գոյքերու գրաման» օրինազիծ մը, որ հրատարակուեցաւ «Թազվիմը Վեքայի» մէջ (թրքական պաշտօնաթերթի) Սեպտեմբեր 13, 1915ի թիւին մէջ:

Հայոց կալուածները հարիւր առ հարիւր տոկոսով իւրացնելու համար պատրաստուած են մասնաւոր ցանկեր եւ ցուցակներ, առանձին-առանձին սիւնակներով եւ բոլոր մանրամասնութիւններով, տունները, արտերը, եկեղեցիները, դպրոցները եւ հիւանդանոցները: Ցանկերը ղրկուած են ներքին, էվզաֆի, կրթական, ելմտական եւ պատերազմական նախարարութիւններուն, եւ պատերազմական նախարարութիւնը ստացած է սպարանքներու աւարառութեան մէջ առիւծի բաժինը:

* * *

1916 Յունիսի թիւով մեր ձեռքին տակ կան Գերմանիայէն երկու տեղեկազրիներ, Փոքր Հայքի շրջանէն միայն մէկ քաղաքի մէջ 4.000 հայ գործաւոր եւ արհեստաւոր-զինուորներու սպանդի մասին (10րդ Գոլ Օրտուի փոխ-հրամանատարութեան շրջանակին մէջ):

Առաջին Համաշխարհային Պատերազմի լրումին, թուրք քաղաքագէտ հին ազուէսները գործի լծուեցան, ցեղասպանութեան այս ոճիրը միայն քանի մը ոճրագործներու վերազրելու համար: Կազմուեցան պատերազմական ատեաններ, որոնք յետոյ ծիծաղելի դարձան իրենց գործերով: Գաղան ոճրագործները մէկ դուռնէն մտան միւսէն դուրս ելան կամ անհետացան: Գործի սկսուելէն մէկուկէս տարի ետք դատական որոշում մը հրատարակուեցաւ թերթերու մէջ, սակայն թուրք կառավարութիւնը, անդրադառնալով անոր ապագայ ծանր հետեւանքներուն, սպուած բոլոր թերթերը հաւաքեց եւ արգիլեց այդ թիւերուն շրջաբերութիւնը: Մեր ձեռքին տակ է ԹԵՐՃԻՄԱՆԸ ՀԱԳԸԳԱԹ թերթին Օգոստոս 5, 1920ի այդ թիւը, որուն մէջ սպուած է այդ պատերազմական ատեանին վճիռը, որ կ'ըսէ. «Հայերու դէմ ոճիրը կանխամտածութեամբ որոշուեցաւ Իթթիհատի Կեդրոնական գաղտնի կոմիտէին մէջ, որ կազմակերպեց Թեշքիլաթը Մախսուսէ անունով արիւնարբու կազմակերպութիւն մը, անոր հետ

հաղորդակցելով երկու տեսակ ծածկաղբերով: Պատերազմական ատեաններու ատեն կազմուեցան 96 մեծ տոսիէներ, պետական կարգ մը արձանագրութիւններով, որոնք յետոյ ամբողջութեամբ գրաւուեցան քեմալականներուն կողմէ:

1948ին, երբ Միացեալ Ազգերու առջեւ դանդուածային ոճիրներու (ցեղասպանութեան) հարցը եկաւ, թուրքերը ըսին, թէ մենասայտի այդ օրէնքը յետագայեցիկ (retroactive) չի կրնար ըլլալ, այսինքն չի կիրարկուիր այդ օրէնքէն առաջ գործուած ոճիրներուն համար: Բայց իրենք շատ լաւ գիտեն որ այդ ոճիրներուն գործուած ժամանակ ալ կային քաղաքային պատժական եւ զինուորական պատժական օրէնքներ: Օրէնքի չգոյութեան հարց չկայ, կայ միայն արդարութեան գործադրման անտեսում եւ արգարութենէ ու հատուցումէ խուսափում:

Ինքզինքնին իսլամ դաւանող այդ վատոյի իթթիհատական անաստուածները իրենց Ղուրանին իսկ դաւաճանեցին: Իսլամի Ս. գրքին՝ Ղուրանին Օքսֆորտի հրատարակած արարերէն եւ վաւերական անդլերէն թարգմանութեան մէջ, զլ. 5, համար՝ 42, կը կարդացուի.

«Գողերուն ձեռքը կտրեցէք, իբր պատիժ»: Գլ. 5, համար՝ 48. «Ոճրագործին փոխադարձ պատիժ տուէք»:

«Հողի դէմ՝ հողի, աչքի դէմ՝ աչք, քիթի դէմ՝ քիթ, ականջի դէմ՝ ականջ»: Գլ. 10, համար՝ 285. «Անբարոյականները պատժեցէք դաժանութեամբ»:

Ի՞նչ տեսակի իսլամ են՝ խաչագող եւ հայ աղջիկներ հարէմ տանող թուրք պետութեան վարիչ իթթիհատականք, քեմալականք, իսմէթականք եւ ճելալ-պայարականք:

Նիւթական շահերու պատճառով ալ արեւմտեան կառավարութիւններ պաշտպանեցին թուրքը եւ մեղսակից դարձան անոր չարագործութեանց: Այսօր Տարտանելի վերադիմումը կատարուած է անգլիական զէնքերով: Անգարայի հիւսիսը Քարապուքի մետաղագործական եւ զէնքի գործարանները կը բանեցուին անգլիական հսկողութեան տակ: Իզմիթի ծոցին վրայ հաստատուած թրքական նաւաշինարանները անգլիացիներու ձեռքին տակ կը գտնուին:

1938ին, Մ. Քեմալի մահէն ետք, Իսմէթի իշխանութեան օրով ալ մտայնութիւնը փոխուած չէր: 1942-43ին, ՎԱՐԼԸԳ ՎԵՐԿԻՍԻԻ (ունեւորութեան տուրք) անուով, վերապրող հայերու տնտեսական վիճակը փճացուցին, շատերու սեփականութիւնը և խանութները, ապրանքները, տունները գրաւելէ զատ, 50.000 քրիստոնեաներ Աչքայէ (էրզրումի շրջանը) զրկեցին ձմեռուան ձիւնին ու բուքին ճամբայ չի-

նելու, որոնցմէ շատերը մեռան, 37.000 անձ, բացի խենթեցողներէն եւ յանկարծամահ եղողներէն: «Ն. Ն. Թայմզ»ի մէջ Զուլցպերկերի եւրեք յօդուածները բաւարար են թուրք հոգին հաւատարմօրէն ցոյացնելու:

Ամերիկայէն միլիոններ կորցող ձեւալ Պայարի «ղեմոկրատ» կառավարութեան օրով, Սեպտ. 6, 1955ի ղէպքը միայն բաւարար է ըսելու որ թուրքը հազուստ, չտղիկ, զլխարկ փոխած է, բայց զըլթիլը՝ ոչ:

Սեպտ. 8, 1955ի թուրքերէն թերթերու առաջին էջին վրայ գրուած նկարները մեր ըսելիքներէն աւելի պերճախօս են: Թուրք կառավարութիւնը այդ օրուան թերթերը արգելած էր շրջաբերութենէ եւ հաւաքել տուած էր:

Թուրքերէն 5 թերթերու առաջին էջին վրայ կան բազմաթիւ պատկերներ, «Հիւրիէթ», «Միլլիէթ», «Թան», «Վաթան» եւ «Շնի Սթանպուլ»: Քանի մը նմոյշ այդ նկարներու տակ գրուածներէն.— «2.057 աւերիչ կողոպտիչներ ձերբակալուեցան»: «Պայար, Մենտերէս եւ նախարարները եկան, տեսան»: «Հարիւրաւոր խանութներու ապրանքները զրկի բրկի եղած փողոց լեցուած են»: Ուրիչ նկարի մը տակ.— «Այս ղէպքերը երեկոյեան ժամը 6էն մինչեւ հետեւեալ առաւօտ»: «Աւերեալ են Պէյօղլու, Սուլթան Համամ, Ղալաթիա եւ Էմին Էօնիւ: Նման բաներ՝ Իզմիր, նաեւ Անգարա»:

«Հրդէհ ձղուած է Պայլուլլի Յունական հիւանդանոցը», նկար: «Նման աւարի տրուած ապրանքները հաւաքուած են 1,500 տուններու մէջ»:

Ուրիչ նկար մը.— «Թրքական թանքերը եւ զինուորները կ'անցնին փողոցներէ, ուր ձէթի դետեր կազմուած են»:

Թուրքերէն այդ թերթը մէկ զիշերուան մէջ թուրքիոյ առաջ բերած վնասը կը հաշուէ 1.200.000.000 թրքական ոսկի թղթադրամ, 300.000.000 տոլար:

Ահա՛ ղեմոկրատիկ թուրքիան, թրքական նկարներով: Ինչ ամօթ որ անգլիական եւ ամերիկեան մամուլը բան մը չգրեց, բացի ամերիկացի ծերակուտականէ մը որ պարբերաթերթի մը մէջ գրեց իբրեւ ականատես:

Համիտի վար առնուելէն ասդին 50 տարի անցաւ եւ թուրքը, հակառակ «արեւմուտք նայել»ուն, նոյնը մնացած է հոգիով եւ սրտով:

Թուրքիոյ համար ճիշդ կերպով ըսուած է.— «Որքան կը փոխուի, այնքան կը մնայ նոյնը»:

Մարդկութեան համար դժբախտ երեւոյթ է որ թուրք չարագործներուն Արեւմտեան պետութեանց մէջ նիւթապաշտ մեղսակիցներ կան.— Լորտ Քըրզըն մը կամ վենետիկեան հրեայ վաճառականի թոռը եղող Տ'իդրայէլի մը, Հանոթօ մը կամ Փրենքլին Պուլետոն մը, Վանկենհայմ մը կամ Հուման մը, Կալիցին մը կամ Նելտով մը, Պրիսթոլ մը կամ Չայլտս մը. եւ սակայն ատոնց պատկանած ազգերուն մէջ կան նաեւ մտքի եւ գաղափարի տիտաններ, եւ ատոր համար, անիրաւութեանց դէմ, մեր 1·500·000 անձի արեան, 5 միլիառ տոյար արժողութեամբ կալուածներու եւ հալլենի հողին ի խնդիր՝ արդարութեան համար՝ պայքարելը անկապտելի եւ անխորտակելի իրաւունք մըն է մեզի համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԹՐԿԱԿԱՆ

ՋԱՐԳԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻՆ

ՄՍԱԳՈՐԾ ԶՕՐԱԽՈՒՄԲԵՐՈՒՆ

Քաղելով Մեւան Զատէ Րիֆաթի «Թրքական յեղափոխութեան ներքին երեսը» (Թուրքիա Ինֆլիպընըն Իչ Եիւզի) երկէն հատուածներ՝ տառացի կերպով թարգմանած եմ հետեւեալ մասերը, զորս կու տամ նոյնութեամբ, ծանօթութիւններ աւելցնելով եւ բնագրին կարգ մը կէտերուն վրայ ճշդումներ կատարելով:

1914–1918ի թրքական ջարդարարական մեքենայի կազմակերպութեան (Թեչքիլաթը Մախսուսէի) մասին Մեւան Զատէի գիրքը (էջ 180) կը յայտարարէ.

«Քանի որ Սարըզամիշի աղէտին վրայ՝ ոռուսերը յարձակողականի սկսան եւ անոնց բանակներուն յառաջապահները հայ կամաւոր չեթէներն էին եւ ասդին-անդին ալ յեղափոխական շարժումներ(?) ծայր տուած էին եւ վերջապէս Վան քաղաքը գրաւած էին եւ Վալի Ճեւտէթ պէյը փախչելու ստիպած էին(*), Իթթիհատ վէ Թերազըը իր գումարած արտասովոր գաղտնի նիստին մէջ՝ բացատրու-

(*) Մեւան Զատէ իրարմէ հետու իրողութիւնները իրարու կը խառնէ: Սարըզամիշի ուզղութեամբ էնվերի յարձակումը սկսած էր Դեկտեմբեր 11, 1914ին, եւ մինչեւ Նոր Տարի քրքական բանակը փնացած էր, իսկ Վանի կռիւները տեղի ունեցած էին Ապրիլ 1915ին:

թիւններէ յետոյ որոշած է ոչ մէկ հայ ողջ ձգելու պայմանով բնա-
ջինջ ընել բոլոր հայերը (էջ 108)(*) :

«Այդ որոշումը տրուելէ անմիջապէս յետոյ զործադրութեան
դրուելու կերպը եւ ձեւը մտածուեցան (թուրք) պետերուն միջեւ :
Եւ փոխանցուեցաւ մարմնի մը, որուն երեք անդամներն էին տոքթ.
Պէհաէտտին Շաքիր, տոքթ. Նազըմ եւ կրթական նախարար Շիւք-
րի(**), եւ անունը դրուեցաւ ԵՐԵՔԻ ԳՈՐԾԱՂԻՐ ՄԱՐՄԻՆ :

(*) Մեւլան Զատէ Իթթիհատի արտասովոր գաղտնի միտքն ճիշդ թուականը
չի տար : Իսկ Պէհաէտտին Շաքիրի փետր. 18 թուականը մամակը ցոյց կու տայ, որ
այդ ժողովը տեղի ունեցած է 1915 Փետր.ի առաջին կիսուն :

(**) Մեհլուս ԶԱՏԷ թուրքերու կատարած ցեղասպանութեան բիրտուր դա-
հիճներէն միայն քանի մը հոգի կը յիշէ 1920ին, երբ արդէն ատոմք ալ արդէն մա-
հացած էին եւ լուս կը մնայ էնկիւրիի մէջ պաշտօնի վրայ եզոզ ուրիշ շատ մը
հրէշներու մասին :

Թեշիվաթի Երեքի Գործադիրի անդամներուն համառօտ կենսագրականը.

Ալի Շեհ-Քրի.— 1908ին եղած էր Սերեզի (Պալքան) փոխ-կառավարիչ :
1909ին՝ չեքէական խումբ կազմակերպած էր Սերեզի մէջ : 1910ին՝ Չերէզ Ահ-
մէտի եւ «Սարը Էֆէ» (Էտիպ)ի միջոցով սպաննել տուած էր ազատական գրողնե-
րէն Ահմէտ Սամիմին, Հասան Ֆեհմին եւ խմբագիր Զեքի պէյը : Այս հասարակ
ճգնաժամը 1913—1918ին եղած էր կրթական նախարար : Կախուեցաւ Իզմիրի մէջ՝
Մուսթաֆա Քեմալի կողմէ, Քեմալը սպաննելու ամբաստանութեամբ : Իր ընկերը՝
Չերէզ Ահմէտ սպաննիչն էր Զօհրապի եւ Վարդգէսի եւ ջարդարան էր վանի,
Տիգրանակերտի եւ Սեւեքեկի շրջաններու հայերուն : «Սարը Էֆէ» կոչուած էտիպը
գործակիցն էր Հալիպի վալի Ապտիւլ Խալիպին, դահիճը՝ Միջագետք տարագրուած
հայերուն :

ՏՈՔԹ. Պէհաէտտին ՇԱՔԻՐ.— Անդամ էր Իթթիհատի Պիւտոյին եւ ամենա-
ազդեցիկ անդամներէն մին : Բժիշկն էր գահաժառանգ Եուսուֆ Իզետտինի : Հաւա-
նաբար անոր դահիճներէն մին : 1914 Նոյեմբերին չեքէներով ջարդած էր Արտա-
մուշի հայերը : Հայոց տարագրութեան ժամանակ իր կեդրոնատեղին էր Էրզրում :
Կը գործածէր երկու տեսակ ծածկագիրներ, մին՝ ներքին գործոց նախարար Թա-
լէաթին հետ եւ միւսը պատերազմական նախարար Էնվերի հետ : Նահանգային վա-
լիներու հետ կապ կը պահէր ցեղասպանական գործին մէջ : 1918ին փախած էր Պեր-
լին եւ եզրայրացած Զինովիտի եւ Բատէֆի հետ : Կ'աշխատէր Պերլին Թալէաթի
հետ : Սպաննուեցաւ Պերլինի մէջ Ապրիլ 17, 1922ին՝ Արամ Երկանեանի եւ Արշաւիր

«Այդ Գործադիրը՝ Թեշիվաթը Մախուսէ անունին տակ՝
բանտերէն հաւաքած էր արիւնարբու մարդասպաններ եւ մէջտեղ բե-
րած էր կարգ մը չեթէներ : Այդ չեթէները ամէն տեսակ խայտառա-
կութիւն եւ սրիկայութիւն զործած են եւ արատաւորած են աշխարհի
առջեւ թուրք ազգին պատիւը եւ անոր պատմութեան մէջ աւելցու-
ցած են արիւնոտ եւ վայրենաբարոյ էջեր (էջ 108) :

«Թեշիվաթը Մախուսէի զործած ոճիրներուն ամբողջական
պատասխանատուութիւնը բեռցուցած են թուրք ժողովուրդի կոնա-
կին վրայ : Այդ վայրագ էջերը աւելցնողներն էին Իթթիհատի պետե-
րը, մասնաւորապէս տոքթ. Պէհաէտտին Շաքիր, տոքթ. Նազըմ,
կրթական նախարար Շիւքրի պէյ, որոնք արդարացնելը խղճի եւ ար-
դարութեան դէմ է :


«Արդարեւ, կ'ըսուի, թէ ամէն ազդ իրեն արժանի կառավարու-
թեան ձեւը կ'ունենայ եւ այդ կառավարութեան քայլերուն եւ գոր-
ծերուն պատասխանատու կ'ըլլայ եւ յանդիմանութեան արժանի կը
նկատուի» : (*)

Շիրակեանի ձեռքով : Մարդկային միտքը անկարող է ըմբռնել, թէ ինչպէս Սորպոն
ուսած բժիշկ մը, մարդկային առողջութեան պաշտօնատար մը՝ կրնայ աւագակա-
պետ-ցեղասպան մը դառնալ :

ՏՈՔԹ. ՆԱԶԸՄ.— Իթթիհատի Պիւտոյի անդամ : Նախապէս եղած էր ընդ-
հանուր քարտուղար : Գործած էր Զիա Կէօք Ալիի հետ : 1914ին գաւառները շրջած
եւ հայերու դէմ փրփակաւտ մղած եւ պոյճոքը քայայտած էր : Ճաւիտի եւ Շիւք-
րիի հետ Քեմալի դէմ պայքարած եւ կախուած է Անգարայի մէջ 1926ին :

Նախապէս՝ 1910ին, թրքական Պատերազմական Ատեանին կողմէ մահուան դա-
տապարտուած էր, ի ԲԱՏԱԿԱՏՈՒԹԵԱՆ : Եղած էր 1920—21ին Պերլին, Մոսկուա
եւ հիւրը եղած էր Մոսկուայի մէջ Ալի Ֆուատին :

(*) Մեւլան Զատէ թուրքերու ճիշտի հրատարակման եւ գործադրման պա-
րագան անտես առած է : Մարաշախտ Լիման Ֆոն Զանտերսի համարը՝ (Էտ-տը-
քան) հարիւրապետ Միւլամ յայտնած է, որ ճիշտին քննադիրը արդէն պատրաստ
էր Հոկտ. 9, 1914ին, ռուս-թուրք պատերազմէն մէկ շաբաթ առաջ (գերման Շքա-
աթս Արիւի) :



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՔ ԹԵՇՔԻՆԱԹԸ ՄԱՆՍՈՒՍԵՒ
 ԳԱՂՏՆԻ ՆԻՍՏԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ ՄԻ ՔԱՆԻՆ
 (Թուրքերէնի թարգմանութիւնը տես զիմացի էջը)

1.— «Թեշխիաթը Մախսուսէի արինարբու-մարդասպանն-րու (գահլը-գաթիլ) քիւր 8.000էն 10.000 է: Ատոնց գործն է մեռ-ցնել հայերը, կողոպտել եւ բռնաբարել, գործադիր իշխանութեան հրամաններով» (էջ 113):

2.— «Թալէաթին հետ կը դասաւորենք բնաջնջուելիք հայե-րուն քաղաքները եւ աւանները: Կը բաժնենք շրջաններու (մանքըֆա) եւ պէտք եղածին չափ չեքէ կը զրկենք նամբաներուն վրայ որոշ տե-ղեր, ուր անոնք կը սպասեն: Կառավարական քաղաքային պաշտոն-եաներուն հրահանգ կը տրուի ոստիկաններով եւ ժանտարմաներով կարաւանները դուրս հանել եւ հսկողութեան տակ բերել ու յանձնել չեքէներուն» (էջ 116):

3.— «Սպանութիւնները լրացնելէ յետոյ, դիակները կը նետ-ուին նախապէս պատրաստուած խրամներու, փոսերու (չուգուր) մէջ եւ կը քաղուին, հանրային առողջութիւնը պահելու համար: Կիներու եւ աղջիկներու բռնաբարութեանց հանդէպ լուռ կը մնանք» «Թիւր-քիա ինքըրեպընըն իչ էրւզիւ», էջ 116):

«Այս ընդհանուր օրէնքը ընդունելով հանդերձ, պէտք է ըն-դունիլ նաեւ ներդրամիտ ըլլալու պարագան»:

«Փուշի նման մագերը ցցող այս ոճիրներուն հանդէպ, Անատո-լուի թուրքին շատ անմեղ(?) ըլլալուն համար փաստեր եւ վկաներ ալ կան: Զինադադարէն յետոյ, Թեւֆիզ փաշայի կազմած առաջին ղահլիճին Երեսփ. ժողովին մէջ կարգացած ծրագրին համաձայն, տեղի ունեցած խորհրդակցութեանց ընթացքին, Հալեպի երեսփո-խան Արթին էֆենտի Պոչկեղենեան եւ Գոլանի երեսփոխան Մատ-թէոս էֆ. Նալպանտեան յայտնած են, թէ «պատերազմի ընթացքին հայ ազգին դէմ դործուած ազէտը միայն «Իքթիհատ վէ Թերագըր կուսակցութեան կողմէ դործուած է եւ թուրքերէն շատ(?) անձեր հա-յերը պաշտպանած եւ հովանաւորած են, եւ թուրք ազգը քաղաքա-կրթութեան եւ մարդկութեան առջև անմեղ(?) նկատած են: Թեւ-ֆիզ փաշայի կառավարութիւնը, արաւ կերպով պատժելով(?) հայ-կական ազէտի գլխաւոր գործադրիչները, ինքնազուրկեան վեհաժո-ղովին պիտի տանի այդ ոճիրներուն հաշուեյարդարը, եւ ատիկա ան-հրաժեշտ է օսմանեան թուրք ազգին համար» (էջ 109):

«Մասնաւորապէս Պոչկեղենեան ժողովի այդ նիստին մէջ պատմական ճառ մը խօսած է եւ յայտարարած.

«Հայերու ջարդերուն և տարագրութեան (թագրիլ վէ քեհնիթ) մասին, թէ «ընդհանուր պատերազմի չորս տարիներուն, օսման-

եան երկիրներու մէջ շատ վատութիւններ եւ գուլումներ գործուած են, մասնաւորապէս հայ ազգին հանդէպ՝ սպանութիւններ, տարա- գրութիւններ, ոճիր մը, որ պատմութեան մէջ աննախընթաց է եւ գործադրուած թուրք ազգի անունով: Ատիկա թուրքը չգործեց(?): Մաղերը ցցող այդ ոճիրները կատարեցին չեթէ-կառավարութիւն մը եւ անոր արիւնածարաւ մարդիկը (գանլը-գաթիլ): Նոյնիսկ այդ չեթէ-կառավարութեան մէկ մասը պատուաւոր եւ խղճի տէր անձեր էին(*):

«Այդ անձերը մասնակից չեղան այդ արտասովոր գործերուն: «Անգարայի մէջ Աստուծոյ շնորհին արժանի վալին՝ ՄԱԶՀԱՐ պէյը ոճիրներուն համաձայն չեղաւ եւ պաշտօնանկ եղաւ: Գոնիայի մէջ աստուածահաճոյ վալի ձեւլալ պէյ այդ շնութիւնները չգործեց եւ փոխադրուեցաւ այլուր: Քէօթահիոյ ՄիւթեսարըՖ Ֆայիզ Ալի Սուլէյման Նազիֆի եղբայրը այդ զուլումը չկատարելուն համար պաշտօնէն հեռացուցին:

«Քասթեմունիի վալին՝ իմաստուն Ռեշիտ փաշան այդ ոճիրները չգործելուն համար հանգստեան կոչուեցաւ, եւայլն(?):

«Անատոլուի թուրքին այդ մասին պատասխանատուութիւնը աշխարհի կարծիքին առջեւ աստիճան մը եւս կը մեղմանայ(?):

ԳԱՂՏՆԻ ՆԻՍՏԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«Անհրաժեշտ կը նկատեմ ներկայացնել, թէ Թեղքիլաթը Մախսուսէն ինչպէս կազմուեցաւ եւ ինչ ձեւերով ոճիրները եւ չարիքները գործուեցան, առանց որեւէ բան ծածկելու:

«Թեղքիլաթը Մախսուսէն անպատասխանատու եւ կիսապաշտօնական աւագակային (էչզըյա օճախը) բոյնէ մը տարբեր չէր:

«Հաստատուած է որ Թեղքիլաթը Մախսուսէն կառավարութեան եւ օրէնքներու միջամտութենէն զերծ եւ իր քայլերուն մէջ

(*) Կ'երեւի պոչ-կեզէն էփեմտին չէ կարդացեր «Յիհատ»ին այն հրահանգը, որ իւրաքանչիւր թուրքի վրայ պարտականութիւն դրած էր երեք կամ չորս անհաւատ (ֆեսիիթ) հայ սպաննել: Մագհարին, Ֆայիզին, Ռեշիտին վրայ կարելի է աւելցնել նաեւ երկու գայմագամներ՝ Տիգրանակերտի նահանգին մէջ, որոնք մարդասպանութիւն չուղեցին եւ սպանուեցան վալի տոբո. Ռեշիտի մարդասպանական խումբին կողմէ: Այդ ֆամի մը անձերը, ոմամ Խզնի դէմ չգործելու, ոմամ ալ սպագայ պատասխանատուութենէն վախճալու պատճառով հրաժարած էին, անոնցմէ ետք աւելի վայրագ պաշտօնեաներ յաջորդած էին անոնց:

անկախ եւ միայն Երեքի Գործադիր Կոմիտէին հրամանով գործող եւ իթթիհատ վէ Թեղքագը Կոմիտէին արիւնարբու եւ մարդասպան (գանլը-գաթիլ) կողոպտիչներէն բաղկացած խումբ(?) մըն էր:

«Տոբթ. Պէհաէտտին Շաքիրէ, տոբթ. Նազրմէ եւ կրթ. Նախարար Եիւքրիէ բաղկացած այդ Գործադիր Կոմիտէն անկախ, ոչ պաշտօնական, ոչ պատասխանատու(?) մարմին մըն էր, որ ունէր իր սեփական քարտուղարութիւնը (գալէմը մախսուսը — դիւանատունը), քննիչները (միւֆեթթիշները) եւ նման կազմակերպութիւններ: Կառավարութեան մէջ՝ կառավարութիւն մը, կուսակցութեան մէջ՝ կուսակցութիւն մը, եւ լրջօրէն վտանգաւոր տարր մըն էր:

«Այդ կազմակերպութիւնը տոբթ. Պէհաէտտին Շաքիրի ուղեղէն բխած եւ ընկերներուն ընդունիլ տուած էր: Մինչեւ պատերազմին վերջնաւը՝ այրած-մրկած էր (գասուպ-գաւրումուշ) երկրին (հայ) ժողովուրդը, եւ զինադադարի տարիներուն ալ, ազգային շարժումներուն մէջ երեւնալով, շատ արժէքաւոր անձերու արիւնը մտած էր, տուներ աւերած, քաղաքներ եւ գիւղեր փճացուցած էր:

Թեղքիլաթը Մախսուսէին մէջ կային Բումեյիէն եկած օրինազանց եւ ինքնութիւններին կասկածելի անզուսպ անձեր (իփսիզներ), ոճրագործներ, կողոպտիչներ, որոնք ԵՐԵՔԻ Կոմիտէին ենթակայ էին Անատոլուի մէջ, էշզըյաններ էին եւ իրրեւ մարդասպաններ ու կողոպտիչներ աչքի կը զարնէին(*):

«Այդ մարդասպաններուն ընդհանուր թիւը 8.000էն 10.000 էր: Ամենէն նուազը 10 եւ առաւելագոյն 50 նեֆերէ (անձ) բաղկացած զօրախումբերու ձեւով դասերու բաժնուած էին (էջ 111) եւ ատոնց վրայ նշանակուած էին պետեր, զինուորական սպաներ, կողոպտելու, տուն, խրճիթ, ընտանիք այրելու, թալանելու եւ պատիւ բռնաբարելու նման ոճիրներ ու չարիքներ գործելու:

«ԵՐԵՔԻ ԿՈՄԻՏԷՆ առանց ամչնալու այդ հրամանները տուած էր:

«Ատոնք որեւէ վախ չունէին ո'չ օրէնքի հետապնդումէն, ոչ ալ բանտարկութեան մտահոգութենէ, ընդհակառակը, այդ ոճրագործութիւնները, վայրագութիւնները յարգանքի արժանի եւ հայրենիքի ծառայութիւն կը նկատուէին (էջ 111):

(*) Մեւլան Զատէ չէ յիշած նաեւ որ թուրք-ուս պատերազմէն առաջ, Պալ-ֆաններէն դէպի Փոքր Ասիա եւ Արեւմտեան Հայաստան գրկուած էին գաղտնաբար 5,000 ոստիկաններ եւ ոստիկանապետներ, որոնք Պալֆանեան պարտութենէն ետք՝ թոյնով լեցուած էին հայերուն դէմ:

«Աւելի պայծառ գաղափար մը տալու համար մէջտեղ կը բերենք Թեղեխաթը Մախուսէի Երեմի Կոմիտէիմ առաջին նիստին արձանագրութիւնը».

«Այդ առաջին նիստը տեղի ունեցաւ Մերքէզը Ումումիի (Ընդհանուր Կեդրոն) շէնքին մէջ»:

Առաջին խօսողն էր տոքթ. Պէհաէտտին Շաքիր, որ ըսաւ հետեւեալը.—

«Եղբայրներ, շատ կարեւոր եւ փափուկ պարտականութեան մը բեռն տակ մտած ենք: Եթէ առիկա պահանջուած ձեռով չվերջացնենք եւ անցեալին եղածին նման կիս-կատար (եարքմ-եալամագ) վիճակի մէջ թողունք, մեր օձիքը հայերու վրէժխնդրութենէն պիտի չկրնանք ազատել: Պատերազմի մէջ ենք: Եւրոպայի մեծ պետութեանց միջամտութեան վախը չկայ, ոչ ալ աշխարհի մամուլին օգնութեան կոչերը եւ բողոքները, թէեւ ըլլան իսկ որեւէ արժէքէ զուրկ են: Գործը երբ վերջանայ, կատարուած իրողութիւն մը եղած կ'ըլլայ, ձայները խեղդուած (գըսըլմըշ) կ'ըլլան եւ ոչ ոքի քով բողոքելու կարելիութիւն կը մնայ (էջ 112): Այս բացառիկ կացութեան մէջ, այսպիսի փափուկ առիթներէն առաւելագոյնս օգտուելու ենք: Այս պատեհութիւնը ամէն ատեն ձեռք չ'անցնիր:

«Այժմ, ամէն բանէ առաջ, անկախ եւ միայն մեր հրամանին տակ գործող զինեալ ուժի մը պէտք ունինք: Այս անհրաժեշտ պէտքը ո՞րտեղէն պիտի ճարենք եւ ի՞նչպէս պիտի ապահովենք: Ահա խնդրոյն կենսական մասը, խորհելիք կարեւոր կէտը ասիկա է:

«Գործը չենք կրնար զինուորներու կամ ժանտարմաներու յանձնել: Անոնցմէ վերջնական լուծում չենք կրնար ստանալ: Անցեալի փորձառութիւնները այդ ցոյց տուած են:

«Գործը ուղղակի ժողովուրդին ալ չենք կրնար ձգել: Ժողովուրդը շուտով կը լրբանայ եւ ապագային կը ծառանայ մեզի դէմ եւ գլուխ կը բարձրացնէ:

«Ինչպէս (էսաւէն) հանրային կարծիքը մեզի դէմ է: Բազմաթիւ անգամներ խօսած եմ, անարիւն յեղափոխութիւնները այդպէս կ'ըլլան: Տաղնապալի շրջաններ յետաշրջական շարժումներ կ'ըլլան: Հին ուստիսի կողմնակիցները շատ են: Մենք իշխանութեան գլուխ եկած չենք մտքի զօրութեամբ: Եթէ մեր բանակին յաղթող սուրը չըլլար, այսօրուան մեր դիրքերուն վրայ ոչ թէ ժամ մը, այլ նոյն իսկ վայրկեան մը չէինք կրնար մնալ:

[Ուրեմն ամբողջ բանակը ոճրագործներուն հետ է]:

«Եթէ մեր ընդդիմադիրներուն ձեռքը փոքր զինեալ ուժ մը ըլ-

լայ եւ ղեկավարել զիտնան —, մեզ կը խեղդեն անմիջապէս: Առիկա ճիշդ է: Ուստի, բնակչութիւնը զինել, զգացնել անոր մեր իրեն պէտք ունենալը վտանգաւոր է: Արկածախնդիրներուն (սերկիւզեշք-նի) ուժ եւ պատեհութիւն տուած կ'ըլլանք: Այս կերպով մեզի համար ո'չ զինուորներէն, ո'չ ալ ժողովուրդէն մեծ օգուտ կայ:

«Մեզի առանձինն ուժ մը պէտք է, մեր անկախութիւնը պահելու՝ մեր քայլերուն եւ շարժումներուն մէջ, այո՛ զինեալ ուժ մը, եւ այդ ուժը պահանջուած տեղերը քշելու իրաւասութիւնը առանձնապէս եւ միմիայն մեզի տրուելու է(?):

«Այդ ոչ-պաշտօնական եւ անպատասխանատու ուժերուն գործին վիշակներուն մէջ ո'չ վալիները, ո'չ միւթեսարըֆները, ո'չ գայմագամները, ոչ ալ զինուորական հրամանատարները միջամտելու են(*):

(*) Սխալ է այդ կէտը: Վալիները, նահանգներու մէջ, ռիթագործ բանտարկեալներէ զոկատներ կազմելու գործին սերտօրէն օգնած են:

«Ոչ-պաշտօնական եւ անպատասխանատու» բացատրութիւնն ալ սխալ է: Մեկան Ջատէ կ'ուզէ թուրք պետութիւնը ցեղասպանութեան յանցագործութեան գերմանացիներէ: Ներքին գործոց նախարար Թալէաթ Փետր. 2, 1915ին տեսակցած էր գերման դեսպան Վանկեհայմիսին հետ եւ ըսած էր անոր.— «Հիմա յարմար ժամանակն է հայերուն խնդիրը վերջացնելու»:

Պէհաէտտին Շաքիր Փետր. 18, 1915 թիւ շրջաբերական - նամակով, իր ստորագրութեամբ եւ «Պատասխանատու Մարմին»ի անունով ու հրամանով («Հի-նէթը ՄեՍՍԻԼԷ ԷՄԻՐ ԻԼԷ») կը գրէ.

«Ճեմիյէթ Թիւրքիստա Էաշայան պիլ ումում էրմենիլէրին պիր Թանէսի զալմայընճայա գատար մահվա գարար վէրմիշ վէ հիւքիւմէթէ սալահիյէթը վառիյէ Իթա էթմիշտիր»:

«Թուրքիոյ մէջ մէկ հայ ողջ չթողելու պայմանով հայերը ջնջել որոշուած է եւ կատարութեան լայն իրաւասութիւն տրուած է»: Կատարութիւնը (պետութիւնը) գործակցած է ցեղասպանութեան գործին մէջ: Ներքին գործոց նախարարութեան ծածկագրին հետեւեալ պարբերութիւնը կը յայտնէ նոյն միտքը.—

«Ահա՛ գաղտնի բանալիով լուծուած բնագիրը ցեղասպանութեան ծածկագրին.— (Սեպտ. 3, 1915).—

320 75 384 317 430 198 123 119 193 148 176 111 46

Թուրքիստան մեհուտ պիլուում էրմենիլէրին Թամի Իլէ

Թուրքիոյ մէջ ներկայ բոլոր հայերը ամբողջութեամբ

327 վէ 354 198 123 111 193 152 123 123

մահվ վէ Իֆնալարը Թէքարուր էթմիշ:

մահացումը եւ բնաջնջումը որոշուած»:

«Նոյնիսկ, ի հարկին, վերոյիշեալ պաշտօնեաները կրնան ձեր-
բակալել մեր ձեռքին տակ եղած ուժը եւ սպաննել:

«Մեր ԵՐԵՎԻ ԳՈՐԾԱԴԻՐը ճանչցուած է կեղը. կառավարու-
թենէն եւ պետութեան գործադիր իշխանութիւն կոչուող նախարա-
րաց խորհուրդին կողմէ, կը խորհրդակցի եւ հասկացողութեան կու-
գայ անոր հետ եւ, հարկ եղած կազմակերպութիւնները հաստատելէ
յետոյ, գործադրելու իրաւունքն ալ մեզի կը սահմանէ:

«Կեղրոնի ենթակայ վալի, միւթեսարըՔ, գայմազամ եւ զին-
ուորական հրամանատարներ ենթակայ են նախարարաց խորհուր-
դին եւ արբանեակներ են (փէյֆ) անոնց: Ատոնք իրենց հետ ըլլալիք
գործողութիւնները, թղթակցութիւնները կը կատարեն իրենց պատ-
կանած նախարարութեանց հետ: Մենք չենք միջամտեր անոնց գոր-
ծին: Կարճ խօսքով, մեր կազմած եւ մեր հրամանին տակ եղած ուժե-
րէն բացի, մեզմէ ոչ ոք կրնայ օգտուիլ: Ամէն բանէ առաջ պէտք
եղածը այս ուժն է: Այս էական ծրագրին շուրջ ես խորհեցայ եւ նա-
խադեցի: Դուք ի՞նչ կը խորհիք:

«ՇԻՒՔՐԻ.— Քանի որ որեւէ օգնութիւն պիտի չուզենք զին-
ուորներէն, ժանտարմաներէն եւ ժողովուրդէն, պատժելու եւ բնա-
ջնջելու (թեմիլ վէ իմիա) գործողութիւններուն համար, կրնայի՞
հարցնել թէ հայերուն կիները, ծերերը, աղջիկները, առանց խրտ-
րութեան, ո՞ր սատանաներուն միջոցով պիտի բնաջնջենք: Առանց
զինուորի եւ ժանտարմի այս գործը գլուխ հանուելուն իմ խելքս չի
հասնիր:

«ՏՈՔԹ. ՆԱԶԸՄ.— Տոքթ. Պէհաէտտին Շաքիրին հնարած
հանձարեղ զիտը եթէ չըլլար, այս աստիճան երկար յառաջարանի
ալ պէտք մնացած չէր ըլլար: Ան մեզ մտիկ ընելով կը զոհանայ: Քիչ
մը եւս սպասեցէք, թող իր տեսակէտը լրացնէ:

«ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ.— Այո՛, եղբայրներ, բեռան մը տակ
մտած ենք, որ ծանր է եւ երեւակայութենէ աւելի մեծ է: Առանց լաւ
կազմակերպութիւն մը ընելու եթէ սկսինք, կասկածելի է յաջողու-
թիւնը: Ես այս կէտին վրայ երկարօրէն մտածեցի եւ հայերէն մէկ
հոգի իսկ ողջ չձգելու եւ անոնց բնաջնջման գործը գլուխ հանելու
միջոցներ փնտոնեցի եւ կը կարծեմ թէ գտած եմ: Այդ կէտերու մա-
սին խոր մտածելու ժամանակ, երկար մտածելէ ետք, շատ գիշերներ
անքուն անցուցի: Ես նկատի առի միշտ կացութեան հողերանական

կողմը: Ատոնց նրբին կէտերէն մեծագոյնը զտայ: Այսօր ընդհանուր
զօրաշարժ կայ: Պատերազմ կայ: Ամէն անձ, որ ձեռքը զէնք կը բռն-
նէ, զինուոր է: Այս ձեւը եւ այս կացութիւնը մեծագոյն օգուտներն
ունին: Ո՛ւր կրնայ ըլլալ, ուրկէ՞ կրնանք ճարել մեր փնտոնած ուժը:
Ահա այդ խնդիրը որոշելու ատեն իսկ կարելի է խնդիրը լուծուած
նկատել: Մարդ մեռցնել, տուն այրել, պատիւ բռնարարել՝ նման
գործերու մէջ մասնագէտ եղող եւ զինուորութենէն զերծ եղող չկայ:
Այդ անձերը պէտք է գտնենք եւ մեր հրամանին տակ զնենք (էջ 113),
որպէսզի 100էն 100 մեր յաջողութիւնը ապահովուի: Ահա ես...

ՇԻՒՔՐԻ՝ կտրելով Պէհաէտտին Շաքիրի խօսքը.—

«Մնդրեմ, Պէհա՛ (էտտին Շաքիր), մեր պետերը, իրենց թան-
կազին կեանքերը պահպանելու համար, զինուորութենէ զերծ կացու-
ցած էին մեր ֆետայիները: Եթէ միայն ատոնք է որ նկատի ունինք,
ատոնց վստահելով՝ զործի սկսիլ՝ ինձմէ փաստ (եւ մէջը չկամ):

ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ (բարկանալով).—

«Կը խնդրեմ, Շիւքրի՛, որչափ անհամբեր էք, եթէ նոյնիսկ ա-
ռարկութիւն, վէճ, կռիւ կամ ծեծկուռք իսկ ունինք, թողուցէք վեր-
ջին, եւ այժմ՝ ուշադրութեամբ մտիկ ըրէ՛ք: Ի՞նչ է մեր ստանձնած
պարտականութիւնը:

«Հայերը, առանց բացառութեան, առանց խտրութեան երա-
խայ-մանուկ (օրուգ-չոմուգ), կին, աղջիկ, ծեր, հիւանդ, մինչեւ
վերջինը բնաջնջել չէ՞: Ես ալ ձեզի կը հարցնեմ, Շիւքրի՛, ատիկա
զիւրութեամբ ամէն մարդու ընելիք սովորական գո՞րծ է: Ինչպէս ա-
մէն գործի մէջ, այս գործին մէջ ալ կան մասնագիտացած անձեր,
զիւրութեամբ կատարող, այդ անձերը փնտոնել, դանել եւ կապել
պէտք է այս կազմակերպութեան, եւ աշխատիլ գործը գլուխ հանե-
լու:

«Կը կրկնեմ, այս գործը զինուորին, ժանտարմին, ժողովուրդին
պէտք չէ ձգենք: Ատիկա անոնց կատարելիք գործը չէ: Զինուորին
եւ ժանտարմին մասնագիտութիւնը տարբեր է: Թէեւ անոնք ալ կը
մարդուին մարդ մեռցնելու, աւերումներ ընելու համար: Ճիշդ է
այդ, սակայն այդ սպանութիւնը եւ աւերումը կ'ըլլան պատերազմի
մէջ հայրենիքին եւ ապահովութեան համար եւ պատերազմի ատեն:
Նորէն կ'ըսեմ. ես կը կարծեմ որ պատերազմի սպանութեանց եւ սո-
վորական ոճիրներու միջեւ տարբերութիւն մը կայ, ինչ որ դուն ալ
կ'ընդունիս:

«Մեր գործադրելիքն է մեռցնել ձեռքը-ուտքը կապուած հա-
յերը, մանուկները, երեխաները, հիւանդները եւ ծերերը մինչեւ վեր-
ջին անձը: Ատոր պատերազմ անունը չի տրուիր: Ասիկա սովորական
վայրագ ոճիր մըն է: Զինուոր մը ծծկեր մանուկ մը իր մօր գրկէն
խլելով՝ մօրը աչքին առջեւ գլուխը փրցնելով անդին նետել չի կըր-
նար: Թերեւս կը ջանայ մայրն ալ փրկել: Տրուած հրամանը զինուո-
րական պատիւի հակառակ է: Ան կ'ապստամբի: Նմանապէս՝ զինուոր
մը, հաշմանդամի մը կամ ծերի մը, տկարի մը, ձեռքը շղթայուածի
մը կուրծքին սուինը չի կրնար մխրճել(?) :

«Ան կը մտածէ նաեւ գերիի մը հանդէպ յարգանքի մասին: Այդ
վատութիւնը (գահպելիֆ) հերոսութիւն չի նկատեր: Ուրեմն պէտք է
ընդունիլ, որ զինուոր եւ ժանտարմ մեր գործին չեն դար, բնաջընջ-
ման այս գործողութիւնը կատարելու համար: Ատիկա ընդունելի
ետք, մեր գործին դալիք ուժը ուրկէ՞ պիտի ճարենք: Հոս է խնդրոյն
ամենէն կարեւոր կէտը (էջ 114) :

«Ես կը կարծեմ գտած ըլլալ մեր գործին դալիք անձերը: Ուր-
կէ՞ գտայ: Գտայ զանոնք բանտերու մէջ: Անոնք զինուորութենէն
զերծ են իրենց գործած ոճիրներուն եւ շնութիւններուն համար, զին-
ուորներու պատիւը չաղարտելու նկատուով: Ատոնք բանտերէն ար-
ձակելով՝ մեր տրամադրութեան տակ կ'առնենք: Դասերու եւ զօրա-
մասերու կը բաժնենք: Բոլորովին կատարեալ Թեշքիլաթը Մախսուսէ
մը կ'ունենանք:

«ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ. — Դո՛ւք այս խնդիրը արդէն լուծեր էք:
Գործադրութեան միջոցներն ալ պատրաստեր էք: Կը շնորհաւորե՞մ,
ՊէշԱ. . . : Թեշքիլաթը Մախսուսէ, ի՛նչ լաւ անուն: Ի՛նչ արդիական
տիտղոս: Պաւլո՛, պաւլո՛:

«ՊէշԱ.ՍՏՏԻՆ ԾԱՔԻՐ. — Եթէ այս իմ միտքը յարմար կը գտ-
նէք, ձեզ կ'ապահովցնեմ որ առանց ջուրի եւ օճառի դպչելու (սու-
յա սապուեա տոգուեմատան), առանց բանակը մէջ խառնելու, մէկ
ամսուան մէջ կ'ունենանք 10·000էն 12·000նոց աչքի զարնող ուժ մը:
Լաւ մտածենք. այս ընտրեալ ուժով ինչե՛ր կրնանք ընել:

«ՇԻԻՔԻՐԻ. — Պարապ ժամանակ չանցընելուդ, ես ալ գոհա-
ցայ: Իսկապէս հանճարեղ խորհուրդ մըն է այդ: Արդէն մտածեր ես
գործադրութեան եղանակն ալ: Ես ալ կ'ընդունիմ որ այս գործին
համար ասկէ աւելի զօրաւոր միջոց չկայ: Հիմա կը հաւատամ որ

հայերը պիտի կրնանք բնաջնջել մէկ երկու ամիսէն:

«ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ. — Ատոնց զինուորական համազգեստ հագ-
ցընելու ենք որ աւելի միատեսակ ըլլան եւ լաւ երեւին, եւ ա՛լ աւելի
ազդեցիկ չե՞ն ըլլար:

«ՊէշԱ.ՍՏՏԻՆ ԾԱՔԻՐ. — Միայն հագուստը կու տանք եւ նուա-
զագոյն 10 հոգինոց եւ առաւելագոյն 50 հոգինոց չեթէներու զօ-
րախուժներ կը կազմենք: Իւրաքանչիւր չեթէի պետը կ'ըլլայ մեր
Փետայիներէն մէկը: Եւ պետերը մենք կ'որոշենք: Անոնց մասնաւոր
ծածկագիրներ կու տանք եւ միմիայն մեզի ենթակայ կ'ընենք: Արդէն
ամենէն կարեւոր կէտը այդ է:

«ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ. — Եա՛տ լաւ: Այդ կէտը ընդունուեցաւ: Հի-
մա գործադրութեան ծրագիրը կազմենք:

«ՊէշԱ.ՍՏՏԻՆ ԾԱՔԻՐ. — Ատիկա շա՛տ պարզ է: Ո՞ր քաղաք-
ներուն եւ աւաններուն մէջ որ հայեր կան եւ որո՞նք ամենէն առաջ
պիտի բնաջնջուին, անհրաժեշտ է որ այդ քաղաքները եւ աւանները
(չեհիք վէ գասապա), չըջան առ չըջան (մանքըֆա-մանքըֆա), զա-
տենք ներքին գործոց նախարար Թալէաթի հետ եւ իւրաքանչիւր
չըջանի համար պէտք եղած թիւով չեթէներ կը հասցնենք: Ատոնք
մեր որոշած ճամբաներուն վրայ յարմարագոյն վայրերու մէջ հաս-
նելի ետք, կը սպասեն հայ կարաւաններու դալուն:

«Ներքին գործոց նախարար Թալէաթ եւս այդ քաղաքին կամ
աւանին պետական քաղաքային պաշտօնեաներուն հրամաններ կու
տայ յայտարարելով, թէ «բոլոր հայերը պատերազմական չըջանե-
րէն (մանքըֆա) դուրս պիտի հանուին»: Այդ քաղաքին կամ աւանին
մէջ որքան հայ որ կայ, կարաւան առ կարաւան (գաֆիլէ-գաֆիլէ),
երկուական օր միջոց տալով՝ այսինչ քաղաքը այնինչ ճամբով՝ ժան-
տարմի ուժերու հսկողութեամբ՝ զրկուիլը կը հրամայուի(*):

(*) Ցեղասպանութեան մէջ՝ սպանութեան վայրերու չեթէներու գործիք ա-
ռընչութեամբ՝ մերքին գործոց նախարարութիւնը Մայիս 12, 1915 (1331) թուակիր
իւր ծածկագիր գազմի (չիֆուէ եւ մուհրէմ) հետագրին մէջ կ'ըսէ. «Հայ տարագիր-
ներուն անցնելիք տեղերը իմացնէք»:

Այս հետագիրը կը հաստատէ հետեւոգականութիւնը Թեշքիլաթը Մախսուսէի
միստիմ տրուած որոշումներուն և մերքին գործոց նախարարութեան հրամաններուն:

«Ոստիկաններ (զապըքս-մեմուրներ)», այդ հրամանին վերայ, կը հաւաքեն հսն գտնուող բոլոր հայերը եւ հսկողութեան տակ, խումբ առ խումբ, որոշեալ ճամբաներէն կը զրկեն:

«Ճամբաներու վրայ սպասող Թեչքիլաթը Մախսուսէի չեթէններուն գտնուած վայրին մօտ երբ կը հասնին կարաւանները, կը յանձնուին այդ չեթէններուն, եւ իրենք (ժանտարմները) կը վերադառնան:

«Չեթէններուն յանձնուած հայերը, մէկ հատ իսկ չմնալու պայմանով, կը սպաննուին: Իսկ հանրային առողջութիւնը պահելու համար՝ առաջուրնէ պատրաստուած խրամներու մէջ կը գլորուին անոնց մարմինները եւ կը թաղուին: Այսպէսով, իրարու ետեւէ բնաջընջման գործողութիւնները կը լրացուին:

«Հայերու քով գտնուած առարկաները, գոյքերը, դրամ եւ զարդեղէններ, չեթէններուն որպէս աւար (դափմէք) կը բաժնուին (*): Մենք ատկէ բան չենք ստանար (?): (Մեծ մասը Իթթիհատի կեդրոնը եւ պետութիւնը կ'իրացնէ): Եթէ չեթէնները բռնաբարեն կիներու եւ աղջիկներու պատիւը, այդ մասին ալ պէտք է լուռ մընալ:

«ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ.— Այդ դասակարգին (չեթէններու) հոգեկան վիճակի մասին որքա՛ն ծանօթ ես: Ես ձեզ ոչ թէ տողթոր, այլ այս ժամէն սկսեալ «արիւնարբու էշզըյա» մը կը կարծեմ: Որքան լաւ մտածած ես»:

«ՇԻԻՔՐԻ.— Իսլամ ժողովուրդը, երբեմն, հայեր կը պահէ կամ պաշտպանել կ'ուզէ: Այդ մասին պէտք չէ կասկածիլ: Նման երեւոյթներ կանխելու համար, առանց ճնշելու զանոնք, գոհ ձգել

(*) Աւագակներու աւարի բաժնի մասին քրքական «Սապահ» քերթի Դեկտ. 18, 1918ի թիւին մէջ կը կարդանք.

«Չեթէնները երդում քած են որ հայոց հարստութիւնը՝ գոյք եւ դրամ պիտի յանձնեն կեդրոնին: Փոխարժէքին կ'սը՝ Կ. Պոլսոյ ընդհանուր կեդրոնէն պիտի բաժնուի չեթէններուն»:

Իւրաքանչիւր չեթէի բաժին ինկած է 15.000 սուկի:

Այդ պայմանագրութեան մէջ որոշ չէ թէ 15.000ը չեթէական իւրաքանչիւր խումբի՞ն թէ ամհատի՞ն է:

Եթէ ամհատին է, ըստ Պէհաւտիմ Շաֆիի, 12.000 չեթէին բաժին կ'իյնայ 180.000.000 սուկի, որ կ'ընէ 900.000.000 տոլար չեթէններուն եւ նոյնքան ալ՝ ընդհ. կեդրոնին:

կարելի է: Հաւատաքննութեանց դարուն, Սպանիոյ մէջ արարներուն եւ հրեաներուն դէմ գործադրուածները միտքս եկան: Մենք ալ կըրնանք նոյնը գործադրել հայերուն դէմ:

«Հայերը տարագրութեան պատրաստելու ժամանակ բնական է որ 3-4 օր միջոց պիտի տրուի: Այդ ժամանակամիջոցին ալ պէտք է յայտարարել, որ իսլամութիւնը ընդունող ընտանիքը տարագրութենէ զերծ պիտի ըլլայ: Այդ ձեւով գրոյց մը շրջան կ'ընէ: Ատկէ երկու տեսակ օգուտ կայ: Մէկը այն է, որ տարագրութեան ենթարկուողներուն կեանքին վտանգ չսպառնալու համոզումը կը գոյանայ անոնց մէջ եւ իրենց հարստութիւնները պահելու կամ հողի մէջ թաղելու մտքէն կը հրաժարին եւ միասին կը տանին, եւ մեզի ծառայող չեթէններուն աւար կը մնայ: Այդպէսով անոնց ալ եռանդը կ'աւելնայ:

«Միւս կողմէն ալ իսլամ թուրքերուն մոլեռանդութիւնը շոյուած կ'ըլլայ: Հայերը իսլամ դառնալով, չպահուրտող քիչ թիւով հայեր կը մնան, ասոնք ալ յետոյ դիւրութեամբ կը մաքրուին (էջ 116):

«ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ.— Շիւքրիի այս միտքը արժէքաւոր է: Կարելի չէ անտես առնել: Մեր չեթէններուն շահուն համար պէտք է գործադրել:

«ՇԻԻՔՐԻ.— Կէտ մը եւս կայ: Այդ ալ ամենէն կարեւորն է: Այդ Թեչքիլաթը Մախսուսէին պէտք եղած դրամը ուրկէ՞ պիտի ստանանք:

«ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ.— Ազգային պաշտպանութեան գանձէն (միւտաֆաայը միլիէ) կը հողացուի: Արդէն այս խնդիրը ազգային պաշտպանութեան վերաբերեալ խնդիր է:

«ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ.— Հիմնովին համաձայնութիւն կայացաւ: Խորհրդակցելիք կէտ չմնաց: Թալէաթին երթանք, եւ տեսնուելով անոր հետ՝ գործադրութեան սկսելու ենք (էջ 117):»

Մեւլան Զատէ Րիֆաթի գրքի բնագիրէն էջեր տուինք մանրամասնութեամբ եւ անկողմնակալութեամբ. ան ներկայացուցած էր իր՝ թրքական տեսակէտը, որ նոյնն է զրեթէ բոլոր թուրք մտաւորականներուն, հրապարակագիրներուն, թուրք թերթերուն, պարբերաթերթերուն, զրուած գրքերուն, թուրք պաշտօնական անձերուն,

դեսպաններուն, հիւպատոսներուն, դիւանագիտական այլ պաշտօնեաներուն, Ամերիկա եւ Եւրոպա շրջուած թուրք ուսանողներուն, անոնց տրուած թելադրանքներուն մէջ: Այդ բոլորին ջլիչէ եղած կարծիքով՝ թրքական ցեղասպանութեան ոճիրը «քանի մը իթթիհատական լիտըրններու» եւ «քանի մը անձերու կողմէ ստեղծուած դէպքեր են», եւ «թուրք պետութիւնը եւ թուրք ժողովուրդը պատասխանատու չեն»: Հոս է որ բոլորը կը ստեն: Յեղասպանութիւնը կատարուած է պետութեան կողմէ, կազմակերպուած անոր հրամաններով, անոր ենթակայ գործադիր պաշտօնեաներով:

Իթթիհատական կոչուած այդ լիտըրնները նախարարներ էին կամ անոնց հետ գործակցողներ: Պետական իշխանութիւնը՝ դահլիճ, փարլամենթի անդամներ, իթթիհատ կուսակցութեան ղեկավարութիւն, Թեշքիլաթ սպանութեան մեքենան բոլորը իրարու հետ շղթայուած են ցեղասպանութեան դործին մէջ:

Պետութիւնն էր որ հրատարակեց ճիհատը, Հոկտեմբեր 9, 1914ին: Իւրաքանչիւր թուրքի վրայ պարտականութիւն դնելով ըստ պաննել 3էն 4 հայեր: Եւ վերման Զին. Առաքելութեան պետ՝ մարաշխտ Լիման Ֆոն Զանտերս իր գրքին մէջ «Ֆիւնֆ Եառէ ին Թիւրքայ» («Հինգ Տարի Թուրքիոյ մէջ») (էջ 35) կը գրէ. «Ճիհատ»ը գործադրուեցաւ Թուրքիոյ մէջ ամբողջութեամբ միմիայն հայերուն դէմ, եւ տարագրութիւնը հրամայուած էր կառավարութեան կողմէ: Շատ թուրքեր եւս անօթութենէ մեռան, որովհետեւ հայերը տարագրուած էին եւ երկիրը աւերակ եղած էր» (էջ 156), ուրիշ խօսքով՝ ցանող, քաղող հայ չկար ձրիակեր թուրքը կշտացնելու համար:

Դեսպան Մորկընթաու եւս կը հաստատէ նոյնը, թէ «ճիհատը միմիայն հայերուն դէմ գործադրուեցաւ» (էջ 170):

Թուրք ժողովուրդին առնուազն հարիւրին ութսունը մասնակից էր սպանութեանց եւ կողոպուտի:

Մեւլան Զատէ չէ ուսումնասիրած նոյնիսկ թուրքերու սեփական պետական արխիւները, գաղտնի հրամանները՝ ծածկագիր-հեռագիրները, ժողովուրդին բերած մասնակցութիւնը՝ քաղաքներու մէջ բանտարկուածներու սպանութիւններուն, տարագրեալ մանուկներու եւ կիներու սպանութեանց, իսլամացման եւ անոնց գոյքերէն օգտուելու իրողութիւնները:

Գերման նացի ԻՍԷՄներուն մատ խածնել տուող այս թուրք հրէշներու մասին Մեւլան Զատէի գրութեան դարձեալ շնորհակալ պէտք է ըլլալ, որ ի մտի ունեցեր է «պատմութեան» ծառայելու համար գրել:

Թրքական փարլամենթը, թրքական քաղաքային եւ դինուորական պաշտօնեաները եւ թուրք ժողովուրդին ճնշող մեծամասնութիւնը դատապարտուած են իրրեւ ցեղասպան՝ պատմութեան դատաստանին առջեւ:

Հայը կը պահանջէ 3.000.000 հայերու(*) նահատակուած 2.000.000ին արեան գինը, անհատական եւ ազգային սեփականութեանց արժէքը, նուազագոյն 5.000.000.000 ոսկի տուար, եւ իր պատմական ու պապենական հողերուն վերադարձը, միջազգային դաշնագրային պարտաւորութեամբ, Ուիլսոնեան սահմաններով: Այդ է պահանջը այսօր ապրող բոլոր հայերուն, իրրեւ հատուցում իրենց նահատակաց արեան: Այս մասին տեսնել Քարնեկի Էմտաուրնթի հրատարակած «Նաղաղութեան դաշնագրային պայմանները» (էջ 819-20):

(*) Լօգանի խորհրդաժողովին մէջ Անգլիոյ պատուիրակ Լորտ Քրըքըմ յայտարարած է, թէ 1915ին Թուրքիոյ հայերուն քիւր 3.000.000 էր:

ԹԵՇՔԻԼԱԹԸ ՄԱԽՍՈՒՍԷ

Երկու հեղինակաւոր մարաջախտներու (մէկը՝ գերման, միւսը՝ թուրք) յուշերը հրատարակուեցան: Առաջինը՝ Լիման Ֆոն Չանտերսինը, «Հինգ Տարի Թուրքիոյ մէջ», 1920ին, Պերլին եւ Թարգմանութիւնը՝ 1927ին:

Ֆոն Չանտերս պետն էր Թուրքիոյ մէջ գերման Զինուորական Առաքելութեան, 1913 Հոկտեմբերէն մինչեւ Հոկտ. 1918, եւ կը գրէ.

«Էնվէր, որ տակաւին զնդապետ էր, 1913 Գեկտեմբերի վերջը, զօրավարի զգեստ հագած էր (չեռ նոր էր ելած կուրաղիի գործողութեան սպաքինումէն), իթթիհատական իր ընկերները անակնկալ կերպով պատերազմական նախարար անուանած էին զինք: Այդ պաշտօնը մինչեւ այդ ատեն կը կատարէր մարաջախտ Ահմէտ Իզզէթ փաշա» (էջ 7): Էնվերի այս ինքնակոչ անուանումը կը նշանակէր պաշտօնանկ ընել Իզզէթը: Որովհետեւ Իզզէթ փաշա լաւ կը ճանչնար իթթիհատական այդ զեկավարները եւ, ինչպէս յուշերուն (տպուած Լայփցիկ, 1927ին) մէջ արձանագրած է, Էնվէր եւ ընկերները «փառասէր, ետասէր» էին և «հայրենասիրութենէ զուրկ և իրենց գրպանները լեցնելու ետեւէ եզոզ ոճրագործներ» (տես, «Յիշողութիւններ», մարաջախտ Իզզէթ փաշայի գերմ. բնագիր, էջ՝ 77 եւ 294):

Էնվէրը շնորհաւորելու եւ անոր հետ խորհրդակցելու համար իր մօտ եկեր էին տոքթ. Նազըմ եւ զին. հետախուզական բաժնի եւ Թեշքիլաթը Մախսուսէի կազմակերպիչ էշրէֆ պէյ: Թուրք զինուորականները արդէն նախապատրաստութիւններ կը տեսնէին 1910 եւ 1911ի իթթիհատի համաժողովներուն գաղտնի ցեղասպանական որոշումները գործադրելու համար: Զեթէներու խումբեր կազմել սկսած էին Պալքաններու, մասնաւորապէս Թրակիոյ եւ Իզմիրի շրջանին մէջ, քրիստոնեաներու եւ մասնաւորապէս յոյներու դէմ:

Երբ Էնվէր, 1913ին, տակաւին փոխ զնդապետ էր, իր հօրեղբայրը՝ Սալիլ պէյ հինգ հազար չեթէներով կը յարձակէր Թրակիոյ յոյն գիւղերուն վրայ եւ կը կատարէր բռնաբարութիւններ ու սպանութիւններ:

Էնվէր, մեր ձեռքը գտնուած փաստաթուղթի մը համաձայն, թելադրած էր էշրէֆին, Յունուար 24, 1913ին, որ ան երթար Իզմիրի շրջանը եւ Թեշքիլաթը Մախսուսէի կազմակերպութիւններ հաստատէր հոն եւ Թիւրքմիլիֆին ուժ տար:

Որովհետեւ իրր թէ «Իզմիրի շրջանին մէջ յոյներու եւ հայերու եկեղեցիներուն մէջ զէնք եւ ռազմամթերք պահուած են, եկեղեցիները վերածուած են զինարանի եւ բոլոր քահանաները՝ էշքըյաչեթէներու պետեր են եղեր եւ հետեւաբար քեմիլիսմէ (մաքրագործման) գործողութիւններ սկսելու է անոնց դէմ» (տես էջ 60-63, ձեմալ Գուլթայի «Թեշքիլաթը Մախսուսէ վէ Խայպերտէ Թիւրք ձեմիլի» անուն երկը, տպագրուած Իսթանպուլ, 1962ին, էրճան տպարան): Այդ չեթէական կազմակերպութեան 1913ի պետերն էին Սուլէյման Աքքերի պէյ եւ Փերթեւ փաշա:

Փետրուար 24, 1914ին Էնվէր երկարօրէն կը խորհրդակցի իր ընկերոջ՝ Թեշքիլաթը Մախսուսէի կազմակերպիչ էշրէֆի հետ, չեթէական գործունէութեան ծրագրին շուրջ եւ ոչ-թուրք տարրերու ճնշման եւ բնաջնջման մասին: Կազմակերպուած այդ մարմինները ենթակայ պիտի ըլլային պատերազմական նախարար Էնվերի: Էնվէր որ նախապէս վկայաթուղթ մը տուած էր էշրէֆին գործի սկսելու Իզմիրի շրջանէն (Յուն. 24, 1913ին), կը յանձնէր նաեւ անոր իր ծածկագրի բանալին՝ հետը գաղտնորէն հաղորդակցելու համար կատարուած եւ կատարուելիք աշխատանքներու մասին (տես գաղտնի բանալիի լուսանկարը):

Պատերազմական նախարար Էնվէր յայտարարած էր նաեւ էշրէֆի, որ իր ձեռքէն եկած ամէն կարելին պիտի ընէ եւ պատերազմական նախարարութեան գաղտնի Ֆոնտէն (քախսիսաթը մեքսուրրէ) ուղածին չափ զրամ կրնայ ստանալ եւ այդ նպատակին համար տրամադրած է յիսուն հազար ոսկի:

Արդէն նախապէս տուած ենք թուրք կառավարութեան չեթէական մարմիններուն կեդրոնական ժողովներուն արձանագրութիւնները, Փետր. 1915ին, Մեւլանդատէ Րիֆաթի վկայութեամբ: 1913 եւ 1914ին եղած զինուորական կազմակերպութիւնները աւելի ընդարձակ ծրագրով մշակուած էին դահլիճի եւ իթթիհատի Կեդրոնի անգամներուն կողմէ — նախարարներ Թալէաթ, Ճաւիտ, Իպրահիմ, Ա-

լի Շիւքրի, բժիշկներ Պէհնէտտին Շաքիր, Նազրմ, Հասան Ֆեհմիի նման ցեղասպան երեսփոխաններ, կուսակցական քարտուղարներ, հրապարակագիրներ, ինչպէս՝ Աղա Օղլու Ահմէտ, եւ ցեղասպան «փիլիսոփայ-սոցիոլոգ»ներ, ինչպէս՝ Զիա Կէօք Ալի եւ բազմաթիւ նմանները:

Պատերազմական նախարար եւ վերին հրամանատարի փոխանորդ էնվէր կոչուած բորենին, իր դիրքին բերումով, ոճիրներու դործադրման հրամանատարութեան մէջ տիրական ձայն ունէր:

Թուրք ցեղասպաններէն ոմանք իրենց յուշերը հրատարակած են: Էնվէր բան մը հրատարակած չէ, թէեւ ան Ա. Տուատին ըսած է Մոսկուայի մէջ, որ իր յուշերը պիտի հրատարակէ յետոյ: Ճեմալ փաշա հրատարակեց իր յուշերը, ոչինչ բան մը, զոր անգլիական բանակի մամուլը հրատարակած էր: Գիտական տեսակէտով արժէքէ զուրկ եւ ստախօսութիւններով լեցուն է: Յուշեր հրատարակած են Թեշքիլաթը Մախսուէի հրամանատարներէն Սուլէյման Ասքերի պէյ, Պէհնէտտին Շաքիր պէյ, Թալէաթ: Ճաւիտի յուշերը մասամբ, երբեմն ալ շինձու կերպով, լոյս տեսած են «Թանին»ի մէջ: Ճաւիտինը հրատարակուած է 1947ին:


Թուրք զրոյ Ճեմալ Քութայ կ'ըսէ, որ «Ճաւիտ հակասական բաներ հրատարակած է: 1918 Դեկտեմբերին թրքական Երեսփոխանական Ժողովի Քննիչ Մարմնին առջեւ տարբեր բաներ ըսած է եւ 1947ի հրատարակութեան մէջ բոլորովին զիրար հակասող մտքեր կան»: Ճաւիտ կախուած էր Անգարայի մէջ 1926ին:

Մինչ թրքական այս չեթէական կազմակերպութիւնները, Ա. Համաշխարհային պատերազմի առաջին օրերէն իսկ զործել սկսած էին զինուորականներու հրամանատարութեան տակ, աստիճանաբար շարքերը լեցուած էին արիւնարբու մարդասպաններով, Հայաստանի վեց նահանգներուն մէջ զինուորական վերին հրամանատար ունենալով Երրորդ զօրքանակի հրամանատար զօր. Մահմուտ Քեամիլը, որ վերահսկիչն էր բոլոր մարդասպան չեթէապետներուն: Քեամիլ՝ իբր զինուորական՝ տգէտ մէկն էր: Բայց իրեն համար կարեւորագոյն պարագան այն էր, որ էնվերի ընկերը եւ մտերիմը եղած էր: Երբ հայոց տարագրութիւնը մեծ մասով կատարուած էր եւ երբ էրզրումը զբաւուած էր ռուսերէն, Փետր. 2—15, 1916ին, ան Պոլիս եկած էր եւ պատերազմական նախարարութեան մէջ եղած էր էնվերի խորհրդականը՝ անշուշտ տալով էնվերին իր կատարել տուած աշխարհազորդ ոճիրներուն ներքին մանրամասնութիւններուն ամբողջական տեղեկագիրը:

Ճեմալ Քութայ իր երկին մէջ (էջ 14-15) կը յիշէ որ Էշրէֆ հրատարակած է իր օրագիրը(ռուզնամէ), ուր արձանագրուած է, թէ Թեշքիլաթը Մախսուէէն (ջարդարար վաշտերը) իրենց ներկայացուցիչը ունէին թրքական սպայակոյտին մէջ եւ ներկայացուցիչը մաս կը կազմէր սպայակոյտին:

ԹՈՒՐԿ ԾԱԾԿԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԼԻՆ

Թրքական այբուբենը եւ անոնց համապատասխանող քուանդանները՝ գաղտնագրութեան համար Թեշքիլաթը Մախսուէի վերաբերեալ գործողութիւններու մասին:



Էշրէֆ(*) երբ ձերբակալուելով Մալթայի մէջ արգելափակուած էր, զրոյցներ ունեցած է անգլիացի զինուորականներու հետ՝ հայոց տարագրութեան մասին (Քութայ, էջ 309), առանց մանրամասնութիւններ տալու:

Երբ մէկը հաւասարէ հաւասար կը խօսի եւ նամակներով ալ կը թղթակցի Թուրքիոյ ղեկատարներէն էնվերի եւ Ճեմալի հետ, (այդ նամակներէն մի քանին մեր ձեռքին տակ են), անշուշտ կարեւոր զաւոտի պաշտօն ունէր: Ան ստացած է, իր այս պաշտօնի զործադրութեան համար, անգամ մը յիտուն հաղար ոսկի, ուրիշ անգամ մը՝ երեք հարիւր հաղար ոսկի. լոկ այս պարագան ցոյց կու տայ անոր

(*) Գնդապետ Լորենսի էշրէֆի մասին «հասարակ աւագակ մը» որակումը շատ մակերեսային է: Գնդապետ Լորենս ո՛չ ժամանակ, ո՛չ ալ առիթ ունեցած է Թեշքիլաթը Մախսուէի ռեթային կազմակերպութեան հիմնադիրներէն միոյն մասին ուսումնասիրութիւն ընելու:

պետութեան համար պաղտնի պաշտօնին կարեւորութիւնը: Անիկա Թուրքիոյ մէջ ցեղասպանական գլխաւոր անեմքներէն մին էր, զոր-
ծակիցը՝ Պալիլ փաշայի եւ նման ջարդարարներու: Էշրէֆ զինուո-
րական էր:

Մետինէի Թրքական զօրանոցի առջեւի մարզարանը, ուր կը
մարզուէին Թրքական ժանտարմները Մետինէի Թուրք կառավարիչի
որդւոյն կողմէ, Էշրէֆ արագութեամբ կը մօտենայ այդ մարզիչ
սպային եւ ակնթարթի մը մէջ կը յաջողի զայն վերցնել իր ձիուն
վրայ եւ առեւանգել, ճամբան իրեւ բեռնակիր կենդանի անոր վրան
բեռնելով յիսուն նկանակ հաց եւ տիկով ջուր, իրենց սնունդին հա-
մար, եւ կը հասնին ձեպէլ Օհոտ ըսուած անմարդաբնակ վայրը:

Մետինէի կառավարիչը, իր որդին փրկելու համար, Էշրէֆին
կը խոստանայ աքսորի եւ արդելափակումի պատիժէն զերծ պահել
ինք եւ անոր վճարել նաեւ հինգ հարիւր ոսկի, իբր փրկագին:

Էշրէֆ, փրկագինը ստանալէ ետք, կը դնէ ուղտ մը, վրան մը
եւ կին մը: Եւ կը թափառի արաբական ցեղերու մէջ: Վրայ կը
հասնի 1908ի Մահմանազրուութիւնը եւ Էշրէֆ, Իթթիհատականներու
այդ «հերոս»ը, կը սպաննէ քանի մը անձեր, զորս Էնվէր մատնանշած
էր: Ի վարձատրութիւն այդ «ծառայութեանց», ան կը նշանակուի
քննիչ գաղթականներուն եւ զրամ կը դիպէ (էջ 155):

Թեշքիլաթը Մախսուսէի իր զործերը մասամբ կարգադրելէ
ետք, Համաշխարհային Ա. պատերազմի երրորդ տարին, Արաբիոյ
չէզոք իշխանները կաշառելու համար, յետ խորհրդակցութեան Էնվէ-
րի հետ, կը մեկնի Արաբիա:

Էմիր Ապտուլլահ՝ Շերիֆ Հիւսէյնի որդին, կասկածելով անոր
ծպտեալ կարաւանէն, կ'ուզէ քննութիւն մը կատարել: Էշրէֆ կը
յայտնէ որ ինք «կը պատկանի արաբական Հեթէյմ ցեղին»: Երբ Ապ-
տուլլահի հետեւորդները կը մօտենան, արագահարուածով կը կրակէ
եւ կը փախչի: Փախստական Էշրէֆ ձանախիլա կոչուած վայրին մէջ
կը բռնուի վիրաւորուած վիճակի մէջ՝ Շերիֆ Ֆաուզան Էլ Հարիթի
ձեռքով: Էշրէֆի զոյքերուն մէջ կը գտնեն քսան հազար ոսկի եւ ուղ-
տի բեռ մը հրացաններ եւ ատրճանակներ: Անոր 107 անձէ բաղկաց-
եալ խումբը, բացի հինգէն, ոչնչացուած էր: Չեթէպետ Էշրէֆ
յանձնուեցաւ անյլիացի զննապետ Ուիլյամին եւ տարուեցաւ Եգիպ-
տոս, անկէ՝ Մալթա կղզին:

Էշրէֆի հետ զործակցած էին հարիւրաւորներ Թեշքիլաթը
Մախսուսէի շարքերէն՝ նախարարներ, Պէհաշաքիւններ, երեսփոխան
Ապտուլլահներ, Հիլմիի նման Իթթիհատի քարտուղարներ, Ուուլուսիք

նման ոստիկանապետներ, ինչպէս նաեւ Էնվերի դասընկեր, Երրորդ
բանակի հրամանատար՝ զօր. Մահմուտ Քեամիլ, որուն բանակատե-
ղին կը գտնուէր, ցեղասպանութեան օրերուն, Թորդումի մէջ եւ իր
հրամանատարութեան տակ էին բոլոր չեթէպետները:

Էշրուլուի անկումէն (Փետր. 2-15, 1916) յետոյ ցեղասպան
զօրավար Մահմուտ Քեամիլ Եկած էր Կ. Պոլիս եւ եղած էր խոր-
հրդականը Էնվերին: Ան Էշրէֆին մօտիկ ծանօթն էր: Էշրէֆի ծա-
նօթ էր նաեւ Մետինէի զինուորական հրամանատարը՝ Ֆախրի փաշա
կոչուած գաղանը, որ հրամանատարն էր նաեւ 12րդ Թրքական բանա-
կաթեւին եւ որ 1915ին աւերած էր Ջէյթունը եւ Ուրֆան, դառնա-
լով մեծ ցեղասպաններէն մին: Ըստ զնդ. Լորենսի, Ֆախրի «հին
մազործ մըն էր», որ արեան մէջ խեղդած էր Ուրֆայի եւ Ջէյ-
թունի հայերը (էջ 53):

1917ին, ջարդարար Ֆախրի Մետինէի մէջ ալ արարներուն
ջարդ մը տուած էր, երբ անոնք փորձած էին Մետինէի պատերէն
ներս մտնել: Բայց արարները վերջը յաջողած էին սպաննել Ֆախրիի
պահակները, ինչ որ մտատանջութեան մատնած էր Ֆախրին (էջ 95):

Ֆախրի անգամ մը փորձեց Մետինէէն մինչեւ Կարմիր ծովի
եզերքը՝ Ենպօ իջնել, բայց հարուածը ստացաւ նախապէս Թուրք
բանակի Թնդանթաձիգ սպայ սուրիացի Բասիմէն եւ Ֆախրիի ոյ-
ժերը հնձուեցան (էջ 128): Անգլիական օդանաւերն ալ նեղը դրած
էին Ֆախրիի ուժերը եւ ան ստիպուած մեկուսացած մնաց՝ ամփոփ-
ուելով Մետինէ քաղաքին մէջ, կիսով քաղցած վիճակի մէջ՝ մինչեւ
1918 Նոյեմբերի զինադադարը, երբ անձնատուր եղաւ: Անգլիացիներ
ըր զինք տարին նախ Գահիրէ, արդելափակեցին զինք Քասր Էլ Նիլ
զօրանոցին մէջ, ապա փոխադրեցին Մալթա, Էշրէֆի մօտ:

Ցաւալի էր որ Էշրէֆի ղեկավարած Թեշքիլաթը Մախսուսէի
անգամ էին նաեւ մէկ գերմանացի եւ մէկ աւստրիացի զինուորական-
ներ, որոնք նկարուած են Թուրք սճրագործներու կողքին:

Առաջին Համաշխարհային պատերազմէն վեց ամիս առաջ,
Թեշքիլաթը Մախսուսէի զրամները կը հայթայթուէին Էնվերի հը-
րամանով, Թոփալ Իսմայիլ Հապըր փաշա կոչուած զօրավարին կող-
մէ, որ Իթթիհատի դանձապահն էր եւ եղած էր նաեւ պատերազ-
մական նախարարութեան մէջ, բանակի պարենաւորման ճիւղի պե-
տը:

Առաջին անգամ ըլլալով Էնվէր 50 հազար ոսկի տուած էր
Էշրէֆի՝ Թեշքիլաթը Մախսուսէի զործերուն համար: Յետոյ հայերը
կողոպտելով՝ նւթական լայն միջոցներ ունեցան:

Զինադադարէն ետք, Թուփալ Իսմայիլ Հազար փաշան ալ, միւս ցեղասպան թուրք իթթիհատական ղեկավարներուն հետ, փախած էր Գերմանիա, ուր պահուած էր երեք տարիէն աւելի, գերման զօրավար Պրոնսաութ Ֆոն Շելլենտորֆի տան մէջ: Շելլենտորֆ թուրքիոյ մէջ գերման Զինուորական Առաքելութեան անդամ էր եւ միաժամանակ էնվերի ընդհ. սպայակոյտի պետն էր: Ան էնվերի հետ կովկասեան ճակատ դացած եւ մասնակցած էր Սարըղամիշի ճակատամարտին, Դեկտեմբեր 1914ին, եւ չարաչար պարտուած:

Գերմանիոյ մէջ իր պաշտպանեալը(*)՝ Թուփալ Իսմայիլ Հազար 1922ին վերադարձած էր Թուրքիա եւ թշուառ վիճակի մէջ ալ մեռաւ: Թուրք գրողները կ'ըսեն, թէ հրեայ մը թաղեց անոր դիակը (ձեմալ Գութայ, էջ 187):

Էջրէֆ 1917ին արարներուն դէմ աշխատելու համար էնվերէն ստացաւ 300.000 ոսկի եւ գնաց Մետինէ իր բարեկամին՝ Ֆախրի փաշայի մօտ: Ֆախրի՝ Ուրֆայի ջարդարարը կ'ուզէր, որ էջրէֆ Եմէն երթայ եւ Իմամ Եահիան եւ անոր կողմնակիցները Մեքքէի Շերիֆ Հիւսէյնի դէմ զինէ: Բայց չյաջողեցաւ, որովհետեւ Մետինէէն 45 մղոն հիւսիս, Սայպէրի մէջ՝ թուրքերը պաշարեցին և իրեն հետ եղող չեթէները սպանուեցան, իսկ էջրէֆ եւ ուրիշ չորս անձ վիրաւորուած գերի բռնուեցան: Ապա ձեռտէ տարուեցաւ: Մալթայի մէջ սակայն անվիրացիները անոր յատկացուցին լաւ յարկարաժին մը ամէն դիւրութիւններով:

1920 Մարտ 16ին, երբ թուրք գլխաւոր ջարդարարները Մալթա փոխադրուեցան, «Վարդալա» զօրանոցին մէջ՝ այդ ոճրագործները կը հաւաքուէին էջրէֆի մեծ սենեակին մէջ, կը խորհրդակցէին ու կը վիճարանէին: Էջրէֆի բնակարանը իբրեւ ակումբ կը ծառայէր արիւնկզակ իթթիհատական թուրք ջարդարարներուն 1920-1921ին, Մալթայի մէջ:

Թուրք պետութեան ցեղասպանութեան մասին թրջական երկու դահլիճներուն (Սայիտ Հալիմի եւ Թալէաթի) մասին, ղինադադարէն վեց օր ետք, Նոյ. 5, 1918էն մինչեւ Դեկտ. 21, 1918, թուրք սուլթան Վահիէտտինի հրամանով լսուեցան թուրք պետութեան այն բոլոր անդամները, որոնք չէին փախած Գերմանիա: Այն ատեն Տիւանիէի երեսփոխան Ֆուատ պէյ, հեռադրով մը, թրջական Երեսփ.

(*) Զօր. Շելլենտորֆ միակ գերմանացին էր, որ Թալէաթի սպանութենէն յետոյ կարճ գրութիւն մը գրեց ի նպաստ Թուրքիոյ, գերման «Տօյէ Ալկեմայնէ Ճայթունկ»ի մէջ, որ քարգամաքար սպուեցաւ բուրբ բերթերուն մէջ:

Ժողովի քսան հոգիէ բաղկացած քննիչ յանձնախումբին ներկայացուց տասը պարբերութիւններէ բաղկացած թաղեր-ամբաստանադիր մը այդ դահլիճներուն դէմ: այդ պարբերութեան 10րդ պարբերութեան մէջ ըսուած է բառ առ բառ.

«Մեմլեքէթ իչինտէ իտարի հերձ ումերձ, եարաթարագ, հիւրիյէթ, ճան, մալ, վէ ըրզա մուսալլաթ՝ պիր տազմ չեթելերէ մուղահերէթ էտերէք՝ եափըլան Փաճիալարա իչթիրաք էթմիշլէր տիր»: Որուն թարգմանութիւնն է.— Երկրին ներսը վարչական վերիվայրումներ ստեղծեցին, ազատութեան, կեանքի, սեփականութեան եւ պատիւի վրայ յարձակում գործող չեթէներուն օգնեցին եւ տեղի ունեցած աղէտներուն մեղսակից եղան («Թեչքիլաթը Մախսուսէ», ձեմալ Գութայ, էջ 72):

Թալէաթի եւ Սայիտ Հալիմի ղեկավարած պետութեան ժառանգորդ, Թուրքիոյ նախագահ ձեմալ Կիւրսէլ, վարչապետ՝ Սայիտ Պայրի Իւրկիւպլիւ, Ուաշինկթընի թուրք դեսպանատան տեղեկատու կցորդ Ալտեմիր Գըլըճ, Գահրիէի թուրք դեսպանատան գործակատարը կամ Փարիզի թրջական դեսպանատան մամուլ խորհրդականը՝ Զիա Թուկալ եթէ անգամ մը քննեն թուրք պետութեան արխիւները, Երեսփոխանական Ժողովի թուղթերը եւ արձանագրութիւնները, իթթիհատի և Թեչքիլաթը Մախսուսէի նիստերուն արձանագրութիւնները եւ յարարերական թուղթերը, շատ դիւրութեամբ պիտի տեսնեն թուրք պետութեան կատարած ցեղասպանական ոճիրներուն ահաւորութիւնը եւ նաեւ հայերու ներկայացուցած իրաւունքներուն ու պահանջներուն արդարութիւնը, եւ ստիպուած չեն ըլլար ստայօղ յօդուածներ տեղաւորելու թերթերու մէջ:

ՎԱՒԵՐԱԳՐԵՐՈՒ ԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Կոստանդնուպոլսոյ մէջ գործող թրքական Պատերազմական Ատեանը հայերու տարադրութեան եւ ջարդերու վերաբերեալ պետական կարեւոր փաստաթուղթերու տրցակ մը ձեռք բերած էր 1919 — 1920ին, հակառակ անոր, որ ղեկավար թուրք ոճրագործները, իրենց փախուստէն առաջ, յաջողք էին փախցնել, պահել կամ անհետացնել կարեւոր մաս մը վաւերագրեր, արձանագրութիւններ, ծածկագիր հեռագիրներ, տոմարներ, հաշիւներ, փոխանակուած հաղորդագրութիւններ, շրջաբերականներ՝ նախարարութեանց, վալիներու, միութեսարըֆներու, Թեշքիլաթը Մախսուսէի պատասխանատու քարտուղարներու, զինուորականներու, ժանտարմըրիի հրամանատարներու թուղթեր: Այդ բոլորը կը վերաբերէին հայերու վրայ դործուած ցեղասպանութեան արարքներուն:

Պաշտօնական վաւերագրերու այդ զողութիւնները ըրած են հետեւեալները.—

1.— Ներքին դործոց նախարարութեան մէջ հայերու տարադրութեան ու ջարդերու վերաբերեալ փաստաթուղթերը զողջողներէն մին էր Աղիզ պէյ, պետական ապահովութեան նախկին տնօրէնը, որ տարած է նաև ներքին դործոց նախարարութեան գաղթականներու ղետեղման (իսքեսնը աշայիր տայիրէսի) թուղթերը:

2.— Իթթիհատի եւ Թեշքիլաթը Մախսուսէի թուղթերը անհետացուցած է տոքթ. Նաղըմ, Գերմանիա փախչելու միջոցին, գաղտագողի առնելով զանոնք Նուրը Օսմանիէի Կեղրոնէն:

3.— Փոխ-գնդապետ Հիւսամէտտին պէյը, որ Թեշքիլաթը Մախսուսէի պետերէն էր եւ առանձին յարկարոժին մը ունէր պատերազմական նախարարութեան շէնքին մէջ, ուր կը կեղրոնացուէին բոլոր կարեւոր գաղտնի թուղթերուն բնագիրները:

4.— Դատավարութիւնները հազիւ սկսած էին, երբ Պատերազմական Ատեանի քննիչ յանձնախումբը յաջողած էր, բացի մաս մը վաւերագրերէ, ձեռք անցընել նաև հարիւրաւոր երգուեալ վկայութիւններ, խոստովանութիւններ, պետական հեռագիրներ, որոնք դասաւորուած էին 296 թղթածրարներու (տոսիէներու) մէջ:

Անատուլի մէջ բուսած քեմալական իշխանութիւնը, հետզհետէ զօրացած Իթթիհատի ոգին կրող միլիթներէ, ոչ միայն ազդեց դատավարութեանց վրայ, այլև կասեցուց զանոնք: Դատաւոր զինուորականներէն մին բանտարկեցին եւ, ի լրումն ամենայնի, տեղի ունեցաւ պատրաստ տոսիէներու յափշտակումը այդ տարրերուն կողմէ, տանելով վաւերագրերը նախ Պրուսա, ապա՝ Անգարա, ուր թուրք փրոֆեսորները կ'ուսումնասիրէին իրենց գործին գալիք փաստերը եւ զանազան հրատարակութիւններ կը կատարէին անոնցմէ:

Պատերազմական Ատեանի Ապրիլ 27, 1919ի նիստին արձանագրութենէն կը քաղենք հետեւեալ վկայութիւնները.—

«... Հեռագիրներ, փաստաթուղթեր, Թեշքիլաթը Մախսուսէի հաղորդակցութեանց վերաբերեալ կարեւոր մաս մը, ինչպէս նաև ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵԴՐՈՆԻ (մերքէզը ումուի) ամբողջ թուղթերը եւ տոմարները փախցուցած են (աշըրըլմըլ տըր): Եւ նոյն իսկ ընդհանուր ապահովութեան տնօրէն ԱՉԻՉ ՊԷՅ, Թալէաթի հրատարելէն առաջ (Սեպտ. 15, 1918), պաշտօնատան մէջ գտնուող կարեւոր տեղեկագիրները, հաղորդագրութիւնները պարունակող տոսիէները, իր հրատարումէն ետք, առած եւ չէր վերադարձուցած: Այդ մասին պաշտօնական հաղորդագրութիւն մը ստացանք ներքին դործոց նախարարութենէն, նաև ունեցանք զրաւոր վկայութիւններ, որոնք կը հաստատեն կարեւոր թուղթերուն գողութիւնը (տոսիէ թիւ 3)»:

Այդ պարագան յիշուած է նաև ընդհանուր դատախազի Ապրիլ 12 թուակիր պահանջագրին մէջ (իտտիանամէ), որ մաս կազմած է դատական արձանագրութեանց (էջ 5, սիւնակ Բ.):

Պատերազմական Ատեանի Մայիս 4, 1919 թուականի նիստին մէջ, էջ 19—20, դարձեալ վաւերագրերու զողութեանց մասին արձանագրուած է հետեւեալը.—

Նախագահը կը հարցաքննէ Իթթիհատի ընդհանուր քարտուղար ՄԻՏՀԱԹ ՇԻԻՔՐԻՆ.—

ՆԱԽԱԳԱՀ.— Իթթիհատ եւ Թերադը ձեմիյէթը ԹեճեՏՏԻԻՏ կուսակցութեան փոխուելու միջոցին (Նոյեմբեր 11էն մինչեւ Նոյեմբեր 15, չորս օր տեւած էր (Ծ. Հ.), Ընդհանուր Կեդրոնին պատկանող բոլոր արձանագրութիւնները եւ զանազան թուղթերը այդ Կեդրոնին անունով փոխանցուեցա՞ն Թեճետտիւտ կուսակցութեան:

ՄԻՏՀԱԹ ՇԻԻՔԻԻ.— Բնականաբար, էֆենտի՛մ: Բայց յետոյ ցաւով իմացայ, թէ տոքթ. Նազըմ պէյի կողմէ առնուեր են անոնք: Պաշտօնեաներէն այդպէս իմացայ(*):

Դարձեալ պատերազմական ատեանի Մայիս 4, 1919ի նիստին մէջ, էջ 19—20, փաստաթուղթերու գողութեան մասին կը վկայէ նաեւ Չիւֆի Ա.Փ. —

ՆԱԽԱԳԱՀ.— Իթթիհատի եւ Թերադը կուսակցութիւնը գաւառներու մէջ ի՞նչ կարգի պաշտօնեաներ ունէր:

Չիւֆի Ա.Փ.— Սկիզբէն կեդրոնական մարմինները տեղւոյն վրայ ներկայացուցիչներ կ'ընտրէին: Յետոյ միւֆթերը (քննիչներ) նշանակուեցան:

ՆԱԽԱԳԱՀ.— Ձեմիյէթին կամ կուսակցութեան տոմարները եւ կարեւոր արձանագրութիւնները փոխանցուեցա՞ն Թեճետտիւտ կուսակցութեան:

Չիւֆի Ա.Փ.— Բնականաբար փոխանցուեցան:

ՆԱԽԱԳԱՀ.— Տեղեկութիւն ունի՞ք, թէ ոչ ենթադրութիւնով կը խօսիք:

Չիւֆի Ա.Փ.— Բնականաբար, Քոնկրէն տէրն էր բոլոր թուղթերուն եւ ամէն ինչի:

ՆԱԽԱԳԱՀ.— Այդ տեսակ կարեւոր թուղթերը տոքթ. Նազըմ պէյի կողմէ փախցուեր են (գաչըբըլմըլ) կ'ըսուի, ճի՞շդ է:

(*) Ոմրագործները, ինչպէս բոլոր իրազուրիւններէն, մաւր այս գազուքեմէ տեղեկ են, սակայն կ'ուրաման եւ կը ստեմ:

Չիւֆի Ա.Փ.— Ե՛ս, ծառանիդ, ընդհանուր քարտուղարութենէն տեղեկացայ, թէ տոքթ. Նազըմ պէյը ձեմիյէթին (Իթթիհատ) պատմութեան վերաբերեալ թուղթերը ուղեր է եւ ան ալ (քարտուղարը) ըսեր է. «Շատ լաւ, առէ՛ք»: Այդ իրողութեան յետոյ Միտհատ Շիւքրի պէյէն տեղեկացայ: Բայց յետոյ, բանտ մտնելէն ետք իմացայ, որ տարուած թուղթերէն միւս թուղթերը չեն զատած եւ բոլորը միասին առած տարած են անտուկով: Այդ փաստաթուղթերուն այդ ձեւով հեռացուելուն լուրը ստացայ (դատական արձանագրութիւն, էջ 22(*)):

Թուղթերու անհետացումը՝ փոխ-գնդապետ Հիւսամէտտիմ Էրթիւքի կողմէ —

Հիւսամէտտիմ պատերազմական նախարարութեան չէնքին մէջ ունէր ատանձինն բաժանմունք մը, Նուրը Օսմանիէի Կեդրոնէն զատ, ուր կը կեդրոնացուէին բոլոր գաղտնի հաղորդակցութիւնները (ցեղասպանութեան վերաբերեալ): Թեւքիլաթը Մախսուսէի (չեթական կազմակերպութեան) Նուրը-Օսմանիէի Կեդրոնին մէջ էին տոքթ. Նազըմ, Աթէֆ, Ալիդ եւ զնդապետ ձեւատ, որ հաղորդակցութեանց միջնորդ էր ինվերի եւ Թեւքիլաթի միջեւ, ինչպէս նաեւ ուրիշ պաշտօնեաներու միջեւ, ըլլալով մերքէ գոմաստանի (զինուորական կեդրոնական ոստիկանութեան պետ):

Իսմէթ, երբ տակաւին Անատոլու անցած չէր, Մուսթաֆա Քեմալի մօտ, պատերազմական նախարարութեան մէջ ինվերի խորհրդականն էր: Հիւսամէտտին իր յուշերուն մէջ ըսած էր Իսմէթին, թէ «Թեւքիլաթի եւ այլ բոլոր գաղտնի թուղթերը տարած-պահած է Իսթանպուլ՝ Չաթիհի մղկիթի գաղտնի սենեակի մը մէկ անկիւնը, եւ Իսմէթ ժպտած է Հիւսամէտտինի այս յաջողութեան համար (տե՛ս «Իֆի Տերիմ Փերտէ Արգասը» զրքին մէջ):

(*) Ըլլա՛յ Միտհատ Շիւքրի, ըլլայ Զիա Կեօֆ Ալի՝ փիլիսոփայ-սոցիոլոգ ոմրագործը եղած են երկուքն ալ Ընդհանուր Կեդրոնի կարեւոր անդամներէն: Միտհատ Շիւքրի ընտրուած էր 1908ի, 1911ի, 1916ի եւ 1917ի Իթթիհատի Քոնկրէներուն կողմէ: Մինչեւ 1911 ընդհանուր քարտուղարն էր Համի Ատիլ, ամկէ ետք ընդհանուր քարտուղար եղած էր Միտհատ Շիւքրի:

Չիւֆի Ա.Փ. Ընդհ. Կեդրոնի անդամ ընտրուած էր 1910ի, 1911ի, 1912ի, 1916ի եւ 1917ի Քոնկրէներուն կողմէ: Երկուքն ալ մերկայ եղած էին 1911ի Սելամիկի Քոնկրէի գաղտնի միտիմ, ուր վճռուած էր ոչ-քուրքերու ցեղասպանութիւնը: Այդ մասին մանրամասնութիւնը՝ հետագային, երբ վերլուծման կ'ենթարկեմք Իթթիհատի բոլոր Քոնկրէներուն արձանագրութիւնները եւ որոշումները:

Հիւսամէտտին յետոյ անցած է Մ. Քեմալի մօտ, իբր չեթէնե-
րու սպայակոյտի անդամ:

*
**

Չորրորդ մեծ գողութիւնը տեղի ունեցաւ քեմալիստներու մի-
ջոցաւ: Ճնշում ի գործ դրին Պատերազմական Ատեանին վրայ, դադ-
րեցուցին անոր դատաւարութիւնները եւ յետոյ դատարանին բոլոր
փաստաթուղթերը, տոսիէները փախցուցին Անգարա:

ԻՆՉՊԷՍ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԵՑԱՆ ԱՊՐԻԼ 24-Ի ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Թուրքիոյ ամերիկեան դեսպան Հենրի Մորկընթաու Ապրիլ 27
1915ին Կ. Պոլսէն, կէսօրէ ետք ժամը չորսին հեռագրեց Միացեալ
Նահանգներու պետական պաշտօնատան. — Թիւ 608.—

«Հարիւրէ աւելի լաւագոյն դասակարգի հայեր ձերբակալուե-
ցան իբր թէ կանխելու համար յեղափոխական փրոփականտը:

«Անոնց մէջ է նաեւ Լեւոն Շիրինկոնը(?), որ Պարսկաստան ծը-
նած եւ ամերիկեան քաղաքացի մըն է, որուն ամերիկեան քաղաքա-
ցիութեան գիտակ է Բարձրագոյն Դուռը: Խնդիրը ձեռք առած եմ:
Հաւանարար ատոնց կեանքը վտանգի տակ չէ(?), բայց կը տարա-
զրուին զէպի երկրին ներսերը: Հայերուն դէմ եղած այս շարժումը
մաս կը կազմէ ոչ-թուրք բոլոր տարրերու դէմ շարժման, ինչպէս
նաեւ ոչ-իթթիհատական տարրերու դէմ: Նշաններ կան որ սիոնա-
կաններուն դէմ ալ նոյնը պիտի շարունակուի: Ստացած եմ նաեւ ան-
նըպաստ տեղեկագիրներ հայերու մասին ներքին նահանգներէն: Ես
և ընկերներս զօրաւոր ջանքեր կը թափենք ծայրայեղութիւնները ար-
գիլելու եւ շարժումը կասեցնելու համար»:

Ստորագրուած՝
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆ

Արխիւի բաժնի թիւ՝ 867, 4016-58

Վերոյիշեալ հեռագիրը Ուաշինկթըն ստացուած է Ապրիլ 28, 1915 առաւօտեան ժամը 10·30ին:

Այդ հեռագրին ի պատասխան՝ Մ. Նահանգներու պետական քարտուղար Պրայըն հետեւեալը հեռագրեց Թուրքիոյ մէջ ամերիկեան ղեսպան Մորկընթաուի:—

Ուաշինկթըն, Ապրիլ 29, 1915
կէսօրէ ետք ժամը 5ին

Թիւ 633

Պետական պաշտօնատան Ապրիլ 27 եւ 28 608 Ապրիլ 27ի (պատասխանը) — «Ստիպողաբար պաշտպանեցէք հայերը եւ սիոնականները Թուրք կառավարութեան (ղիմելով):

ՊՐԱՅԸՆ»

Թուրքերու ցեղասպանական գործունէութեան դէմ դիմում կատարած էր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Նորին Ս. Օծութին Գէորգ Ե. Սուրէնեանց, որ յետոյ «ՎՇՏԱԿԻՐ» կոչուեցաւ: Դիմումը կատարուած էր Ուաշինկթըն, ռուսական ղեսպանին խողովակով՝ ամերիկեան պետական պաշտօնատան, որուն վրայ պաշտօնատունը հետեւեալ հեռագիրը ղրկած էր Թուրքիոյ ամերիկեան ղեսպան Մորկընթաուի:—

Արձանագրութեան թիւ՝ 867·4016-58 ա, —
Հեռագրի թիւ՝ 626

Ուաշինկթըն, Ապրիլ 27, 1915
կէսօրէ ետք ժամը 7ին

«Ռուսական ղեսպանը մեր ուշադրութեան յանձնեց կոչ մը Հայ Եկեղեցւոյ Կաթողիկոսին կողմէ, որպէսզի ամերիկեան կառավարութիւնը իր բարեացակամ ծառայութիւնը ընծայէ Թուրք կառավարութեան մօտ՝ արգիլելու համար Թուրքիոյ հողամասին վրայ գտնուող ոչ-պատերազմիկ հայերուն ջարդը:

«Կը հաճիք այս խնդիրը ուշադրութեանը յանձնել կառավարութեան եւ ստիպողական ազդու միջոցներ ձեռք առնել հայերու պաշտպանութեան համար, որիչ կրօններու պատկանողներուն դէմ բռնադատութիւն ընող ձեռքերէ: Ռուսական ղեսպանը ուշադրութիւն հրաւիրեց սա իրողութեան վրայ, որ ռուսական հողի վրայ գտնուող բազմաթիւ իսլամները կրօնական հալածանքներէ բոլորովին զերծ են:

Ստորագրուած՝
ՊՐԱՅԸՆ»

Այնպէս կը թուի թէ մինչեւ Փետրուարի (1915) երկրորդ կիսուն՝ ոչ Ուաշինկթընի պետական պաշտօնատունը եւ ոչ ալ Կ. Պոլսոյ ամերիկեան ղեսպանատունը տեղեկութիւն չունին հինգ ամիսներէ ի վեր Թուրք. ջարդարարական կազմակերպութիւններու՝ Թեյքիլաթը Մախսուէի ճնշիչ գործունէութեան մասին, Թուրքերու գաղտնի գործելակերպին պատճառով, երբ ղեսպանը իր հեռագրին մէջ կ'ըսէ, թէ «հրեաները եւ քրիստոնեաները պաշտպանուած են»:

Պետական պաշտօնատան հեռագիրը՝
Դեսպան Մորկընթաուի (Թուրքիա)
Արձանագրութիւն թիւ 367·116-309

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Ուաշինկթըն, Փետր. 18, 1915
կէսօրէ ետք ժամը 7ին

Թիւ 397.— Տեքըրը հեռագրեց ծովային պաշտօնատան խողովակով, որ Սուրիոյ եւ Պաղեստինի մէջ հրեաներուն դէմ զորաւոր հակառակութիւն կայ: Վտանգը կրնայ պայթիլ որեւէ ժամանակ՝ անձի եւ սեփականութեան կորուստ պատճառելով: Ձեզի կը հրահանգենք, որ Թուրք կառավարութեան միջոցով հրաման տրուի քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներուն, որ եթէ Պաղեստինի եւ Սուրիոյ մէջ ջարդեր ըլլան հրեաներու եւ քրիստոնեաներու դէմ՝ պատասխանատու պիտի բռնուին կեանքի եւ սեփականութեան համար: Ասիկա կը պահանջուի անմիջապէս:

ՊՐԱՅԸՆ»

Ասոր ի պատասխան ամերիկեան ղեսպան Մորկընթաու հետեւեալ հեռագիրը կը ղրկէ պետական քարտուղարին:—

Արձանագրութիւն թիւ 307·116-298

Կ. Պոլիս, Փետր. 20, 1915, կէսօրէ ետք ժամը 5ին,
(որ Ուաշինկթըն ստացուած է Փետր. 21
առաւօտեան ժամը 10ին)

Թիւ 430.— Պատասխան 28 397 թիւին.— Պարունակութիւնը հաղորդած եմ ներքին գործոց նախարարութեան, որ կ'ըսէ թէ «պատճառ չկայ մտահոգուելու հրեաներու եւ քրիստոնեաներու համար: Սեփականութիւնները պաշտպանուած են»: Թէեւ ես, Ձեր հրահան-

զին համաձայն, Բարձրագոյն Դուռնէն պահանջեցի հրահանգներ զրկել Սուրբիոյ եւ Պաղեստինի իշխանութեանց»:

**Ստորագրուած՝
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆ»**

Ապրիլ 24ին մտաւորականներու ձերբակալութեանց առթիւ գերման դեսպան Վանկենհայմի բռնած զիրքը.—

Ան նախ կը հեռադրէ Ապրիլ 28, 1915ին, Կ. Պոլսէն էրզրումի փոխ-հիւպատոս Շոյպնըր Ռիյէթըրին, թէ «այստեղի (Կ. Պոլսոյ) թուրք իշխանութիւնները բազմաաւարիւր ակաճաւոր հայեր ձերբակալեցին եւ դէպի Անատոլու զրկեցին, յայտնելով, թէ հայերը յեղափոխական շարժում ցոյց տուած են»:

Ասոր ի պատասխան՝ Ապրիլ 21 — Մայիս 4, 1915ին հիւպատոս Շոյպնըր կ'ըսէ թէ երկու հարիւր հայեր ալ ձերբակալուեցան (էրզրումի մէջ):

Ապրիլ 24ի ձերբակալութեանց մասին գերման դեսպանը հազիւ բարեհաճեր էր իմացնել Պերլին վեց օր յետոյ, նամակով մը Ապրիլ 30, 1915ին՝ աւելցնելով նաեւ, որ «Մայիս 4, 1915ին էրզրումի հայերու մեծ գիւղերուն ժողովուրդը կը տարագրուի եւ թրքական դաղթականներ կը հաստատուին հոն»:

Թուրք թերթերու մէջ հրատարակուած հայոց տարագրութեան օրէնքը, որ կը կրէր Մայիս 14, 1915 թուականը, և դեսպանին նամակը ցոյց կու տան, որ օրեր առաջ արդէն տարագրութեան սկսուած և դործադրուած էր, ուրեմն այդ օրէնքէն առաջ զրկուած կային գրաւոր կամ բերանացի հրահանգներ եւ գերման դեսպանն ալ լուր չունի:

Մայիս 12, 1915 թուակիր թրքական ծածկազիր հեռագիր մը ցոյց կու տայ որ տարագրութիւնը արդէն գործադրուած էր ատկէ առաջ: Նախապէս հրահանգ զրկուած ըլլալու էր, որ ծածկազիրը կ'ըսէ, թէ «հայերէ պարպուած գիւղերուն անունները եւ անոնց (հայերուն) զրկուած տեղերը իմացուցէք»:

Այս բոլոր ոճրագործական արարքներուն դէմ հետեւեալ բողոքազիրները տրուեցան թուրք կառավարութեան.—

Հեռագիր՝ Պրանսայի ամերիկեան դեսպան Շարփի կողմէ —

Ուաշինկթընի պետական պաշտօնատան
Արձ. տոմարի թիւ 867.4016-67

Փարիզ, Մայիս 28, 1915, առաւօտեան ժամը 11ին, որ ստացուած է նոյն օրը, երեկոյեան ժամը 8ին.—

Թիւ 796.— Արտաքին զործոց նախարարութենէն (Ֆրանսական) ճիշդ հիմա ստացայ ծանուցագիր մը, որ կը փոխանցէր հաղորդագրութիւն մը, խնդրելով որ հաղորդուի ստիպողաբար օսմանեան կառավարութեան հետեւեալը.—

«Մայիս 24.— Մօտաւորապէս ամիսէ մը ի վեր Հայաստանի թուրք եւ քրիստ ժողովուրդները կը ջարդեն հայերը, մեղսակցութեամբ եւ յաճախ օժանդակութեամբը տեղական իշխանութիւններուն: Նըման ջարդեր տեղի ունեցած են (նոր թուականով) Ապրիլի կէսին, էրզրումի, Դերջանի, Ակնի, Վանի, Մուշի, Սասունի, Զէյթունի եւ Կիլիկիոյ մէջ: Վանի մօտ հարիւր գիւղերու հայերը սպաննուած են: Այդ քաղաքին մէջ հայերը պաշարուած են քրիստերու կողմէ: Միւս ժամանակ Կ. Պոլսոյ օսմանեան կառավարութիւնն ալ կը չարչարէ խաղաղ եւ անվնաս հայերը»:

«Նկատի ունենալով, որ թուրքիոյ այս նոր ոճիրները կը դործուին մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ, դաշնակից կառավարութիւնները հրապարակաւ կը յայտարարեն Բարձրագոյն Դըրան, որ անձնապէս պատասխանատու պիտի նկատեն այս ոճրագործութիւններուն համար օսմանեան կառավարութեան բոլոր անդամները եւ անոնց բոլոր գործակալները, որոնք մասնակից են այդ ջարդերուն:

**Ստորագրուած՝
ՇԱՐՓ (դեսպան)»**

Վերոյիշեալ հեռագիրը պետական պաշտօնատան կողմէ զրկուած է (Կ. Պոլիս) և կրկնուած է 715 թիւով ալ Մայիս 29, 1915ին:

Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանը, երեք շաբաթ ետք, հետեւեալ պատասխանը կու տայ.

Կ. Պոլիս, Յունիս 18, 1915, երեկոյեան ժամը 6ին.—
Ուաշինկթընի մէջ ստացուած Յունիս 21, առաւօտեան ժամը 8.30ին:

«Պետական պաշտօնատան (Ուաշինկթըն),
778.— Ձեր 715 թիւ հաղորդագրութիւնը Յունիս 3ին փոխանցեցի վարչապետին, որ ցաւ յայտնեց, թէ անձնապէս պատասխանատու կը բռնուի և մերժեց օտար կառավարութիւններու միջամտութեան փորձը՝ թուրք կառավարութեան դերիշխան իրաւունքներուն դէմ՝ հայ հպատակներուն մասին: Մինչդեռ հայերու դէմ հալածանքը աւելի կը սաստկանայ: Երեք ականաւոր երեսփոխաններ Զաճրպ (Զօհրապ),

Վարդ (Վարդգէս), Պրենտի(*), Զրահեան ձերբակալուած են: Քսան հայեր հրապարակաւ կախուեցան՝ Թուրքիան բաժնելու դաւադրութեան ամբաստանութեամբ: Ուրիշ կախաղաններ ալ պիտի հետեւին ասոնց: Իմ կատարած պաշտօնական ջանքերս, յաճախակի եւ պնդումով, թեթեւցնելու շարիքները, ձախողած են եւ չեն կրցած ետ կեցընել զիրենք իրենց ընթացքէն, որ կը ջանան արդարացնել զինուորական անհրաժեշտութեան հիմունքով:

Ստորագրուած՝
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆ»

Բայց ատկէ՝ աւելի գէշը կայ: Ուաշինկթընի պետական պաշտօնատունը դեսպան Մորկընթաուին ղրկած է հինգ ուրիշ հեռագիրներ եւս, Հոկտեմբեր 9, 1915էն առաջ, որոնց թիւերն են 973, 974, 972, 1010 եւ 1028, եւ հաւանարար բոլորն ալ հայերու տարագրութեան կապակցութեամբ են և հայերուն ի նպաստ: Եւ դեսպան Մորկընթաու կը յայտնէ պետական պաշտօնատան Հոկտեմբեր 9, 1915 թիւ հեռագրով, որ վերոյիշեալ հինգ հեռագիրները չէ ստացած: Թալէաթ-ին-վերեան թուրք կառավարութիւնը Ուաշինկթընի պաշտօնատան այդ հեռագիրներն ալ նկատել է «լքեալ գոյք» և «եւ-երթանք» ընելով գլըպաններ է (այդ հեռագիրներու կորուստի մասին տեսնել Ֆորէյն օֆ-ֆէյլընս ավ տը Յունայթըտ Սթէյթս, 1915 Սըփլըմենթ, էջ 989):

Կարճ խօսքով, ամերիկեան պաշտօնական հինգ հեռագիրներն ալ, հայերուն բախտակից դառնալով, թաղուած են ջարդարաններու դարակներուն մէջ:

Դաշնակից պետութեանց այդ ծանուցագրի օրերուն, «ԴՐՕ-ՇԱԿ»ի խմբագրութիւնն ալ «Ոճրագործները անձնապէս պատասխանատու բռնելու մասին» խորագրով հաղորդագրութիւն մը ղրկած էր թրքական կառավարութեան:

Ապրիլ 24ի ձերբակալութիւններուն մասին դերման դեսպանը հետեւեալը գրած է վարչապետ Պեթման Հոլլեկին՝ Ապրիլ 30 թուականով (1915) .

«Շարաթ գիշեր, որ հետեւեալ օրը Կիրակի է, Ապրիլ 25, 1915, եւ Երկուշաբթի, Ապրիլ 26ին ձերբակալուեցան հինգ հարիւր ան-

ձեր, բժիշկներ, հրապարակագիրներ, գրողներ, հոգեւորականներ եւ քանի մը երեսփոխաններ: Դաշնակցութեան օրկանը՝ «Ազատամարտ» փակուեցաւ: Զերբակալուածներէն շատեր դաշնակցական են: Շատերը հետեւեալ օրը ղրկուեցան Փոքր Ասիոյ խորերը: Այս ձերբակալութեանց համար զրոյցներ չըջան ըրած են, թէ հայ տուներու եւ եկեղեցիներու մէջ պայթուցիկներ, ումբեր եւ պէնքեր դոնուած են եւ թէ հայերը, թագաւորի գահակալութեան օրը, Ապրիլ 27, 1915ին, մտադիր էին օրը հանելու Բարձրագոյն Դուռը եւ պաշտօնական շէնքերը(?):

Գերման դեսպանը կը շարունակէ .—

«Երբ Պատրիարքը ղիմեց ձերբակալութեանց պատճառը հասկընալու՝ վարչապետը եւ ներքին գործոց նախարարը ըսին, թէ պետութեան ապահովութեան համար ազդեցիկ անձնաւորութիւնները կը հեռացնեն մայրաքաղաքէն:

«Իսկ գերման դեսպանատան թարգմանին ալ ըսած են որ «կրօնական համայնքները առանձին քաղաքականութիւն կ'ընէին: Ասկէ ետք միմիայն թրքական քաղաքականութիւն պիտի ըլլայ, եւն.»:

Թրքական ստախոսութիւնները հասկնալի են, բայց դերմանական անտարբերութիւնը եւ արեւի նման պայծառ իրողութիւններ թրքական ակնոցով տեղեկագրելն ալ, ոչ բողոքի ձեւով, դատապարտելի է:

Թուրք կառավարութիւնը իր դործագրած ցեղասպանութիւնը վարագուրելու համար Մայիս 14-27, 1915ին թերթերու մէջ տպագրել տուած էր հետեւեալը .—

ՀԱՅԵՐԸ ՏԱՐԱԳՐԵԼՈՒ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐՈՇԱՄ
ՎԱՅՐԵՐ ՂՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԷՆՔ

Յօդ. 1.— Զօրաշարժի ժամանակ, բանակի, բանակաթելի եւ զօրարածի ինչ հրամանատարները եւ ասոնց փոխանորդները եւ անկախ շրջաններու հրամանատարներ, երբ տեսնեն, որ որեւէ կերպով կառավարութեան հրամաններուն, երկրի պաշտպանութեան, հանրային կարգի պահպանութեան մասին ձեռք առնուած կարգադրութիւններուն արդեւ կ'ըլլան կամ գէնքով յարձակում կամ զիմադրութիւն կ'ընեն, անմիջապէս, զինուորական ուժով սոսկալի կերպով պատժեն, եւ զիմադրութիւնը հիմէն ոչնչացնելու արտօնուած եւ պարտաւորուած են:

(*) Հեռագրին մէջ անուններու տառասխալներուն կամ բոլորովին այլափոխուելուն պատճառը թրքական հեռագրատան պաշտօնեաներուն կողմէ դիտումմաւոր է կամ անգիտութեան հետեւանք է: Պրենտին՝ Պոյանեան (Համբարձում) է:

Յօդ. 2.- Բանակի, անկախ գոլ-օրտուի եւ զօրաբաժինի հրամանատարները, զինուորական պահանջմանց համաձայն, եթէ լրտեսութիւն կամ դաւաճանութիւն տեսնեն, զիւզերու եւ քաղաքներու ժողովուրդը, առանձինն կամ հաւաքաբար, ուրիշ տեղեր կրնան զըրկել եւ բնակեցնել:

Յօդ. 3.- Այս օրէնքը հրատարակութեան թուականէն զօրծադրելի է:

13 Բէճէպ 1333
Մայիս 14, 1331-1915

Թրք. գիրք էջ 237-238
Լեփսիս, էջ 78:

Վերոյիշեալ «օրէնք» կոչուած շնական ապօրինութիւնը միայն մէկ մասն է պաշտօնական եւ գաղտնի շրջաբերականի մը, մանիչա-կազմի մեկանով, բաղմազրուած եւ պատերազմական նախարարութեան կողմէ զրկուած ծովային նախարարութեան, ինչպէս նաեւ միւս նախարարութիւններուն: Շրջաբերական մը, որ իր ամբողջական բընազրին մէջ կը բաղկանար ութ յօդուածներէ եւ Էսրաք (պետական գաղտնիք) վերնադիրը կը կրէր: Հրատարակուած մասերն են յօդ. 1, յօդ. 2, յօդ. 3ը՝ յօդուած ճրդ է շրջաբերականին մէջ: Յօդ. 3ը, 4ը, յօդ. 5ը, յօդ. 6ը եւ յօդ. 7ը հրատարակուած չեն: Որովհետեւ շրջաբերականի այդ թուականին (Մայիս 22, 1915) Հայաստանի բոլոր քաղաքները տակաւին տարադրուած չէին: Միայն զիւզերը տարադրութեան մէջ էին: Յօդ. 3ը կը հրահանգէր տարադիր հայերուն տուները զրաւել եւ յատկացնել թուրք սպաններու, յօդ. 4ով հայոց տուները յատկացնել վիրաւորուած կամ սպաննուած զինուորականներու ընտանիքներուն, այրիներուն եւ որբերուն, եւ ճրդ, ճրդ եւ 7րդ գաղտնի յօդուածներով ալ կը հրահանգուէր հայերուն տուները եւ սեփականութիւնները յատկացնել թուրք մուհաճիրներուն:

Հայոց կալուածներու գրամանն ու թուրքերուն բաշխումի հրահանգը դարձեալ պատերազմական նախարարութեանն կրկնուած էր գաղտնի գրութեամբ մը, Օգոստոս 11, 1915 (1331) թուակիր, աւելցնելով նաեւ հետեւեալը, թէ «թուրք նահատակ, զերի, վիրաւոր կամ հիւանդութեան մեռնողներուն ընտանիքներուն ալ ձրիօրէն տալ հայերու լքեալ սեփականութիւնները, բնակութեան համար»: Այսինքն աւազակութիւն մը՝ պետական միջոցներով: Այդ գրութիւնները չեն հրատարակուած, ըլլալով Էսրաք (գաղտնի): Տարադրութե-

նէն առաջ սեփականութեանց տիրանալու եւ բաշխելու որոշումը կայացեր է նախապէս:

Ոճրային ծածկազիրներու թիւը մինչեւ Յունուար 23, 1916 853ի հասած էր: Կան նաեւ հեռագիրներ մանուկներու եւ զինուորներու սպանդի եւ թրքացումի մասին: Կան նաեւ զերմաներէն հեռագիրներ, զինուորներու եւ հայ սպաններու սպանդի մասին:

«Հանրային ապահովութիւնը խանգարողները» ոչ թէ հայ խաղաղ, զոհարերող բնակչութիւնն էր, այլ ուղղակի թուրք կառավարութիւնը իր ամբողջ կազմով, իր մարդասպանական հրահանգներով եւ քայլերով:



ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Տրապիզոնի նահանգը, 1914 Յունուար 26 — Փետրուար 7 թուականին, թուրքիոյ և Ռուսիոյ միջեւ ստորագրուած հայկական բարենորոգումներու համաձայնագրով, 7րդ նահանգն էր հայկական վեց նահանգներուն հետ, և Արեւմտեան Հայաստան այդ համաձայնագրով կը բաժնուէր Հարաւային և Հիւսիսային երկու շրջաններու։ Հիւսիսային շրջանին մէջ էին Տրապիզոնը, Էրզրումը, Պարբերդը և Սեբաստիան, իսկ Հարաւային շրջանին մէջ էին Վանը, Պիթլիսը և Տիարպեքիը։ Հիւսիսային շրջանի բարեկարգիչը (ընդհ. քննիչ) պիտի ըլլար հոլանտացի Վեսթհենկը և Հարաւային շրջանինը՝ գնդ. Հոֆը (նորվեկացի)։

Սակայն, այդ համաձայնագրէն ստալ, գրեթէ չորս տարիներու ընթացքին քիւրճիսթեան փրոփականտ կը մղուէր՝ ձուլելու համար թրքութեան մէջ երկրին ոչ-թուրք տարրերը (քրիստոնեայ կամ իսլամ), ծրարիւր, որուն պործադրութեան ձեռնարկուեցաւ խըստութեամբ 1914—18 տարիներուն։

Տրապիզոնի նահանգը երկար պանանի մը ձեւով փոռած է Սեւ ծովի հարաւային եզրերին վրայ, 474 քմ. երկարութեամբ և 74 քմ. լայնութեամբ, Պաթումի հարաւէն սկսելով մինչև Սամսոնի արեւմուտքը՝ Ալաշամ։

Նահանգը 1914ին ունէր 4 սանճագներ (լիւա, դաւառ), որոնք բաժնուած էին 22 գազաներու (դաւառակ)։ Մ. Գեմալ ջնջեց վարչական ձեւը, սանճագները վերածեց վիլայէթի և թաթարական բառով սանճագը կոչեց իլ և դազան՝ իլչէ։

Վարչական վերին պաշտօնեան էր վալիճ՝ նահանգի համար, 4 սանճագներուն՝ 4 միւրեսարըֆներ և 22 գազաներուն՝ 22 գայմագամներ։ Այդ թիւերը անփոփոխ էին 1915ի հայոց տարագրութեան օրերուն։ Վալին էր ձեմալ Աղմի, իսկ Սամսոնի (ձանիկի սանճագին) միւթեսարըֆն էր Նեճմի պէյ։

Տրապիզոնի նահանգի հայ բնակչութիւնը 1882ին 120·000 էր (տես Մարտէլ Լէառ, էջ 59 և Ասատ Ուրասի թուրքերէն դիրքը՝ էջ 139)։

1882էն գրեթէ 30 տարի ետք, Օրմանեան Սրբազան, 1911ին Տրապիզոնի նահանգի հայերուն թիւը ցոյց կու տայ 63·500, 4 սանճագներուն մէջ (Տրապիզոն, ձանիկ, Կիւմիւշխանէ և Բիզէ (Լագիստան)։ Այդ թիւը կարելի է նկատել նուազագոյնը, քանի որ Օրմանեան որեւէ ժամանակ դիտական կերպով հայոց զանազան թուականներու աճման և նուազման թիւերը նկատի ունեցած չէ։ Տրապիզոնի նահանգի հայերուն թիւը 90·000 նկատել ճշմարտութեան մօտ է։

Տրապիզոնի նահանգի հայ դպրոցներու թիւն էր 1901—1902 դպրոցական շրջանին՝ 74, երկսեռ աշակերտութեան թիւը՝ 5·003 և ուսուցիչներու թիւը՝ 153։ Անշուշտ 13 տարի ետք այդ թիւերը աւելի մեծցած էին, գոնէ 25 առ հարիւրով։

Տրապիզոնի նահանգին մէջ հայ լուսաւորչականներու եկեղեցիներուն թիւն էր 78 և 3 վանքեր, մինչ Օրմանեան եկեղեցիներուն թիւը ցոյց կու տայ 73 (5 պակաս)։

Տրապիզոնի առաջնորդն էր թուրեան եպոս. և Սամսոնինը՝ կիւրիսցի Զաւէն եպոս.։

Օտար հիւպատոսները հայերու թիւը Տրապիզոնի նահանգին մէջ ցոյց կու տան կլոր թիւով 60·000։ Իսկ թուրք կառավարութիւնը, ինչպէս ամէն նահանգի մէջ, հայերուն թիւը միշտ պակաս ցոյց կու տայ քաղաքական հաշիւներով։ Մենք կը տեսնենք յետոյ թուրքերու տուած թիւերն ալ, հեռադրուած՝ ներքին պործոց նախարարութեան կողմէ տարադրութեան ընթացքին, 1915 Յուլիսի վերջը։

Համաշխարհային Ա. պատերազմը սկսելէն առաջ, 1912—13 տարիներուն, արդէն կային բազմաթիւ չեթէական խումբեր, որոնք չէին կազմալուծուած մինչև 1914ի պատերազմը։ Այդ ոյժերը շարժեցան դէպի հայկական նահանգները, ատոնց վրայ հետզհետէ աւելնալով բանտերէ արձակուած արիւնարբու մարդասպանները։ 1914 Հոկտեմբերին և Նոյեմբերին այդ չեթէներուն կեդրոնը եղած էր Տրապիզոն։ Հոն էին հազարապետ Եսպուպ ձեմիլ՝ էնվերի բարեկամը, 1903ին Հարպիլէի վարժարանէն ելած կատաղի և անզուսպ տղայ

մը, որ իր տրամադրութեան տակ ունէր 2·000 չեթէններ: Ատոնց միացած էին Րիզա պէյի չեթէնները: Ատոնց կ'ընկերանար զերման գնդապետ մը:

Սեւ ծովի եզերքէն, Րիզէի վրայով՝ անցան Խոփա եւ, ռուսական հող մտնելով, յառաջացան մինչեւ Արտանուշ՝ Նոյեմբեր 1914ին եւ Ջարդեցին հայերը: Նպատակ ունէին Կովկասի վրացիները եւ իսլամները ապստամբեցնել Ռուսիոյ դէմ: Այդ ատեն ասոնց հետ էր նաեւ Պէհաէտտին Շաքիր եւ, երբ պիտի երթային Արտահան, հանդիպեցան ռուս կազաքներու, որոնք Ջարդեցին թուրքերն ու չեթէնները եւ տեղացի թուրքեր փախան նոյն ճամբաներով, Սեւ ծովի եզերքէն մինչեւ Տրապիզոն: Գերման զնդապետը հրաժարեցաւ այս անկանոն չեթէններու գործելակերպէն: Չեթէական այս գործունէութեան մասին տեղեկութիւններ կան Թեջրիսթը Մախուսէի մէկ ուրիշ պետերէն Սուլէյման Ասքերիի «Յուշեր»ուն մէջ:

Կազաքներու կատարած այս ջարդին սեւէ հայ կամաւոր կամ զինուոր մասնակցած չէր: Պէհաէտտին Շաքիր Կ. Պոլիս վերադարձաւ, յետոյ կրկին էրզրում գալու համար, նոր ծրագրով մը, կեդրոնը հաստատելով էրզրումի մէջ: Վերադարձաւ 1915 Մարտի սկիզբը:

1915 Ապրիլ եւ Մայիս ամիսներուն՝ Տրապիզոն քաղաքին եւ շրջանին, ինչպէս նաեւ Սամսոնի մէջ ձերբակալութիւններ եղան ականաւոր հայերու եւ բանտարկուեցան՝ նման միւս նահանգներու մէջ եղածին:

Տրապիզոնի մէջ բանտարկուածներուն թիւն էր 250, իբր թէ հայեր էրկենէս կոչուած վայրի մը մէջ թուրք կրօնաւոր մը սպաններ են: Յերիւրածոյ պատմութիւն մը, զրգուելու համար թուրք խուժանը:

Չերբակալուածներէն 42 ականաւոր առեւտրականներ, հնչակեաններ, դաշնակցականներ, որոնց մէջ էին նաեւ Հ. Յ. Դ. Կ. Կ. ի անդամները, Յունիս 11, 1915, Հինգշաբթի գիշեր փոխադրուեցան, կապուած վիճակի մէջ, Տրապիզոնի արեւմուտքը, 7 մղոն հեռու Փլաթանա քաղաքը (Ազէհապատ), ուր կը սպասէին 2 առազաստանաւոր, մին պարսպ, միւսը՝ լեցուն, սպառազինուած զինուորներով եւ ոստիկաններով: Կարնաւորները մաս առ մաս կը լեցնեն առազաստանաւոր մէջ եւ մէկ առ մէկ կը սպաննեն ու դիակները կը թափեն Սեւ ծովուն մէջ: Փլաթանայի մօտ Յունիս 11, 1915ին սպաննուած և ծովը թափուած 42 անձերուն մէջ Տրապիզոնի Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէի անդամներն էին:

Սեղրակ Եսայեան (ատենապետ), Բիւզանդ ձերմակեան, Վրէժ Գասպարեան, Շահէն Աղապարեան (քարտուղար), Փիլոս Զաքարեան, Արշակ Պետրոսեան, Գառնիկ Ճիգմէճեան, հնչակեաններէն՝ Հրանդ Մալխասեան եւ ուրիշ ղեկավարներ:

42էն միայն մէկ անձ, յաղթանդամ ռուսահայ մը՝ Վարդան անունով՝ գլուխէն ծանրապէս վիրաւորուած, ծովամոյն եղած, բայց կրցած է լողալով ծովեզերք ելլել եւ զաղտապողի հասած է Տրապիզոն, հիւպատոսարան մը, կիսով խելադարած՝ միայն յայտնելով «պո՛ւմ, պո՛ւմ» բառը, այսինքն՝ իր ընկերակիցները «սպաննուեցան եւ ծով թափուեցան»:

Հիւպատոսարանէն դուրս գալէ ետք, կրկին կը ձերբակալուի եւ իբր հիւանդ կը փոխադրուի թրքական թաղապետական հիւանդանոցը, ուր կը մեռնի հետեւեալ օրը: Թրքական հիւանդանոցի հայ հիւանդները կը թունաւորուէին:

42 ականաւոր անձերու այդ սպանդէն 2 օր ետք, Յունիս 13, 1915, Շարաթ օրը, կը հրապարակուի հրամանագիր-փաստաթուղթ մը, որով Տրապիզոնի նահանգի բոլոր հայերուն կը հրամայուի պատրաստ ըլլալ մեկնելու 5 օրէն: Հրամանագիրը կը փակցուի պատերուն վրայ, կը հազորդուի նաեւ ոստիկաններու միջոցաւ: Բոլոր թաղերը շղթայի տակ կ'առնուին հեծեալ ոստիկան-զինուորներու կողմէ, քաղաքին մէջ երթիւկութիւն եւ հազորդակցութիւն կ'արդիւրին:

Այդ օր Տրապիզոնի մէջ կային 14·000 թուրք զինուորներ եւ 1000է աւելի ոստիկաններ եւ ոստիկան-զինուորներ:

Այդ հրամանագիրը լոյս տեսած է նաեւ վիլայէթի տպարանէն, «Թրապիզոնսա Մեշվերէթ» կոչուած պետական թերթին 4րդ էջին վրայ, Յունիս 14, 1915 թիւով:

Տրապիզոնի հայութեան ցեղասպանութեան օրերուն, Յունիս 13, 1915ի օրը, պատերուն վրայ փակցուած եւ ոստիկանութեան միջոցով ալ զբաւոր եւ բերանացի կերպով հազորդուած այդ հրամանագրին թուրքերէն բնագրին լուսանկարը մեր ձեռքին տակ է: Տառացի թարգմանութիւնը կու տանք առաջին անգամ ըլլալով հայ կամ օտար մամուլի մէջ:

Բ Ն Ա Գ Ի Ր Ը

«Օսմանեան տարրերու մէկ մասը կազմող մեր հայ հայրենակիցները, շատ տարիներէ ի վեր արտաքին թելադրութեանց արդիւն-

քը եղող յոռի եւ կարգը խանգարող կարգ մը գաղափարներէ տարուելով, իրենց հանդիստին եւ շահերուն հետ մէկտեղ օսմանեան երկրին (միւլֆ) եւ միւս հայրենակիցներուն ալ հանդիստը եւ հանդարտութիւնը խանգարած եւ մանաւանդ հայ համայնքն ալ (էրմենի ճեմաթը) նոյնպէս մեր թշնամիներուն միանալու համարձակութիւնը ունեցած է, եւ երկրին (միւլք) ապահովութիւնը, հանդարտութիւնը եւ խաղաղութիւնը եւ թէ հայ համայնքին ալ գոյութեան տեւականութիւնը եւ ապահովութիւնը պահպանելու համար, մեր պետութիւնը (տեւեթիմիգ) հարկադրուած է արտասովոր միջոցներ ձեռք առնել եւ զոհողութիւն ընել, եւ մինչեւ պատերազմի վերջաւորութեան, բնակեցնել եւ զետեղել (քեմեֆֆիւն վէ իգամէթ) զանոնք ներքին նահանգներու մէջ, կանխապատրաստուած իրենց վայրերը զրկել ստիպուած ըլլալուն, բոլոր օսմանցիները ստորեւ զրուած հրահանգներուն, տառացի կերպով, հնազանդ գտնուելին կը հաղորդուի վճռական կերպով:—

1.— Բոլոր հայերը, հիւանդները բացառութիւն ըլլալով, այս հաղորդալրութեան թուականէն 5 օր ետք ժամտարմըրիի (ոստիկան—զինուորներու) հսկողութեան տակ, զիւղերը եւ թաղերը կարգաւ եւ ամբողջութեամբ, պարտաւորուած են հեռանալ (իրենց բնակավայրերէն):

2.— Թէեւ (հայերը) իրենց ճամբայ ելած ժամանակ ազատ են իրենց փափաքած շարժուն ստացուածքները միասին տանելու, սակայն արգիլուած են ծախելու անշարժ կալուածները եւ հողերը, եւ յաւելեալ կարասիները եւ գոյքերը, եւ կամ ասոր—անոր մօտ (շուքն—պուլնըն եամընա) ձգելու: Որովհետեւ այս բաժանումը ժամանակաւոր ըլլալով, իրենց անշարժ կալուածներուն նման, հետերնին չեն կրնար տանիլ, եւ այդ շարժական գոյքերը պիտի գրուին ապահով եւ հաստատուն չէնքերու մէջ, և պիտի պահուին կառավարութեան հսկողութեան տակ: Եւ երբ անոնք վերադառնան, իրենց պիտի վերադարձուին: Այս պատուէրին հակառակն ըլլալով, (հայոց) շարժուն գոյքերը կամ անշարժ կալուածները զնողները կամ ծախողները եւ կամ պահելու համար առնողները Պատերազմական Ատեանի պիտի յանձնուին: Միայն թէ բանակին կարեւոր գոյքերը, համաձայնութեամբ, կառավարութեան ծախել կարելի է:

3.— Ճամբու ընթացքին անոնց հանդիստը ապահովելու եւ անոնց վրայ առանց յարձակում գործելու եւ ապահով կերպով իրենց ժամանակաւոր բնակավայրերը հասցնելու միջոցները պատրաստուած են:

4.— Հայ համայնքին մէկ կամ մէկ քանի անդամին սեփականութեան, կեանքին կամ պատիւին վրայ յարձակում գործողներուն դէմ դէնք պիտի գործածուի ընկերացող զօրախումբերուն (միւլֆրէգէ) կողմէ և ողջամբ ձերբակալուելով Պատերազմական Ատեանին պիտի յանձնուին՝ մահափոխու տրուելու համար:

Հայերուն խարերայութեան զոհ ըլլալու հետեւանքով է, որ այս ցաւալի միջոցները ձեռք առնուած են, որոնք ոչ մէկ կապ ունին միւս տարրերուն հետ: Առոնք չեն կրնար որեւէ ձեւով կամ կերպով միջամտել այս խնդրոյն:

5.— Հայերը պարտաւորուած են հպատակի կառավարութեան այս որոշումներուն: Եթէ իրենց մէջէն զինուորի կամ ժանտարմի վերայ գէնք գործածուի համարձակութիւն ունենան, դէնքով փոխադարձութիւն պիտի ըլլայ այդ գէնք գործածողներուն դէմ միայն եւ մեռած վիճակի մէջ ձեռք պիտի անցուին:

Նմանապէս, կառավարութեան որոշումներուն դէմ հակառակողները կամ մեկնիլ չուզողները եւ կամ ասդին—անդին պահուողներ (շուրատա—պուրատա իխթիֆա էյլէյէնլեր) եւ զանոնք իրենց տուններուն մէջ պահողներ, ուտելիք տուողները եւ անոնց պահուողները ապահովող անձերը Պատերազմական Ատեանին պիտի յանձնուին, մահապատիժ ստանալու համար:

6.— Հայերը չեն կրնար իրենց մօտ ունենալ սուր (կտրող) գէնքեր (էսլիհայը ցարիիէ) եւ չեն կրնար ունենալ հրազէններ (էսլիհայը ցարիէ) իրենց տուններուն մէջ կամ դուրսը պահած: Ամէն տեսակ գէնքեր՝ ասորձանակներ, ռումբ կամ սուրեր պէտք է ամբողջութեամբ յանձնուին կառավարութեան: Այդ տեսակ գէնքերը եւ ուրիշներ, արդէն կառավարութեան լուր տրուած ըլլալով շատերու մասին, նախ, ուրանալու պարագային, տէրերը պատասխանատու պիտի ըլլան եւ խիստ կերպով պիտի պատժուին:

7.— Գիւղերու, թաղամասերու (ֆէօյ վէ մահալլէ) եւ ճամբաներու վրայ կողոպուտ, յափշտակում ընողներ, հայերու դէմ յարձակում կամ բռնարարութիւն փորձողներուն դէմ պահապան զինուորներու եւ ժանտարմաներու կողմէ գէնք պիտի գործածուի եւ զանոնք սպաննելու արտօնուած եւ պարտաւորուած են:

8.— Օսմանեան դրամատան պարտք ունեցողները, իրենց պարտքին փոխարէն, կրնան ապրանք յանձնել իրր ապահովութիւն դրամատան, միայն թէ կառավարութիւնը, եթէ հարկ տեսնէ, յիշեալ գոյքերը զինուորական իշխանութեան հաշուոյն կը ստանայ, արժէքը վճարելու պայմանով: Նաեւ, պարտքին ալ ստուգութիւնը պէտք է

Հաստատուի կառավարութեան կողմէ: Ատոր համար ալ առաջին կարգի փաստաթուղթ կը նկատուին վաճառականներուն տոմարները:

9.— Այն մեծ ու պզտիկ կենդանիները, որոնք կարելի չէ միասին տանիլ, պիտի գնուին բանակին անունով:

10.— Հայերուն անցած ճամբաներուն վրայ ցահիլէներու, գազաներու, լիւաներու (սանճապ) եւ վիլայէթներու պաշտօնեաները տեղական օժանդակութիւն պիտի ընծայեն:

Յունիս 13, 1915 (1331)

Վերոյիշեալ հրահանգը նոյնութեամբ տպագրուած է «Թրապիզոնտա մեշվերէթ» կառավարական թերթին մէջ, որուն արտօնատէրն էր Նաճի եւ խմբագիրը՝ Հասան Քեմալ: Տպագրուած է Կառավարական տպարանի մէջ, Ուզուն Սոպապ Ճատտէսի: Հատը՝ 10 փարա:

Միւս նահանգներուն մէջ ալ հայերուն դէմ ցեղասպանական հրահանգներ կը պարունակէին նահանգային ուրիշ թերթեր, ինչպէս Կեսարիոյ մէջ՝ «Գայսէրի» թերթը, խմբագիրը՝ Սապրի, Սեբաստիոյ մէջ՝ «Սիւաս» եւ «Գըզըլ Ըրմագ» թերթերը, խմբագիրը՝ Նիբի պէյ:

Հրատարակուած այդ պաշտօնական թրքական յայտարարութիւնը նենգամտութեան, խարերայութեան եւ մութի մէջ ծրագրուած զանգուածային ոճիրի ու կողոպուտի դիւային ծրագիր մը կը մատնանչէ թափանցիկ կերպով Տրապիզոնի նահանգի հայերուն դէմ. նոյնը եղած է նաեւ հայաբնակ բոլոր քաղաքներուն մէջ. Հայուն ձեռքը նոյնիսկ դմելի մը չթողելու չափով զինաթափման միակ նպատակը եղած է, տարագրութեան ճամբաներուն վրայ, յարձակման դէմ ինքնապաշտպանութեան որեւէ կարելիութենէ զրկել, ոչխարի հօտի նման կարաւանները գայլերուն յանձնել, անպաշտպան այրերը կոտորելու, կիները առեւանդելու կամ բռնաբարելու եւ մանուկները ըսպաննելու կամ յափշտակելու, անձնական գոհարեղէնները եւ գոյքերը կողոպտելու նպատակով:

Միջազգային որեւէ ատեան, եթէ նկատի առնէ եւ վերլուծէ այդ փաստաթուղթը եւ մտադրուած ու գործադրուած սադայելական ծրագիրը, առաջին իսկ ակնարկով կը տեսնէ բորենիներուն մարդկային զանգուած յօշոտելու կանխամտածումը:

Տանք վկայութիւնը քանի մը օտար ականատեսներու՝ Տրապիզոնի հայերուն տարագրութեան եւ ցեղասպանութեան մասին.—

Թուրքին զինակիցը եղող, Տրապիզոնի դերման հիւպատոս տօքթ. Պերկֆելտ կը յայտնէ, որ Նոյեմբեր 6, 1914ին Կովկասի դէմ

Թուրքերու յարձակումէն 8 օր ետք, ոուսերը ոմրակոծեցին քանի մը զինուորական շէնքեր Տրապիզոնի մէջ: Թուրք կառավարութիւնը անմիջապէս զինեց թուրք ժողովուրդը, պատրուակելով թէ հայերը եւ յոյները կրնան ապստամբիլ:

Տօքթ. Պերկֆելտ Յունիս 11, 1915ին տեղեկագրեց զերման կառավարութեան, թէ թուրքը, որ Մայիսի մէջ ձերբակալած ու բանտարկած էր 250 հայեր, գատելով 42 ականաւորները, ձեռքերը ետին կապուած տարած է Տրապիզոնէն 7 մղոն արեւմուտք՝ Փլաթանա (Ալչէպապատ) կոչուած ծովեզերեայ աւանը եւ Յունիս 11ին առաջաստանաւի մը վրայ գանոնք սպաննած եւ թափած է Սեւ ծովի մէջ:

Ըստ տօքթ. Պերկֆելտի՝ թուրքերուն կողմէ տարագրութեան այդ հրամանալիրը եւ անոր հիմամբ առնուած քայլը կը նշանակեն հայերու զանդուածային բնաջնջում եւ կ'աւելցնէ, թէ իր խնդրանքին վրայ վային՝ ձեմալ Ազմի պէյ խոստացած էր դոնէ մանուկներուն եւ յղի կիներուն խնայել եւ չտարագրել: Բայց Յունիս 19ին, տարագրութեան առաջին օրը, դրժելով իր խոստումը, ըսած է, թէ կեղրոնէն ամենախիստ հրամաններ եկած են եւ, առանց որեւէ բացառութեան, պիտի մեկնին բոլոր հայերը, այր եւ կին, մանուկ թէ յղի կին, բողոքական թէ կաթոլիկ: Այդ կը նշանակէր անոնցմէ ոչ մէկը ողջ թողուլ: Վային բնութեամբ եւ զինու զօրութեամբ, թուրք ժանտարմներու եւ զինուորներու միջոցով (այդ ատեն Տրապիզոնի մէջ կային 14·000 զինուորներ), ամենայն վայրագութեամբ կարաւան առ կարաւան հայերը տարագրելէ ետք, հազիւ քանի մը ժամ հեռու վայրերու մէջ կանխապատրաստուած դարանակալ չեթէական խումբերու կողմէ յարձակում գործուած է կարաւաններուն վրայ: Նախ կողոպուտ, յետոյ սպանութիւն եւ բռնաբարութիւններ եւ մանուկներու յափշտակում:

Այդ ոճիրներէն անմիջապէս յետոյ վայրի ձեմալ Ազմի պէյ բացակայեցաւ Տրապիզոն քաղաքէն եւ գնաց երկրին ներսերը եւ չըվերադարձաւ մինչեւ Օգոստոս 3/16, 1915: Ըստ Պերկֆելտի, Տրապիզոն նահանգէն ճամբաներու վրայ, կիրճերու եւ լեռնանցքներու մէջ կոտորած են 60·000 հայեր: Այս քաղաքականութեան ներքին դրդապատճառը, կ'ըսէ Պերկֆելտ, հայերը ջնջելով վերջ տալ էր Հայկական Դատին:

Հայերուն դէմ ցեղասպանական այս անգուսպ քայլէն ետք, թուրքերը ուղեցին Պերկֆելտը եւս հսկողութեան տակ առնել, արգիլել անոր ճամբորդութիւնները՝ Տրապիզոն քաղաքի շրջակաները եւ պահակներ դնել անոր դրան առջեւ: Բայց ան մերժեց եւ ձիով

ճամբորդութիւն կատարեց քաղաքին մօտակայ եւ հեռաւոր վայրերը եւ աչքովը տեսաւ այն ամէնը՝ ինչ որ կատարուած էր:

Տարագրութեան նախօրեակին, Պերկֆելտ, աքսորանքի հրամանադիրը լսելով, յայտնած էր վայրին, թէ «կառավարութիւնը դրաւ ինչ որ ճամբորդութեան եւ փոխադրութեան բոլոր միջոցները, խեղճ ժողովուրդը ինչպէս հետիոտն պիտի կրնայ ճամբորդել աւելի քան երեք հարիւր քիլոմետր հեռու վայրեր: Վայրին՝ խաբելով հիւպատոսը՝ ապահովուեցած էր, թէ «կառավարութիւնը ամէն դիւրութիւն պիտի տայ»: Եւ սակայն, անցած երեք շաբթուան ընթացքին կարծես ահռելի երկրաշարժ մը տեղի ունեցած ըլլար՝ կլանելով հայերը, պատմութեան մէջ աննախընթաց յորձանքի մը մէջ:

Պերկֆելտ նկատի չ'առնել թուրքերու չքմեղանքի պատրուակները եւ կ'ըսէ, թէ թուրքը պէտք չէ դատել իր խոստումներէն, այլ պէտք է դատել զայն իր ամբողջ պատմութիւնով:

Տրապիզոնի հայութեան բնաջնջման կանխապատրաստութեան մասին տղթ. Պերկֆելտ կը հաղորդէ, թէ Յունիս 13, 1915ին, Տրապիզոնի հայերուն տեղահանութեան հրամանի հրապարակման օրը, Շլիմմէ անունով գերման ենթասպայ մը, էրզրումէն՝ Բաբերդի վերայով՝ Տրապիզոն հասած է եւ տեղեկացուցած է հիւպատոս Պերկֆելտի, թէ ճամբորդութեան ընթացքին տեսած է թրքական սպառազինուած չեթէներու խումբեր՝ լեռներու, կիրճերու եւ դարաններու մէջ, որոնք պատրաստուած էին յարձակելու հայ կարաւաններու վերայ եւ բնաջնջելու զանոնք, ինչպէս էրզրումէն Երզնկա երկարող ճամբաներուն, նաեւ Բաբերդի, Կիւմիւշխանէի, Տրապիզոնի ճամբաներուն վրայ եւ չրջակաները:

Եթասպայ Շլիմմէ խօսած էր 400 հողինոց չեթէական խումբի մը պետերուն հետ, որոնք թրքական մարզուած սպաներ էին եւ որոնք Փրանսերէն կը խօսէին իրեն հետ: Ան տեսած էր տարագիր հայ կիներ, որոնք այդ վայրերուն մէջ բոլորովին կողոպտուած, անօգնական եւ հացէ զրկուած, իրր սնունդ՝ խոտ կ'ուտէին:

Տրապիզոնի իտալական հիւպատոսը՝ Կորինի տակաւին այդ օրերուն կը մնար այդ քաղաքը եւ իտալիոյ Դաշնակիցներուն միացումով, ստիպուած էր յետոյ մեկնելու դէպի Իտալիա. շոգեմակոյկ մը վարձած էր Տրապիզոնէն եւ իր զաւազով միասին մեկնած դէպի Կ. Պոլիս, անկէ Տետէ Աղաճ եւ ապա Հոռոմ: Ան տեղեկ էր հայերուն դէմ կատարուած բոլոր ոճիրներուն եւ, երբ հասաւ Հոռոմ, տեղեկագրեց, թէ «հայերու տարագրութեան եւ սպանդի ու կողոպտուի օրերուն 30 օր ոչ կրցած էր ճաշել եւ ոչ ալ կրցած էր քնանալ, ազ-

դուած այդ զործուած ոճիրներէն» եւ գրած էր. «Աշխարհի վրայ գտնուող ամենավայրենի զապանները խուժած էին Տրապիզոն կամ Կ. Պոլսոյ կեդրոնը՝ յօշոտելու համար հայ տղերք»:

Պատերազմի պատճառով Տրապիզոնէն մեկնած էին անդլիական, Փրանսական եւ ռուսական հիւպատոսները: Հոն մնացած էին միայն գերման եւ աւստրիական ու ամերիկեան հիւպատոսները, որոնք նոյնպէս առաւել կամ նուազ չափով տեղեկ էին այս իրողութեանց:

Թուրք ցեղասպաններուն Տրապիզոնի ղեկավարներէն մի քանին էին կեդր. կառավարութեան նախարարները, Իթթիհատի ղեկավարները, վայրին՝ Ճեմալ Աղմի, Տրապիզոնի Իթթիհատի պատասխանատու քարտուղար Նայիլ պէյ, օգնականը՝ Րիզա պէյ, բժիշկներէն Ալի Սայիպ, Սաստէտտին, զինուորական եւ ժանտարմի պաշտօնատան հրամանատարները եւ ուրիշներ:

Ցեղասպանական արարքներու կարգին տեղի ունեցած էր անձնական դոյքերու եւ գուհարեղէններու կողոպուտը, ըստ տղթ. Պերկֆելտի, ամենաշնական եղանակով: Լքեալ դոյքերու (Էմվալը մեքրուֆէ) պաշտօնական կողոպուտը միատեսակ եղած է բոլոր նահանգներուն մէջ:

ՏԱՐԱԳՐՈՒԱԾՆԵՐՈՒ ԹԻԻԻ ՄԱՍԻՆ

Յունիս 31, 1915ին ներքին զործոց նախարարութիւնը հեռագրով ցանկեր ուղած էր տարագրուած հայերու թիւի եւ գրաւուած դոյքերու մասին: Ինչպէս նաեւ, ինքնարդարացումի համար, «փաստաթուղթեր», որոնք հայերը ամբաստանելու բնոյթ ունենային:

Նախ քան տեղահանութիւնը, Յէն 5 օր առաջ, թուրք կառավարութիւնը, այն բոլոր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, ուր տարագրութիւն տեղի պիտի ունենար, ձեռնարկած էր ցուցակագրութեան, ոստիկանութեան միջոցաւ, որոնք կ'ընկերանային մուխթար մը, 3-5 ոստիկան-զինուորներ, որոնք կ'այցելէին իրենց չրջանի իւրաքանչիւր հայ ընտանիքի եւ անձերու թիւերը կ'արձանագրէին զատ-զատ, չափահաս այր, չափահաս կին, անչափահաս մանչ, աղջիկ մօտաւոր տարիքով եւ կ'առնէին ընդհանուրին զումարը: Այդ վերջին թիւերը կը կազմեն հայ զոհերու ճիշդ թիւը: Թուրք կառավարութիւնը տե-

ղահանութեան եւ սպանդի ենթարկուելիք հայերու ճիշդ թիւը ունեցած է ոճիրի նախօրեակին եւ զիտէ իւրաքանչիւր կարաւանի թիւը եւ անոնց ընկերակցող ոճրագործ զինուորներուն եւ ժանտարմներուն թիւերը: Այդ արձանագրութեամբ տեղահան եղած հայերուն թիւը 2·600·000էն աւելի է:

Սակայն, թուրք տեղական վարչութիւնները, ոճիրը մասամբ սքողելու համար եւ հայերու ինչքերուն գումարն ալ նուազ ցոյց տալու նպատակով, ջանք չեն խնայած:

Միայն Տրապիզոնի նահանգի հայերուն թիւը 90·000էն պակաս չէ: Արեան այդ կորուստէն բացի, նիւթական կորուստի գումարը 150 միլիոն ոսկի տուրք է: Սպանութեանց եւ կողոպուտի պատասխանատուն թուրք պետութիւնն է, նոյնն է՝ իթթիհատական կամ քեմալական:

Թրքական կեդր. կառավարութիւնը, Յուլիս 25, 1915 թուակիր գաղտնի շրջաբերական նամակով մը գաւառական վարչութիւններէն ուղած էր աքսորուած հայերուն թիւերը՝ վիլայէթներէն, սամսաթներէն եւ գազաներէն:

Տրապիզոնի կառավարութիւնը, ինչպէս միւս նահանգներու կառավարութիւնները, իրենց կատարած ոճիրը փոքրացնելու համար, կեդրոն զրկած են շատ մը տեղերէ 1903ի թրքական մարդահամարի հայերու թիւերը, որոնք իրականութենէն շատ պակաս են եւ որոնք են հետեւեալները Տրապիզոնի նահանգին համար՝ սանճաղները եւ գազաները զատ-զատ առնելով:—

Տրապիզոնի նահանգի, Տրապիզոնի սանճաղի, Տրապիզոնի կեդր. գազայէն տարապրուած են	12,084
Կիրասոն գազայէն	2,232
Թիւրքալու գազայէն	817
Կէօրեկ գազայէն	302
Վազֆէ Քեպիրէն	42
Այչէպատէն (Փլաթանա)	1,425
Սիւրմէնէն	325
Մաչքա	49
	<hr/>
	31,885

31,885 հայեր, Տրապիզոնի սանճաղէն տեղահանուած:

Տրապիզոնի Բիլէ (Լաղիստան) սանճաղի կեդր. գազայէն տեղահան եղած հայեր	38
Աթինէն	28
Խոփէն	2
	<hr/>
Գումար	68
Կիւմիւշիանէի սանճաղի կեդր. գազայէն	1,624
Թրոլ	24
Քեւքիտ	469
Շիրան	370
	<hr/>
Գումար	2,547
Ճանիկի սանճաղի կեդր. գազա (Սամսոնէն)	4,992
Պաֆրա	1,634
Չարչումպա	10,648
Թերմէ	2,567
Իւնիա	5,379
Ֆաթսա	1,154
	<hr/>
Գումար	26,374

Տրապիզոնի կառավարչութեան կողմէ ներքին գործոց նախարարութեան հեռագրուած թիւն է 60·874՝ ամբողջ նահանգի մէջ տարապրուած հայերուն:

Օրինակ առնելով Սամսոնը, 1915ին հայերուն թիւը հոն 8000էն աւելի էր, միայն երկու դպրոցի եւ 1 մանկապարտէզի մէջ աշակերտներուն թիւը 800 էր:

Թուրքը 1915ին առած թիւերը գաղտնի պահած է:

Թուրք կառավարչութիւնը նախարարութեանց զրկած պատասխանին մէջ կ'աւելցնէ, որ Տրապիզոնէն կարգ մը հայեր առեւտուրի պատճառով օտար երկիր մեկնած էին:

Իսկ Սամսոնի (Ճանիկի սանճաղի) թիւերուն կից հետեւեալ տեղեկութիւնը աւելցուած է. Սանճաղի բոլոր հայերը տեղահան (սեւգ) եղած են: Իսկ անոնք, որ հաւատափոխ եղած են կամ ամուսնացած են (հայ կիներ՝ թուրքերու հետ), ատոնք ալ դարձեալ փոխադրուած են տարբեր գիւղեր:

Որք եւ անտէր մնացած մանուկներու մասին՝ Յուլիս 29, 1915 թուակիր ներքին գործոց նախարարութենէն հեռագիր մը կը հրա-

հանդէս այլ մանուկները ցրուել թուրք ընտանիքներու մէջ:

Դարձեալ ներքին զործոց նախարարութիւնը իր Օգոստոս 11, 13, 26 եւ Սեպտ. 9 թուակիր հեռագրային հրահանգներով հայերուն պատկանող ինչքերուն, տուններուն ու խանութներուն մէջ գտնուած ամէն տեսակ ապրանքներ եւ նիւթեղէններ կը յատկացնէ թրքական Յրդ, Էրդ եւ Տրդ բանակներուն, մանրամասնութիւնները գրուած ցանկերով:

Դարձեալ ներքին զործոց նախարարութիւնը, կողոպուտը շարունակելու համար, Օգոստոս 31 եւ Սեպտ. 15, 1915 թուակիր հեռագիրներով ալ կը հրահանգէր հայերուն պատկանող ղեկարաններուն բժշկական դեղերը, նիւթեղէնները, զործիքները, ապրանքները յանձնել թրքական կարմիր Մահիկին եւ թուրք հիւանդանոցներուն:

Հայ եկեղեցիներուն արդէն մէկ մասը բոլորովին կամ կիսովին աւերուած էր, մաս մը զէնքի եւ ոսղմամթերքի իբր պահեստատեղի կը գործածուէր, մէջը եղած դոյքերը եւ սպասները կողոպտելէ ետք:

Դպրոցներու մասին ալ Սեպտեմբեր 8, 1915 թուակիր գաղտնի հեռագրով հրահանգուած էր մէկ մասը յատկացնել թուրք մուհաճիրներուն եւ մնացած մասն ալ գործածել իբրև զպրոց՝ թուրք աշակերտներու:

Մեր ունեցած ցուցակով 1902ին Տրապիզոնի նահանգի զպրոցներուն թիւը 74 էր: Այս արևելի պէս պայծառ իրողութիւնները թուրքերը «երեւակայական» կամ «սուտ» կը յայտարարեն: Այդ կը նշանակէ, թէ իրենց երեսի կաշին բնաւ չհաղուիր ամօթ ըսուած զգացումէն, ճշմարտութեան լոյսին տակ:

Նախագահ Ուիլսոն, Նոյեմբեր 22, 1920ին Տրապիզոնի նահանգի արևելեան մասը՝ Սեւ ծովէն դէպի հարաւ՝ Անկախ Հայաստանի ձգած էր, Քղիի շրջանի եւ Պարրերդի հայութեան շրջանները թուրքերուն ձգելով: Հայաստանի սահմաններուն մէջ կը մնային Տրապիզոն քաղաքը, Թիբեպոլուն, Կիւմիւշխանէն եւ Քելքիտը: Իսկ թուրքերուն կողմը կը մնային Կիրասոն, Շապին Գարահիսար, Քեմախ եւ Քղիի արևմտեան մասը:

Տրապիզոնի նահանգի արևմտեան մասին մէջ հայաբնակ կարեւոր քաղաքներ էին Սեւ ծովի եզերքին վրայ Սամսոն, Չարչամպա, Իւնիա, Ֆաթսա, Օրտու եւ Կիրասոն:

Կուրքֆ՝ Սամսոնի գերման հիւպատոսը կը հաղորդէր Յունիս 11, 1915 թիւով, թէ հոն (Սամսոն) ալ Տրապիզոնի նման պատերուն վրայ թուրքերէն հրամաններ փակցուցած էին եւ ան գերման դես-

պանին յայտնած էր, թէ այդ պայմաններուն մէջ տեղահանութիւն մը կը նշանակէ հայերու բնաջնջում: Եւ կ'աւելցնէր, թէ այդ տարապրեալներէն ոչ մէկը պիտի կրնար ողջամբ հասնիլ նշանակուած վայրը:

«Անատոլուի առեւտուրը քանդուեցաւ: Վայրագութիւններով կ'ուզեն ջնջել հայ քրիստոնէութիւնը: Իւնիայի մէջ կարգ մը իսլամացողներ ուրիշ դիւզեր զրկուեցան»:

Սամսոնի Հ. Յ. Դ. Կեդր. Կոմիտէի անդամները բանտարկուած էին. Գար. Թերզեան, Մ. Փիրէնեան, Տ. Քիւրքճեան, Ամասիացի Մելքոն, ուրիշ լիտրներու հետ, ամանք ծեծի տակ մեռցուած, ոմանք ալ Մարզուանի կարգ մը ղեկավարներուն հետ Սերաստիա զրկուած, կախաղանով կամ չարչարանքով սպաննուած են, վալի Մուամէր կոչուած գաղանին հրահանգով:

Տրապիզոնի նահանգի հաղարուոր ոճրագործներուն կարգին վալին՝ արիւնարբու ձեմալ Ազմի, Իթթիհատի ներկայացուցիչ քարտուզարը՝ Նայիլ, օգնականը՝ Րիզա, մաքսատան քննիչ Մեհմէտ Ալի, ոստիկան-զինուորներու հրամանատար Թալէաթ, Շեքերճի Մուսթաֆա, Քերեսթեճի Հաֆլը ձեւալ, Թեքնէլի Նեչէտ: Այս վերջինը՝ առաջատանաւերու վրայ կալանաւոր հայերը սպաննելէ ետք՝ ծովամոյն ընելու գործին լծուած էր:

Հայերը, զինուոր կամ հիւանդ, թունաւորող թուրք բժիշկներ էին առողջապահութեան տնօրէն արիւնարբու Ալի Սայիպ, որ սպաննել տուած էր նաեւ տոքթ. Աւրանեանը եւ տոքթ. Հեքիմեանը: Չեթէններուն հետ էր տոքթ. Շեքէթ ըսուած «հանրային առողջապահութեան» պաշտօնեան:

Իսկ Սամսոնի շրջանի բորենիներն էին միւթեսարը՝ Նեճմի, ոստիկանապետներ Նուրի եւ Սապրի, մոլեգնած եւ արբեցող Իթթիհատի ներկայացուցիչը՝ տոքթ. Սըտպը պէյ կոչուածը իր արբանեակներով, տեղւոյն զինուորական հրամանատարը, ոստիկաններ, զինուորներ եւ չեթէններ եւ մաս մը խուժան:

Կիրասոնի մէջ արիւնկալի գաղաններ էին Սարը Մեհմէտ Չատէ էչքէֆ, Էրայրը՝ Հասան, Քեաթիպ Ահմէտ, ոստիկանական հրամանատար Քեմալ, հաղարուպետ Ֆայիտ, հարիւրապետ Օսման եւ Էդրայրը ու սրիկայ չեթէններ: Թուրք կառավարութիւնը խորհեցաւ, թէ այդ ոճիրները անպատիժ պիտի մնան եւ հաշիւ պահանջող պիտի չըլլայ: Պատմութիւնը բռնած է սակայն անոնց օձիքէն: Հայը կը պահանջէ իր իրաւունքները, — զոհերու արեան գինը եւ դարաւոր հայրենի հողերը:

ՍԵՐԱՍՏԻՈՅ ՆԱՀԱՆԳԻ

ՀԱՅԵՐՈՒՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ասիկա պատմութիւնը չէ Սերաստիոյ քաղաքի, սանճագի կամ նահանգի, ոչ ալ պատմութիւնն է տարազրութեան: Պատմութեան համար կան բազմաթիւ գրքեր, կան նաեւ տարազրութեան մասին գրքեր, յօդուածներ, որոնց մէջ զլխաւոր եւ միակ հեղինակաւորը Կարապետ Գաբրիկեանի «Եղեռնապատում»ն է, որ լոյս տեսած է «Հայրենիք»ի տպարանէն 1924ին, 680 էջ, Սերաստիոյ Վերաջ. Միութեան նախաձեռնութեամբ:

Մենք կ'ուզենք տալ միայն կարգ մը իրողութիւններ եւ թիւեր՝ եկեղեցական, կրթական, ազգազրական, առեւտրական, որոնք հիմնուած են վկայութիւններու վրայ:

Արեւմտեան Հայաստանի հայկական վեց նահանգներուն մէջ, տարածութեամբ ամենամեծը եւ գերազանցապէս հոծ ու շէն հայութեամբ՝ Սերաստիոյ շրջանը մասնաւոր նախանձը շարժած էր թուրք ժողովուրդին եւ թուրք պաշտօնատարներուն:

Փոքր Հայքի մայրաքաղաքը՝ Սերաստիա անցեալին եղած էր արքայանիստ եւ կաթողիկոսանիստ՝ 11րդ դարուն: Բազմամարդ եւ բարեշէն, հայկական, հոմէական, յունական շրջաններուն քանի անգամներ աւերուած եւ կրկին ու կրկին վերաշինուած էր, շնորհիւ հայ ստեղծագործ աշխատանքին:

1915ին, ճիշդ տարազրութենէն առաջ, քաղաքին մէջ կային 11·500 տուններ, որոնց 7·000ը կը պատկանէին հայերուն: Քաղաքի ոստիկանութեան վերջին անգամ կատարած (Յունիս 15, 1915) մար-

դահամարով՝ 47·500 հայեր արձանագրուած են, որոնց իննսուն առ հարիւրը տարազրուած է:

Տարազրութեան մասին 1924ին լոյս տեսած բազմալատակ ուսուցիչ Կարապետ Գաբրիկեանի «ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ», Սերաստիայէն մինչեւ Բաքա եւ Տէր Զօր, ականատեսի վաւերական պատմութիւն մըն է Եղեռնի մասին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ — ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Սերաստիա քաղաքի ներքին եւ արտաքին առեւտուրին մեծ մասը հայերուն ձեռքն էր: Արհեստաւորներուն 90 առ հարիւրը հայեր էին: Քաղաքին թուրք ժողովուրդը, ընդհանրապէս, ծոյլ եւ աղքատ էր. բացի քաղաքային եւ ղինուորական թուրք պաշտօնէութենէն, կար թուրք էջրաֆներու դասակարգ մը — կալուածատէր, խաներու եւ տուներու տէր, որոնց վարձակալներն ալ հայեր էին, եւ թուրք սեփականատէրերը «մերաս եէյիմի»ներ (ժառանգութիւն կըրծողներ) էին. կային նաեւ «էվլաֆի» պատկանող (թրքական կրօնական հաստատութեանց) միլիթեյիլիմեր (հոգաբարձուներ)՝ ձրիակերներու ուրիշ դասակարգ մը:

Քաղաքին Փրանսական հիւպատոսը, 1911էն 1914, եղած էր ՏիտՍԱՓ անունով քրիստոնէայ զարդացած սուրիացի արաբ մը, որուն թարգմանն էր Մանուկ էֆենտի Անսուրեան, սերաստացի երկարամեայ թարգման եւ զարդացած մտաւորական, վաստակաւոր մը, — տարազրութեան օրերուն սպաննուած —, որուն պատրաստած (տնտեսական կեանքի մասին) հիւպատոս Տիւսափի տեղեկագիրները Փրանսական արտաքին գործոց նախարարութեան՝ ցոյց կու տան հայուն տնտեսական վերելքը եւ ստեղծագործ ու շինարար ոգին, Սերաստիոյ քաղաքին եւ վիլայէթին մէջ երկրագործութեան, առեւտուրի, արհեստներու եւ զորագործութեան մէջ:

Սերաստիոյ առեւտրական եւ ճարտարարուեստական կեանքի մասին Փրանսական Երկու հիւպատոսներ՝ Կոընաու եւ է. Տիւսափ հետաքրքրական տեղեկագիրներ հրատարակած են:

Սերաստիոյ սանճագին մէջ արհեստաւորներու, խանութպաններու եւ առեւտրականներու 90 առ հարիւրը հայեր էին եւ 10 առ հարիւրը թուրքեր:

Թիւերով պատկերը հետեւեալն է. — (սանճագին մէջ)

Պանութպան՝ հայ 600, թուրք 150:

Արհեստաւոր՝ հայ 1·500, թուրք 250:

- Արտածող — առևտրական՝ հայ 45, թուրք 5:
 - Կերպասեղէն (մանիֆաքթուր)՝ հայ 18, թուրք 0:
 - Երկաթեղէնի առևտրական՝ հայ 12, թուրք 0:
 - Կիրքին, տեղական գործարան գործուածքներու՝ հայ 19, թուրք 1:
 - Ալիւրի գործարան՝ հայ 4, թուրք 4:
 - Նահանգին մէջ խանութպան եւ արհեստաւոր՝ հայ 6·800, թուրք 2·550:
 - Արտածող առևտրական՝ հայ 127, թուրք 23:
 - Ներածող առևտրական՝ հայ 141, թուրք 13:
 - Գործարան—արհեստանոց՝ հայ 130, թուրք 20:
 - Սեղանաւոր՝ հայ 32, թուրք 5:
- (Տես Մարտէլ Լէառ, էջ 65-67, Վ. Համբարձումեան, էջ 27-33):

ՆԱՀԱՆԳԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Սերաստիոյ նահանգը 83·000 քառ. մղոն տարածութիւն ունէր, զրեթէ նոյն տարածութիւնը՝ Անգարա նահանգին հետ: Բաժնուած էր 4 սանճագներու (միւքեսարֆլըգներու), որոնք էին.— Սերաստիա, Թուրթ, Ամասիա եւ Շապին-Գարահիսար:

Թողաթի, Ամասիոյ եւ Շապին-Գարահիսարի սանճագներու ցեղասպանութեան պարագաները այժմ նկատի չունենալով, առնենք միայն Սերաստիոյ սանճագը (գաւառը), որուն տարածութիւնն է 34·000 քառ. քիլոմէթր, աւելի մեծ՝ քան ներկայ Խորհրդային Հայաստանը:

Ներկայ թուրք հանրապետական վարչութեան օրով, Սերաստիոյ սանճագին գաւառակներուն (գազաներու) բաժանումը գրեթէ նոյնը մնացած է: Միակ փոփոխութիւնը, որ եղած է, անունի փոփոխութիւն մըն է, «սանճագ» բառին տեղ՝ «վիլայէթ» (իլ) անունը դրած են: Գաւառակներն (գայմագամլըգներն) են. — Սերաստիա (կեդրոնական գաղա), Գոչասար (Հաֆիգ), Ջառա (Գոչկիրի), Ենի-խան (Երլըզ-էլի), Թոնուզ (Շար-գըշլա), Տիվրիկ Ղանգալ, Կիրքին եւ Տարենտէ (*):

(*) 1864ի քրեական «քեչիլաքը վիլայաթ» (նահանգներու վերակազմութիւն) օրէնքի տրամադրութեամբ, բուրք պետական անձերը, նկատի առնելով հայերուն ահուած եւ անոց հետգիտէ մեծամասնութիւն կազմելը, հայկական նահանգներու միջ-նահանգային սահմանները փոփոխութեամբ ենթարկեցին: Կար մեծ

1845ին, Սուլթան Մեծիտի օրով, Սերաստիոյ նահանգի հայերուն թիւն էր 300·000: 1878ի Պատրիարքարանի ցուցակով, Սերաստիոյ նահանգի հայերուն թիւը 280·000 էր (առանց Շապին-Գարահիսարի սանճագին, որ տակաւին մաս կը կազմէր Տրապիզոն նահանգին):

1890ին Փրանսացի Վիթալ Քինէ, հիմնուելով թրքական մարդահամարի տոմարներուն վրայ (որոնք պակասաւոր են եւ ճիշդ չեն) Սերաստիոյ նահանգի հայերուն թիւը նշանակած է 170,423 (հատ. 1, էջ՝ 623-790):

1906ի թրքական «Սալնամէ»ն (պետական տարեգիրք) նշանակած է 149·465: Քաղաքական հաշիւներով հայերու թիւը միշտ պակաս ցոյց տրուած է:

Թրքական թիւերու անճշդութիւնը որոշ կ'երեւայ, երբ նկատի կ'առնենք 1911 Յունիս 13 թուակիր Սերաստիոյ Առաջնորդարանին մէկ տեղեկագիրը, որուն մէջ միայն Սերաստիոյ սանճագի (գաւառի) հայերուն թիւը ցոյց կու տայ 255·430, որոնց մէջ 249·201ը՝ լուսաւորչական, 3·423ը՝ բողոքական եւ 2·806ը՝ կաթոլիկ:

Կարապետ Գաբրիկեանի ցուցակով՝ Սերաստիոյ սանճագի հայերու թիւն էր 192·164: Թրքական թիւերը քառասուն առ հարիւր պակաս են:

1919ին Հայոց Պատրիարքարանը Սերաստիոյ նահանգին թիւը նշանակած է 225·000: Իսկ Հայաստանի Պատուիրակութիւնը, Սերաստիոյ նահանգը կիսելով, դուրս ձգելով անոր հիւսիսային, արեւմրտեան եւ հարաւ-արեւմտեան մասերը, մնացածը կը հաշուէ 165·000:

Պարզ ուսումնասիրութիւն մը կը բաւէ ցոյց տալու համար պակասաւոր թիւերը թէ՛ Պատրիարքարանի, թէ՛ Օրմանեան Սրբազանի եւ թէ՛ Հայկական Պատուիրակութեան:

նահանգ մը, որ կը կոչուէր ԵՐՄԵՆԻՍԹԱՆ ԷՅԱԼԷԹԻ (մեծագոյն նահանգ մը՝ էրզըրումի), գոր գանազան մասերու կտտրակելով Պիթլիսի նահանգը շինեցին, Ազերդը կցելով ու ոչ-հայ շրջաններ աւելցնելով: Նոյնպէս Տիգրանակերտէն գատեցին եւ հարբերդի նահանգ շինեցին, ոչ-հայ տարրեր կցելով: Նոյնը եղաւ Սերաստիոյ պարագային: Կցեցին հարաւ-արեւմուտէն, արեւմուտէն եւ հիւսիս արեւմուտէն ոչ-հայ շրջաններ, քաղաքական հաշիւներով, որպէսզի այդ նահանգներուն մէջ հայերը մեծամասնութիւն չկազմեն:

Օրմանեան Սրբազանի տուած թիւերը Սերաստիոյ Նահանգի մասին, որոնք շատ պակասաւոր են, ահաւասիկ.

Սերաստիոյ սանձազը	
Սերաստիա	86,000
Կիւրին	18,500
Տերենտէ	7,000
	<hr/>
Գումար	111,500
Թողաթի սանձազ	23,500
Ամասիոյ սանձազ	28,500
Շապին-Գարահիսար	25,200
Ածպտեր	4,050
	<hr/>
Գումար նահանգի	192,750 :

Օրմանեան Սրբազանի թիւերը ստուգուած չեն: Նկատի առած չէ Ջարդերու Հետեւանքով պակասածները, ինչպէս նաեւ 1878էն մինչեւ 1915, 37 տարուան ծնունդներն ու մահերը: Այդ պատճառով, առաջնորդարաններու վիճակազրուութիւնները եւ ցանկերը աւելի ճշմարտաման են:

Մուամմէր պէյ կոչուած թուրք թթու իթթիհատականը Մարտ 16, 1913ին Սերաստիա եկաւ որպէս նահանգապետ. — Նենգամիտ հրէշ մը:

Իթթիհատը ջուրին երեսը ելած էր: Կ. Պոլսոյ մէջ՝ պատերազմական նախարարը՝ չերքէզ Նալրմ փաշան սպաննելով եւ կառավարութեան ղեկը ձեռք անցրնելով Յունուար 10/23 1913ին, անմիջապէս վարչական, դատական եւ զինուորական պաշտօններու վրայ զրին իրենց կուսակից անձերը, մասնաւորապէս Բումելիէն եկած քրիստոնէատեաց տարրերը, վրիժախանձ ոստիկաններ եւ ոստիկանապետներ:

1914 Օգոստոսի սկիզբը, երբ թուրքիա զօրաշարժ հռչակեց, «զինուորական կարիքներու պիտի յատկացնենք» ըսելով, Սերաստիոյ քաղաքին եւ նահանգին մէջ հայերու խանութներուն ամէն տեսակ առարկաները գրաւեցին, ինչպէս նաեւ ձի, կառք, եղ եւայլն, իսկ թուրքերունը՝ շատ ցանցառ կերպով: Գրաւուած ապրանքներուն մէկ մասը զինուորականներուն տուները կը ղրկուէին:

Գրաւուեցան վանք, եկեղեցի, հիւանդանոց, զործարան, գոր-

ծատուն, ջրաղացք, ալիւրի գործարան եւ աչքի զարնող տուներ, իբր թէ «զինուորական զործերու համար անհրաժեշտ են»: մինչդեռ նպատակը ինքնապաշտպանութեան զիրքեր չձգելն էր հայերուն:

Էրզրումէն Սերաստիա փոխադրուած Սանասարեան վարժարանի նոր յարկարաժիններուն համար պատրաստ նիւթեղէնները գրաւուեցան եւ այդ ատաղձներով թուրքերու հիւանդանոց եւ զօրանոց շինուեցան հայ աշխատաւորներու ձեռքով, հայոց պերեզմանի քարերով:

Զինուորական մարզանքի չվարժուած հայ զինուորներէն՝ որպէս անվարժ (գայրը-մուալլիւ) դանձեցին պետէլ (զինուորութենէ զերծ մնալու տուրք) եւ յետոյ կանչեցին մինչեւ 45 տարեկանները զինուոր, որով դրամ վճարողները նորէն զինուոր եղան:

Անմիջապէս կազմուեցաւ «Միւտաֆայը Միլլիէ» (Ազգ. Պաշտպանութիւն) անունին տակ յանձնախումբ մը, որուն անդամներն էին՝ Հաճի Ալի Պէկ Զատէ Սուլէյման, ձամպազ Տուզճի Պէքիր, Արփաճը Օղլու Սապրի, Հաճի Մուսթաֆա եւ Ահմէտ անունով պրազիր մը, որ զինուորութենէ փախստական մրն էր: Ասոնց գործն էր խանութներու մէջ գեռ մնացած ապրանքները արձանապրել եւ եղածը դրաւել՝ առանց վճարումի եւ մէկ մասն ալ՝ թուրքերու տուները ղրկել: Ասիկա սեփականութիւններու կողոպուտին առաջին զբաղմունքն էր:

Նոյեմբեր 1914ին իթթիհատի Կեղրոնէն Սերաստիա ղրկուած էր Ապտիւլ Ղանի պէյը՝ իբր պատասխանատու-քարտուղար եւ ներկայացուցիչ: Զինուորական հայակեր կազմ հարիւրապետ մըն էր, ապա սիվիլ, որ ոտքէն վիրաւորուած էր Պալքանեան պատերազմին մէջ: Ասոր զալուստով սարսափի քաղաքականութիւնը սաստկանալ սկսաւ (*):

Դեկտեմբեր 18, 1914ին, բնիկ սերաստացի Սահակ վարդ. Օտապաշեան, որ նախապէս եղած էր Սամսոնի եւ Պրուսայի առաջնորդ, իբր առաջնորդ կ'երթար Երզնկա. նահանգապետ վալի Մուամմէրի խորհուրդով եւ օյնութեամբ Ղանիի եւ Էնտիրէսի դայմազամ կեսարացի Ահմէտ Էֆենտիի, զործակցութեամբ հինգ հօգիէրաղկացեալ թուրք չեթէական իոււմրի մը, սպաննուեցաւ Բեֆայիէ Հասսամ՝ Չոպանլը եւ Գանլըթաշ զիւղերուն միջեւ, Էնտիրէսէն 40 մղոն արեւմուտք: Այդ չեթէներն էին Զառացի Մահիր, Խալիս պէկ,

(*) Ապտիւլ Ղանիի մասին պիտի անդրադառնամք, երբ պատասխանատու-քարտուղարներու դատավարութեան թղթաժրարին գամք:

Չեչեն-Ալի՝ Մուսամբէրի ետեքը, չեթէպակտ էթհէմ եւ ժանտար-մա միւլապիմի շերքէզ Ալի պէկ: Այս անարդ ոճիրէն անմիջապէս ետք, Ղանիի վարչատէն յետոյ՝ ուրիշ կարգ մը զրգոխ արարքներ տեղի ունեցան, ամբաստանելով հայերը, թէ «թուրք զինուորին հացը թունաւորած են» կամ նման սուտեր:

Դեկտ. 1914ին, էնվեր, Սարըզամիշի մէջ իր պարտութիւնը պատրուակելով, զինուորական ծառայութեան մէջ եղող զինեալ հայ զինուորներուն գէնքերը առաւ եւ, իրրեւ հասարակ-գործաւոր ճամբայ, շէնք շինելու պատրուակով, զանազան վայրեր ցրուեց, մաս առ մաս բնաջնջելու համար:

Փետր. 2, 1915ին զրաւուեցաւ քաղաքէն կէս ժամ հեռու՝ Ս. Նշան հնամեայ վանքը: Մարտ 6, 1915ին Սերաստիոյ մէջ 6 հայ կիւրինցիներ կախազան հանուեցան, իր զինուորական-փախստական: Անգէն զինուորներու փոխադրութեանց ժամանակ, շատերը կը սպաննէին. «Ի՞նչ ընենք, կը փախէին» — «Փիրարա քեսատտը էթօրիյիմ-տէն գաթլ օլուստը», կ'ըսէին:

Տեղին է ըսել, որ հայու ոխերիմ թշնամի էնվէրը, Կովկասեան ճակատի կռիւներու ընթացքին, գերի իյնալէ ազատողը եղած էր սերաստացի հարիւրապետ մը՝ Յովհաննէս Ակիւնեան, Պալքանեան պատերազմի հերոսներէն, անոր գործակից էր նաեւ սերաստացի ուրիշ զինուորական սպայ մը՝ Միհրան Չամեան: Երկուքն ալ յետոյ իրենց կեանքը տուին Կովկասեան ճակատին վրայ՝ թուրքերու կողքին, իտի եւ Օլթիի շրջանին մէջ:

Մարտի կէսին, 1915, Սերաստիոյ կուսակցական լիտըրները ձերբակալեցին: Դաշնակցականներէն՝ Վահան Վարդանեան (ղեղա-գործ), Յովհաննէս Փօլատեան, Յարութիւն Վարդուկեան, Վահան Մեծատուրեան, Կ. Կ.ի զանձապահ, կառայարական թարգման մշեցի Մարտիրոս Գարրիէլեան, հնչակեաններէն Տիգրան Օտապաչեան, Մանուկ Պէլլէրեան, մսագործ Գարա-Մանուկեան, Պէրպէր Ոսկան եւ ուրիշներ:

Սերաստիոյ Կեղը. Կոմիտէի անդամներէն Խաչատուր Կոտոտեան (Պարոյր), ժամանակ մը պահուելէ ետք, լեռ ելած էր: Իսկ Արամ Երանոսեան (Արամազդ) իրրեւ առողջապահական ենթասպայ Սու-Շէհիրի մէջ բժաւոր տեղէ մեռած էր:

Մարտ 15, 1915ին Մուրատը ձերբակալել փորձեցին խարէութեամբ, բայց ձախողեցան: Թուրք կառավարութիւնը ամէն տեսակ խստութիւններու դիմեց, Մուրատ իր ցոյց տուած նախզուղու-թեամբ ու քաջութեամբ եւ կռիւներով հիացում պատճառեց բոլորին:

Մայիսի կիսուն, երբ Մուրատ քաղաքէն 3 ժամ հարաւ-արեւմուտք Ղաւրազի լեռը կը գտնուէր, զաղտնարար անձ մը զրկեց Սերաստիոյ Կեղը. Կոմիտէին, «Սեի-Բլոյթ»ին, ըսելով որ «ղանակը ոսկորին հասած է, ինչ որ իրենց տրամադրութեան տակ կայ, բերեն եւ զործի սկսին»: Պատասխանը բանտէն կը ստացուի: Կը հաղորդեն որ «քաղաքը պաշարման տակ է, կարելիութիւն չկայ որեւէ բան զըրկելու, հաւանաբար այս պատասխանը ձեզի հասնելէ առաջ մենք մեռած կ'ըլլանք: Մեր կտակն է շիննայել ոչ ոքի»:

Եւ Մուրատ կ'արձանագրէ. «Սեւ Բլուր»ը անհետ կորսուած է»: 1915 Մայիս ամսուան մէջ ձերբակալուած եւ սպաննուած են նաեւ տղքթ. Պաղտասար Վարդանեան, ղեղազործ Վահանին եղբայրը, տղքթ. Արմենակ Հայրանեան եւ ժանտարմըրի բժիշկ տղքթ. Մալսուտ:

Բնաջնջումի նկատումով, զինաթափ հայ զինուորներէն կազմուած ամելէ-թապուռներն ալ (զործաւորական վաշտեր) կը հեռացնէին զանազան կողմեր:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԶԱՆԱԶԱՆ ՎԱՅՐԵՐ ՂՐԿԵԼՈՒ ԵՒ ԻՐԱՐՄԷ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՆ

Օրինակ՝ Թոգաթի ամելէ-զինուորները կը բերէին Թոնուզ կամ Սերաստիոյ շրջակայքը: Սերաստիայինը կը զրկէին Ղանդալ կամ Թոգաթ, Ամասիայինը կը զրկէին Նիքսար, մէկ խօսքով գործաւոր-զինուորները կը հեռացնէին իրենց ծննդավայրէն եւ կը մեկուսացնէին:

Սահակ վարդ. Օտապաչեանի սպանդին նման, Յունիս 2 1915ին՝ Թոգաթի առաջնորդ Շաւարշ ծայրագոյն վրդ. Սահակեանն ալ սպաններ էին Թոգաթի եւ Արզովայի միջեւ՝ Գրղըլ-էնի կոչուած զառիվարին վրայ՝ չեթէնրու ձեռքով: Կազմակերպողները Թոգաթի միւթեսարըֆին եւ ժանտարմայի հրամանատարին հետ՝ Սերաստիոյ նահանգապետը՝ Մուսամբէր պէյ եւ չեթէներ էին:

Մէկ օր ետք, Յունիս 3, 1915ին, կը սկսէին Սերաստիոյ քաղաքի եւ շրջանի զանգուածային բանտարկութիւնները, փոլիսներու, ժանտարմաներու եւ սուլիաւոր զինուորներու կողմէ: 10 օրուան մէջ՝ Սերաստիոյ բանտարկեալներուն թիւը հասած էր 5 հազարի: Գաւառակներէն ակնյայտնի անձերն ալ Սերաստիա կը բերէին: Բանտի վե-

բաժնուած չէնքերը մէկ կողմէ կը պարպուէին սպաննութեամբ եւ միւս կողմէ կը լեցուէին նոր ձերբակալութիւններով:

Թողաթի, Ամասիայի, Զիլիի, Նիքոսարի, Հերեկի, Մարզուանի, Սամսոնի եւ Ղազարայի ականատորներն ալ Սերաստիոյ բանտերը կը բերէին կարանաւորուած վիճակի մէջ:

Նոյնը տեղի կ'ունենար նաև Սերաստիոյ սանձազի գագաներէն՝ Քոչկիրիի (Զառա), Հաֆիքի (Գոչհիսար), Տիվրիկի, Կիւրիւնի, Մանճըլլիի եւ Կեմերեկի մէջ: Եւ նոյնիսկ Անդարայի նահանգին ենթակայ Եոզկաթ քաղաքի 500 անձերը, առաջնորդ Ներսէս եպիսկոպոսի Գանիէլեանի հետ, խողխողուած են Սերաստիայէն չորս ժամ հարաւ Տաշլը-Տերէ կոչուած վայրին մէջ: Այդ վայրը գերեզմանն է նաև Սերաստիոյ մէջ ձերբակալուածներու մէկ մասին:

Յունիս 3, 10, 13ի (1915) դանդուածային բանտարկութենէն յետոյ, ներքին գործոց նախարարութենէն հասած գաղտնի հրամանագրի մը վրայ խմբագրուած էր պէշաննամէ (յայտարարութիւն) մը, որ փակցուած էր պատերու վրայ և հաղորդուած էր նաև քաղաքի ոստիկանատուններուն (գարագոյ) եւ անոնց միջոցաւ ալ մըխթարներուն: Հետեւեալն էր «պէշաննամէ»ին բովանդակութիւնը (*).

- 1.— Բարձրագոյն հրամանով՝ ձեզիբէ եւ Տէր Զօր պիտի մեկնիք:
 - 2.— Ապահով պիտի երթաք՝ հսկողութեան տակ:
 - 3.— Ճամբան ձեզի բան պիտի չպատահի:
 - 4.— Այս տեղահանութիւնը պատերազմի պատճառով է:
 - 5.— Եթէ ընդդիմութիւն փորձուի, զինու զօրութեամբ պիտի բնաջնջուիք:
 - 6.— Թաղ առ թաղ պիտի մեկնիք:
 - 7.— Գարադոշներուն հաղորդուած է:
 - 8.— Կրնաք վարձել կառք, ձի, էշ: Զունեցողներուն կառավարութիւնը եզան կառքեր պիտի հայթայթէ, իրենց հետ տանելիք գոյքերուն համար:
- «Եղեռնապատում» գրքին հեղինակը՝ Կարապետ Գարիկեան կ'արձանագրէ, թէ 15 օրուան ընթացքին, Յունիս 22էն մինչև Յու-

(*) Այս «պէշաննամէ»էն առաջ թուրք կեդր. կառավարութեան Մայիս 16, 1915ի հրահանգները, դահլիճի որոշումը, շինծու պատճառարանութիւնները եւ սեփականութեան գրաւումի հրահանգներու հաւաքածոն տեսնել շէյք Էլալիեֆի օգոստոս, 11, 12, 13, 1964 թիւերուն մէջ:

լիս 5, 1915 Սերաստիա քաղաքէն տարադրուած են 5,400 տուն, 37,000 անձ:

Մեր ձեռքին տակ գտնուող ձեռագիր օրագիր մը կը յիշատակէ, թէ տարադրութեան նախօրէին, ոստիկանական վերջին մարդահամարով, տարադրութեան ենթակայ եղած են քաղաքէն 47,500 անձ, ոչ թէ 14, այլ 17 կարաւանով:

Քաղաքին մէջ բանտարկուած 5,000 հայերը ենթարկուած են ծեծի եւ չարչարանքներու: Քուկըլ փրիզընըր (գնդակահարուելիք) բանտարկեալները, նոյն վայրագ միջոցներով, գիշերները կապուած, դուրս հանուած ու սուիճաւոր զինուորներու հսկողութեան տակ սպաննուած են:

Այս բոլոր զոհերուն դէմ մէկ շինծու գրպարտութիւն կար.— Մուամմէր կոչուած հրէշ նահանգապետը ստայոգ տեղեկագիր մը ներկայացուցած էր Սերաստիոյ Պատերազմական Ատեանին, իբր թէ 30.000 հայեր պատրաստուած էին ապստամբելու, անոնց ուժը բաժնուած էր 3 մասերու, որոնցմէ մէկուն հրամանատարն էր հերոս Մուրատը: Այդ օրերուն, Պատերազմական Ատեանի մնայուն նախագահի տիտղոսը կը կրէր հաղորդակետ Մուսթաֆա Սապրի: Մուամմէրի հրէշային սուտերը արձագանգ կը գտնէին տեղւոյն թուրքերէն պաշտօնաթերթին՝ «Սիւաս»ի եւ «Գըզըլ Ըրմազ»ի մէջ, թուրք խուժանը գրգռելու համար հայոց դէմ:

Նման արուեստական պատերազմական ատեաններ կազմուել էին հայաբնակ զլխաւոր քաղաքներուն մէջ, կեղծ դատեր ստեղծելու համար: Մուամմէրի զղուելի գրպարտութիւնները հրատարակուած են նաև թուրքերուն հրատարակած «Հայ Յեղափոխական Շարժումները» կոչուած գրքին մէջ (էջ 190-94):

Յեղասպանութիւնը (հեկոսայտ) այժմ միջազգային ոճիր կը նկատուի եւ օտար մարմին մը, ըլլա՛յ այդ Միջազգային Կարմիր Խաչը կամ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, շատ դիւրութիւններ ունին ուսումնասիրութեան եւ ստուգումի, որովհետեւ, հակառակ թրքական կառավարութեան բոլոր ջանքերուն՝ անհետացնելու նպատակով փաստաթուղթերը, Եղեռնի հետքերը եւ այլ նշանները այսօր կարելի է ամենայն դիւրութեամբ ճշդել: Արդէն հայութիւնը, Սեւրի դաշնագրի մասնաւոր յօդուածներով, իրաւունք ստացած է իր պահանջներուն համար (տե՛ս, պատիժներու զլուխը, «Փեմըլթիզ», մաս 7, յօդուած՝ 226-230, եւ մասնաւորապէս թուրք կառավարութեան կատարած ջարդերու մասին՝ յօդ. 230ը եւ փաստաթուղթերու հայթայթման մասին ալ յօդ. 228ի տրամադրութիւնները):

Մեր դատի պահանջին հիմը միայն նիւթական կորուստի հասուցումը չէ, այլ հաստատումը՝ ոճրագործին, քաղաքական այս մեծ ոճիրին կոնխամտածումը, Հայաստանը առանց հայու թողելու եւ հայոց հողերը պահելու նպատակով թուրք կառավարութեան ձեռքին տակ:

Հայը իր հնարադիտութեամբ եւ աշխատասիրութեամբ կրնայ վերստեղծել նիւթականը. բայց հողին պէտք ունի իր ոտքին տակ:

Մարտ 15ին եւ անոր յաջորդող Ձատիկի եւ Նոր Կիրակիի օրերուն թուրքերը հայ կուսակցական ղեկավարները եւ ուրիշներ, մինչեւ Մայիս 27 (իրենց սպանման օրը), աներեւակայելի ծեծի ու շարժարանքներու ենթարկեցին, եւ Մայիս 27ին ձեռքերը կապուած տարին Ենիխանէն 2 ժամ հարաւ-արեւմուտք՝ Իք Տաղիի ստորտը՝ Իք Մեզարը կոչուած վայրը եւ զնդակահարելով զանոնք, թաղեցին: Ներկայ էին Իթթիհատի պատասխանատու քարտուղարը, վալին, ժանտարմայի հրամանատարը՝ Ալի Շեֆիքը եւ գոլ-օրտուի հրամանատարի փոխանորդ Փերթեւ պէյ. նաեւ լուսանկարած էին զանոնք:

Յունիս 3էն մինչեւ Յունիս 16, 1915, 5,000է աւելի անձեր բանտարկուած էին զանդուածային կերպով եւ լեցուած էին կեղրոնական բանտը եւ 3 մետրեսէներ, — Կօլ Մետրեսէ՝ քաղաքին հարաւային մասին մէջ եւ երկու ուրիշ մետրեսէներ՝ քաղաքի կեղրոնական մասին մէջ՝ Շիֆայիէ եւ Մուղաֆֆերետին կոչուած: Բացի ատոնցմէ՝ հեղհեղ կը բերուէին շրջակայքի աւաններէն եւ քաղաքներէն ձերբակալուածներ, որոնց բանտարկուած շէնքերը մէկ կողմէն կը պարպուէին եւ նորէն կը լեցուէին, նոր զոհերու տեղ պատրաստելու համար: Երբ քաղաքին բանտարկութիւնները լրանալու մօտ էին եւ Յունիս 18ի «Պէյաննամէ»ով պիտի յայտարարուէր ժողովուրդին տարագրութիւնը, Իթթիհատի պատասխանատու քարտուղար Ղանի պէյ, որ Սեբաստիոյ մէջ կը բնակէր Պարոյր էֆենտի Պողոսեանի տունը, Կ. Պոլիս մեկնած էր: Ան պիտի վերադառնար բերանացի եւ զբաւոր նոր հրահանգներ բերելու համար Կեղրոնէն: Քաղաքին բռնադաղթը սկսաւ Յունիս 22ին եւ վերջացաւ Յունիս 9ին:

Յունիս 10ին, թրքական պոռնկացեալ Սահմանադրութեան 7րդ տարեդարձի օրուան տօնախմբութեան հանդէսէն ետք, Ղանի պէյ վերադարձած էր Սեբաստիա եւ, քաղաքին հայերը հեռացուելէ ետք, կարգը եկած էր 4 շէնքերու մէջ թիմուած ձերբակալուածներուն, որոնք աւելի սարսափելիօրէն տանջուած են քան Քրիստոս:

Յունիս 11-19, 1915, ժանտարմրիի, ոստիկանութեան եւ զինեալ սպաներու, ինչպէս նաեւ քաղաքի թուրք երեսփոխան Րասիմ

պէյի ներկայութեան, նորէն ցուցակագրուեցան, արձանագրուեցան: Ինը օր տեւած այդ (Յունիս 11-19, 1915) արձանագրութենէն յետոյ, ըստ կազմուած անուանացանկին, Յունիս 20էն 25, Յունիս 26-30 եւ Յունիս 31էն մինչեւ Օգոստոս 4, 1915, այդ 15 օրուան մէջ՝ 5,000 բանտարկեալներէն օրական 250էն 300 հողի կապուած, հետիոտն, «ուրիշ վայրեր զրկելու» կամ «Կեսարիա կամ այլուր ճամբայ չինելու» պատրուակով, կը տարուէին քաղաքին շրջակայքը՝ 5էն 10 մղոն հեռաւորութեան վրայ, նախապէս որոշուած անջատ անջատ տեղեր եւ շարաշար կերպով կը սպաննուին զանազան վայրերու մէջ:

Քաղաքէն ձերբակալուած 5.000 հայերը եւ շրջակայ գիւղերէն եւ աւաններէն բերուած մօտ 5.000 հայեր եւս, 1915 Յունիս-Օգոստոսի մէջ եւ տարի մը ետք այլ հայ զինուորները նահատակուած են հետեւեալ վայրերուն մէջ, քաղաքէն 5էն 20 մղոն հեռաւորութեան վրայ: Այդ վայրերը՝ այրուբենական կարգով. — Ագէօրէնի ձորերը, Գարտաշարի ստորոտի ձորերը, Գայա Տիպի, Դաւրա Պողազի ձորերը, Իշխան Թագաւոր կոչուած վայրի ձորերը, Իմարէթի հարաւը, Կեմերեկի մօտ Մուտ-Արասը կոչուած գիւղին ձորերը, Ալիսի հարաւը՝ «Կիւն Կէօրմէջ» վայրը, Ղարլըխը (Ս. Յակոբ վանքի մօտ), Մերեքիմի ստորտը, Մերէմ Ովա, Նիւմունէ Ձիֆթիկ, Շունքուրակի հարաւի ձորերը, Չալլի ձորերը, Չելեպիլիբի ձորը, Ս. Խնդրակատար վանքէն անդին, Չերչի Տերէ, Չերչի խանի հարաւը, Չորանոցին (Գըշա) ետեւ, Սէյրան Թեփեսիի մօտ, Սէյֆէի ճամբան, Դիվրի, Վարի Պալահոռ, Վերի Պորոզուտ, Սէօյիւտլի խանին ետեւ, Տաշլէ Տերէ, Փորսուխ եւ Ֆաթլում: Սեբաստիոյ քաղաքին շուրջի հողերը նահատակաց արիւնով ոռոգուած են:

Նահատակուած այդ 5.000 հայերուն մէջ էին Սեբաստիա քաղաքի ազգային հաստատութիւններուն, մարմիններուն հայրենասէր անդամներուն մեծ մասը, տարեց ուսուցիչներ, Ազգ. Ժողովի եւ կըրթական մարմիններու անդամներ եւ պատուական ազգայիններ, ամէն հոսանքէ եւ խաւէ:

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒԱԾՆԵՐԻՆ ՄԻՈՑՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԹՈՒՂԹ ՄԸ

Սեբաստիոյ մէջ բանտարկուած 5.000 անձերէն մէկուն մասին, որ Սեբաստիոյ Քաղաքական Ժողովի անդամ էր, որոշ ազդեցութիւն ունեցող անձի մը միջոցաւ գերման ղեկավարման ղեկավարման եղած էր

ճշդելու համար թէ այդ անձը բանտարկուելէն ետք (Յունիս 13, 1915) ի՞նչ եղած է: Այս մասին գերման ընդհանուր հիւպատոսը՝ Մոռթման գրած է Սերաստիոյ գերման փոխ-հիւպատոս Քաուլ Վեոթին եւ ան պատասխանած է հետեւեալը. —

ԹԻԻ 81. —

Փետրուար 22, 1917
Սերաստիա

Իրբեւ պատասխան Ձեր Փետրուար 1, 1917 թուակիր նամակին. — Այդ ծանօթ անձնաւորութիւնը, ձեռք անցուած վկայութեանց համաձայն, ասեմ մը այստեղի բանտը մնացած է, յետոյ անծանօթ ուղղութեամբ զրկուած է: Անոր ճակատագրի մասին այս տեղի բնակիչները բան մը չեն կրնար ըսել: Մինչեւ այսօր, անոր մասին, անոր պարիլը ապացուցանող, որեւէ լուր եկած չէ:

Ստորագրութիւն՝ ՔԱՌԼ ՎԵՌԹ

Այս տեղեկութիւնը կրնանք ընդհանրացնել 4999 միւս բանտարկեալներուն համար եւս:

Այդ պաշտօնական գողութեան եւ կողոպուտի մասին հրահանգներու հաւաքածոյ մը գոյութիւն ունի, մշակուած՝ ներքին գործոց նախարարութեան կողմէ, 37 յօդուածներէ բաղկացեալ, զոր հրատարակեցինք (տես «Հայրենիք» օրաթերթ՝ Հոկտեմբեր 6, 7, 8 1964, թիւ 15940-15942):

Հայերու տուները իրենց պարունակութիւնով կը կնքուէին. իւրաքանչիւր թաղի մէջ «Ռասփիէ Բամիսիոն»-ի (հաշուեյարդարի մարմին) մասնաճիւղերուն կողմէ: Միւս կողմէ, ոմանք ղուռներէն, ոմանք պատերը ծակելով, գրաւորներ, քահախլտարներ, զինուորականներ եւ մուհաճիրներ, կը դատարկէին տուները, իսկ մնացածը կը փոխադրուէր Սերաստիոյ հսկայ Մայր եկեղեցին (Ս. Աստուածածին) աճուրդով ծախուելու համար, եւ որպէս թէ հասոյթը ղետեղելու համար «Մալիէ Սամտրզ»-ի մէջ (պետական գանձատունը):

Պաշտօնական կողոպուտին կարեւոր մէկ մասը կը կազմէին՝ Մայր Եկեղեցոյ, Ս. Սարգիս, Ս. Փրկիչ, Ս. Մինաս եկեղեցիներու, Ս. Նշան պատմական վանքի եւ այլ վանքերու սեփականութիւնները՝ սրբազան անօթները, ոսկեղէն, արծաթեղէն սպասները եւ հնութիւնները, գլխաւորաբար Ս. Նշան վանքին հնութեանց գանձարանը և 293

ձեռագիրները: Չանոնք կողոպտող թրքական յանձնախումբին անգամներն էին նախագահը՝ այդ «Էմվալը Մեթրուքէ»-ի տեֆթերութեամբ, փոխ նախագահը՝ կողոպուտի մարմնին, արդարութեան պաշտօնատարը՝ Միւտաայը Ումուսիմ (հանրային դատախաղ) Ասաֆ պէյը, եւ Ջրաաթ (երկրագործական) պանքի տնօրէն Սապրի պէյը եւայլն:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԶԱՐԴԸ

Մինչեւ 1916 Յունիս Սերաստիոյ մէջ եւ շրջակաները կը մնային դեռ մօտ 10·000 հայ զինուորներ, որոնք չարաչար կ'աշխատէին «Մեմգիլ»-ի (զինուորական կայան), ոմանք «Իմալիքիսանէ»-ի մէջ, դերձակներ, կօշկակարներ եւ այլ արհեստաւոր-զինուորներ, ոմանք՝ ալիւրի գործարաններու եւ հացագործարաններու մէջ (դահ-նիյէ), ուրիշներ՝ արհեստանոցներու մէջ, ոմանք՝ շինութիւններու աշխատանքի մէջ, եւ հայոց պերեզմանատան քարերով շինած էին թուրքերու համար ուսուցչանոց մը, երեք զօրանոց, հեծելազօրքի զօրանոց մը, հիւանդանոց, Իթթիհատի ակումբ, պանդոկ եւ կազինո:

Ուրիշ հայ զինուորներ կ'աշխատէին զինուորական պիտոյից (քեմիկաթի) ամբարներուն մէջ եւ տակաւին հարիւրաւոր եւ հազարաւոր զինուորներ ալ ճամբաներու շինութեան մէջ, իրբեւ «ամե-լէ քապուռ»-ներ՝ Սերաստիա, Ղանդալ, Թոզաթ, Բեշատիյէ, Կեսարիա եւայլն:

Նոյն վայրենարարոյ միջոցներուն ենթարկուեցան այս անբախտ զինուորները, ինչպէս միւս բոլոր բանտարկեալ հայերը, նոյն խարբալական միջոցներով. լեցուցած եւ արգելափակած էին զանոնք բանտերու և մետրեսէներու մէջ և մաս առ մաս կոտորած էին: Նախ 20 օր բանտի մէջ, հսկողութեան տակ պահած էին զանոնք, ուժասպառ ընելու համար: Յունիս 22, 1916էն մինչեւ Յուլիս 13, 1916, վայրագօրէն սպաննած էին զանոնք: Շատ քիչը միայն հրաչքով ազատած են այդ ջարդէն: Ասոնց մէկ մասը բերած էին Գայա Տիպի՝ Սերաստիայէն 24 մղոն հարաւ-արեւմուտք, մէկ մասը քաղաքին շուրջը, մէկ մասը՝ Շար-Գըշլա եւ Կեմերեկի մօտերը, մասնաւորապէս սպանդանոցի յարմար ձորերու մէջ:

Կարինէն արեւմուտք սպաննուած էին 2·000 անգամ մը և 7·000 ուրիշ անգամ. զուժար՝ 9·000: Ատկէ զատ՝ Չառայի մէջ 1·000, Բեշատիյէի մէջ՝ 1·000 (Բեշատիյէ՝ Թոզաթի սանձազին մէջ եւ Բեֆայիէ՝ Շ. Գարահիսարի սանձազին մէջ):

**ՍԵՐԱՍՏԻՈՅ ՍԱՆՃԱԳԻ ԻՆՉ ԳԱԶԱՆԵՐՈՒ
ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ**

Սերաստիոյ գագաճ շրջակայ 6 գիւղերով	46,200
Ենիխան (Երլտըզ Էլի) շրջակայ 5 գիւղերով	3,304
Հաֆիքի գագաճ (Գոչհիսար) շրջակայ 26 գիւղերով	34,080
Քոչկիլի գագաճ (Զառա) շրջակայ 8 գիւղերով	16,400
Թոնուզի գագաճ (Շարգըշլա և Կեմերէկ) շրջակայ 25 գիւղերով	31,620
Ղանգալի գագաճ շրջակայ 11 գիւղերով	14,240
Տիվրիկի գագաճ շրջակայ 15 գիւղերով	18,120
Կիւրիսի գագաճ շրջակայ 4 գիւղերով	15,800
Տերեւտէի գագաճ, Աշոտիով միասին	5,600
Ազիզիէ (Պիւնեան և Էջրէկ)	6,800

Ընդհ. գումար՝ Սերաստիոյ սանճագի հայութեան՝ 192-164
Այս թիւը 50,000ով պակաս է առաջնորդարանի ներկայացուցած թիւէն:

**ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ
ՄԱՍԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

Գերման կայսերական հիւպատոսարան — Սերաստիա
Հեռագրի

(Սերաստիայէն ղրկուած, Յունիս 27, 1916, հասած Կ. Պոլիս
Յունիս 28, 1916, գերմանական ամառնային դեսպանատունը, Թա-
րապիա)

Գերման Գեոգրաֆիկալ
Կ. Պոլիս

«Երէկ իրիկուն, դեռ հոս մնացող հայերէն ճամբայ շինող և
կամուրջ շինող ալայներուն պատկանող հայերը, նաև այն հայերը,
որոնք Արհեստից վարժարանին(*) մէջ էին, և յոյները, արգելա-

(*) «Արհեստից վարժարան» (Կեպուպէ-շուլէ) կոչուածը Սերաստիոյ ազգա-
յին «Արամեան» վարժարանն է, 4 յարկանի մեծ շէնք մը, ուր պատերազմէն առաջ
կ'ուսանէին 1-500 աշակերտներ: Առաջին յարկը Հոփսիսեան ազգական վարժա-
րանն էր, ուր կ'ուսանէին 250 ազգիկներ, ունէր ընդարձակ սրահ մը, որ կարի ար-
հեստանոցի վերածուած էր:

Շէնքը թուրք կառավարութեան կողմէ գրաւուած էր Գեկտ. 12/25, 1914ին
և զինուորական արհեստանոցի (սամայի) վերածուած էր:

փակուեցան հայկական եկեղեցիին մէջ: Յոյները և իսլամութիւնը
ընդունող հայերը, սաստիկ ծեծէ մը յետոյ, այսօր ազատ ձգուե-
ցան: Միւս հայերուն, տեղական իշխանութեանց կողմէ, իսլամանա-
լու խորհուրդը կը տրուի: Մերժեցին, ուրեմն, պիտի ղրկուին...»:

Գերման փոխ հիւպատոս
Վեռթ

«Պիտի ղրկուին»ը եղաւ ղրկուեցան ջարդուելու:

1916 Յուլիսին, Սերաստիա գտնուող Էրզրումի հայ կաթողիկ
արք. Կարապետ Քչուրեան, լսելով Մուսամէրի տուած եղեռնական
հրահանգը և Սերաստիոյ հայ զինուորներուն ջարդը, կաթուածա-
հար կ'իյնայ և կը վախճանի Սերաստիոյ մէջ:

ՍԵՐԱՍՏԻՈՅ ԲԺԻՇԿ ՍՊԱՆԵՐՈՒ ԶԱՐԴԸ

Հեռագրի

Գերման կայսերական հիւպատոսարան — Սերաստիա
Հեռագրի

Սերաստիա, Յուլիս 23, 1916 (Ն. Տ.)

Գերման Գեոգրաֆիկալ

Կ. Պոլիս

Այսօր, Ազգային տօնին օրը(*) բոլոր հայ զինուորական բժիշկ-
ները, ամէն աստիճանի, սպառնալիքի տակ իսլամացուցին: Ամէնքը
ստիպուեցան կրօնափոխ դառնալ(**): Բժշկական հարիւրապետ մը

(*) Յուլիս 10/23 1916 Օսմանեան Սահմանադրութեան Տրդ տարեդարձի սո-
նակատարութեան առթիւ, հայ մանուկներու քլիպատութեան հանդէսներ կազմա-
կերպուած են:

(**) Քանի մը հայ բժիշկներ անուամափոխ ըլլալով կրցած էին ոչ մնալ,
բայց թուրքերը 1-000է աւելի հայ բժիշկներ և դեղագործներ սպաննած են:

Զարմանալի է որ, մինչ Յուլիս 27, 1916ին գերման փոխ-հիւպատոս Քառլ
Վեռթ հեռագրած էր հազարաւոր հայ գործաւոր զինուորներու ձերբակալման և
ջարդի մասին և Պեթման Հովվէկ գանձի փրկելու համար ոչինչ ըրած էր. դարձ-
եալ, և մէկ բժիշկի համար, որ իսլամութիւնը մերժեր էր և ձերբակալուեր,
նոյն անտարբեր Պեթման Հովվէկին կը դիմեն: Կը թուի թէ պարզապէս «բան մը
ըրած» ըլլալու համար:

մերժեց, այդ պատճառով, նախապէս բանտը դրին:

ՎեՌԹ

Գերման կայսերական դեսպանատուն — Թարապիս

(Կ. Պոլիս) Յուլիս 24, 1916

(Վերոյիշեալին) պատճէնը խոնարհաբար կը զրկենք Նորին Վսեմութեան, գերման պետութեան նախարարապետին (կանցլէր) պրն. Տոն Պեթման Հովակի:

(Կ. Պոլսոյ գերման դեսպան)

ՍԵՐԱՍՏԻՈՅ 9 ՎԱՆՔԵՐԸ ԵՒ ՍԱՆՃԱԳԻ ԳԻՒՂԵՐՈՒՆ 90 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

(ԱՌԱՆՑ ՀԱՇՈՒԵԼՈՒ ԹՈԳԱՏԻ, ԱՄԱՍԻՈՅ ԵՒ ՇԱՊԻՆ-ԳԱՐԱ-ՀԻՍԱՐԻ ԳԻՒՂԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ)

Սերաստիոյ վանքերը՝ Ս. Նշան (Երեք Եկեղեցիներով), Ս. Անապատ, Ս. Յակոբ, Ս. Խնդրակատար (Խոնըր Կտուր), Ս. Հրեշտակապետ (Յաղթի մօտ) եւ Ս. Թաղաւոր (Զառայի մօտ), Ս. Թորոս (Մանճըլըղի մօտ):

Սերաստիոյ սանճագի հայ գիւղերու Եկեղեցիները այրուբենական կարգով:

Սերաստիա (քաղաք) Ս. Աստուածածին (Մայր Եկեղեցի), զոր 1950ին Իսմէթ ումըրով քանդել տուաւ: Ս. Սարգիս, Ս. Մինաս, Ս. Փրկիչ:

Հողդար թաղի Ս. Աստուածածին Եկեղեցին, Ամերիկեան Քալէճի դիմաց (Միխթար Աբրայի ծննդավայրը):

ԳԻՒՂ	ԵԿԵՂԵՑԻ
Ալաքիլիսէ	Ս. Մինաս
Բոզնիք	Ս. Սարգիս
Բրաբերդ	Ս. Թորոս
Դաւրա	Ս. Աստուածածին
Դղմաճ	Ս. Սարգիս
Եարասար	Ս. Սարգիս
Ենի Խան	Ս. Խաչ

ԳԻՒՂ

ԵԿԵՂԵՑԻ

Զառա	Ս. Լուսաւորիչ
Թեքելի	Ս. Գէորգ
Թոտորակ	Ս. Յակոբ
Իշխանի	Ս. Նիկողոս
Խանձառ	Ս. Սարգիս
Խորսանա	Ս. Սարգիս
Խորոխոն	Ս. Հրեշտակապետ
Կամիս	Ս. Աստուածածին
Կաւրա	Ս. Սարգիս
Կովտուն	Ս. Աստուածածին
Հողդար	Ս. Աստուածածին
Ղալտի	Ս. Սարգիս
Ղարա-Պողաղ	Ս. Խաչ
Ղաւրաղ	Ս. Փրկիչ
Ղոչասար (Պետրոսի)	Ս. Յակոբ
Ճենճին	Ս. Խաչ
Յաղթ	Ս. Կարապետ
Շուն-Քուրակ	Ս. Սարգիս
Ողնովիտ	Ս. Յակոբ
Ուլաչ	Ս. Աստուածածին
Չայ-Քիւրտ	Ս. Աստուածածին
Պարտիզակ	Ս. Գէորգ
Պիւնեան	Ս. Աստուածածին
Պինկէօլ	Ս. Մինաս
Սարահասան	Ս. Գէորգ
Աթանոս	Ս. Թորոս
Տաւշանլու	Ս. Թորոս
Տեւքսէ	Ս. Կարապետ
Քարհատ	Ս. Աստուածածին
Քէօթիւ Ենիճէ	Ս. Գէորգ
Քոթնի	Ս. Սարգիս
Քեչէնուրտ	Ս. Աստուածածին

Սերաստիոյ քաղաքին մէջ հայ կաթողիկէները ունէին Ս. Վլաս Եկեղեցին, Յիսուսեանները՝ Քառասուն Մանկանց, եւ բողոքականները իրենց ժողովարանները, նաեւ Փրանսական եւ ամերիկեան դպրոցներն ու զուիցերիական որբանոց-դպրոցը:

Տիվրիկի գազային մէջ՝ 2 վանք եւ 13 եկեղեցիներ։—
Տիվրիկ (քաղաք) Ս. Աստուածածին եւ Ս. Երրորդութիւն։

Գիւղերը՝ այբուբենական կարգով։—

Գիւղ	Եկեղեցի
Աշուշէն	Ս. Թագաւոր
Արմութաղ	Ս. Գէորգ
Բալանկա	Ս. Գէորգ
Բարդամ	Ս. Աստուածածին
Բինկեան	Ս. Հրեշտակապետ եւ Ս. Աստուածածին
Զիմառա	Ս. Երրորդութիւն
Խունաւիւ	Ս. Լուսաւորիչ
Կասմա	Ս. Աստուածածին
Կիւրէսին	Ս. Կարապետ
Մուրանա	Ս. Աստուածածին
Օտուռ	Ս. Թովմաս
Ս. Յակոբ	Ս. Յակոբ
Շիկի	
Սինճան	Ս. Գէորգ

Կիւրինի եւ Տերենտէի եկեղեցիները

Կիւրին	Մայր Եկեղեցի
Զար-Զոր	Ս. Փրկիչ
Շուղուլ	Ս. Յակոբ
Էօրէն Թաղ	Ս. Գէորգ
Գարա Հիսար	Ս. Սարգիս
Մանճըլը	Ս. Թէոդորոս վանքը, որ չինուած էր 16րդ դարուն
Տերենտէ	Ս. Երրորդութիւն եւ Ս. Աստուածածին
Աչոտի	Ս. Աստուածածին եւ 1 վանք՝ Ս. Յակոբ

Հայ կաթողիկէները ունին 2 եկեղեցի։

Թոնուզի գազային մէջ։—

Կեմերէկ կան երկու եկեղեցիներ։ Բողոքականները ունէին աղօթարան։

— Սարմըսաքլը (Պիւնեան) Սուրբ Աստուածածին։

Ագարակ՝ Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ։

Ազիզիէ, Սաղէ եւ Թաշին գիւղերն ունին եկեղեցիներ. անունները կարելի եղած չէ ճշդել։

Սերաստիոյ սանճագի Թոնուզ գազայի ենթակայ հետեւեալ հայ գիւղերուն եկեղեցիները կարելի չէ ճշդել։ Այդ հայ գիւղերն են, այբուբենի կարգով։— Ալա-Քիլիսէ, Գայա-Փունար, Գարակէօլ, Գարահանըլը (Մաղարա), Գարասար, Գուրտլու-Գայա, Եսփալթուն (*), Թեմեճիկ, Թեքմէն, Թոփաճ, Իսանլը, Կեմերէկ, Կիկի, Ղազ-Մաղարա, Ղանթարոզ, Շար-Գըշլա, Զեփնի, Պաւրոզ, Պիւրհան, Սարը-Օղլան, Սըվըն, Սիքանթ(*), Տենտիլ, Փաշա-Գեղ։

ԿՐԹԱԿԱՆ

Սերաստիոյ սանճագին մէջ 1902ին դստուած դպրոցները, աշակերտները եւ ուսուցիչները։—

Կիւրին.— 12 դպրոց, 736 մանչ, 78 աղջիկ, 20 ուսուցիչ։
Սերաստիա.— 46 դպրոց, 4072 մանչ, 549 աղջիկ, 73 ուսուցիչ։
Տերենտէ.— 2 դպրոց, 260 մանչ, 70 աղջիկ, 5 ուսուցիչ։
Տիվրիկ.— 10 դպրոց, 757 մանչ, 100 աղջիկ, 20 ուսուցիչ։
Գումար՝ 70 դպրոց, 5,025 մանչ, 797 աղջիկ, 118 ուսուցիչ։
Այդ թիւերը 1915ին աւելցած էին 25 առ հարիւրով։

Վերոյիշեալ թիւերուն մէջ չեն հայ կաթողիկէներու, ամերիկեան միսիոնարներու եւ ֆրանսական Յիսուսեաններու դպրոցները, աշակերտութիւնը եւ ուսուցիչները։

Ուրիշ առթիւ առանձինն պիտի տրուի Սերաստիոյ նահանգին պատկանող Ամասիոյ, Մարզուանի, Հերեկի, Նիքսարի, Թոգաթի, Զիլէի, Շապին Գարահիսարի եւ չըջաններու դպրոցներուն եւ աշակերտներուն ցուցակը։

(*) Սիֆանք եւ Եսփ-Ալթուն կէս-հայ, կէս-թուրք են։

ԹՐԲԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՍԵՐԱՍՏԻՈՅ ՄԱՍԻՆ

Ներքին գործոց նախարարութիւնը հայոց տարազրութեան մասին Մայիս 12 թուակիր ծածկագիր հեռագիր մը ղրկած էր գաւառային վարչութիւններուն: Թուրք դահլիճը Մայիս 16ին իր որոշումները և հրահանգները հաղորդած էր: Այդ գաղտնի տեղեկագիրը հրատարակած էինք ասկէ առաջ:

Սերաստիոյ վալիին՝ Մուամմէր Սերաստիոյ նահանգին համար տեղեկագրած է հետեւեալը հեռագրաւ.

Սերաստիոյ սանճագէն տարազրուած են.—

Սերաստիոյ կեղր. գազայէն	23,455
Ազիզիէյէն	939
Թոնուզէն	13,113
Ենի Խանէն	1,366
Գոչասարէն	11,347
Չառայէն	5,978
Տիվրիկէն	8,262
Տերենտէն	2,783
Կիւրինէն	7,606
Ղանղայէն	3,088
	<hr/>
Սանճագէն	77,037

Այդ թիւը Սերաստիոյ սանճագի հայութեան մէկ երրորդէն ալ պակաս է:

Ըստ Մուամմէրի հեռագրին, Ամասիայէն տարազրուած են 22,871, Թոզաթէն՝ 20,403 եւ Շապին Գարահիսարէն՝ 20,271 հայեր: Հեռագրային պահանջները եղած էին Մայիս 12ին, Յուլիս 31ին եւ Սեպտեմբեր 25ին:

Ամասիայէն ղէպի հարաւ աքսորեալ (այրերու) սպանդի մասին վալի Մուամմէր հետեւեալ ծածկագիրը ղրկած էր.—

ԿԱՐԳԱԹԻԻ ԴԻԻԱՆԻ
Կ. Ընդհ. 359
Խ. Մասնաւոր 866

Թարգմանութիւն ծածկագիր հեռագրին, որ ուղղուած է Սերաստիոյ կուսակալ Մուամմէր պէյէն Ամասիոյ ոստիկանութեան հրամանատար զնդապետ Քէօր Նուրի էֆենտիի.—

«Հայերը զրկեցէք կտրուկ ցամբով, առանց զանոնք անցընելու Եւրոպիայէն»:

Ծանօթութիւն.— Ամասիոյ և Սերաստիոյ միջև կը գտնուի Եւրոպիա քաղաքը, ուրկէ անպայման պէտք է անցնիլ Սերաստիա երթալու համար: Ուրիշ ճամբայ գոյութիւն չունի: Հետեւաբար այս հեռագրին հրամանը ծածուկ իմաստ ունի, այսինքն — հայերը ջարդել Եւրոպիա չհասած (ակնարկուած հայերը ջարդուած են Ղազ-Ովայի և Չենկէլ-Պողազի մէջ):

Վալի Մուամմէր իր հեռագրին մէջ հետեւեալը աւելցուցած է՝ իրբեւ «միւլախագաթ»՝ նկատողութիւն (ընդգրկը բառ առ բառ). «Վիլայէթ սեւզըյաթը խիթամ պուլմը տըր(*): Սեւզ վէ թիպիտ էտիլէն նուֆուսը միլայէթ Եիւզ ալթմիշ պին (160,000) բատտեսինտէ թախմին էտիլտըր, մա մաֆիհ, պու մըլտարըն պիր զըսմը Գարահիսար վէ Ամասիա վազրուարընտա մահվ վէ թելէֆ օլմալարը մազնուն, վէ շու հալէ կէօրէ, վիլայէթտէն սեւզ էտիլէպիլէն էրմենի մըլտարընըն սիճիլտէ մուպայյետ մըլտար իւղերինէ վապուլը մուաֆագ տըր:

Հեռագրի բնագրին տառացի թարգմանութիւնը.

«Վիլայէթին (մէջ) տարազրութիւնը վերջացած է: Քչուած եւ տարազրուած (սեւզ վէ թիպիտ) անձերուն թիւը վիլայէթին մէջ 160,000 նախատեսուած է: Սալայն, այդ թիւին մէկ մասը Գարահիսարի և Ամասիոյ ղէպերու ընթացքին բնաջնջուած եւ սպաննուած է (մախֆ վէ թելէֆ), այդ հաշուով, վիլայէթէն տարազրուածներուն թիւը տոմարի մէջ արձանագրուածը ընդունիլ յարմար է»:

Ըլլա՛յ սանճագին մէջ, ըլլա՛յ սանճագէն դուրս, բանտարկուած և սպաննուած հայերը եւ վիճուորները այդ հաշիւներուն մէջ չեն: Սերաստիոյ սանճագին թիւը Առաջնորդարանը տուած է 255,430: Կարապետ Գարիկեան կու տար 192,164:

**ԳԼԽԱՒՈՐ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ
ՍԵՐԱՍՏԻՈՅ ՍԱՆՃԱԳԻՆ ՄԷՋ**

Չանց առնելով հարիւրաւոր ժանտարմներ, չեթէներ, ոստիկաններ, սպաներ, չեթէպաշիններ և անոնց գործակցող հազարաւոր

(*) Այս հեռագիրը թէև բուսական չունի, բայց որովհետև մէջը գրուած է թէ «վիլայէթ սեւզըյաթը խիթամ պուլմուտըր», այդ թիւը Յուլիս 9, 1915 է: Ուրեմն հեռագիրը զրկուած ըլլալու է 1915 Յուլիսի կէսին:

ոճրապարտ թուրքեր, կու տանք միայն առաջին գծի վրայ եղող՝ պարագլուխ, ոճիրը կազմակերպողներու փոքր ցանկ մը.— Կեդրոնական կառավարութեան նախարարները, մասնաւորապէս Յրդ զօրաբանակի հրամանատար Մահմուտ Քեամիլ փաշա(*), վարչական բարձր պաշտօնեան՝ վալի Մուամմէր կոչուած հրէշը, 10րդ գոլ օրտուի հրամանատարի մնայուն փոխանորդ (տայիմի վեֆիլ) Փերթեւ պէյ, որ հարապետ էր, վերջը եղած է փաշա: Թուրք երեսփոխան Րասիմ պէյ: Իթթիհատի պատասխանատու քարտուղարութեան կեդրոնէն ղրկուած և մի քանի անգամ բերանացի հրամաններ բերած ցեղասպանութեան համար՝ ԱՊՏԻԼ ՂԱՆԻ ՊէՅ, որ յետոյ նոյն ոճիրը գործած էր Խտիրնէի նահանգին մէջ: Ժանտարմըրիի հրամանատար գնդապետ Ալի Շեֆիզ պէյ: Պատերազմական Ատեանի մնայուն նախագահ Մուսթաֆա Սապրի ևւ գնդ. Ալի պէյ: Ոստիկանութեան տնօրէն Րիֆաաթ պէյ, որ Պալքաններէն բերուած էր:

ուածներուն համաձայն, ուր կ'ըսուի. «Թուրք կառավարութիւնը պարտաւոր է բոլոր փաստաթուղթերը յանձնելու (յօդուած 228) և դատարանի ենթարկելու ջարդերու պատասխանատուները» (այսինքն ցեղասպան թուրք կառավարութիւնը, յօդուած 230):

Հայերուն պահանջը միայն արեան և նիւթական հատուցման պահանջ է, այլ նաեւ պահանջը՝ իր ծննդավայր հողին, որ իր հարենիքն է եղած 3·000 տարիներէ ի վեր, և թուրք կառավարութիւնը՝ հայերը բնաջնջելով՝ կ'ուզէր Հայաստանը զրաւուած պահել, առանց հայու:

ՍԵՐԱՍՏԻՈՑ ՍԱՆՃԱԳԻ ՀԱՅՈՑ ՆԻԻԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԸ

200·000 հայերու արիւնէն զատ, նիւթական կորուստը, առանց հաշուելու ազգային հարստութիւնները, եղած է \$500,000,000 ոսկի տոլար:

Հայը իրաւունք չաւանդ է իր դատը բերելու արդարութեան ատեանին առջեւ: Միջպզային դաշնագրով ճանչցուած է մեր իրաւունքը, թէ՛ մեր իրաւունքները պահանջելու և թէ՛ ջարդարար կառավարութիւնը պատժի ենթարկելու՝ Սեւրի դաշնագրի 226-230 յօդ-



(*) Մահմուտ Քեամիլ կոչուածը, որ թէեւ զինուորական գործողութեանց մէջ զինուորական ոչնչութիւն մըն էր՝ ըստ գերման Զինուորական Առաքելութեան պետ մարաշայտ Լիման Ֆոն Զանտերսի, բայց իրական հայակեր մըն էր, գործակից էր էրզրումի մէջ Պեհաւտոսի Շաֆիրի. այս էր, ըստ դատական արձանագրութեանց, «հայու օգնող սեւէ թուրք պիտի կախուի» հրամայողը: Այս էր, որ էրզրումի մէջ գերման զինուորականի մը՝ հիւպատոս Րիհթըր Ֆոն Շոյպըրի յայտնած էր, թէ «պատերազմէն ետք այս վայրերուն մէջ (Արեւմտեան Հայաստան) սեւէ հայ չենք ուզեր»: Վեց նահանգներու վալիներուն հետ խորհրդակցարար ցեղասպանութեան գործը լրացնելէ ետք, Կ. Պոլիս փոխադրուեցաւ և եղաւ էնվերի խորհրդակցանք:

ԹՐԳԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵՒ

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Երբ Համաշխարհային Ա. պատերազմը պայթեցաւ Յուլիս 1914ին, Օսմանեան կայսրութեան գլուխը գտնուող փանթիւրփիստ եւ ազգայնամոլ ղեկավարները պատեհութիւն գտան Հայաստանի եւ Թուրքիոյ այլ նահանգներու հայութիւնը արմատախիլ բնաջնջելու:

Այս առիթը օգտագործելու ուզեցին, երբ մանաւանդ իրենք ղերենք աւելի ազատ եւ զինուորապէս աւելի զօրաւոր զգացին, Գերմանիոյ հետ ստորագրած ըլլալով (Օգոստոս 2, 1914ին) զինակցութիւն մը, որուն առաջին յօդուածին համաձայն, պատերազմի պարագային, Գերմանիա օգնութեան պիտի փութար Թուրքիոյ:

Մասնաւոր համաձայնագրով մը, առանձնապէս, թրքական բանակի ղեկավարութիւնը կը ստանձնէր գերման Զինուորական Առաջնութեան պետը՝ զօրավար Լիման Ֆոն Զանտերս, որ հետագային մարաշախտի աստիճան ստացաւ:

Թուրքերու ցեղասպանական մտադրութիւնները յայտնի եղած էին 1909ի Ապրիլեան ջարդերուն, որովհետեւ հայութեան լաւ կորիզ մը կար Կիլիկիոյ շրջանին մէջ, որ 1895-96ի ջարդերէն մասամբ զերծ մնացած էր:

1909 Մարտ եւ Ապրիլ ամիսներուն, պետական կուսակցութեան՝ Իթթիհատի Սելանիկի եւ Պոլսոյ կեդրոնները, ինչպէս նաեւ

Ատանայի Իթթիհատական ակումբը, զաղտնի հրամաններով եւ հրահանգներով իրենց մասնակցութիւնը բերած էին Կիլիկիոյ 30.000 հայերու ջարդին:

1910ին՝ Սելանիկի մէջ գումարուած Իթթիհատի համաժողովի նիստին, յենելով զինուորական անդամներու մեծամասնութեան, Թալէաթ առաջարկած էր որոշում անցընել զինու. զօրութեամբ ձուլելու ոչ-թուրք տարրերը եւ տիրական ու կերիչխող տարր (միլլէթի հաֆիւէ) դարձնելու թուրքը:

Տրուած միաձայն որոշումին հետեւանքը եղաւ ա՛յն, որ Պալքաններու մէջ (Իշթիպ, Իւսքիւլ, Փրիշթինա, Քուսանովա եւ այլ վայրեր) ջարդեր տեղի ունեցան:

1911 Հոկտեմբերին, դարձեալ, Իթթիհատ, Սելանիկի մէջ գումարած իր համաժողովին մէջ, վճռապէս որոշեց «բոնի քրֆացնի կամ ջնջել ոչ-թուրք տարրերը և չրոյլատրել այլեւս քուրֆերէնէ գատ ուրիշ լեզուներ խօսիլ Թուրքիոյ մէջ»:

Այդ ոճրային քաղաքականութեան զործադրութեան մասնակի արգելք հանդիսացան իտալական եւ պալքանեան պատերազմները: Եւ սակայն, այդ շրջանին իսկ, պալքաներէն ամէն օր ջարդի վախերու լուրեր կու պային դէպի Պոլիս, եւ հայոց Պատրիարքարանը այդ մասին բազմաթիւ խնդրագիրներ (քաֆրիթ) ներկայացուցած էր Թուրք կառավարութեան, առանց սակայն զործնական որեւէ արդիւնք ձեռք բերելու:

Նոյնիսկ պետութեան մայրաքաղաքին մէջ՝ հայոց պատրիարքը սպառնադրեր ստացած էր «երիտասարդ» թուրք ոճրագործներու ստորագրութեամբ:

1914 Սեպտեմբեր 9ին, պատերազմը յարմար առիթ նկատելով, ջնջուեցան օտար պետութեանց քաֆիթիւլախոնները եւ Թուրքերը սկսան հալածել նոյնիսկ Համաձայնական պետութեանց հպատակները:

Օսմանեան կայսրութեան զօրաշարժի առաջին օրերուն իսկ՝ բացորոշ դարձաւ ցեղասպանութեան դիւալին ծրագիրը:

1914 Յուլիս-Օգոստոսին՝ թափով առաջ տարուեցաւ հայահալած քաղաքականութիւնը, աստիճանաբար անդամալուծելու համար երկուքուկէս միլիոն հոգի հաշուող հայութիւնը:

Նախ՝ զինուորական տարիքի մէջ գտնուողները զինուորական հսկողութեան տակ առնուեցան: Զինուորական տարիքի մէջ չեղողներու տնտեսութիւնը փճացնելու համար՝ սկսաւ ծրագրուած կողոպուտը՝ իրրեւ «պատերազմական պարտաւորութիւն» բռնի «նուէր»

ներ» կը կորզուէին մեծ թիւով հայ առեւտրականներէ եւ խանութ-
պաններէ: Վաճառատուններու եւ խանութներու մէջէն զբաւուեցան
ամէն կարգի ապրանքներ, նոյնիսկ բանակին համար բացարձակա-
պէս անպէտ առարկաներ, օրինակ՝ մանուկներու կօշիկներ, եւ այլն:

Սեփականութեանց այս կողոպուտը մէկ մասն էր միայն հա-
յութիւնը տնտեսապէս եւ Փիղիքապէս փճացնելու վերջնական ոճրա-
յին ծրագրին: Կ'առաջադրուէր առեւտրական թրքական ընկերակցու-
թիւններ կազմել՝ հայերէն գրաւուած ուրբական միջոցներով:

Այս օրինազանցութեանց զուգընթաց, թուրք դահլիճին եւ
մասնաւորապէս ներքին գործոց եւ պատերազմական նախարարու-
թեանց հովանաւորութեամբ ու ղեկավարութեամբ՝ կազմուեցան
(նախ գաղտնի, ապա նաեւ բացայայտօրէն) մարդասպան բանտար-
կեալներէ չեքէական խումբեր գաւառներու կեդրոններուն մէջ, որ-
պէ՛ս թէ «օգնելու նպատակով պատերազմական գործողութեանց»,
մինչ անոնց գլխաւոր գործը եղաւ, թուրք սպաններու ղեկավարու-
թեամբ, հայերու բնաջնջումը:

Չեքէական սկզբնական ասպատակութեանց մէջ՝ սակաւաթիւ
զերման զինուորականներ եւս մասնակից եղած էին, մասնաւորապէս
Արտանուշի, Արտուխի եւ Արտահանի ջարդերուն մէջ:

1914 Օգոստոս, Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներուն, երբ
Թուրքիա տակաւին պատերազմի մտած չէր եւ միայն զօրաշարժ էր
յայտարարած եւ, ի՛րր թէ, կը պահէր «զինեալ չէզոքութիւն» մը,
չեքէական յարձակումներ տեղի կ'ունենային հայ զիւղերու վրայ,
հետզհետէ սաստկանալով:

Թուրք սպաններու ձեռք անցուած գրութիւնները, մասնաւորա-
պէս փոխ-զնդապետ Ազիզ Սամիհի եւ Թեշքիլիթը Մախսուսէի
զինուորականներուն «Յուշեր»ը կու տան տեղեկութիւններ կատար-
ուած կողոպուտի, սպանութեանց եւ յաճախակի հրդեհներու մասին:

Ռուսիոյ դէմ պատերազմ յայտարարելու թուականէն (Հոկ-
տեմբեր 15/28, 1914) քանի մը օր առաջ՝ պատրաստուած էր ար-
դէն, թուրք 3 նախկին շէյխ-իւլ-իսլամներու ստորագրութեամբ եւ
յանուն թուրք թագաւորին, «ճիհատ»ի (սրբազան կոիւ) գրութիւն
մը .. «էրիստոնեայ թշնամիները» բնաջնջելու մասին: «ճիհատ»ի
յայտարարութեան յաջորդած էին տպագիր պրակներ, ուղղուած՝
թուրք ժողովուրդին, «կազմելու համար ամէն տեղ սպանութեանց
գաղտնի միութիւններ»:

«ճիհատ»ի մարդասպանական հրահանգները գործադրուեցան
միմիայն հայ ժողովուրդին դէմ:

2.000.000է աւելի համրանք ունեցող հայութենէն թուրք բա-
նակին մէջ առնուած էին մօտաւորապէս 150.000 հայ զինուորներ, ո-
րոնք, մեծամասնութեամբ, զբաւուած էին աշխատանք կը կատարէին:
Ասոնցմէ կազմուած էին 125 վաշտեր (թապուր) . իւրաքանչիւր վաշտ
կը բաղկանար 1200էն 2000 հոգիէ:

Հրամանատարները ընդհանրապէս հանդստեան կոչուած մու-
ռանդ սպաններ էին:

Այն հայերը, որոնք զինուորական ծառայութեան փոխարէն
50ական ոսկի վճարած էին զինուորութեանէ զերծ մնալու համար՝
դրամը վճարելէ ետք նորէն զինուորութեան կանչուած էին:

Շնական այն զրոյցը, թէ «հայերը կը փախչէին» կամ «կ'ա-
պրտամբէին», զրուելի սուտ մըն էր: Պաշարման վիճակ հռչակուած
էր եւ մահապատիժի կ'ենթարկուէր ունէ փախստական: Այդ պայ-
մաններուն մէջ ո՞վ էր որ պիտի ապստամբէր: Զինուոր գացողնե-
րու կիները, մանուկները, ծերերը. եւ յարձակելու թուրք պետու-
թեան բանակներուն դէմ, որոնք զօրացած էին զերման հրամանա-
տարներով եւ խորհրդականներով...:

— Այո՛, պահուող զինուորներ եղան, որովհետեւ հայերը բա-
նակին մէջ զինուորական մարդանք չէ որ կը կատարէին, այլ՝ ան-
թիւ-ծարաւ, զբաւուած էին աշխատանք, տաժանակիր կերպով, մինչեւ
որ սպառէին կամ... սպաննուէին:

Հայ զինուորներուն նման շարժարանքով սպաննուելու ծրագրի-
րը յղացողներէն էին նաեւ «Կերեպէնլի» յորջորջեալ զնդապետ Պէ-
քիրը եւ Նիհատ պէյը, որոնք մաս կը կազմէին Յրդ զօրաբանակի
ոճրագործ զօրամասերուն:

Յիշեալ Պէքիրը չեքէիութիւնը ըրած էր Պալքաններու մէջ:
Ըստ նախապէս կազմուած ծրագրին, 1914 Նոյեմբեր 23էն սկսեալ՝
Սերաստիայէն-Էրզրում եւ 5 Դեկտեմբեր 1914էն սկսեալ ըստ հայ
զինուորներուն շարակով բեռ կրել կը տրուէր Տրապիզոնէն-Պայ-
պուրթ, եւ ապա՝ անկէ դէպի Էրզրում: Շատեր կը մահանային կամ
կը սպաննուէին ճամբաներու վրայ (տե՛ս թրքական «Գուրուս» օ-
րաթերթը, Պոլիս, թիւ 6192, 1935 Ապրիլ 5, եւ յաջորդ թիւերը):

Ուրեմն, դաւաճանող ինքը թուրք պետութիւնն էր, որ իրեն
ծառայող զինուորին հանդէպ այդ հակամարդկային ոճիրները կը
գործէր:

Կողոպուտին ու հալածանքներուն զուգընթաց, եւ աւելի եւս
ահարեկելու համար ժողովուրդը, մասնակի սպանութիւններ եւ մա-

Հափորձեր սկսան հայերուն դէմ: Կեղծ ամբաստանութիւններով հայեր կախազան հանուեցան զանազան քաղաքներու մէջ, ինչպէս Սեբաստիա, Կեսարիա, Ատանա եւ այլուր:

Յատկանշական էր Երզնկայի նոր առաջնորդին՝ Սահակ Ծ. վրդ. Օտապաշեանի սպանութիւնը, 1914 Դեկտեմբեր 18ին, երբ ան իր պաշտօնատեղին կ'երթար: Սպանութիւնը կազմակերպուած էր Սեբաստիոյ նահանգապետ Մուսամէրի կողմէ եւ զործադրուած էր 6 աւազակապետներու միջոցով: 18 փամփուշտով սպաննուած էին առաջնորդը եւ իրեն ընկերացող կառապան Առաքելը, Շապին Գարահիսարէն ոչ-չատ հեռու՝ Երզնկայի դաւառի սահմանին մօտը՝ Չոպանլը անունով վայրը: Այդ ոճիրի մասին ոչ ոք կրցաւ բերանը բանալ, տիրող սարսափին պատճառով:

1915 Փետրուարին, օր ցերեկով, էրզրումի մէջ սպաննեցին (Իթթիհատական զինուորականներ էին ոճրագործները) Օսմանեան զրամատան Բ. տնօրէն Ս. Փաստրմաճեանը:

էրզրումի բերդին պնդապետ՝ գերմանացի Կուզէ պէյը որ ալանատես էր ոճիրին, հետեւեցաւ խնդրոյն եւ հաստատեց, թէ ո'չ մէկ հետապնդում կատարուեցաւ, նկատելով որ ոճրագործը ի'նք կառավարութիւնն էր:

Թէեւ «ճիհատը» յայտարարուած էր 1914 Նոյեմբերի սկիզբը, բայց ատկէ 20 օր առաջ, էնվէր փաշա, պատերազմական նախարարը, 1914 Հոկտեմբեր 10ին հեռագրով հաղորդած էր գերման սպայակոյտին, թէ «ճիհատը» պատրաստ է եւ թէ թուրք բանակը ի վիճակի է սրելէ ժամ յարձակելու Ռուսիոյ վրայ:

Զօրավար Լիման Ֆոն Չանտերս վկայեց հրատարակած իր գրքին մէջ, թէ «ճիհատ»ը գործադրուեցաւ միւսիայն հայերուն դէմ» (Չանտերս, էջ 35, «Հիմն տարի Թուրքիոյ մէջ»):

Թուրքերու զործադրած չարիքներու մասին, թուրքեւոռու պատերազմի նախօրեակին եւ յաջորդող օրերուն, տեղեկութիւններ կան նաեւ թրքական «Գուրուս» օրաթերթին մէջ (Ապրիլ 1-5, 1935, թիւ 6188-6192), ուր թուրք սպայակոյտի անդամ դեր-պնդապետ Ազիզ Սամիհ գրած է հայ անպաշտպան գիւղերու վրայ կատարուած յարձակումներու մասին, արիւնարբու չեթէական խումբերու կողմէ, որոնք մաս կը կազմէին առաջին եւ 3րդ պահեստի զօրաբաժիններուն (3րդ զօրաբանակի), որոնք զիչերները «Եազմա» (կողոպուտ) կ'ընէին, կիներ կը բռնարարէին եւ այնքան անդուսպ զարձած էին, որ նոյնիսկ բանակին «սանտրը» (զրամարկղը) եւ իրենց վերին սպաններուն կողոպտած իրերը «թուցուցած» էին...

1915 Յունուարի կէսին, Իթթիհատը՝ Նուրը Օսմանիէի ալուճքին մէջ (Կ. Պոլիս) զիչերները շարունակաբար ժողովներ գումարեց, հայոց բնաջնջման ձեւին եւ մեթոտներուն մանրամասնութիւնները ճշդելու եւ զործադրելու համար, — կառավարական, քաղաքային եւ զինուորական ուժերու միջոցաւ: Բերանացի եւ զրաւոր հրահանգներ տրուեցան մասնաւոր ներկայացուցիչներու (մեմուրը մալսուս), ինչպէս նաեւ կուսակցական պատասխանատու քարտուղարներու (ֆեաթիպը մեսուլ) եւ շրջուն թուրք երեսփոխաններու: Ներքին զործոց նախարարութիւնն ալ նոյնանման հրահանգներ (յաճախ՝ ծածկաղիր) հաղորդած էր կառավարիչներուն, որոնց կը զործակցէին քաղաքային ոստիկանական պաշտօնատուները եւ ոստիկան-զինուորներու վարչութիւնը (ժամատարմա տայիրէսի), որոնք կազմակերպեցին իրենց գտնուած քաղաքներու եւ շրջակայ հայ զիւղերու բնաջնջման զործը:

Այդ ոճիրներուն կապակցութեամբ՝ 1915 Յունուար 20ին (հին տոմար) ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ (յետոյ՝ փաշա) այցելեց գերման դեսպան Վանկենհայմի (Պոլիս) եւ հաղորդեց անոր, թէ «պատերազմի պատճառով ամենէն յարմար վայրկեանն է հայերու խնդիրը վերջացնելու», իր բառերով՝ «Մ'է ԼԸ ՄՈՄԱՆ ԼԸ ՓԼԻԻ ՓՈՒՓԻՍ»: Եւ խնդրեց որ այդ գործին մէջ (Չարդին) Գերմանիա թուրք կառավարութեան «քեւերը չկապէ», ազատ թողու զինք:

Եւ դեսպանը հեռագրեց Պերլին, թէ «պէտք է արգելք ըլլանք քուրքերուն»:

Ըստ հետեւողական ծրարին, 1915 Մարտի սկիզբը եւ անկէ ետք՝ սկսաւ սկանաւոր դէմքերու ձերբակալումը:

Ապրիլ 11/24ը՝ այդ որոշումներուն հետեւանքն էր, եւ «փախըստական հետապնդելու», տուններու մէջ խուզարկութիւններ ընելու կամ «պահուած զէնքեր» փնտտելու պատրուակին տակ սկսաւ սարսափը: Սկսան տանջանքները, բռնարարութիւնները եւ զանդուածային բանտարկութիւնները:

Կեղծ դատավարութիւններով կախազան սկսան բարձրացնել հայեր:

Սեբաստիոյ մէջ, նոյն օրերուն, զինուորականներու կողմէ մասնաւորաբար մարդուած էին 4000 չեթէներ (երկու դունդ), որոնց 2000ը նահանդի կեղրոնական դաւառակին համար, իսկ միւս 2000ը՝ նահանգի մնացեալ դաւառակներուն համար (Շապին Գարահիսար, եւայլն):

Շապին Գարահիսար քաղաքի շրջակայ 31 հայ զիւղերուն վը-

րայ յարձակողները այս 2.000 չեքէներն էին, որոնք կը կատարէին բռնարարութիւն եւ սպանութիւն ու հրդեհներ առաջ կը բերէին:

Ինքնապաշտպանութեան նուազագոյն փորձն իսկ կը մեկնուէր իրրեւ «ապստամբութիւն»:

Սպանութեանց եւ սեփականութեանց զրաւումներու մասին զազանի հրահանգներ հասած էին արդէն Փետրուարի կիսուն (1915):

Ցեղասպան չեքէական խումբերու յատուկ հեռագրական թըլաւաններն էին 1914 Նոյեմբեր 16ը, Նոյեմբեր 20ը եւ Դեկտեմբեր 16ը. իսկ ընդհանուր սպանութիւններու զազանի հրահանգները կը կրէին 1915 Փետրուար 18 եւ Մարտ 25 թուականները:

Շապին Գարահիսար քաղաքի եւ չրջակայ հայ զիւղերու յարաբերութիւնները իրարմ էին Յունուար եւ Փետրուար ամիսներուն: Գիւղերը մեկուսացուած էին եւ կարելիութիւն չունէին իրարու օգնութեան փութալու:

1915 Փետրուար 8ին, Էնտիբէսի մօտ հայկական 300 տուննոց զիւղին՝ Բիւրքի վրայ չեքէներ յարձակում զործեցին եւ կիներ բռնաբարեցին: Անհատական զիմաղարծութիւն եղաւ՝ պատուի պաշտպանութեան համար: Այդ փոքր զիմաղարծութիւնը անմիջապէս տեղեկագրուեցաւ Էնտիբէսի զայմապա կեսարացի Ահմէտ պէյի(*) կողմէ, որպէս «լայնատարած ապստամբութիւն մը». եւ նահանգապետը՝ Մուամմէր կոչուած բորենին հեռագրեց Պոլիս, Թալէաթին, խնդրելով «հայերու ապստամբութիւնը զսպել»: Մինչդեռ Բիւրքի զրեթէ կից՝ Էնտիբէսի մէջ մնայուն կերպով 13.000 թուրք զինուորներ կային մարզուելու համար, քանի որ այդ վայրը բանակի մարզարան (թալիմկեսի) զարձած էր:

Երզնկայի առաջնորդ Սահակ Մ. վրդ. Օտապաչեանի սպանութեան եւ Բիւրքի զէպքէն ետք՝ սաստիացան ոճրային արարքները Գարահիսարի չրջակայ հայ զիւղերուն եւ Աշխար Ուլա չրջանի հայ զիւղերուն զէմ:

«Զինուորական փախստական» եւ «պահուած զէնք կամ ուժանակ» փնտռելու պատրուակով՝ չեքէական խումբեր կատարեցին բանտարկութիւններ, սպանութիւններ, տուններու հրդեհումներ. անմեղ կալանաւորեալներ ենթարկուեցան անբերեակայելի չարչարանքներու: Շիկացած երկաթով կը տաղէին, եղունգները կը քաշէին, աչքերը կը փորէին, եւայլն:

(*) Այս Ահմէտ պէյը Շապին Գարահիսարի հերոսամարտի օրերուն Գարահիսարի միւթեսարըֆ վեքիլի եղած էր:

Գիւղերու զէմ այդ յարձակումներէն ետք, սպանուեցաւ նաեւ Շապին Գարահիսար քաղաքի առաջնորդը՝ Վաղինակ վրդ. Թորիկեան: 1915 Մայիս 12ին՝ ներքին զործոց նախարարութեան կուսակալներուն եւ փոխ-կառավարիչներուն կը հաղորդուէր հետեւեալը.

— «Երբ կը լրացնէք հայ զիւղերու տարագրութիւնը, իմացուցէ՛ք անոնց թիւը, զիւղիմ անունը, եւ տեղեկագրեցէ՛ք անոնց ժամանած վայրերը»:

«Տարագրութիւն» բառը պատրուակ էր, որովհետեւ արդէն Փետրուարի եւ Մարտի զազանի հրամանագիրներուն մէջ ըսուած էր, թէ Թուրքիոյ մէջ ոչ մէկ հայ ողջ պիտի թողուի եւ անոնց ինչ-քերը պիտի գրաւուին:

Մայիս 12ի այս ծածկագիրէն յետոյ՝ մինչեւ Շապին Գարահիսար քաղաքի զիմաղարծութեան օրը, հասած էին նաեւ Մայիս 23 եւ Մայիս 31 (1915) թուականի ծածկագիրները՝ հայերու «վերջնական հաշուեյարգար»ի մասին:

Շապին Գարահիսարի Յունիս 1ի ընդդիմութեան առաջ, Մայիս 5ին (1915)՝ Ատանայի բանտերը լեցուած էին հայերով. իսկ Մայիս 24ին՝ Տիգրանակերտի մէջ 614 անձեր սպանուած էին:

Յունիս 1ին աղէտը սկսաւ Գարահիսարի մէջ, ուր առաջին անգամ ձերբակալեցին 300 եւ յետոյ 600 հոգի: Նոյն կուսակալութեան կեղծոնին մէջ արդէն արգելափակուած էին 4.500 հոգի: Ցեղասպանութեան ոճիրը, Յունիս 1915ի սկիզբը, լայն ծաւալի վրայ կը զործարուէր հայաբնակ վայրերու մէջ:

Շապին Գարահիսար քաղաքին մէջ տակաւին ձեռք չանցուած հայ հերոս զաւակներ կրցան հարուածը իջեցնել թուրք ոստիկաններուն, ժամապալաններուն, չեքէներուն եւ անոնց պաշտօնական եւ անպաշտօն զործակիցներուն, ամենաղժուարին պայմաններու մէջ, հետզհետէ քաշուելով քաղաքին վերելը զտնուող բերդին մէջ եւ կոուելով աւելի քան 27 օրեր, նուազագոյն անունդով, հաղի՛ւ կերակրելով, բայց պաշտպանելով 8.500 հայեր (կիւն, մանուկ, ծեր): Այդ թիւին մէջ էին նաեւ փախչող հայեր, քաղաքին մօտակայ աւերուած հայ զիւղերէն:

Հակառակ անմիտելի փաստերով հաստատուած այս իրողութեանց՝ թուրք ոճրալործ տեղական կառավարութիւնը չնական սրտայօղ տեղեկագիրներ կը պատրաստէր հայոց զէմ, աննախընթաց եւ վայրենարարոյ դաւադրութիւնը արդարացնելու համար:

Բերդին մէջ կուուողները պաշարուեցան, բայց կրցան այրել

եւ ոչնչացնել թուրքերուն տուները. եւ Շապին Գարահիսար քաղաքին մէջ հայերուն հետ թո՛ւրքն ալ նստաւ մոխրի վրայ :

Երզնկայէն եւ Սերաստիայէն բերուեցան մեծ ուժեր եւ թնդանօթներ (10րդ բանակի — գոլ օրտու) կեդրոնէն՝ Սերաստիայէն, «մեքնի միւֆեթ իշի» նեչէթ Փաշայի ղեկավարութեամբ :

Սովահար ղիմադրողները, սրաշարի եւ ռազմամթերքի չգոյութեան պատճառով, 4 շարաթ միայն ղիմադրեցին : Ապա՝ խումբ մը կտրիճներ կտրեցին թուրքերու պաշարման շղթան, շարունակելու համար կռիւը քաղաքէն դուրս :

Բերզը ապաստանող կիներ եւ մանուկներ ենթարկուեցան բարբարոս տանջանքներու, առեւանդումի եւ սպանութեանց : Ու դեռ ողջ մնացողները «տարագրուեցան» դէպի արարական անապատները, կոտորուելու համար ճամբաներուն վրայ :

Շապին Գարահիսարցին՝ կոռուելով, պատուով մեռաւ. անմահացաւ՝ իրբեւ քաջ եւ ընտիր զաւակը հայ ազգին եւ հարուածեց թշնամին՝ ալին ընդ ալան : Քսանապատիկ ուժերու դէմ քանի մը հարիւր կոռուողներ պատուհասեցին թուրք զահիճը :

Շապին Գարահիսարը մօտ չէր ծովի (ինչպէս Մուսա Տաղն էր) եւ դուրսէն օդնութեան ոչ մէկ յոյս ունէր : Շատ աւելի դժուարին պայմաններու մէջ աննկարագրելի հերոսական գործեր կատարուեցան նոյնիսկ կիներու, աղջիկներու եւ փոքր պատանիներու կողմէ՝ ամիս մը տեւող այդ հերոսամարտի օրերուն :

Յաւէտ պիտի յիշուին հայոց պատմութեան մէջ՝ ՍՈՖՈՆԻԱ ԿԱՐԻՆԵԱՆ անունով հերոս քահանան (Գարահիսարի Ղևոնդ Երէցը), զոր Մուամէթը՝ իր տեղեկագրին մէջ՝ կը կոչէր «Փափագ Սեփոնի» . ՀՄՍՅԵԱԿ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԸ, ՎԱՀԱՆ ՀԻՒՍԻՍԵԱՆԸ, ՂՈՒԿԱՍ ԱՂԲԱՐԸ, ՀՄԱՅԵԱԿ ՄԱՐԿՈՍԵԱՆԸ, ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԵԱՆԸ եւ աւելի քան 200 մեծ ու փոքր հերոսներ :

Պատմութիւնը ոսկեղօծ տառերով արձանագրեց Գարահիսարի հայերուն հերոսական խոյանքի մանրամասնութիւնը եւ թուք ու մուրով զրեց յաւիտեա՛նս անիծեալ եւ դաւադիր թուրք ժողովուրդի ցեղասպանութեան արարքը :

ՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐԸ

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՁ

Պարբերդ նահանգը Արեւմտեան Հայաստանի կեդրոնական հայկական նահանգներէն մին է : Իր աշխարհագրական դիրքին պատճառով, նահանգը ցեղասպանական ոճիրներով զբաղող դահիճներու մեծ կեդրոն մը եղած է նաեւ զրացի նահանգներու հայերուն համար : 1915ին Պարբերդի նահանգին տարածութիւնն էր 37·860 քա. զւմ . :

Թուրք կառավարական վարչական բաժանումով Պարբերդի նահանգը (Մամուրէթ-իւլ Ազիզ Վիլայէթի) 1915ին բաժնուած էր 3 սանճագներու (զաւառներու) . Պարբերդ-Մեզրէ (կեդրոնական սանճագ), Մալաթիա եւ Տերսիմ :

Քեմալական կառավարութեան շրջանին, վարչական բաժանումներու անունները փոխուած են : Սանճագները կը կոչուին՝ իլ (վիլայէթ) եւ զաւառները (զազաները)՝ իչէ :

Պարբերդի կեդրոնական սանճագը կը բաղկանար 4 զաւառակներէ — գազաներէ (գալմագալըզ) . Կեդրոնկն. դաղան՝ Պարբերդ, Արաբկիր, Քեպան Մատէն եւ Ակն : Մալաթիոյ սանճագը կը բաղկանար 5 զազաներէ, — Մալաթիա, Աղճա-Տաղ, Հիւանի Մանսուր, Պեանի եւ Քեախթա :

Տերսիմի սանճագը կը բաղկանար 9 զազաներէ . — Պողաթ, Զմչկաճագ, Զարսանճագ, Մաղկերտ, Գուզուլճան, Օվաճըզ, Բեր-

դակ, Բախ եւ Գրզըլ-Քիլիսէ: Այս վարչական բաժանումը յիշատակել կարեւոր է՝ ցեղասպանական ոճիրներու պատասխանատուութեանց եւ տարազիրներու թիւերու ճշգրտան համար:

Պարբերդի վերոյիշեալ 18 դաղաներուն մէջ, թուրք կառավարութիւնը հայոց թիւը ցոյց կու տայ 74·206, ինչ որ 1/3ն է հայոց իրական թիւին (Պարբերդի նահանգին մէջ)։— 1882ին, Պատրիարքարանին տուած թիւը 270·000 էր: 1900 թուականներուն Օրմանեան պատրիարք կու տայ հետեւեալ թիւերը։— Պարբերդ՝ 57·000, Մալաթիա՝ 23·000, Տերսիմ՝ 18·500, Չմշկածաղ՝ 9·000, Արաբկիր՝ 19·500, Ակն՝ 10·200, գումար՝ 137·200, որ թուրքերու տուած թիւին կրկինն է:

Հարկ է ըսել, թէ Օրմանեան Սրբազանի տուած թիւերն ալ պակասաւոր են, նախ՝ որովհետեւ վիճակագրութիւնը թերի է, ապա՝ աճումի պարագան նկատի առնուած չէ:

1913ին, Պոլսոյ Պատրիարքարանը եւ պր. Մարսէլ Լէառ, առանձինն պրպտումներով, Պարբերդի նահանգին հայոց թիւը ցոյց կու տան 168,000: Բրիտանական Համայնագիտարանը՝ 1914ին 130,000 կը յիշէ, որ դարձեալ թուրքերու տուած թիւին կրկնապատիկն է (տե՛ս, 12րդ տպագրութիւն, 30րդ հատոր, էջ՝ 197): Հաստատան Պատուիրակութեան տուած թիւը՝ 204,000:

Տարագրութեան օրերուն թուրք կառավարութիւնը պահանջած էր դաւառներէն տարագրուած հայերուն թիւը և Պարբերդի կառավարութիւնը հեռագրած էր ներքին գործոց նախարարութեան հետեւեալ թիւերը (Պարբերդի նահանգին համար):

Տարագրուած հայերու թիւը — Մամուրէթ-իւլ Ազիզի սանձաղ.—

ՄԱՄՈՒՐԷԹ-ԻՒԼ ԱԶԻԶ

Մերֆէզ գաղա	23,915
Պարբերդ գաղա	7,348
Քեպան գաղա	308
Արաբկիր գաղա	8,545
Ակն գաղա	9,286
Սինէ-Փէօթիրկէ՝	622
<hr/>	
Գումար Պարբերդի սանձաղի	50·024

Մալաթիոյ սանձաղէն տարագրուած հայեր (թրքական թիւեր)։—

Մալաթիոյ կեղրոնական գաղա	6,627
Աղճա Տաղ կեղրոնական գաղա	312
Պեհեսնի կեղրոնական գաղա	1,555
Հիւսնի Մանսուր գաղա	2,126
Քեպիթա գաղա	703
<hr/>	
Գումար Մալաթիոյ սանձաղի հայ տարագրեալներու	11,323:

Տերսիմի սանձաղէն տարագրուած հայեր (թրքական թիւեր)։—

Տերսիմ գաղա	1,088
Չարսանձաղ	6,537
Մազկերա	1,423
Չմշկածաղ	3,731
Նաղիմէ	80
<hr/>	
Տերսիմի սանձաղէն տարագրուած՝	12,859

Յուլիսի սկիզբը թրքական հեռագրային տեղեկագրին մէջ տեղեկութիւն չի տրուիր Տերսիմի չրջանի գաղաներէն Գուզուլճանի, Բերդակի, Բախի եւ Գրզըլ-Քիլիսէի մասին:

Պարբերդի վիլայէթէն աքսորուած հայերու ընդհանուր թիւը 74·206 ներկայացնելէ յետոյ, թրքական տեղեկագիրը իրրեւ ծանօթութիւն կ'աւելցնէ հետեւեալը. «Վիլայէթին հայերուն թիւը 60·000 պէտք է ընդունիլ: Թէեւ ըլլա՛յ նահանգին մէջ, ըլլա՛յ անոնց քուած տեղերուն մէջ, ինչպէս նաեւ զրացի նահանգներէն քուած հայերը, որ այս նահանգէն անցած են, կառավարութեան ուժերուն ղիմադրած և աստամբում ըլլալով՝ մէկ մասն ալ ընդհարումներու միջոցին բնաջնջուած է, որով տարագիրներուն թիւը աւելի կը պակսի: Վիլայէթին մէջ տարագրութեան գործը (սեւզըլաթ) վերջ գտած է: 52·000ը արդէն զրկուած է, 14·000ն ալ զրկուելու վիճակին մէջ են» (տերսեսթը սեւզ տիր):

Վերոյիշեալ թիւերու մասին թրքական ստախօսութիւնը ակներեւ է:

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Կազմուած մանրամասն ցուցակի մը համաձայն՝ Խարբերդի նահանգին մէջ կային 210 Եկեղեցիներ եւ 18 վանքեր :

Օրմանեան Սրբազան կը յիշատակէ միայն 202 Եկեղեցի, իսկ վանքերու մասին ոչինչ կը զրէ :

Եկեղեցիներն ու վանքերը՝ սանճագներու բաժանումով, անուններով, յիշուած ցուցակին համաձայն .

	Եկեղեցի	Վանք
Խարբերդ	72	5
Մալաթիա	20	3
Ակն	10	5
Արարկիր	19	-
Չարսանճաղ, Չմչկաճաղ եւ Տերսիմ միասնաբար	89	5
Գումար՝	210	18

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

1915ին դոյութիւն ունեցած դպրոցներու լրակատար ցանկը չունինք, ունինք 1901ի ցանկը, որուն թիւերուն վրայ կարելի է աւելցնել առնուազն 20 առ հարիւր, 1915ի համար, թէ՛ աշակերտներուն, թէ՛ դպրոցներուն եւ թէ ուսուցիչներուն թիւերուն վրայ.—

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ

Գաւառակ	Դպրոց	Մանչ	Աղջիկ	Ուսուցիչ
Խարբերդ	27	2·058	496	58
Ակն	4	541	215	22
Չմչկաճաղ	12	456	272	15
Արարկիր	18	713	223	25
Չարսանճաղ	12	617	189	18
Մալաթիա	9	872	230	19
Գումար՝	82	5257	1625	157

Վերոյիշեալ թիւերուն մէջ չեն կաթողիկներու, Յիսուսեան-

ներու, բողոքականներու, ամերիկեան միսիոնարներու, ղերման որբանոցներու, Ամերիկեան Քալեճի հայ աշակերտներու եւ ուսանողներու թիւերը, ինչպէս նաեւ այդ հաստատութեանց մէջ պաշտօնավարող հայ ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու թիւերը :

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Դատարանի նախագահ՝ զօր. (միլիւա) ԷՍԱՏ ՓԱՇԱ. Անդամներ՝ զօր. (միլիւա) ԻՀՍԱՆ ՓԱՇԱ, զօր. (միլիւա) ԻՍՄԱՅԻԼ ՀԱԳԳԸ ՓԱՇԱ, գնդապետ (միլ ալայ) ՍՈՒԼԷՅՄԱՆ ՇԱՔԻՐ ՊԷՅ :

ԽԱՐԲԵՐԴԻ ԶԱՐԴԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ի բացակայութեան դատուածներն են.— Իթթիհատ ե Թերազըր կուսակցութեան (նեմիյէթ) Ընդհանուր Կեդրոնի անդամներէն (մերֆէզ ունուսի) եւ մասնաւոր կազմակերպութեանց (թեշֆիլաթը մալսսուսէ) նախագահ տոքթ. ՊէՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ պէյ, Իթթիհատ եւ Թերազըր ճեմիյէթին Մամուրէթ-իւ Աղիզի (Խարբերդ) պատասխանատու քարտուղար Բենեցի ՆԱԶԸՄ պէյ (այս անունը չչփոթել տոքթ. Նազըմի հետ) :

Ի ներկայութեան դատուածներն են.— Տերսիմի նախկին երեսփոխան (մեպուս) ՀԱՃԻ ՊԱԼՈՇ ՉԱՏԷ ՄԵՀՄԷՏ ՆՈՒՐԻ պէյ, Մամուրէթ-իւ Աղիզի նախկին կրթական տեսուչ (մեարիֆ միւտի-րի) ՖերիՏ պէյ :

ՎՃՌԱԳՐԻՆ ԲՆԱԳԻՐԸ

Տեղի ունեցած դատաւարութեանց համաձայն, լսելէ յետոյ երկու կողմի պահանջները եւ բացատրութիւնները եւ պաշտպանողականները, եւ ամբողջութեամբ կարգալէ, քննելէ ետք դատին վերաբերեալ բոլոր փաստաթուղթերը, արձանագրութիւնները եւ անոնց բովանդակութիւնները եւ խորացնելէ ետք գէպերը, անհրաժեշտ խորհրդակցութեանց արդիւնքը հետեւեալն է.— որ՝ Իթթիհատ եւ Թերազըր կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնի անդամներէն տոքթ. ՊէՀաէտտին Շաքիր պէյ, Թեշֆիլաթը Մալսուսէի իբր նախագահ,

կոստանդնուպոլիսէն Տրապիզոն եւ Էրզրում եւ այլ շրջաններ դացած եւ բանտերու մէջ ոճրագործներու խումբեր ազատ արձակած, եւ այլ շարագործ անձերը կազմակերպած եւ կազմակերպուած չեքէներու զլուխն անցած, հայերու բռնագաղթի ժամանակ յանկարծական յարձակումով սպանութիւններ եւ խայտառակութիւններ զործել տուած է զանազան վայրերու եւ զանազան ժամանակներու մէջ, սպանութիւններ, սեփականութեանց կողոպտում, ոճիրներ, խայտառակութիւններ զործուած են եւ խարկութեամբ կամ տղիտութեամբ եւ կամ անձնական շահու ցանկութեամբ իրեն հետ միացած են կարգ մը ուրիշ անձեր եւ պաշտօնեաներ(*), եւ Երբեմն բերանացի եւ Երբեմն ալ ծածկագիր-գրաւոր հեռագիրներով, զաղտնի հրահանգներ պատրաստուած եւ հազորդուած են եւ այդ հրահանգներով զլուխ հանուած են այդ արարքները, եւ կազմակերպուած Թեջքիլաթը Մախսուսէի մաս կազմողներուն միջոցով բնաջնջած եւ փճացուցած են (իփնա եւ իմիա) հայերը:

Յիշեալ Պէհաէտտին Շաքիր պէյը, Խարբերդի մէջ, Իթթիհատ եւ Թերապի կուսակցութեան պատասխանատու քարտուղար փախուտական Բենեցի ՆԱԶԼՄ պէյին ուղղած է ծածկագիր-հեռագիր մը, «Խարբերդի վայրի (ընդհանուր կառավարիչ) Սապիթ պէյի միջոցաւ, յանձնելի ՆԱԶԼՄին», որուն թուականն է Ապրիլ 21, 1915 (1331) եւ որուն մէջ ըստած է բառ առ բառ հետեւեալը.

— «ԱՅԴ ՏԵՂԷՆ ՏԱՐԱԳՐՈՒԱԾ (սեւզ օլուան) ՀԱՅԵՐՈՒ ՀԱՇԻԻԸ ԿԸ ՄԱԳՐՐՈՒԻ՞ (կը բնաջնջուի՞ն): ԱՏՈՆՑ ՍՊԱՆՆՈՒԵԼՈՒ ԵՒ ԲՆԱՋՆՁՈՒԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԻՄԱՑՈՒՑԻՔ (էշխասար միւզփիլի իմիա էսիլիյո՞ր մը). ԵԹԷ ՈՉ ՄԻՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԷՆ ԴՈՒՐՍ ԿԸ ՀԱՆՈՒԻՆ ՈՒ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ (եոգսա եալընըգնա սեւզ վի իյգամ օլունիյոք):

Վերոգրեալ ձեւով հազորդուած այդ ծածկագիր-հեռագրէն զատ՝ Իթթիհատ եւ Թերապի կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնի անդամներուն մասին զտնուած տոսիէին մէջ, վաւերագրերու կարգին, կայ նաեւ հետեւեալը.—

Էրզրումի վալի՝ ՄԻՒՆԻՐ պէյի վկայութենէն, որ է.— «ԷՐՁՐՈՒՄԷՆ, ՔՂԻԻ ՃՍՄԲՈՎ, ՂՐԿՈՒԱԾ (հայ) ՀԱՐՈՒՍՏՆԵՐՈՒ ԿԱՐԱՆԸ, ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ ՊԷՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՁԵԹԷՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ, ԱՄԵՆԱՎԱՅՐԱԳ ԿԵՐՊՈՎ, ՏԱՆՁԱՆՔՆԵՐՈՎ (զործակցութեամբ ՏԵՐԱՄԻ ԷԹԷՆԵՐՈՆ) ՍՊԱՆՆՈՒԱԾ ԵՆ»:

(*) Դատարանը չ'ուզեր յայտնել այդ պաշտօնեաներուն անունները:

Այդ է զրկուած ծածկագիր-հեռագրին բովանդակութիւնը(*): Իսկ Քասթեմունիի նախկին վայրի ԲԵՇԻՏ ՓԱՇԱ վկայած է, որ յիշեալ Պէհաէտտին Շաքիրէն ստացած էր ծածկագիր հեռագիր մը, որ կը հրահանգէր հայերու տարապրութիւնը:

ՎԵՀԻՊ ՓԱՇԱ (զօրավար) վկայած է հետեւեալը.—

«Հայերու սպանութիւնը եւ բնաջնջումը եւ անոնց սեփականութեանց յափշտակումը (եաղմա) եւ բռնագրաւումը (դասպ) որոշուած էին Իթթիհատ եւ Թերապի Ընդհանուր Կեդրոնին կողմէ, (մերքէզը ումուլի), Յրդ զօրաբանակի շրջանին մէջ(**):

«Մարդիկ սպանող մասպործները (ինսան գասապլարը) հայթաթողը եւ վարողը եղած է Պէհաէտտին Շաքիր»:

Անթալիայի (Ատալիա) միթեսարըֆ (կառավարիչ) ՍԱՊՈՒՐ ՍԱՄԻ ՊԷՅԻՆ հետեւեալ ծածկագիրը զրկուած է, զարձեալ էր-զըրումէն, Պէհաէտտին Շաքիրի կողմէ —

«ԷՐՁՐՈՒՄ, ՎԱՆ, ՊԻԹԼԻՍ, ՏԻԱՐՊԵՔԻՐ, ՍԻԻԱՍ, ՏՐԱՊԻՉՈՆ եւ ՇՐՁԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ, ՄԷԿ-ՀԱՏԻԿ ՀԱՅ ԻՍԿ ՁԹՈՂՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ (պիր քէֆ էրմէնի գալմամազ իւզերէ), ՄՈՒՍՈՒԼ ԵՒ ՁՐ (Տէյը Ձօր) ԿԸ ՂՐԿՈՒԻՆ: Դուք Անթալիոյ մէջ ի՞նչ կ'ընէք այդ մասին»:

Այդ ծածկագիր-հեռագրային հազորդագրութիւնն ալ դատարանին առջեւն է:

Դատավարութեանց եւ արձանագրութեանց մէջ մանրամասնութիւնները զրուած են: Լսուած բոլոր վկայութիւնները, հազորդագրութիւնները եւ փաստերը կը հաստատեն այդ բոլոր իրողութիւնները(***):

Եւ վաւերացուած է նաեւ, թէ յիշեալ ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐԸ վերոյիշեալ զործուած ոճիրներուն մասնակից եղող զլխաւոր ոճրագործն է (հէմ-ֆիլը) եւ իր յանցաւորութեան վճիռը կը տրուի միա-

(*) Թուրք դատարաններու ջանքն է ոճիրներու պատասխանատուութիւնը ձգել փախստական անձերու վրայ, որպէսզի չ'մեղանան թուրք ոճրագործ պետութիւնը եւ տեղական կառավարական շարագործ մեղակից պաշտօնեաները:

(**) Յրդ գօրաբանակի կեդրոնը (1915ին) ըլլալով Էրզրում, այդ բանակին իրաւասութեան ենթակայ էին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Պիլիսի, Խարբերդի, Սեբաստիոյ եւ Տիգրանակերտի նահանգները:

(***) Դատարանը կը զգուշանայ արձանագրելու ոճիրներուն վայրը, գոհերուն թիւը եւ թուականները:

ձայնութեամբ: Միւս ամբաստանեալներէն է փախստական ՐեՄնեՑի ՆԱԶԼՄ պէյը եւս. մեր դատական մարմնոյն անդամները նկատի առնելով որ յիշեալ Նազըմ պէյին զբնակեցնուած Ապրիլ 21, 1915 (1331) թրւակիր հեռագիրը կը պարզէ թէ ան տարազրութեանց ժամանակաշրջանին հաղորդակցութեանց մէջ եղած է Պէհաէտտին Շաքիրին հետ, եւ Մամուրէթ իւլ Աղիյի վային՝ Սապիթ պէյը եւ Ընդհանուր Կեդրոնի ընդհանուր քարտուղարը՝ (մերֆէզը ումումի ֆեաթիպը ումումիսի) ՄԻՏՀԱՏ ՇԻԻՔՐԻ պէյը եւս, արձանագրուած յայտարարութեանց համաձայն, կապ պահած է եւ լսուած վկաներու տրուած վկայութեանց համաձայն, Նազըմ լսելով որ հետապնդում կը կատարուի իր մասին, փախած է եւ այսօր փախստական վիճակի մէջ կը գտնուի:

Դատին վերաբերեալ ուրիշ հաղորդագրութիւններու պարունակութեանց համաձայն, ան ալ վերոյիշեալ ոճիրներու գլխաւոր մասնակիցն է (հէմֆիլը), եւ երկու անձերն ալ, օրէնքի սահմանումին համաձայն, թէ՛ «գլխաւոր ոճրագործներուն միանալու կամ վերոյիշեալ ոճիրները զործուելու համար որեւէ դեր կատարած ըլլալու մասին սպառնացող զոյութիւն չունենալուն», միայն թէ Պէհաէտտին Շաքիրին հետ, ինչպէս վերը յիշուած է, հաղորդակցութեան մէջ եղած ըլլալուն եւ, լսուած վկայութեանց համաձայն, վերոյիշեալ ոճիրները պատրաստելու եւ զիրացնելու զործերը (իյտատ վէ քեսիիլ) գիտնալով գլխաւոր ոճրագործներուն օժանդակած եւ երկրորդական-մեղսակից (ֆերէմ գիւմետիսէլ) ըլլալու մասին եւս կարծիք կայ: Այդ կարգի պարագաներուն, փոքրամասնութեան ձայնը, օրէնքի համաձայն, յաղթական կ'ըլլայ, որով, անոր (Նազըմին) մեղսակից ըլլալու յանցաւորութեան մասին 2/3ի մեծամասնութեամբ որոշում կայացած է:

Տրուելիք պատիժներու սահմանումի մասին խորհրդակցութիւն կատարուելով, —

«Վերոյիշեալ ոճրագործներէն Պէհաէտտին Շաքիր պէյին արարքները պատժական օրէնքի 181րդ յօդուածին կը համապատասխանեն: Եւ 171րդ յօդուածին համաձայն մահուան կը դատապարտուի: Բեանեցի Նազըմն ալ, նոյն օրինաւորքին 15րդ յօդուածին 2րդ պարբերութեան զործադրութեամբ, 15 տարի պայմանաժամով կը դատապարտուի թիապարտութեան եւ երկուքին ալ սեփականութիւնները, օրէնքի արամադրութեան համաձայն, կը զրաւուին և կը կարգադրուին, եւ Նազըմն ալ քաղաքային իրաւունքներէ կը զրկուի»:

Միւս ամբաստանեալներէն Տերսիմի նախկին երեսփոխան

Մեշէֆ ՆՈՒՐԻ ՊէՅԸ և Խարբերդի նախկին կրթական տեսուչ (այժմ Գոնիայի կրթական տեսուչ) ՖեՐԻՏ պէյին գալով:—

Ատոնցմէ Մեհմէտ Նուրի պէյ, իր ազարակի (չիֆթլիկ) շրջակայքի Հոլափիկ(?) գիւղին մօտ հայերու տարազրութիւն, կոտորած եւ բնաջնջում կատարած ըլլալու պարագան եւ ջարդարար ժանտարմներու ներկայութեան րսած ըլլալը թէ:—

«Զեզ «ոսկորներու զիւզը» (ֆեմիլիլի ֆէօյ — գերեզման) պիտի զրկեմ, եւ ժանտարմներուն ջարդ կատարել հրամայած ըլլալու ամբաստանութիւնը Պատերազմական Ատեանի առջեւ թէեւ լսուած է, սակայն դատաւարութեանց ընթացքին, գանդատող Տիկին ՄԱՐԳՐԻՏԻ վկայութեամբ, յիշեալ Մեհմէտ Նուրի պէյը տարազրութեան օրերուն Հոլոնէք(?) գիւզը երթալով ըսած է, թէ «պիտի տարազրուիք եւ ձեր (բնակած) տեղերուն մէջ դարի ցանել պիտի տամ» եւ ԿԱՐԱՊԵՏԻՆ տունը գացած ըլլալը, եւ «այս տեղերուն մէջ ոեւէ մէկը ոեւէ անձ եթէ թողու (պահէ), երեք ամիս ետք թող դայ գտնէ զանոնք» ըսուածները պարունակող թուղթ մը փակցուցած ըլլալը եւ յետոյ ձիուն վրայ նստած եւ մեկնած ըլլալը ըսուած է:

Տիկին Մարգրիտը տարազրութեան օրերուն Ստանպուլ գտնուած է եւ Գասպար Մովսէսեանն ալ Նուրի պէյի միջոցաւ շատերուն դրամները կողոպտած է եւ Կարապետի տան դրան վրայ գինուորական կարմիր թուղթի վրայ ստորագրուած թուղթ մը փակցուցած է եւ կարգ մը տիկիներուն ալ փէշերը վերցնելով՝ սրիկայական արարքներ կատարելու պարագան եւ այդ գիւղին մէջ ալ «գարի պիտի ցանեմ» ըսելէ ետքը ձիով մեկնած ըլլալու, եւ պատրաստ չեթէներուն զործակցած ըլլալու մասին Տիկին Մարգրիտին միայն «լսած ըլլալը», եւ Նուրի պէյն ալ նման թուղթ մը փակցնելու պարագայէն բնաւ լուր չունենալը յայտնած ըլլալով, իրարու հակասող յայտարարութիւններ եղած են: Երգումի տակ, յիշեալ Կարապետի տան դրան վրայ թուղթ փակցնելու պարագան ալ հերքուած է (*):

Վկայուած է նաեւ, որ Մեհմէտ Նուրի պէյի ազարակին մէջ

(*) Խարբերդի նահանգին մէջ 204.000 հայեր բռնագաղթի, ցեղասպանութեան կ'ենթարկուին եւ քրքալի գիւղուտակի դատարանը այդ տեսակ ոչնչութիւններով կը գրագի, փոխանակ կատարուած վիթխարի ոճիրը եւ մեծ սնրագործները, ոճիրին հեղինակները լոյս աշխարհ բերելու եւ դատելու:

պահուրտած եւ տարազրու թենէ աղատուած են (հայեր), եւ Կարապետն ալ սկիզբէն մինչեւ վերջը Մեհմէտ Նուրի պէյին տունը գրտնուելով, անոր պաճառախին (քենեկալ)՝ ԱՍԸՄ պէյին տունը յափըշտակուած իրեղէնները ՆՈՒՐԻ պէյի կողմէ տարուելու պարագան տեսած չըլլալը յայտնած ըլլալով, ուստի Մեհմէտ Նուրի պէյին տարազրեալներէն դրամ առնելու պարագան ալ նկատողութեան արժանի չի նկատուիր եւ, հակառակ կառավարութեան հրամանին, թէ տարազրութեան ենթարկուողներէն (հայերէն) պահողները մահուան պատիժի ենթակայ պիտի ըլլալին, յիշեալ (Հոլլենիք(?)) (*) գիւղի ժողովուրդէն շատերը պահելով ազատած է, եւ նախորդ նիստին մէջ, 30է աւելի անձերու դիմումներուն հետեւանքով եւ մասնաւորապէս ամերիկացի Մըսթըր ՐիկիՍի (որուն չէզոքութիւնը կասկածի տակ չի կրնար ըլլալ) վկայութեան համաձայն, յիշեալ Մեհմէտ Նուրի պէյը, տարազրութեան ժամանակ, շատ մը հայեր պաշտպանած եւ ինքն ալ կը հաստատէ այդ պարագան եւ իր օձիքը կ'ազատէ:

Լսուած վկաներէն Մեհմէտ Ա.Ի պէյին զալով, դատավարութեան արձանագրութեանց մէջ մանրամասնութեամբ գրուած էր իր վկայութիւնը, սակայն ատոր հակառակն ըլլալով՝ Քննիչ Յանձնախումբին առջեւ վկայելէ յետոյ, հանդիպած է Մուսթաֆա Սաֆէթ պէյին եւ ըսած է անոր իր վկայութեան մասին ու իր հասցէն տալով յայտնած է, որ պատրաստ է իր վկայութիւնը փոխելու:

Ամբաստանեալ կրթական տեսուչ ՏՆՐԻՏ պէյի մասին ապացոյց չկայ, կառավարութեան հրամանով եղած տարազրութեան, տարազրներու կարաւաններ կազմակերպելու եւ ժողովուրդին դէմ անպիտանութիւններ դործելու եւ Մեհմէտ Նուրի պէյին չիֆթիկին չուրջն ալ Սոսվենիքի(*) հայերը ջարդելու եւ անոնց սեփականութիւնները զրուելու եւ իր քենեկալ ԱՍԸՄ պէյին տունը տանելու (**)

յանցանքներուն «ոչ-մասնակից» և «անպարտ» ըլլալու և ուրիշ պատճառով ալ ձերբակալուած չըլլալուն ազատ կ'արձակուի:

Դատարանն իր վճիռը կ'արձակէ միաձայնութեամբ, ի բացա-

(*) Բնագրին մէջ Հոլլենիք, Հոլլենիք, Սոսվենիք կոչուած գիւղի անունը գաղափար ուղղագրութիւններով գրուած է: Ընդարձակ փարտեպի վրայ անունը գրուած է «Հոլլենիք»:

(**) Տարագրներէ յափշտակուած գոհարեղէններ եւ թանկարժէք իրեր, դրամ եւայլն կը յանձնուէին կառավարութեան, բաժին հանելով չեթէմերուն եւ իր թիկառին:

կայութեան՝ Պէհաէտտին Շաքիրի եւ Բեսնեցի Նազըմի, նաեւ ի ներկայութեան՝ Մեհմէտ Նուրիի եւ Տերիտի:

Ստորագրութիւն դատաւորներու
ՄՈՒՍԹԱՖԱ ՔՆՐԻՍԻ
Ի ՀՍԱՆ

Յուլուար 13, 1920 (1336)

21 Բէպ իւլ Ախէր 1338

Այս վճիռին համաձայն ըլլալով հանդերձ՝ ԲԵՍՆԵՑԻ ՆԱԶՂՄԸ եւս Պէհաէտտին Շաքիրի պէս մասնակից գլխաւոր ոճրագործ (հէմ ֆիւլ) ըլլալուն մասին համոզում գոյացուցած են հետեւեալ երեք դատաւորները:

(Ստորագրութիւն դատաւորներու)
ՍՈՒԼԷՅՄԱՆ ՇԱՔԻՐ
ԻՍՄԱԵԻԼ ՀԱԳԳԸ
ԷՍԱՏ

Ինչպէս վճռագրէն կ'երեւի, թուրք կառավարութիւնը աւելի քան 150 հազար հայերու (Պարբերդի նահանգին մէջ) եւ 20.000 հայ զինուորներու սպանդին, անհատական և ազգային սեփականութեանց գրաւումին ու իւրացումին համար գտեր է միայն 2 պատասխանատու, անոնք ալ՝ փախստական (Պերլինի մէջ) եւ երկու ներկայ ամբաստանեալ, անոնք ալ «անմեղ»:

Ո՛չ մէկ ակնարկութիւն արիւնարբու բորենիներու՝ Պարբերդի վալի Սաղըրգատէ(*) Սապիթ պէյի, գայմագամ Ասըմ պէյի, Միւֆթի Ֆայըզի, Պարբերդի Իթթիհատի քըլպի ոճրագործ անդամներուն, Նէյ Չատէ Նուրիի, լքեալ գոյքերու գողերուն՝ տեղւոյն հրամանատար Մեհմէտ Ալիի, Տերիք Սուլէյման փաշայի, ոստիկանական կոմիսէր Սուլէյման պէյ Չատէ Բեշիտի, այլ գոմանտանի Տերիտ պէյի, կարաւաններուն ընկերացող եւ չեթէներու ղեկավարներէն Միւլաղիմ Էթհէմ Շեւքէթի, չեթէպետներէն Փուլաթլը Պալիի, Հաճի Գայայի եւ որդիներ Բիւշտիլի եւ Ասլանի, բոլորը մէկը միւսէն աւելի մարդակեր, եւ ուրիշ հարիւրաւոր ոճրագործներու մասին, որոնք վայրենարար կոտորեցին եւ լլկեցին կիները, որբերն ու որբուհիները:

Կանխամտածուած ցեղասպանութիւնը ծրագրուած էր եւ ըստ

(*) Սաղըրգատէները ծամօք են որպէս Քննիչի տերեպէյները (աւտապետ):

այնմ գործադրուած : Յունիս 13/26 1914ին, թրքական 11րդ գոլ օրտուն (բանակաթեւը) փոխադրուած էր Պարբերդ : Ծրագիրը այն էր որ նախ հայ ղեկավարները, թիւով քանի մը տասնեակ, պիտի ձերբակալուէին եւ այդ պատրուակով զէնքերու խուզարկութիւն եւ հաւաքում պիտի ըլլար . այդ լրանայէ ետք, այրերու զանգուածային ձերբակալում եւ բանտարկութիւն կատարուեցաւ, Յունիս 3ին բնաջնջում, յետոյ՝ լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական եկեղեցական առաջնորդներու սպանութիւն : Բանտարկուած այրերէն մօտ 800 հայեր Հերոզլի լեռան ստորոտը Յունիս 24ին հրացանազարկ կամ կացինով սպաննելը (14ական՝ կապուած վիճակի մէջ) : Նոյնը նաեւ միւս գագաներուն մէջ . օրինակ՝ Բերդակի մէջ 300 այրերու սպանութիւնը :

Յունիսի մէջ հրատարակուած էր Յունիս 13 թուակիր տարագրութեան պէյաֆաշիֆ : Յայտարարութենէն առաջ առաջին կարաւանը Պարբերդէն ելած էր Յունիս 10/23, 1915ին : Վերջապէս, Յունիս 24ին ուշ մնացած գերման ղեսպանատունը կը բարեհաճէր հաղորդելու որ «Պարբերդ, Ատանա, Սիւաս եւ Տրապիզոն հայերը կը բնաջնջուին» :

Պարբերդի տարագիրներու խլեակներէն մաս մը հոգեսպառ վիճակի մէջ հասած էր Ռաս իւլ Այն : Պարբերդի մէջ 700 որբերէն միայն 13ը մնացած էին :

Ճիշդ է որ զանգուածային ոճիրներ գործուած էին Քեդին Պան, Կէօլճիւքի մօտ, Պուլիենիք, Քէօմիւր Պան, Իզոլու եւ այլ վայրեր, հանդերձ կողոպուտով, բայց ոճիրներուն մեծագոյնը կատարուած էր Պարբերդի նահանգի Մալաթիոյ սանճագին մէջ, ուրկէ անցան Սամսոնէն, Սերաստիայէն, Տրապիզոնէն, Էրզրումէն, Պարբերդէն եկող կիներու եւ մանուկներու կարաւանները, մօտ 500,000, եւ անցան Մալաթիայէն հարաւարեւելք 7 ժամ հեռաւորութեան վրայ, դէպի Քեախթա, անկոխ լեռներու եւ ձորերու մէջէն, բարձրարեւոյթ Գանլը Տաղի քովէն, ուր կար անտառապատ վիհ մը՝ Գանլը Տէրէ, աւելի քան 2.000 ոտք խորութեամբ, ուր լեցուեցան սպաննուած տարագիրներու դիակները վրայ վրայի : Զինադադարէն յետոյ Յարութիւն Պագալեան այցելած էր այդ վայրերը եւ տեսած էր այդ խորունկ վիհը որ լեցուած էր մինչեւ բերանը հայերու զանկերով եւ կմախքներով :

Այդ հրէշային ոճիրներուն հաշիւը բաց կը մնայ :

Չանազան գիրքեր գրուեցան թրքական Յեղասպանութեան մասին . Մորկընթաու, Լեփսիուս, Պրայս եւայլն, որոնք, ղժբախտա-

բար, միակողմանի, վերապահ եւ ոչ-առարկայական են, բոլորն ալ թուրք պետական փաստաթուղթերէ զուրկ են : Պրայս տուեր էր 2 թրքական վաւերագրեր, երկուքն ալ կիսատ եւ թերի, եւ սխալ թարգմանուած : Իսկ Լեփսիուսի գերմանական տեղեկագիրները կը ձգտին աւելի չքմեղացնելու գերման կառավարութիւնը, որ «իւր կարելին փորձեր է հայերուն օգնելու համար» : Բացի ատկէ՝ սակայն ան անմոռանալի անձնուէր հայասէրն էր :

Պրայսի գրքին մէջ կարեւորագոյն էջերն են Նիլը Իսք Բիլիֆի եւ Ամերիկեան Պաչին ուղղուած տեղեկագիրները : Պրայսի գիրքը կիսատ է : 1916ի սկիզբը հրատարակուած էր, երբ ցեղասպանական մեծ ոճիրները տակաւին կը շարունակուէին :

Պրայսի գրքին մէջ կը նշմարուի ուրիշ պարագայ մը եւս : Որպէսզի տեղեկատուներուն անունները եւ վայրերուն անունները յայտնի չըլլան, անգլերէն այբուբենի տառերը գործածուած են, որով յատկանշական մանրամասնութիւնները անորոշ մնացած են :

Օրինակ, նմոյշ մը տանք այդ գաղտնի այբուբենէն .--

- H գիրը կը նշանակէ Պարբերդ :
- G գիրը կը նշանակէ Մեզրէ :
- AT գրերը կը նշանակեն Էջմէ :
- BC գրերը կը նշանակեն Հապուսի :
- AO կը նշանակեն Իզոլի :
- AL կը նշանակեն Պան-Քէօյ :
- K կը նշանակէ Ֆայիդ պէյ :
- AM կը նշանակէ Թութլը Քէօյ :
- AP կը նշանակէ Չութլուզ :
- AG կը նշանակէ Քէօմիւր Պան :
- BS կը նշանակէ Փերչենճի լեռ :
- C կը նշանակէ Հիւսէյնիկ :
- AR կը նշանակէ Քէօրիւկ :
- AS կը նշանակէ Եղէզի :
- AQ կը նշանակէ Մորենիկ, եւայլն :

Ընթեցողը ի՞նչ պիտի հասկնայ այդ գիրերէն, զորս շարեր է անգլիացի մեծ պատմիչը՝ Արնոլտ Թոյնպի : Մարդ Աստուծոյ, գոնէ զինադադարէն ետք հրատարակէր այդ գաղտնի բանալին, որպէսզի Պրայսի գործը կարդացողները ճշդիւ հասկնային թէ ո՞ւրտեղ ի՞նչ պատահած եւ ի՞նչ է ոճրագործին անունը :

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Առնուազն 150·000 հայերու աւելի քան 30·000 ընտանիքի նը-
լազազոյն կորուստը 250·000·000 տուար է: Ազգային սեփականու-
թիւններ, եկեղեցի, վանք, դպրոց, ազգային կալուածներ, ջրաղացք,
չէնք չեն հաշուուած:

Իսկ բարոյական կորուստը սահման չունի, կիներու գերեվա-
րութիւնը, առեւանգումը, թրքացումը: Նազլեան սրբազան կը յայտ-
նէ որ Մեզրէի մէջ տարագիր հայ կիներէն բացուած է հանրատուն
եւ թուրք ժողովուրդը ազատ մուտք ունի (յուշեր՝ Փրանսերէն, էջ՝
295):

Թուրքը որակելու համար «ամենաստորին» բառը շատ տկար
է: Գազանայիւն իսկ քիչ է:

Թուրքը պատմութեան մէջ յաւիտենապէս արձանագրուեցաւ
իրբեւ ցեղասպան եւ մարդկութեան թշնամի: Հայը, ո՛ր տեղացի
ալ որ ըլլայ, ո՛ւր որ ալ գտնուի, կը պահանջէ և միշտ պիտի պա-
հանջէ եւ պիտի պայքարի իր իրաւունքներուն համար:

Հոգ չէ թէ նոյնիսկ բարեկամ պետութիւններ, բարոյական ա-
մէն սկզբունք ոտքի տակ առած, նիւթական շահերու համար, կը
հովանաւորեն Ոճրագործ եւ Յեղասպան թուրքը եւ անոր ոճրամիտ
կառավարութիւնը:

ԱՆԳԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԴԷՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՃԻՐՆԵՐԸ

Արեւմտեան Անատոլուի մաս կազմող Անգարայի նահանգը,
ինչպէս նաեւ անոր հիւսիսը գտնուող Քասթեմունիի նահանգը մեծ
կարեւորութիւն ունին թրքական ցեղասպանական արարքներուն ա-
ռընչութեամբ:

Այդ երկու նահանգներուն մէջ հայերու համեմատական թիւը
պակաս էր, քան Արեւմտեան Հայաստանի նահանգներու հայ բնակ-
չութիւնը:

Բայց եւ այնպէս, այդ նահանգներու թրքական քաղաքային եւ
գինուորական իշխանութիւններն եւս մեծազոյն եղեոնը դործեցին,
առանց խղճահարութեան, տեղացի թուրք ժողովուրդին օժանդակու-
թեամբ, մասնաւորապէս թուրք պիւղացիութեան ահուելի վայրագու-
թեամբ, ընդդէմ այն հայ մտաւորականներուն, որոնք տարագրուած
էին այդ երկու նահանգներուն մէջ, Այաշ՝ Անգարայի նահանգին եւ
Չանգըրը՝ Քասթեմունիի նահանգին մէջ:

Անգարայի (Էնկիւրի), պատմական Անգիւրայի նահանգը 1915ին
ունէր 83·000 քառ. քմ. տարածութիւն, որ գրեթէ ամերիկեան Մէյն
նահանգին չափ է կամ Նիւ Եորք նահանգի երեք հինգերորդին չափ:

Վարչականօրէն՝ Անգարայի նահանգը (վիլայէթը) բաժնուած

էր 4 սանճազներու (միւթեաարքիւբ) . — Անգարա, Գըր Շեհիր, Եոզկաթ եւ Կեսարիա :

Այաշը Անգարայի սանճագին 11 գազաներէն մին էր : Միւս գազաներն (գաւառակ) էին . Չպուքապատ, Աթանոս, Եսպանապատ, Պէյպազար, Նալլուխան, Մուխալլիճիք, Սիվրիհիսար, Հայմանա եւ Գասապա-Պալիա : Անգարայի սանճազին մէջ, Անգարա քաղաքէն զատ, հոծ հայութիւն մը կար Սիվրիհիսար գազային եւ Աթանոսի մէջ :

Եոզկաթի սանճագը ունէր 5 գազաներ, — Եոզկաթ, Պողազլայան, Ազ Տաղ, Մատէն, Սուսկուրլու եւ Չորում :

Եոզկաթի եւ Պողազլայանի գազաներուն մէջ հայերը ունէին 48 զիւղեր, աւելի քան 42.000 բնակչութեամբ :

Իսկ Կեսարիոյ սանճագը ունէր 4 գազա . — Կեսարիա, Էվերէկ, Ինճեսու եւ Գարահիսար-Տեւելու : Կեսարիոյ այդ շրջանին մէջ կային 44 հազարէ աւելի հայեր 1915ին : Ազգասպանական ոճիրներու խընդրին մէջ այս վարչական բաժանումները կարեւոր են, պաշտօնեաներու զիրքին եւ պատասխանատուութեան առնչութեամբ :

Ճրանսացի Վիթալ Քինէ 1890ին Եոզկաթի շրջանի հայերուն թիւը կը յիշատակէր 31.032, ինչ որ 1915ի թիւէն երկու երրորդով պակաս է : Օրմանեան Սրբազան կը նշէր 41.000 հայեր՝ զիւղերով միասին : Ազ Տաղ-Մատէն, Սուսկուրլու եւ Չորում հայերու թիւը 10.000 էր : Օրմանեանի զիրքը չէր կրնար նկատի ունենալ հայերու աճը վերջին տարիներուն՝ մինչեւ 1915 :

ԹՐԳԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԵՈԶԿԱԹԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եոզկաթի շրջանի կառավարչութեանն ներքին գործոց նախարարութեան զրկուած հեռագրին մէջ, Եոզկաթէն տարագրուած հայերուն թիւը ցոյց կը տրուի 31.247, հետեւեալ բաժանումով . — Եոզկաթ (կեդրոնական գազա)՝ 13.359, Ազ Տաղ գազա՝ 3.208 եւ Պողազլայան՝ 14.680 : Հայերով եւ հայկական խնդրով զբաղող Ասատ Ռուս (թուրք գրող) թրքական վիճակագրութիւններ ցոյց կու տայ, հայերու թիւը նուազ ներկայացնելու համար : Անոր տուած սանճազներու ցանկին մէջ նոյնիսկ Եոզկաթ սանճագը յիշուած չէ (տես էջ 143-144) :

ԵՈԶԿԱԹԻ 53 ԳԻՒՂԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (Անգլերէն այբբենական կարգով)

Անուն	Տուն	Եկեղեցի
Ալաճա	100	—
Ազ Տաղ-Մատէն	350	2 եկեղեցի
Արղատաշ	15	—
Արմազան	20	Ս. Ածածին(*)
Պըլըդ	260	Ս. Գէորգ
Պելէօրէն	150	Ս. Մինաս եւ Ս. Ածածին
Պողազլայան	500	Ս. Ածածին
Պուրուն Գըշլա	400	Ս. Ածածին
Չայիր Շէյխ	150	—
Չարմազ	200	Ս. Թորոս
Չաթ (Մեծ)	300	Ս. Ածածին
Չաթ (Փոքր)	150	—
Չաթաք	205	Ս. Թէոդորոս, Չորում Ս. Գէորգ
Չիֆթլիք Սարը Համզա	40	Ս. Նիկողոս
Չոզրատան	160	1 եկեղեցի
Տէյի Համզա	50	—
Էքրէք	200	Ս. Ածածին
Էլեքճիլէր	20	—
Էյլենճէ	100	Ս. Ածածին
Ֆախրալը	150	—
Կէօվալէն Կուրտէն	200	Ս. Ածածին
Կէօվէճլի	110	Ս. Յակոբ
Իքիգարտաշ	100	—
Իքի Գարիյէ	25	—
Ինճիրլի	250	Ս. Ածածին
Իյաէլի	300	Ս. Փրկիչ
Գարապըլըդ	200	Ս. Լուսաւորիչ
Գարա Չայիր	250	Ս. Ածածին
Գարա Ֆաքրալը	30	—
Գարա Հալլը	400	Ս. Յակոբ
Գարա Եազուպ	150	Ս. Յակոբ
Քեաթիլէր (Մ.)	150	—

(*) Ածածին կրճատումն է Ս. Աստուածածին բառին :

Անուն	Տուն	Եկեղեցի
Քեւլէր	300	Ս. Ածածին, Ս. Թորոս վանք
Քէօհնէ	560	1 եկեղեցի
Քուժ Գույու	150	Ս. Ածածին
Քիւրքճի	25	—
Մաղար Օղլու	90	Ս. Ածածին
Մելէզ	73	—
Մենթեշէ	215	Ս. Ածածին
Փէօհրենկ	200	Ս. Յակոբ, Ս. Ածածին
Բումտիկին	450	Ս. Ածածին
Սաաթլը	100	—
Սաչլը	110	Ս. Ածածին
Սարը Համզա	250	1 եկեղեցի
Սերայ	150	Ս. Ածածին
Սըղըր-Ղուրուղու	50	—
Սունկուրլու		Ս. Ածածին
Դանէլ Եազ Պաղը	10	—
Թանըշման	50	—
Թաչլը Կեչիտ	50	Ս. Կարապետ
Թերղիլի	400	Ս. Թէոդորոս
Իւրնէճ	200	Ս. Ածածին
Ուզունլու	500	Ս. Ածածին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Եալը Եալը	30	—
ԵՈՁԿԱԹ	2.340	Ս. Ածածին
Գումար՝ 53 զիւղ եւ մէկ քաղաք, 11.988		ընտանիք, 47.586 հայ, 41 եկեղեցի, 63 դպրոց:

Մեր կազմած ցուցակով, 1915ին Անգարայի նահանգին մէջ հայերս ունէինք.—

Եոզկաք սանճագ՝ 41.000 հայ, 43 եկեղեցի, 20 դպրոց, 1.750 աշակերտ եւ 13 ուսուցիչ (դպրոցներու եւ աշակերտներու թիւը 1901ի թիւերն են):

Կեսարիոյ սանճագ՝ 44.000 հայ, 4 վանք, 30 եկեղեցի, 42 դպրոց, 4.935 աշակերտ եւ 125 ուսուցիչ:

Կեսարիոյ սանճագի հայերու թիւի մասին դարձեալ թուրք

դրող Ասատ Ուրաս կ'ըսէ, թէ 1903ի վիճակագրութեան արձանագրութեանց տոմարներուն մէջ Կեսարիոյ հայերու թիւն էր 52.192: Պէտք է նկատել որ 1903էն մինչեւ 1908 հայերու դազթը դժուար էր, որով շատ քիչեր գաղթած էին Կեսարիայէն եւ պակաս չէին փոխարէն ժողովուրդը աճած էր: Այդպէս ըլլալով հանդերձ, Կեսարիոյ կառավարիչը ներքին գործոց նախարարութեան ղրկած հեռագրին մէջ Կեսարիայէն տարագրուած հայերուն թիւը ցոյց կու տայ 47.617:

1907ին հրատարակուած թրքական Սալնամէն (տարեգիրքը) Կեսարիոյ սանճագի հայերուն թիւը ցոյց կու տայ 68.000:

Անգարայի եւ Գրըշէհի սանճագներուն մէջ հայերու թիւն էր, հաշուելով նաեւ Սիվրիհիսարի հայութիւնը, 25.000, 20 եկեղեցիներով, 7 դպրոցներով, 1.290 աշակերտներով եւ 29 ուսուցիչներով:

Որով, Անգարայի նահանգին մէջ հայերու ընդհանուր թիւն էր 110.000, 93 եկեղեցի, 69 դպրոց, 7.779 աշակերտ եւ 197 ուսուցիչ: Թրքական հեռագիրը ներքին գործոց նախարարութեան՝ Անգարայի թիւը ցոյց կու տայ 94.941 (հայ զինուորներու թիւը և բանտարկեալ հայ այրերու թիւը այս թիւէն դուրս ըլլալու է, քանի որ տարագրեալներու թիւերը արձանագրուած են ոստիկանութեան կողմէ, տարագրութենէն քանի մը օր առաջ):

ԿԵՍԱՐԻՈՅ ՍԱՆՃԱԳԻ ԳԻՒՂԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Կեսարիա՝ 4 վանք, Լըք եկեղեցիներ — Ս. Աստուածածին, Ս. Սարգիս, Ս. Լուսաւորիչ:

Թալաս՝ 2 եկեղեցի.— Ս. Աստուածածին և Ս. Երրորդութիւն:

Քիւչիք Քէօյ — Ս. Ստեփանոս: Տերեփէնք — Ս. Թորոս:

Նիրզէ՝ Ս. Թորոս: Սարմըսազլը՝ Ս. Աստուածածին: Էֆքերէ՝ Ս.

Ստեփանոս: Մունճուսուն՝ Ս. Ոսկէ: Էփերէկ՝ Ս. Թորոս: Ֆենեսէ՝ Ս.

Աստուածածին: Էրքիլէթ՝ Ս. Գէորգ: Չոմազլը՝ երկու եկեղեցի

— Ս. Թորոս եւ Ս. Յակոբ: Ճիւճիւն՝ Ս. Աստուածածին: Ինճէսու՝

Ս. Թորոս: Թոմարգա՝ Ս. Պետրոս: Գալաճափերէն՝ Ս. Աստուածա-

ծին: Անունները կարելի չէ եղած ճշդել Ենիճէի, Սէօյիւտիլիի, Կէօ-

մէտիի, Թաչխանի, Սաղազի եւ Եաղտը-Պուրունի եկեղեցիներուն:

Թէեւ այդ վերջին 6 զիւղերն ալ դպրոցներ ունէին, որովհետեւ Սեպ-

տեմբեր 12, 1915ին գրաւուած հայ դպրոցներէն 24 հատին մէջ կան

անունները այդ վեց զիւղերու դպրոցներուն: Հայ դպրոցներու գրա-

ւումը տեղի ունեցած է ներքին գործոց եւ կրթական նախարութիւններուն կողմէ Յունիս 9, 1915 եւ Օդոսսոս 12, 1915 թուակիր հեռագիրներով:

**ԹՈՒՐԻՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՀԵՌԱԳՐՈՎ ՏՈՒԱԾ ԹԻՒԵՐԸ՝ ԱՆԳԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ
ՀԱՅ ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

Անգարա (կեդրոնական գաղա) — 3·176, Այաշ՝ 0, Պէյպագար՝ 0: Նալլու Պան՝ 1·015, Մըխալըճըզ՝ 90, Սիվրիհիսար՝ 4·101, Պալիա՝ 11· գումար՝ Անգարայի սանճագ՝ 8·393 հայ տարագրեալ: Եողկաթ (կեդրոնական գաղա) — 13·259, Ազ Տաղ՝ 3·208, Պողազլայան՝ 14·680: Գումար՝ Եողկաթի սանճագ՝ 31·247 հայ տարագրեալ:

Գըր Շէհիր (կեդրոնական գաղա) — 1·610, Քեսքին՝ 1·838, Մեհիտիէ՝ 52, Աւանոս՝ 0: Գումար՝ Գըր Շէհիրի սանճագ՝ 3·500 հայ տարագրեալ:

Զորում (կեդրոնական գաղա) — 1·202, Օսմանճըզ՝ 66, Սունկուրլու՝ 1·856, Իսքէլիպ՝ 42: Գումար՝ 3·166 հայ տարագրեալ:

Կեսարիոյ սանճագ՝ 47·617 հայ տարագրեալ:

Ընդհանուր գումար, Անգարայի նահանգ՝ 93·923 (տարագրուած հայեր):

Ասատ Ուրաս, 1950ին Անգարայի մէջ հրատարակած «Թարիխ-տէ Էրմենիլէր վէ Էրմենի Մեսեղիսի» («Հայերը Պատմութեան մէջ եւ Հայկական Խնդիրը», 785 էջ), էջ 143-44 կը նշէ 1914ին հայերուն թիւերը Անգարայի եւ Կեսարիոյ մէջ. — Անգարա՝ 44·507 լուսաւորչական, 7·069, կաթոլիկ, 2·381 բողոքական. գումար 53·957. Կեսարիա՝ 48·659 լուսաւորչական, 1·515 կաթոլիկ, 2·018 բողոքական: Գումար Կեսարիոյ հայերու՝ 52·192, գումար՝ Անգարայի նահանգի հայերու՝ 106·149:

Թրքական երկու վիճակագրութիւններ, երկուքն ալ՝ «պաշտօնական» — Անգարայի նահանգի հայերու տարագրութեան համար մին կ'ըսէ 93·923, միւսը՝ Ասատ Ուրաս 106·149: Տարբերութիւնը՝ 12·226:

Ասատ Ուրաս հայ կաթոլիկներու թիւը (Անգարայի նահանգին մէջ) ցոյց կու տայ 8·584, մինչ հայ կաթողիկէ պատրիարքարանի արձանագրութեան համաձայն 15·000էն աւելի է:

ԵՌԶԿԱԹԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ (ԹՐԲԱԿԱՆ) ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՊՐԻԼ 8, 1919

Ստորեւ տրուած բնագիրը առաջին անգամ ըլլալով ամբողջութեամբ կը հրատարակուի մեր իսկ թարգմանութեամբ, առնուելով «Տիւանը Էօրֆի մուհաֆեմաք զապըք մերիտէսի» («Թագվիմը Վեֆայի») թիւ 3617 կառավարական պաշտօնաթերթէն. —

Նախագահ (ատեանի) զօր. (Փերիֆ) Զեքի փաշա.

Անդամներ. — Զօր. (միրլիւս) Մուսթաֆա փաշա, զօր. (միրլիւս) Այի Նաղմ փաշա, զնդ. (միր ալայ) Ռեճէպ Ֆերիտ պէյ:

Դատաւարութիւնը կատարուած է ի ներկայութեան հետեւեալ ամբաստանեալներուն. — Եողկաթի կառավարիչի փոխանորդ (միւքեսարըֆ-վեֆիլի) եւ Պողազլայանի կառավարիչ (զայմագամ) Քե-ՄԱԼ ՊէՅի եւ Եողկաթի ժանտարմըրիի հրամանատար Թեիֆիֆ ՊէՅի(*):

«Տեղի ունեցած դատաւարութեանց համաձայն, երկու կողմի պահանջները եւ բացատրութիւններն ու պաշտպանողականները լսելէ եւ դատին վերաբերեալ բոլոր փաստաթուղթերը(**) ամբողջութեամբ կարդալէ եւ ուսումնասիրելէ Լուք, հարկ եղածը ընելու համար, յետ խորհրդակցութեանց, նկատուեցաւ, որ

Թէեւ ամբաստանեալները եւ իրենց պաշտպան փաստաբանները յանցանք գործուած ըլլալը ուրացած եւ ազատ արձակում պահանջած են, սակայն, իսլամական բարձր վճիռները եւ օսմանեան առարկայական օրէնքները եւ օրինական տրամադրութիւնները նկատի ունենալով, որ է՝ պաշտպանել երկրին բոլոր տարրերուն, առանց խտրականութեան, պատիւը, կեանքը եւ սեփականութիւնները, պահել եւ ապահովել ընդհանուրին իրաւունքը որեւէ վնասէ եւ խաթարումէ, պետութեան բոլոր պաշտօնեաներուն ամենազլխաւոր պարտականութիւններէն մին է այդ. — կը հաստատենք.

Պողազլայան (զաղա) զաւառակի (Անգարայի նահանգին մէջ) զայմագամ և Եողկաթի սանճագի փոխ-կառավարիչ (միւքեսարըֆ-

(*) Զինուորական Ատեանը իր վճռագրիմ մէջ չի յիշատակեր իր ակնարկած ռեթագործ միւս զինուորական պաշտօնեաներուն անունները:

(**) Ատեանը չի գշտակեր մասի իր ակնարկած հեռագիրներուն քուակամները եւ բովանդակութիւնը:

վեֆիլի) եղող ԳեՄԱԼ պէյ եւ գաւառակին (գաղա) ժանտարմըրիի հրամանատար Հաղարապետ Թեթֆի պէյ, իրենց պաշտօնատուններուն մէջ, տարադրութիւն հրամայուած հայերուն անօղնական կիները եւ անչափահաս մանչերն ու աղջիկները եւ նոյնիսկ պաշտօնապէս բացառութիւն հրամայուած անձերն ալ առանց նկատի առնելու, աքսորի ենթարկած են (լա էնլ քեհնիւր սելգ էյլետիֆվերի), եւ աքսորեալներու կազմած կարաւաններուն զրամները, գոհարեղէնները եւ արժէքաւոր իրերը ամբողջովին կողոպտելէ ետք (պատէք քեհնիւր), առանց նկատի առնելու անոնց անհատական իրաւունքները, անձնական կիրքերուն համաձայն քլած են եւ կարգ մը չարագործ անձերու ալ(*) ապօրինի գաղտնի հրահանգներ տուած եւ հաղորդագրութիւններ րրած են:

Մինչ յիշեալները (տարադրեալները) պէտք էր որ հանգստութեամբ եւ ապահովութեամբ (սալիմէն վէ մերֆիհէն) զրկելու անհրաժեշտ միջոցները ձեռք առնուած ըլլային, բնաւ նկատի չեն ունեցած եւ կանխամտածութեամբ (գաստէն) ոչ միայն զանոնք պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնել չեն հրամայած, այլև (ընդհակառակն) զանոնք ինքնապաշտպանութեան միջոցներէն բոլորովին զրկելու համար այրերուն թեւերը կապել տալու (**), կերպերը գործադրած են եւ ոճիրներ գործելու առիթ ստեղծած են: Եւ նոյնիսկ, յիշուած ոճիրներու մասին լսուելէ ետք, երբ բացատրութիւն պահանջուած է, ճշմարտութիւնը գաղտնի պահած են, եւ ոճիրները փոխանակ արդիւլելու, անպատասխանատու ոստիկաններուն հրամայած են ոճիրներ գործել: Եւ այդ ոճիրները դիւրացուցած են: Այնպիսի ոճիրներ, որոնք մարդկութեան զպացումներուն եւ քաղաքակրթութեան բոլորովին հակառակ են եւ խլամներուն տեսակէտով

(*) Զինուած չեքէներ եւ գիւղացիներ:
(**) Բնագրին մէջ.— «Զիւֆուրիմ գոլլերը պաղլաքարագ քասմիմ, վէ դարգը քաղպիգի քային էտիլէն փինայիմիմ իյգայընա մէյտան վերմէֆ... հազըյգաքլա, իյգայքըն մեմնիմէ սետտ չեմէֆ վէ էշխարը դայրը մետուլէյէ մետուլ օլան մետուր, մուհափըզլար իւգրիմէ ամիր օլարագ պիլ իյգամ, մեգասիտը լէիմեմիմ հուսուլընը քէյէիտ, քեհսիլ էյլեմէֆ սուրքթիքի իլէ, հըսսիյաքը ինսամիլէ վէ մետեմիլէ իլէ. վեմիմէ միմն էլ վուճուհ, քէլլիփ օլանմայան վէ քալքիքը իմտ էլ իսլամ քեպալիքը միմայարտան մաստուտ օլան մա գըթալ վէ մեհալ ուզարաքա սեպեպիլէք վերմիլ օլտուլարընը իսքիմայ օլունան շուհուտըն ալէլ տերեմաք վազըլ օլան գանաքպախը շահատարտան վէ պազը մետուրիմը ասֆերիլէ պէյիմլիքիմտէ քէադի էտիլէն մուպապերաքը ըեսմիլի քելկրափիլէ միտերիմաքընտա»:

ալ մեծագոյն ոճիր նկատուած ջարդերու, կողոպուտի եւ թալանի պատճառ եղած են:

Լսուած վկաններուն տուած վկայութիւնները բացորոշ կերպով ապացուցած են, որ կարգ մը դինուորական պաշտօնեաներ իրենց մէջեւ փոխանակած են հեռագրային թղթակցութիւններ, որոնց պարունակութիւնը ամբաստանեալներուն կողմէ կ'ուրացուի բազմաթիւ պատասխաններով: Տրուած բազմաթիւ հարցումներուն քննութենէն տեսնուած է, որ տարադիրներու կարաւաններուն մանուկները եւ կիները իրենց ծնողքէն եւ պաշտպաններէն զրկուած են եւ վերոյիշեալ ոճիրները գործուելու համար իրենց (պաշտօնեաներուն) նպատակները առաջ տարած են:

Ի վերջոյ պաշտպան փաստարաններուն եւ ամբաստանեալներուն վերջին պաշտպանողականները լսուած են եւ խօսած են (Հայոց) յեղափոխական շարժումներու մասին, ըսելով թէ թշնամիի գրաման տակ եղած հողամասերուն մէջ կարգ մը թեթեւամիտ (սեպիլիֆմաղգան) քուփքանիներու ներշնչումով եւ քաջալերանքով թշնամիին կողմը դարձած են եւ մտանակցած են խստանակչական շարժումներու, ապստամբութեան դիմած են եւ Օսմանեան երկրին միւս կողմը գըտնուող իրենց ազգակիցներուն չար մտքերուն հետեւած են:

Բոլոր այդ յիշուած պարագաները արդարացման փաստեր չեն այդ տեսակ ոճիրներ գործելու, քանի որ Հայ ազգին եթէ մէկ կոտորակն իսկ մասնակից եղած ըլլայ(*), մնացեալ ժողովուրդը փաստով ապացուցած էր իր հաւատարմութիւնը եւ բոլոր պաշտօնեաները, ինչպէս վերեւ յիշուած է, չարամիտ զպացումներէ, անձնական վրէժխնդրական միտումներէ հեռու պէտք էր մնային եւ իրենց պաշտօնին բերումով(**), առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, գթացող հօր մը նման, իրենց յանձնուած ժողովուրդին կեանքը եւ իրաւունքները պէտք է պաշտպանէին եւ ատիկա բացարձակ հրաման մըն էր մեզի:

Յիշեալ Գեմալ պէյը, իր պաշտպանողականին մէջ, Վանի,

(*) Բնագրին մէջ.— «...Զման գեման գուհուր էտէն պու կիպի քեշեպպիւսաքը միւփսիտֆեարանէյէ էրմեմի միլիքիմիմ պիր միւգիիշքիրաֆ էյլեմիլ վէ միւքեպագընընը, սուվէրը ատիտէ իլէ սատագաք վէ մեպուքիլէք էքմիլ օլմաղլարը իլէ մա պերաիմ, վէ...»:

(**) Դատարանի անդամ բուրք գորավարները միամիտ կը ձեւեման եւ «չեմ հասկնար» որ ոճիրներու վերաբերեալ հրահանգները ծածկագրով հաղորդուած եւ հրահանգուած են պետութեան կեդրոնէն:

էրզրուժի եւ Պիթլիսի մէջ(*) իսլամներուն դէմ անդթութիւններ գործած ըլլալու պատասխանատուութիւնը բեռնել ուզած է Յողկաթի հայերուն վրայ, որոնք որեւէ յայտնի ապստամբական շարժում ունեցած չեն, ատիկա ոչ օրէնքի, ոչ ալ խղճի համաձայն է (հիշ պիտի մեւազի գամուկի վէ վիմտանի պուլունմատըղը):

Մինչ յիշեալները (ամբաստանեալները), վրէժի և անձնական շահու մղումով, ոչ միայն սանձազին իսլամները, այլ եւ ընդհանուր իսլամները այդ ազգին (հայուն) դէմ ջարդ կատարելու վտտ մտայնութեամբ շարժած են(**) եւ ջարդերը բնական եւ անհրաժեշտ նկատած են:

Փաստաթուղթերուն բովանդակութիւնը կ'ապացուցանէ, որ երեք անպատասխանատու անձեր կառավարական պաշտօնեաներու վրայ հրամայող դարձած են եւ ստիպած են իրենց հրամաններուն հնազանդելու կարաւաններու վրայ հսկողները: Իրենց ձեռագիրներով գրուած փաստաթուղթեր կը հաստատեն, որ ոստիկանները ընկերացած են՝ ջարդի նպատակով, եւ այդ մասին որեւէ կասկած կամ անորոշութիւն չկայ բնաւ:

Յիշուած փաստերով եւ փաստաթուղթերով վճռաբար կը հաստատուի ամբաստանեալներուն յանցաւորութիւնը և պաշտպան-փաստարաններուն առաջ բերած պաշտպանողականներն ալ բացարձակապէս ոչինչ կ'արժեն (միտափառքը քիւլիյէն պաթըլ):

Ընդհանուր Դատախաղութիւնն ալ, պետական Պատժական օրինադրէն 56րդ յօդուածին գործադրութիւնը կը պահանջէ: Սակայն ատիկա չի պատշաճիր:

Յիշեալ ամբաստանեալներէն՝ Քեմալ եւ Թեֆիք պէյերը կը

(*) Զինուորական Ատեմը կ'ընդունի որ «այդ կատարուած ռմիքները օրէնքի եւ խղճի դէմ են, նաեւ մարդկութեան դէմ են»:

(**) Բնագրիմ մէջ.— «... Վէ հաթթա եալըմըզ, գիրը իտաքեսիմիտէ պուլունման, սանձագ (Յողկաթ) էհալիի իսլամիյեսիմի տէյի, պիլ ումում իսլամլարըմ մերգումէ աէյիմէ պիլ մուգապիլէ քագթիլ ֆիքը սաֆիմիմտէ պուլունմալարըմը քապիի, վէ, ատեթա լագըմ կէօրմեսի, էվրագը մեմուտէ մէյեսըմտա պուլունման վէ միմտեթիթաթը, իւլ շախսը գայը մէէտուլըմ, մեմուրը բեսի իւզերիմէ ամիր, վէ հեր կէօմա էմիրիբիմէ իթաթա գաֆիլէ մուհաֆըզլարըմը մեմպուր գըլմըջ օլամ, իսաթթը տեսի իլէ, մուհարրէր վասիֆանըմ, իրսալիմտէմ մագսատը, գաֆիլէ էյեսըմըմ քագթիլը օլուզըմտամ շիպիլէ վէ քերեստիւտ պրաֆմատըզըմտամ տեյալիլը մեպսուզէ վէ պերահիմը գաթէյէ»...:

դատապարտուին պետական Պատժական օրինադրքի 45րդ յօդուածին համաձայն: Իրենց յանցաւորութիւնը միաձայնութեամբ վճռուած է:

Պատիժներու սահմանումի մասին անոնց գործած ոճրային արարքներուն համար 45րդ յօդուածին տրամադրութիւնը հետեւեալն է. «Գլխաւոր գործակից ոճրագործներէն (հէմ ֆիլը) իւրաքանչիւրը որպէս անկախ ոճրագործ (Փայիլը միւսվազըլ) կը նկատէ, եւ Քեմալ պէյը, որ յիշեալ սանձազին (Յողկաթի) վերին քաղաքային պաշտօնեան էր, սպանութեանց, կողոպուտի եւ գողութեան կազմակերպիչ եղած է, եւ կարգ մը անպատասխանատու անձեր տարագիրներու կարաւանին ընկերացուցած եւ առանց յարգելու պաշտօնեաներու աստիճանները, ուղղակի պետ նշանակած է Շիւքրի Չալուչը(*) կարաւաններու վրայ եւ կարաւանները անոր յանձնած է, նկատուած է գլխաւոր մասնակից-ոճրագործ (Փայիլը ապի)(**):

Իսկ յիշեալ Թեֆիք պէյին ալ երկրորդական մեղսակից (Փերէմ զիմեսիլէ) ըլլալուն մասին համոզում գոյացուած է:

Ջարդի, կողոպուտի եւ գողութեանց (քագթիլ, մեհպ ու դարէթ) նկատուած այդ արարքները 45րդ յօդուածին համաձայն հեմֆիլը (գործակից յանցաւոր) որակուած են: Զինուորական Պատժական օրէնքի 171րդ յօդուածի եւ քաղաքային Պատժական օրինադրքի 170րդ յօդուածի տրամադրութեան համաձայն են:

Յիշեալ 171րդ յօդուածը կ'ըսէ.— «Ըլլայ զինեալ, ըլլայ ոչ-զինեալ հրապարակաւ յարձակում, խմբովին կամ ընկերներով անձերու դէմ, ուտեստեղէնի կամ ապրանքի թալան ընողները մահուամբ կը պատժուին»:

Նաեւ, կայսերական քաղաքային Պատժական օրինադրքի 170րդ յօդուածը կ'ըսէ.—

«Կանխամտածութեամբ անձ մը սպաննողը, կամ հայր, կամ մեծ հայր կամ մայր եւ կամ մեծ մայր մը սպաննողը, նոյնիսկ առանց կանխամտածման, կանխամտածութեամբ կատարուած ոճիր կը նկատուի եւ մահուան կը դատապարտուի»:

(*) Այդ Շիւքրիմ ոստիկան զինուորներու հարիրապետ էր:
(**) Դատարանը գէթ կ'ընդունի որ ոճրագործ պաշտօնեաներու եւ չեթէմբու հետ գործակցած է նաեւ քիւլադուած բուրֆ խուժանը, ցեղասպանութեան գործիմ մէջ:

Վերոյիշեալ յօդուածներուն տրամադրութեանց համաձայն, Քեմալը կը պատժուի մահուամբ^(*): Եւ վերոյիշեալ 45րդ յօդուածի 2րդ պարբերութիւնը կ'ըսէ՝ «Եթէ գլխաւոր արարքը կատարող մահուան կամ մշտական թիպարտութեան կը դատապարտուի, աւոր մեղսակից եղողն (Փերէն գիմետխէլ) ալ 15 տարիէն պակաս շրջալու պայմանով ժամանակաւոր թիպարտութեան կը դատապարտուի»:

Այս վճիռները տրուած են միաձայնութեամբ: 30.08.1919 (8 Նիսան 1334) 6 Բեքէպ 1337

Ստորագրութիւնները գատուորներու՝ (20ԲԱՎԱՐՆԵՐ) ՆԱՉԼՄ, ՉԻՔԻ, ՄՈՒՍԹԱՖԱ Ա.Լ.Ի ՆԱԶԼՄ, ԲԵՃԻՊ ՅԵՐՏԻ

Պատերազմական Ատեանի Արձանագրութեան Յանձնախումբի պետ՝ Ապիտին Տաւեր, «Թագովմը Վեքայի» թիւ 3617:

Նահանգներու մէջ, տեղական կառավարչութիւնները նախապէս որոշած էին տարագրեալներու կարաւաններուն անցնելիք ճամբաները եւ թակարդի վայրերը, ամայի ձորեր կամ հովիտներ, կիրճեր, իբր սպանդանոց, ուր գինուած շեթէական խումբեր, գինեալ թուրք խուժանը պատրաստ էին յարձակելու՝ հրամանի վրայ: Այսպէս, միայն Եողկաթի շրջանի 40.000է աւելի հայերը կոտորուեցան Եողկաթ-Պողազլայան ճամբուն արեւմուտքը, Գարապըլըզի ձորը, Քելլէր, Ապպաս ջրաղացքի մօտերը, Սըրչալը Թեքէ, Ճաւլախ, Եողուն-Հիսար, Եարաշ-Տերէ, Գուրտ-Տերէ, Արփա-Տերէ եւ այլն, մարդակերպ գազաններու կողմէ, որոնց հրամայողներն էին տեղւոյն վրայ վալիի փոխանորդ Աթըֆ, Պողազլայանի գայմագամ Քեմալ պէյ կոչուած հրէշը (վանեցի):

Իսկ Կեսարիոյ ժողովուրդին մեծ թիւով այրերը՝ սանձագին կից Շարղըլայի գաղային Լնթակայ Կեմերէկ աւանին մօտ ՄՈՒՏԱՐԱՍՈՒՆ կոչուած գիւղի ձորերը՝ Կեմերէկ աւանէն երեք քառորդ ժամ հեռու, եւ Խընզըր Տաղի եւ Խընզըր-Սուլու կոչուած գետակի ձորերուն մէջ սպաննած են:

Թուրք կառավարութիւնը, իր ծրագրած եւ գործադրած անասելի ոճիրները չբնականաբար համար, հրատարակեց թուրքերէն գիրք

(*) Քեմալ պէյի կախուելէն ետք, Կ. Պալսոյ թուրք ժողովուրդը եւ թուրք բիրքերը գայմ ճկատեցին շառաչին ճահատակ, առաջին գոն եւ ազգային հերոս» (Իւր շեհա, Իւր դուրպան, միլլէթ գահրիմանը):

մը. յետոյ Ֆրանսերէն եւ գերմաներէն գրքոյկներ, ոմանք ալ պատկերազարդ, նոյն գրքին դրեթէ թարգմանութիւնը: Թուրքերէնին վերնագիրն է՝ «Էրմենի բումիթելիքինն ամալ վէ հարեֆեաթը իլս-թիլալիյէսի իլլանը մեշրուքիթեթուէն էվվէլ վէ սոնրա» («Հայ կոմիտէներուն նպատակները եւ յեղափոխական շարժումները Սահմանագրութեանէն առաջ եւ ետք»), տպարան՝ Օրխանիէ, 1331 (1916):

Ստուծիւններու, կեղծիքներու հաւաքածոյ մըն է այդ գիրքը: Անգլիական Կապոյտ գրքին մէջ, էջ 23, պատմարան թոյնպի կը գրէ՝ «Երիտասարդ թուրք կառավարութիւնը հրատարակեց իբրեւ չբնական գիրք մը, որ աւելի մոլեռանդ ատելութիւն մը գրողելու համար էր հայերու դէմ: Հայկական անջատողական շարժումի մասին գրուածքը ո՛րքան ծիծաղելի, ա՛յնքան ալ ոճրային է» («Ուիչ իգ Էգ ըիտիքըլըս, Էգ իթ իգ քրիմինըլ», վաւերագիր 11, էջ 23):

Թուրք կառավարութիւնը, Անգարայի նահանգին մէջ, մոլորեցնելու համար հանրութիւնը եւ ճշմարտութիւնը սքողելու նպատակով, իբր ինքնարդարացում, ստուծեամբ Անգարայի նահանգին եւ Եողկաթի սանձագին եւ այլ վայրերու մէջ գործուած ոճիրներուն պատուականներ կը յեղյեղէ. իբրև թէ «Բուժակիլին, Իւրենճ, Մենթեշէ եւ Իյոէլի հայ գիւղերուն մէջ ղէնք եւ պոմպա գտնուել է»: Ըսենք որ ջարդէ վախի հետեւանքով պահուած ըլլան այդ քանի մը հարիւր ղէնքերը, 42.000 հայեր, Եողկաթ, 70.000 հայեր այլ գիւղերու մէջ, կիներ, մանուկներ սպաննելու, սեփականութիւններ կողոպտելու, բռնաբարութիւններ կատարելու ի՛նչ փցուն պատուակ (տե՛ս թըրքական «Հայ Յեղափոխական Շարժում»ը, էջ 195): Մինչ թրքական Չինուորական Ատեանը եկաւ հաստատեց թուրքին պետականորէն կազմակերպած ոճրագործութիւնը:

ՈՃԻՐՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ՝ ԻՆՉ ԷՐ ԴԻՐՔԸ

ԳԵՐՄԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ

Պատերազմի նախօրեակին գերման դեսպան Վանկենհայմ հրաւիրեց էր «Սապահ» խմբագրապետ Տիրան Քէլէկեանը և Հ. Յ. Դ. ի ղեկավարներէն է. Ակնունին, եւ անոնց հետ մտերմական խօսակցութիւն ունեցեր էր Հայ Դատի մասին (տես «ՏԻ ԿՐՈՍԷ ՓՈԼԻԹԻՔ» ի

հաւաքածոն) : Այդ խօսակցութեան (ֆանֆիտեմըլ) գաղտնի մասերը յաջորդ օրն իսկ հասած էին Թալէաթի ականջը : Գերման ղեսպանը թուրքերուն օժանդակող էր :

Յունուար 20/Փետրուար 2, 1915ին Թալէաթ եկած էր գերման ղեսպանատուն եւ Վանկենհայմին պարզած էր կազմուած ծրագիրը հայերու դէմ, եւ գործադրութեան առթիւ խնդրած էր գերման ղեսպանին որ արդելք չըլլայ : Եւ Քայզերական Գերմանիա համաձայն ըլլալով թուրքին ծրագրին՝ անտարբեր գտնուեցաւ ոճիրներու ամբողջ ընթացքին :

Ապրիլ 24ի ձերբակալութիւններուն առիթով, փոխանակ բարեացակամ վերաբերում ցոյց տալու, ընդհակառակն, չարակամութեամբ արձագանդ տուաւ այն սուտ լուրին, թէ «հայերը մտադրած են Սուլթանը օղը հանել, անոր ծննդեան տարեդարձի օրը» :

Երբ 1915 Ապրիլի եւ Մայիսի ընթացքին մասնակի ջարդեր կատարուած էին Էրզրում, Դերջան, Պիթլիս, Մուշ, Սասուն, Ձէյթուն եւ Կիլիկիոյ դանազան շրջանները, Փրանսա, Անգլիա եւ Ռուսիա «Հաւաս» գործակալութեան խողովակով ծանուցագիր մը տուած էին, թէ «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ դործուած այդ ջարդերուն մասնակից եղողները անձնապէս պատասխանատու պիտի բռնուէին, եւ ասիկա Բարձրագոյն Դրան հաղորդած էին» : Այս պարագան յիշուեցաւ նաեւ Նիւրեմպերկի դատավարութեանց ատեն՝ փրոֆ. Անտրէ Կորսի կողմէ (տե՛ս «Միջազգային քոնֆերանս»՝ զինուորական դատավարութեանց», էջ 293 եւ 360) :

Համաձայնական պետութեանց ծանուցագրին բնագիրը տեսնել նաեւ «Միացեալ Նահանգներու Արտաքին Յարաբերութիւններ, Յաւելուածական հատոր», 1915, էջ՝ 981) :

Իսկ Նիւրեմպերկի դատավարութեանց ընթացքին հայոց մասին յիշուածը տեսնել նաեւ «Դատավարութիւն Պատերազմական Գըլխաւոր Ոճրագործներու», հատ. 22, էջ 498, եւ փրոֆ. Ռաուլ Հիլպերկ, էջ 687 :

Յունիս 4/17, 1915ին Թալէաթ դարձեալ եկաւ գերման ղեսպանին՝ Վանկենհայմի հաղորդելու, որ «հայերը բոլոր նահանգներէն պիտի մաքրուին» (տես ղեսպանին բնագիրը) : Վանկենհայմի կողմէ՝ ոչ մէկ քայլ միջամտութեան :

Յուլիս 4/17, 1915ին, գերման ղեսպանը հաղորդագրութիւն մը յանձնեց թուրք կառավարութեան, ուր յիշած էր, թէ ինք «համաձայն է թուրքերու ճնշման միջոցներուն (հայերու դէմ), որով ներքին կացութիւնը կ'ամրապնդուի» : Ոչ միայն ատով բաւականա-

ցած չէ, այլեւ գերման մամուլին մէջ թրքական ստութիւններուն եւ հերքումներուն տեղ տուած է :

Յիշենք սակայն, թէ Հալպի գերման հիւպատոսը, որ փողոցներուն մէջ տարագրեալ հայերու դիակներ տեսած էր, իր աչքերուն չէր հաւատացած գերման թերթերու մէջ կարդալով թուրքերուն հերքումները եւ անոնց չուայլուած շողոքորթութիւնները (տես ստորեւ զրութեանց քննարկը (տաֆ. 120, էջ 111, Յուլիս 14/27, 1915) :

Տես Հ. Յ. Դ. ի «Իրօշակ»ի հետագիրը եւս, որ գրուած է թրքական ինքնարդարացման գրքին մէջ, էջ 243, եւ Համաձայնականութեւն ծանուցագրէն ետք :

Հ. Յ. Դ. յայտարարած էր, թէ իրաւապէս եւ բարոյապէս պատասխանատու պիտի նկատուի թուրք ղեկավարները, եւ գէթ մաքրագործեց զլիաւոր ոճրագործներէն մի քանին :

Թալէաթ-Վանկենհայմ այցելութիւններուն զուգընթաց, Էնվէրալ այցելելու էր գերման ղեսպան Վանկենհայմին, Մայիս 18/31, 1915ին եւ անոր յայտնելու էր ծրագիրը «բոլոր հայ դպրոցները (*) փակելու» եւ «բոլոր ապստամբական վայրերը տարագրելու», այլ բացատրութեամբ՝ կ'ուզուէր «քնաջնջել հայ ազգը» : Իսկ գերման ղեսպանը կ'ընդունէր ասիկա, որպէս «ստիպողական գործ» եւ իր կառավարութեան կը հաղորդէր ըսելով, որ «չենք կրնար արգիլել» («Նիիք» կառուցագրի ին հիմնտեռն տիւֆըն) :

ԾԱՆՈԹ. — Գործուած ոճիրներու օրերուն, ձեմալ փաշա արգիլեց որեւէ լուսանկար տարագիրներու ենթարկուած վիճակին մասին. հաւաքել տուաւ եւ ոչնչացուց օտարներու ֆիլիշէները եւ լուսանկարները զրկեց Պատերազմական Ատեան, այն պնդումով, որ «պատերազմի դաշտին վրայ թշնամի լուսանկարիչներ» առած էին զանոնք (Օգոստոս 15/28, 1915, վաւերագիր 166, էջ 151-152) :

Նոյն ձեմալ փաշան էր, որ իր 4րդ զօրաբանակէն առնուած զինուորներով աւերեց Ձէյթունը եւ Ուրֆան :

Որոշ էր, թէ պաշտօնական Գերմանիան, պատերազմի սկիզբէն իսկ, տեղեակ էր հայոց տարագրութեան եւ ծրագրուած սպա-

(*) Հայոց դպրոցներու գրաւման մասին մեր ձեռքին տակ կան 2 հեռագիրներ. մին Յունիս 9, 1915, միւր Օգոստոս 12, 1915 թուակիր, որոնցմով կը հրամայուի հայոց դպրոցները յատկացնել բուրժ մուհաճիւններու եւ մէկ մտքը կրթական, միւս մաս մըն ալ զինուորական իշխանութեանց յանձնել :

նութեանց միջոցներուն: Եթէ այդ պարագան ժխտել ուզուի, փաստը կայ: Յունուար 20, 1915ին եւ Յունիս 4, 1915ին (հ. տ.), Թաւաթ, գերման դեսպանատուն երթալով, բացատրած էր Վանկենհայմի իրենց մինչ այդ ըրածները եւ ընելիքները՝ հայերը տարագրելու եւ բնաջնջելու մասին, «օգտուելով պատերազմի առիթէն, առանց արտաքին միջամտութեան» (Յունիս 4/17, 1915, վաւերագիր 81, էջ 84):

Եւ գերման դեսպանատունը այս ձեւով կատարուած աշխարհազոյրդ ոճիրի մը հանդէպ անտարբեր հանդիսատես եղած էր կամ՝ ոճիրին ահաւորութիւնը տեսնելու կամ ըմբռնելու կարողութենէն զուրկ էր, ինչ որ ճիշդ չէ:

Հայոց դէմ գործուած այս մեծ եղեռնը «ամօթալի, անջնջելի արատ մըն է համաշխարհային պատմութեան մէջ, որ գործուեցաւ ժողովուրդի մը դէմ հուրով եւ սուրով եւ Գերմանիան (զինակիցը թուրքին) անտարբեր դիտեց» (Օգոստոս 3/16, 1915, վաւերագիր 143, էջ 134-135):

Գերման դեսպան Վանկենհայմի մահէն 2 ամիս ետք, նոր դեսպանը՝ Կոմս Վոլֆ-Մեթենիս, թէեւ շատ ուշ մնացած, ղիմումներ ըրաւ թուրք կառավարութեան մօտ, բայց ապարդիւն, եւ տեսնելով այդ, եզրակացուց, թէ «թրքական այն խոստումները, որոնց համաձայն հայերու դէմ այլեւս ջարդ եւ հալածանք պիտի չչարունակուին, քացարակապէս անարժէք սուտեր են» (Նոյեմբեր 24/Դեկտեմբեր 7, 1915, վաւերագիր 109, էջ 202):

Եւ վերջապէս Գերմանիոյ օրուան վարչապետ Փոն Պեթման-Հոլվեկ, այդ քար-սիրտ անձը, ծիծաղելի միամտութեամբ մը հաճեր էր դրել, որ «թուրք կառավարութիւնը կրօնի համար չհալածէ քրիստոնեաները», առանց սակայն որեւէ լուրջ պնդումի: Ասիկա «գայլի գլխուն Աւետարան կարդալու» պէս բան մըն էր, բոլորովին անարժէք եւ սուտ-բերան, քանի որ թուրքերը կը շարունակէին ջարդել հայ զինուորները եւ իսլամացնել որբերը եւ կիները (Հոկտեմբեր 30/Նոյեմբեր 12, 1915, վաւերագիր 198, էջ 191):

Գերմանիա, թուրքիոյ ոճիրը արդիւնելու համար, գործնական որեւէ քայլ առած չէր:

1918ին գերման դեսպան Կոմս Եոհան Պերնստորֆ արձանագրեր է թուղթի վրայ, թէ «քրիստոնեայ հին ազգի մը բնաջնջման մէջ պատասխանատուութիւն ունին նաեւ Աւստրիա եւ Գերմանիա»: Կոկորդիլոսի արցունք:

Վերոյիշեալ Կոմս Պերնստորֆը, 1918ին Կ. Պոլիս դեսպան գալէ

առաջ, Ուաշինկթընի գերման դեսպանն էր եւ 1915ի ամառը, կատաղի ջարդերու օրերուն, հերքումներ հրատարակել կու տար ամերիկեան թերթերուն մէջ, ի նպաստ թուրքերուն:

Հոռոմի Քահանայապետը, Պենետիկոս 15րդ Սրբազան Պապը, աշխարհի 558.000.000 կաթոլիկներու հոգեւոր պետը, Սեպտ. 10, 1915ին (ն. տ.) նամակով մը խնդրած էր Սուլթան Բեշատէն (Սուհամէտ Ե.), որ միջնորդէր՝ վայրագութիւնները դադարեցնելու համար: Բայց այդ նամակը թուրք նախարարները 3 ամիս պահած էին, որպէսզի ոճիրը լիովին գործադրուէր, եւ արդէն այդ ժամանակէն ետք ղիմումը ուշ մնացած կ'ըլլար, թէեւ ժամանակին ալ տրուած ըլլար՝ մեծ օգուտ պիտի չունենար, նկատելով որ «ճիհատ»ը հրատարակուած էր նոյնինքն խալիֆային կողմէ: Ատկէ զատ Սուլթանն ալ ի վիճակի չէր իր զապանացած նախարարները զսպելու եւ դարձած էր խամաճիկ մը անոնց թաթերուն մէջ: Այդ նախարարները ծաղրանքի նիւթ ըրած էին Պապին այդ ղիմումը, զոր կը նկատէին թըշնամական եւ որեւէ բողոք կը մեկնարանէին իրրեւ միջամտութիւն: Եւ հայ կաթոլիկէ եպիսկոպոսներ, քահանաներ, գթութեան քոյրեր եւ ժողովուրդ բռնարարուեցան, սպաննուեցան, իրենց լուսաւորչական եղբայրներուն եւ քոյրերուն նման:

ԱՅՍԸ, Անգարայի նահանգին մէջ, Անգարա քաղաքէն 9 ժամ հեռու (21 մղոն) դէպի արեւմուտք բարձրացող՝ Արաշ Պէլ կոչուած 3800 ոտք բարձր լեռան ետեւը՝ ձորի մը մէջ աւան մըն է, նոյնանուն գայմազամլըգին մէջ: Մեր առաջնակարգ՝ անուանի մտաւորականներէն 75 հոգի բերած էին այդտեղ զինուորական հսկողութեան տակ եւ այդ աւանէն 15 վայրկեան հեռու՝ Սարը Գըշա կոչուած վայրը եւ փակած էին միայարկ ընդարձակ շէնքի մը մէջ, որ երկաթեայ պատուհաններով տեսակ մը բանտ էր: Այդ վայրը մեկուսացեալ մտաւորականներու եւ կուսակցական ղեկավարներու առժամեայ կայանն էր, մինչեւ իրենց սպանդը:

Այսչէն 3 ժամ դէպի արեւելք (Անգարա քաղաքի ուղղութեամբ) կար զուտ հայ զիւղ մը՝ Սթանոս, որուն ճակատագիրը բազմաթիւ հայ զիւղերու նման շատ աւելի անողորմ եղած էր, քան Չեխոսլովաքիոյ մէջ Լիտիչը՝ նացիներու ձեռքին տակ:

Սթանոսի այրերը ձերբակալելով բերած էին Անգարայի բան-

տը, յետոյ՝ սպաննած, իսկ կիները եւ մանուկները բռնարարելէ ետք նոյնպէս սպաննած էին տեղւոյն վրայ, Այաչի հիւսիս արեւմուտքը գտնուող Գարա-Գայալար գիւղի մոլլային՝ Գարա Մեհմէտի առաջնորդութեամբ, տեղւոյն թուրք զիւզացիները: Սթանոսը այսօր քարտէսէն սրբուած է եւ այդ շրջանը կը կոչուի «Ձըր» անունով:

Այաչի 75 բանտարկեալ հայերէն 10 անձեր միայն ողջ մնացած են:

Նոյն ատեն (Ապրիլ 14ին) Քեանկրրը բերուած էին 150 հայեր, բոլորը Կ. Պոլսէն, Թալէաթի հրամանով եւ զործակցութեամբ ոստիկանապետ Պետրիի եւ կեղրոնի բանտապահ Իպրահիմի, վանոնք ալ անհետացնելու համար աստիճանաբար:

Չանկրրը (Քեանկրր) հոռոմէական կայսրութեան ժամանակի ԿԱՆԿՐԱՆ է (Ժերմանիքոպոլիս)՝ կը գտնուի երկու գետակներու միացման կէտին վրայ, որոնք են Կորկան Սու եւ Աճը Սու: Քաղաքը շինուած է հին բերդի մը աւերակներուն վրայ: Քաղաքին մէջ կայ շէնք մը որ կը կոչուի Մեսնիտ Թաշ: Երբ օսմանցիները մտան Չանկրրը առաջին անգամ 15րդ դարուն, այդ Մեսնիտ Թաշի կոչուած վայրին մէջ ջարդեցին տեղւոյն քրիստոնեաները: Շէնքին քարերուն վրայ կայ յունական արձանադրութիւն մը: Այդ շրջանին մէջ կան աղի հանքեր: «Աճը Սու» կոչուած գետը աղի ջուր է: Քաղաքի կլիման վատառողջ է եւ ջերմի հիւանդութիւնը՝ ընդհանուր: Այդ շրջանը հոռոմէական նահանգ դարձած օրերուն, Գաղատիոյ (Կալաթիա) մայրաքաղաքն էր: Յետոյ դարձաւ Պապղակոնիոյ առաջնորդանիստ քաղաքը: Այդ շրջանները թուրքին անունը անգամ լսուած չէր:

Մեր 150 հայ մտաւորականները եւ առեւտրականները բանտարկուած էին հոն, թրքական զօրանոցի մը մէջ:

Երկարօրէն գրուած է Յունիս 2/15, 1915ին Կ. Պոլսոյ մէջ 20 հնչակեաններու կախաղանի մասին: Բայց այդ զոհերուն բազմապատիկը կախաղան հանուած են Հայաստանի նահանգներուն և Թուրքիոյ այլ հայաշատ քաղաքներուն մէջ, և անոնց մասին դոյզն ծանօթութիւններ կան միայն:

Անգարայի նահանգի միայն Կեսարիա քաղաքին մէջ 62 կախաղաններ բարձրացան հայ ղեկավարներու, նոյնպէս Սեբաստիա քաղաքին մէջ՝ աւելի քան քսան, բացի բազմահազար հայերէ, որոնք խաբերայութեամբ, տեսակցութիւն մը ունենալու կամ հարցումի մը պատասխանելու պատրուակին տակ բանտ առաջնորդուած էին, եւ յետոյ կեղծ պատերազմական ատեաններու սուտ ու փուտ վճռագրով,

կեղծ ամբաստանութիւններով, իբր «ապստամբական շարժանց պատկանողներ», սպաննուեցան ամենավարագ կերպերով:

Այաչի դաղային (դայմագամլըզ) մէջ արգելափակուած հայ մտաւորականներուն, կուսակցական ղեկավարներուն վախճանը հետեւալը եղաւ.

75 արգելափակուածներէն 12 անձեր ձեռով մը ողջ մնացին: Մնացած 63էն 1ը՝ Մուրատ Պոյաճեան (հնչակեան անուանի հերոս) Մայիս 15, 1915ին Այաչէն Կեսարիա տարուեցաւ: Ան երեսփոխան էր Գողանի (Հաճընի) եւ հոն (Կեսարիոյ մէջ) Յուլիս 31, 1915ին, թուրքերու Շեքեր Պայրամին 2րդ օրը, Ուրբաթ՝ կախուեցաւ, ամբողջ երկուքուկէս ամիս բանտի մէջ ամէն տեսակ շարչարանքի ենթարկուելէ ետք:

Այաչի մէջ մնացած 62 անձերէն 6ը՝ Ակնունի եւ 5 ընկերները՝ Խաթալ, Չարդարեան, Մինասեան, Ճանկիւլեան (հնչակեան) եւ Տաղաւարեան (բարեկործական) Մայիս 25, 1915ին, Տիգրանակերտ տարուելու պատրուակով, բերուեցան, հսկողութեան ներքեւ (մահֆուզէն), Ուրֆայէն անդին՝ Սեւերեկի ուղղութեամբ, Գաբանորուս ըսուած վայրը, ուր խողխողուեցան չերքէզ Ահմէտի եւ Խալիլ պէյի ընկերացած չեթէներով, ինչպէս որ խողխողուած էին Ուրֆայէն 6 քլմ. հեռու, Գարա Քէօփրի գիւղին մօտ Վարդգէսը եւ Չօհրապը, Յուլիս 6ին, Ուրֆայի առաջնորդին հետ:

Այաչ մնացած 56ը երկու անգամով, Յունիս 29, 1915 (հ. տ.), Ռամաղանի Ա. օրը ճամբայ հանուեցան դէպի Անգարայի բանտը: Առաջին խումբը՝ 38 անձ, երկրորդ խումբը՝ 18 անձ:

Առաջին խումբի 38 անձերը, թեւերը կապուած վիճակի մէջ, ա'յն ձեռով, ինչպէս որ Եողկաթի վճռագրին մէջ արձանագրուած է, տարուեցան Անգարայէն դէպի հարաւ՝ 27 մղոն հեռու (հետիոտն 9 ժամ), ճամբուն հղերքը՝ Պէյնամ կոչուած գիւղը, որուն հարաւի կողմը կան Գույրուզի-Տաղի անտառապատ ձորերը, ուր սպաննուեցան Յուլիս 22ին: Այդ սպանութեանց ներկայ էին, բացի վալիի փոխանորդ Աթըֆ կոչուած հրէշէն, նաեւ Անգարայի ոստիկանապետը եւ ժանտարմրիի հրամանատարը, որոնք ականատես եղան, նկարեցին փողոտուած դիակները, անդամահատուած, ոմանց աչքերը փորուած վիճակի մէջ:

Այաչի երկրորդ խումբը՝ 18 հոգի Անգարայի բանտէն, նոյն ձեռով կապուած, կէս գիշերէն ետք, տարած են Անգարայի հիւսիսը՝ 12 մղոն հեռու քաղաքէն՝ Գափաքլը-Տերէ կոչուած վայրը, նոյն ձեռով փողոտելու համար անոնց մարմինները:

ՊԵՅՆԱՄԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՍՊԱՆԴԵՆ

ՎԱԻԵՐԱԳԻՐ ՄԸ

Պէյնամի սպանութեանց մասին անդլիական վաւերազիր մը, թիւ 97, հետեւեալ մանրամասնութիւնը կու տայ. — «Կապուած բերուած բանտարկեալները յարձակում կրեցին թուրք զիւղացիներու վայրենի հորդայի մը կողմէ: Տրուած հրամանին համաձայն, բոլորը կոտորուեցան մահակներով, մուրճերով, կացիններով, մանգաղներով, բահերով և սղոցներով, մէկ խօսքով՝ այն տեսակ զործիքներով, որոնք կը դանդաղեցնեն մահը, աւելի տառապալից դարձնելու համար: Ոմանց պլուխը, ականջները, քիթը, ձեռքերը հանուած էին թուրք շնագայլերու կողմէ: Այդ խումբին մէջ կային բանաստեղծներ, փրօթեպօրներ, հրապարակագիրներ, ղեկավարներ, ատոնց հետ էր նաեւ Անգարայի Օսմանեան Պանքայի հայ տնօրէնը: Դիակներուն մէկ մասը մնաց ձորին մէջ և վայրի կենդանիներ յօշոտեցին զանոնք»:

Այս ահուելի ոճիրներուն մասնակից եղող թուրք ժանտարմաները պարծենալով կը պատմէին իրենց այդ գեհեհական արարքները:

Չանկըրը կամ Քեանկըրը մնացած 150 անձերէն 44ը, յետ չարչարանքներու, ողջ մնացած են. մնացեալ 106 անձերէն 5ը՝ Գ. Վարուժան, Ռ. Սեւակ և 3 ուրիշներ՝ Օլոստոս 12ին սպաննուած են Չանկըրէն-Անգարա տանող ճամբուն վրայ՝ Գալեճիք աւանէն ոչ շատ հեռու թիւնէյի ձորին մէջ: Մնացած 101էն 56ը՝ Ճական, թեւերը իրարու կապուած, և 26 հողիէ բողկացած 2րդ խումբ մը, «Տէր Զօր զրկուելու» պատրուակով, դարձեալ Անգարայի հարաւը, Պէյնամ, Ալատաղի ստորոտը, Կէօլպաշի և Գայաշ վայրերուն մէջ՝ Անգարա քաղաքէն հարիւ 10 մղոն հեռու, սպաննուած են:

Վերջին 19էն 1ը՝ Տիրան Քէլէկեան առանձին զրկուած է Չորումի վրայով դէպի Սերաստիա և սպաննուած է Ենիխանի (Երլորդ էլի) մօտերը: Վերջին 18ը Չանկըրըի հայերու կարաւանին հետ տարագրուած են դէպի Տէր Զօր և անոնց մեծ մասը մահացած է ճամբու տառապանքներէն:

Ինչպէս Անգարայի այս շրջանին մէջ, նաեւ ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ հազարաւոր բանտարկեալներ նոյն այդ Ռամագանի և Պայրամի օրերուն փողոտուեցան...

ԱՆԳԱՐԱՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԹՈՒՐԻՔ ԴԱՀՃԱՊԵՏՆԵՐԸ

Անգարայի փոխ-կառավարի (վալի-վեֆիլի) Աթըֆ պէյ, 30 տարեկան սելանիկցի մարդակեր մը, եղած է թալէաթի անձնական քարտուղարը, անգամ էր նաեւ Թեշքիլաթը-Մախսուսէի Կեդրոնական Մարմնին: Այս Աթըֆը եղած է նաեւ դահիճը Քասթեմունիի հայերուն:

Պողազլայանի զայմագամ Քեմալը յետոյ եղաւ փոխ-կառավարի (միւքեսարըֆ-վեֆիլի) Եողկաթի հայութեան և իրեն դէմ արձակուած դատաւճիռին բնազիրը տուինք: Եողկաթի ժանտարմըրիի հրամանատար Թեֆիկ և Ֆէյլաղ պէյերը, ժանտարմըրիի և զինուորներու հրամանատարները, չեթէպաշինը, չեթէներ և խուժան: Անգարայի Իթթիհատի ներկայացուցիչ Նեճաթին և ոստիկանապետ Պեհաշտոնը, Չանկըրըի Իթթիհատի ներկայացուցիչ ձեմալ Օկիզը և երեսփոխան Հասան Ֆեհմին և այլ հարիւրաւոր մարդակերպ զազաններ:

Անգարայի վալիի փոխանորդ և Քասթեմունիի վալի Աթըֆը և երեսփոխան Ֆեհմին կորսնցուցին իրենց հետքը և ազատ մնացին կախազանէ կամ զնդակէ:

ՔԱՆԻ՞ ՀԱՅԵՐ ՏԱՐԱԳՐՈՒԵՑԱՆ Կ. ՊՈՂԱՄԵՆ

Ընդհանրապէս այն կարծիքը կայ, թէ թուրքերը խնայեցին Կ. Պոլսոյ հայութեան և շտարազրկեցին: Ասիկա մասամբ միայն ճիշդ է:

Ըստ թրքական ոստիկանական արձանագրութեանց, մինչև Դեկտեմբեր 7, 1915 Կ. Պոլսէն տարագրուած են 30.000 հայեր, և Դեկտեմբեր 7, 1915էն Լոք դարձեալ աքսորուած են 4.000 հայեր, որով 34.000 հայ այրեր, աքսորուելու պատրուակով, սպաննուած են Իզմիթի և այլ վայրերու ամայի լեռներուն և ձորերուն մէջ:

Ատկէ Լոք պատրաստուած էր ցանկ մը, Կ. Պոլսէն արտաքսելու համար նաեւ 80.000 բնտանիքներ. այդ է որ չէ գործադրուած, չնորհիւ օտար ճնշումներու:

ԱՆԳԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԵՒԻԹԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Անգարայի նահանգին հայութիւնը նուազագոյն 100.000 հոգի հաշուելով, իրենց նիւթական կորուստը հարիւրաւոր միլիոն տուրքի կը հասնի, նկատի ունենալով որ Կեսարիոյ հայերը և Անգարայի

Հայերը, առեւտրական տեսակէտով, լաւ զիրքեր ունէին եւ մեծ հարստութեան տէր էին: Առանց հաշուելու ազգային հարստութիւնները, հաստատութիւնները, Անգարայի նահանգին հայերուն նիւթական կորուստը, 90·000է աւելի անձերու կորուստէն զատ, աւելի քան 200·000·000 ոսկի տուար է:

Հայերու հատուցման պահանջը, ըլլա՛յ արեան, ըլլա՛յ սեփականութեանց եւ հողի, կա՛յ ու կը մնայ, մինչեւ արդար լուծուի մը գտնէ:

ԾԱՆՕԹ. 8.— Կ'ուզեմք աւելցնել նաեւ, որ Անգարայի մտահոգիմ մէջ գործըլած այս գազանային ցեղասպանական ռեիքներու մասին, զինադադարէն ետք, մոր մերքին գործոց նախարարը զինուորական պատերազմական ատենանի ընդհանուր դատախազութեան յամձնած էր 42 ծածկագիր-հետազոտներ, Մայիս 1915էն մինչեւ Ապրիլ 1917 թուակիր, որոնք մասնաւոր պաշտօնեայ մը գատած էր Անգարայի հեռագրատունէն եւ գաղտնի կերպով հասցուցած էր Կ. Պոլիս, հակառակ անոր, որ հազարաւոր ծածկագիր հետազոտներ, հրամանագիրներ, մամուլներ, տեղեկագիրներ անհետացուած էին իրարմիտի կեդրոնի քարտուղար Միտհատ Շիւքրիի կողմէ:

ԹՐԲԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ, ԲԻԻԹԱՆԻՈՅ ԵՒ ՊՐՈՒՍԱՅԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

«Իզմիթի, Պրուսայի եւ Քասթեմունիի ծայրագոյն արեւմտեան մասէն 250·000 հայեր տարագրութեան ենթարկուած են. անոնք 48 ժամէն բռնութեամբ տեղահանուեցան՝ ղէպի Հալէպ, Տէր Զօր, Համա, Մուսուլ եւ նոյնիսկ մինչեւ Հարան զրկուելու համար: Զեթներու խումբերը կ'երթային անոնց ետեւէն» (Ֆոն Թիցբա, Սեպտ. 17—30, 1915, Կ. Պոլիս — Տոյլլանտ ունտ Արմենիէն (Հայաստան եւ Գերմանիա), էջ 159):

Օրմանեան Սրբազան, Իզմիթի սանճագի եւ Պրուսայի նահանգի հայոց թիւը ցոյց կու տայ 165·000: Իսկ թուրք կառավարութիւնը՝ 120·853:

Քննենք մանրամասնութիւնները: Մեր ունեցած թիւերը (1903ի) Պատրիարքարանէն են. Իզմիթի շրջան՝ 90·482, Պրուսայի շրջան՝ 104·160: Այդ թիւերուն մէջ հաշուուած է 1903—15 աճուածի տոկոսը, որով ընդհանուր գումարը կ'ըլլայ Իզմիթի սանճագին եւ Պրուսայի վիլայէթին մէջ 1915ին ապրող հայերու՝ 194·642:

Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն

Վարչական (պետական) բաժանումով, Իզմիթ (գոճա իլի) անկախ սանճագ էր, կապուած՝ ուղղակի ներքին գործոց նախարարու-

թեան եւ կը բաղկանար 6 գագաներէ (դաժմագամութիւն) եւ 11 օւ-
հիւններէ (միւտիւրլիք) :

Ուրեմն Իզմիթի միւթեւարըֆին հրամանները կու գային ուղ-
ղակի ներքին գործոց նախարարութեանէն (Թայէաթէն) կամ պետու-
թեան ապահովութեան ընդհ. տնօրէնութեանէն (Ազիլ պէյ), յարեւնը-
ման նացիներու «զիհեքիայք տիմսք»ին (ապահովութեան ծառայու-
թիւն) :

Պրուսայի նահանգը կը բաղկանար 5 սանճագներէ (միւթեւար-
ըրֆութիւն) .— Պրուսա, էրթողրուլ, Քէօթաճիա, Աֆրոն Գարաճի-
սար եւ Պալլըքեսիր :

Վերոյիշեալ 5 սանճագները միասնաբար կը բաղկանային 32
դաժմագամութիւններէ եւ 61 միւտիւրլիքներէ : Այդ կը նշանակէ, որ
Պրուսայի նահանգի վայրին, որ ենթակայ էր ներքին գործոց նա-
խարարին, եւ անոր ստորադաս վարչական պաշտօնեաներն էին 6
միւթեւարըֆներ, 32 դաժմագամներ և 61 միւտիւրներ. ասոնք բոլորն
ալ իրենց արիւնտ մասնակցութիւնը ունեցան հայերու ցեղասպա-
նութեան, իրենց ենթակայ շրջաններուն մէջ :

Բ Ն Ա Կ Զ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն Ը

Նախ տանք հայարնակ զիւղերու եւ աւաններու բնակչութիւնը
այբրեկական կարգով՝ Իզմիթի եւ Պրուսայի մէջ, իրենց եկեղեցի-
ներով .—

Գիտիլ	ԸՆՏԱՆԻՔ	ՀԱՅ	ԵԿԵՂԵՑԻ
Ազ-Հիսար	67	272	Ս. Երրորդութիւն և Ս. Աստուածածին
Ալմալը	80	471	Ս. Լուսաւորիչ
Ատափազար	2103	12.463	Ս. Կարապետ Ս. Հրեշտակապետ Ս. Լուսաւորիչ Ս. Ստեփանոս
Արամ	64	347	—
Արմաչ	300	1505	Զար Խափան Ս. Աստուածածին Ս. Աստուածածին
Արսլան Պէկ	655	3218	—
Գարամիւրսէլ	250	1378	—
Գեղամ	113	596	—

Գիտիլ	ԸՆՏԱՆԻՔ	ՀԱՅ	ԵԿԵՂԵՑԻ
Գըլըճ (Եալովա)	167	802	Ս. Սարգիս
Գընճըլար	450	2466	Ս. Աստուածածին
Գուրտպէլէն	828	3950	Ս. Աստուածածին
Եալազ Տերէ	225	1125	Ս. Հրեշտակապետ
Զաքար	86	404	—
Էլմէ	185	965	Ս. Աստուածածին
Թամլըզ	79	426	Ս. Ստեփանոս
Ժամավայր	51	264	—
Իզմիթ	892	4635	Ս. Աստուածածին
Խաչ	33	202	—
Խասկալ	180	811	Ս. Յակոբ
Հայոց	190	1007	—
Հովիւ	49	288	—
Մանիչակ	118	591	Ս. Աստուածածին
Մերտէ Կէօզ	299	1080	Ս. Կարապետ
Մեծ Նոր Գիւղ	1500	6748	Ս. Կարապետ
Միջագիւղ Կէյվէ	231	1203	Ս. Աստուածածին
Միջագիւղ (Պրուսա)	540	2994	Ս. Կարապետ
Նոր-Գիւղ (Թամլըզ)	19	74	—
Նոր-Գիւղ (Նիկիա)	40	148	—
Նոր-Գիւղ (Սապանճա)	15	62	—
Շաք-Շաք	147	658	Ս. Նիկողոս
Չենկիլէր	800	4135	Ս. Մինաս
Չուքուր	60	420	Ս. Աստուածածին
Պարտիզակ	1557	9054	Ս. Յակոբ Մայր եկղ. Ս. Թաղաւոր
Պըչկը Տերէ	—	—	Ս. Խաչ
Սապանճա	65	300	Ս. Աստուածածին
Տաղ Գիւղ	57	389	Ս. Նշան
Տէօնկէլ	75	419	Ս. Սարգիս
Քարցի	286	1264	Ս. Աստուածածին
Քէրէմէթ (Պրուսա)	209	2040	Ս. Աստուածածին
Ովաճըզ	500	3333	Ս. Լուսաւորիչ
Ֆէրիզլի	208	889	—
Ֆերիզլի	18	88	Ս. Գէորգ

ՊՐՈՒՍԱՅԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Պրուսա՝ Ս. Աստուածածին, Պենլի՝ Ս. Յակոբ Մծրնայ, Սէօլօզ՝ Ս. Հրեշտակապետ, Կեմլէյիկ՝ Ս. Թաղէոս-Բարթուղիմէոս, Ենիճէհր, Ենիճէ, Ճերաճ, Իգնիք, Նոր Գիւղ, որոնք եկեղեցիներուն անունները չենք կրցած ստուգել:

ՊԱԼԸՔԵՍԻՐ—ՊԱՆՏԸՐՄԱ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Պալքեսիր՝ Ս. Աստուածածին, Պանտըրմա՝ Ս. Աստուածածին, Ս. Մինաս, Քիրմասթի՝ Ս. Լուսաւորիչ, Միխալիճ՝ Ս. Սարգիս, Էտինճիք՝ Ս. Յարութիւն, Հայ-Գիւղ՝ Ս. Սարգիս, Պիզա՝ Ս. Գէորգ:

ՊԻԼԵՃԻԿ ԳԱՒԱՌԱԿ՝ 10 ԵԿԵՂԵՑԻ

Պիլեճիկ, Կէօլտաղ, Նոր-Գիւղ, Թիւրքմէն, Ասարլըզ, Ենի Փաղար, Մուրատ Չայ, Չալկարա, Ալընճա, որոնք եկեղեցիներուն անունները չկրցանք ճշդել:

ՔԷՕԹԱՀԻԱ՝ 11 ԵԿԵՂԵՑԻ

Քէօթահա՝ Ս. Աստուածածին, Աֆիոն Գարահիսար՝ Ս. Աստուածածին (Թուրք զինուորներու հանրատունի վերածուած), Էսքի Շեհիր՝ Ս. Երրորդութիւն, Ուչազ՝ Ս. Աստուածածին, Թաւշանլու՝ Ս. Ստեփանոս, Արսլան Պէյ՝ Ս. Յարութիւն, Ենիճէ՝ Ս. Ուսչ, Չիֆթլիկ (անունը չկրցանք ճշդել):

Եկեղեցիներու թիւը Պրուսայի եւ Իզմիթի շրջանին մէջ 88 է, մինչ Օրմանեան Սրբազան միայն 81 կ'ըսէ. 7 պակաս: Իսկ բնակչութեան իրրեւ թիւ կու տայ 165.000, ինչ որ զարձակ պակաս է: Վերջին տասը տարուան աճումը նկատի առնուած չէ: Ատկէ զատ կան նաեւ կաթողիկոսներու եւ բողոքականներու 12 եկեղեցիները, որով եկեղեցիներուն ճիշդ գումարը կ'ըլլար 100 եւ բնակչութեան թիւը՝ 1914-ին՝ 194.642:

ԴՊՐՈՑՆԵՐ, ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

1901ին հայ դպրոցներու թիւն էր.— Իզմիթի շրջան՝ 38 դպրոց, 8.507 աշակերտ, 212 ուսուցիչ: Պիլեճիկի շրջան՝ 10 դպրոց, 1.263

աշակերտ, 21 ուսուցիչ: Քէօթահիոյ շրջան՝ 5 դպրոց, 1.174 աշակերտ, 23 ուսուցիչ: Պալքեսիր—Պանտըրմա՝ 8 դպրոց, 1334 աշակերտ, 35 ուսուցիչ: Արմաշ՝ 2 դպրոց, 300 աշակերտ, 6 ուսուցիչ: Ընդհ. գումար՝ 63 դպրոց, 12.578 աշակերտ, 297 ուսուցիչ:

Առանց հաշուելու վերջին 14 տարուան յաւելումը դպրոցներու եւ աճը աշակերտներուն եւ ուսուցիչներուն, որոնք առնուազն 10 աւարիւր աւելցած են:

ՊՐՈՒՍԱՅԻ ԹՈՒՐԿ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ Ի՞ՆՉ ԹԻՒՆԵՐ ՀԱՂՈՐԴԵՑ ՀԵՌԱԳՐՈՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ՝ ՀԱՅ ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Պրուսայի վալին հետեւեալը հետազոտեց.

«Տարագրուած հայերու թիւի մասին մանրամասնութիւններ չունինք(*): Այս հետազոտը տարագրութեան առաջին օրերէն է: «Սեւգլերիմէ պաշլանըլան էրմենիլերիմ», կ'ըսէ բնագրին մէջ:

Մեր քաղաքներուն մէջ հայերու հետեւեալ թիւերը արձանագրուած էին.—

Խիւտաւենկիար վիլայէթի (Պրուսա) Խիւտաւենտիկեարի Սանճազի մէջ.— Կեղր. զազա (դաւառակ)՝ 6.415, Կեմլէյիկ՝ 3.307, Փաղար Քէօյ՝ 22.600, Գարաճա Պէյ՝ 974, Մուտանիա՝ 99, Ազրանոս (Օրխան էլի)՝ 6, Քիրմասթի՝ 995: Գումար՝ 34.396:

Էրթողրուի սանճազի մէջ.— Էրթողրուլ զազա՝ 7.727, Սէօյիւս զազա՝ 7.676, Իյնէ Կէօլ զազա՝ 7.244, Ենի Շեհիր զազա՝ 1.710: Գումար՝ 24.357:

Քէօթահա սանճազի կեղր. զազա՝ 2.759, Էսքի Շեհիր՝ 3.878, Սիմաւ., Ուչազ՝ 1.092: Գումար՝ 7.729:

Հայերու ընդհ. գումար՝ 66.482:

Իզմիթի սանճազին մէջ արձանագրուած հայերուն թիւն է.— Իզմիթ սանճազի զազաները. Իզմիթ (կեղր. զազա)՝ 23.430, Ատա-

(*) «Սեւգլերիմէ պաշլանըլան՝ էրմենիլեր մըգտարը հագգընտա մալիմաթը միփասէլէ վարիտ օլմամըշ տըր»:

ՄԱՆՈԹ.— Թուականը չի տար: Թիւեր պահանջող հեռագիրներու բուականն է Մայիս 12, 1915 եւ Հոկտ. 1915:

փաղար, 16-034, Կէյփէ՝ 8-274, Եալովա՝ 3-253, Գարամիւրսէլ՝ 2-753, Գանարրա՝ 626: Ընդհանուր գումար՝ 54-370(*):

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ (ՄԻԻԱՀԱԶԱԹ)

Սանճազին միութեարքը՝ Թահսին հեռագրով կ'աւելցնէ, թէ տարագրութիւնը որոշուած հայերը ամբողջ սելզ (աքսոր) եղած են:

Թրքական բնազրին մէջ կ'ըսուի:

«Միութեարքը լիւանըն Թահսինին թախմին էթտիյի էրմե-նիէրին հեման քնափփէսի սելզ տիլմիշ տիր»:

ԹՐԹԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՄԸ ՊԱՏՃԷՆԸ

Արձանագրութեան մը համաձայն, տարագրուած հայերուն բնակավայրի շրջան (աքսորավայրը) հասնողներուն թիւը յիշուած է հետեւեալ ձևով.— Մննդավայրը, աքսորի թուականը, թիւ, այր, կին:

«Բնակավայր» հասնողներուն ԵԿԱԾ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՆ ՏԵՂԵԿՈՒ-ԹԻՒՆՆԵՐ, Ապրիլ 11, 1331 (1915) թուականով, Տէր Զօրի միութե-սարքին հաղորդուած է հեռագրով:

Վերոյիշեալը՝ ցուցակի նմոյշ մըն է, որ ղրկուած է «Էմնիէթը Ումուլիէ»էն(**):

Ցուցակով առաջին հեռագիրը Տէր Զօրէն եկած է «500 անձեր եկան, խառն քաղաքներէ (մուխթելիդ)՝ Ատափաղարէն, Իզմիթէն եւ Պրուսայէն»:

Նիկոմիդիոյ (Իզմիթի) շրջանին մէջ Պարտիզոկ քաղաքը եւ շրջանը Աթենքի մը մանրանկարն էր մշակութային տեսակէտով, իր հայ եւ օտար զպրոցներով եւ զրականութեան ու մշակութային ան-

(*) Այդ թիւին մէջ չեն 10-000է աւելի զինուորագրուած հայերը եւ նախ քան տարագրութիւն բանտարկուած մօտ 6-000 հայերը:

(**) Էմնիէթը Ումուլիէն կեդրոնական ոստիկանութիւնն է, որ կ'ապուած էր մերքին գործոց նախարարութեան: Այդ մարմնոյն տեղւոյն մերկայացուցիչները կը հաղորդէին գաղտնի տեղեկութիւնները գաւառներէն:

Այդ պաշտօնը յար եւ մեան է նացիներու «Զինեքիայթս Տիմար» կազմակերպութեան:

ձերով: Տուած է աչքառու մտաւորականներ եւ կրթական մշակներ, Միթարեան եւ այլ վաստակաւոր հայեր, ինչպէս՝ Հայր Ղազիկ-եան, Հայր Մ. Պօտուրեան, Թորգոմ արք. Գուշակեան, Մինաս Մալ-եան, Արրահամեան (փրոֆ.), Վահան վրդ. Տէր Մինասեանց, Վե-րածին, Գէորգ Մեսրոպ, տքթ. Սերոբեան եւ անուանի ու անձնագոհ առաջնորդ Ստեփանոս արքեպս. Յովակիմեան:

Ուրախալի է որ այս մշակութային շրջանէն կրցած են վերապ-րիլ երկոտասնեակ մը մտաւորականներ, ուսուցիչ, խմբագիր, բժիշկ, ղեղազոր, քիմիագէտ, գրագէտ, դրող, թարգմանիչ, գործիչ, պատուելի եւ կուսակցական ղեկավար, որոնք կը գտնուին Նիւ Եորք, Պոսթըն, Ֆրանսա, Յունաստան եւ այլ վայրեր:

Պրուսայի նահանգի եւ Իզմիթի սանճագի պատուական հայու-թիւնը եւս զոհ զնաց թուրք սլտութեան սարքած դաւադրութեան: Թրքական չեթէսկան կազմակերպութիւններ սկսան կազմուիլ գաղտ-նի կերպով, Համաշխարհային Ա. պատերազմի առաջին օրերուն իսկ, տարագրութենէն եօթը ամիս առաջ:

Ահա քանի մը գաղտնի հեռագիրներ, այդ շրջանին մարդաս-պան աւազակախումբերու պատրաստութիւնը վկայող.

Նոյեմբեր 13, 1914 (1330) թիւ՝

Միտհատ Շիւքրի Պէյ էֆենտին,

Յարգելի եղբայրս

Իզմիթի, Պրուսայի, Պանտըրմայի, Պալլըքեսիրի եւ յարմար-գոյն վայրերու մէջ, պատասխանատու քարտուղարներու (Իթթիհա-տի) միջոցաւ, գաղտնի կերպով (մախրեմանէ), մէկ շաբթուան մէջ ստորեւ պահանջուած մասնաւոր յատկանիշները ունեցող անձերը կանչեցէք եւ խմացուցէք, թէ զանոնք հաւաքելը կարելի պիտի ըլլայ:

Ստորագրութիւն

Թեշքիլաթը Մախսուէի Կեդրոնի անդամներէն

ԱԶԻԶ, ԱԹԸՖ, ՆԱԶԸՄ, ԽԱԼԻ

Նոյեմբեր 16, 1914 (1330)

Պատասխան Նոյեմբեր 15ի

Իզմիթի միութեարքութեան (կառավարչութեան) 3 պետերու (չեթէպաշինկրու) սերկերտէ ընտանիքներուն 15ական ոսկի տուէք: Իրամը փոսթին յանձնուած է: Այս հեռագիրը ուղարկող պաշտօնեա-լին (սելզ մեմուրը) ցոյց կու տաք աւազակութեան գործին համար 100 հոգիէ բազկացեալ անձերը, զինուորի ծածկանունին տակ ճամբայ

կը հանէք եւ հոս կը տեղեկացնէք: Բանտարկեալները բանտէն դուրս հանելու համար նախարարութիւնը հրաման պիտի ղրկէ:

Ստորագրութիւն՝
ԽԱԼԻԼ (Էնվերին հօրեղբայրը)

Պալլըքեսիրէն Իթթիհատի քննիչ Մուսա գրած էր Նոյեմբեր 20, 1914 թուակիր նամակ մը, ուղղուած՝ Միտհատ Շիրքրիի, յանձնուելու համար տոքթ. Նազրմի, եւ որուն մէջ յիշուած է, թէ ներքին գործոց նախարարութիւնը եւ Իթթիհատը չեթէներ կը կազմակերպեն:

Պրուսայի Իթթիհատի ներկայացուցիչը (մուրախիսաս) Դեկտեմբեր 19, 1914 (1330) թուակիր պաշտօնագիր մը ուղարկած է Իթթիհատի Ընդհանուր Կեդրոնին, որուն մէջ յիշատակուած է, թէ ոճրագործները եւ աւաղակները Թեշքիլաթը Մախսուսէին մէջ պիտի արձանագրուին (ճանիւղը վե շաքրլլարըն Թեշքիլաթը Մախսուսէյէ մուզայյէտ օլաֆագլար տըր):

Թրքական Պատերազմական Ատեանը արձանագրած է, որ «այդ չեթէները հայ տարագիրները բնաջնջելու համար գործածուեցան» (տես «Թագվիմը վեֆայի», թիւ 3540, Դատական Արձանագրութիւններ):

Ինչպէս Ֆոն Թիքա գրած էր, այդ աւաղակները ընկերացած էին շրջանի տարագիրներուն եւ անոնց ամէն տեսակ չարիք — սպանութիւն, բռնաբարութիւն, ինչքերու գրաւում եւայլն — հասցուցած են(*):

Այդ 150·000է աւելի ժողովուրդին մէկ կոտորակը միայն հասաւ Հալէպ, Տէր Զօր, նոյնիսկ մինչեւ Միտսին եւ Ապուքեմալ: Քանի մը հազար փախան Ամանոսի լեռնային շրջանը եւ օրական չոր հացի մը փոխարէն գործեցին գերմանացիներու շինած Այրանի, Պաղչէի փապուղիներուն մէջ. սակայն հոն եւս հանդիստ չթողուեցան եւ ներքին գործոց նախարարութեանն ու Հալէպի երկաթուղագծի կոմիսերութեանն պաշտօնագիրներ եկան, զանոնք կրկին տարագրելու համար: Նման հրամանագրեր կը կրեն 6 Նոյեմբեր 1917, 27 Դեկտեմբեր

(*): Բնագրին մէջ կ'ըսէ. «Այդ աւաղակները գապա - գուշազը (լայնատարած, բարձր գօտիներ) կը կրէին». «Էրմեմիլէրի թագթիլ վե իմհա, վե էշալարընընեպ եազմա»:

բեր 1917, 13 Մարտ 1918, 19 Մարտ 1918 եւ 1 Ապրիլ 1918 թուականները:

Եւ առժամարար ջարդէն այս ազատուածներն ալ սպանուեցան, Այրանէն Մարաշ երկարող ճամբուն անտառապատ վայրերուն մէջ:

Արինարբու եւ անմարդկային աւաղակներու կարգին էին՝ Գարամիւրսէլի գայմագամ Նեճտին, ժանտարմըրիի հրամանատար Մեհմէտ Ճեմալը, միւֆթի Ահմէտը, Պարտիզակի կառավարիչ Ալի Շուրուրի կոչուած աւաղակապետը, չեթէպաշիններէն Մեհմէտչէ կոչուած հրէշը եւ այլ հարիւրաւորներ, որոնցմէ ոչ մէկը դատուեցաւ կամ պատժուեցաւ:

Գլխաւոր հարիւրաւոր ոճրագործներէն մէկ քանիին անունները — Իգմիթի միւթեսարըֆ Մուզար պէյ, Կեդրոնական բանտի տնօրէն Իպրահիմ պէյ կոչուած հրէշը, որ իր աւաղակներով եւ աւաղակապետներով տարազրեց Իգմիթի, Պարտիզակի, Ովաճըլի, Ատափագարի եւ շրջականերու հայերը, բանտարկելով այրերը եւ զիչերները զանոնք շարչարելով: Անոր կ'ընկերանար ժանտարմըրիի հրամանատար Ֆայիզ պէյ:

Գլխաւոր պատասխանատուներ էին նաեւ Պրուսայի Իթթիհատական պատասխանատու քարտուղար տոքթ. Ահմէտ Միտհատ (պէտք չէ շիոթել ասիկա Իթթիհատի Կեդրոնի քարտուղար Միտհատ Շիրքրիի հետ): Պրուսայի երեսփոխան Ալի Բիզա: Պրուսայի վալի Օսման պէյ: Պրուսայի ժանտարմըրիի հրամանատար Իսմայիլ Հազըր: Օլոստոս Է, 1915ին Չենկիլէրի 1·200 ընտանիքներէն այրերը դատեցին եւ զիւզէն դուրս սպաննեցին: Պրուսայէն՝ 300ի մօտ այրեր «Պանտըրմա պիտի զրկուին» ըսելով 30 մղոն հարաւ՝ Ագրանոս, այսօրուան անունով Օրխան-էյի բերին եւ չարչարանքով սպաննեցին: Այդ բոլորը սեղի կ'ունենային ներքին գործոց նախարարութեան, պատերազմական նախարարութեան եւ Իթթիհատ կուսակցութեան Մերքէլը Ումումիէն զրկուած հրահանգներով:

Ամբողջ Պրուսայի նահանգին մէջ գտնուեցաւ մէկ թուրք միայն, Ֆայիզ Ալի բանաստեղծը, եղբայրը՝ ուրիշ թուրք զրագէտի մը՝ Սուլէյման Նադիֆի, որ, ըլլալով Քէօթահիայի կառավարիչ, ժամանակաւոր կերպով, մինչեւ իր հրաժարումը, մօտ 10 ամիս, մասամբ պաշտպանեց Քէօթահիոյ հայերը եւ հոն փախստական տարագիրները: Բայց մէկ տարի չանցած, Իգմիթի երեսփոխան Ֆերիտ եկաւ եւ շարունակեց իր պետութեան հայասպան գործը:

Ազատուածներուն մօտաւոր թիւն էր — Պանտըրմա-Պալլըքեսիր՝

5·000, Պիլեճիկ եւ շրջակայքէն՝ 2·000, Կէյվէ եւ շրջակայքէն՝ 1·000, Ատափաղար, Իղմիթ, Պարտիզակ եւ շրջակայքէն 7·500: Գումար՝ 15·500:

Որով հարիւրին տասը միայն ազատած է այդ շրջանի 150·000 հայ բնակիչներէն: Բացի անձերու կորուստէն, նիւթական վնասը եւ ղած է աւելի քան 250·000·000 ոսկի տոլար, նուազագոյնը՝ թրքական թիւերը հիմ բռնելով: Մնացորդացին մէկ մասն ալ զոհ գնաց Մուսթաֆա Քեմալի չեթէներուն, 1920, Ապրիլէն-Օգոստոս:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՁ

Նախ քանի մը տեղեկութիւններ:

Ատանայի վիլայէթը (նահանգը), 1915ին, պատմական Կիլիկիոյ արեւմտեան շրջանը միայն կ'ընդգրկէր: Ձէյթուն, Մարաշ, Այնթապ եւ շրջակաները վարչականօրէն մաս կը կազմէին Հալեպի նահանգին(*):

Թուրք պետական վարչական իշխանութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սլատկանող հայաչատ քաղաքներու հայութիւնը ան-

(*) Կիլիկիոյ եւ Ատանայի մասին ուսումնասիրութիւններ ունին.— Վիքթոր Լանկլուա. Հայր Ղեւոնդ Ալիշան, մաս կամ այլ երկեր, — Հայնրիխ Քիֆերթի «Հին Աշխարհագրութիւն»ը, Ռ. Փրոյսի «Կիլիկիան», 1859, Վիքալ Քինէի «Ասիական Թուրքիա», հտր. Բ., Թեֆսիէ՝ «Փոքր Ասիա», էջ 711, Էլիզե Ռեքլիի «Համաշխարհային Նոր Աշխարհագրութիւն»ը. Յրդ հատոր, էջ 190: Թրքական «Սալմաէ» (տարեգիրք) 1325 (1909), էջ՝ 810 եւ գանազան հանրագիտարաններ, որոնց կարգին՝ «Իսլամ Ինսայֆլոփետիան» (1918):

Բրիտանական վերջին համայնագիտարանը (1965), ինչպէս մաս «Ամերիքանա»ն ողբալի մտայնութիւն մը ունին եւ պատմական քաղաքներու հայերուն վերաբերմամբ լուր կ'անցնին, մինչ գերմանական «Կոստ Պոստիստու»ը Ատանայի մահանգին համար կ'ըսէ, թէ մինչեւ 1915 բնակչութեան մէկ երրորդը հայ էր:

Իտալական մեծ պատկերագրող համայնագիտարանը Ատանայի եւ Կիլիկիոյ մասին տեղեկութիւններ կու տայ աւելի մանրամասնութեամբ:

Չատած էր միւս մասերէն, 1875ի վարչական նոր կազմակերպութեամբ, եւ Ատանայի նահանգի վարչական սահմանին մէջ առած էր Ատանա քաղաքը, Մերսինը, Թարսուսը, Սիսը եւ Հաճընը, կցելով նաեւ Սիլիֆքէի սանձազը, ուր շատ քիչ հայութիւն կար: Ատանայի նահանգը հիւսիսէն՝ Հաճընէն դէպի հարաւ տարածուելով, իր մէջ կը պարփակէր Իսլահիէն մինչեւ Ալեքսանտրէթ: Այս վարչական կարգադրութեան քաղաքական միտք բանին այն էր, որ ոչ-հայ տարրերու մէջ հայերը մեծամասնութիւն չկազմէին, ըլլա՛յ Ատանայի, ըլլա՛յ Հալեպի, ըլլա՛յ Սերաստիոյ նահանգին մէջ: Կիլիկեան թեմէն անձատած էին Կիւրիներ, Աշոտին եւ Տերենտէն, կցելով զանոնք Սերաստիոյ նահանգին եւ Մալաթիան՝ Խարբերդի նահանգին:

**ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ**

Ատանայի նահանգին տարածութիւնն էր 40·000 քառ․ քլմ․: Ատանայի նահանգի բնակչութեան թիւը 1915ին ցոյց տրուած է 403·430:

Վարչական բաժանումով՝ Ատանայի նահանգը կը բաղկանար չորս սանձազներէ. — Ատանա, ձեպէլը Պերեքէթ, Գոզան (Սիս) եւ Իչիլ, պարփակելով իրենց մէջ 19 զաւառակներ (գազաներ) եւ 23 նահիէներ (գիւղախումբ):

1845ին, Կիլիկիոյ մէջ (Ատանա) կային 270·000 հայեր: 33 տարի ետք, 1878ին՝ եկեղեցական մարդահամարով՝ 380·000 հայ: Ի հարկէ այս թիւէն պէտք է զեղչել Մալաթիոյ, Կիւրիների, Տերենտէի եւ Եոզկաթի հայերուն թիւը:

1878ի թրքական «Սալնամէ»ն Ատանայի հայոց առանձին թիւ չի նշանակեր, այլ կ'ըսէ. «Ատանա եւ Փոքր Ասիա (6 նահանգներէն դուրս) 835·000 հայ, որով՝ «Սալնամէ»ին թիւերը խառնուած են:

Գրիգոր Զօհրապ, «Հայկական Հարցը» Ֆրանսերէն իր երկին մէջ, Ատանայի (Կիլիկիոյ) հայերու թիւը կու տայ 280·000, որմէ եւթէ հանննք Հալեպի նահանգին կապուած Այնթապի, Մարաշի, Ուրֆայի եւ Զէյթունի հայերուն թիւը (102·000), Ատանայի նահանգին կը մնայ 178·000 հայ, ինչ որ ճշմարտութեան մօտ է:

Ճրանսացի Վիթալ Քինէն, 1890ին, քաղելով թրքական աղբիւրներէ, Ատանայի հայոց թիւը ցոյց կու տայ 97·450:

Օրմանեան Սրբազան կու տայ հետեւեալ թիւերը.

Ատանա, Մերսին, Իչիլ	31·200
ձեպէլը Պերեքէթ	11·000
Հաճըն	21·700
	<hr/>
Գումար՝	73·400

առանց հաշուելու Կիլիկեան թեմի միւս նահանգներու հայերուն թիւը:

Օրմանեանի թիւերը շատ պակաս են:

Հաճընի եւ չըջականերուն մէջ հաստատուած է որ 28·000 հայ կար: 1915ին տարագրուած են 32·000 հայեր: Օրմանեանի թիւը Հաճընի համար 10·300ով պակաս է:

Հայոց Պատրիարքարանը չէ կրցած ունենալ, զոնէ 4-5 տարին անդամ մը, ճշգրիտ վիճակագրական ցուցակներ, գաւառներու Առաջնորդարաններէն:

Ասատ Ուրաս, որ 1950ին Անգարայի մէջ հրատարակած էր «Պատմութեան մէջ հայերը եւ Հայկական Հարցը» գիրքը (785 էջերէ բաղկացեալ), թրքական մարդահամարէն քաղելով կ'ըսէ. — Ատանայի հայերուն թիւն է 50·135 լուսաւորչական, 2·511 կաթոլիկ եւ 5·036 բողոքական, ընդհանուր գումար՝ նահանգի հայերուն թիւն է 57·682 (էջ 143): Ասատ Ուրասի ցուցակը հայերու թիւին միայն մէկ երրորդն է: Զգուելի խարէութիւն մըն է ասիկա:

Ատանայի տարագրութիւնը տակաւին վերջ չէր գտած, երբ Ատանայի նահանգապետը ներքին գործոց նախարարութեան հեռագրած էր, 1915ի ամառը, հայ տարագրուածներու մասին՝ հետեւեալ մանրամասն, բայց պակասաւոր թիւերը.

Ատանայի սանձագի Մերֆէզը գազայէն տարագրուած են 14·216 հայեր, Գարա Իսալու գազայէն՝ 33, ձիհան գազայէն՝ 316: Գումար՝ 14·553:

Մերսին սանձագի գազայէն	756
Թարսուսէն	840
	<hr/>
գումար՝	1·596

Ճեպէլը Պերեքէթի սանճազի Կեդրոնական գազայէն	753
Իսլահիէն	496
Տէօրթ Եոլէն	7.168
Պաղչէն	3.092
Խասսաէն	766

գումար՝ 12.275

Գողանի սանճազ Սիսի Մերքէզը գազայէն	3.565
Ֆերքէ	2.217
Կարս (Պազար)	1.077
Հաճընէն	10.523

գումար՝ 17.382

Իշիլի սանճազէն	306
Մութ գազայէն	0
Կիւլնարէն	7
Անամուր	0

գումար՝ 313

Թուրք ներքին գործոց նախարարութեան զրկուած թիւերուն համաձայն. — Ատանա նահանգի 4 սանճազներէն՝ Ատանա, Մերսին, Ճեպէլը Պերեքէթ եւ Իշիլ՝ ընդհանուր գումար՝ 46.119 մասնակի տարազրուած հայեր:

Թրքական հեռագրին տակը աւելցուած է նաև հետեւեալ ծանօթագրութիւնը «Միլիտարաք» վերնագրին տակ. —

«Ատանայի մէջ մնացողներուն սեւ գ ըլլալը (բռնադադթը) նոր սկսած ըլլալով, տեղեկութիւնները թերի են: Չհաշուելով տակաւին չզրկուածները, (հայ) տարագրեալները զրկուած են, Օսմանիէի եւ Բաճուի ճամբով, դէպի Հալէպ»:

Ուրեմն, ըստ նահանգապետի հեռագրին, 46.119 հայ տարագրեալները միայն մէկ մասը կը կազմեն Ատանա նահանգի հայութեան:

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Ատանայի նահանգէն դուրս ելած կիլիկեան թեմերն ալ հաշուելով, 224 եկեղեցիներով, 279.000 հայ լուսաւորչական, 17.000 կաթողիկէ եւ 16.000 բողոքական կը հաշուէ: Ուրիշ հայկական ազրիւրներ եւ աշխարհագրական երկեր Ատանայի նահանգի ընդհանուր թիւ կու տան 414.000, որուն 216.000ը քրիստոնէայ եւ 198.000ը իսլամ: Քրիստոնէաներէն 200.000ը հայ, 10.000ը յոյն, 1.000ը սուրիացի, 1.500ը մարոնիթ, 3.000ը ասորի եւ 500ը եւրոպացի: 198.000 իսլամները կը ներկայանան հետեւեալ ստորաբաժանումներով. — 90.000՝ թուրք, 32.000՝ անսարի, 25.000՝ քիւրտ, 10.000՝ շերքէզ, 2.000՝ նողայ, 3.000՝ տաղիստանցի, 2.000՝ կրետացի, 5.000՝ բուսիլիցի, 15.000՝ զրպըլպաշ, 8.000՝ Փարազ, 5.000՝ արար-իսլամ եւ 1.000՝ Լիւրիք: Ի տեղեկութիւն ըսենք որ 1918, Հոկտեմբեր 31ի գինազազարէն ետք, ըստ ՊՌԵՄՈՆԻ, 1919-20ին՝ Կիլիկիոյ մէջ կային քրիստոնէաներ՝ 215.000, իսլամներ՝ 185.000: Այդ հայերը մեծ մասով տարագրութենէն վերազարձածներ եւ զանազան նահանգներէ վերապրող տարագիրներ են:

Աստ Ուրաս (էջ՝ 143-144), Կիլիկիոյ հայութեան թիւը, երկու նահանգին միասին, Ատանա եւ Հալէպ, հետեւեալ կերպով կը ներկայացնէ. —

Ատանա՝	57.686
Ուրֆա՝	18.370
Մարաշ (մէջը հաշուելով Այնթապը)՝	38.453
Հալէպ՝	49.486

գումար՝ 163.995

ինչ որ գրեթէ կէսն է երկու նահանգներու հայերու թիւերուն: Թուրքը ճշգրիտ վիճակագրութիւն (սթատիսթիք) չունի եւ չէ ունեցած: Նոյն իսկ այժմ ունեցածն ալ կեղծ է, այդ կը տեսնուի գիտական վերլուծումէ ետք միայն:

ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՎԱՆՔԵՐԸ

Ստորեւ Ատանայի նահանգի հայ եկեղեցիներն ու վանքերը, որոնց թիւը լրիւ չէ. —

Ատանա (քաղաք)	Ս. Ստեփանոս
Ատանա	Ս. Աստուածածին

Թարսուս	Ս. Աստուածածին
Մերսին	Ս. Լուսաւորիչ
Միսիս
Գողջուզ
Շէյխ Մուրատ	Ս. Գէորգ
Էբսէզ
Ֆալը
Տէօրթ Եոլ
Եարփուզ

Ատանայի սանճագի միայն լուսաւորչական 22 եկեղեցիներէն այսքանը ճշգրեցինք, առանց հաշուելու նաև բողոքականներու եւ կաթոլիկներու եկեղեցիները:

Հաճըն	Ս. Աստուածածին
Հաճըն	Ս. Գէորգ
Հաճըն	Ս. Թորոս
Շար-Տերէ	Ս. Նշան
Քէօսլիէր
Սողանլը
Եայլաճի
Ղարա Վերէն
Բումլու՝	Ս. Լուսաւորիչ

ՀԱՃԸՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (1 վանք՝ Ս. Յակոբ Մծրնայ Հայրավար)

1 վանք	Ս. Աստուածածին
Միս (քաղաք)	Ս. Սոֆիա
Ֆերքէ
Երէ Պաղան(*)

ԾԱՆՕԹ.— 1909 Ապրիլին՝ Կիլիկիոյ ջարդի ժամանակ՝ աւերուած եկեղեցիներ (լուսաւորչական եւ այլ) .

Ատանա՝ վեց եկեղեցի, Հաճըն՝ մէկ եկեղեցի, Թարսուս՝ մէկ եկեղեցի, Տէօրթ Եոլ, Օճաղլը եւ Պոխարլը՝ չորս եկեղեցի, Էյրթ Պուճագ՝ եօթը եկեղեցի, Էբսէզ՝ երեք եկեղեցի, Օսմանիէ՝ երկու եկեղեցի: Գումար՝ 24 եկեղեցի քանդուած 1909ին:

(*) Կէտերը ցոյց կու տան այն եկեղեցիները, որոնց անունները չեն ճշդուած:

ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՁ

Ատանա (սանճագ)՝ 25 դպրոց (1902ին), աշակերտ՝ 2.305, ուսուցիչ՝ 69:

Հաճըն՝ դպրոց՝ 4, աշակերտ՝ 577. ուսուցիչ՝ 12:

Միս՝ դպրոց 7, աշակերտ՝ 647. ուսուցիչ՝ 19:

Գումար՝ 36 դպրոց, 3.529 աշակերտ եւ 100 ուսուցիչ:

Այդ թիւերուն մէջ չեն Փրանսական ժեզուիթներու, ամերիկեան միսիսնարներու, ինչպէս նաև հայ բողոքականներու եւ հայ կաթոլիկներու դպրոցները, աշակերտները եւ ուսուցիչները:

Հայ լուսաւորչականներու դպրոցներուն, ուսուցիչներուն եւ աշակերտներուն թիւը առնուազն 25% աւելցած էր 1915ին, մէջը հաշուելով որքանոցներու աշակերտները:

ԾԱՆՕԹ.— 1909 Ապրիլին Կիլիկիոյ ջարդի ժամանակ աւերուած դպրոցներ.— Ատանա՝ հինգ դպրոց, Թարսուս՝ մէկ դպրոց, Հաճըն եւ գիւղեր՝ երեք դպրոց: Տէօրթ Եոլ, Օնաղլը եւ Պոխարլը՝ եօթը դպրոց: Ընդհանուր գումար աւերուած դպրոցներու՝ 16:



1909 Ապրիլին, երբ Ատանա թրքական ջարդերու հետեւանքով արիւնյուռայ եղած էր, Էտիքի օսմաննան երեսփոխան Յակոբ Պապիկեան իր Յունիս 13, 1909ի թուրքերէն տեղեկագրի վերջաբանին մէջ (խաթիմէ), հետեւեալը ըսած էր.—

«Պու հեգաիգը էլիմէ վէ միտիիշէի պէյան էքմէք խուսուսընտա, պիր տագիգա գատար, միւլագարտա պուլունտում: Միւլիմ արգատաշլարըմըզը տելխուն էտեմէյի տիւչիւներէք, քախֆիֆէ միւլահագա կեչիրտիմ: Հալ պու քի, պու ֆեմայիի պիր միլլէք վէ մեգհէպ մեմուպիմի քարափրնտան իյգալ օլմուշ օլմասը իլէ օ միլլէք վէ օ մեգհէպ ասլա մեսուլ օլմագ: Պու մեգալիմի տէյիլ, էն քիւչիւք դատըր պիլէ քեմիլիգ պույուրմիան Ահմեմի իւլմիլէ հեր շէյիմաէ, հագըյգարըն ըգհարընը էմը էրտիլիմտէն, իպրիտա, պունըն իչիւն կէօրտիլիւմ վէ ինմտըրըմ Հեգայիգը քեքմ էքմէյէ միւնասքէք էտեմետիմ (էջ 20 թուրքերէն բնագրի):

«Պու հեգայիգիմ նեշըի անասըր արասընտա քեշտիտի միւնաֆերեքի օլպիլմեսիմէ էքիմալ վերեմիյոքում: Զիրա պու ճիւնէթը վաշէյիյէ տեւամ էտեմէգ տէյու մեմուլ էտերիմ: Պիր տէ, տերը իս—

քիպատատան, հեր տիրիլի ֆենալըզլարըն քեքմի, ինֆեարը քէէ-վիլի տիւքուրը գապուլ օլունմուշ օլտուղընտան, միլլէթը Օսմանիյէնին, պու սուքեքտէ էմրագ կիզիլէ միւքէէֆֆիւն պիւր եարէյի մեհնուլէ պիւր կանկրէն հալիմէ կելմիշտ իտի:

«Սելամէք՝ էմրագը քեշիսիս վէ քետաւի էքմեքտէ տիւր: Սագլամագ տէյիլ տիւր, տիյէ գանն էտիյորում»:

Յունիս 13/25, 1909

Բնագրին թարգմանութիւնը հետեւեալն է.—

1909ի Ատանայի ջարդի Օսմանեան Փարլամենտին կողմէ քննիչ երեսփոխան Յակոբ Պապիկեանի մտածումները՝ ջարդերու կապակցութեամբ.—

«Այս եղերական եւ անասարսուռ ճշմարտութիւնները յայտնելու առթիւ, բաւական մտածեցի, խորհելով որ իսլամ ընկերներու սրտէն արիւն կ'երթայ (տեյլտուն) եւ մտածեցի թեթևցնել զանոնք: Մինչդեռ, այս ոճրագործութիւնները ազգի մը կամ կրօնի մը պատկանողներու կողմէ գործուած ըլլալով հանդերձ, ատոր համար ազգը կամ կրօնը պատասխանատու չ'ըլլար:

«Իսլամական օրինական տրամադրութիւնները չեն թոյլատրեր ոչ միայն այս ազէտը, այլ նոյնիսկ փոքր անիրաւութիւն մը եւ կը հրամայեն յայտնել ճշմարտութիւնը, այդ պատճառով ալ համարձակեցայ տեսած եւ համոզուած ճշմարտութիւններս չձածկել:

«Ձեմ կարծեր, որ ճշմարտութեան յայտնութիւնը զանազան տարրերու միջեւ պաղութիւն առաջ բերէ: Որովհետեւ կը յուսամ, թէ այս վայրենի յիմարութիւնը կամ խելագարութիւնը չէ կարելի շարունակել: Այս ալ կայ, որ բոնապետութեան շրջանին ամէն տեսակ շարագործութիւններ կը ծածկուէին եւ ուրացումի սկզբունքը ընդունուած էր: Օսմանեան ազգի այս ձեւով զիտցուած գաղտնի վէրքը փտախտի (կանկրէնի) վերածուած էր:

«Առողջութեան ապահովութիւնը կը կայանայ հիւանդութիւնները քննելու եւ դարմանելու մէջ եւ ոչ թէ ծածկելու»:

Յունիս 13/25, 1909

(Ինչպէս որ ներկայիս թուրք կառավարութիւնը կը ջանայ ծածկել կամ ուրանալ կատարուած ոճիրները):

Յակոբ Պապիկեանի այդ խորհրդածութիւնը եթէ ճիշդ էր համիտեան ջարդերուն, Ատանայի ջարդերուն, նոյնը կը մնայ

նաեւ 1916-19 թուրք պետութեան ցեղասպանական ոճիրներուն համար եւս:

Երեսփոխան Պապիկեանի տեղեկագիրը անմարտելի էր Թալէթին եւ թուրք կառավարութեան եւ ատոր համար ալ թաղուեցաւ Օսմանեան երեսփոխանական ժողովի թուղթերուն մէջ եւ այլեւ երեւան չհանուեցաւ: Թալէթ, այդ ատեն, երեսփոխանական ժողովի փոխ-նախագահներէն մին էր: Պապիկեան՝ Ատանայի Ջարդին զոհերը հետեւեալ կերպով դասաւորած էր.— Ատանա՝ 9·350 զոհ (ըսպանեալ), Թանրը Վերտի՝ 1·280, Սայ կեչիտ՝ 850, Էսէ Հաճըլը՝ 1·558, Օսմանիէ՝ 1·111, Պոսթան-Չիֆթլիկ՝ 1·277, Գուրտլար՝ 3·623, գումար՝ 19·049 հայ սպանեալ: Յոյներէն սպանուած էին՝ 250, սուրխացի՝ 850 եւ քիլոսանի՝ 422: Գումար՝ 1·522: Ընդհանուր զոհեր քրիստոնեաներու՝ 20·571 թէեւ առաջնորդարանները զոհերութիւն աւելի ցոյց կու տային: Ապահովագրութեան գումարներն էին 5 միլիոն տոլար անձերու եւ 15 միլիոն տոլար անչարժ եւ շարժուն սեփականութեանց: Այդ 20 միլիոն տոլար ապահովագրութեան գումարէն զրեթէ ոչինչ գանձուեցաւ: Ընդհանուր վնասը 80 միլիոն տոլարէն աւելի է 1909 Ապրիլեան ջարդերուն:

Այդ 20·571 զոհերէն դատ՝ առանց ապաստանի մնացած էին 30·000 անձեր՝ պատանի, տղայ, որոնք ոչ մէկ նիւթական միջոց ունէին եւ, այդպէս ըլլալով հանդերձ, թուրքերը կ'ուզէին տակաւին պատասխանատուութիւնը ձգել զոհերուն վրայ եւ բուն թուրք ոճրագործները, կեղծ հիւանդութիւն պատրուակելով, հիւանդանոց կը փոխադրէին եւ անկէ կը փախցնէին, Պատերազմական Ատեանին չներկայանալու համար:

Սուտ վկաներ ալ կը պատրաստէին, ըստ Պապիկեանի տեղեկագրին, ինչպէս բրին 1915-18ի Եղեռնէն ետք, 1919-20ին:

Ատանայի Եղեռնէն 6 տարի ետք, 1915ին թուրքը արիւնածաբաւ էր ոճիրներ գործելու եւ կողոպտելու:

Թուրքը կ'երգէր.

«Ատամանըն ետլարը քաշլըգ,
Գալմատը քեպտէ օն փարա խարմլըգ»:

Նոյն չքաւորի մտայնութիւնը գրուած կը գտնէք ճիհատի գաղտնի դրքոյիլի բնագրին մէջ, ուր կ'ըսէ.— «Թուրք իսլամները անօթի են, իսկ անհաւատները՝ լիութեան եւ պերճանքի մէջ կ'ապրին»:
Թրքական ցեղասպանութեան գործիքներէն մին էր Ս. Պատե-

բազմի գաղտնի գրքոյիը, զոր Թուրքիոյ Շէյխ Իւլ Իսլամը՝ Մուսա Քեազիմ (*) ստորագրած էր եւ որուն բնագրի պատրաստութեան մէջ գերման մատ կար, կ'ըսէր ամերիկեան գեսպանը:

Այդ թունաւոր գրքոյիը պատրաստուած էր Հոկտեմբեր 11, 1914էն առաջ, որովհետեւ այդ թուականին պատրաստուած ըլլալը էնվէր հեռագրով իմացուցած էր գերման ընդհանուր սպայակոյտին, Թուրքիոյ պատերազմի սկսելէն 5 օր առաջ: Այդ գրքոյիը թերթերու մէջ հրատարակուած չէ:

Հոկտեմբեր 18/31 թրքական թերթերու մէջ հրատարակուած Ս. Պատերազմի գրութիւնը միայն մէկ մասն էր ատոր եւ այն ալ ընդհանուր խօսքերով գրուած:

Բուն բնագրին մէջ կը կարդանք.

«Ժամանակը եկած է կազմակերպելու գաղտնի եւ հրապարակային ընկերակցութիւններ, Ս. Պատերազմ յայտարարելով, մաքրելու համար երկրին անբաղձալիները եւ յաղթանակը տանելու անկախութեան ուժով»:

«Ս. Պատերազմը պարտականութիւն մըն է դարձած: Երկրին մէջ ընտանիք անհաւատներուն արիւնք անարժէք դարձած է: Պէտք է դիտնալ, որ սակէ դատ ուրիշ առիթ չկայ»:

«Անհաւատներու սպանութիւնը պարտականութիւն մըն է, պէտք է ըլլայ գաղտնի կամ հրապարակային: Ղուրանը (**) ըսած է. «Անհաւատները ձերբակալեցէք սպաննեցէք, ուր որ գտնէք: Ձեր ձեռքին մէջ գտնուողին դէմ գերապոյն ուժ ի գործ դրէք: Ամէն անհատ (թուրք) երզում թող ընէ սպաննելու առնուազն 3 կամ 4 անհաւատներ, թշնամի՝ Ալլահի եւ Հաւատքի: Ապահով եղէք որ ատկէ աւելի մեծ բարեկործութիւն չկայ»:

«Թուրքերը (իսլամ) անօթի են եւ կը տառապին, իսկ անհաւատները լիութեան եւ պերճանքի մէջ կ'սպարին: Ժամանակն է իւրաքանչիւրին առնելու մէկ ձեռքի մէջ՝ սուր, միւս ձեռքի մէջ՝ հրացան եւ զրպաններուն մէջ՝ մահացու զնդակներ»:

(*) Շէյխ Իւլ Իսլամ Մուսա Քեազիմ, որ թուրքի վրայ 15 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, մէկն էր այդ վերոյիշեալ տողերը գրողներէն՝ յանուն Սուլթանի:

(**) Մենք Ղուրանի բնագրին մէջ նման տաղեր չգտանք:

ԱՏԱՆԱՅԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԳԼԽԱԽՈՐ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Վալին՝ Հապը պէյ, որուն յաջորդած էր ուրիշ բորենի մը՝ Վանի վալի ձեւաէք պէյ, ոստիկանութեան հազարապետ՝ Աւնի պէյ կոչուած հրէշը եւ հարիւրապետ Յաշար:

Ջարդարարական ժողովի վերահսկիչը եւ լիազօրը Իթթիհատի պատասխանատու-քարտուղար ձեմալ (*) պէյն է, որ յետոյ եղած էր նաև պատասխանատու-քարտուղար Հալէպի:

Մենք յետոյ կը տեսնենք արիւնարբու ձեմալ չարագործին անունը պատասխանատու-քարտուղարներու դատավարութեանց ցանկին մէջ:

1916ին, Ատանայի վալի եկած էր նաև Վանի կուսակալ ձեւաէք, որ նոյնպէս առաջին կարգի սճրագործներէն մին է եւ իրեն հետ ունէր օժանդակող հազարաւոր շեթիներ եւ ժանտարմներ:

Հայերու դէմ ոճիրներու մասնակից էր գլխաւորաբար բանակը: Ատանայի մէջ կար 16րդ դու օրտուն, որ իր կարգին ենթակայ էր զօրարանակի հրամանատար ձեմալ փաշային: Պատերազմի ատեն զօրարածին մասեր կ'ընային փոխադրուիլ այլուր, բայց հրամանատարի փոխանորդութիւնը անփոփոխ կը մնայ («Վեֆալէք սապլիք տիր», ըստ գինուորական օրէնքի) եւ մնայուն է զօրարածին անունով հրամաններ գործադրելու համար տեղւոյն վրայ:

Օրինակ՝ Ատանայի ենթակայ Հաճըն քաղաքը 1915 Մայիսին եկած էր ժանտարմներով հազարապետ Աւնին եւ կարգ մը ականաւորներ ձերբակալել տուած էր, ըստ Մարտ եւ Ապրիլ ամիսներուն եկած գաղտնի հրահանգներուն ներքին գործոց և գինուորական նախարարութեանց կողմէ: Ատանայի վալի Հապըրին յանձնարարութեամբ՝ Մայիսի սկիզբը դարձեալ Հաճըն եկած էին թրքական ջոկատներ, հազարաւոր հայեր ձերբակալելու եւ յետոյ տարագրելու՝ աւելի քան 32·000 հայեր ալ Հաճընէն եւ շրջակայիներէն: Այս գործողութիւնները կատարած էր Ալայ ֆուսուսանը Ղալիպ պէյ, իր ձեռքին տակ ունենալով 2 թապուտ (2·000 զինուորներ): Հաճընի 32·000 տարագրուեալներուն երեք չորրորդը ջարդուեցան Տէր Չորի շրջակայները:

(*) Այս ձեմալը պէտք չէ շփոթել միւս երկու ձեմալներուն հետ: Ասիկա Իթթիհատի շրջում-լիազօր քարտուղարն էր: Միւս ձեմալներէն մին ձեմալ փաշա կոչուածն է, Ծովային նախարար եւ 4րդ զօրաբանակի հրամանատար: Մէկ ալ կայ Կիւչիւք ձեմալ փաշա (զօրավար), «Մերսիմի» կոչուածը:

ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբեր 1, 1914ին սկսեալ մասնակի մահափորձեր տեղի կ'ունենային նահանգին եւ դանազան վայրերու մէջ: Նոյեմբերի սկիզբը՝ 1914ին «Ճիհատ»ը կարդացուած էր Ատանայի մէջ: Դեկտեմբեր 23, 1914ին՝ Ատանայի մէջ բնաջնջման վախեր կային: Այդ պարտական Ատանայի հիւպատոսը հաղորդած էր (տես Լեփսիուս, էջ 23):

Յունուար 20, 1915ին՝ Թալէաթ յայտնած էր դերման դեսպանին՝ որ «յարմար ժամանակն է հայկական ինդիքը վերջացնելու» (հայերը ջարդելու) (տես Լեփսիուս, էջ 29):

Փետրուար 18, 1915ին հայ զինուորներու ղէնքերը առնելուն զուգընթաց՝ տուններու մէջ ղէնքի խուզարկութեան պատրուակով՝ չարաղործութիւններ սկսան:

Տէօրթ եռլցի հայ մը՝ Սալճեան իբր թէ ուտեստեղէններ ծախսեր է անդլիական զրահաւորի մը եւ լրտեսութիւն ըրեր է, այդ պատրուակով կարգ մը հայեր՝ որեւէ բանէ լուր չունեցող անձեր՝ ձերբակալեցին եւ կախեցին Ատանայի մէջ:

Ատանայի գերման հիւպատոսը՝ Պիւկէ Փետրուար 28 (Մարտ 13, 1915) թիւով հեռագրեց Կ. Պոլսոյ գերման դեսպանին, թէ Տէօրթ Եռլի պատմութիւնը շինծու է, բայց արդէն ուշ էր: Տէօրթ Եռլի հայ այրերը զիջելով ձերբակալուած եւ հեռացուած էին (Լեփսիուս, էջ 33):

Մարտի սկիզբը Էօմէր Նաճի՝ Իթթիհատի զրդուիչ շրջուն պրոպականտիստը՝ այցելած էր Ատանա: Հոն կը գտնուէր արդէն Իթթիհատի պատասխանատու-քարտուղար ձեմալ պէյը, որուն հետ խորհրդակցութիւններ եւ կարգադրութիւններ կը կատարուէին ցեղասպանական գործերու մասին: Փոխանակուած հաղորդակցութիւններէն հաստատուած է այդ պարագան: Ձեռքի տակ են այդ մասին փաստաթուղթերը, որոնք կը պարունակեն գաղտնի հրահանգներ:

Մարտի կէսին (1915) Ատանա եւ Մարաշ ջարդի շրջաններ կային, երբ Թրքական 16րդ զորարաժինը կը գտնուէր Ատանա եւ 24րդ զորարաժինը՝ Այնթապի մէջ: Մովային նախարար ձեմալ փաշա, ըլլալով նաեւ 4րդ զորարանակի հրամանատար, Մարտ 16, 1915ին հետեւեալ նենգամիտ յայտարարութիւնը ըրաւ Մարաշի ջարդի պատաստուող թուրքերուն.— «Ձէյթունի մէջ ապստամբութիւն ծագած է: Ձինուորական ոյժերը դործի սկսած են: Կառավարութեան պարտականութիւնն է հայ եւ իսլամ պաշտպանել: Եթէ որեւէ իսլամ ան-

հատ յարձակի հայու մը վրայ՝ անմիջապէս պատերազմական ատեսանի պիտի յանձնուի: Ժողովուրդը թող հանդիստ մնայ: Ձինուորական իշխանութիւնն է որ աւագակները կը հետապնդէ» (Լեփսիուս, էջ 45):

Ասոր միտք-բանին այն էր, որ եթէ տեղւոյն թուրք ժողովուրդը ջարդել սկսէր, գործը կրնար կիսով ձախողիլ, եւ բանակն էր որ որոշեալ ժամանակին գործի պիտի մտնէր արմատական բնաջնջում կատարելու համար: Ձէյթունը ընկճելու համար ձեմալ փաշա կ'արդիւ է իր հրամանագրով թուրք խուժանը, որպէսզի իր հրամանին տակ գտնուող զինուորական ոյժերը կատարեն այդ գործը:

Ատանայի պատուիրակը՝ ձեմալ պէյ, Պէհաէտտին Շաքիրէն ստացաւ երկու հաղորդագրութիւններ՝ տարագրութեան եւ ջարդի հրահանգներու մասին փետրուար 18 եւ Մարտ 25 թուակիր, ցեղասպանական աստիճանական քայլերու մասին:

Մարտ 21, 1915ին առաջին ձերբակալութիւնը կատարուեցաւ Հաճընի մէջ:

Ապրիլ 7, 1915ին Հալեպի դերման հիւպատոսը՝ Րէօսլեր կը հեռագրէր որ երկիրը կ'աւերուի (հայերու տարագրութեան ակնարկելով. էջ 50):

Մայիս 1915ին՝ Թրքական ներքին գործոց նախարարութեանէն 4 ծածկագիր հեռագիրներ զրկուեցան եւ գաղտնի հրահանգներու ընդարձակ շրջարեական մը՝ գաւառներուն: Հեռագիրներուն թուականները՝ Մայիս 12, 23, եւ երկու հատ Մայիս 31 թուակիր: Շրջարեականին թուականը՝ Մայիս 16, 1915:

* *

Մայիս 14, 1915ին թուրք կառավարութիւնը հայոց տարագրութիւնը վարագուրելու համար օրէնք մը հանեց (տես «Հայ Կոմիտէներու Յեղափոխական շարժումները», էջ 237): Բայց այդ պատրուակ-օրէնքի հրատարակութեանէն առաջ արդէն «օրէնք» եւ «ոճիր» նոյնացած էին, հոմանիչ էին:

Ծածկագիր հրամանի վրայ, հայ զիւղեր տարագրուած էին Մայիս 12ին եւ անկէ ալ առաջ:

Մայիս 13, 1915ին Րէօսլեր կը հեռագրէր, թէ Ատանայի նահանգէն տարագրուեցան 10.000 հայեր (էջ 76):

Մայիս 5/18 1915ին Ատանայի բանտերը լեցուած էին հայերով:

Ցեղասպանական գործերուն մէջ բանակին մասնակցութիւնը

չեչտուեցաւ, երբ էնվէր փաշա Մայիս 18ին այցելեց գերման դեսպանին եւ խնդրեց որ հայերու դէմ առնուած քայլերու մասին «իր թեւերը ազատ ձգուին»: Նոյն օրը՝ Մայիս 18ին՝ հրահանգուեցաւ ատանացիները ցրուել Հալեպի գիւղերուն մէջ (էջ 81):

Յունիս 5, 1915ին՝ սուտ լուրեր տարածած էին գաւառները, մինչեւ էրզրում եւ այլ վայրեր, ըսելով թէ «Ատանան ապստամբած է»: 5 օր յետոյ, Յունիս 10ին, գերման դեսպանատան կը հեռագրուէր որ «սուտ է, Ատանայի մէջ հայոց ապստամբութիւն չկայ»:

Օգոստոս 11ին (1915) Ատանայէն տարազրեցին նաեւ հայ բողոքականներն ու կաթողիկէները (էջ 138):

Օգոստոս 22ին Թալէաթ գերման դեսպան Հոհենլոհէին սոնքալով կը յայտարարէր, թէ «այլեւս Հայկական Հարց գոյութիւն չունի» (էջ 147):

Իթթիհատի եւ թուրք կառավարութեան լիազօր Պէհաէտտին Շաքիր՝ Ատանայի պատասխանատու-քարտուղարին՝ ձեմալ պէյին Փետրուար 18, 1915ին կը գրէր հետեւեալը.—

«Թիւրքիստա եաշայան պիր ումում էրմենիլերի, պիր քանեսի գալմայըննայա գատար մահվա գարար, վէ պու խուսուստա (ձեմիլէթ) հիւֆիւմէթէ սալահիլէթը վասիլէ իքա էթմիշ տիր»:

«Թերքիպաթը գաթիլիէ հագգընտա հիւֆիւմէթ՝ վալի վէ օրտու ֆումանտալարընա իյգահաթը լաղըմէի վերեմեթ տիր»:

«Իքթիհաստ վէ Թերագգընըն, պիլ ումում միւրախասալարը, պուլունտուլարը երլերտէ, պու մեսելեմին քագըպ իլէ մեշգուլ օլաճագար: Հէշ պիր էրմենիլին, նայիլը մուգահարէթ վէ մուաւեմէթ օլմասընա մէյտան վերմիլէմէֆլեր տիր»:

Բառացի թարգմանութիւնը.—

«Թուրքիոյ մէջ ապրող բոլոր հայերը — առանց մէկ հատ իսկ ողջ թողելու — բնաջնջելու որոշում տրուած է, եւ այս մասին Իթթիհատը (ձեմիլէթ) կառավարութեան տուած է ամենալայն իրաւասութիւն»:

«Սպանութիւններու կազմակերպութեան մասին (քերքիպաթը գաթիլիէ), կառավարութիւնը վալիներուն (նահանգապետ) եւ բանակի հրամանատարներուն անհրաժեշտ բացատրութիւններ պիտի տայ»:

«Իթթիհատ եւ Թերագգըն բոլոր ներկայացուցիչները, իրենց գտնուած տեղերուն մէջ, այս խնդիրը հետապնդելու դործով պիտի ղրաղին եւ թոյլ պիտի չտան որ ոեւէ հայ օգնութիւն կամ օժանդակութիւն ստանայ»:

Դարձեալ պատասխանատու-քարտուղար ձեմալ պէյին (Ատանա).

«Արթէգ, պու կիւն (էրմենիլերին), էսաստան գալլ վէ իմհայա գարար վերմիշ վէ պուպապտու, մաէթթեսիւֆ, փէֆ գանլը քետապիր իքթիլազընա մենպուր գալմըլ տըր»:

«... Շիմտիլիֆ նալիպը նագարը տըգգաթ օլանլարընըն, քետապիրը գանունիլէ իլէ քեմֆիլլէրի, մուաֆըգ կէօրիւմիշ տիր, ֆի պու տա ինրաաթը էլիլիլէյէ էսաս օլուր»:

Թարգմանութիւնը.—

«Այլեւս այսօր հայերուն ամբողջական բնաջնջումին մասին որոշում տրուած էւ այդ առթիւ դժբախտաբար չափազանց արիւնալի միջոցներ գործադրել ստիպուած ենք»:

«... Հիմակուհիմա աշըի գարնող հայերը «օրէնքի» միջոցներուն յարմարցնելով բնաջնջեցէթ (քեմֆիլլ): Այդպէս յարմար տեսանք, որպէսզի այդ պատրուակով մեր յետոյ կատարելիքներուն ալ հիմունք մը գտած ըլլանք»:

Ներքին գործերու նախարարութեան շրջաբերական-ծածկագիրը գաղտնի հեռագրին բնագիրը.

Մայիս 12, 1915 (1331).—

«Էրմենի ֆէօյլերի պոշալթտըրըլտըգճա, պունլարըն մըգտարը, վէ ֆէօյլիւն իւմի իլէ, մահալը սեւգլերի հագգընտա, փէյտէր փէյ մալիւմաթ իյթասը»:

Բառ առ բառ թարգմանութիւնը.—

«Հայ զիւղերը պարպածնուդ պէս, անոնց թիւը, զիւղին անունը, եւ զրկուած վայրերու (մահալը սեւգլերի) մասին հետզհետէ տեղեկութիւններ տուէք»:

Ծրագրուած ցեղասպանութիւնը վարագուրելու համար շինուած վարչական «չինձու» օրէնքը հրատարակելէ 2 օր առաջ իսկ արդէն ծածկագիրներով ոճիրները գործադրուիլ սկսած էին»:

ՈՃԻՐԸ ՎԱՐԱԳՈՒՐՈՂ ԹՐԳԱԿԱՆ «ՕՐԷՆՔ» ԿՈՉՈՒԱԾ ԱՊՕՐԻՆՈՒԹԵԱՆ ԲՆԱԳՐԻՆ ՄԷԿ ՄԱՍԸ

էջ 237.— ՍԵՒԳԸՅԱԹ ՀԱԳԳԸՆՏԱՔԻ ՔԱՆՈՒՆ պերվեհմի աթի տիր.—

ՄԱՏՏԷ 1. «Վագթը սեֆերտէ օրտու վէ գոլ օրտու վէ ֆըրգա

գումանտանլարը վէ պունլարըն վեֆիլլերի, վէ մուսթագիլ մեզը գումանտանլարը, էհալի քարաֆընտան, հէր հանկը պիր սուրէք իլէ, էւամիրը հիւֆիւմեքէ վէ միտաֆայը մեմլեֆեքէ վէ մուհաֆագայը սասայիշէ միւքէպիլֆ, ինրասք վէ քերքիպաքա գարշը մուխալեֆէք վէ սիլահլա քեմաուզ վէ մուգաւեմէք կէօրիորլեր սէ, տէր ազըպ, *դուվլայը սաքերիշէ իլէ*, շիտսեքի սուրեքսէ, *թէէտիպաթ ևաֆմաղա* վէ քեմաուզ վէ մուգաւեմեքի *էսասընտան իմհա* էքմէյէ մէէգուն վէ մեմպուր տըր»:

ՄԱՍՏԷ 2.— «Օրտու վէ մուսթագըլ գոլ օրտու վէ ֆըրգա գումանտանլարը իյնապաքը սաֆեքիյէյէ մեպնի, վէ եա մասուլըզ, վէ խինանեքիքիքնի հըսս էքտիֆլերի, գուրքա վէ գասապաք էհալիսի, միւֆեքիսէն վէ եա միւքեքմիյէն տիկէր մահալլերէ սեւզ վէ իսֆեան էքտիքէպիլլերլէր»:

ՄԱՍՏԷ 3.— «Իշպու գանուն՝ քարիլը մեշքիմտէն մէօքեպէր տիր»:

13 Բէնէպ 1333 (14 Մայիս 1915)

Ութ յօդուածներէն միայն 3ը տպագրուած են:

**ՀԱՅԵՐՈՒ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԻՆԾՈՒ «ՕՐԷՆՔ»ԻՆ
(ՍԵԻԳԸՑԱԹ ՔԱՆՈՒՆԸ) ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.—**

Յօդուած 1.— *Ձօրաշարժի ատեն* (վագքը սեֆէր), *գօրարանակի, բանակաթեւի* (գոլ օրտու), *գօրարածինի* (ֆըրքա) *և անկախ վայրերու հրամանատարները, Երբ որեւէ կերպով կառավարութեան հրամաններուն, կամ Երկրի պաշտպանութեան, կամ Հանրութեան խաղաղութեանը պահպանութեան վերաբերեալ, դործադրութեանց և կազմակերպութեանց՝ հակառակութիւն և կամ զէնքով յարձակում և ընդդիմութիւն տեսնեն, անմիջապէս, զինուորական ուժով, ամենախիստ կերպով պատժելու և յարձակումն ու դիմադրութիւնը արմատական կերպով բնաջնջելու արտօնուած և պարտաւորուած են:*

Յօդուած 2.— *Բանակի, անկախ գոլ օրտուի և գօրարածինի հրամանատարները, զինուորական կարելիութեանց համաձայն, լրտեսութիւն, դաւաճանութիւն զղացուած զիւղերուն և քաղաքներուն բնակիչները կրնան, անհատապէս կամ հաւաքարար, ուրիշ տեղեր բռնի զրկել (սեւզ) և բնակեցնել:*

Յօդուած 3.— *Այս օրէնքը դործադրելի է իր հրատարակութեան թուականէն:*

Մայիս 14, 1915 (1331), 13 Բէնէպ, 1333:

Այս պատրուակ-օրէնքը պարփակող պետական միջ-նախարարական շրջաբերականը կը բաղկանայ 5 յօդուածներէ: Մնացեալ 5 յօդուածները հայոց դէմ ցեղասպանութեան կը վերաբերին: Եւ այս հրահանգները զազտնի պահուած են: Հրատարակուած չեն, միայն ձեռագրով բազմադրուած են:

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆՆԵՐՈՒ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապրիլ 15, 1915

ԱՏԱՆԱ ՎԻԼԱՅԹԻ

Մուխապերաք միւտիքիյէքի

*Հնդհանուր թիւ
Մասնաւոր թիւ
ԳԱՂՏՆԻ Է*

Ումում նիւմերօ
Խուսուս նիւմերօ
ՄՈՒՀԻՄ ՏԻՐ

Վիլայէք ժամտարմա Ալայ Գումանտանլըղը մեմուպը պեհիյէսիմէ

Իզգեքլու էֆեմտիմ,

Ձէյլ-սեմէ 1331 Նիսան
(1915 Ապրիլ)

«Գումիքելէր մեմսուպիմին վէ սայիր քեւզըֆ էտիլեմէէ էշ-խասը մուգիրէ վէ մուսալլեհանըն, պուլումանագ պումպա, վէ էպի-հայը մեմնուալարը իլէ,

Թուփլուգա պիր հալտէ վէ պէօյիլֆ գըքաատա, ֆաքոկրաֆլարընըն, չեֆտիքիլլերէֆ, սերիյէն իրսալը, վէ քեւզըֆ վէ քեպիիտ օլուման էշխաս էսամիսիմին իշչարը տախիլիյէ մեգարէքը մեխիսիսիմին, էմր քիլեկրաֆիսի իզգերիմէ, քաւսիյէ օլումուր էֆեմտիմ:

Վալի ՀԱԳԳԸ

17 Նիսան 1331
(Կնիֆ) Մեհմէտ»

Թարգմանութիւնը բնագրին
ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ
Թղթակցութեան Տնօրէնութեան
Նահանգիս ժամատարմի գունդի
հրամանատարի բարձրապատուութեամբ

Ընդհանուր թիւ
Մասնաւոր թիւ
ԳԱՂՏՆԻ Է
Կարեւոր է
Վսեմապատիւ էֆենտիս,
ՅԱԻԵԼՈՒԱԾ .— 1915 Ապրիլի .—

«Կոմիտէներու պատկանողներուն եւ այլ վնասակար անձերուն, որոնք պիտի ձերբակալուին, իրենց քով գտնուելիք ուժեր կամ արգելուած զէնքերուն հետ, միասնաբար, լուսանկարները մեծ ծաւալի վրայ հանել տուէք: Զանոնք փութով զրկելու եւ ձերբակալուած ու հեռացուած անձերուն անուններն ալ իմացնելու մասին ներքին գործոց նախարարութեան բարձրապատուութիւնը հեռագրաւ հրաման ղրկած է: Այս առնչութեամբ Զեզի կը յանձնարարենք:

Նահանգապետ ՀԱԳԳԸ

Ապրիլ 17, 1915

(Կնիք) Մեհմէտ»

Ապրիլ 17 թուականով այս հեռագիրը ցոյց կու տայ Մարտ 25ի դադանի հրահանգներու գործադրութիւնը:

Թուականները նշանակուած հետեւեալ վաւերագրերը կը վերաբերին բնաջնջումին այն զինուոր-գործաւորներուն, որոնք տակաւին ողջ մնացած են մինչեւ 1917:

Ա.— Հալէպ՝ Տար իւլ Մուալլիմի հայ գործաւորներու մասին:
(Կեկտեմբեր 27, 1917)

Բ.— Հալէպ՝ «Սանայի մեքեպի» հայ գործաւորներու մասին:
(Նոյեմբեր 6, 1917)

Գ.— «Շըմէն տիւ ֆէր»ի հայ գործաւորներու մասին (ստորագրութիւն վալի ՊԵՏՐԻ):

(Մարտ 13, 1918)

ԳԱՂՏՆԻ, Կարեւոր

Դ.— Մարտ 19, 1918 «մահացանկերը պատրաստուած են»:

Ե.— «Երամէք-քապուրի» ցանկը.— Ապրիլ 1, 1918:

ԲՆԱԳԻՐՆԵՐՈՒՆ Ա., Բ. Եւ Ե.ը կը վերաբերին Հալէպի նահանգին:

ՀԱԼԵՊԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳԾԻ ԿՈՄԻՍԱՐՈՒԹԵԱՆ

Թիւ՝ 1294/1

«Վիլայէթի (նահանգի) կայարաններուն մէջ գտնուող շոգեկառքերու պաշտօնեաներէն եւ ծառաներէն հայերուն անուանացանկը կազմել եւ ամէն մէկուն, հարցաքննութեամբ, ինքնութիւնը ճշդել եւ մինչեւ հիմա ոստիկանութեան կողմէ ինչպէս ճանչցուած ըլլալը եւ անոնց ընտանիքի անդամներէն ու ազգականներէն որոնք կան, ատոնց մասին ալ ձեռք բերուած տեղեկութիւնները անոնց անուններուն դիմաց արձանագրել եւ շուտով զրկելու մասին Հոկտեմբեր 23, 1917 (1333) թուականով եւ 503 ընդհանուր թիւ շրջաբերականով հաղորդուած էր, եւ պատասխանը տակաւին չէ ստացուած: (Ուստի) նախապէս հարկ եղածը շտապով կատարել եւ իմացընել»:

Ներքին գործոց նախարարութեան 503 թիւ, Հոկտեմբեր 23, 1917 թիւ հրամանագրին կրկնումը.—

ՀԱԼԵՊ ԱՍՔԵՐԻ ԽԱԹԹԸ ՔՈՄԻՍՆԵՐԼԻՅԻ

1294/1

«Վիլայէթ տախիլինտէֆի սրասիօնկարտա պուլունան շըմէն-տըֆէր մեմուրին վէ միւսքեխտիմին, էրմէնի օլանկարն, էսամիսի հաւի պիք մատվէլ քանգիմի, իլէ պերապէր, պուլարտան հեր պիրինին, քահգիլը հալ վէ հիւվիլէրիլի իլէ, շիմտիլէ գատար գապրթանա, մէ սուրէթլէ քանրմըշ, պուլունարգլարընըն վէ էֆրատը այլիլէրի իլէ ազրապարընտան քիւլէր պուլունտուղընըն վէ պուլար հազընտա, իսքիսալ օլունապիլէն մալիւմքըն, իսիմլէրի հիգալարընա տերն օլունարագ, սերիլէն իրսալը հազընտաֆի 23 Թեշրինի էվվէլ 1333 (Հոկտեմբեր 23, 1917) քարիլի վէ 503 ումում միւմերուլը քահիրաքըն, վէ հեմուգ մեւալը վիւրուտ էքմետիլինտէն, իշտարը սապըգ վեմիլէ իգթիգասընըն սիրաաքը ինպասը պապընտա»:

Ընդհանուր թիւ 958
Մասնաւոր թիւ 64

Զինուորական գծի կոմիսերութեան բարձրապատուութեան .
ԳԱՂՏՆԻ Է

Վսեմապատիւ էֆենտիս,
Ներքին գործոց նախարարութեան վերեւ յիշուած պաշտօնա-

գրին պատճէնը Փետրուար 14, 1918 թուականով եւ ընդհանուր թիւ 58ով ներփակելով Ձեզի, Երկաթուղիի հայ պաշտօնեաներէն(*) եւ գործաւորներէն Եզոզներուն անուանացանկի տոմարը կազմել և ձեռք բերուած տեղեկութիւնները անոնց անուններու գիմացը նշանակելու մասին հարկ եղածը կարգադրել կը խնդրուի, էֆենտիս:

Ստորագրութիւն ՀԱԼԵՊԻ ՎԱԼԻ ՊԵՏՐԻ

Բ Ն Ա Գ Ի Ր

ԽԱԹԹԸ ԱՍՔԵՐԻ ՔՈՄԻՍԵՐԼԻՑԻ ՃԱՆԻՊԸ ՎԱԼԱՍԸՆԱ

Ումումի 958
 Խուսուսի 64
 Մուհրէմ տիր

Սատեթլու էֆենտիս,

Տալիսիյէ իէգարեթիմնի 14 Շուպաթ 1334 (1918) Քարիս վէ 58 ումում ցիւմէրուլու, քահրիբաթ սուրեթի, պալայա ցազլ օլոււմ-մագլա, շրմէնտրֆէր մեմուրիմ վէ միւսքեխտիմիմտէն էրմէնի օլանլարըն իսիմլէրի հիգասընա, մալիւմաթը միւքասըլանըն տեթնի իլէ, իրսալը էսպապընըն իսքիֆմալը, քեմեմնի օլոււմուր, էֆենտիս:
 Հալէպ, Վալիսի ՊԵՏՐԻ(**)

Մարթ 13, 1334 (1918)

(*) Հայտար-Փաշա-Հալէպ, Ամատուլուի երկաթուղիի վարչութեան տնօրէն (գերման-գուիցերիացի) Հիւկեմնի եմրակայ կը գործէին 830է աւելի հայեր կարեւոր պաշտօններու վրայ, հայ գործաւոր-գիմուրներէն գատ:

(**) Վերոյիշեալ Հալէպի Վալի ՊԵՏՐԻն 1915ին Կ. Պոլսոյ ոստիկանական տնօրէնն էր, որ Ապրիլ 24ին (1915) հայ մտաւորականներու ձերբակալման, աքսորման եւ սպանութեան գլխաւոր ռըրագործներէն մին էր: Թալէաթի մտերիմն էր:

1918 Հոկտեմբեր 30ի զինադադարէն երկու շաբաթ առաջ՝ Պետրի, Թալէաթի եւ ընկերներուն հետ փախած էր Պերլիմ, յետոյ անցած էր Մոսկուա: Աւելի ետք, ձեմալ փաշայի հետ գացած էր Քապուլ (Աֆղանիստան) եւ հոն սպաննուեցաւ: Սպաննուողը, որ գաղտնի մնացած է ցարդ, վերցուցած էր մաեւ Պետրիի թուղթերուն պայուսակը:

Հաւանական կը թուի որ ահաբեկիչը ուս քոլշեիկ մըն է, կամ քոլշեիկ հայ մը:

Բ Ն Ա Գ Ի Ր

ՀԱԼԵՊ ՎԻԼԱՅԵԹԸ ՃԵԼԻԼԵՍԻՆԵ

Դալէպ պոլսուրուլորը տեֆթերիմ, րապտէն, արգ վէ քագ-տիմ գըլընտըրը մաարուգորը:

Ստորագրութիւն ՀԱԼԵՊ ԽԱԹԹԸ ԱՍՔԵՐԻ ԿՈՄԻՍԵՐ ՎԵՔԻԼԻ ՀԻԻՍԻԻ(?)

1334 Մարթ 19

«Էմր միւպալլաղայա քեիֆիգը մուամելէ իլէ, տեֆթերլէր իյատէ գըլընմագ իւգերէ — փոլիս միւտիւրիյէթիմէ:

Մարթ 20, 1334

(1 բառ անընթեռնելի)

«Սըրիյէն դամմ իտարիէ, Մարթ 21, գայտ 778—584

Արշաւիր էֆենտիյէ

ձեՄԻԼ

Մարթ 23»

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆԸ. —

Հալէպի նահանգապետի բարձրապատուութեան.

«Պահանջուած տոմարը (հայերու անուանացանկը) ներփակ կը ներկայացնենք Ձեզի:

Ձինուորական գծի կոմիսարի փոխանորդ ՀԻԻՍԻ

«Հաղորդուած հրամանի համաձայն գործադրել եւ տոմարները յանձնել ոստիկանութեան տնօրէնութեան:

Մարտ 20, 1918

(մէկ բառ անընթեռնելի)

Թիւ 3119/957

«Շուտով զրկել Ղայըն — Միմ (?)

Վարչութեան

(Ղամմ)

Մարտ 21, 1918

ձեՄԻԼ

778/584

Արշաւիր էֆենտիին (ծանօթ հայ լրտես Արշաւիր Եասեան):

**

Հայ զինուորներու, գործաւոր զինուորներու եւ արհեստաւորներու մասին կան տակաւին ուրիշ քանի մը հետազոտներ եւս,

որոնք պիտի յիշուին, երբ Հայկազի նահանգի հայերու ցեղասպանութեան մասին գրենք:

Հեռագիրներէն այս յիշուածը եւս թէեւ կը պատկանէր եւ ուղղուած էր Հայկազի նահանգապետին, բայց կը վերաբերէր մասնաւորապէս Երկաթուղիի շինութեան մէջ զործող եւ տակաւին ողջ մնացածներուն, որոնք կ'աշխատէին չոր հացի մը համար, Օսմանիէյէն Պաղչէ, Եարպաչի, Ինթիլլի, Այրան, մինչեւ Իսլահիէ շինուող Երկաթուղային Լնթուղիներուն եւ փապուղիներուն մէջ: Վերոյիշեալ վայրերը վարչականօրէն Լնթակայ էին Ատանայի նահանգապետութեան: Եւ սպանութեանց մասնակից են Ատանայի կեդրոնի հրամանատարը՝ հազարապետ Աւնի, որ թէ՛ ժանտարմբրի հրամանատար եւ թէ Պատերազմական Ատեանի անդամ էր, Վանի նախկին վալի ձեւակերպ, որ նահանգապետ նշանակուած էր Ատանայի:

Հազարապետ Աւնի, Զինազաղարէն յետոյ ժամանակ մը պահուելէ ետք, եղած էր Պոզաղլայանի պայմապամ (Անդարայի նահանգին Լնթակայ): 1919ին, իրեն դէմ եղած բողոքներուն հետեւանքով, հեռացած եւ միացած էր Մուսթաֆա Քեմալի չեթէներուն՝ «միլլիճի»ներուն եւ գործակցած էր անոնց:

Ճիշդ չէ այն տեղեկութիւնը, թէ Աւնի Իզմիր անցած եւ հոն սպաննուած է: Այդ լուրը հնարուած էր իր հետքը կորսնցնելու համար:

* *

Ատանայի հայերուն նիւթական կորուստը 300·000·000 տուար է: Ազգային սեփականութիւնները այդ հաշիւին մէջ չեն:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՁ

Տիգրանակերտի նահանգը Արեւմտեան Հայաստանի պատմական վեց նահանգներէն մին է. կոչուած էր՝ Երրորդ Հայք: Իր հայկական անունը՝ միջագային լեզուի մէջ, Tigranocerta է:

1914 Փետրուար 7ի թուրքիտուս համաձայնագրով, Հայկական Բարենտրոպումներու ծրագրին մաս կը կազմէր այս նահանգն ալ: Էրզրում, Վան, Պիթլիս մէկ շրջան, ընդհանուր քննիչ գնդապետ Հոֆի հսկողութեան տակ. Տրաշիզոն, Սերաստիա, Խարբերդ եւ Տիգրանակերտ, չորսը մէկ շրջան, ընդհանուր քննիչ Վեսթենենկի հսկողութեան տակ: Այդ տեւն Մուսուլի վալի տոքթ. Բեշիտ Թալէաթի կողմէ նշանակուած էր խորհրդական Վեսթենենկի: Այս ընդհանուր քննիչները ընդհանուր պատերազմի պատրուակով ետ գրկուած էին:

Տիգրանակերտի նահանգին տարածութիւնը 1915ին 46·800 քառակուսի քիլոմէթր էր (կամ 18·000 քառակուսի մղոն), որ բաւ է Խորհրդային Հայաստանի տարածութեան մէկուկէս անգամէն աւելի:

Տիգրանակերտի նահանգի մասին հայերէն եւ օտար լեզուներով պատմական աշխատասիրութիւններ չստ կան. — Հաճի Խալֆայի «Ճիւղանումա»ն, Շայմոյի «Շիրեֆնամէ»ն, Նիկալուրի, Համէր Տը Հէլի, Կոլտրնի Երկասիրութիւնները, «Ճրքնըլ աւ Ռոյըլ ձեւկրաֆիք Սոսայըթի»ի 1867ի թիւը, Ինչպէս եւ Մաքս Փոն Օփընհայմի,

Սթիբիդիոսֆի «Գարա Ամիտ»-ը, Ֆրանսական հիւպատոս Հիւարթի եւ մասնաւորապէս Լեման Հասփթի «Հայաստան անցեալին եւ ներկայիս» նշանաւոր դործին Ա. Հատորը, ինչպէս նաեւ զանազան համայնագիտարաններ :

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՁԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Տիգրանակերտի (Տիարպեքի) վիլայէթը ունէր հետեւեալ 4 սանճագները (գաւառները) 1915ին.— Տիգրանակերտ, Արզնի, Մարտին եւ Սեւերեկ : Տիգրանակերտի գաւառը (սանճագ) ունէր 5 գաւառակներ (գազա, գայմագամլը) — Տիգրանակերտի կեդրոնական գազա, Պշէրի, Տիրէք, Սլիվան, Լճէ :

Արզնի սանճագը՝ կեդրոնական Արզնի գազան, Բալու եւ Ջերմիկ :

Սեւերեկի սանճագը՝ Սեւերեկ եւ Վերանչէհի :

Մարտինի սանճագը՝ Մարտին, ձեզիրէ, Աւնիէ (Սաւուր), Միտիաթ եւ Նիսիպին գազանները :

ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ

1878ին Հայերու թիւը, Պատրիարքարանի ցուցակով, 150·000 էր :

1882ին դարձեալ նոյն թիւը ցոյց տրուած է, առանց հաշուելու 5 տարուան աճումը կամ նուազումը : Թրքական «Սալնամէ»-ն 1878ին 180·000 ցոյց կուտար :

1890ին, Վիթալ Բինէ Փրանսացին, իր «Ասիական Թուրքիա» երկին մէջ (Ա.Հատոր), յենելով թրքական թիւերու վրայ, Տիգրանակերտի նահանգին մէջ բնակչութեան ընդհանուր թիւը ցոյց կու տար 471·462 եւ քրիստոնեաներու թիւը՝ 132·549, ինչ որ ճիշդ չէր :

Մարսէլ Լէառ (Գրիգոր Զօհրապ)՝ իր Փրանսերէն երկին մէջ՝ «Հայկական Հարցը Փաստաթուղթերու Լոյսին Տակ», էջ 61, կու տայ Տիգրանակերտի բնակչութեան թիւը՝ հետեւեալ մանրամասնութեամբ, որ աւելի ճշգրիտ է :

Հայ 105·000 = 35,5%

Թուրք 45·000 = 15,2%

Նստակեաց քիւրտ 30·000 = 10,2%

Թափառաչըջիկ քիւրտ 25·000 = 8,3%

Գրգըլպաշ 27·000 = 9,1%

Եղիտի 4·000 = 1,3%

Այլ քրիստոնեաներ՝ ճաքփիթ, նեստորական եւ քաղղէացի 60·000 = 20,4%

Գումար 296·000 = 100%

Թուրք գրող Ասատ Ուրաս, «Հայերը Պատմութեան մէջ եւ Հայկական Հարցը» երկին մէջ, էջ 139, կ'արձանագրէ Մարսէլ Լէառի թիւերը. Հայ՝ 105·000, Պատրիարքարանի թիւը՝ 1882ին՝ 150·000 եւ հոյոց թիւը նուազեցնելու համար Փրանսական «Գեղին Գիրք»-էն մէջըրերով կ'ըսէ, թէ հայերու թիւը 79·129 էր եւ քիչ մը եւս առաջանալով կ'աւելցնէ, թէ 1914էն ետք, թուրք կառավարութիւնը հայերու թիւը ճշդած (?) էր Տիգրանակերտի նահանգին համար. ընդհանուր բնակչութիւն՝ 616·825 եւ հայ լուսաւորչականները ինքնուրու էր 55·830ի, հայ կաթողիկոսները 9·960ի, հայ բողոքականները՝ 7·376ի, որով Լիւզ գումարենք, ըստ Ասատ Ուրասի, հայ 3 հատուածներուն թիւը կ'ըլլայ 73·166. մնացեալը՝ իսլամներ :

Հիմա տեսնենք, թէ թուրք Պատրիարքարանի Ատեանի արձանագրութեան եւ վկայաթուղթերուն մէջ ի՞նչ կ'ըսեն հայերու թիւի մասին (դատաւարութեան թուրքերէն բնագրէն քաղուած նոյնութեամբ) .

է հայաստա թուրքերէնով, եւ ապա՝ թարգմանութիւնը տառացիօրէն.—

Կուտանք իր կարեւորութեան համար նախ բնագիրը, ինչպէս որ

Թագվիմը վեֆայի թիւ 3540

Պիրիմնի մուհաֆեմէ Նիսան 27, 1335

Բէիս Ֆերիֆ Նազըմ Փաշա

Ազա Միր Լիւս Ջեֆի Փաշա, Միր Լիւս Ալի Նազըմ Փաշա, Միր Ալայ Բեմէպ Ֆերիտ պէյ.—

Թղթածրար՝ թիւ 6, եւ թղթածրար թիւ 14, վկայաթուղթեր՝ թիւ 4 եւ 1.—

«Մամուրէթ իւ Ազիզ վալիսի քարափրնտան, Մալաքիա միւքեսարփրնա շիֆոէ իլէ, վերիլէն Էմիրտէ, քեպլիղաթը Էֆիտէյէ րազմէն, եինէ եոլարտա փէֆ չոգ Էնաստըն պուլունտուղը իխպար Էտիյոր :

Պունտաֆի մուհազիր, մէօթաճը իյգահ օլմատըղը կիպի, պունտա քեքալի կէօթերէն մեմուրիինին շիտտեթլի քեմգիյեյէրի, տալիլիյէ նիգարէքը նեյիլիսինտէն, Էֆիտէն, պիլտիրիլմէֆ լէ, հուտուտ տալիլիինտէֆի պիլ ումուլ նեստուլէր, տրգաթը պիր սուրէթլէ, տեֆն Էտիլմէֆ իւչիւն, մըգտարը ֆեաֆի ժանտարմա իլէ,

دیوان حرب سرن شاکونی صبه حریده سی

عطفاً درمیان اینکده در . [ترتیب ۶ و ترتیب ۱۴ و تبغه ۴ و ترتیب ۱۱ و تبغه ۱] معمورة العزیز والیسی طرفندن ملاطیه منصرفه شیفره ایله وریلان امرده تبلیغات اکیده به رغماً بینه یوللرده بک جوق اجسادک یولدیغی اخبار ایدیلبیور بونده کی محاذیر محتاج ایضاح اولدیغی کی بونده تراخی کوسون مأمورینک شدنه تجزیه لری داخایه نظارت جایله سندن اکیداً بیادیر لکله حدود داخلنده کی بالعموم جسدلرد قتل بر صورتیه دفن ایملک ایچون مقدار کافی زاندازمه ایله ایلیری کلن مأموریندن بر قاج ذانت بو ایشه مأمور ایدیله رک همان هر طرفه جیقا رلمسی لزومی اختصار اولمخنده دره دیار بگردن سوق اولنان ارمنیلرک یوز بکرمی بیگ قوسه بائع اولدیغی حقه کی رسیدک داخلیه نظارتنه کشیده ابتدکی ۱۵ ایلول ۳۱ تاریخنی شیفره وقایعک درجه شمول واهیمی ارانه کافیدر [ترتیب ۱۲ و تبغه ۱] برارمقوبی اصحاب اینده جک برمسلمه انک خانسی اوکنده اعدام و خنسی احراق و مأموریندن ایسه سرد و دیوان حریده سوق و حماهی روا کورنلر جهت عسکریه دن ایسه لر نسبت عسکریه لرینک قعله بینه برای محاکمه کور دیوان حریده تودیع اولمخنده متداثر اوچنخ اردو قوماندانی محمود کامل اهضالی تلفراف [ترتیب ۱۳ و تبغه ۱] بوفجایمده نهی عن المنکر امر

تکلیفاتی بایرکده

- ۱. **۱۲۰۰۰۰** — ۱۲۰۰۰۰ نفره ایچون سرن شاکونی صبه حریده سی
- ۲. **۱۲۰۰۰۰** — ۱۲۰۰۰۰ نفره ایچون سرن شاکونی صبه حریده سی
- ۳. **۱۲۰۰۰۰** — ۱۲۰۰۰۰ نفره ایچون سرن شاکونی صبه حریده سی

یله یولدیغی اخبار ایدیلبیور بونده کی محاذیر محتاج ایضاح اولدیغی کی بونده تراخی کوسون مأمورینک شدنه تجزیه لری داخایه نظارت جایله سندن اکیداً بیادیر لکله حدود داخلنده کی بالعموم جسدلرد قتل بر صورتیه دفن ایملک ایچون مقدار کافی زاندازمه ایله ایلیری کلن مأموریندن بر قاج ذانت بو ایشه مأمور ایدیله رک همان هر طرفه جیقا رلمسی لزومی اختصار اولمخنده دره دیار بگردن سوق اولنان ارمنیلرک یوز بکرمی بیگ قوسه بائع اولدیغی حقه کی رسیدک داخلیه نظارتنه کشیده ابتدکی ۱۵ ایلول ۳۱ تاریخنی شیفره وقایعک درجه شمول واهیمی ارانه کافیدر [ترتیب ۱۲ و تبغه ۱] برارمقوبی اصحاب اینده جک برمسلمه انک خانسی اوکنده اعدام و خنسی احراق و مأموریندن ایسه سرد و دیوان حریده سوق و حماهی روا کورنلر جهت عسکریه دن ایسه لر نسبت عسکریه لرینک قعله بینه برای محاکمه کور دیوان حریده تودیع اولمخنده متداثر اوچنخ اردو قوماندانی محمود کامل اهضالی تلفراف [ترتیب ۱۳ و تبغه ۱] بوفجایمده نهی عن المنکر امر

«**Տիարաբեֆիրտէն սեւզ օլունան էրմենիլերին իւզ էիրմի պին (120.000) նուֆուսա պալիղ օլտուղլ հագգընտաֆի ՐԵՇԻՏին (վալի) տախիլիյէ նեգարեքինէ քեշիտէ էքտիյի 15 էյուլ 1331 (1915) քարիլիլի շիֆոէ, վեֆայինին տերեմէի շումուլ վէ էհեմմիլեքինի, իրայէէէ քեաֆիտիր :**

Թղթածրար՝ քիւ 12, փաստարուղթ քիւ 1.—

«**Տիւանը հարպը Էօրֆի մուհաֆեմաքը գապըք ներիտեսի» էջ՝ 7 :**

Թարգմանութիւնը.—

«**Պարբերգի վալիին (ընդհանուր կառավարիչ) կողմէ՝ Մալաթիոյ միւթևարքին ծածկաղիր հեռագրով հրամայուած և, զանիցս կրկնուելուն հակառակ, տակաւին ճամբաներու վրայ կը մնան չափազանց շատ զիականեր (վիէֆ չազ էնսատ) : Այս անպատահութիւնները բացատրելու հարկ չկայ : Այդ մասին թերացում ցոյց տուող պաշտօնեաները խստիւ սրտովուելու մասին ներքին գործոց նախարարութենէն բաղմիցս (էֆիլիտէն) հաղորդուած էր :**

«**(Ձեր) սահմաններուն մէջ գտնուող բոլոր զիակաները ուշադիր կերպով թողելու մասին բառականաչափ թիւով ժանտարմներ նշանակեցէ՛ք այդ պաշտօնին և և աչքի դարձող պաշտօնեաներէն ալ քանի մը հողի, այդ գործին համար պաշտօն տալու և անմիջապէս գործի սկսելու անհրաժեշտութիւնը կը հաղորդուէք :**

«**Տիգրանակերտէն բնագաղթի ենթարկուած (սեւզ օլունան) հայերուն թիւը ՀԱՐԻԻՐ ՔՍԱՆ ՀԱՁԱՐԻ (120.000 *) հասած ըլլալը, ընդհանուր կառավարիչ ՐԵՇԻՏին կողմէ՝ ներքին գործոց նախարարութեան զրկած ծածկաղիր հեռագրին մէջ, Սեպտեմբեր 15, 1915 (1331) թուականով, բաւարար է ցոյց տալու, թէ այդ ղէպերը ի՛նչ աստիճանի ծաւալ և և հաւարութիւն ունին» (վեֆայինին տերեմէսի շումուլ վէ էհեմմիլեքինի իրայէէէ քեաֆի տիր) : (Թղթածրար թիւ 12, վաւերաղիր՝ թիւ 1, Պատերազմական Ատեանի արձանագրութիւն, էջ 7) :**

(*) 120.000ի այդ քիւն մէջ չեն Տիգրանակերտի նահանգի հայ գիւնտորները, որ կանչուած էին Օգոստոս 1914էն մինչև Յուլիս 1915 և որոնք կը գտնուէին նահանգին գանազան մասերուն մէջ կամ նահանգէն դուրս՝ գիւնտրական կայաններու մէջ :

Միջանկեալ ըսենք, որ այս դատավարութեանց ընթացքին, թուրք պաշտպան փաստարան Ճելայետտին Արիֆ պէյ (*) Պատե-
րազմական Ատեանին ուշադրութեան կը յանձնէր, որ թուրք ամբաս-
տանետընկերու մասին տրուելիք որոշումները ոչ թէ ներկայի, այլ
նաև թուրքի այս պապայ սերունդին վրայ պիտի ազդեն եւ օսման-
եան պատմութեան հետ կապ պիտի ունենան (էջ 10) : Ուստի կը թե-
լազրէր դատարանին աւելի նախանձախնդիր ըլլալ : Կ'ազաչէր որ
թուրք պատմութիւնը եւ թուրք սպառազ սերունդը փրկուին այս ցե-
ղասպանութեան դատապարտութենէն :

ՎԻԹԱԼ ՔԻՆԷ՝ (1890ԻՆ) ՀԱՅԵՐՈՒ ԹԻԻԻ ՄԱՍԻՆ

Վիթալ Քինէ հետեւեալ մանրամասնութիւնները կու տայ, որ
րոնք պէտք է 40%ով աւելցնել՝ ճշմարտանման թիւեր ունենալու
համար.— կամ աւելի ճիշդը կրկնապատկելու է 25 տարուան շրջա-
նէ մը ետք՝ 1915ի համար :

Տիգրանակերտ սանճագի մէջ.—	Միայն Տիգրանակերտ քաղաքը.—
Հայ լուսաւորչական 28·984	Հայ լուսաւորչական 10·480
Հայ կաթողիկ 1·845	Հայ կաթողիկ 899
Հայ բողոքական 1·544	Հայ բողոքական 880
Գումար 32·373	Գումար 12·259

Տիգրանակերտի մէջ կային 6 եպիսկոպոսութիւններ եւ 12 ե-
կեղեցիներ :

(*) Ճելայետտին Արիֆ՝ օսմանեան իրաւաբանական համալսարանի մէջ սահ-
մանադրական իրաւունք կը դասախօսէր, մէկ աչքին ակնոց կը կրէր, 300 փառու-
նոց հաստափոր մսակոյտ մըն էր եւ դրամատէր : Ըստ գրագետ Ալի Քեմալ պէյի
«ուսող խմոր», իր բառով՝ «պոն վիվէօր» մըն էր :

Քեմալականները, գնահատելով իր գործունէութիւնը, — ջանքերը իթթիհա-
տակամ ռեքագործները պատիժէ փրկելու մասին, — զինքը Անգարայի առաջին Ե-
րեսպիտիսանական ժողովին նախագահ ընտրած էին, 1920ին :

Գազանբու հայ բնակչութիւնը.—	Արզնի գագա.—
Սեւերեկ — լուսաւորչական 7·000	Հայ լուսաւորչական 5·768
Կաթողիկ 100	Հայ կաթողիկ 109
Բողոքական 150	Հայ բողոքական 525
Գումար 7·250	Գումար 6·402

Սեւերեկ քաղաքը միայն.—	Բալու գագա.—
Լուսաւորչական 3·500	Հայ լուսաւորչական 9·700
Միլլան՝ Հայ լուս. 5·504	Հայ կաթողիկ 100
Տիբէք՝ Հայ լուս. 1·500	
Հայ կաթողիկ 426	
Հայ բողոքական 24	
Գումար 10·954	Գումար 9·800

Միլլան քաղաքին մէջ կային	Բալու քաղաք՝ Հայ լուս. 1·700
3 եկեղեցիներ եւ 2·000 լուսա- ւորչական Հայ :	

Լնէ գագային մէջ.—	Ջերմուկ գագա.—
Հայ լուսաւորչական 4·000	Հայ լուսաւորչական 1·832
Հայ կաթողիկ 420	Հայ կաթողիկ 116
Հայ բողոքական 490	
Գումար 4·910	Գումար 1·948

Արզնի սանճագին մէջ.—	Մարտին սանճագ.—
Հայ լուսաւորչական 17·300	Հայ լուսաւորչական 11·606
Հայ կաթողիկ 325	Հայ կաթողիկ 8·000
Հայ բողոքական 525	Հայ բողոքական 9·000
Գումար 18·150	Գումար 28·606

Արզնի քաղաք.—	Միայն Մարտին քաղաք.—
Հայ լուսաւորչական 2·000	Հայ լուսաւորչական 4·330
Հայ բողոքական 525	Հայ կաթողիկ 1·200
	Հայ բողոքական 1·700
Գումար 2·525	Գումար 7·230

Արզնի Մատէն՝ Հայ լուս. 1·000

Նիսիպին գագաւ.—		Միտիաք գագաւ.—	
Հայ լուսաւորչական	3·000	Հայ լուսաւորչական	2·276
Հայ կաթողիկ	1·000	Հայ կաթողիկ	2·250
Հայ բողոքական	1·000	Հայ բողոքական	5·000
	<hr/>		<hr/>
Գումար	5·000	Գումար	9·526

Նիսիպին ֆաղաֆ.—		Միտիաք ֆաղաֆ.—	
Հայ լուսաւորչական	2·000	Հայ լուսաւորչական	500
Հայ կաթողիկ	500	Աւինէն (Սաւուր գագաւ).—	
Հայ բողոքական	500	Հայ լուսաւորչական	500
	<hr/>	Հայ կաթողիկ	2·000
Գումար	3·000	Հայ բողոքական	300

ձեզիրէ գագաւ.—		Գումար	2·800
Հայ լուսաւորչական	2·500		
Հայ կաթողիկ	1·250	Սաւուր ֆաղաֆ.—	
Հայ բողոքական	1·000	Հայ լուսաւորչական	500
	<hr/>	Հայ կաթողիկ	1·000
Գումար	4·750		

Գումար 1·500

(Տե՛ս Վիթալ Քիմէ, Հատոր Ա., էջ 408, 449, 480, 515, 518, Հատոր Դ.): («La Turquie d'Asie» vol. 4)

Ըստ Վիթալ Քիմէի՝ 1890ին 3 սանճագի մէջ 79·034 հայեր կային (Տիգրանակերտ՝ 32·274, Արզնի՝ 18·154 եւ Մարտին՝ 28·606): 25 տարուան աճումով, 150·000ը մօտաւորագոյն թիւն է Տիգրանակերտ նահանգի հայերու թիւին:

Նահանգին մէջ հայերն ունէին 5 վանք եւ 105 եկեղեցի:

Տիգրանակերտի ցեղասպան վալի տոքթ. Րեչիտ, որ Մարտ 1, 1915ին Մուսուլէն փոխադրուած էր Տիգրանակերտ, իր Սեպտեմբեր 15, 1915 թիւ ծածկագիր հեռագրով իմացուցած էր ներքին գործոց նախարարութեան, թէ «120·000 հայեր տարագրած է Տիգրանակերտի նահանգէն» եւ այդ հեռագրին բնագիրը Պատերազմական Ատեանի թղթածրարներուն մէջ է, դատական արձանագրութեանց մաս կազմած է: Հակառակ ատոր, Տիգրանակերտի կառավարութիւնը իր տոմարներուն մէջ արձանագրուած ցոյց կու տայ (սիմիլտէ մուգայյէտ) հետեւեալ թիւերը, որոնք կը հակասեն 1915 Սեպտեմբեր 15 թուակիր ծածկագիր հեռագրին:

Ըստ պետական տոմարներու, տարագրուած են.—

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ		ՍԵՒԵՐԵԿԻ ՍԱՆՃԱԳ.—	
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԱՆՃԱԳԷՆ			
Տիարպեքիր մերքեզ գագաւ	9·710	Սեւերեկ մերքեզ գագաւ	6·235
Պչէրի գագաւ	2·946	Վերանչեհի գագաւ	4·200
Տիրէք գագաւ	327	Հայ կաթողիկներ	196
Սիլվան գագաւ	6·235		<hr/>
Լճէ գագաւ	4·432	Գումար	10·631
Հայ կաթողիկներ	1·642		
	<hr/>		
Գումար	25·292		

ԱՐՂՆԻ ՍԱՆՃԱԳ.—		ՄԱՐՏԻՆ ՍԱՆՃԱԳ.—	
Արզնի մերքեզ գագաւ	2·209	Մարտին մերքեզ գագաւ	4·663
Բալու գագաւ	12·370	ձեզիրէ գագաւ	1·049
Ջերմիկ գագաւ	3·055	Աւնիէ (Սաւուր գագաւ)	155
Հայ կաթողիկներ	520	Միտիաք	309
	<hr/>	Նիսիպին	30
Գումար	18·154	Գումար	6·206

Ըստ տոմարի (սիմիլի) նահանգէն տարագրուած հայոց թիւը եղած է 60·283:

Վալի Րեչիտ հեռագրով կը յայտնէ, թէ 120·000 տարագրած է նահանգէն: Իսկ այդ թիւին մէջ չեն զինուորագրուած հայերն ու բանտարկուած հայերը: Տիգրանակերտի նահանգի հայութեան թիւն էր միշտ թուրքերու յիշածին կրկինը, ինչպէս Գրիգոր Զօհրապ եւս կը թելադրէ իր Փրանսերէն երկին մէջ (էջ 10):

1878ին օսմանեան «Սալնամէ»ն (պետական տարեգիրք) Տիգրանակերտի նահանգի հայոց թիւը կը յիշատակէ 180·000: 1882ին՝ Պատրիարքարանի ցուցակով՝ 150·000 է այդ թիւը:

Վիթալ Քիմէ Փրանսացին, կրկնելով թրքական աղբիւրէ իր թիւերը, կը գրէ՝ 79·034: 1913ին՝ Պատրիարքարանը՝ 105·000:

Օրմանեանի թերի վիճակագրութիւնը ցոյց կու տայ 96·000 Տիգրանակերտի նահանգին համար, առանց հաշուելու նոյնիսկ Սեւերեկի սանճագը, ուր կային 10·637 հայեր: Օրմանեան Սրբազան տուած էր միայն Տիգրանակերտի, Արզնիի, Ջերմիկի եւ Բալուի հայ բնակչութեան պակասաւոր թիւերը:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՎԵՑ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ 105 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

105 եկեղեցիներէն մենք կրցանք ճշդել միայն հետեւեալները.—
Մարտինի եւ Սեւերեկի շրջանէն մանրամասնութիւն չկրցանք ճշդել:
Վանքերէն ճշդեցինք միայն ՄԱԿԱԲԱՅԵՑԵՑԻՔԸ, Ս. ԹՈՎՄԱՍԸ եւ
Բալուի երկու վանքերը:

Տիգրանակերտ քաղաք.— Ս. Կիրակոս եւ Ս. Սարգիս:

Հայնի	Ս. Աստուածածին
Գարապաշ	Ս. Սիմէոն
Լճէ	Ս. Աստուածածին
Յորամ	—
Ղարպ	—
Ալի Փունար	Ս. Աստուածածին
Քեապի	Ս. Քրիստափոր
Հայեղիկ	Ս. Եղիա
Շամ	Ս. Յովհան
Մուֆարդին	Ս. Սարգիս
Հազրոյ	Ս. Աստուածածին

Անունները տակաւին չճշդուած՝ 13 եկեղեցի:
Տիգրանակերտի սանճագին մէջ կային 25 եկեղեցիներ:

ԱՐՂՆԻ 12 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ԵՐԿՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Արղնի	Ս. Սարգիս եկեղեցի, վանք
Բարձրահայեաց	Ս. Աստուածածին
Արղնի Մատէն	Ս. Աստուածածին
Բարամլը	Ս. Աստուածածին
Ակիլ	Ս. Նշան
Փիրան	Ս. Աստուածածին
Հրիտան	Ս. Աստուածածին
Ջերմիկ	Ս. Աբելմսեհ
Չնգուշ	Ս. Կարապետ եւ վանք մը
Սիրահայեաց	Ս. Աստուածածին
Ատիշ	Ս. Կարապետ

Այս շրջանէն չեն ճշդուած երեք եկեղեցիներու անունները:

ԲԱԼՈՒԻ 2 ՎԱՆՔԵՐՆ ՈՒ 41 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Բալուն ունի 2 վանք — Քաղցրահայեաց Ս. Աստուածածին
վանքը եւ Հաւաւ աւանը՝ Ս. Պաշ վանքը:

Բալու եւ շրջակայ գիւղերու եկեղեցիները, այբբենական կարգով.—

Ապրանք	Ս. Աստուածածին
Արթըխան	Ս. Մինաս
Աւլաու	Ս. Կարապետ
Բալու քաղաք	Ս. Լուսաւորիչ, Ս. Աստուածածին, Ս. Կիրակոս, Ս. Սահակ
Գամըշի	Ս. Գէորգ
Գարա Կէտիկ	Ս. Աստուածածին
Գարա Չայք	Ս. Աստուածածին
Գումպէթ	Ս. Աստուածածին
Դաւթի Մեղրէ	Ս. Կիրակոս
Եարրմճա	Ս. Սարգիս
Թեփէ	Ս. Մինաս
Թըրխէ	Ս. Սարգիս
Թիլ	Ս. Կարապետ
Իսապէկ	Ս. Գէորգ
Պոշմաթ	Ս. Աստուածածին
Կիւլիշկէր	Ս. Պաշ
Հաւաւ	Ս. Կարապետ եւ Ս. Աստուածածին
Հալալ Գոմ	Ս. Սարգիս
Ձէթ	Ս. Թորոս
Մըշում-Մեղրէ	Ս. Գէորգ
Նաճորան	Ս. Մինաս
Ներխի	Ս. Աստուածածին
Նոր Գիւղ	Ս. Կարապետ
Նոր Մեղրէ	Ս. Յակոբ
Նպշի	Ս. Կարապետ
Շնագ	Ս. Յակոբ
Ուզուն Մեղրէ	Ս. Սարգիս
Ուզուն Օպա	Ս. Աստուածածին

Չայիր Մեզրէ	Ս. Խաչ
Պաղին	Ս. Սարգիս
Պաշարաթ	Ս. Աստուածածին
Սազրաթ	Ս. Թորոս
Սղամ	Ս. Խաչ
Սրին	Ս. Աստուածածին
Տեւեճի	Ս. Պողոս
Քեանկըրլու	Ս. Աստուածածին
Օխու	Ս. Կարապետ

Երեք եկեղեցիներու անունները ճշգրտած չեն:

ԿՐԹԱԿԱՆ

Ըստ Մարտէլ Լէառի, 1902ին, Տիգրանակերտի մէջ կային 4 դպրոց, 690 մանչ-աշակերտ եւ 324 աղջիկ-աշակերտ. ընդամէնը 1014 աշակերտ՝ 27 ուսուցիչներով:

Շրջակայքը՝ 2 դպրոց, 180 աշակերտներով եւ 5 ուսուցիչներով:

Բալու՝ 8 դպրոց, 555 աշակերտ եւ 15 ուսուցիչ:

Ըստ այդ ցուցակին, 1749 աշակերտ, 47 ուսուցիչ: Այս թիւերը շատ պակաս են 1915ի թիւերէն:

Ըստ Վիթալ Քինէի, 1892ին հայերը ունէին Տիգրանակերտի մէջ 95 դպրոց, 3·410 աշակերտներով եւ 98 ուսուցիչներով:

Հայ կաթողիկոսները ունէին 4 դպրոց, 160 աշակերտներով եւ 4 ուսուցիչներով:

Հայ բողոքականները ունէին 3 դպրոց, 60 աշակերտներով եւ 9 ուսուցիչներով:

Արղնիի մէջ՝ 41 դպրոց, 1640 աշակերտներով:

Հայ կաթողիկոսները՝ 1 դպրոց, 80 աշակերտ եւ 2 ուսուցիչ, 1 աղջկանց վարժարան, 70 աշակերտուհի եւ 2 ուսուցիչ:

Մարտինի մէջ կաթողիկոսները ունէին 12 դպրոց, 540 աշակերտ եւ 16 ուսուցիչ: Բողոքականները՝ 3 դպրոց, 220 աշակերտ եւ 6 ուսուցիչ:

Ընդամէնը՝ Տիգրանակերտ նահանգին մէջ 159 դպրոց, 5120 աշակերտ եւ 176 ուսուցիչ 1890ին: 1915ին, առնուազն 25% աւելցած էին:

Թուրք ղեկավարները, Տիգրանակերտի մէջ, կեդրոնական կառավարութեան հրահանգով եւ դործակցութեամբ, 1914ի պատերազմի առիթէն օգտուելով՝ սարսափի քաղաքականութիւն մը հետապնդեցին: Տեղւոյն պարագլուխներն էին երեսփոխաններ՝ Փիրինճիզատէ եւ Ֆէյազ, ու իթթիհատի ներկայացուցիչը՝ Էտար Հազզը, եւ այլն: Կը տիրէր կողոպուտի, սպանութեանց եւ հրձիգութեանց մթնոլորտ մը: Հազարէ աւելի հայերու խանութները այրած էին: Ատիկա տալաւին սկիզբն էր:

Մարտ 1, 1915ին, իբր կառավարիչ Տիգրանակերտի, եկած էր տոքթ. Բեշիտ, որ նախապէս վալի էր Մուսուլի. ան իր շուրջ հաւաքած էր սրիկայ, գող եւ աւազակ չերքէզներ՝ Ատափազարի եւ Տիւզճէի շրջանէն բերուած:

Իր գալուստէն քանի մը շաբաթ ետք, հալածանքը սաստկացաւ եւ Ապրիլ 1ին (1915) բանտարկուեցան կուսակցական եւ այլ յայտնի հայ անձնաւորութիւններ. շաբաթներով շարշարեցին զանոնք բանտի մէջ: Ատոնց թիւը անցաւ 1·000ը:

Ապրիլ 21ին խուզարկեցին հայերու տունները «զէնք եւ պոմպա փնտռելու» պատրուակով:

Սուտ լուրեր տարածեցին, թէ Տիգրանակերտէն 40 ումբեր ղրկուեր են Վան: Եւ Կ. Պոլսոյ շարամիտ դերման դեսպանը՝ Վանկենհայմ եւս այդ պրզոնի սուտը իբր իրաւ կը տարածէր մինչեւ Գերմանիա:

Մայիս 25, 1915ին, Ուրֆայէն 6 մղոն հիւսիս, Քարաքէօյի մօտ սպաններ էին 1·500 հայ զինուորներ, ձերբակալեալ վիճակի մէջ:

Յունիս 2ին, Բեշիտի պիտակցութեամբ, Տիգրանակերտի ոստիկանապետ Մեմտուհ, դործակցութեամբ Մարտինի ոստիկանապետ Պետրետտինի եւ այլոց, ժանտարմներով եւ չեթէներով, կը պաշարեն Մարտինը եւ կը նահատակեն 404 անձեր:

Յունիս 4ին 3 օրուան մէջ բանտ կը նետեն 1420 անձ:

Յունիս 11ին (ն. տ.) 614 անձ բանտէն հանելով, ձերբակալուած վիճակի մէջ, Տիգրանակերտէն ֆիլէկներու մէջ կը դնեն եւ Տիգրիսի վրայով իբր թէ Մուսուլ կը տանին:

Կէս ճամբան, Բրտուանի առջև, Պիթլիսի և Տիգրանակերտի նահանգներու սահմանին մօտ, աւազակ քիւրտերու, թուրքերու եւ ժան-

տարմեներու միջոցաւ, բոլորը կը սպաննեն և սպաննուածները կը թափեն Տիգրիս գետը: Գլուխներ, թեւեր, սրունքներ կը հասնին Մուսուլ եւ հոն գտնուող թուրք վալին՝ զրազէտ Սուլէյման Նազիֆ, տեսնելով կատարուած ոճիրը, իր «ցաւը յայտնած էր» զերման հիւպատոս Հոլլթայնի:

Յունիս 1/14, 1915ին ամբողջ Տիգրանակերտի նահանգին մէջ տեղի կ'ունենար տարագրութիւն, կողոպուտ եւ ջարդ: Ամէն անկիւն դժոխքի վերածուած էր (*):

Յունիս 2ին, 2·000 չեթէներով, չեթէպաշի ձեմալի հրամանատարութեամբ, Թէլ Էրմենիի հայերը լեցուցեր էին եկեղեցին, բոլորը կոտորեր եւ եկեղեցին ալ այրեր էին:

Յունիս 10ին Տիգրանակերտէն 2·000 կիներ բերեր էին եւ ցըրուեր Ուրֆայի թուրքերուն տուները:

Տիգրանակերտը, ըլլալով Էրզրումի Յրդ զօրաբանակի ազդեցութեան շրջանակին մէջ, բանակի հրամանատար զօրավար Մահմուտ Քեամիլ փաշա յայտարարած էր, որ Հայկական Հարցը լուծելու համար թուրքիոյ մէջ ոչ մէկ հայ ողջ պիտի մնայ: Այս յայտարարութիւնը եղած էր զերման հիւպատոս Շոյպները Րիսթըրի, Յունիս 15, 1915ին:

Թրքական Յրդ զօրաբանակի հրամանատար Մահմուտ Քեամիլ փաշա հայկական 6 նահանգներու ընդհանուր կառավարիչներուն եւ զինուորական հրամանատարներուն հետեւեալ հեռագիր-ըրջաբերականը ուղղած էր.

«Պիւր Էրմենի թեւահուպ էտեմէֆ պիւր միւսլիմանըն, խանեսի էօնիւնտէ իյտամ, վէ խանեսի իիրագ, վէ մեմուրիմտէն իսէ, դարտ, վէ տիւանը հարպա սելգ, վէ հիւսայէտի բելա կէօրեմլէր, միհեթէ աւֆերիյէտէն իսելէր, միսպեթը աւֆերիյէտերիմին գաթթը իլէ, պերայը մուհաֆեմէ մեգֆիւր տիւանը հարպարա թելտիյ օլունմասընա միւթետայիւր, իւչիւննի օրտու գոմանտամը, ՄԱՀՄՈՒՏ ՔեԱՄԻԼ իմգալը թելեկրաֆ վար: Թերթիպ 13, վեսիգա 1:

Թարգմանութիւնը.—

«Հայ մը պաշտպանող (թեւահուպ էտէն) միւսլիման մը իր տան առջեւ մահապատիժի պիտի ենթարկուի եւ իր տունը պիտի այ-

րուի. եթէ ան պաշտօնեայ է, պիտի արտաքսուի եւ պիտի յանձնուի պատերազմական ատեանի. զայն պաշտպանելը սլատաճ նկատողները (բելա կէօրեմլէր), եթէ զինուորականներ են, պիտի զրկուին զինուորականութենէ եւ դատուելու համար պիտի յանձնուին պատերազմական ատեանի: Այս մասին հեռագիրը ստորագրուած է երրորդ զօրաբանակի հրամանատար ՄԱՀՄՈՒՏ ՔեԱՄԻԼի կողմէ: Հեռագիրը դասաւորուած է 13րդ թղթածրարին մէջ, վաւերագիր թիւ 1»:

Այս հեռագիրը, լուեայն, թուրքերուն նիւթական շահագործումի աղբիւր եղած է՝ «Հայ պաշտպանելու պատրուակին տակ» դրամ շորթելու, ապա զանոնք սպաննելու համար, եւ տիրանալու անոնց կանանց կամ աղջիկներուն:

Յունիս 27ին (1915) Տիգրանակերտի հարաւային մասի անպատներուն մէջ անհետ կորսուեր էին Տրապիզոնէն եւ Էրզրումէն եկած կարգ մը կարաւաններ:

Սերաստիայէն, Ակնէն, Թոգաթէն եւ մաս մըն ալ Խարբերդի կարաւաններէն, իրարու խոսնուած, հասեր էին Տիգրանակերտի Սեւերէկ եւ անկէ 30 մղոն հարաւ՝ Ետի Գուլու եւ Մուսա Գուլու. 18·000 անձէ բաղկացեալ տարագրեալ այդ ժողովուրդը զէպի Վերանչէհի, Սուսուզ Տաղի շուրջը, Գարաճա Տաղի հարաւը՝ սոված եւ ծարաւահար մահացած է: Ատոնցմէ միայն 150 կին կմախացած հասած են Հալէպ, իսկ Խարբերդի 3·000նոց կարաւանէն միայն 35 կին՝ Տիգրանակերտի «Ժայռոտ մեծ անապատ»էն, որ կը կոչուի «Կրեմտ րաֆի տեզըրք» (Ուրֆա-Սեւերէկ ճամբան 54 մղոն է եւ Ետի Գուլուն Ուրֆայէն միայն 17 մղոն հիւսիս է):

Հայ տարագրեալներէն, բացի Տիգրանակերտի 120·000է աւելի հայերէն, բիւրուորներ ալ միւս նահանգներէն ինկած են Տիգրանակերտի նահանգին մէջ:

Միայն Պողոութլուի մէջ եւ շրջակաները 24·000 հոգի ծարաւահար մահացած են (Գարաճա Տաղի եւ Գարապաղչէի հարաւը):

Սեպտեմբեր 3ին տեղի ունեցած է Տիգրանակերտի նահանգին մէջ ձեզիբէի հայերուն եւ քրիստոնեաներուն ջարդը, եւ այդ ջարդին մասնակցած են թրքական զօրամասեր, որոնք զէպի Պաղտատ պիտի երթային:

Սեպտեմբեր 9ին սպաննուածներուն թիւը եղած է 12·750: Տիգրանակերտի հայ առաջնորդն ու կաթողիկ եպիսկոպոսները զնդակահարուած եւ այրուած են:

Այս դժոխային արարքներուն ականատես հեղինակաւոր վկաներ են Հայր Հիասինթ, Հայր Պերէ, Տը Նոկալէս եւ (բացի գեր-

(*) Տե՛ս Բաֆայէլ Նոկալէս, էջ 139—146:

մանական տասնեակներով հեռագիրներէ) նաեւ Ֆայիզ էլ Ղուսէյին՝ արար մտաւորականը(*) :

Այս ոճերներուն ընթացքին վալի տոքթ. Բեշիտ հեռաձայնային ուղղակի կապ կը պահէր Թալէաթի հետ, ինչպէս միւս հայկական նահանգներու բոլոր վալիները կ'ընէին :

Հազարապետ Բաֆայէլ Տը Նոկալէս, որ Տիգրանակերտի նահանգի արեւելքէն մինչեւ արեւմուտք պտըտած էր այդ օրերուն եւ ապա կանաւտես վկայ եղած է ջարդերուն, կ'ըսէ (էջ 136 եւ 149), «Չորս տարի մահիկի տակ» երկին մէջ, թէ ճամբաներու վրայ, ամբողջ

(*) Սուրիացի արար գրագետ Ֆայիզ էլ Ղուսէյիմ, որ թրքական գայմագամ եղած էր Գեալիսա գազալի եւ յետոյ ձերբակալուած եւ զրկուած էր Տիգրանակերտ, Յամբոդիով Համայէն, Հալեպէն, Արաբ-Փուլմարէն, Սիւրիան, Ուրֆայէն, Գարաճոնուէն, Սեւեբկէն, Գարա Պաղչէն, Ալի-Փուլմարէն, նետուած էր Տիգրանակերտի բանտը, ուր մնացած էր 22 օր, ապա ազատ արձակուած էր, Տիգրանակերտ բնակելու պայմանով :

Ան, տարի մը ետք, 1916ին փախած էր Տիգրանակերտէն, Պաղտատ-Պասրայի վրայով անցած էր Պոմպէյ, եւ Տիգրանակերտի նահանգին մէջ տեսած դէպքերը արձանագրած էր : Անգլիացի փրօֆեսոր մը անգլերէնի թարգմանած էր իր գիրքը : Գիրքը լրացուցած էր Սեպտեմբեր 1, 1916ին :

Գնդապետ Լորենս կ'ըսէ «Իմաստութեամ 7 Սիւնները» գրքին մէջ (էջ 76, 122, 124, 146, 174, 222 եւ 379), թէ Ֆայիզ էլ Ղուսէյիմ օր. կերպարու Պիլի յամանարաութեամբ զրկուեցաւ զնդապետ Լորենսի, որուն հետ գործակցեցաւ : Ատկէ գատ, ան եղաւ իշխան Ֆէյսալի ֆարտուղարը եւ մնաց անոր բանակատեղիին մէջ :

Ըստ Ֆայիզ էլ Ղուսէյիմի վկայութեան, Ուրֆայէն մինչեւ Տիգրանակերտ ճամբան դիակներով լեցում էր եւ ինքը, հետաքրքրուած ըլլալով, տեսակցած էր թուրք եւ այլ անձերու հետ՝ հայոց դէմ գործուած եղեռնի մասին : Ան կ'ըսէ, թէ թուրքերը նոյնիսկ ուզիւ իսլամ չեն, որովհետեւ իսլամական սկզբունքները հակառակ են անոնց արարներուն :

Ան կը յայտնէ, թէ հրաման եկած էր «ամբողջ մեռելները քաղելու» (էջ 10), եւ «մարմինները այրելու» (էջ 17) «Թուրքերը կ'արդարացնեն ինքզինքնին ըսելով, թէ «ասիկա թագաւորին հրամանն էր» : Ան կը պատմէ մասնաւորապէս հայ զինուորներու նահատակումը (էջ 35) եւ կ'ըսէ թէ միւս նահանգներէն եկած ուժասպառ հայ տարագիրները ինկան Տիգրանակերտի նահանգի հոգերուն մէջ, եւ ասոնց թիւը կը հասնէր 570.000ի : Մեռելներուն մկարմերը կ'առնէին (էջ 38 եւ էջ 41. *անգլերէն թարգմանութիւն*) :

նահանգին մէջ, հայերու ջարդը կատարուած է եւ ոչ միայն Տիգրանակերտ քաղաքին մէջ : Հայ զինուորներու ջարդը ղեկավարած է Մեհմէտ Ասրմ հրամանատարը, իր հրամանին տակ ժանտարմներու ամբողջ գունդով մը (այլայլ) եւ «հակառակ տրուած խստիւ հրամաններուն, ջարդերու հետքերը՝ դիակները անթաղ կը մնային, շնագայլերու եւ վայրի կենդանիներու ու թռչուններու իբր կեր» :

Վայրագութիւններու կարգին, կը յիշուի բարձունքներէ վար՝ դէպի Տուտանի անդունդը գլորելը՝ 5.000 հայ կիներ եւ մանուկներ, Չնգուչէն 5 մղոն հարաւ, Եփրատի ձախ ափին մօտ : Կիներու յետոյքին փայտեր դամած եւ իրարու վրայ դիզած էին : Բլուրի մը վրայ սպաննուած մերկ կիներ կային, ոտքերը օդին մէջ : Մեռելները բռնարարուած են : Հայր Հիասինթ եւ Հայր Պերէ կը յիշատակեն այդ արարքները, «որոնք պատմութեան մէջ լսուած չեն, ոչ ալ արձանագրուած են» :

Իսկ ամերիկեան դեսպան Մորկընթաու, տեղեակ այդ կարգի հրէշային արարքներուն, կ'ըսէ, թէ գիտէ, բայց «անտպագրելի են թրքաց այդ վայրագութիւնները» :

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՅԵՐՈՒՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Առանց հաշուելու 105 եկեղեցիներու եւ վեց վանքերու կորուստները, բացի 120.000է աւելի անձերու կեանքի կորուստէն, նիւթական վնասը աւելի է քան 210.000.000 ոսկի տոլար : Պէտք է յիշել, որ Տիգրանակերտի մէջ շատ հարուստ հայեր ալ կային :

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԳԼԽԱՒՈՐ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Թրքական դահլիճի անդամները, Իթթիհատի կեդրոնը, պատասխանատու քարտուղարը, երկու հրէջ երեսփոխանները՝ Փիրինճիզատէ եւ Ֆէյզի, զնդապետ Րիւշտի եւ Մեհմէտ Ասրմ ժանտարմի գունդով գործաւոր հայ զինուորներու ջարդերը կը կատարէին, վալի՝ տոքթ. Բեշիտ(*) եւ իրեն հետ, ջարդերու կազմակերպման ժողովներ :

(*) Վալի տոքթ. Բեշիտ սպաննել տուած էր երկու գայմագամներ, մին՝ Միթիաթի գազալիմ, միւսը Լճէի գազալիմ, որոնք ջարդերու մասնակցի չէին ուզած :

րու մասնակից 25 է աւելի ոճրագործ անդամներ, կազմելով նահանգի ջարդի կեդրոնական յանձնախումբը եւ հաղարուոր չեթէներ, չեր- քէզներ, քիւրտեր եւ թափառաշրջիկ աշիրէթներ:

Մենք՝ հայերս, անշուշտ այս անյուր կոտորածները լսելով, տեսնելով, արձանագրելով չէ որ պիտի բաւականանանք, այլ պէտք է մեր զաղափարական պայքարի բոլոր միջոցները գործածենք, ի խնդիր արդարութեան եւ ազատագրելու համար մեր պապենական հողերը, բռնադատուած՝ թուրքին կողմէ, որպէսզի անէծք չդառնայ մեր նահատակաց բողոքի կտակը: Այլապէս, թուրքը լիովին օգտը- ւած պիտի ըլլայ իր գործած մեծ եղեռնէն:

ՀԱՅ կոչուելու համար, անհրաժեշտ է արդարութեան եւ մեր իրաւունքին պաշտպանութեան համար պայքարել:

ՀԱՅԵՐՈՒ ԼՔԵԱԼ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԷՁ

ԹՈՒՐՔԵՐ ԵՒ ՔԻՒՐՏԵՐ ԶԵՏԵՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թուրքիոյ ներքին գործոց նախարարութեան շէնքին մէջ կար բաժանմունք մը, որ կը կոչուէր «Իսփեանը աշայիր վէ մուհաֆիրիմ միւտիրիյէթի (Մուհաճիրներու եւ աշիրէթներու զետեղման տնօրէ- նութիւն), որ ունէր առանձինն հաշուակալութիւն ծախսերու համար եւ ներկայացուցիչներ զաւանդու մէջ:

Հայոց տարագրութեան օրերուն, ներքին գործոց նախարա- րութիւնը Յունիս 10, 1915 թիւ հեռագրով հրահանգած էր որ «Լքեալ Գոյքերու Յանձնախումբեր»ը աշխատի նաեւ հայոց տուններուն մէջ զետեղել թուրք զաղթականներ, թուրք եւ քիւրտ աշիրէթներ: Եւ այդ առթիւ կարճուած էր նաեւ Նըզամնամէ մը (կանոնագիր) եւ հրամայուած էր խիստ հսկողութեամբ հետապնդել ու գործադրել այս խիստ կարեւոր գործը եւ արդիւնքը տեղեկացնել:

Յուլիս 29, 1915 թիւ հեռագրով եւս յայտնուած էր, որ ներ- քին գործոց նախարարութեան կարգադրութեամբ (Ասիական Թուր- քիոյ մէջ) Արեւմուտքէն Արեւելք զրկուելիք թուրք մուհաճիրները պիտի կեդրոնացուին Անգարա եւ Գոնիա, Անգարայէն զրկուելու համար Սերաստիա, Կեսարիա եւ Խարբերդ, իսկ Գոնիայէն՝ Ատանա եւ Տիարպեքիր:

Վիլայէթներէն ցանկեր պահանջուած էին. ստորեւ կու տանք այդ ցանկերէն մին.

ՏԵՂԱՀԱՆ ԵՂԱԾ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ՅՈՅՆԵՐՈՒ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՄԷՁ ՏԵՂԱԿՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՈՒԱԾ ՄՈՒՀԱՃԻՐՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

- Ատանայի վիլայէթէն կ'ուզուի 600 ընտանիք (խանէ):
 - Էրզրումի վիլայէթէն կ'ուզուի 12·000 ընտանիք:
 - Պիթիսի վիլայէթէն կ'ուզուի (չուժարը որոշուած չէ):
 - Տիարպեքիրի վիլայէթէն կ'ուզուի 10·000 ընտանիք:
 - Սիւսայի վիլայէթէն կ'ուզուի 5·000 ընտանիք:
 - Տրապիզոնի վիլայէթէն (թիւ տրուած չէ):
 - Խարբերդի վիլայէթէն կ'ուզուի 2·000 ընտանիք:
 - Իզմիթի սանճազէն կ'ուզուի 600 ընտանիք, վերջերս պահանջը ա- ւելի շատցած է:
 - Կեսարիոյ սանճազէն կ'ուզուի 2·000 ընտանիք:
 - Գարասիի սանճազէն կ'ուզուի 1·400 ընտանիք:
 - Մարաշի սանճազէն կ'ուզուի 2·000 ընտանիք:
 - Անգարա-Գըրէհիւրէն կ'ուզուի 150 ընտանիք: (Պէտք է արհեստա- ւոր ըլլան):
- Գումար՝ 35·750 ընտանիք:

Թալէաթի հրամանով, Հալեպի մէջ գտնուող Ապտիւ Ահատ Նուրին(*) տիպոս ունէր «Իսփեանը Աշայիր վէ Մուհաֆիրիմ Միւ- տիւրը Ումումի Մուալիմի» եւ զլիսաւոր պատասխանատուներէն մին էր հայոց տարագրութեանց, սպանութեանց՝ Հալեպի նահանգի, Մուրիոյ եւ Տէր Զօրի շրջաններուն մէջ. 1916ի դարունէն սկսեալ նաեւ յաւելուածական պաշտօն ունեցած է այցելելու Տիգրանակերտ, Մարտին, Ուրֆա, Ռաս Իւ Այն, Թել Ապիատ, Խառան եւ այլ վայ- րեր, թէ՛ հայոց լքեալ տուններուն մէջ թուրք եւ քիւրտ մուհաֆի- րներ եւ աշիրէթներ բնակեցնելու եւ թէ՛ քիւրտերը տեղահան ընելու ու ցրուելու համար ղէպի արեւմուտք:

(*) Ըստ վկայութեանց, Ապտիւ Ահատ Նուրի կոչուած այդ հրէշը եղբայրն էր Սիմոպի երեսփոխան Եւսուֆ Քեմալի, որ տեղեկաբերը եղած էր 1909ի Ատա- նայի ջարդին, Յակոբ Պապիկեանի հետ:

Թալէաթ երեսփոխան Քեմալին տեղեկաբերը եւս անտես առած էր եւ Ծու- սուֆ Քեմալը զրկած էր Փարիզ՝ իրաւաբանութեան հետեւելու: Մուսթաֆա Քե- մալի օրով, ամ եղած էր արտաքին գործոց նախարար եւ Առօրէ փոխանակած էր Հայաստանի արտաքին գործոց նախարար Ալ. Խատիսեանի հետ:

Քիւրտերու տարազրուութեանց մասին ստորեւ կու տանք կարգ մը հեռագիրներ, Ապտիւլ Ահատ Նուրիի այդ գործունէութեանց վերաբերեալ, որոնցմէ շատերը ստորագրուած են միայն անունի սկզբը նատառով «Ն.» , որ է ինքը՝ Ապտիւլ Ահատ Նուրի :

Տիարպեֆիբէն գաղթականներու ընդհանուր տնօրէն Ծաֆիր պէյ Օգոստոս 14, 1916 քուակիր ծածկագրով կը հաղորդէ (ներքին գործոց նախարարութեան) .

«Մինչեւ հիմա Տիարպեֆիբի կեդրոնը հասած են 40.000 գաղթականներ, որոնցմէ 25.000ը Սեւերեկի եւ Պարբերդի ճամբով ղըրկուած են Կեդրոնական Անատոլու : 12.000 թուրք մուհաճիբներ տեղաւորուած են Կեդրոնի (Տիգրանակերտ) եւ չրջակայ դիւզերուն մէջ : 4էն 5000 քիւրտեր քշուած են :

«Մարտին հասած 20.000էն 9.000ը տեղաւորուած են սանճագին մէջ եւ 10.000ի շտափ ղըրկուելու վրայ են : Սաւրբի, Սիլվանի, Լըճէի, Պըշերիի, Հայտարանլը, Միքանլը եւ Իտմանլը կոչուած աշիրէթներուն թիւը 100.000ը անց է, ըստ հասած տեղեկագիրներու : Անոնց ուղարկման եւ սնունդին շուրջ որոշուելիք միջոցներու մասին պիտի տեղեկագրուի» :

Ծածկագիր հեռագիր հարբերդէն .—

Օգոստ. 25, 1916 (1332) .— Խարբերդի վիլայէթի կեդրոնական սանճագին մէջ 5.000 գաղթական կայ : 3000ը ֆիւրտեր են : Ձեր նախարարութեան հրահանգները հասնելէն առաջ, կէսը շրջակայ գիւղերուն մէջ տեղաւորուած են : Միւսներն ալ ղըրկուած են Սեքաստիոյ եւ Տիարպեֆիբի նամբով՝ նշանակուած վայրերը :

Հոկտ. 12, 1916 թուակիր ծածկագիրը, ղըրկուած Տիարպեֆիբէն՝ Ապտիւլ Ահատ Նուրի պէյի կողմէ (*) :

«3533 գաղթականներէն 200ը հասաւ Ռաս իւլ Այն : Կեդրոնէն (Տիարպեֆիբ) Սեւերեկի ճամբով ղըրկուեցան 1139 : Հայտարանցի աշիրէթէն 1.200 անձ Կեդրոն հասան : Արձանագրութիւն կը կատարուի» :

(*) 1915 Յունիսէն մինչեւ 1916 Մարտի վերջը, Ապտիւլ Ահատ Նուրի կոչուածը Հալեպի եւ շրջակայքի մէջ հայերը Տէր Ջօր տարագրող, գաղթականներու ընդհանուր տնօրէնի օգնականի տիտղոսով գործող անձն էր եւ այդ միջոցին թըրքական մուհաճիբներն զտեղեկութիւնով եւ ֆիւրտեր տեղահանելով կը գրադի, ըստ այս հեռագիրներուն բովանդակութեան :

Հոկտեմբեր 20, 1916

Այս առտու Կեդրոնէն (Տիգրանակերտ) ղէպի Ուրֆա ղըրկուեցան 1.526 անձ :

Սիլվան ընկող՝ Հայտարանլը, Ճիպրանլը եւ Շուլէի աշիրէթները ղըրկուած են ղէպի Պառան : Անոնց պետերը, իրենց ընտանիքներով, պիտի ընկեցուին Ուրֆայի մէջ :

Հոկտեմբեր 25, 1916

Սիլվանի մէջ ճիպրանցի 5.000 անձ կայ : Ուրկէ՞ եկած են : Ստորագրութիւն Ն .

«Հոկտեմբերի վերջին կիսուն, Ռաս իւլ Այնէն 2.615 քիւրտ մուհաճիբներ, 1554 ընտանի կենդանիներով, թեւ Ապխատ ղըրկուած են, ուր այժմ անոնց թիւը հասած է 4.487ի :

Ներկայիս Ուրֆա ղըրկուած են՝	
(Քիւրտեր)	6.207
Պարբերդ	1.974
Սիլվան	1.915
Սեւերեկ	3.592
Մարտին	1.257

Հոկտեմբեր, 31, 1916

Ուրֆա հասածներուն կէսը (մեծ մասը քիւրտեր) տուններու մէջ տեղաւորուեցաւ, մնացած կէսն ալ վրաններու տակ է : Ստորագրութիւն Ն . (Ապտիւլ Ահատ Նուրի)

Հոկտեմբեր 31, 1916

Սաւուրէն (Մարտինի հիւսիսը) թեւ էրմենի ճամբով 6.000 անձ (քիւրտ) ղըրկուեցան ղէպի Ռաս իւլ Այն» :

Դեկտեմբեր 1, 1916

«Ուրֆայի Գարա Քէօփրիւէն 1.046 քիւրտ ղըրկուեցան Պառան» :

Դեկտեմբեր 2, 1916

«Սիլվան գտնուած 5.300 հողի ճիպրան աշիրէթէն Տիարպեֆիբի ուղղութեամբ ղըրկուեցան» :

Դեկտեմբեր 3, 1916
Պատանը լեցուած ըլլալով, ասկէ ետք (քիւրտ) կարաւանները
պէտք է զրկել Արար Փունար:
Նեճտէթ պէյը տակաւին չեկաւ:

Դեկտեմբեր 7, 1916
Մարտինէն մինչեւ այժմ զրկուած են 10·965:

Դեկտեմբեր 7, 1916
Սիւլանէն՝ 26·116:

Ստորագրութիւն Ն.

Դեկտեմբեր 3, 1916
«Թէեւ միւթեսարրֆութեան գրուած է, չմոռնաք՝ աշիրէթնե-
րուն մինչեւ իսկ սուրերը (գամա), գէնքերը առնել եւ զինաթափ
ընել: Հաղորդուած է նախարարութենէն»:

Ստորագրութիւն Ն.

Դեկտեմբեր 10, 1916
Տիարպեքիրի նահանգէն.—

Պատասխան՝ Ձեր Սեպտեմբեր 10, 1916 թուակիրին.—

«Վան, Պիթլիս, էրզրում վիլայէթներէն եւ շրջականերէն
1915 Յուլիսէն սկսեալ այս նահանգը (Տիգրանակերտ) մտած են
158·418 անձ: Ասոնցմէ 46·003ը զրկուած են, 12·415ին միայն ու-
տեստ կը հայթայթուի»:

Դեկտեմբեր 9, 1916
1062 ընտանիք — 6441 անձ Սեւերեկի ճամբով զրկուեցան:
Ստորագրութիւն ՃԵԻՏԷԹ

Նոյեմբեր 14, 1916
«Մինչեւ հիմա Պատանի մէջ տեղաւորուած են 13·422: Ասկէ
ետք գալիքները պիտի տեղաւորուին Սիւրիճի եւ Պիրեճիքի գազա-
ներուն մէջ»:

Հեռագիր՝ գրկուած Ապտիւ Ահատ Նուրիի կողմէ,
Նոյեմբեր 16, 1916
«Նոյեմբեր 13, 1916ին Տիարպեքիրէն 1·983 եւ Նոյեմբեր 14ին
1·057 քիւրտեր զրկուեցան Ուրֆա»:

Նոյեմբեր 19, 1916
«Ռաս իւլ Այն գտնուողները բոլորը զրկուեցան: Տէր Ջորի
միւթեսարրէ պէյը վաղը Ռաս իւլ Այն պիտի գայ»:

Հեռագիր Ուրֆայէն՝ Նուրի պէյին,
«Երէկ եկողներուն թիւն է 23·190: Շուտով պիտի սկսինք եր-
կաթուղիով զրկել»:

Դեկտեմբեր 14, 1916
«Դեկտեմբեր 11 եւ 12, 1916ին Սեւերեկէն Ուրֆա զրկուեցաւ
2·520 հոգինոց կարաւան մը»:

«Հայտարարեցի 800 քիւրտ եւ Թագոյի ոէիս Հասան պէյ հսկո-
ղութեան տակ Ուրֆա զրկուեցան: Ինչպէս Դեկտեմբեր 1, 1915 թիւ
ծածկագիր հեռագրով հաղորդուած է, Հասան պէյի հաւատարմու-
թիւնը կասկածելի է»:

Սեպտեմբեր 19, 1916 թիւ ծածկագրով հաղորդուած է.—
«Ճիւղրանլը աշիրէթէն 1·400 հոգի, որ Ալաշկերտ կը գտնու-
ուէին, լճէի ճամբով զրկուած են»:

Ապտիւ Ահատ Նուրիի ծածկագրով եւ Նոյեմբեր 17 թուականով
հաղորդուած է:

Նոյնպէս Ապտիւ Ահատ Նուրի պէյին եկած ծածկագրով հաղորդ-
ուած է (Հոկտեմբեր 15 թուակիր).—

«Միւրան աշիրէթէն Տիարպեքիր հասած են 100·400 հոգի»:

Թուրքերուն կողմէ քիւրտերու զինաթափումին եւ տարագրու-
թեան մասին կան ուրիշ վաւերագրեր ալ:

Թուրքերը նախ զրկուեցին քիւրտերը հայոց դէմ, ոճիրներուն
գործակցելու, ապա նոյն չարիքները, առաւել կամ նուազ չափով,
գործեցին քիւրտերու, յոյներու եւ արաբներու դէմ:

ԹՐԻՓԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

Պետական գրառք հրամանագրերու համաձայն, Թուրքիա 1914–18 բռնազրաւեց եւ կողոպտեց հայոց պատկանող բազմաթիւ շէնքեր, նաեւ 2050 հայ եկեղեցիներ ու 203 վանքեր եւ աւերեց զանոնք:

(Վերոյիշեալ թիւերուն մէջ չեն կ. Պոլսոյ եւ արուարձաններու 38 եկեղեցիները, Պողոստինի եւ Սուրբոյ մէջ զրեթէ անվթար մնացած 18 վանքերն ու եկեղեցիները: Այս թիւին մէջ չեն նաեւ սովետական կառավարութեան կողմէ քեմալական Թուրքիոյ տրուած կարասի նահանգին մէջ աւերուած 93 եկեղեցիները):

Հայոց շէնքերուն եւ դոյքերուն բռնազրաւման հրամանագրին (Մայիս 16, 1915 թուակիր), 2րդ, 3րդ, 6րդ, 11րդ եւ 22րդ յօդուածներուն տրամադրութիւնները կը վերաբերին նաեւ եկեղեցական շէնքերուն ու դոյքերուն:

Յօդուած 2ը կ'ըսէ.

«Տարագրուած հայերու շէնքերը եւ դոյքերը, զիւղերու եւ քաղաքներու մէջ կ'ընդունուի, հսկողութեան տակ պիտի առնուին»(*):

(*) Առանց բնագրի մէջբերումին՝ որեւէ գրութիւն փաստական արժէք չ'ունենար: Տառացի կերպով թրքական բնագիրը կ'ըսէ.

«Պիր գարիէ վէ գասապա, ագապը քախիլիէսիմտէ մագլ էտիլէմ էհալիյէ ալիտ վէ տերուներմտա էշիա պուլումամ պիմիւմլէ մեպամի, իտարէ գոմիսիմը քարափըմտամ քեմսիպ էտիլիմէմ մեմուր վէ եախուտ Հիյաքը Մախսուտա քարափըմտամ տերիալ մէտիլիլիմեմէմ, քախը մուհափագայա ալըմամագ»:

Յօդուած 3.— (Հայոց լքեալ) «դոյքերը փոխադրեցէք եւ դիզեցէք եկեղեցիներու, դպրոցներու նման յարմարագոյն վայրերու մէջ(*):

Իսկ յօդուած 11ը կ'ըսէ. «Բնակարանները եւ շէնքերը պիտի բաժնուին (տրուին) թուրք մուհաճիբներու(**):

Այս փաստերու լոյսին տակ՝ թուրք կառավարութեան «հայերու ընդհ. ապստամբութեան» ամբաստանութիւնը կամ «գինուորական անհրաժեշտութեան» պատրուակը ոչ մէկ արժէք կը ներկայացընէ:

Գալով եկեղեցիներուն եւ վանքերուն, 6րդ յօդուածը կ'ըսէ. «Եկեղեցիներու մէջ եղած սպանները, նկարները եւ Սուրբ Գրքերը պիտի արձանագրուին տոմարի մէջ եւ անոնց պիտի կցուի տեղեկագիր մը» (դոյքերու տոմարակալութիւն(***)):

Եւ 22րդ յօդուածի տրամադրութեան համաձայն. «Մախուտ կամ փարձու տրուած կալուածներուն դումարը կը յանձնուի ելմտական դանձարկղին»(****):

Հայերու եկեղեցիները եւ վանքերը, բացի իրենց շէնքերէն, ունէին կալուածներ՝ հող, արտ, այգի, պարտէզ, խան, ջրաղացք, խանութ եւլն., որոնք եւս կա'մ «կը ծախուէին եւ կամ վարձու կը տրուէին»:

Չարմանալին այն է որ այդ յարիշտակումներէն եւ իւրացումներէն ետք, 22րդ յօդուածի վերջաւորութեան կը կարդանք. «Հետագային զրկուելիք հազորդագրութեանց համաձայն, իրենց տէրերուն պիտի յանձնուին»(*****):

Ուրեմն, հայը կը մնայ պահանջատէր:

Ստորեւ կու տանք բռնազրաւուած այդ եկեղեցիներուն եւ վանքերուն թիւերը իրենց դաժնուած վայրերուն մէջ, նահանգ առ նահանգ:

(*) Տառացիորէն բնագրին մէջ. «էշիալարը քիլիսէ, մեքէպ կիպի էլվերիշի մահալլիքտէ մագլ էտիլիմէմ»:

(**) Բնագրին մէջ. «Մեխաֆիմ վէ մեպամի մուհաճիբիմէ քեպիյ օլումամագ»:

(***) Ըստ բնագրին. «Քիլիսիլիքտէ մեմուտ էշիա վէ քեխալիք վէ քիքիպը մուգատտեւէ, սեպը տեքթէր էտիլիքէմ գապը վարագաւըմա պիլ բապը»:

(****) Բնագրին մէջ. «Պետէլը պէյ վէ իյմարտամ միքեհաւըլ մեպալիլ... մալ սամըզգլարըմա քեւտիյ էտիլիմէմ»:

(*****) Բնագրին մէջ. «Պիլաթիքէ վուգույ վուլամագ քեպլիլգաք տաիրեւիմտէ ասեպըմտ քեւտիյ օլումամագ տըր»:

հանգ, պետական վարչական սահմաններու շրջանակին մէջ(*) եւ ոչ թէ եկեղեցական աթոռներու իրաւասութեան տեսակէտով, նշանակելով նաեւ նահանգին վարչական պետին, Իթթիհատի լիազոր ներկայացուցիչին եւ բարձրաստիճան ոճրագործներուն անունները, ինչպէս նաեւ այդ շրջանին հայ հովուապետին՝ առաջնորդին կամ փոխանորդին անունը:

Այդ 2050 եկեղեցիներուն եւ 203 վանքերու շէնքերուն, սպասներուն, հնուիւններուն, ձեռագիրներուն եւ այլ կարգի շարժուն եւ անշարժ կալուածներուն արժէքը ամենանուագագոյնը 1.000.000.000 (մէկ միլիար) ոսկի տուար է, որ սեփականութիւնն է հայ ազգին:

Եկեղեցիներու թիւերը՝ նահանգներու աշխարհազրական կարգաւ:

ԷՏԻՐՆԷԻ ՆԱՀԱՆԳ.— Էտիրնէ քաղաք՝ 3 եկեղեցի: Ռոտոսթօ եւ շրջան՝ 8 եկեղեցի: Ոճրագործ նահանգապետը՝ Հաճի Ատիլ եւ օգնականը Ջեքերիէ պէյ:

Առաջնորդական փոխանորդը՝ Տէր Արսէն Ա. քհնյ. Դերձակեան (տարագրուած եւ նահատակուած):

ԻՉՄԻԹԻ ՍԱՆՃԱԳ.— Իզմիթ քաղաքը եւ շրջակայքը՝ 10 եկեղեցի: Իզմիթի առաջնորդը՝ Ստեփանոս արքեպս. Յովակիմեան, աքսորուած մինչեւ Մեսքենէ: Արմաշ՝ 3 եկեղեցի եւ 1 վանք: Ոճրագործները՝ Իզմիթի ժանտարմըրիի հրամանատարը, Իպրահիմ կոչուած հրէշ մը, եւ Շուրուրի կոչուած հայ աղջիկ յափշտակող սրիկայ միւտիւր մը եւ ընկերները(**):

(*) Օսմանեան կայսրութեան օրով՝ 1862ին՝ մահամզայի վերակազմութիւն տեղի ունեցած էր: «Էրմենիստան էլայէթ»ը (մեծ մահամզը) վերածուած էր Էրզրում, Պիթիսի եւ վան մահամզներու եւ անոնց կցուած էին, ծուռ ու մուռ սահմաններով, իսլամական շրջաններ, քաղաքական հաշիւներով:

Քեմալական-իսմիթական վարչութեանց օրով, մահամզներու մէջ գտնուող գաւառակներուն (սամազներուն) վարչական սահմանագծումները գրեթէ մոյճը մընացին: «Սանճագ»ները «Վիլայէթ» անուն կրեցին եւ միւթեսարըֆի տեղ վալի ունեցան՝ իբր քաղաքային պետ: Անունները փոխեցին եւ քաքարական մոր անուններ դրին.— «Սանճագ»ը կոչուեցաւ Իլ եւ «գազա» կոչուեցաւ ԻլՁէ ու «նահիէ»ն (գիւղայտումբը) կոչուեցաւ ՊոնճԱԳ:

(**) 1915ին, Թուրքիոյ մահամզներու բաժանումի կարգին կային 5 սամազներ, որ ուզակի կապուած էին մերքին գործոց մախարարութեամբ: Այդ սամազներն էին.— Իզմիթ, Մարաշ, Ուրֆա, Տէր Զօր եւ Գալէի Սուլթանիէ (Տարտամէլ):

ՔԱՍԹԵՄՈՒՆԻ ՆԱՀԱՆԳ.— 8 եկեղեցի:

ՏՐԱՊԻՉՈՆԻ ՆԱՀԱՆԳ.— Տրապիզոն քաղաք եւ շրջակայք՝ 33 եկեղեցի, 3 վանք (Տրապիզոնի առաջնորդը՝ Գէորգ Ծ. վրդ. Թուրեան, նահատակ):

ՍԱՄՍՈՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԸ.— 39 եկեղեցի:

Սամսոնի առաջնորդը՝ Համադասպ վրդ. Եղիսեան (նահատակ):

Կիւմիւշհանէի՝ Օհան վրդ. (նահատակ): Տրապիզոնի ոճրագործ վալին՝ Ճեմալ Ազմի, Իթթիհատի լիազոր պատուիրակը՝ դահիճ Նայիլ պէյ:

ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ.— Էրզրում եւ շրջակայքը՝ 89 եկեղեցի եւ 8 վանք:

Առաջնորդը՝ Սմբատ Եպս. Սատէթեան (սպաննուած էրզրումի երեսփոխան Հալեթի եւ Երզնկայի կառավարիչ Մեմտուհի կողմէ):

ԵՐԶՆԿԱՒ 44 եկեղեցի, 11 վանք, առաջնորդական փոխանորդը՝ Մելքիսեղէկ վրդ. Հովիւեան (նահատակ):

ԲԱԲԵՐԴ՝ 31 եկեղեցի, 1 վանք, առաջնորդը՝ Անանիա վրդ. Հազարապետեան (կախաղան հանուած):

ԴԵՐԶԱՆ՝ 33 եկեղեցի, առաջնորդը՝ Կորիւն վրդ. Սրապեան:

ՔՂԻ՝ 31 եկեղեցի, առաջնորդը՝ Գեղամ վրդ. Թեւեքեւեան:

ՊԱՅԱՋԻՏ՝ 32 եկեղեցի եւ 1 վանք:

ԽՆՈՒՍԻ առաջնորդական փոխանորդն էր Աբգար վրդ. Եօթնեղբայրեան:

Էրզրումի նահանգին մէջ կային 320 եկեղեցիներ:

Էրզրումի աստիճանաւոր ոճրագործներն էին.

Վալին՝ Թահսին պէյ, Իթթիհատի քարտուղարը՝ Հիլմի, երեսփոխանները՝ Հալէթ եւ Ալյֆուլլահ, ոստիկանապետը՝ Սուլուի: Ասոնց կարգին ամենամեծ դահիճներէն մին՝ Էրզրումի Յրդ զօրարանակի վերին հրամանատարը, էնվերի մտերիմը՝ Մահմուտ Քեամիլ փաշա կոչուած հրէշը եւ Իթթիհատի կեղրոնի լիազորը՝ դահճապետ տղթ. Պէհաւտին Շաքիր: Այդ ոճրագործները ցուցակագրուած են նաեւ գերման փոխ-գնդապետ Շթանկէի կողմէ, երբ ան իր տեղեկադիրը ղրկած էր գերման Ձինուորական Առաքելութեան՝ Օգոստոս 10/23, 1915ին:

ՊՐՈՒՍԱՅԻ ՆԱՀԱՆԳ.— Պրուսա քաղաք՝ 8 եկեղեցի: Պիլեհիք՝ 12 եկեղեցի: Պանտրմա՝ 8 եկեղեցի: Քէօթահա՝ 10 եկեղեցի:

Նահանգը՝ 38 եկեղեցի:

Առաջնորդը՝ Պարզեւ վրդ. Դանիէլեան, Թրք. վալին՝ Ալի Օսման, Իթթիհատի պատասխանատու քարտուղարը՝ Միտհատ:

ԳՈՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ.— 10 եկեղեցի:

ԱՆԳԱՐԱ.— 20 եկեղեցի, 1 վանք: Եոզկաթ՝ 43 եկեղեցի: Կեսարիա՝ 30 եկեղեցի:

Անգարայի առաջնորդական փոխանորդը՝ Թէոդորոս վրդ., Եոզկաթի առաջնորդը՝ Ներսէս Եպս. Դանիէլեան (նահատակուած Սերաստիոյ հրէշ վալի Մուամմէրի ջարդարարներուն կողմէ Գարտաշար լերան տակ):

Կեսարիոյ առաջնորդը՝ Խոսրով Եպս. Պեհրիկեան, նահատակուած Տիգրանակերտ տարուելու պատրուակով, ճամբու ընթացքին:

Անգարայի նահանգապետը՝ Մազհար պէյ մերժած էր սպանութեանց գործադրութիւնը եւ հրաժարած էր:

Կ. Պոլսէն զրկուած էր արիւնարբու պաշտօնեայ մը՝ Իթթիհատական Աթըֆ պէյը, որ իրեն հետ բերած էր նաեւ Պալքաննէրէն ոստիկանապետ Պէհնէտին կոչուած պապանը: Ատոնք զեկավարեցին սպանող եւ թալանը: Իթթիհատի ներկայացուցիչն էր Նեճաթի պէյ:

Եոզկաթի դահիճը եղած էր Պողպալյանի դայմագամ Քեմալը: Կեսարիոյ միւթեսարըֆն էին ոճրագործ Ալի Միտհատ եւ իր վոհմակը:

Անգարայի նահանգին մէջ հայ եկեղեցիներու թիւն էր 93:

ՍԵՐԱՍՏԻՈՅ ՆԱՀԱՆԳ.— Սերաստիա քաղաք եւ շրջակայքը 56 եկեղեցի եւ 6 վանք: Առաջնորդ՝ Թորոյոմ Եպս. Գուշակեանի Գահիրէ մեկնելէն ետք, պատերազմի տակն առաջնորդ եկած էր Գնէլ Եպս. Գալեմքեարեան, Դեկտ. 6, 1914ին: Առաջնորդական փոխանորդն էր Տ. Թէոփիլէ քհնյ. Օտապաշեան (նահատակ): Գնէլ Գալեմքեարեան Եպս. 1917ին մօրուքը անիլած, աշխարհական հազուստի տակ ծպտուած, թուրք խոճայի մը հետ՝ բեռան կառքով, Կեսարիոյ ճամբով Կ. Պոլիս եկաւ եւ ազատեցաւ:

Կիւրթիւն.— 26 եկեղեցի եւ 1 վանք: Առաջնորդ Խորէն Եպս. Դիմաքսեան (նահատակուած):

Տիւրիկ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԸ.— 19 եկեղեցի եւ 2 վանք:

ՏԱՐԵՆՏԷ.— 4 եկեղեցի եւ 1 վանք:

ԹՈՒՐԱԹ.— 14 եկեղեցի եւ 2 վանք: Առաջնորդը՝ Շաւարշ Մ. վրդ. Սահակեան (նահատակուած):

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.— 35 եկեղեցի եւ 2 վանք: Առաջնորդը՝ Վաղինակ Մ. Տ. վրդ. Թորիկեան (նահատակուած): Սերաստիոյ նահանգի հայ եկեղեցիներու թիւն էր 185:

Սերաստիոյ նահանգին դահճապետն էր վալի Մուամմէր, իսկ Իթթիհատի ներկայացուցիչն էր՝ տրապիզոնցի հարիւրապետ մը, քաղաքային հազուստով՝ Ղանի պէյը: Սերաստիոյ քաղաքին 12 քահանաները նահատակուած են, առանց բացառութեան:

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳ.— Խարբերդ եւ շրջակայքը՝ 75 եկեղեցի: Առաջնորդը՝ Պսակ վրդ. Խորէնեան (12 ժամ հեռաւորութեան վրայ սպաննուած): Վարդան քհնյ. Ասլանեան (բանտին մէջ այրած): Հայ Կաթողիկէ Իսրայէլեան Եպս.ը նահատակուած Կէօլճիքի մօտ:

ՄԱԼԱԹԻԱ.— 23 եկեղեցի, 2 վանք: Հայ Կաթողիկէ Խաչատուրեան Եպս.ը՝ իր լանջախաչի շրթայովը խեղդուած:

ԱԿՆ.— 12 եկեղեցի, 5 վանք:

ԱՐԱԲԿԻՐ.— 20 եկեղեցի, 1 վանք:

ՉՄՇԿԱՄԱԳ.— 22 եկեղեցի:

ՉԱՐՍԱՆՃԱԳ (ԽՈՉԱԹ).— 50 եկեղեցի, 2 վանք: Առաջնորդը՝ Համապասպ վրդ. Վարդանեան:

Խարբերդի նահանգի եկեղեցիներուն թիւն էր 202:

Կուսակալն էր Սապիթ պէյ: Իթթիհատի պարագլուխները՝ Խալիլ եւ Նազըմ:

ՊԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳ.— Պիթլիս եւ շրջակայքը՝ 98 եկեղեցի: Առաջնորդը՝ Սուրէն վրդ. Գալեմեան:

ՄԴԵՐԴ.— 31 եկեղեցի, 4 վանք: Առաջնորդը՝ Գէորդ վրդ. Նարպանտեան:

ՄՈՒՇ.— 230 եկեղեցի, 9 վանք: Առաջնորդը՝ Ներսէս Եպս. Խարախանեան (հիւանդութեամբ վախճանած): Վանահայրը՝ Վարդան Մ. վրդ. Յակոբեան:

Պիթլիսի վալին՝ Մուսթաֆա Ապտիւլ Խալիլը՝ Թալէաթի աներձազը, արիւնարբու հրէշ մը, որ յետոյ եղաւ վալի Հալեպի եւ ջարդարարը նաեւ Հալեպի շրջակայքի, Տէր Զօրի եւ շրջակայքի հալուեցան:

Մուշի միւթեսարըֆն էր Սերվէթ պէյ:

Մուշի շրջանին մէջ խժողժութեամբ նահատակուած էր նաեւ հայ կաթողիկէ Թոփուղեան արքեպիսկոպոսը:

Պիթլիսի նահանգին մէջ հայ եկեղեցիներու թիւն էր 362:

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳ.— Վան սանճագը՝ 130 եկեղեցի եւ 25 վանք:

ԼԻՄ-ԿՏՈՒՑ՝ 32 եկեղեցի:

ԱՂԲԱԿ (ՊԱՇ ԳԱԼԷ)՝ 23 եկեղեցի եւ 7 վանք:

ԱՂԹԱՄԱՐԻ Կաթողիկոսութիւնը՝ 263 եկեղեցի եւ 6 վանք:

ԽԻՉԱՆ՝ 69 եկեղեցի եւ 16 վանք:

Վալին՝ ոճրագործ ձեւտէթ՝ Էնվերի փեսան եւ անոր ընկե-
կերակից վոհմակը գործեցին ցեղասպանութիւնը:

Վանի նահանգի եկեղեցիներուն թիւն էր 457:

ԻԶՄԻՐԻ ՆԱՀԱՆԳ.— 23 եկեղեցի:

Ամերիկեան ընդհ. հիւպատոս ձորճ Հորթըն կը վկայէ, թէ
Իզմիրի վալին՝ Բահմի պէյը (որ իր իթթիհատական ընկերներէն
նուազ յանցաւոր էր), կողոպտեց հայ ունեւորներէն 2·500·000
տոլար: Բահմի Սելանիկի հրեաներէն էր («տէօնմէ»), թրքացած
հրեայ եւ ճարպիկ կողոպտիչ մը, ունէր սեմական խոշոր քիթ մը:

ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳ.— Ատանա եւ շրջակայքը՝ 12 եկեղեցի:

ՍԻՍ՝ 7 եկեղեցի, 1 վանք:

Սահակ Բ. Խապայեան կաթողիկոս աքսորուած եւ Աղզ. Սահ-
մանադրութեան ջնջումէն ետք՝ Թուրքիոյ Կաթողիկոս-Պատրիարք:
ՀԱՃԸՆ՝ 8 եկեղեցի:

ՃՈՆՈՒԶ՝ 10 եկեղեցի:

ՄԱՐԱՇ եւ շրջանը՝ 24 եկեղեցի:

ԶԷԹՈՒՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԲԸ՝ 14 եկեղեցի եւ 4 վանք:

ՈՒՐՃԱՅԻ ՍԱՆՃԱՔԸ՝ 10 եկեղեցի եւ 2 վանք:

Ուրֆայի առաջնորդն էր Արտաւազդ վրդ. Գալենտերեան:

ՀԱԼԷՊ եւ շրջանը՝ 8 եկեղեցի:

ԱՅՆԹԱՊ՝ 6 եկեղեցի: Առաջնորդական փոխանորդը՝ Յարթ.
Քհնյ. Տէր Մելքոնեան:

ԱՆՏԻՈՔ՝ 6 եկեղեցի:

Ատանայի Իթթիհատի ներկայացուցիչը՝ ձեմալ պէյ (Պէհա-
էտտին Շաքիրի ընկերակիցը): Ատանա եկած էր Վանի վալի ձեւ-
տէթը եւ Հալէպ եկած էին Պիթլիսի վալի Ապտիւլ Նալիզը (Բենտա)
եւ իր ընկերները՝ Ապտիւլ-Ահատ-Նուրի, էյուպ, էմին պէյ կոչուած
ջարդարարները:

ԿԻԼԻԿԻՈՅ այս շրջանը ունէր 119 եկեղեցի՝ նահանգային սահ-
մաններու մէջ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ (ՏԻԱՐՊԵՔԻՐ) ՆԱՀԱՆԳ.— Տիգրանակերտ եւ
շրջակայքը՝ 50 եկեղեցի եւ 5 վանք:

ԲԱԼՈՒ՝ 40 եկեղեցի:

ԱՐՂՆԻ (Արկանա)՝ 10 եկեղեցի եւ 4 վանք:

ՄԱՐՏԻՆ ԵՒ ԶՆՔՈՒՇ՝ 4 եկեղեցի:

Տիգրանակերտի առաջնորդը՝ Մկրտիչ Զլդատեան վրդ. (նա-
հատակուած է ծեծի տակ):

Բալուի առաջնորդ՝ Եզնիկ Եսս. Գալփազճեան (նահատակ):

Չնքուշի առաջնորդ՝ Կարապետ վրդ. Յակոբեան (նահատակ):

Տիգրանակերտի նահանգին մէջ կային 104 հայ եկեղեցիներ:

Մարտինի հայ կաթողիկէ առաջնորդը՝ Մալոյեան արքեպս.
(նահատակուած) նախ բերուած էր Տիգրանակերտէն 3 ժամ հարաւ
արեւելք՝ Քարա Քէօփրիւ կոչուած վայրը՝ Տիգրիսի մօտ ոստիկա-
նապետ Մեմտուհը զայն սպաննելէ առաջ հարցուցած է. «Ըսէ՛ ինձի,
ոուժբեր ունի՞ք թէ ոչ»:

Մալոյեան պատասխանած էր. «Եթէ ձեր երեւակայած ում-
բերը ունեցած ըլլայինք, ձեր կատարած չարիքները պիտի չկրնայիք
ընել» (Նազլեան, Տրանս., էջ 367. Փիէն Հիասինթ Սիմոն՝ «Լա Վիլ
Հերոյիք» (Հերոսական Քաղաքը): Ուրիշ առթիւ հայ եկեղեցականը
նահատակուելէ առաջ ըսած էր, որ ինքը թագաւորի պերաքով (հրա-
մանագրով) առաջնորդ մըն է: Թուրք բորենին պատասխանած էր՝
«պետութիւնը եւ պերաքը փոխարինուած են սուրով» (Նազլեան,
հատոր Ա., էջ 323. Փրանսերէն ընազիր):

Տիգրանակերտի նահանգին մէջ աննախընթաց ոճիրներուն ղե-
կավարները եղած էին — վալին՝ տոթթ. Բեշիտ կոչուած բորենին եւ
Երեսփոխան Փիրինճի Զատէ, Ֆէյպի, Իթթիհատի լիարբը:

Գրեթէ անվթար մնացած էին կամ մասամբ վնասուած էին հե-
տեւեալ եկեղեցիները եւ վանքերը.— Պէյրութ՝ 4 եկեղեցի, Դամաս-
կոս՝ 1 եկեղեցի, Եաֆա՝ 3 եկեղեցի եւ 1 վանք: Երուսաղէմի շրջանը՝
10 եկեղեցի եւ 8 վանք, Լւ Պաղտատ-Մուսուլ-Պասրա՝ 3 եկեղեցի:

Եկեղեցիներու գրաւումէն յետոյ, մէջի դոյքերը կողոպտելէ
կամ վաճառելէ ետք, ոմանք գործածուեցան իբր շտեմարան, պա-
հեստատեղի, զօրակայան, իսկ կարգ մը տեղերու մէջ ալ նոյնիսկ ա-
նառականոց, ինչպէս Աֆրոն Գարահիսարի եկեղեցին, Մալաթիոյ լա-
տինաց եկեղեցին. կամ ոմանց վրայ փոքր մինարէթ մը աւելցնելով՝
վաչկատուն ցեղերու կամ մուհաբիրներու մզկիթ բրին, ինչպէս Պար-
տիզակի բողոքականներու ժողովարանի շէնքը: Յետոյ՝ Քեմալի եւ
Իսմէթի իշխանութեանց օրերուն իսկ ամրակուռ քարաշէն մայր եկե-
ղեցիները եւ վանքերը ուժանակով պայթեցուցին, ինչպէս Սերաս-
տիոյ Մայր Եկեղեցին, Ս. Սարգիս քարաշէն եկեղեցին եւլն. : Եւլն. :

Մանրամասն քննելով եւ հաշուելով հայկական նահանգներուն
և Փոքր Ասիոյ միւս վայրերուն մէջ գտնուած եկեղեցիները, կողոպ-
տուած, կիսով կամ ամբողջովին աւերուած եկեղեցիներու գումարն
է 2050 եւ վանքերունը՝ 203: Այդ ազգապատկան շէնքերուն եւ գոյ-
քերուն արժէքը 1·000·000·000 ռսկի տոլարէն աւելի է:

Թուրքիա պատասխանատու է իր ոճիրներուն, կողոպտումն-

րուն եւ աւերումներուն: Հայը կը մնայ պահանջատէր եւ թուրքիա պարտաւոր է հատուցում ընելու ուշ կամ կանուխ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԸ ԲՆԱԶՆՁԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ

Թուրք կառավարութիւնը մոլեռանդութեամբ կը հալածէր ու կը զլխատէր բոլոր հայ կուսակցականները, մտաւորականները, վաճառականները, աչքի զարնող բոլոր հայերը, բերանացի եւ գրաւոր հրահանդներով: Նման բարբարոս հրահանգներ տրուած էին նաեւ հայ եկեղեցականները ընաջնջելու մասին, որպէսզի հայ ժողովուրդին մնացորդները անհոյս եւ անմխիթար մնային:

Այդ կապակցութեամբ ներքին գործոց նախարարութեան կողմէ Դեկտեմբեր 1, 1915 թուակիր հետագիր մը կ'ըսէր. «Ամենէն աւելի պէտք է աշխատիլ հայ եկեղեցականներու դասակարգը ջնջել: Այդ մասին որեւէ թերացում ներելի չէ: Աքսորել զանոնք՝ դէպի անէութիւն» (տե՛ս Անտոնեան, էջ 102):

Առաջնորդ, վարդապետ, քահանայ, բլլա՛յ բանտերուն մէջ, բլլա՛յ ճամբաներուն վրայ, ամենազարհուրելի չարչարանքներով նահատակուեցան յանուն ազգին եւ քրիստոնէութեան:

Թուրքիոյ միայն կրնար գործել նման ահուելի ոճիրներ: Յունիս 11, 1915ին քարիւղով ողջ-ողջ հայ կաթողիկէ եկեղեցականներէն այրեցին՝ Մուշի շրջանին մէջ՝ Յակոբ արքեպիսկոպոս թոփուզեանը, Խարրերդի Ստեփան արք. Իսրայէլեանը, Մալաթիոյ Միքայէլ արք. Խաչատուրեանը, Տիգրանակերտի Անդրէաս արք. Զելչպեանը, Մարտինի Իդնատիոս արք. Մալոյեանը: Նման վայրագ ձեւերով նահատակուած են 2000 լուսաւորչական քահանաներ ու վարդապետներ եւ հայ բողոքական բազմաթիւ վերապատուելիներ:

..

Կ. Պոլսոյ մէջ, Հայ կաթողիկէ Ամենապատիւ Թերզեան Պատրիարքը՝ Դեկտ. 3/16, 1917ին տեղեկադրեց զերման դեսպան Պերնատորֆին, թէ տարադրուած են 53.140 անձ, 136 քահանաներ եւ 104 պթութեան քոյրեր: Գերման դեսպանն ալ հեռագրած էր այդ տեղեկադիրը այդ թուականին Գերմանիոյ վարչապետ Կոմս Ֆոն Հերթլինկին:

Պաթանեան Սրբազան, Պապին ուղղուած գրութիւնով մը, Հոկտ. 1964ին կը յայտնէր, որ թուրքեր սպաննած էին հայ կաթո-

ղիկէ 7 եպիսկոպոսներ, 127 քահանաներ եւ 57 պթութեան քոյրեր եւ զինադադարէն ետք՝ հայ կաթողիկէ ժողովուրդին միայն 15 առ հարիւրը ողջ մնացած էր: Գրեթէ նոյն համեմատութեամբ ջարդուած են նաեւ հայ բողոքականները:

Աքսորի ենթակայ հայ լուսաւորչական ժողովուրդին հագիւ 10 առ հարիւրը սպատած էր սպանդէն:

Սեպտեմբեր 15, 1916ին, Խապուրի եղերքը, Տէր Զօրի շրջանին մէջ, կառավարիչ Զեքի եւ իրեն գործակցող չեչններու վոհմակը 12 հայ լուսաւորչական քահանաներ կտոր-կտոր բրած էին, նոյն օրը նո՛յն վայրին մէջ. սուրբ հայերուն արիւնը կարմիր ներկած էր Խապուրի ջուրերը:

Ի հարկէ վերոյիշեալ բարձրաստիճան նախարար եւ վալի թուրք ոճրագործներու կարգին դատապարտելի են նաեւ գերման դեսպան Վանկենհայմ եւ Քայլեր Վիլհելմ Բ., որոնք հրահրեցին վայրենի թուրքերու կատաղութիւնը եւ մերժեցին որեւէ կերպով դադրեցնել հայերու տարագրութիւնն ու ջարդը, որբերու յափշտակումն ու բռնի խլամացումը, օրը օրին տեղեկի բլլալով հանդերձ դէպքերու մանրամասնութեանց:

Թուրք ղեկավարները անասուած էին, բայց կրօնական մոլեռանդութիւն հրահրելու համար, խլամ կրօնի հրահանգները խեղաթիւրեցին, խմբադրեցին ձիւտաբար եւ քաջալերեցին մարդասպանութիւնը:

Խալամութիւնը, ինչպէս հրէութիւնը եւ քրիստոնէութիւնը, կը պարունակէ բարոյական սկզբունքներ ոճիրներու դէմ: Թուրքերը չարափոխեցին այդ սկզբունքները: Արարներն էին, մասնաւորապէս Մեքքէի շերիֆը, որ բողոքեցին, թէ խալամութիւնը թոյլ չի տար նըման ոճիրներ գործել:

Ամերիկացի հեղինակ մը, «Թուրքիա» խորագրով իր երկին մէջ, հաւասար չարիք կը նկատէ մարդկութեան համար ժանտախտը, մարախը եւ թուրքը:

Համաշխարհային Բ. պատերազմը լրանալէն եւ Նիւրեմպերկի դատաւարութիւններէն աւելի քան 20 տարի անցնելէն ետք, զարմանալի չէ, որ հրեաները իրենց դէմ գործուած ցեղասպանութեան ոճիրներու հեղինակներուն դէմ տակաւին հետապնդումը կը շարունակեն: Դեռ վերջերս յանցաւոր 1500 նացիներու ցանկ մը յանձնած են Պոնի գերման կառավարութեան:

Գերմանը հալածեց եւ ջարդեց իր հողին մէջ գտնուող եկուոր հրեան եւ հրեան անդադար կը հետապնդէ ցեղասպան նացին: Մենք

պէտք է աւելի եռանդով հետապնդենք մեր իրաւունքները: Եկուոր թուրք ցեղասպանը Հայաստանի մայր հողին՝ մեր 3000 տարուան հայրենիքին մէջ կոտորեց մեր կիները, մանուկները եւ աւերեց մեր երկիրը: Ոչ պատիժ ստացաւ եւ ոչ ալ հատուցում ըրաւ: Թուրքը ար- դարութեան փախստական մըն է:

ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԵՒՈՐ ՅՈՒՑԱԿ ՄԸ

Մանօթ է, որ Փոքր Ասիոյ մէջ յոյներու մեծամասնութիւնը կը գտնուէր ծովեզերեայ շրջաններուն մէջ, ինչպէս Տրապիզոնի, Սամսոնի, Ինեպուլիի, Տարտանէլի, Իզմիրի, Այտընի շրջանները (առանց հաշուելու Կ. Պոլսոյ յոյն մեծ գաղութը): Իսկ փոքր մաս մը ցրուած էր Անատոլուի կեդրոնական մասին մէջ:

Այսօր, ինչպէս հայերուն, այնպէս ալ յոյներուն յիշատակա- րանները՝ եկեղեցիները, վանքերը 90 առ հարիւրով աւերուած են:

Ֆրանսայի սպայակոյտի անդամ մասնագէտ զինուորական մը, հազարապետ Ռ. Հիւպէո, որ երկար ժամանակ սպառիչ կերպով թուրքիոյ մէջ ուսումնասիրած է հայերու եւ յոյներու եկեղեցական եւ մշակութային հաստատութիւնները, 1898ին կու տայ իր ուսումնասիրութեանց տեղեկագիրը եւ կը ներկայացնէ հետեւեալ վիճակագրական տախտակը, զոր նոյնութեամբ կը ներկայացնենք ստորեւ.

	Հայ լուսաւորչական	Հայ կաթոլիկ	Յոյն
Պատրիարք	4	1	3
Արքեպիսկոպոս	18	2	48
Եպիսկոպոս	50	8	12
Եկեղեցի	1.740	120	2.286
Վանք	218	9	125
Դպրեվանք	5	2	4
Բարձրագոյն վարժարան	11	4	38
Երկրորդկ. եւ նախն. դպրոց	1.335	104	2.184
Հիւանդանոց, որբանոց	34	8	12

Թրքական վանտալութիւնը այսօր աւերած է հայ լուսաւորչա- կան, կաթոլիկ եւ յոյն եկեղեցական, մշակութային եւ մարդասիրա- կան հաստատութիւններուն աւելի քան 90 առ հարիւրը: Ու սպաննած է նաեւ անոնց գրեթէ բոլոր հոգեւորականները:

ԹՐԻՔԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿՐԹԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՑ

Համաշխարհային Ա. պատերազմի առաջին օրերուն, երբ թուրքիա զօրաշարժ յայտարարեց, պէտք ունեցաւ զինուորներու առժամ- եայ բնակութեան համար շէնքերու, եւ այդ նպատակով գրաւուեցան կարգ մը կարեւոր շէնքեր զինուորական իշխանութեանց համար եւ անոնց մէկ մասը գործածուեցաւ զինուորական ճիւղերու դրասեն- եակներուն համար, եւլն.: Գրաւուեցան նաեւ գործարաններ, հիւանդանոցներ, ջրաղացներ, կարգ մը եկեղեցիներ եւ վանքեր, նոյնիսկ կարգ մը մզկիթներ, որոնց բակերուն մէջ կը խոնուէին նորագիր զինուորները:

Գրաւումներու շրջանակը կամաց-կամաց ընդլայնեցաւ եւ խուլ կերպով աւարառութեան մը վերածուեցաւ: Գրաւուեցան հայերու այնպիսի տուններ, որոնք զինուորներու համար անպէտ էին, սակայն գտնուելով կեդրոնական վայրերու մէջ, ջարդի մը պարագային կըր- նային ղիմազրական կարեւոր զիրքերու վերածուիլ հայերու կողմէ:

Այս միջոցները թերեւս մասամբ կարելի է արդարացնել:

Աստիճանաբար սակայն պարզուեցաւ դաւադրական ծրագիրը՝ հայութիւնը արմատախիլ բնաջնջելու: Տեղի ունեցան բանտարկու- թիւններ, այլազան չարչարանքներ, աքսոր, սպանութիւն, եւլն.:

Հայոց անհատական եւ հանրային անշարժ կալուածները իւրա- ցնելու համար հրահանգները տրուած են թուրք իշխանութեանց կող- մէ:

Ջարդերու պատասխանատու թրքական կեդրոնական մարմինն հրահանգները (Թարգմանութիւն՝ Թուրքերէն բնաղբէն).

Ա.— Փետրուար 18, 1915.— (Հայոց) լքեալ գոյքերը, ի վեր- ջոյ (Իթթիհատի) ձեմիյէթի կազմակերպութեան ընդարձակման եւ

Հայրենասիրական նպատակներուն յատկացուելու համար, առայժմ կառավարութեան յարմար դատած եղանակով անոնց բռնազրաւումը եւ պահպանումը կը հրահանուի:

Բ.— Մարտ 25, 1915.— (Հայոց) լքեալ գոյքերու խնդիրը շատ կարեւոր է: Հաշիւները եւ անոնց զործածման եղանակները խստիւ քննեցէք:

Գ.— Մայիս 18/31, 1915 թիւով, Կ. Պոլսոյ զերման դեսպանը՝ Վանկենհայմ հետեւեալը կը հեռագրէ Պերլին, արտաքին գործոց նախարարութեան. «էնվէր փաշա, պատերազմական կացութենէն օգտուելով (ուկրէն պեմուցունկ տէս ֆոիկս ցու շրանտէս), մտադրած է փակել մեծ թիւով հայ զպրոցներ, արդիւիւ հայերու նամակագրութիւնները, փակել հայ թերթերը եւ հայ «ապստամբ» կեղրոններէն բնտանիքները զրկել Միջագետք: Ան խնդրեց, ստիպողաբար (տրինկեմտ), որ իր թեւերը չբռնենք (տաս վիտ իմ հիւպայ ֆիեթ ին տէն արմ ֆալլէն):—

«Տարագրուելիք հայերու քաղաքներու եւ գիւղերու մէջ գտնուած զպրոցները վերապահել թուրք մուհաճիրներու, դանոնք իրենց ներկայ վիճակին մէջ պահել, միայն չէնքերուն ներկայ արժէքը, պարունակած առարկաներուն եւ գործիքներուն թիւը եւ արժէքները ստմարներու մէջ արձանագրել»:

Ե.— Յուլիս 5, 1915, ներքին գործոց նախարարութիւնը կը հրահանուի զրաւոր.—

«Անհրաժեշտ նկատուած է պատրաստել վիճակագրական զործ մը, որ պարունակէ ստոյգ տեղեկութիւններ տարազրուած հայերու թիւին, անոնց թողած կայուածներուն, հողերուն, տեսակի թիւին եւ արժէքի մասին: Ներփակ կը զրկենք ձեզի բաւարար թիւով ցուցակներ, որոնք կը լեցնէք իրենց տեղերուն մէջ եւ կը վերադարձնէք մեզի»:

Զ.— Դարձեալ հայ զպրոցներու զրաւման մասին.—

ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԴՈՒՌ, ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Աշխրէթներու գետեղման եւ մուհաճիրներու տնօրինութիւն
ԹԻԻ ԸՆԴՀ. 583
Մասնաւոր.....

Կեսարիոյ Լքեալ Գոյքերու Յանձնախումբի
Նախագահութեան

Աքսորուած հայերու լքեալ գոյքերէն զպրոցներու համար պէտք եղած կահկարասիները եւ զպրոցական չէնքերը իսլամ (թուրք)

ղաւակներու (աշակերտ) յատկացուելը, Օգոստոս 22, 1915 թուակիրով եւ 529 թիւ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐՁԱՅԵՐԱԿԱՆՈՎ Հաղորդուած էր կրթական վարչութիւններուն: Հակառակ ասոր, կարգ մը տեղերու մէջ Լքեալ Գոյքերու Յանձնախումբերը չէնք եւ կահկարասի չեն յանձներ, ինչպէս յայտնի եղաւ թղթակցութիւններէն, ուստի, հարկ եղածը կարգադրելու համար, կրթական բարձր նախարարութենէն հաղորդուած ըլլալով, նախապէս տրուած հրահանգին համաձայն, զպրոցներու համար անհրաժեշտ եղած չէնքերն ու առարկաները փոխանցել եւ յանձնել կրթական վարչութիւններուն, կրկին անգամ ըլլալով կը հաղորդուի ձեզի էֆենտիս:

Յանուն ներքին գործոց նախարարին
փոխ-խորհրդական
ՄՈՒՀԱՄՄԷՏ ՍՈՒՊԷԻ
(Կնիք)

12 Ձիւլատէ 1333
8 էյուլ 1331
Սեպտեմբեր 8, 1915

ՔԱՆԻ՞ ԴՊՐՈՑՆԵՐ ԲՈՆԱԳՐԱԻՈՒԵՑԱՆ

Թուրքիարնակ հայերը, 1901—1902 զպրոցական տարելըջանին, հայկական նահանգներու եւ Անատոլիոյ միւս մասերուն մէջ ունէին 803 դպրոց (տես Լորտ Պրայս, էջ 662):

Մարտի 1 էլաո (Գրիգոր Զօհրապի ծածկանունը), իր 1913ին հրատարակած Փրանսերէն «Հայկական Դատը Փաստաթուղթերու Լոյսին Տակ» երկին մէջ կ'ըսէ, թէ հայոց զպրոցներու թիւը 20%ով աւելցած էր 1912ին, որով կ'ըսէ հաշիւով հայերը ունէին 1.000 դպրոց:

1902ի մանրամասնութիւնները հետեւեալներն էին.

Վեց նահանգներու 38 քաղաքներուն եւ գիւղերուն մէջ կային 438 դպրոց: Կիլիկիոյ 8 քաղաքներուն եւ գիւղերուն մէջ՝ 90 դպրոց եւ Անատոլիոյ գանաղան 18 քաղաքներուն մէջ՝ 275 դպրոց: 1902ին՝ 803 զպրոցներու աշակերտներուն թիւն էր 81.426 եւ ուսուցիչներուն թիւը՝ 2088:

Այդ թիւերուն մէջ չեն Կ. Պոլսոյ հայ զպրոցները եւ Կ. Պոլսոյ ու գաւառներու մէջ օտար զպրոցներու՝ Փրանսացիներու եւ ամբիկացիներու զպրոցներուն եւ որբանոցներուն մէջ եղող հայ աշակերտներն ու ուսուցիչները:

Դպրոցներու բռնադրաման նմոյշ մը տալու համար, յիշենք միայն Կեսարիոյ դպրոցներու բռնադրաման պարագան.

Կեսարիոյ կրթական տնօրէն Մեհմէտ Թեֆիկ պէյ պաշտօնադրով մը, Սեպտեմբեր 12 թուակիր (1915), Հայոց Լքեալ Գոյքերու Թրքական Յանձնախումբին կը հաղորդէ, թէ միայն Կեսարիոյ եւ Տեւեղուի գաղային մէջ գրաւուած են հայկական 24 դպրոցներ. ըստ հայոց արձանագրութեան, Կեսարիոյ եւ զիւղերու մէջ կային 42 դպրոցներ: Մնացած 18 դպրոցները կ'երեւի թէ կը գործածուին ուրիշ նպատակի, եթէ աւերուած չեն եւ կը մնան «էմվալը մեթրուքէ» յանձնախումբի տրամադրութեան տակ:

803 ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ՝

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՈՎ

803 հայ դպրոցները՝ նահանգային բաժանումով .—

Էտիրնէի նահանգ՝ 15 հայ դպրոց, որուն 6ը էտիրնէի եւ շրջակայքի մէջ եւ 9ը՝ Ռոտոսթօ եւ շրջակայքը:

Պրուսայի նահանգին մէջ՝ 24 հայ դպրոց, 14ը՝ Պրուսայի շրջակայքը եւ 8ը՝ Պալլըքետիրի եւ Պանտըրմայի մէջ:

Իզմիր եւ զիւղերուն մէջ՝ 27 հայ դպրոց:

Իզմիրի գաւառը (Նիկոմիդիա) 55 դպրոց, 38ը՝ Իզմիրի զիւղերուն մէջ, 10ը՝ Պիլեճիքի շրջանը, 3ը՝ Քէօթահիոյ մէջ եւ 2ը՝ Արմաշ:

Քասթեմունիի մէջ՝ 3 դպրոց:

Անգարայի նահանգին մէջ՝ 61 դպրոց, 7՝ Անգարա եւ զիւղեր, 42ը՝ Կեսարիա եւ զիւղեր եւ 12ը՝ Եոզկաթ եւ շրջակայքը:

Գոնիայի նահանգին մէջ՝ 3 դպրոց:

Սերաստիոյ նահանգին մէջ՝ 117 դպրոց, 46ը՝ Սերաստիոյ եւ զիւղերուն մէջ, Ամասիոյ շրջանին մէջ՝ 9, Շապին Գարահիսարի շրջանին մէջ՝ 27, Կիւրիւնի շրջանին մէջ՝ 12, Տարենտէ՝ 2, Տիվրեկի շրջան՝ 10, Թոզաթի շրջան՝ 11:

Ատանայի (Կիլիկիա) նահանգին մէջ՝ 88 դպրոց: Ատանայի շրջան՝ 25, Հաճըն՝ 4, Չէյթունի եւ զիւղերուն մէջ՝ 10, Սիս՝ 7, Մարաշ եւ զիւղեր՝ 23, Այնթապ եւ զիւղեր՝ 9, Անտիոքի զիւղերուն մէջ՝ 10:

Տրապիզոնի նահանգին մէջ՝ 74 հայ դպրոցներ, որոնց 47ը՝

զերուն մէջ, 27՝ Քդի եւ զիւղերուն մէջ, 9՝ Բաբերդ եւ զիւղերուն մէջ, 22ը՝ Երզնկա եւ զիւղերուն մէջ, Քեմախ եւ զիւղեր՝ 13, Պայազի շրջան՝ 6, Դերջան (Մամախաթուն) եւ զիւղեր՝ 12, Սպեր-Կիսկիմ՝ 2, Բասենի զիւղեր՝ 7, Խնուս եւ զիւղեր՝ 8:

Խարբերդի նահանգին մէջ՝ 82 հայ դպրոց: Խարբերդ եւ զիւղերը՝ 27, Ակն եւ զիւղերը՝ 4, Չմչկաձագ եւ զիւղերը՝ 12, Մալաթիա եւ զիւղերը՝ 9, Արաբկիր եւ զիւղերը՝ 18, Չարսանձագի զիւղերը՝ 12:

Տիգրանակերտի նահանգ՝ 22 դպրոց: 6ը՝ Տիգրանակերտի շրջանը, 8ը՝ Ուրֆայի շրջանը, 8ը՝ Բալուի շրջանը:

Պիթլիս նահանգին մէջ՝ 38 դպրոց: 12ը՝ Պիթլիսի զիւղերուն մէջ, 23ը՝ Մուշի զիւղերուն մէջ եւ 3ը՝ Սղերդի շրջանին մէջ:

Վանի նահանգ՝ 56 դպրոց: Վան քաղաք եւ շրջակայքը՝ 22: Լիմ-Կտուց՝ 3, Աղթամարի ենթակայ շրջաններ՝ 31:

Հայէպ՝ 2, Պաղտատ՝ 2:

Ընդհանուր դումար՝ 803:

Երբ հաշուենք միմիայն Ուիլսընեան սահմաններով Արեւմտեան Հայաստանի դպրոցները (առանց Կարսի, Արտասանի եւ Սուրմալուի), 14 կեդրոններու եւ շրջաններուն մէջ գտնուած հայ դպրոցներուն թիւն էր, 1902ին, 440. դարձեալ Ուիլսընեան սահմաններու մէջ եկեղեցիներուն թիւը՝ 500 եւ վանքերունը՝ 72:

ՀԱՅՈՑ ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐՈՒ ԵՒ

ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԹԱԼԱՆԸ

ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Մեծ աւագակապիտ Մեհմէտ Թալէաթ՝ թուրք կառավարութեան ներքին գործոց նախարարը կը խոստովանէր իր Յուլիս 21, 1915 թուակիր հետադրին մէջ. «Դիւրին գործ չէր հայերու աքսորը, ինչքերու եւ ստացուածքներու գրաւումը», որոնցմէ կախում ունին եզեր իրենց «սպառնալից եւ պետութեան սպահովութիւնը»: Ի հարկէ դիւրին մարտակից գործ չէր 2·650·000 հողի աքսորել, սպաննել, սեփանակազրկել եւ անպատիժ գուրս դալ:

Հայերու շարժուն եւ անշարժ ինչքերուն սեփականազրկումը եւ թալանը կանոնաւոր եւ անազմուկ կատարելու համար, ներքին գործոց նախարարութիւնը զրկած էր կարգ մը ծածկազիր հեռազիրներ, շրջաբերականներ, յաւելուածական հրամաններ եւ ատոնցմէ զատ նաեւ՝ հրահանդներու գաղտնի հաւաքածոյ մը՝ 34 յողուածներէ բաղկացած, նպատակ ունենալով վերջնականապէս իւրացնել հայերու շինքերը, հողերը, արտերը, գոյրոցները, եկեղեցիները, վանքերը, իրենց բոլոր ունեցածներով միասին, պետութեան դանազան ճիւղերու պաշտօնեաներու եւ երկրին ամէն կողմը նշանակուած յանձնախումբերու եւ գործակալներու միջոցով:

Ամբողջ գործը աւարառութեան գլուխ-գործոց մըն է:

500·000 հայ ընտանիքներու սեփականութիւնները, շատերունը՝ դարաւոր քրտինքի արդիւնք եւ խնայողութիւն, գրչի քանի մը հարուածներով իւրացնել՝ անհաւատալի վանտալական արարք մըն է:

Այդ աւագակալութիւններուն ուղղութիւն տուողը ներքին գործոց նախարարութիւնն էր, գործակցութեամբ՝ ելեւտական նախարարութեան, նահանգապետներու, գաւառապետներու, ոստիկանութեան եւ ժանտարմըրիի հրամանատարներու եւ հազարաւոր մեծ ու պղտիկ պաշտօնեաներու եւ գրաւումի «յանձնախումբերու»:

Կու տանք թուրքերէն բնագրին թարգմանութիւնը այդ «պաշտօնական թալանի» հրամանագրին, աւելցնելով նաեւ կարգ մը կարեւոր ծանօթութիւններ այդ եզրեանագրի դանազան յողուածներուն առնչութեամբ:

«Վարչական» թալանի այդ յանձնախումբերը ենթակայ էին ներքին գործերու նախարարութեան եւ իւրաքանչիւր տասնհինգօրեակին հաշիւ կը ներկայացնէին, տեղեկագիր կը զրկէին իրենց գործունէութեան մասին:

«ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԵՐՈՒՄՈՎ, ՏԱՐԱԳՐՈՒԱԾ ՀԱՅԵՐՈՒ ՊԱՏԿԱՆՈՂ ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐՈՒՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՈՂԵՐՈՒՆ «ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԵԱՆՑ» (*) ՄԱՍԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ (ԹԱԼԻՄԱԹՆԱՄԷ)»

ՅՕԳՈՒԱԾ 1.— Ուրիշ վայրեր «փոխադրուած» (տարադրուած) հայերուն սեփական եւ լքեալ անշարժ կալուածներուն եւ հողերուն եւ այլ խնդիրներու մասին, այս ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒ արամադրութեանց համաձայն պիտի ղեկավարուին լքեալ գոյքերու այն յանձնախումբերը, որոնք կազմուած են ստորեւ գրուած յողուածներուն համաձայն: Այդ գործերը անոնց յանձնուած են եւ իրենց իրաւասութեանց սահմանները որոշուած:

ՅՕԳՈՒԱԾ 2.— Գիւղ մը կամ աւան մը տարադրուելէ յետոյ, տարադրուած ժողովուրդին սեփական տուները եւ բոլոր շինքերը, իրենց մէջ գտնուած ապրանքներով, վարչական յանձնախումբերու կողմէ արտօնուած պաշտօնեաներու կամ մարմնի կողմէ պիտի փակուին եւ դուռները կնքուին, պահպանութեան տակ պիտի առնուին (**)

(տեքիալ մէտրիքներէ՛ք՝ թախքը մուկափազայալ ալրնաւագ տըր):

(*) «Վարչական կարգադրութիւն» (իտարէ) եղած է, որպէս զի քաղաքներու կամ գիւղերու մէջ թուրք ժողովուրդին առիք չտրուի հրապարակային թալանի, եւ ինչքերը կարելի եղած չափով կառավարական հսկողութեան տակ գտնուին եւ կողպուտին մեծ բաժինը ապահովուի թուրք կառավարութեան:

(**) Թէեւ հայոց տունները փակուած եւ կնքուած էին եւ անոնց պարունակուէին հսկողութեան տակ առնուած էր, սակայն թուրք ոստիկաններ, սպաներ եւ դրացիներ, տուններու ետեւի կամ քովի պատերը ծակելով, կողպուտներ կատարած էին: Այդ մասին պիտի ներկայացնենք ակնատեսի մը տեղեկագիրը:

ՅՕԴՈՒԱՄ 3.— Պահպանութեան տակ առնուած գոյքերուն տեսակը, քանակութիւնը եւ գնահատուած արժէքները եւ սեփականատէրերուն անունները մամբարմասնութեամբ տոմարի մէջ պիտի արձանագրուին (*), յետոյ գոյքերը՝ եկեղեցիի, դպրոցի, խաներու (վաճառականներու խանութներ) եւ տեփոններու (պահեստատեղի, մթերանոց) մէջ պիտի փոխադրուին, այնպէս որ, իւրաքանչիւրին տէրը յայտնի ըլլալու համար, առանձին պիտի գրուին եւ պիտի պահուին: Տեղեկագիր մը պիտի պատրաստուի ինչքերուն սեփականատէրերու մասին, նաև գոյքերու քանակութեան, անոնց ուրկէ՞ առնուած եւ ո՞ւր բերուած ըլլալու մասին մանրամասնութեամբ պիտի գրուի: Այդ տեղեկագրին բնագիրը պէտք է յանձնուի տեղական կառավարչութեան եւ անոր վաւերացեալ պատճէնը Լքեալ Գոյքերու Վարչական Յանձնախումբերուն (էմվալը Մեքրուֆէ Խտարէ Քումիսիոնը):

ՅՕԴՈՒԱՄ 4.— Սեփականատէրը անյայտ մնալու պարագային, ինչքերուն գտնուած գիւղին անունով պիտի արձանագրուին եւ պահպանուին:

ՅՕԴՈՒԱՄ 5.— Շարժական ինչքերու կարգին, կան այնպիսիներ, որոնք ժամանակի ընթացքին պիտի աւրուին, կամ ընտանի կենդանիներ, որոնք ֆոմիսիոնի վաւերացուցած ենթայանձնախումբի մը կողմէ՞՝ աճուրդով, հրապարակաւ պիտի ծախուին եւ ստաց-

(*) Տարագրուած կամ սպանուած հայերու բոլոր սեփականութիւնները «մասնաւոր տոմարներու» (տեփտէրը մախսու) մէջ կ'արձանագրուէին եւ, բանտարկեալներէն զատ, ափսոսելի կ'իյնան, մանուկները, ծերերը եւ դեռ չբանտարկուած այրերը, տուները, ընտանիքի անդամները առանձին կը ցուցակագրուէին, այնպէս որ թուրք կառավարութիւնը շատ լաւ գիտէր իր կողոպտած ազբաններուն բանակը, գիմը եւ իր գոհերուն ճշգրիտ թիւը:

Ներքին գործոց նախարարութիւնը Յուլիս 25, 1915 թուակիր շրջաբերակամ հրամանագիր մը գրկած էր ցուցակներ պատրաստելու շուրջ, հայերու անշարժ կառուածներուն եւ հողերուն մասին: Եւ Յուլիս 28, 1915 թուակիր ծածկագիր հեռագրով մը հրամայուած էր ցուցակագրել նաեւ հայերու պահանջները թուրքերէն եւ թուրքերու պահանջները՝ հայերէն: Որոշ է, որ թուրքերը վաճառակամ կամ արհեստաւոր ֆիլ ունէին, այնպէս որ հայերը աւելի պահանջատէր էին քան պարտատէր, բացի եթէ վարձակալ եղած էին թուրքի սեփական տան, վաճառատան, խտնի կամ խանութի մը մէջ:

ուած գումարները, եթէ սեփականատէրերը յայտնի են՝ անոնց անունով, իսկ եթէ անյայտ են, անոնց բնակած գիւղին կամ քաղաքին անունով, իրր աւանդ, պիտի յանձնուին ելմտական նախարարութեան գանձարկղին: Ծախուած գոյքերուն տեսակը, քանակութիւնը, արժէքը (նեւ, ճիւն, մրգտար վէ գրմեթի), որո՞ւն պատկանած ըլլալը, յաճախորդին անունը, գնման գումարը մանրամասնութեամբ տոմարի մը մէջ պիտի արձանագրուին եւ պիտի վաւերացուի աճուրդը կատարող յանձնախումբին կողմէ: Տեղեկագիր մը (գապըթ վաքազաք) պիտի պատրաստուի, որուն բնագիրը պիտի տրուի տեղական կառավարչութեան եւ պատճէնը ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ:

ՅՕԴՈՒԱՄ 6.— Եկեղեցիներու մէջ գտնուած գոյքերը, նկարները, Սուրբ Գրքերը (*) տոմարին մէջ պիտի արձանագրուին, անոր պիտի կցուի տեղեկագիր մը եւ տեղույն մէջ պիտի պահուին: Ապա, տարագրուած բնակչութիւնը որոշ տեղ մը հաստատուելէ յետոյ, իւրաքանչիւր գիւղին պատկանող եկեղեցական գոյքերը անոր պիտի զրկուին:

ՅՕԴՈՒԱՄ 7.— Տարագրուած հայերուն սեփական լքեալ իւրաքանչիւր կալուածին եւ հողերուն տեսակը, քանակութիւնը եւ արժէքի գումարները անուններով պիտի արձանագրուին տոմարի մէջ եւ իւրաքանչիւր գիւղի եւ քաղաքի սեփական լքեալ անշարժ կալուածները եւ հողերը պիտի ցուցակագրուին եւ պիտի յանձնուին վարչական յանձնախումբերուն:

ՅՕԴՈՒԱՄ 8.— Շէնքերուն մէջ եւ հողերուն վրայ փճանալու դատաստարտուած բերքեր եւ արմտիք գտնուելու պարագային, յանձ-

(*) «Եկեղեցիները, մկարները, գոյքերը եւ Սուրբ Գրքերը ցուցակագրել» (Քիլիսիոնի մեծուտ էշեա վէ թիւար վէ թիւար մուգատտէսէ սեպթը տեփթէր օլունանապ) հրամայուած է: Չեմ յիշուած վաճառքը, որոնց մէջ արդէն մէկէ աւելի եկեղեցիներ կային: Վաճառքու ունեցած հնութիւնները, ճշգրիտները, տրուած վարչական հրամանին համաձայն, գրուած են կառավարութեան կողմէ:

Այս գլուխին մէջ պիտի տանք հայոց 300 վաճառքներ եւ 1600է աւելի եկեղեցիներէն միայն մէկ հատին կողոպուտի մամբարմասնութիւնը, ազատատես վկայի մը գրած տեղեկագրով:

նախումբին արտօնած անձերու միջոցով, աճուրդով պիտի ծախուին ևւ զուժարները, տէրերուն անունով, իրը աւանդ պիտի յանձնուին ելմտական նախարարութեան զանձարկղին ևւ տեղեկաղիր մը պիտի կազմուի, որուն բնագիրը պիտի տրուի տեղական կառավարչութեան, ու վաւերացեալ մէկ պատճէնը վարչական յանձնախումբին :

ՅՕԴՈՒԱԾ 9.— Երկրագործական բերքերու ևւ այգիներու արտադրութեանց գնորդ չգտնուելու պարագային, երաշխաւորութեան ներքեւ պայմանագրութիւն մը պիտի կազմուի ևւ նուազուրդով պիտի յանձնուի զիմողներուն : Այս կերպով վարձու տրուած կամ ծախուած բերքերուն զուժարները, տէրերուն անունով, ժամանակաւոր կերպով կը յանձնուին ելմտական նախարարութեան զանձարկղին :

ՅՕԴՈՒԱԾ 10.— Տարագրուած հայերուն անշարժ կալուածները, իրենց տարագրութեան թուականէն յետոյ, եթէ սեփականատիրութեան իրաւունքով փոխանորդաղիր(*) տուած ըլլան ուրիշներուն, այդ սեփականութիւնը ծախելու համար, նման փոխանորդագրերով որեւէ գործողութիւն պիտի չկատարուի :

ՅՕԴՈՒԱԾ 11.— Տարագրուած հայերու զիւղերուն մէջ մուհաճիրներ (թուրք) պիտի բնակեցուին, հոն գտնուած բնակարաններուն մէջ ևւ հողերուն վրայ (մեսաքին վէ արագի մուհանիթիմէ

(*) Տարագրութեան նախորեակին հայ սեփականատէրը իր տունը, շէնքը կամ արտը ուղղակի կամ անուղղակի ծախելու իրաւունքէն զրկուած էր («վերջալեթնամէ իլէ մուամէլէ օլունմագ», ըսուած է) : Հայը սպաննուելէ առաջ սեփականագրուած է : Երբի օրէնքն իսկ նման քայլ մը «գասպ» (յափշտակում) կը նկատէ, քայց թուրքը իսլամական օրէնքին ոգին անգամ կ'անգոսնէ :

Իւրաքանչիւր իւրացումի առնչութեամբ, ունինք ծածկագիր հեռագիր մը, Յունիս 29, 1915 բուակիր, որ կը հաստատէ, թէ իսլամացած (հայ) մանուկի մը անձնական ստացումքը պէտք է վերապահել եւ տալ անոր ժառանգի բաժինը :

Անհատական կամ ազգային սեփականութեանց մասին աչքի փոշի փչելու համար, ի գուր Ահմէտ Ռիզա կոչուած ղեկավար իթթիհատականը, օսմանեան Ծերակոյտին մէջ, առարկեց թէ հայերու անհատական սեփականութիւնները իւրացրնել հակառակ է որեւէ պետութեան օրէնքին եւ առաջարկեց, մինչեւ պատերազմի վախճանը, որեւէ քայլ առնել այդ մասին (օսմանեան Ծերակոյտի արձանագրութիւն, Սեպտեմբեր 21, 1915, էջ 301) : Թուրք կառավարութիւնը իր յափշտակումի որոշումէն նշանախեց մը իսկ չշեղեցաւ :

քեւզիյ օլունմագ) : Նկատի առնելով անոնց երկրագործական ընգուանակութիւնները, անոնց վիտայաթուղթեր (իլմուխապէր) պիտի տրուին :

ՅՕԴՈՒԱԾ 12.— Տեղաւորուած թուրք մուհաճիրներուն արձանագրութիւնը պիտի ըլլայ մանրամասն, կանոնաւոր կերպով, բընակարան ստացողներուն անունը, տարիքը, հասած թուականը պիտի արձանագրուին տամարի մէջ : Յանձնուած անշարժ կալուածներուն ևւ հողերուն քանակութիւնն ու տարածութիւնը յայտնող հաստատագիր (իլմուխապէր) պիտի տրուի անոնց(*) :

ՅՕԴՈՒԱԾ 13.— Գիւղերու մէջ գտնուած շէնքերուն ևւ ծառերուն սրաշտպանութեան համար, հոն բնակեցուած մուհաճիրները հաւաքաբար պատասխանատու են : Եթէ աւերումներ տեղի ունենան ևւ անոնց հեղինակները ճշգրտին, միասնեբար արմէքը պիտի զանձուի այդ զիւղի ամբողջ բնակչութենէն ևւ միասարարութիւն կատարողներ անմիջապէս զիւղէն պիտի վտարուին ևւ իրենց մուհաճիր ըլլալու հանգամանքէն պիտի զրկուին :

ՅՕԴՈՒԱԾ 14.— Շէնքերը մուհաճիրներուն բաշխուելէ ետք, սուլցածներու մէջ պիտի բնակեցուին թափառաչըջիկ ցեղերը(**) ևւ ասոնց մասին մուհաճիրներու նման գործողութիւններ պիտի կատարուին (միւլթեպագը գալան քէօյլերտէ աշայլըր սէյարէ իսքեան էսիլեքիք) :

ՅՕԴՈՒԱԾ 15.— Տարագրուած հայերու քաղաքներու ևւ աւան-

(*) Յունիս 10, 1915 բուակիր ծածկագիր հեռագրով մը, ներքին գործոց նախարարութիւնը կը շեշտէր թուրք մուհանիթիմերու զեւեղումը հայերու տուներուն մէջ ևւ անոնց տուներու եւ հողերու բաշխումը : Յունիս 15, 1915 բուակիր շրջաբերականով մըն ալ ներքին գործոց նախարարը կը կրկնէր հայերու «աւելցած» տուներուն մէջ հաստատել նաեւ «աշիթէթներ» եւ «քափառաչըջիկ ցեղեր» (աշայլըր սէյարէ), ինչպէս որ հրահանգուած է նաեւ «Թալիմաթ» (հրահանգներ) 14րդ յոլուածին մէջ :

(**) Աւելի եղեռնական եւ սոսկալի պարագան այն է, որ այդ չինկէնէ (ցիկան) եւ փոմագ (նախտաչըր իսլամացած պուլկար) թալէաքը Յունիս 29, 1915 թիւ ծածկագիր հեռագրով կը հրահանգէր հայ անտէր մնացած մանուկները (իւրիւ գոյք) բաշխել թուրք զիւղացիներուն, հոն, ուր օտարականներ չեն գտնուիր :

ներու բնակարաններուն մէջ մուհաճիրներ տեղաւորելու միջոցին, նախապատուութիւն պիտի տրուի քաղաքներու եւ աւաններու բնակիչներուն, նկատի առնելով անոնց տնտեսական պայմանները եւ շինարարական ընդունակութիւնները, ու անոնց բաւարար չափով հոգեր պիտի տրուին:

ՅՕԴՈՒԱԾ 16.— Խանութ, առեւտրական շէնքեր (խան, բազնիք, տեփո-մթերանոց եւ նման շէնքեր), որոնք յարմար չեն մուհաճիրներու զետեղման, ինչպէս նաեւ աւելցած շէնքեր, ինչպէս նաեւ մուհաճիրներու բնակութեան եւ զործածութեան զուրս մնացած այլ շէնքերը, 18րդ յօդուածին համաձայն, վարչական յանձնախումբին կողմէ կամ անոր հսկողութեան տակ կառավարական վարչական պաշտօնեաներու եւ ելմտական նախարարութեան ներկայացուցիչներէն կազմուած մարմնի մը կողմէ աճուրդով պիտի ծախուին:

ՅՕԴՈՒԱԾ 17.— Քաղաքներու եւ աւաններու մէջ վերաբնակեցուած մուհաճիրները պիտի արձանագրուին տոմարի մէջ, կանոնաւոր վիճակադրութեան համար: Տոմարներուն մէջ պիտի արձանագրուին անոնց անունները, տրուած հողերուն տեսակը, տարածութիւնը եւ արժէքները:

ՅՕԴՈՒԱԾ 18.— Քաղաքներու եւ աւաններու շրջակաները գտնուած այգիները, պարտէզները եւ ձիթաստանները կամ նման անշարժ կալուածները պահպանելու եւ շինցնելու համար, մասնագէտներ գտնուելու պարագային, երաշխաւորութիւն առնելու պայմանով, անոնց պէտքին եւ ընդունակութիւններուն համաձայն, գաղթականներու բաշխել եւ որոնց ո՛րքան անշարժ կալուած եւ հողեր կը տրուին, արձանագրել եւ ենթականերուն յանձնել վաւերաթուղթեր: Այդ կարգի անշարժ կալուածներէն անոնք, որ մուհաճիրներու չեն յանձնուած, 16րդ յօդուածի համաձայն, աճուրդով պիտի ծախուին (պաղ, պաղչէ, գէշքուցիլը վէ միւսմասիլէ Էմլագ մուհաճիրիմէ քեւսիյ վէ տեփթէրը մախսուսա գայտ օլուսմագ տըր):

ՅՕԴՈՒԱԾ 19.— Նահանգներու մէջ գտնուող կամ տեղական կառավարչութեան արտօնութեամբ եւ համաձայնութեամբ եւ կամ ներքին զործոց նախարարութեան հրամանով ուրիշ նահանգներէն գրաւոր վաւերագրերով եկած մուհաճիրները բացառութիւն նկատելով, հայոց գիւղերուն կամ քաղաքներուն մէջ իբր մուհաճիր բնակիլ

ուզողներէն եւ կամ ուրիշ վայրեր բնակիլ ուզողներէն, կամ մուհաճիր ըլլալով տեղւոյն մէջ բնակելու համար զրկուածներէն պաշտօնական թուղթեր պահանջելը պայման է:

ՅՕԴՈՒԱԾ 20.— Տուներ եւ հողեր գնել ուզողները պարտաւոր են տուններուն լաւ հոգատար ըլլալ, եթէ թերանան կամ արգելքներ յարուցանեն ու աւերեն, վնասները հատուցանելու յանձնառութեամբ երաշխաւորութիւն պէտք է տան եւ երկու տարին շանցնելու պայմանով կարելի է խնդրարկուներուն վարձու տալ:

ՅՕԴՈՒԱԾ 21.— Ըլլա՛յ գնումով, ըլլա՛յ վարձակալութեամբ կամ նուազուրդով տրուած անշարժ կալուածներուն եւ հողերուն տեսակը, տարածութիւնը, տեղը, գնման եւ վարձքի գիները եւ մանրամասնութիւնները յաճախորդի եւ վարձակալներու վերաբերեալ տեղեկութիւններով ցուցակներ պէտք է կազմուին:

ՅՕԴՈՒԱԾ 22.— Ծախուած կամ վարձու տրուած կալուածներէն գոյացած գումարները, տէրերուն անունով, իբր աւանդ կը յանձնուին ելմտական նախարարութեան գանձարկղին: Յետոյ, տրուելիք հրահանգին համաձայն, տէրերուն(*) կը յանձնուին:

ՅՕԴՈՒԱԾ 23.— Տարագրուած հայերու քաղաքներուն եւ աւաններուն մէջ ունեցած բոլոր ինչքերուն եւ կալուածներուն յանձնումը եւ վարչական կարգադրութիւնները կը կատարուին այս ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ համաձայն: Եւ այդ գործողութիւնները ուղղակի ենթակայ են Լքեալ Գոյքերու Վարչական Յանձնախումբերուն:

ՅՕԴՈՒԱԾ 24.— Վարչական այդ յանձնախումբերը լքեալ գոյքերու վարչական կարգադրութիւններու մասին ուղղակի կը հաղորդեն միայն ներքին գործոց նախարարութեան եւ միայն անկէ իրենց ստացած հրամաններուն համաձայն կը կատարեն իրենց պարտականութիւնները, կու տան որոշումներ եւ կը գործադրեն զանոնք՝ իմացնելով նաեւ այդ մասին տեղական կառավարչութիւններուն (իտարէ

(*) «Ծախուած իրեղէններուն փոխարժէքները իբրիւ աւանդ պիտի պահուին ելմտական նախարարութեան մօտ եւ, կառավարութեան հրամանով, ապագային իրենց տէրերուն պիտի յանձնուին»: Թուրք կառավարութեան սովորական սուտերէն մէկն է այս ալ:

գումիսիոնարը, Էմվալը մեքրուֆենիմ իտարէսի խուսուսընտա տող-
բուտան տողբույա տախիլիէ նեգարեթիմէ մերպուք վէ օրատան էյս-
գեթտիլի Էամիթ տայիթեսիմուէ ինրայր վազիլիֆէ Էտէր) :

ՅՕԳՈՒԱԾ 25.— Այս հրահանգներուն տրամադրութիւնները
գործադրելու եւ պահպանութեամբ յարգելու մասին պէտք եղած
թիւով քովիսիոնարի պիտի կազմուին եւ, ներքին գործոց նախարա-
րութենէն արտօնութիւն ստանալէ ետք, վարձուած պաշտօնեաներ
պիտի ծառայեն եւ պիտի գործեն ներքին գործոց նախարարութենէն
տրուած հրահանգներու համաձայն: Կանոններ եւ բացատրութիւններ
պիտի պատրաստուին, համաձայն այդ հրահանգներուն, Լքեալ Գոյ-
քերու վարչական Յանձնախումբերուն կողմէ եւ ատոնց պատճէն-
ները պիտի զրկուին ներքին գործոց նախարարութեան եւ մէկ պատ-
ճէնն ալ պիտի յանձնուի տեղական կառավարչութեան:

ՅՕԳՈՒԱԾ 26.— Տարադրուած հայերուն բնակավայրերուն
մէջ մուհաճիթի գետեղի եւ զանազան գործողութիւններ կատարել այդ
առթիւ՝ պարտականութիւններն են յանձնախումբերու պաշտօնեանե-
րուն: Այդ գործերը արագացնելու եւ կանոնաւորելու համար, պէտք
է նշանակուին քննիչներ, քննութիւններ կատարելու եւ այդ առթիւ
տեղական կառավարչութեանց հետ խորհրդակցարար (հիւֆիւմէթը
մահալիլիէ իլէ պիլիսթիլարէ) որոշումներ պիտի տրուին գործադրու-
թեան համար: Ատոնք ալ Լքեալ Գոյքերու վարչական Յանձնախումբ-
բերուն պարտականութիւններուն մաս կը կազմեն:

ՅՕԳՈՒԱԾ 27.— Յանձնախումբերը իրենց գիտողութիւնները
եւ եզրակացութիւնները, իրենց որոշումներուն հետ, գործադրու-
թեան համապատասխանութիւնը պարունակող գրութիւնով մը յառուազն
15 օրը անդամ մը հաղորդելու են թէ՛ ներքին գործոց նախարարու-
թեան եւ թէ՛ նահանգապետութեան:

ՅՕԳՈՒԱԾ 28.— Լքեալ Գոյքերու վարչական Յանձնախումբ-
բերը, իրենց վարչական գործերու ընթացքին, այս հրահանգներուն
եւ տրուած ցուցմունքներուն համաձայն շարժելու պարտաւորուած
են:

ՅՕԳՈՒԱԾ 29.— Լքեալ Գոյքերու վարչական Յանձնախումբի
անդամները, երբ կը նշանակուին, իրենց գործունէութեան շրջանին

մէջ՝ Լքեալ անշարժ կալուածներուն եւ հողերուն վարչութեան եւ
պահպանման եւ հաշուական գործողութիւններուն համար հաւաքարար
պատասխանատու են:

ՅՕԳՈՒԱԾ 30.— Լքեալ Գոյքերու վարչական Յանձնախումբը
մասնաւոր կերպով նշանակուած նախագահէ մը եւ երկու անդամնե-
րէ կը բաղկանայ, որոնցմէ մին կը նշանակուի քաղաքային վարչա-
կան պաշտօնեաներէն եւ միւս անդամն ալ ելմտական պաշտօնեաներէն:

ՅՕԳՈՒԱԾ 31.— Լքեալ Գոյքերու վարչական Յանձնախումբ-
բին նախագահը կամ անոր նշանակած մէկ անձը կը կատարէ թղ-
թակցութիւնները, յանուն նախագահին:

ՅՕԳՈՒԱԾ 32.— Լքեալ Գոյքերու Յանձնախումբին նախագա-
հը, երբ յարմար նկատէ, կրնայ զրկել իր կազմի անդամներէն մէ-
կը, այս հրահանգներուն համաձայն, քննութիւն կամ հսկողութիւն
կատարելու եւ կամ գործադիր պաշտօնեայ դառնալու համար:

ՅՕԳՈՒԱԾ 33.— Լքեալ Գոյքերու Յանձնախումբի նախագա-
հը օրական մէկ ու կէս ոսկի, իսկ անդամները օրական մէկ ոսկի
վարձք կը ստանան մուհաճիթներու յատկացեալ դումարներէն եւ
պարտականութեամբ ուրիշ վայրեր երթալու պարագային ալ կը ստա-
նան իրենց ճանապարհածախսը:

ՅՕԳՈՒԱԾ 34.— Այն նահանգներուն մէջ, ուր յանձնախումբ
չէ նշանակուած, տեղական կեդրոնական կառավարչութիւնը պարտա-
կանութիւն ունի նշանակելու մէկը, այս հրահանգներուն համաձայն:

Մայիս 16, 1331 (1915)

Ի գորու՝ գործադրութեան համար

Մայիս 26, 1331 (1915)

**

Ինչպէս տեսանք, այս կողոպուտի ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ 6րդ յօդ-
ուածին մէջ յիշուած է «եկեղեցական գոյքերու, նկարներու եւ Սուրբ
Գրքերու մանրամասնութիւնը արձանագրել տոմարի մէջ եւ տեղե-
կազրի մը հետ պահել»:

Այդ մասին տկանատես կարեւոր անձնաւորութիւն մը հետեւ-

եալ ծանօթութիւնները արձանագրած է հայ վանքի մը՝ Սերաստիոյ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔԻ մասին, որ նմոյշ մըն է 1600 եկեղեցիներու եւ 300 վանքերու կողոպուտի մանրամասնութեան: Ահա ականատեսի այդ վկայութիւնը. —

«... Տարազրեալ հայոց տուները «քասփիէ» քոմիսիոնին «շէօպէ»ներուն (հաշուեյարդարի յանձնախումբի մասնաճիւղերուն) կողմէ կնքուած էին: Նոյնպէս եկեղեցիները եւ վանքերը: Անոնց մէջ մնացած բոլոր գոյքերը, արկղներով՝ հանդերձներ, ցորեն, գարի, ձաւար, խոզ, գորգ, կապերոններ, պղնձեղէն եւ տնային կահարասիները, որոնք տակաւին չէին գողցուած, նաեւ շուկաներու մէջ «մազազա»ներու, խանութներու եւ խաներու մէջ գտնուած հայերու ամէն տեսակ ապրանքները, եւ ամէն ինչ որ կար, նոյնպէս տուներէն ելածները, Ս. Աստուածածնայ Մայր եկեղեցիին մէջ մթերելով, ամէն օր իբր թէ «աճուրդով» կը ծախէին, ծիծաղելի գիներով: Եւ շուկայի մազազաներու (մթերանոցներու), խանութներու եւ խաներու մէջ գտնուած վաճառականական ապրանքները, ինչպէս նաեւ ուտեստեղէնի եւ զվեստեղէնի վերաբերեալ նիւթեղէնները «աճուրդով» թուրքերուն կը վաճառուէին: Արդէն Թասփիէ Քոմիսիոնի անդամները, գրապիրներ՝ սովորաբար ալ, իրենց կարգին, կը կողոպտէին կամ շատ աժան գնով կ'իւրացնէին այդ նիւթերը:

«Լքեալ տուները կամ զինուորականներու եւ կամ մուհաճիրներու կողմէ ըստ կամս կը գրաւուէին, եւ անոնց մէջ կը տեղաւորուէին: Որո՞ւն կարելի էր բան մը ըսել:

«Լքեալ տուներու գոյքերը եւ շուկայի մէջ հայոց ապրանքները ծախելէ ետք, Մայր եկեղեցւոյ, Ս. Սարգիսի, Ս. Փրկիչի եւ Ս. Մինասի եկեղեցիներուն գոյքերը եւ արժէքաւոր իրեղէններն ալ, տեֆթերաւարի (կառավարիչն յետոյ զլիւսաւոր պաշտօնեան) ներկայութեան, Թասփիէ Քոմիսիոնին անդամները աճուրդով վաճառեցին ոչինչ գիներով, թանկագին շուրջառներ, հին եւ նոր արժէքաւոր վարագոյրներ, եկեղեցական սպասներ եւ ամէն ինչ որ կար: Արդէն իրենց գրպանը մտնելիքներն ալ գրպանած էին նախապէս:

«Եկեղեցիներու իրեղէնները վաճառելէ ետք, ձեռք գարկին Ս. Նշան վանքին: Նախապէս, պահարան-գանձարանէն գատ, վանքին երեք եկեղեցիներուն ու սենեակներուն եւ զանազան վայրերուն մէջ գտնուած գորգ, կապերտ, եկեղեցական թանկագին սպասք, արձաթեղէն, ոսկեղէն իրեղէններ, վարագոյրներ, շապիկներ, շուրջառներ եւ գիրքեր վերցնելով՝ տարած էին Սերաստիոյ Թասփիէ Քոմիսիոնին:

«900ամեայ հնամենի այս վանքին զաղտնի պահարանի բանալին չէին գտած: Գործաւորական վաշտերու (ամեյլէ քապուռ) մէջ գործող քանի մը զինուորներով, լծակներով, մուրճերով կղպանքը կտորած եւ պատի մէջ ձեւուած երկաթեայ զուռ բացած էին: Հոն դտան չաթալ-թաղիր, գրքեր, անյին ձեռագիրներ, ոսկի եւ արծաթ իրեղէններ, հնութիւններ, ինչ որ կար, մօտ 3·000 կտոր արժէքաւոր սուարկաներ, 293 ձեռագիրներ: Այս արարին ներկայ եղող Թասփիէ Քոմիսիոնի անդամները, միւսայի ումումի (ընդհանուր դատախազը) Ասաֆ պէկը, Բախիսիոնի ըլիս վեֆիլի (փոխ նախագահ) եւ մուարիֆ միւսիլի (կրթական տնօրէն) Թեֆիկ Լֆենտին եւ Զրաաթ Պանքի միւսիլը (երկրագործական գրամատան տնօրէնը)՝ Սապրի էֆենտի տեղեկապիր մը պատրաստեցին եւ ստորագրեցին, զոյքերը վերցնելով տարին Սերաստիոյ քաղաքէն տարագրուած հայու մը (Աֆիոնեան Յակոբ Լֆենտի) տունը, իբր պահեստատեղի, եւ գիրքերն ու ձեռագիրներն ալ՝ մուարիֆ միւսիլի հրամանին տակ եղած թրքական գրադարան մը տարին կառքերով:

«Մնացած իրերուն մէկ մասը վաճառեցին, մէկ մասն ալ Կ. Պոլիս զրկեցին, անոնց հետ նաեւ՝ եկեղեցիներու զանգակները (գամփաւնիս):

«Գերեզմանոցի պատերուն եւ ննջեցեալներու բոլոր քարերը տարին սալայատակ շինելու համար կամ թրքական հիւանդանոցի, ուսուցչանոցի եւ կամ Իթթիհատի նոր ակումբի շինութեան գործածելու համար, հայ զինուորներու միջոցով, բռնութեան տակ:

«Տուները կը ծախէին հետեւեալ գումարներով. — Եթէ տուն մը 500 ոսկի կ'արժէր, ոչինչ զինով կը փոխանցէին իրարու, շահը իրենց մէջ կը բաժնէին: Ամբողջ գիւղի մը տուները 80 կամ 100 պանքնոթի (թղթադրամի) կը ծախէին, մինչ այդ գումարը նոյնիսկ մէկ տունի արժէքէն ալ պակաս էր»:

Թուրք բանակի հրամանատարները, ինչպէս նաեւ ներքին գործոց նախարարութիւնը հեռագրային հրահանգներ տուած էին հայերու լքեալ գոյքերէն բանակին տալու համար պահանջուած իրեղէնները:

Օրինակ, պատերազմական նախարարութիւնը Օգոստոս 8, 1915 թուակիր ծածկագիր հեռագրով մը եւ Ծրգ Գոլ Օրտուի փոխ

հրամանատարութիւնը Օգոստոս 11, 1915 թուակիր հեռագրով մը հայերու վաճառատուններէն և մթերանոցներէն կը պահանջէին զրկել բանակին — կաշի տեսակներ, դամ, կտաւ տեսակներ, վրաններ, հարուստներու կերպաններ, ցորեն, զարի, ալիւր, լուրիս, ոսպ, բրինձ, շաքար, ձուար, կաղ, ոչխար, այծ, արջառ, բեռան կենդանիներ, բժշկական իրեղէններ, կապար, երկաթ, զինուորական շինութեանց համար պանագան ապրանքներ, փայտ, ածուխ, օճառ և այլ բազմաթիւ ինչքեր:

Նոյն իմաստով ներքին գործոց նախարարութիւնն ալ Օգոստոս 27, 1915 թուակիր հեռագրով կը հրամայէր հայոց ապրանքներէն տալ Յրդ բանակին, Էրզ բանակին, Յրդ բանակին (Իրաքի բանակ): Այս վերջին հեռագրին թուականը պատուած էր: Կարգաթիւերու բողոքատութեամբ և հետադատութեամբ ճշդեցինք թուականին Օգոստոս 27, 1915 ըլլալը:

Գարձեալ ներքին գործոց նախարարութիւնը Սեպտեմբեր 14, 1915 թիւ շրջաբերականով կը հրամայէր հայերուն զորոցները յանձնել թուրք կրթական վարչութիւններուն և թուրք մուհաճիրներուն: Օգոստոս 31 և Սեպտեմբեր 10 թուակիր հրամաններով ալ բժշկական իրեղէնները կը թելադրէին յանձնել թրքական Կարմիր Մահիկին և առաջնապահական վարչութեան:

Թուրք պաշտօնական բոլոր ճիւղերը, իրենց բաժինը, առաւել կամ նուազ շահով, ստացած են հայերէ կողողպտուած գոյքերէն:

Անհատական սեփականութիւններէն կատարուած կողողպուտի մասին պաշտօնական տեղեկագրերէն ուրիշ նմոյշ մը:

«Կնիւֆ»

«Սեբաստիա, Լըզոււմ, Թոգաթ և Մարգոււանի Լեւալ Գոյքերու Քոմիտիոն»

«Տեղեկագիր (գալլըք վարագասը)»

«1918, Մայիս 4ին, կէսօրէ առաջ ժամը 10ին (Սեբաստիոյ քաղաքին մէջ), ստացուած հրամանին համաձայն, Պաթիար Պոսթան թաղին մէջ (անուանափոխ) իսլամացեալ Թեֆիկ Էֆենտիին տանը մէջ, աջ կողմի սենեակի մէկ պահարանին մէջ դրանք երկու կաշիկ պայտասակներ, որոնք կը պատկանէին էյմաս անունով կնոջ մը: Բանալիներով պայտասակները բացինք: Անոնց մէջ կային 271 կտոր զրամներ, զարդեղէններ և զոհարեղէններ: Մէկիկ-մէկիկ գանոնք արձանագրելէ յետոյ, կնքուեցաւ և ստորագրեցինք» — ԳՈՄԻՍԷՐ ՄԱՀՄՈՒՏ ՆԵՏԻՄ (Պեղերճի Գարաղոլի), ԻԲՐԱՀԻՄ ՖԵՒՉԻ

(Թասֆիէ Քոմիտիոնի դատական անգամ), ԹԱՀՄԻՆ (գլխաւոր քարտուզար), ԱՊՏԻԻԼ ԱՉԻՉ (թիւ 71 փոխա, ոստիկան), ԷՕՄԷՐ (զինուորական կարգապահութեան պաշտօնեայ):

Մայիս 4, 1918 (1334)»

Ատիկա միայն մէկ հայ բնատնիքի զարդեղէնն է: Տասնեակ հազարաւոր բնատնիքներ կողողպտուեցան, նախ քան անապատներու մէջ իրենց նահատակուիլը:

Երբ ակնարկ մը նետենք Նիւրեմպերկի (Գերմանիոյ) դատաւարութեանց արձանագրութիւններուն վրայ, հրէական զբաւուած գոյքերու բազմէջեան ցանկերը նման ձևով պատրաստուած են, առանց մոռնալու նոյնիսկ հրեաներու ոսկի ակօսները, զրպանի զմելիները, ծխատուփերը, զրիչները և մատիաները (տե՛ս, դատաւարութեանց արձանագրութեանց հատոր 7, էջ 746):

Նախանձի թոյնով լեցուած թուրքեր վանալու թեամբ կողողպտեցին և իւրացուցին 2·650·000 հայերու ինչքերն ու կալուածները և ազգային սեփականութիւնները, որոնց ընդհանուր գումարը ՀԻՆԳ ՄԻԼԻՍԻՆ ՈՍԿԻ ՏՈՒԱՐԸՆ աւելի է, տոանց հաշուելու օտար ապահովագրական ընկերութիւններուն ոսկեղրամով վճարուած մասնավճարները: Այդ ընկերութիւններն էին — ՆԻԻ ԵՈՐԲ ԱՅՅ (ամերիկեան), ԻԻՆԻՈՆ (ֆրանսական), ՔԱՆՍԱԼԻՏԷՅԹԸՏ ԱՅՅ (անգլիական), ԿԻԵՇԱՄ ԱՅՅ (անգլիական), ՌՈՍԻԱ (ուսական), նաև նուազ թիւով ապահովագրական պայմանագրութիւններ, զերման, աւստրիական և իտալական ընկերութիւններու մօտ:

Այդ ապահովագրութիւններէն 10·000ի վրայ մէկ անձ, իբր ժառանգորդ, հայիւ կրցած է զանձել իր ապահովագիրը: Իսկ մնացած տասնեակ հազարաւորներու ապահովագրութիւնները չեն զանձուած, թէ՛ ապահովագրելալը և թէ՛ ժառանգորդը սպաննուած ըլլալուն. և վաւերաթուղթերն ալ կորուած կամ ոչնչացուած ըլլալով: Ոսկեղրամով տրուած մասնավճարներն ալ մնացած են այդ ընկերութեանց գանձին մէջ:

1915ին և 16ին Կ. Պոլիս հասած զերման նոր ղեկապանը՝ Կոմս ՓԱՌԻԼ ՎՈՒՅ ՄԵԹԵՌԵՆԻՍ, որ նախապէս 11 տարի Լոնտոնի մէջ զերման ղեկապան Էղած էր, նկատի առած էր Պոլսոյ մէջ իր ստացած տեղեկութիւնները, հայոց տարազրութեանց նկարները, թուրքերու կատարած յեղատարանութեան մանրամասնութիւնները և տեղեկագրած էր զանոնք զերման վարչապետ Պեթման Հոյլեկին, Յունիս 30, 1916 թիւով, աւելցնելով, որ «թուրք կառավարական, վարչական

պաշտօնեաները, կառավարիչները, Իթթիհատի անդամները, «սովալլուկ գայլեր եմ» (հունկրիկ վեօլփե), «հալածանքներով, բռնութեամբ իւրացուցած են հայոց ինչքերը «վարչական յանձնախումբ»երու միջոցով, 100 ոսկինոց սպրանք մը, «սառուղով», 2 ոսկիի փոխարէն իւրացուած է»: Դեսպանը կը յայտարարէ, թէ «թիւրքիզմ» կը նշանակէ սպանութիւն, բնաջնջում, ուրիշին սեփականութեան գողութիւն: Եւ այդ բռնակալ քաղաքականութիւնը գործադրուած է և կը գործադրուի այդ բազմապիսեան օձին (ֆիլէօֆիֆիկէ հիդրա) կողմէ»:

Դեսպան Կոմս Մեթեոնիս, թէեւ գրեթէ տարի մը միայն թուրքիա մնաց (Նոյեմբեր 11, 1915էն մինչեւ Հոկտեմբեր 3, 1916), սակայն մօտէն շփման մէջ մտնելով թուրք քաղաքական և զինուորական ղեկավարներու, թրքական շրջանակներու եւ բանիմաց անկողմնակալ անձերու հետ, շատ լաւ բմբոնեց թրքական գիշատիչ հոգեբանութիւնը եւ տեղեկապրեց այդ մասին իր կառավարութեան:

Իր ճշմարտախօսութիւնն ու արդարամտութիւնը թուրքերու ոխը հրաւիրեցին իր վրայ, եւ էնվեր փաշա դնաց մինչեւ գերման մեծ բանակատեղը բողբոխ: Դեսպան Մեթեոնիս իր պաշտօնը զոհեց, սակայն ոչ իր արդարամիտ ոգին. նոյնիսկ Քայգեր Վիլհելմ Բ-ի առջեւ Մեթեոնիս փորձեց հայկական ջարդերու մեղսակցութեամբ արատաւորուած գերման կառավարութեան պատիւը բարձրացնել:

Թրքական պատմութիւնը կը վկայէ, թէ Օրխանէն՝ 1326էն մինչեւ 19րդ դար, մօտ 500 տարի թուրք իշխանութիւնը ենիչերիական կազմակերպութեամբ, կողոպտուով եւ սպանութիւններով ծաւալած է: Ջարդած է 40·000ով, 50·000ով պարսիկներ եւ արաբներ: 1571ին Կիպրոսը զբաւելէ ետք, 50·000 հոգի ջարդած է, եւ անձնատուր եղած հրամանատարը՝ Պրաճիտինին ողջ-ողջ մորթագերծուած է Սուլթան Սելիմի հրամանատար Լալէ Մուսթաֆա փաշայի կողմէ:

Թուրքերը Արեւելեան Եւրոպայի ժողովուրդներէն ջարդած են իսլամ այլանացիներ, պոսնացիներ, սլաւներ, սերպեր, պուլկարներ, ռումանացիներ, վլախներ, յոյներ, հայեր, արաբներ, Մերձատուր Արեւելքի մէջ՝ սուրիացիներ, քաղղէացիներ, ասորիներ, նեստորականներ, նոյնիսկ մաս մը շիրքէզներ, յագեր: Մէկ խօսքով, եղած են միշտ ցեղասպան եւ մարդկութեան թշնամի:

Երբ առաջարկուեցաւ թուրքիան Եւրոպական Պորհուրդին հրաւիրել, նկատի ունենալով անոր աշխարհադրական-ազգամադիտական գիւրքը, Պորհուրդի անդամներէն մին համարձակօրէն յայտարարեց .-

«Եւրոպական Պորհուրդը պարտականութիւն ունի պաշտպանելու քաղաքակրթութիւնը: Պատմութիւնը ցոյց կու տայ, թէ թուրքիոյ բերած մասնակցութիւնը Եւրոպական քաղաքակրթութեան աւելի բացասական եղած է, քան դրական: Նոյնիսկ թուրքին հանդէպ ներդամիտ պատմաբաններ՝ Ֆոն Համմեր եւ Ի. Ս. Բրիգի պախարակած են թուրքին ոճրային բնագրները»:

Հայկական արդար իրաւունքներու պահանջը ի զօրու է միշտ, Հայկական Դատը պիտի հետապնդուի, մինչեւ որ իր արդար լուծումը գտնէ, լիուլի հատուցում ստանալով, հիմնուած՝ նոյնիսկ միջազգային կարեւոր վաւերացրերու, Ուիլսոնի իրաւարարական վճիռին, Սելիմ դաշնադրին 88-93 եւ 142 եւ 144 յօդուածներուն (Լքեալ Գոյքերու մասին) եւ այլ միջազգային զանազան վաւերագրերու վրայ:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱ ԹՈՒՐԳԱ

Յեղասպանութեան մեքենային «անիւ»ները Իթթիհատի պատասխանատու քարտուղարներն են, ըլլա՛յ Հայաստանի վեց նահանգներուն մէջ, ըլլա՛յ Արեւմտեան Անատոլուի եւ Կ. Պոլսոյ ու էտիրնէի մէջ:

Հարիւրաւորներ են անոնք: Յաջորդաբար պիտի տանք պետական դատարանի մը մէկ փաստաթուղթը իբրեւ նմոյշ մի քանիին, որովհետեւ անոնցմէ շատերը տակաւին անծանօթ կը մնան կամ իրենց հետքերը անհետացուցած էին դատավարութեան ժամանակ:

Այդ պատասխանատու քարտուղարներէն շատերը անձամբ ընկերացած են մտադործ չեթէներու խումբերուն եւ խուժանին, եւ յաճախ ղեկավարած են, ոճիրներու ընթացքին, մարդասպանութիւն, ջարդ, բռնաբարում, դրամներու, զարդեղէններու, գոհարեղէններու կողոպտում. տարազրութեան ճամբու վրայ կամ մասնաւորապէս պատրաստուած վայրեր՝ իբր ծուղակ՝ կարաւանները բնաջնջած եւ, ազդեցիկ անդամ ըլլալով, անշարժ կալուածներու յանձնախումբերուն մէջ յափշտակութեանց գործերուն մասնակից եւ հսկիչ եղած են:

Ինչպէս ըսինք, մեր տալիք փաստաթուղթը, Պատերազմական Ատեանի դատապարտութեան վճռագիր մըն է, որ խիստ կարեւոր է անոնց յանցաւորութիւնը հաստատելու եւ պատիժներ որոշելու. բայց Ատեանին դատաւորները, դատաւոր ըլլալէ առաջ, թուրքեր, զօրավարներ էին, որոնք զանազան պատրուակներով սզատ արձակած են շատերը: Քանի որ անոնք արտաքնապէս դատաւոր եւ ներքնապէս համաձայն էին կատարուած ցեղասպանական ոճիրներուն: Ասով մէկտեղ, Պատերազմական Ատեանի վճռագիրը կը մնայ պատմական փաստաթուղթ մը, թէեւ չէ զործադրուած, բայց եւ այնպէս ոճրապարտութեան յաւիտենական խարան մըն է թուրք սպառնական ան-

ձերու եւ աւազակապետներու ճակտին, մանաւանդ որ վկաներու մեծ մասը թուրքեր, պաշտօնեաներ, զինուորական եղած են:

Դատավճիռին մէջ դատաւորները շատ զղուշացած են մասնաւոր թուականներ նշանակելէ եւ ընդհանուր բացատրութիւններ արձանագրած են, հայակեր զիշատիչ անզղներուն ու բորենիներու վոհմակին համար:

ԲՆԱԳԻՐ ԴԱՏԱՎՃՌԻՒՄ ԻԹԹԻՀԱՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐՈՒՆ, ՅԵՏ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Թագվիմը Վեքայի թիւ 3772 Յունուար 8, 1920

Թրքական Պատերազմական Ատեանի արձանագրութենէն
ՆԱԽԱԳԱՀ զօրավար (միրլիւս) Էսատ փաշա.

Անդամներ.— Զօրավար (միրլիւս) Իհսան փաշա(*), զօրավար (միրլիւս) Մուսթաֆա Քերիմի փաշա, զօրավար (միրլիւս) Իսմայիլ Հազըր փաշա, զնդապետ (միր ալայ) Սուլէյման Շաքիր պէյ:

ԻԹԹԻՀԱՏ ԵՒ ԹԵՐԱԳԳԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Դատավարութիւնը տեղի ունեցած է ներկայութեամբը հետեւեալ ամբաստանեալ անձերուն.—

Մանիսայի պատասխանատու քարտուղար՝ Աւնի պէյ, Պէյ Օղլիի (Բերա) պատասխանատու քարտուղար՝ Հասան Սալահետին պէյ, Էսքիչեհիլի պատասխանատու քարտուղար՝ տոքթ. Միտհատ պէյ(**), Սիրկիւնի (Էմիրկեան) պատասխանատու քարտուղարի փոխանորդ Ճեւտէթ պէյ, Հալեպի պատասխանատու քարտուղար Ճեմալ պէյ, էտիրնէի «քննիչ» (միւֆեթթիչ) Ապտիւլ Ղանի պէյ(***), Գոնիայի պատասխանատու քարտուղարի փոխանորդ Ապտիւլ Գա-

(*) Իհսան փաշան հաւամբաբար Քէօր Իհսան փաշան է, որ գերի բռնուած էր կովկասեան ճակատի վրայ ու փախած, եւ յետոյ կրկին կովկասեան ճակատ երթալով, բռնուած հայ գերիները սպաննել տուած էր Ալեքսանդրապոլի եւ այլ շրջաններու մէջ, եւ 1921ի սկիզբը մաս կազմած էր այն զինուորական ատեանին, որ զաղբիցուց ցեղասպաններու դատավարութեան շարունակութիւնը:

(**) Այս տոքթ. Միտհատը պէտք չէ շփոթել Միտհատ-Շիւքրիի հետ, որ Իթթիհատի Կեյրոնիմ (Մերէզը Ումումիմ) փարտուղարն էր:

(***) Վերոյիշեալ Ղանի պէյը Ապրիլէն Օգոստոս 1915 եղած է նաեւ պատասխանատու փարտուղար Սեբաստիոյ Ասիանգիմ:

ու գրգռութեան (թեշվիգաթը նեփագնուեանէ) եւ ներքին ապահովութեան խառնակշուքեան ամէն միջոցներու դիմած են. եւ տեսնուած է, որ իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան պատասխանատու քարտուղարները իրենց ոճրային շարժումներուն մէջ ազատ ձգուած էին. սակայն այլեւս թոյլտուութիւն չտրուելու պատճառով (որ շարունակեն իրենց միասնեքը), զանոնք ձերբակալելով, հսկողութեան տակ՝ Կ. Պոլսոյ Պատերազմական Ատեանին առջեւ բերած են, անոնց մասին քննութիւններ կատարելու համար: Ներքին գործոց նախարարութիւնը եւս շրջաբերականով հաղորդած էր եւ, զանոնք ձերբակալել տալով, մաս առ մաս Պատերազմական Ատեանին յանձնած էր:

ՎՃՌԱԳՐԻ (գարարնամէ) բնագրին հարազատ թարգմանութիւնը.—

Այդ պատասխանատու քարտուղարներուն մասին հարցաքննութիւններ կատարուած են: Եւ ստուգուած է, որ պետութեան զեկը բռնակալութեամբ ձեռք անցուցած, Ընդհանուր Պատերազմին մասնակցիլ որոշած եւ գեղծարարութիւններ կատարած են, նաեւ տարագրութիւն, ջարդ, ախար, սեփականութեանց աւերում եւ այլ գարշելի ոճիրներ գործած են, օսմանեան երկիրներն ալ վերջին աստիճանի թշուառութեան մատնած ու գանգաւ շարիֆներու ենթարկած են: Եւ արտաքին աշխարհին առջեւ ալ պետութեան ուժը եւ վեհութիւնը (մեհապէթ) անպատուած եւ աղէտներու մատնած են:

Այժմ իթթիհատ եւ Թերագզը կուսակցութիւնը, որ ինքզինք լուծեր է, իր յայտարարած նպատակները իրագործելու համար գործունէութեան դաշտ ընտրած էր օսմանեան նահանգները: Վերեւ յիշուած ոճրային շարժումներուն մասնակցած եւ ոճիրներ գործած ըլլալու պատճառով, Պատերազմական Ատեանի առջեւ բերուած են:

ԹՈՒՐԳԵՐԷՆ ԲՆԱԳԻՐԸ ԲԱՌ ԱՌ ԲԱՌ ԿՐՍԷ.—

«...Քեաթիպ թէ մուրախխասը մուճիայլեհիմ հազգլարընտա տեւայիրը իսթինթագիյէճէ իճրա գըլընան թահգիգաթ նեթիճեսինստէ Գուվվայը Ումուճիյէի տովլեթի թեգալլուպ վէ զեմամը իտարեսինէ ալարագ, հարպը ումուճիյէեէ իշթիրագ վէ թէէսիսը իհթիքեար վէ թեհճիր վէ թագթիլ վէ նեֆի վէ թագրիպը էշխաս վէ սայիրէ էֆասլը, զանունը շեքնանէ իլէ մեմալիքը օսմանիյէի տախիլէն սոն տերեճէ սեֆալէթ վէ կնհայը միւստիպէ կիրիֆթար վէ խարիճէն գուտրէթ վէ մեհապէթը տեւլէթի սեքթետար էտերէք, ազամ ֆելաքէթլերէ տիւշար էտէն մեֆսուխ ճիթթիհատ վէ Թերագզը

ձեմիյէթին» ամալ վէ մեգասիտինի միւրեւլիճ վէ ամիլլերի վէ վիլլայթը օսմանիէ վասիգայը իճրաաթը օլմագ իյթիպարը իլէ, ձեմիյէթին պերվեճհի մուհարրէր հարեքաթը ճինայեթքեարնելէրինէ ֆերէն զի մետիլ օլմագ թէօհմեթի իլէ տիւանը հարպըմըգա սեւգ էտիլմիլերի իլէ...»:

«Բանակի տրամադրութեան տակ անուած ամիլլէ քապուրնբալ (հայ գործաւորկ. վաշտերու) զինուորները աշխատցնելու ձեւով էլըպներ շինել տուած են եւ տարագրուած հայերուն կարգ մը տունները ակումբի վերածած եւ անոնց լքեալ զոյգերով տուն զարգարած են: Եւ ընտրութիւններու ժամանակ ալ խրատներով եւ լուսարանութիւններով չեն գոհացած, այլ անյաղութեամբ շար նպատակներու ծառայած են և, բոնի ուժի վրայ յենլով, չափէն աւելի միջամտութիւններ, ճնշումներ կատարած են: Եւ սպանալիքի քաղաքականութենէն զատ, եթէ մէկը օրինական իրաւունքի վրայ հիմնուելով համարձակէր ընդդիմութիւն ցոյց տալ, զանազան ձեւերով սպառնալիքի եւ սարսափի կ'ենթարկէին զայն եւ սահմանադրական իրաւունքով ընդդիմացողը, բռնակալութեան ժամանակ եղածէն առանց տարբերութիւն ունենալու, քմահաճոյքի վարչութիւն մը հաստատած էին: Իսկ հանդանակութեան եւ ներքին փոխառութեան առթիւ, կառավարական պատասխանատու պաշտօնեաներու աչքին առջեւ աւելի վճարելու կարողութիւն չունեցողները կը ծեծէին եւ կ'անարգէին եւ օրէնքին հակառակ կ'արգելափակէին կամ կը բանտարկէին:

Վերջապէս պետութեան կենսական խնդիրները լուծելու կամ պայմանագրութիւն կնքելու վայրը իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան Մերքէզը Ումուճին (Ընդհ. կեդրոնը) ընտրած էին եւ ունիւրներու մանրամասնութիւնը որոշած եւ այդ մանրամասնութեանց մասնակցած էին. մասնաւորապէս տարագրութեան, ջարդերու, սեփականութեանց յափշտակումի եւ հարստութիւն դիզելու համար ունիւրներ եւ շարաշահութիւններ գործել համարձակած էին: Եւ Մայիս 14, 1915 (1331) թուականի ժամանակաւոր օրէնքին համաձայն, տարագրութեան պարագաները իրենց անձնական շահերուն ծառայեցուցած են: Վերոյիշեալ Ընդհանուր կեդրոնը (Մերքէզը) կազմակերպութիւններու ցանց մը լարած էր, ոճրագործներու խումբերով եւ խումբանով (կիրուհը պաղիյէ), եւ մասնաւորապէս հայերու ջարդին եւ բնաջնջումին ու անոնց սեփականութեանց, գոյքերուն կողպումի եւ յափշտակութեան վերաբերեալ գործերը կատարած են վերոյիշեալ պատասխանատու քարտուղարները:

Ումանց, որպէս թէ դիւրութիւններ տալու պատրուակով, դա-

լադրած եւ ձեռք անցուցած են անոնց թողեալ ինչքերը: Այդ բոլորը տեսնուած եւ ստուգուած է:

ԹՈՒՐՔԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ ՄԷՋ. —

«...Նիհայէթ, մեսայիլը հայաթիյէի տեւթին մահալը աջո ու հալը օլան իթթիհատ վէ Թերագգը ձեմիյէթինին Մերքէզը Ումուհիսինին իթթիհազ էյլետիյի մուզարրերաթը ճինայեթբեարանէլերինէ իշթիրաթ, վէ պիլխասսա, թեհհիր վէ թագթիլ վէ զասպը էմվալ իլէ, իտտիխարը սերվէթ ճիւրիւմլերինի իրթիքեապա ճիւրէթ օլունմուշ, վէ Մայիս 14, 1331 (1915) թարիխի գանունը մոււազգաթ մուհեպինճէ, իճրա էտիլէն թեհհիր քէյֆէյէթի մենաֆիլը շախսիյէյէ վեսիլէ, իթթիհազ էտիլերէթ, մեզքիւր Մերքէզը Ումուհիսինին շեպեթի թեշթիլաթլարը տայիւրէսինտէ կիւրուհը պաղիյէ գալէ վասիթասը իլէ, պիլխասսա էրմենիլերին թագթիլ վէ իմհասը վէ էմվալ վէ էշեալարընըն նեհպ ու եաղմասը խուսուսընտա, մար իւլպէյան, քեաթիպ վէ մուրախասը մեսուլլարըն պաղըլարընճա թեհհիր լաղըմէյէ թեւասուլ վէ թէատտի վէ պիլֆիլիյ, էմվալը մեթրուքէյէտէ իյասլը տեսթը թաատի էտիլմիշ օլտուղու գահիր վէ նիւմէյան օլմուշ...»:

«Որովհետեւ վերոյիշեալ Ընդհանուր Կեդրոնի անդամներէն եւ Թեշթիլաթը Մախսուէի նախագահ Պեհաէտտին Շաքիր պէյ էրզրումէն Պարբերդի պատասխանատու քարտուղար փախստական Բեսնեցի Նազըմ պէյին(*) հետեւեալ ծածկագիր հեռագիրը զրկած է.

«Ձեր տարագրած հայերը կը բնաջնջուին. այդ իմաստով հազարդուած է»:

«Նմանապէս, Եոզկաթի սանճագի Պողազլայան գազայի ջարդը և ոճիրները, Պատերազմական Ատեանի կողմէ քննուելով, դատավարութեան ընթացքին ստուգուեցաւ, թէ Անգարայի պատասխանատու քարտուղարը Նեճաթի պէյն էր, որ Եոզկաթի նախորդ միւթեսարըՖ ձեմալ պէյը պաշտօնանկ ըրած էր եւ Պողազլայանի գայմագամ Քեմալը, որ հետագային կախուեցաւ, նշանակած էր Եոզկաթի փոխ կառավարիչ: Մանրամասնութիւններէն ինչպէս որ կ'երեւի, հակառակ անոր որ Քասթեմունիի մէջ հայերուն թիւը, բաղդատմամբ ընդհանուր բնակչութեան թիւին, փոքրամասնութիւն կը

(*) Բեսնեցի Նազըմ պէյը պէտք չէ շփոթել տոքթ. Նազըմ կոչուած բարեհիւս հետ, որ թէ՛ Մերքէզի եւ թէ՛ Թեշթիլաթի անդամ էր:

կազմէր, տարագրութեան օրէնքին մէջ նշանակուած որեւէ յանցանքէ զերծ ըլլալով հանդերձ, Քասթեմունի նահանգին կառավարիչ վալի Բեշիտ փաշա ըսած էր. «Ես ձեռքերս արիւնով չեմ ներկեր»։ Քասթեմունիի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենտին բազմաթիւ դիմումներ կատարած եւ ձեռնարկներ ըրած էր զինքը պաշտօնանկ ընելու եւ ի վերջոյ ընել տուած էր:

«Անգարայի տարագրութիւնը սրտաճմլիկ ոճիրները գլուխ հանած եւ լրացուցած է: Աթիֆ պէյն ալ նոյն պատճառարանութիւններով Պոլուի հայերը տարագրած է եւ Պոլուի պատասխանատու քարտուղար տոքթ. Միտհատ պէյը «հայերը չեմք ուզեր» ըսելով միթինկներ կազմակերպած է եւ իր ունեցած ազդեցութիւնը գործածելով յաջողած է տարագրել տալ հայերը. երբ Պոլուի փոխ միւթեսարըՖ Ալի Իմի պէյը ընդդիմացած է, Միտհատ պէյ Պոլիս գացած եւ պաշտօնանկ ընել տուած է գայն: Նման ձեւերով եւ կերպերով օրէնքի ոգին հակառակ ըլլալով եւ ամէն տեղ հասնելով՝ բազմաթիւ աղէտներու պատճառ եղած է, ինչպէս արձանագրուած է:

«Սպանութեանց այդ եղելութիւնները կապ ունին Թեշթիլաթը Մախսուէին հետ եւ իթթիհատ եւ Թերագգրի Ընդհանուր Կեդրոնէն կազմակերպուած են եւ այդ Ընդհանուր Կեդրոնին ներկայացուցիչները և անդամները պատրաստած եւ դիրացուցած են այդ ոճիրները: Այդ մասին վճռական փաստաթուղթ եւ բացատրող վկայութիւններ կան: Ուստի, վերոյիշեալ գործուած ոճիրները ամբաստանեալներէն բոլորին չեն վերաբերի: Ոճիրներու մասնակցութեան աստիճանը, ամէն մէկուն անձամբ եւ անհատապէս յանցաւոր ըլլալը պիտի բացատրուի:

«Յիշեալ ամբաստանեալներէն Քասթեմունիի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենտիի պարագան. — Լսուած վկայներէն մին՝ Քասթեմունիի նախորդ վալի Բեշիտ փաշա կ'ըսէ իր վկայութեան մէջ. — «Հասան Ֆեհմի էֆենտին վնասակար արարած մըն է, իր գրգռութիւնները շարունակած եւ ըսած է, թէ «մեր վալին հայերուն պաշտպանն է» եւ աւելի ճիշդը՝ «կեաւուրներուն վալին է» ըսած է եւ գոռում-գոչումներով մէջտեղը խառնակութիւն ձգած է, կառավարութեան գործերուն միջամտած է ամենավատ կերպով, ու զինքը (վալին) միշտ ձանձրացուցած է. կառավարութեան պաշտօնատունէն վռնտուած է, սակայն, իր յանդգնութիւնները բազմապատկելով, ծածկագիր հեռագիրներ զրկած է ներքին գործոց նախարարութեան եւ դիմումներ կատարած է»:

«Ուրիշ վկայ մը՝ հանգստեան կոչուած հազարապետ Իսմայիլ

Հազար պէյ յայտնած է, որ «Հասան Ֆեհմին (Հայերու) լեհալ գոյքերէն արժէքաւոր առարկաներ իւրացուցած է»:

Ուրիշ վկայ մը եւս, հանգուցեալ մարաջախտ Ասաֆ փաշա Ջատէ ձեմալ պէյը վկայած է, որ «Հասան Ֆեհմին տանը մէջ եւ Քլըպին այրած միջոցին երեւան ելած են (Հայ) վաճառականներու ապրանքները: Չարաշահած ըլլալուն փաստը մէջտեղն է»:

Յիշեալ Հասան Ֆեհմին վալի Աթըֆ պէյին(*) ընկերակիցը եղած էր եւ անոր միացած էր մտայնութեամբ: Վկայ մը, Վահիտ էֆենտի, կ'ըսէ. «Տարագրութեան ընթացքին Ֆեհմին ամենաստորին դերը խաղացած է, իր ազդեցութիւնը գործ դրած է և (Հայերու) լեհալ գոյքերէն մեծապէս օգտուած է»:

Ինններորդ գունդի հրամանատար, հանգստեան կոչուած փոխ գնդապետ Խուրշիտ պէյ, որ այժմ գործօն ծառայութեան մէջ է, իր գրաւոր վկայութեան (լայիէ) յուշագրին մէջ ըսած է. — «Հասան Ֆեհմին էֆենտին, վալի Րեշիտ փաշայի յայտարարութեան համաձայն, կառավարական գործերուն միջամտած է և վալի Աթըֆ պէյին ժամանակ կառավարական գործերը իր ձեռքերուն մէջ կեդրոնացուցած է»:

Նաեւ, նախապէս Քասթեմունի գտնուած եւ ներկայիս Սիլիֆէի մէջ (Ատանայի նահանգ), ժանտարմըրի գունդի հրամանատար (ժամտարմա քապուր գումանտանի) հազարապետ Մուսթաֆա Շըրէֆ պէյ վկայած է որ հայերու բռնագաղթի ժամանակ ժանտարմըրի գնդապետ Իզզէթ պէյ, որ այժմ մեռած է, ըսած է իրեն թէ «այս բռնագաղթին վերջաւորութիւնը շատ վատ պիտի ըլլայ», եւ այդ պատճառով իսկ իր եւ վալի Աթըֆին միջեւ յարաբերութիւնները լարուած էին:

Դարձեալ ուրիշ երկու վկաներ յայտնած են, որ Հասան Ֆեհմի Իզզէթ պէյի համար ըսած է, թէ «հայերու բռնագաղթին արգելք ըլլալուն համար թրքական պատմութիւնը եւ յաջորդ սերունդը անէծք պիտի կարդան Իզզէթ պէյին»: «Հասան Ֆեհմին էֆենտին բռնագաղթը կազմակերպողներուն եւ ղեկավարողներուն մէջ գործօն դեր ունեցած է»:

Ուրիշ երկու վկաներ եւս, ձեւտէք եւ Սալիմ էֆենտիներ եւ ուրիշներ, վկայեցին «Հասան Ֆեհմին էֆենտիին լեհալ գոյքերու յանձնարարութիւն մաս կազմած ըլլալը եւ (հայոց) լեհալ գոյքերով լե-

(*) Աթըֆ պէյ կոչուածը «Թեշիւաքը Մախսուսէի» կեդրոնին մէջ ընկերակիցն էր տա՛ք. Պեհաէտսիմ Շաֆիքի եւ տա՛ք. Նազըմի:

ցուն խանութները մտնելով, իրեն պէտք եղած բոլոր առարկաները պարկերու եւ կողովներու մէջ (ջուփալ վէ թիֆէ) լեցնել տալէ ետք, իր մարդոց միջոցաւ փոխադրել տալը. յետոյ, խանութներուն վեղկերը բանալ տալով, աճուրդի սկսած է: Հասան Ֆեհմին էֆենտին, այդ ատեն, վալիէն աւելի ազդեցիկ էր եւ իր այդ ընթացքը արգիլող մէկը չկար», յայտարարած են վկաները:

ԹՈՒՐԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ ՄԷՋ ԲԱՌ ԱՌ ԲԱՌ.—

«Հասան Ֆեհմին էֆենտինին թեհմինին թերթիպ վէ իտարեսինտէ ամիլը միւլէսսէր օլանյարտան պուլունտրղընը վէ եինէ շահիտլերտէն ձեւտէթ վէ Սալիմ էֆենտիէր իլէ սաիրենին, Հասան Ֆեհմին էֆէնտինին էմվալը մեթրուքէ քոմիսիոնընա տախիլ օլարագ մեզքիւր քոմիսիոն ազասը իլէ — միւլգայետէի ալենիյէտէն մուգատտէմ մեթրուք տիւքեանլարա կիւրուպ, քենտիսինէ լազրմ օլան էշեայը չուվալ վէ թիֆէ իլէ վէ քենտի տտամր վեհիյէսի իլէ, կ'օթիւրտիւքտէն սոնրա, տիւքեանըն քեփենքլէրինի քիւշատ վէ միւլգայէտէ, միւլգաշերէթ էտիլտիյինի, վէ Հասան Ֆեհմին էֆենտի, օ գեման վալիինին Ֆեւզընտա սահիպը նուֆուլ, օլաուլը իշիւն, վէ հարեքեթինէ միւմանաթ էթմէք միւթեսաւէր օլմատրղը, պէյան վէ իսպար էյլէմիշ»:

Քասթեմունիի Էշրաֆներէն (տկանաւորներէն) Թեւֆիզ էֆենտի, Մեհմիտ Իտարէի (Նահանգային Վարչական Խորհուրդ) գլխաւոր քարտուղար Պեսիմ պէյ եւ Մետրեսէի գասատուններէն Խոճա Մեհմէտ էֆենտին եւ փաստարան Իզզէթ էֆենտին երզումով գրաւոր վկայութիւններ զրկած են, նաեւ գայմագամ ձեւալ պէյը իբր վկայ լսուած է եւ ստուգուած ու հաստատուած են Ֆեհմին էֆենտինին կատարած շարիքները եւ յարուցած դժուարութիւնները:

Պուլուի եւ Պրուսայի պատասխանատու քարտուղարը տոքթ. Միտհատ պէյ, հայ հիւանդները տարագրութենէն զերծ չպահելու համար, ժողովուրդին յայտարարած է. «Հայերը չենք ուզեր» և միթիւնկներ կազմակերպած է այդ նպատակով:

Միւթեսարըֆի փոխանորդ Ալի Իւմի պէյ հայոց տարագրութեան դէմ արտայայտուած է եւ ատոր համար զայն պաշտօնանկ ընել տուած է:

Պուլուի միւթեսարըֆուքեան վկայաթուղթով (թեգֆերէ) պաշտօնապէս յիշատակուած է, թէ ան (տոքթ. Միտհատ) «հայերը տարագրելու համար Տիւզճէ գացած է, տարագրութիւն կատարել տը-

ւած է եւ տարազրուութեան ընթացքին ալ ոճիրներու գործադրութիւնը զիրացուցած է»:

Իսկ Պրուսայի մէջ գտնուած միջոցին, քաղաքին ականաւորներուն մէկ մասին սպառնալիքներ ի գործ դրած եւ երեսփոխաններու ընտրութեան վրայ սպառնալիքներ է: Իթթիհատ Թերապոլի ակումբին գնման համար՝ Կեմլէյիկի մէջ բռնի հանդանակութիւններ կատարել տուած է. այդ մասին ալ քաղաքներէն պաշտօնական դիմումներ հասած են, որոնց բովանդակութիւնը յայտնի է:

Իթթիհատ եւ Թերապոլ կուսակցութեան էտիրնէի քննիչ Ապտիւլ Ղանի պէյին հարցաքննութեան թուղթերէն եւ անոնց կցեալ Յուլիս 27 եւ 31, 1917 (1335) թիւ նահանգային վկայաթուղթերէն կը փաստուի, որ ան Քըրք Քիլիսէի եւ Տեմիր Քէօյի մէջ, երեսփոխանական ընտրութեան միջոցին, կառավարութեան վրայ ճնշում բանեցուցած է եւ ազդեցիկ դիրք ունեցած է:

Ապտիւլ Ղանին, քննիչի իր պաշտօնին մէջ ըլլալով հանդերձ, վիլայէթի ընդհանուր կառավարիչին հաւասար ազդեցութիւն բանեցուցած է եւ ազգ. պաշտպանութեան (միւտաֆայը միլլիէ) համար է ըսելով, յօգուտ իր անձին դրամ գանձած է, բռնի հանդանակութեանց ժամանակ ճնշում բանեցուցած է:

Էտիրնէի հարցաքննիչ գատաւորին միջոցով արձանագրուած վկայութիւնները եւ Յովհաննէս Ալթունեանի, Ալիքսան Սարաֆեանի եւ Հայեկ (Հայկ) Քիւրքճեանի եւ Լէոն (Լեոն) Մերազճեանի ? (Մերամբճեան) անձերու եւ ուրիշներու վկայութիւնները ցոյց կու տան, թէ .-

«Ապտիւլ Ղանի պէյ(*) բազմաթիւ հայեր սպաննել եւ բնաջրնջել տուած է. այդ ռմիրներուն գուզընթաց բռնագաղթի վրայ ալ մեծ ազդեցութիւն բանեցուցած է եւ տարագրութեան ընթացքին՝ զինեալ

(*) Վերոյիշեալ Ապտիւլ Ղանի պէյ կոչուած հրէշը որ 1915ի Մարտէն միջին Օգոստոս Սեբաստիոյ մէջ Իթթիհատի պատասխանատու բարտուղարը եղած է, բանի մը անգամ Կ. Պոլիս երթելով եւ «Մերքէզը Ումումի»էն նորանոր հրահանգներ բերելու հայոց բնաջնջումի մտնրամասնութիւններուն մասին, արգելափակուած 5000է աւելի հայերուն սպանող զեկավարող վալի Մուամմէրին գործակցելով՝ հայոց անշարժ կայուածները յափշտակելու համար, Իթթիհատի եւ կառավարութեան անունով:

չեթէներու կողմին (դապա գուշագը մուսալլահ չեթելէր) շրջած է եւ փոխներու կայաններէն եւ պահակաւորներէն (դարագոլխանէ) տարագրուած հայերու դրամները կողոպտելու համար հրաման քրած է. Գազագեան եղբայրներուն 100.000 ոսկի (500.000 տոլար) արժողութեամբ մքերանոցի սպրանգները իր ծառային՝ խայրուլախին 1.000 ոսկիի չնչին գնով փոխանցած է:

Էտիրնէի շրջանին մէջ միւս իր ընկերակիցներուն ալ ամենէն ոչինչ զինեալ լքեալ գոյքեր փոխանցած է:

ԹՈՒՐԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ ՄԷՁ .-

«Ապտիւլ Ղանի պէյին, պիր խայլը էրմենիին, մահվ վէ թեւեֆլերի իլէ, նեթիճեւէնէն թեհճիրտէ ամիլը միւսսիր օլտուղունը վէ թեհճիր էսնասրնտա գապա-գուշագը մուսալլահ չեթելէր իլէ կեզալիինի, վէ էրմենիլերին փոլիս վէ դարագոլխանեհիմտէն սեւզլերի հենրեամընտա, մումիայէյսին էմրի իլէ, փարալարընըն ալընտարըր վէ Գազագեան պերատէրլէրին եիւ պին լիրալըր (100.000) դազմիր վէ մանիֆաթուրա մաղաղասընը քենտի ուշագը Պայրուլլահա պին լիրա մուղապիլինտէ վէ տիկէր մենսուպլարընա փէք տուն Փիլաթ լէ էմվայը մեթրուքէ վերմիշ...»:

Յիշեալ Ապտիւլ Ղանի պէյը, իր հարցաքննութեան ժամանակ, զբաւոր յայտարարութեանը մէջ ըսած էր. «Վալիին դիմած է եւ տարագրութեանէ զերծ պահած է զանոնք (քանի մը հայեր), մասնաւորապէս ծանօթ հայերէն Աւատիսեան (Աւետիսեան) եւ Ալիքսանեան էֆենտիները եւ բնաջնջումէ զերծ պահած է, առեւտուրի ընկերակից ըրած է եւ հարստութիւն դիզած է եւ այդ ըրած է իրր մարդասիրութիւն եւ առաքինութիւն: Այդ կը նշանակէ թէ ինք ազդեցութիւն ունէր: Որպէս թէ ամէն տեղ տարագրեալներուն քիչ-չատ ժամանակ չնորհէր է, եւ սակայն էտիրնէէն բոլոր տարագրեալները խուզարկել տուած, բոլորին դրամները, գոհարեղէնները, արժէքաւոր դոյքերը կողոպտել տուած եւ զանոնք զրկած է ալրուստի դրամէն իսկ եւ առանց ժամանակ տալու տեղահան ընել տուած է եւ այդ տարագրեալներու կարաւաններն ալ էտիրնէէն Թեքֆուր Տաղ (Ռոտոսթո) քրած է: Եւ դատաւարութեան ընթացքին Ապտիւլ Ղանի պէյը մատնանշած է թէ էտիրնէի նուաճումի ժամանակ վրէժխնդրութեամբ չարժած է ին»:

Յիշեալ Ապտիւլ Ղանի պէյը, ինչպէս արձանագրուած է, քեւ ըսած է քէ էտիրնէի բռնագաղթին մէկ զիշերուան ընթացքին միայն

մէկ կարաւան քշել տուած է, բայց էտիրնէի նահանգին մասին եղած հարցումներուն պատասխանելով ըսած է, որ հայերու 3 կարաւաններ տարագրած է: Եւ անոնց մէկ մասը քշուած է մինչեւ Տէր Զօր: Այդ յայտարարութեամբ իր նախկին ըսածը հերքած է:

ԹՈՒՐԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ ՄԷՁ. —

«Մուսիսյէն Ապտիւլ Ղանի պէյին պիր վեհճի մուհարրէր էտիրնէտէն իճրա զըլընան թեհճիւրին պիր կիճէ զարֆընտա եալընըզ պիր զաֆիլէնին նազընտան իպարէթ օլտուղընը պէյան էյլետիէի հալտէ, էտիրնէ վիլայէթիւնին էյլարը ճեւապիսինտէ իւչ (3) զաֆիլէլէրէ թեհճիւր էտիրնէլերտէ պիր զըսմընը Տէր Զորա զատար սեւզ օլտուղընը պէյան օլունմասը սուրէթի իլէ, պու պապտէքի ի-Փատէսի տախի թեքղիպ օլունմուչ»:

Իթթիհատի աղումբին ալ կահարասիներու յարգարումը, եւ իթթիհատ թերագգըի քըլըպներու շէնքեր կառուցանելու համար, իբր թէ որբանոցի շէնքի նման հանրային օլտին համար է ըսելով աժան գներով տուներ զրուած է (իսքիմլաֆ) եւ ատոնց զրամն ալ քըլպի սնտուկէն վճարել տուած է. Մախթում Սանըմին պատկանող տունը ձեռքէն առած է եւ ցած գինն ալ ինք որոշած է եւ այդ գինէն գոհ շմնացող Նուրի պէյին փեսան՝ Ահմէտ էֆենտին դիմած է ներքին գործոց նախարարութեան: Այդ դիմումին վրայ Ապտիւլ Ղանի պէյ ըսած է եւ ինք ալ խոստովանած է, որ «էտիրնէի մէջ միմիայն մէկ Ղանի կայ, ուրիշ Ղանի չկայ, սրուն դուք կրնաք դիմել: Ես տանը գինը 300 ոսկի նշանակեցի և մէկ ոսկի իսկ աւելի չեմ տար», ըսած է:

Զօրաշարժի ենթակայ եղած բանակէն, ամենակարեւոր բո-պէին՝ ինշաաքի (չինութեանց) զործաւոր-գինուորները առած եւ իթթիհատի քըլպի կառուցման մէջ աշխատացուցած է, մինչդեռ այդ տեսակ պարագայ մը ոչ անհրաժեշտ եղած է, ոչ ալ պատերազմա-կան նախարարութեան հրաման մը եկած էր:

Պատերազմական նախարարութեան եկած պատասխանէ մը յայտնի կ'ըլլայ, որ յիշեալ Ապտիւլ Ղանի պէյը կառավարութեան փերարերեալ գործերուն, գործառնութիւններուն և գործադրութիւն-ներուն վրայ օրէնքէն ալ վեր ուժ եւ կարողութիւն ցուցադրած է: Եղած վկայութիւնները, փաստերն ու բազմաթիւ ապացոյցները կը հաստատեն այդ պարագան:

Վերջապէս, ամբաստանեալ Հասան Ֆեհմին, տոքթ. Միտհատը, Ապտիւլ Ղանին, Աւնին, տոքթ. Պեսիմը, Զէօտին, Հասան Սա-

լահետտինը, ձեմալը(*), Միւնիրը, ձեւտէթը, Ապտիւլ Ղատիր է-Փենտիները եւ պէյերը ամբաստանութեանց կէտերուն մէջ, կառա-վարութեան ձեւը ալափոխելու ոճիրը գործած, ներքին ապահովու-թիւնը խանգարած եւ նման արարքներ կատարելու համարձակութիւ-նը ունեցած են:

Հասան Ֆեհմի, Միտհատ, Ապտիւլ Ղանի եւ ձեւտէթ պէյե-րէն բացի, միւսներուն՝ ջարդերու եւ ինչքերու կողոպուտի մեղա-կից ըլլալու փաստերը անբաւական ըլլալով, անոնց ազատ արձակու-մը պահանջուած է: Իսկ Հասան Ֆեհմին, տոքթ. Միտհատը եւ Ապ-տիւլ Ղանին, ինչպէս վերեւ բացատրուեցաւ, Ընդհանուր կեդրոնի հակօրինական գործերուն մասնակից եւ գաղափարակից եղած են, եւ տարագրութեան պատրուակով, ջարդ, ինչքերու կողոպուտ եւ այլ ոճիրներ գործած են: Նախ՝ այդ ոճիրներուն օգնած եւ դիրա-ցուցած են, յետոյ գիտակցութեամբ, զանոնք լրութեան հասցուցած եւ օժանդակելով գլխաւոր ոճրագործին (Ֆերէն զի մետիւէլ) մեղ-սակից եղած են. ուստի վնասուած է անոնց յանցապարտութիւնը:

Ատկէ զատ իբր կեղծ հիւանդ կիւմիւշ Սուլիի հիւանդանոցին մէջ պահուողութեամբ է:

ԹՈՒՐԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ ՄԷՁ. —

«Մուսիսյէնիմտէն Հասան Ֆեհմի էֆենտի վէ տոքթ. Միտ-հատ, վէ Ապտիւլ Ղանի պէյլերին պալատա թաֆտիլ օլունտըղը իւ-գերէ, Մերքէզը Ումումինին, մուխալիֆը զանուն հարեքեաթընա ամիլ վէ միւրեւեհ վէ թեհճիւր տոլայլաի իլէ էյղայ վէ իրթիքեապ օլունան թազթիլ վէ նեհպը էմվալ ճերայիմինտէ, իպթիտայէն էյ-տատ թէ թեհճիլ վէ ինթիհայէն, էքմալա սեպէպ օլան էֆֆալտէ Փալիլը ասիլիլերէ, պիլերէք մուաւենեթտէ պուլունմազ սուրէթի իլէ. Ֆերէն զի մետիւէլ օլմազ իւղերէ, միւճրիմիլիթիլերինէ...»:

Աւնի պէյն ալ, ներքին փոխառութեան գործերուն մէջ, կոմի-սարի ներկայութեան բերել տուած է Հաճի Հասան, Իսմայիլ եւ Սա-րուխան գիւղացի Մեհմէտը եւ ծեծած է, օրէնքին հակառակ բան-տարկել տուած է զանոնք և անոնց կարողութեան վեր գումարներով ներքին փոխառութեան բաժիններ գնելու բռնադատած է:

(*) Պատասխանատու քարտուղար ձեմալ պէյը Ատանայի, Հայեպի եւ Տէր Զօրի ամենամեծ ոճրագործներէն միւն է, իսկ այս Պատերազմական Ատեմը լուս մնացած է:

Այդ առթիւ, տեղւոյն վրայ վկայութիւններ լսուած են. եր-
դումի տակ լսուած են նաեւ վնաս կրողներուն յայտարարութիւննե-
րը, եւ իրենք ալ խոստովանած են յիշեալ Յանձնախումբի անդամ
ըլլալին. այդ ապօրինութիւնները կատարուած են կառավարական
պաշտօնեաներու աչքին առջեւ. այդ կը նշանակէ, թէ որքա՛ն մեծ
ազդեցութեան տէր էին այդ ամբաստանեալները, ու կը գործադրէին
ծեծ, անարգանք, օրէնքի հակառակ բանտարկութիւն: Մեծամաս-
նութեան ձայնով վճռուած է անոնց յանցաւորութիւնը:

Իսկ Պեսիմ Զէօճտի պէյին՝ Բաֆայէլ Շիրինեան էֆենտին
գորգերը իւրացնելու պարագան իր խոստովանութեամբ իսկ փաս-
տուած է, բայց այդ յափշտակումի գործը աւելի առետրական բը-
նոյթ ունի եւ տիրոջը փերագարձնելու մասին յիշուած է հարցաքն-
նութեան: Թուղթերուն մէջ, էջ՝ 134 եւ 126, նոյեմբեր 9, 1919 թուա-
կիր խնդրագրով:

Այս խնդիրը ուսումնասիրուելէ ետք, դատավարութեան վեր-
ջաւորութեան նկատի ունենալու պայմանով՝ ընդհանուր դատախազի
տեսակէտը ընդունուած է:

Այդ դատին պաշտպան կողմին վկաները լսուած են: Տարա-
գրութենէ առաջ առետրական գործի բնոյթ կրող դատը պատկան
դատարանէն պէտք է վճռուի:

Մեծամասնութեան ձայնով վճռուած է, որ Պեսիմ Զէօճտի,
Ճեմալ-Միւնիր եւ Ապտիւլ Ղատիր էֆենտիները եւ պէյերը, եթէ ու-
րիշ պատճառով մը բանտարկուած չեն, ազատ պիտի արձակուին:

Ճեւտէթ պէյը Պէօյիւք Տիրէի տարագրութեան պատճառով
ամբաստանուած է եւ հարցաքննութիւն կատարուած է իր մասին.
ատկէ զատ, բանտարկութեան համար անհրաժեշտութիւն մը չըլլա-
լով, անոր մասին ալ քննութիւն մը կատարել (որոշուած է), եւ եթէ
ձեռքազրկուած չէ, (հարկ է) ազատ արձակել զինքը
(տող մը պակաս է):

Իսմայիլ Հազզը պէյ, նախագահը գինուորական պարենաւոր-
ման ճիւղին, իր տնօրէնութեան շրջանին, եւ Ընդհ. կեդրոնի անդամ
(Մերքէզ Ումումի) պարէնի նախկին նախարար Քեմալ պէյ զեղ-
ծումներու մասնակցած են եւ կարգ մը աղէտներու պատճառ եղած
են, ինչ որ յիշուած է ընդհանուր դատախազին կողմէ: Այդ մասին
որեւէ դատավարութիւն տեղի ունեցած չէ: Քննութիւն կատարուելու
համար, ընդհանուր դատախազը կրնայ հրամանագիր մը հանել տալ,
ստակայն այդ չի նշանակել զանոնք բանտարկել, ուստի անոնց ալ ա-
զատ արձակումը միաձայնութեամբ վճռուեցաւ:

Գալով Սայրեստին եւ Ակեահ պէյերուն, արձանագրութեանց
համաձայն, անոնց կողմէ կատարուած վաճառումներու արձանա-
գրութիւնը, տամարներուն խարդախուած ըլլալը, հաշիւներուն խառ-
նակ ըլլալը ի՞նչ բաներու շուրջ կը դառնան, այս դատարանը չի կըր-
նար ճշդել: Արդէն ելեւմտից նախարարութեան իրաւագէտ-խորհրդ-
ականին կարծիքով, այդ կէտին, իբր զեղծարար պաշտօնեայ, պաշ-
տօնեաներու դատավարութեան մասնաւոր օրէնքին համաձայն լու-
ծում մը անհրաժեշտ է: Այդ պահանջուած էր Օդոստոս 30, 1919 թիւ
հրամանագրով: Իսկ Վերժինիկի վկայութեան համաձայն, Ակեահ եւ
Սայրեստին պէյերուն միասնաբար զեղծում կատարած ըլլալը հաս-
կըցուած է: Ասոնց ազատ արձակման խնդրանքը կը մերժուի:

Սայրեստին եւ Քոսթի էֆենտիներու, միասնաբար, — ելեւ-
մտական նախարարութեանէն եղած պահանջին համաձայն, օրինական
գործողութիւն կատարուելու պայմանով, — դատական թուղթերը
զատել այս դատէն եւ յանձնել Ընդհանուր Դատախազութեան: Այս
կէտն ալ մեծամասնութեամբ վճռուած է:

Որոշումները կայացնելէ յետոյ, պատժական բաժնին շուրջ եւս
խորհրդակցութիւն կատարուելով, յանցաւորներէն Հասան Ֆեհմին
եւ Միտհատ պէյը պատժական օրէնքի 170րդ յօդուածի տրամադրու-
թեան համաձայն եւ 15րդ յօդուածի 2րդ պարբերութեան համաձայն
իրենց ձեռքազրկման առաջին օրէն հաշուելով 10ական տարի ժամա-
նակով տաժանակիր աշխատութեան դատապարտուած են: Իսկ Ղա-
նի(*) պէյի մասին խնդիրները (երկու տող պակաս):
. . . չտիրնէի տարագրութեան վերջաւորութեան յետաձգել. Աւնի

(*) Ո՞վ էր Ղանի պէյը — Իքթիհատի լիազօր պատուիրակը էտիրնէի եւ Սե-
բաստիոյ մահանգներուն մէջ, 1915ին: Ըստ դատական արձանագրութեանց, Ղանի
պէյ, դատավարութեան Յունիս 21, 1919ի միտիմ մէջ, պատասխանելով դատաւորի
հարցումներուն յայտարարած է հետեւեալը.—

«Իր անունն է Ապտիւլ Ղանի, հօր անունը՝ Համի Հասան, տարիքը 40, ծննդ-
կավայր Երզնկա, բնակավայր Գատը Գիւղ՝ ձեւիլիք քաղը (Կ. Պոլիս), բարձր ու-
սում ստացած է: Նախապէս դատապարտուած չէ: Ներկայիս պաշտօն չունի, եղած
էր նախապէս էտիրնէի Իքթիհատ եւ Թերագրի մերկայացուցիչը: Եղած էր զիմ-
ուորակում՝ առաջին տեղակալ (միլիտար Է. Է. Է.) եւ համագտնան կոչուած էր:

ԻՄԱՆՕԹ.— Ապտիւլ Ղանի յուս անցած է իր գործունէութեան մասին, Սե-
բաստիոյ մէջ Մարտ 15էն Օդոստոս 1915, ուր եղած էր պատասխանատու քարտու-
ղար Իքթիհատի եւ բանտարկեալներու սպանկիմ. հայերու տարագրութեան հսկիչն
էր եւ ազդեցիկ խորհրդակիցը՝ ռիբագործ վալի (նահանգապետ) Մուամմեթիմ:

պէջին հանդէպ ալ կայսերական պատժական օրէնքի 203րդ յօդուածը գործադրել իր բանտարկութեան առաջին օրէն, Փետրուար 17, 1919էն (1335) սկսեալ 9 ամսուան բանտարկութեան դատապարտել. հաշուելով իր բանտարկութեան օրերը, ժամանակը արդէն լրացած ըլլալով՝ անոր ալ ազատ արձակումը վճռուեցաւ մեծամասնութեամբ, Ակեհճ պէյի բացակայութեան եւ միւսներու ներկայութեան: Յունուար 8, 1920, 8 Քեանուներ Սանի 1336, 16 Բէպ իւլ Ալտէր 1338

**Ստորագրութիւններ՝
Սպայակոյտի զօրավար միրլիւս
ՄՈՒՍԹԱՏԱ ՔԵՐԻՄԻ**

Պատճառները արձանագրութեան մէջ դրուելու պայմանով հակառակ ենք միայն Ձէօճտի պէյի մասին տրուած վճռագրին: (Ստորագրութիւն) նախագահ՝ զօր. Սպայակոյտի միրլիւս էՍԱՏ, անդամ սպայակոյտի միրլիւս զօրավար ԻՍՄԱԹԻԼ ԶԱԳԳԼ

Տրուած այս վճռագրին նախ՝ դատավարութեան ձեւի եւ գործադրութեան տեսակէտէն եւ շրջ՝ յանցաւորութեան տեսակի եւ էութեան մասին սահմանաւորումի եւ բացատրութեան մասին, Յրդ՝ ամբաստանեալներէն Հասան Ֆեհմի Միտհատի, Ղանի պէյի եւ Աւնի պէյի անձներուն վերաբերեալ ոճիրներուն հակառակ ենք: Մեր հակառակութեան պատճառները բացատրութեան արձանագրութեանց մէջ պիտի դրուին:

**Անդամներ՝
Սպայակոյտի զօրավար՝ ԻՅՍԱՆ
Հեծելագորաց ղնդապետ՝ ՇԱՔԻՐ(*)**

Դատական արձանագրութեան մէջ գրուած է նաեւ, որ «Ապտիւլ Ղանի պէյը Սահմանադրութենէն առաջ Իթթիհատի անդամ էր, էտիրնէի քննիչն էր (միւֆթիթի) եւ շարունակած էր այդ գործը մինչեւ Իթթիհատի լուծուիլը: Սահմանադրութենէն անմիջապէս ետք ձեռք առած էր կուսակցութեան մէջ միապետական եւ բռնապետական

(*) Թուրք զինուորական դատաւորներէն, ցեղասպանութեան մասին, թուրքեր պատժելու շուրջ ունեցած ըմբռումէն ատկէ աւելին սպասել եւ արդարութեան գործադրութեան մասին մտածել՝ քրքակամ դատարանի համար անկարելիութիւն մըն է:

ձեւ մը, որ քաղաքական կուսակցութեան մը ընթացքը չէր կրնար ըլլալ: Միշտ միջամտած էր պետութեան ընդհանուր գործերուն եւ իր ազդեցութիւնը բանեցուցած էր պետութեան վերաբերեալ կարեւոր խնդիրները լուծելու Մերֆէղը Ումուլին (կուսակցութեան Ընդհանուր կեդրոն) մէջ, եւ անոր տուած որոշումներուն համաձայն, մասնաւոր օրէնքով մը, տարբեր վայրեր տարագրուելիք (հայոց) կարաւանները բնաջնջած, անոնց զոյքերը եւ սեփականութիւնները կողոպտած եւ աւարի տուած է: Թուրքերէն բնագրին մէջ կ'ըսէ բառ առ բառ. — «Մահալլը արտերէն ցաղ էտիլէն քաֆիլիքիլին իմիս, վէ էշեա վէ էմվալարընըն ցեհպ ուղարէք»: Այդ նպատակով չեթէներ կազմակերպած (կիւրուիք պագիլէ թերթիպ վէ թեֆիլ) եւ ոճիրներուն մասնակից եղած է, պատերազմի վիճակը պատրուակելով ընչաքաղցութեամբ չարաչահութիւն ըրած է, հարստութիւն դիզելու նպատակով, գործողութիւնները պաշտօնականի վերածած, կամայական գործերու համար պաշտօնէութիւնը գործիք ու միջոց ըրած եւ օսմանեան պետութեան ու սահմանադրութեան օրէնքով որոշուած եւ հաստատուած կառավարական ձեւը չարափոխելով, մէջտեղ բերուած է զազանի ուժ մը Իթթիհատ եւ Թերագըր կուսակցութեան կողմէ, օսմանեան նահանգներուն մէջ, որ հնարած է նոր միջոցներ իր գործունէութեանց համար, և ներկայացուցիչներու և պատասխանատու քարտուղարներու խողովակով իր նպատակները գործադրած է: Այդ գործերը կազմակերպողները գլխաւոր յանցաւորներն են (Փայիլ աւր)»:

**

Փոն Թիցքա, գերման դիւանագիտական թղթակիցը, Սեպտեմբեր 17/30, 1915 թիւով արձանագրած էր որ «այցելած էր ներքին գործոց նախարարութիւն և Թալէաթի բացակայութեան տեսակցած էր ներքին գործերու տնօրէններէն Հասան Ֆեհմիին հետ», տեսակցութեան պատրուակ ունենալով Յակոբ էֆենտի Համամճեանի՝ 25 տարիէ ի վեր հաւատարիմ ծառայ եղող պաշտօնեային յանկարծական պաշտօնանկութիւնը: Ֆեհմի պատասխանած է, որ «հայերը չենք ուզեր պաշտօնատուներու մէջ և միւս պաշտօնատուներն ալ նոյնը պիտի ընեն»: Թալէաթ ըսած է եղեր Ֆեհմիին որ «հայերը վրիժառու ազդ մըն են, չթողունք մէկ հատ իսկ որ վրէժ առնէ» (մեզմէ):

Փոն Թիցքա կ'ըսէ, թէ «Թուրք զօրավարները հրամայել չեն գիտեր: Գերմաններն են որ կարգապահութիւն փորձեցին բերել թըր-

քական բանակին: Անգլիացիները ամիսներով կը պատրաստուէին Պատրան զրուելու, թուրքերը լուր իսկ չունէին: Սուէզի վրայ յարձակումը ձախողեցաւ, Կովկասի ճակատին վրայ էնփեր պարտուեցաւ: Եթէ գերմանացիները չղեկավարէին Տարտանիի պատերազմը, հոն եւս թուրքը պարտուած պիտի ըլլար: Թուրքը միայն անպաշտպան ժողովուրդը կը կողոպտէ եւ կը սպաննէ: Էտիրնէի, Պրուսայի, Անգարայի, Եալովայի, Քասթեմունիի շրջաններուն մէջ, առանց ոչ մէկ արդարացումի, տարադրութեան ենթարկեց եւ բնաջնջեց 250·000 տնամեղներ, որոնք պատերազմի ճակատներուն հետ ոչ մէկ կապ ունէին»:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ Վ ԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ, ՎԱԽԵՐԱԳՐԵՐ, Վ Ճ Ռ Ա Գ Ր Ե Ր

Ապրիլ 27, 1919ի դատաւարութեան, Կ. Պոլսոյ թրքական պատերազմական ատեանի առջեւ պէտք էր ներկայ ըլլային 19 ամբաստանեալներ, որոնցմէ 7ը փախստական էին, իսկ 12ը ներկայ.—

Ներկաներու անունները.— Սայիտ Հալիմ փաշա, Սալիլ, Ահմէտ Նեսիմի, Իբրահիմ, Կիւշիւք Թալէաթ, Րիզա, Միտհատ Շիւքրի, Զիա Կէօք Ալի, Գարա Քեմալ, Շիւքրի, Ճեւատ, Աթըֆ:

Փախստականներուն անունները.— Թալէաթ փաշա, էնփեր, Ճեմալ, Տոքթ. Նազրմ, Տոքթ. Պեհաէտտին եւ Ազիզ:

Ամբաստանեալ 12 ներկաներուն սրաշտպան 16 փաստաբաններ կային.— Ճելալէտտին Արիֆ, Սալիլ Էսատ, Քեհազիմ Թահսին, Մուխլիս, Սասաէտտին Ֆերիտ, Մահիր, Եուսուֆ Քեմալ, Գատրի, Սաստիտտին, Էմին Ատիլ, Հասան Սայրի, Հայտար Րիֆաաթ եւ Իսմայիլ Թեւֆիզ:

Յունիս 3, 1919ի դատաւարութեան միջոցին, ամբաստանեալ անձերէն 9 հոգի բանտէն հանուելով Մալթա տարուեցան: Այդ 9 անձերուն անուններն են.— Սայիտ Հալիմ փաշա, Սայրի, Սալիլ, Ահմէտ Նեսիմի, Ապպաս Հալիմ, Ալի Միւնիֆ, Շիւքրի եւ Գարա Քեմալ: Այդ 9 անձերուն դատական թուղթերն ալ մեկուսացուեցան:

Պատերազմական Ատեանի առջեւ մնացին 5 անձեր:

Յուլիս 5, 1919ի դատաւարութեան մահաւճիտի օրը փախըս-

տականներէն եւ այլուր փոխադրուածներէն դատական արձանագրութեանց մէջ յիշուած են միայն 4 անուն(*) :

Ապրիլ 27, 1919ի դատավարութեան օրը, ամբաստանեալ ոճրագործները, Պատերազմական Ատենի նախագահին հարցումներուն պատասխանելով, հետեւեալ պատասխանները տուին իրենց կենսագրականի մասին :

Կը համառօտենք, քաղելով «Թագվիմը Վեքայի»ի 3374 թիւին մէջ հրատարակուած դատական արձանագրութիւններէն :

ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄ ՓԱՇԱ.— Հօր անուն՝ Սայիտ Հալիմ, տարիք՝ 56, ծննդավայր՝ Գահիբէ, բնակավայր՝ Ենի Քէօյ, ուսում՝ բարձրագոյն, ամուսնացած, նախապէս դատապարտուած չէ :

ԽԱԼԻԼ ՊԷՅ.— Հօր անուն՝ Սալիհ, տարիք՝ 44, ծննդավայր՝ Միլաս Գասապա, բնակավայր՝ Նշան Թաշ, ուսում՝ բարձրագոյն, պաշտօն՝ Երեսփոխանական ժողովի նախագահ, ամուսնացած է :

ԱՀՄԷՏ ՆԵՍԻՄԻ.— Հօր անուն՝ Իբրահիմ, տարիք՝ 43, բնակավայր՝ Ճըղալ Օղլու Մահմուտիէ Ճատտէսի, ծննդավայր՝ Հանեա (Կրեւէ), ուսում՝ բարձրագոյն, պաշտօն՝ արտաքին գործոց նախարար. նախապէս դատապարտուած չէ :

ԱԹԸՅ.— Հօր անուն ... , տարիք՝ 37, ծննդավայր՝ Չանազ Գալէ, բնակավայր՝ Գատի Քէօյ, ուսում՝ բարձրագոյն, պաշտօն՝ Երեսփոխան Անգարայի, նախապէս դատապարտուած չէ :

(*) 1918 Նոյեմբեր 20—Դեկտեմբեր 3ին, Կ. Պոլսոյ մէջ կազմուած էր թըրքական կուսակցութիւն մը «Օսմանլը Սուլէ վէ Սելամէթ» (Խաղաղութիւն եւ Ապահովութիւն) անուամբ, մախաբանութեամբ թնդանօթածիգ-գորավար Ֆերիտ փաշայի, որուն ծրագիր-կանոնագրին 2րդ յօդուածին մէջ ըսուած էր «չարդեբու, տարագրութեանց, կախազաններու եւ այլ չարագործութեանց ռեպրոնցիաները պատժել տալ» : Նպատակը՝ Թուրքիոյ սեւ երեսը մասամբ ճերմկեցնել էր : Եւ 69 գլխաւոր ռեպրոնցիաներ, պատերազմական մախաբանութեան շէնքի ետեւի «Պեֆիր Ազա Պէօլիկի» կոչուած երկյարկանի զինուորական բանտը կոխուած էին : Բայց զանազան մեղքով այլուր փոխադրուած կամ փախուստ տուած էին, ատոնց թիւը պակեցու եւ Պատերազմական Ատենի առջեւ դատուելու համար քանի մը հոգի միայն մնացին :

ԻԲՐԱՀԻՄ.— Հօր անուն՝ Մեհմէտ Սայիպ, տարիք՝ 58, ծննդավայր՝ Իսթանպուլ, բնակավայր՝ Փաշա Պաղչէ Ինճիր Քէօյ, ուսում՝ բարձրագոյն, պաշտօն՝ ծերակուտական եւ նախագահ եղած Պետական Խորհուրդի(*) :

ԿԻԻՉԻԻԲ ԹԱԼԷԱԹ.— Հօր անուն՝ Դահիբ, տարիք՝ 38, բնակավայր՝ Պելիկթաշ, ուսում՝ բարձրագոյն, պաշտօն՝ Իթթիհատի Կեդրոնի անդամ (Մերքեղը Ումումի) : Նախապէս չէ դատապարտուած :

ՐԻՉԱ.— Չէ պատասխանած, ըսելով որ Տրապիզոնի տարագրութեան դատի արձանագրութեանց մէջ կայ իր կենսագրականը :

ՄԻՏՀԱՏ ՇԻԻԲՐԻ.— Հօր անուն՝ Մեհմէտ Շիւքրի, տարիք՝ 45, ծննդավայր՝ Սելանիկ, բնակավայր՝ Նուրը Օսմանիէ, պաշտօն՝ Պուրտուրի Երեսփոխան. նախապէս չէ դատապարտուած(**) :

ՃԵԻԱՏ ՊԷՅ.— Հօր անուն՝ Մուսթաֆա, տարիք՝ 47, ծննդավայր՝ Գազանլըզ (Պուլկարիա), բնակավայր՝ Պայազիտի շրջան, շրջանաւարտ Թնդանօթածիգութեան դպրոցէն, պաշտօն՝ զինուորական ոստիկանութեան հրամանատար. նախապէս չէ դատապարտուած :

ՉԻԱ ԿԷՕԲ ԱԼՓ.— Հօր անուն՝ Թեւֆիզ, տարիք՝ 43, ծննդավայր՝ Տիարպեքիր, բնակավայր՝ Ճըղալ Օղլու, ուսումը՝ մասնաւոր վարժարան, պաշտօն՝ համալսարանի ուսուցիչ, նախապէս քաղաքական գործով դատապարտուած Թաշ Գըլլայի մէջ :

ՔԵՄԱԼ (Գարա).— Հօր անուն՝ Արիֆ, ծննդավայր՝ Իսթանպուլ, բնակավայր՝ Նուրը Օսմանիէ, ուսում՝ մասնաւոր, նախապէս չէ դատապարտուած, պաշտօն՝ պարենաւորման նախարար :

ԱՀՄԷՏ ՇԻԻԲՐԻ.— Հօր անուն՝ Հիւսէյին, ծննդավայր՝ Քասթեմունի, տարիք՝ 43, բնակավայր՝ Շիշլի, պաշտօն՝ կրթական նախարար, նախապէս չէ դատապարտուած :

(*) Թալէսի դահլիճին մէջ արդարութեամբ մախաբան էր :

(**) Միտհատ Շիւքրի 10 տարի ընդհանուր փարտուղար եղած է Իթթիհատի եւ ընտրուած է Իթթիհատի 7 ֆոնկրէներու կազմէ :

Ինչպէս ամբաստանեալ ցեղասպանները յայտարարած են, մեծամասնութիւնը «բարձրագոյն կրթութիւն ստացած» է եւ սակայն աւելի վայրագ հայակեր զագաններ զուրա եկած են:

Հայերու դէմ գործուած ցեղասպանական ոճիրներուն դահլիճին եւ գաւառական վարչական պաշտօնեաներուն գործակից եւ անոնց վրայ հսկող պատասխանատու-քարտուղարներու (քեաթիպը մեսուլ) կամ մուրախիասը-մեսուլներու (մասնաւոր ներկայացուցիչ) դատաւարութիւնը(*):

Առ այժմ դանց ընելով ասոնց կենսադրականները՝ դատաւարութեանց ընթացքին, կու տանք բնագիրը ամբաստանագրին:

ԹՐԲԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ՊԱՇՏՕՆԻ ԿՈՉՈՒԱԾ ԻՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ ՄԱՐՏ 7, 1919/1335 թուակիր:

Դատական արձանագրութիւն (Տիւանը հարպը Էօրփի մուհաֆեմաթ քերիսէսի), «Թագվիմը Վեքայի» (Պետական պաշտօնաթերթ), թիւ 3586, Յունիս 21, 1919 (1335):

Դատարանի նախագահ զօրավար (Ֆերիզ) Մուսթաֆա Նազըմ փաշա: Անդամներ՝ զօրավար (միրլիւա) Զէքի փաշա, զօրավար (միրլիւա) Մուսթաֆա փաշա, զօրավար (միրլիւա) Ալի Նազըմ փաշա, զնդապետ (միր ալայ) Րեճէպ Ֆերիտ պէյ: Ընդհանուր դատախազի օգնականներէն Ֆերիտոն պէյ:

Ա. Դատաւարութիւն.- Շարաթ, Յունիս 21, 1919 (1335):

Ամբաստանեալներու ինքնութեանց մասին եղած հարցաքննութիւններէն ետք, նախագահը կը հրամայէ դատարանի քարտուղարին կարգալ որոշմնագիրը (գարարնամէն).-

Թուրքերէն բնագրին տառացի թարգմանութիւնը.

«Ներկրին ապահովութիւնը խանգարելու պատճառով ամբաստանուածներ, որոնք զանազան ժամանակներու մէջ ձերբակալուած են եւ որոնք են.-

(*) Այս պատասխանատու քարտուղար կամ ներկայացուցիչի պաշտօնը մասամբ կը համապատասխանէ մացիներու կառու կայթրներուն, որոնք իրենց շրջանի ոճիրներու հսկիչներն են, մասնակից են ոճիրներու գործադրութեանց, տեղեկագիրներ եւ նկարներ կը զրկեն իրենց կեդրոնին:

▲ Մանիսայի Իթթիհատ եւ Թերազըր կուսակցութեան պատասխանատու քարտուղարը՝ ԱԻՆԻ ՊէՅ,

▲ «Թեճետտիւտ»(*) կուսակցութեան Պէյլոլուի (Կ. Պոլիս, Բերա) քարտուղար ՀԱՍԱՆ ՍԱԼԱՀԵՏՏԻՆ ՊէՅ,

▲ Անգարայի նախկին Երեսփոխան՝ ՀԻՄԻ ՊէՅ,

▲ Պոլսի պատասխանատու-քարտուղար՝ ՄԻՏՀԱՏ ՊէՅ,

▲ Էսքի Շէհիբի պատասխանատու-քարտուղար՝ ՊԵՍԻՄ ԶէՕՀՏԻ ՊէՅ,

▲ Հայեպի Իթթիհատ եւ Թերազըրի պատասխանատու-քարտուղար՝ ձԵՄԱԼ ՊէՅ,**)

▲ Գարահիսարի նախկին Երեսփոխան՝ ԱՂԱ ՕՂԱՌԻ ԱՀՄԷՏ,

▲ Պրուսայի պատասխանատու-քարտուղար կեսարացի՝ ՄԻՏՀԱՏ ՊէՅ,

▲ Հեճեթպօրքի փոխ-գնդապետ, հանգստեան կոչուած՝ ՄԻՒՄ-ԹԱԶ ՊէՅ,***)

▲ Սինոպի նախկին Երեսփոխան՝ ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ ՊէՅ,

▲ Սարոխանի նախկին Երեսփոխան եւ «Թեճետտիւտ»ի անդամ ՍԱՊՐԻ ՊէՅ,

▲ Մերկին (Էմիրկեան) ազգային պաշտպանութեան (միւտաֆայի միլիիյէ մեմիյէրի) նախագահ եւ Իթթիհատ մէջ Թերազըրի պատասխանատու քարտուղարի փոխանորդ (վեքիլ) ձԵՒՏԷԹ ՊէՅ,

▲ Կ. Պոլսոյ նախկին Երեսփոխան՝ ՍԵԼԱՀԵՏՏԻՆ ձԻՄՆՈԶ ՊէՅ,

▲ Էրզրումի նախկին Երեսփոխան եւ «Միլլի աժանս»ի տնօրէն ՀԻՒՍԷՅԻՆ ԹՈՍՈՒՆ ՊէՅ,

▲ ՓԼոիէ դրամատան Կ. Պոլսոյ ներկայացուցիչ (վեքիլ) եւ նախապէս Սեյանիկի մէջ Իթթիհատ եւ Թերազըրի պատասխանատու քարտուղար ԻՀԱՆ ՆԱՄԸԳ ՊէՅ,

▲ Պրուսայի պատասխանատու-քարտուղար՝ ԱԼԻ ՐԻԶԱ ՊէՅ,

▲ Գոնիայի Իթթիհատ մէջ Թերազըրի պատասխանատու-քարտուղարի փոխանորդ ԱՊՏԻԻԼ ԳԱՏԻՐ ՊէՅ,

▲ Գոնիայի նախկին վալի ՍԱՄԻՀ ՐԻՖԱԹ,

(*) «Թեճետտիւտ»ը. մեր շապիկով մը ծպտուած. մոյն Իթթիհատ կուսակցութիւնն է:

(**) Տէր Զօրի քարոզերու կազմակերպիչ հրէշներէն մինն է:

(***) Զեքէներու ղեկավար եղած է եւ 1919 Մայիսին ալ Մուսթաֆա Քեմալի թիկնապահը եղած է:

▲ Գոնհայի ոստիկանութեան նախկին տնօրէն՝ ՍԱՍՏԷՏՏԻՆ ՊԷՅ,

▲ Գոնհայի ԻԹԹԻՀատ եւ Թերագզրի նախկին ներկայացուցիչ համալլար Բեհեար՝ ՖԷՐԻՏ ՊԷՅ,

▲ Ազգեհերի ձիւն Պէյլի նախկին միւտիւր՝ ՖԵՀՄԻ ՊԷՅ,

▲ Ազգեհերի պելետիլէ բէյիսի (քաղաքապետ) ՄԻԻՖԹԻ ՉԱՏԷ ՔԵԱՄԻԼ ՊԷՅ,

▲ Ազգեհերի դոմիտէր մուաւիսի (նախկին օգնական ոստիկանապետ) որ բանտարկուած կը մնայ Սպարթայի բանտին մէջ, ՀԱՍԱՆ ՊԱՍՐԻ ՊԷՅ,

▲ Ատափազարի ԻԹԹԻՀատ վէ Թերագզրի մուրախիսա (ներկայացուցիչ) ՀԱՄԻՏ ՊԷՅ,

▲ Հալեպի շրջաններուն մէջ աւագակապետ (չեքէ բէիսի) եւ գրատան գործով զբաղող (գրաաթխանէնի) ՀԻՍԷՅԻՆ ՆԵՃԱԹԻ ՊԷՅ,

▲ Սիւասի ԻԹԹԻՀատ վէ Թերագզրի մուրախիսա (ներկայացուցիչ) ՂԱՆԻ ՊԷՅ,

▲ Պուլատիսի ԻԹԹԻՀատ վէ Թերագզրի մուրախիսա ՄԻԻՖԹԻ ՄԵՀՄԷՏ ԱԼԻ, եւ ՀԱՃԻ ԱԹԹԱՐ ԳԱՐԱՔԱՉԻ ՀԱՍԱՆ ՀԻՍԷՅԻՆ ՊԷՅ,

▲ Էտիւրնէի ԻԹԹԻՀատ վէ Թերագզրի ներկայացուցիչ ԱՊՏԻԻԼ ՂԱՆԻ ՊԷՅ, (*)

▲ Նախկին նախարար Էնվէր էֆենտի (փաշա) հայրը ՀԱՃԻ ԱՀՄԷՏ ՓԱՇԱ:

Վերոյիշեալներու մասին որոշմանագրին (գարարնամէ) թուականն է Յունիս 10, 1919: Այս որոշմանագրին կարգ մը մասերը լրացնելու համար, Դատարանի բարձր նախագահութիւնը պահանջած էր, ինչպէս նաեւ ընդհանուր դատախազութիւնը, այդ ուղղութեամբ

(*) Ինչպէս քաղաքներու անուններէն կը տեսնուի, այդ 30 պատասխանատու քարտուղարներու թիւը շատ պակաս է: Այդ անուններուն մեծամասնութիւնը Արեւմտեան Անատոլիոյ քաղաքներու մասին է, որոնք Անատոլիոյ երկաթուղիի մտակայ վայրերն են: Հայկական Յ նախագծերու գլխաւոր պատասխանատու քարտուղարներու մասին որեւէ բան չկայ այս որոշմանագրին մէջ: Հարիւրաւոր ռեքորդները պահուած են: Բայց եւ այնպէս պատասխանատու քարտուղարներու եւ կեդրոնի յարաբերութիւնները և հրահանգները նոյնաման են ամէն տեղ, այդ պատճառով ալ քրֆական այս արձանագրութիւնները, ռեքորդներու գործակիցներուն շուրջ, մասամբ լուսաբանութիւններ կը բովանդակեն:

ամբաստանազիր մը պատրաստել եւ փաստաթուղթերուն մանրամասնութիւններովը միասին յանձնել դատարանին:

Կատարուած լրացուցիչ քննութիւններուն իբր արդիւնք, ամբաստանեալներէն ԱԻՆԻ ՊԷՅ, շատ ժամանակ Իսթայիլ եւ Չերքէզ Մեհմէտ և Հաճի Հիւսնի անձերուն վրայ ներքին փոխառութեան արժեթուղթեր գնելու համար սպառնալիք և ծեծ գործադրած է, եւ ատկէ զատ 1914ի (1330) Յուլիսէն ի վեր պատասխանատու քարտուղարի պաշտօնին մէջ եղած է եւ 1916, 1917 եւ 1918 թուականներուն (1332, 1333 եւ 1334) ԻԹԹԻՀատի քոնկրէներուն մասնակցած է (Իշթիրաֆ էքմիշ), եւ

Հալեպի պատասխանատու-քարտուղար ձՅՄԱԼ պէյը Սահմանադրութեան հրատարակութենէն յետոյ ԻԹԹԻՀատի միացած է, եւ վարած է Գոնհայի եւ Հալեպի պատասխանատու քարտուղարի պաշտօնները, եւ,

ՀԱՍԱՆ ՍԱԼԱՀԵՏՏԻՆ ՊԷՅ ալ 1913էն (1329) սկսեալ յիշեալ նեմիշէքին (ԻԹԹԻՀատի) Կ. Պոլսոյ պատասխանատու քարտուղար Քեմալ պէյի պաշտօնատան մէջ քարտուղարութիւն ըրած է, եւ,

ձՅԻՏԷԹ ՊԷՅ ալ Միւրկիւնի պատասխանատու-քարտուղար եղող ՖԵՐԻՏ ՊԷՅԻ բացակայութեան երկար ժամանակով անոր փոխանորդը եղած է:

ՊԵՍԻՄ ՉԷՕՀՏԻ ՊԷՅ ալ 1914ին (1330) Աֆիոն Գարահիսարի եւ երեք տարի յետոյ ալ Էսքի-Շեհիւրի պատասխանատու քարտուղարութեան գործերը վարած է, եւ,

ՄԻՏՀԱՏ ՊԷՅ ալ, Պայքանեան պատերազմէն յետոյ, Պուլսի պատասխանատու քարտուղարութիւնը վարած է եւ այս գործը շարունակած է, ու աւելի վերջը, Պուլսայի պատասխանատու քարտուղար Իբրահիմ պէյին փոխարէն նշանակուած է ու Նեսիմ պէյին յաջորդած է, եւ,

ԱՊՏԻԻԼ ՂԱՆԻ ՊԷՅ ալ Սահմանադրութեան յայտարարութենէն առաջ, անդամակցած է յիշեալ ձեմիշէքին (ԻԹԹԻՀատի) եւ յանձն առած է Էտիւրնէի մէջ ԻԹԹԻՀատի քննիչի (միւլթեքթիշի) պաշտօնը եւ մինչեւ ԻԹԹԻՀատի կազմալուծումը (*) այդ պաշտօնը կատարած էր:

Սահմանադրութենէն յետոյ, միապետ եւ բռնակալ (թեֆերիս

(*) Իթթիհատը կազմալուծուած չէր. միայն անունը փոխած էր եւ «Թեֆեստիս» կուսակցութիւն անունին տակ նոյն անձերը կը գործէին:

վէ քեղալուս) ըլլալու համար, կառավարական վարչութիւնը իրենց ձեռքն անցուցած եւ պետութեան մնաս ըտրոյ ըսել տուած (վե-տասը) եւ քաղաքական կուսակցութեան վիճակի մէջ, կառավարա-կան գործը իրենց վրայ վերցնելով, կառավարութեան բարձր զիրքին եւ ծանօթ ձեռն պահպանումին եւ հետեւաբար բնականօրէն գործա-գրութիւններուն, պետական վարչութեան ամբողջութեամբ միջամբ-տած եւ իրենց ազդեցութեան տակ առած, եւ պետութեան կարեւոր խնդիրները լուծելու վայր բնորոշած են Մերֆէլը Ումուսին (Ընդ-հանուր կեդրոնը)՝ այդ կեդրոնէն պատրաստուած որոշման համա-ձայն, մասնաւոր օրէնք մը յարմարեցնելով, որիչ տեղեր փոխադր-ուած (հայերու) կարուաններուն բնաջնջումին եւ անոնց գոյքերուն եւ սեփականութիւններուն կողմատուժի նպատակով պատրաստած եւ կազմակերպած են աւաղակային խումբեր եւ ատոնց սրտբաստու-թեան եւ կազմակերպութեան գործին մասնակից եղած են»:

Բնագրին մէջ.— «Մերֆէլը Ումուսինի իրքիտազ էլլետիյի գարարա քապէն, քանգիւմ էտիլէն գաւուրը մախտուսա քեաֆիգէն, մահալը ախէրէ նագլ էտիլէնիերին ԻՄՀԱ վէ էշեա վէ էմվալլարընրն նեհալ ու դարէք էտիլմէսի գրմնրտա, քերքիպ վէ կիւրուեր պա-գիլէնին, էրմէ քեշֆիլ վէ քերքիպինտէն մետիսիտար օլանլար»:

Եւ պատերազմի խառնակ վիճակին մէջ, ժողովուրդին պէտք ունեցած ամենէն անհրաժեշտ նիւթեղէնները անհատական շահամո-լութեամբ չարաշահած են եւ իրենց նպատակը եղած է հարստութիւն գիշել (իտալիտարը սերվէթ) եւ այդ նպատակով ալ, ատոնք պաշտօ-նական գործառնութիւններու վերածած են, կարճ խօսքով նման պե-տական քահանա կարգադրութիւնները իրենց գործիք եւ միջոց ընտ-րած են. հետեւաբար, Օսմանեան պետութեան Սահմանադրութեան համաձայն որոշուած եւ հաստատուած կառավարութեան վարչա-կան ձեւը չարափոխած են (քաղեիք): Եւ անտեսանելի ուժ մը մէջ-տեղ բերած են (պիք գուվվէի խաֆիէ իհտաս), ու Իթթիհատ Թե-րազըր ձեմիլթին մասնաւոր ղեկավարները (էրֆեանը մախտուէ), օսմանեան նահանգներուն մէջ, իրենց գործադրութեանց միջոցներ ստեղծած են եւ կազմակերպութեան արտաքինէն դատ, ներքին «ներ-կայացուցիչ» եւ «պատասխանատու քարտուղարներ» անուններու տակ գործունէութիւն ցոյց տուած են:

Իբր եղրակացութիւն վերեւ յիշուած Յունիս 10, 1919 թուա-կիր ՈՐՈՇՄՆԱԳՐԻ բացատրութեանց՝ իրենց այդ գործունէու-թեամբ գլխաւոր յանցաւոր (Փայիլը աւիլ) ըլլալով, այսօր ատոնց հանդէպ այդ ամբաստանեալներուն գործունէութիւնները սկիզբէն

նպատակ ունեցած են պատրաստել, գիւրացնել (իշտատ վէ քե-հիլ) եւ վերջն այ լրացնել գործունէութիւններով, որոնք կատարող-ները մասնակից-յանցաւորներ (ֆերէն գի մետիլէլ) ըլլալին դատա-կան հարցաքննութեանց ժամանակ բնորոշած եւ որոշ կերպով խոս-տովանած են (իքրար վէ իքիլաֆ) եւ քննութեանց փաստաթուղ-թերուն մէջ պարունակուած փաստերով հասկցուած է:

Թուրքերէն բնագրին մէջ՝ տառացի կերպով.— «Թահգիգաքը իսքիւնրաֆիէ սրրանրմտա, վագիլէն, սեւգ էտէն իգրար վէ իքի-րաֆիլարը վէ էվրագը քահգիգիլէ միմտէրիմաքը կիպի տէլալիլ իլէ անլաշըլմը»:

Ատոնց արարքները Պատժական օրինադրքին 45րդ յօդուածի տրամադրութեամբ եւ 55րդ յօդուածի վերջին պարբերութեան սահ-մանած ոճրային գործերու կարգին են:

Վերոյիշեալները այդ կերպով Պատերազմական Ատեանի առ-ջեւ դատել անհրաժեշտ եղած է: Եւ Պատժական Դատավարական Օ-րինադրքի (Ուսուլը Մուհաֆեմաքը ձեգալիէ) կանոններուն 89րդ եւ 204րդ յօդուածներուն համաձայն, մնայուն բանտարկութեան հրա-մանագիր հանուած է:

Միւս ամբաստանեալներէն ՀԱՄԻՏ ՊէՅը Սահմանադրութե-նէն յետոյ Իթթիհատական եղած է եւ Իգմիթի մէջ միւլթեքթիշ (քննիչ) եղող Իսմայիլ Հազըր պէլին փոխանորդը եղած է՝ Ատափա-գարի անդամներու ամսալծարները դանձելու համար:

Եւ Գրաարխանի (ղրախանու թպան) Նեճլթին ալ Թեշքի-լաթը Մախտուէի մէջ ծառայած է եւ Պապը Ալիի դէպքին ալ (Յուն-ուար 10, 1913 պատերազմական նախարար Նազըմ Փաշայի սպանու-թեան կ'ակնարկէ. Ծ. Հ.) մասնակից եղած է, եւ

ԻՀԱՄԱՆ ՆԱՄԸԳ պէյն ալ, մինչեւ Ապրիլ 1913 Սելանիկի մէջ, Իթթիհատ եւ Թերազըրի զպրոցին մէջ անօրէն եղած է, ինչպէս նաեւ եղած է Իթթիհատի Սելանիկի ներկայացուցիչը եւ յետոյ, այդ թը-ւականէն ետք, Փետիլ զրամատան փոխանորդ եղած է եւ, զրամա-տան ներքին կանոնադրին համաձայն, Իթթիհատի իր անդամակցու-թիւնը պահելով հանդերձ, գործնականօրէն ծառայութիւն չէ ըրած:

Հիւլմի ՊէՅն ալ, 1914ին (1330) Անդարայի երեսփոխան ըն-տրուած է, առեւտրով զբաղած է եւ հասկցուած չէ անոր ալ, վե-րոյիշեալ պաշտօնատարներուն նման, Իթթիհատի նպատակներուն ծառայած ըլլալը:

Հետեւաբար այդ յիշուած անձերու մասին եղած հարցաքննու-թիւնը եւ թուղթերը միացնելու օրինական պատճառ մը չկայ: Վեր-

ջէն յայտնուած պատճառներու բերումով, օրէնքին հակառակ տեղի ունեցած է :

Եւ Գոնիայի նախկին վայրի ԲԻՖԱԹԻ ՍԱՄԻ, Գոնիայի ոստիկանապետ ՍԱՍՏԷՏՏԻՆ՝ սէյն եւ երկրադործական տնօրէն ԹՈՏՈՐԱՔԻ ԼՖԵՆՏԻՆ եւ ձիհան Պէյլի միւտիր ՖեշՄԻ եւ Այշեհիբի քաղաքապետ ՔեԱՄԻԼԸ եւ Սպարթայի բանտը գտնուող ՊԱՍՐԻՆ, ամբաստանուած ոճիրներու մէջ գտնուող կարգ մը ուրիշ անձերու հետ, տարազրութեան ժամանակ ապրանք, սեփականութիւն եւ դրամ կողոպտած, յախտակութիւն եւ անբարոյականութիւն գործած եւ մահերու պատճառ եղած են, ու այդ մասին հարցաքննութեանց թուղթերը Գոնիայի Քննիչ Յանձնախումբին կողմէ քննուած ոճրագործներու դասին պատկանած են, եւ

Կ. Պոլսոյ ղրկուորական բանախն մէջ գտնուող վերոյիշեալ ՖԵՐԻՏ պէյը Իսթանպուլի վիլայէթի Իթթիհատ եւ Թերազզըի ներկայացուցիչը, Դաշնակիցներու Յանձնախումբին կողմէ ձերբակալուած ըլլալով, անոր ալ թուղթերը միացնելով ղրկուած են. խնդրը մէկ կողմ ձգուած չըլլալու համար, անոնց օրինական դատերը տեղի կ'ունենան առանձին :

Ամբաստանեալներէն ԱՊՏԻԼ ԳԱՏԵՐԸ, որ Գոնիայի մէջ Իթթիհատ Թերազզըին հսկողութեան ենթակայ՝ Աղզային Միւլէին եւ Մատենադարանին տնօրէնն է եւ մինչեւ 1915 (1331) Իթթիհատի անդամակցած են Պուլատինի միւլէին՝ ՄեշՄԷՏ ԱԼԻ եւ Գասապ ՀԱՍԱՆ եւ ՀԻՍԷՑԻՆը: ՀԱՃԻ ԱԹԱ ԼՖԵՆՏԻՆ որ Սահմանադրութենէն յետոյ Իթթիհատի անդամակցած է եւ յետոյ նաւատորմի եւ աղզային պաշտպանութեան մասնաճիւղին մէջ ծառայած է, նախապէս Իթթիհատի պատկանած ըլլալով՝ ձեռով մը կապը խզած է եւ այսօր ալ որեւէ կապակցութիւն կամ յարաբերութիւն չունի, ստոր ալ դէմ դատավարութիւն տեղի չունենալու որոշում տրուելը ընդհանուր դատախազութենէն պահանջուած է, բայց եւ այնպէս այդ ամբաստանեալին թուղթերը տակաւին քննութեան տակ են :

Պատասխանատու քարտուղարներուն դատական թուղթերը միացուելով Առաջին Քննիչ Յանձնախումբին ղրկուած են. ատոնց միացնելով դատելու համար դատարան ղրկուելու են :

Ատոնց մասին վճիռ տայէ առաջ, ատոնց Իթթիհատի հետ ունեցած կապակցութիւնը կամ բռնուած բոլոր եւ ներկայի կացութիւնը ճշգրտելէ ետք, օրինական կարգադրութիւններ ընել: Ատոնք ալ դատել: Եւ, ստույգում կատարել նաեւ Դաշնակիցներու կողմէ բանտերէն տարուածներու մասին :

ՈՐՈՇՄՆԱԳԻՐ (ԳԱՐԱՐՆԱՄԷ)

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ
(«ԹԱԳՎԻՄԸ ՎԵՔԱՅԻ», ԹԻԻ 3571)

Մայիս 26, 1919

«Թէ՛ Կեդրոնին (Կ. Պոլսոյ մէջ) եւ թէ՛ գաւառներու մէջ, մասնաւոր պատրաստուած կազմակերպութեամբ (թիշփիլաքը միւրեք-թեպէ իլէ) անձերու (հայերու) ջարդ (քաղքը նուֆուս) եւ սեփականութեանց կողոպուտ (նեհիպը էմվալ) եւ շէնքերու ու դիակներու հրկիզում (իբրազը մեպանի վէ էնսատ), զիւղերու աւերում (քալս-րիպը գուրրա), պատիւի բռնաբարում (հեքֆը ըրզ) եւ տանջանքի ու չարչարանքի (իշֆեմե վէ էգա) ոճիրները գործած ըլլալով ամբաստանուած, Միւլէի եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան (Իք-քիհատ վէ Թերազզը գեմիլէթի) անդամները և ղեկավարները, դատարանական զանազան աստիճաններու դատաւորներու առջեւ դատուելու համար, Ապրիլ 12, 1919 (1335) թուականով ՈՐՈՇՄՆԱԳԻՐ մը տրուեցաւ, Պատերազմական Ատենի յանձնուելու համար՝ փախստականներէն (ամբաստանեալ) Թալէաթ փաշա, ձեմալ եւ էնվէր է-Ֆենտինները եւ ցանկի մէջ արձանագրուած իրենց ընկերները՝ անուններով: Դատաւարութեան ընթացքին տեսնուեցաւ որ պատժական դատարանական կանոնի 311րդ յօդուածի համաձայն, նոր ոճիրներ մէջտեղ գալուն, փախստական ամբաստանեալներու կողքին կան նաև նախկին վարչապետ Սայիտ Հայիմ փաշան, Պալիլ, Իբրահիմ, Քեմալ, Ահմէտ Նեսիմի, Ահմէտ Շիւքրի պէյերը, որոնց մասին դատարանական թուղթերը նախապէս առանձին տրուած էին եւ դատարան բերուած չէին: Ատոնք բոլորը ոճիրի ընկերակիցներ ըլլալով, ատոնց մասին ալ որոշում տրուած էր մանրամասն քննութիւն կատարելու: Եւ, այդ պարագան, ընդհանուր դատախազի Մայիս 3, 1919 (1335) թուականով պահանջադիր (իտտիհամալէ) ներկայացուած էր եւ պահանջուած էր զանոնք ալ յանձնել դատարանի:

Հարցաքննութիւններ եւ քննութիւններ կատարուեցան եւ ու-

սուճնասիրուեցան այդ հարցաքննութիւնները եւ այդ պահանջա-
ղերը:

Չարագործ Իթթիհատ եւ Թերագոր կոչուած նեմիլէթը ար-
տաքնապէս քաղաքական կուսակցութեան ձեւին տակ կ'երևէր եւ
այդ ձեւով ալ կ'անոնապիւր մը մէջտեղ ձգած ըլլալով հանդերձ, քա-
ղաքական կուսակցութեան մը կողմակերպութենէն դուրս՝ ունեցած
էր զազոտի ակնկրեւ կողմակերպութիւններ եւ հաստատութիւններ
եւ դանձր պահելու եւ կեցած չէ: Եւ իր ամենէն ազդեցիկ եւ սեր-
ճախօս անդամներէն առջիմ, Աթրֆ, Պեհաշտտին Շաքիր եւ
ուրիշներ կողմած էին «ԹեՇՔիլԱթը ՄԱՆՍՈՒՍԻ»ի (Մասնաւոր
Կողմակերպութիւններ) քաղաքական մը (յանձնարումը մը), որուն
հետ էր նաեւ Ընդհանուր Կեդրոնի անդամներէն Քեմալ պէյ, որ իր
ընկերներուն հետ կողմակերպած էր նաեւ Պարենաւորման Յանձնա-
խումբ մը (Իւաշէ քաղաքում):

Յիշեալ կուսակցութեան քոմիտիոններու գործունէութեան եւ
ջանքերու մասին յիշեալ ՈՐՈՇՄՆԱԳՐԻՆ մէջ յիշուածները կրկնելու
հարկ չկայ: Ինչպէս մանրամասնութիւնները հասկցուած են թղթակ-
ցութիւններէն, Իթթիհատ մէջ Թերագոր կուսակցութիւնը զազոտի եւ
մասնաւոր նպատակներ ծրարած եւ վատերացուցած է եւ, իրենց ա-
րարքները առանց բացատրութեան բոլոր անհասկնալի ընդունելի տա-
լու համար, ամէն տեսակ բռնի եւ պարտադրիչ միջոցներու դիմած
է: Նոյնիսկ զարթոյցի ինքիւր եւ նմաններուն դէմ մահապատիժ-
ներ գործադրած է, եւ զինուորականներ կամ իր անդամներէն ոմանք
ալ պաշտօնեայ ըրած է եւ, պատերազմի մասնաւոր առիթէն օգտուե-
լով, թէ կուսակցութիւնը եւ թէ անդամները մեծ հարստութիւն գի-
րած են:

«ԹԱՆԻՆ» Թերթը, Սեպտեմբեր 24, 1916 (1332) թուականով,
թիւ 2-809, հրատարակած էր Քոնկրէի մէջ կարգադրուած եւ ըն-
դունուած բացատրադրերն ու տեղեկադրերը (իյզահնամէ), որոնք
բացորոշ կերպով ընդունուած եւ խոստովանած են: Կուսակցութիւնը
ինքնազլուխ (խոսապիտոս) ստանձնած է Կ. Պոլսոյ պարենաւորումը
եւ մատնած է ժողովուրդը թշուառութեան եւ խեղճութեան: Եւ մէկ
տարուան մէջ չարաչահած է 700-000 ոսկի (3-500-000 տուար) եւ
ձեմիլէթը իր քոնկրէին մէջ խրաչուցած է այդ դրամը:

Այդ ձեմիլէթին ուրիշ յանցանքներէն մին ալ, տարագրութեան
օրէնքի գործադրութեան պատրուակին տակ, օտմանեան երկիրներուն
գրքեր բոլոր սնկիւններուն մէջ պատահած դէպքերուն կազմակեր-
պումն է (խօսքը հայերու դէմ կատարուած ցեղասպանական սճիր-

ներու մասին է): Դէպքերու ընթացքին՝ Իթթիհատ եւ Թերագոր
ներկայացուցիչ եւ պատասխանատու քարտուղարներու նախագահու-
թեան տակ, տարագրութեան վայրերուն գլխաւոր կեդրոնը կազմող
արեւելեան բոլոր նահանգներուն մէջ միատեսակ ձեւով տեղի ու-
նեցած են դէպքեր: Իթթիհատ եւ Թերագոր կուսակցութեան պետերը
(էրքեան) կազմած են «Թեշքիլաթը Մախսուսէ»ի (Մասնաւոր Կազ-
մակերպութեան) յանձնարարները վերոյիշեալ վայրերուն մէջ ալ:
Ընդունած եւ խոստովանած են Թեշքիլաթը Մախսուսէի նախագա-
հութիւնը ստանձնած ըլլալին: Եւ ատոնք ալ զեկալարուած են Պե-
հաշտտին Շաքիրի կողմէ եւ յիշեալին ալ, այդ նպատակով, Իթթի-
հատի պատասխանատու ներկայացուցիչները եւ բնիչները (ժուրախ-
խասը մեսուլ վէ միւֆեթթիլէր) գործի դրած ըլլալը փաստերով
ապացուցուած է: Եւ կատարուած այդ բոլոր ոճիրները ակներբւ է որ
պատրաստուած եւ կազմակերպուած են այդ ձեմիլէթին կողմէ:

Ահա այդ ձեւով անհատներու, խմբակցութիւններու եւ առանց
բացատրութեան օսմանեան ամբողջ ազգին վրայ որոշուած անցուցած
է քանզի գործերով, Իթթիհատ եւ Թերագոր ձեմիլէթը, իր նպա-
տակները յաջողցնելու եւ ընդդիմացող ուժը, (որ պիտի ըլլար կա-
ռավարութիւնը), կառավարական պաշտօնական ուժերը մշտապէս
կերպով սանձահարելու համար ամէն միջոցի դիմած է (*):

Մեր երկրին մէջ, 1908էն (1324) ի վեր, իրարու յաջորդող ար-
տասովոր դէպքերով, մասնաւորապէս Պալքանեան պատերազմի ժա-
մանակ, այդ մոլեգին ցանկութիւնը յայտնուած էր այդ ձեմի-
լէթին կողմէ. փախստական ինվեր պէյը պատերազմական նախարա-
րի աթոռին վրայ նստեցնելու եւ իրենց մտադրութիւններն ու որո-
շումները գործադրել տալու համար, նախկին վարչապետ Ահմէտ Իզ-
զէթ փաշան պատերազմական նախարարի պաշտօնէն կրկնակի կեր-
պով հրաժարել ստիպած են: Այդ առթիւ սարսափեցուցած են զինք
եւ սպառնացած. եւ տարագրութեանց ժամանակ ալ վիլայէթներու
վալիներուն հրահանգներ տուած են, ոճիրներ գործած են եւ երբ
կառավարութեան անդամներէն ոմանք իրենց ոճրային նպատակնե-

(*) Դատարանը կը դժկամակի ըսելու, որ այդ ոճիրներուն մեծ մասը գործող-
ները կառավարութեան ուժերն են: Բանակը, ժամտարմըրին եւ քաղաքային վար-
չութեան բոլոր միւլերը եւ թուրք ու քիւրտ աւագակախուսները: Աւելցնենք ա-
տոնց վրայ ստորին դասակարգի խուժանային անհատներ, քաղաքներու եւ գիւղե-
րու մէջ, կառավարական հրահանգով եւ գործակցութեամբ ու քաղաքներու
երեսփոխաններու եւ թրքական թերթերու:

րուն ծառայելու հսկում ցոյց տուած չեն, մասնաւորապէս Եոզկաթի միթեաւորը՝ ձեմալ պէյը, Քասթեմունիի վալի (ընդհանուր կառավարիչ) Բէշիտ փաշան, Անդարայի վալի Մաղհար պէյը, անմիջապէս պաշտօնանկ ըրած են^(*) : Էրզրումի վալի Թահսին պէյը իր հարցաքննութեանց մէջ յայտարարած էր մանրամասնութիւններ, որոնք կը հաստատեն վերոյիշեալ պարագան :

Ճեմիյէթը կառավարութեան սանձը (իմացը հիւճումէք) ձեռք առաւ նաեւ գաւառներու մէջ ալ, նոյն տեսակ բռնի և սպառնական ձեւերով, և իր կամայականութեանց ենթարկեց բոլորը : Ոչ միայն հետո չմնաց կառավարական գործերէ, այլ և, ընդհակառակն, նախարարաց խորհուրդի անդամ ընել տուաւ իր ամենէն ազդեցիկ անդամները և իրենց ընդհանուր ժողովին մէջ մտցուց նախարարները և ոչ մէկ օրինական յատկանիշ կամ իրաւասութիւն չունենալով հանդերձ՝ պետութեան վարչական գործերու մասին խորհրդակցութիւն կատարելէ ետ չկեցաւ :

Քաղաքական խորհրդակցութիւններ կատարած է նաեւ Պրեստ Լիտովսկի դաշնադրի մասին, իր ընդհանուր ժողովին մէջ, և պարենաւորման խնդիրներն ալ կանոնաւոր կերպով այդ ժողովին խորհրդակցութեան առարկայ դարձուցած է և գործերը իր հսկողութեան տակ (միւրաբապա) առած է, և պատերազմական կացութեան մասին ալ կարծիքներու փոխանակութիւն ունեցած ըլլալը մեզի հաղորդած է :

Ճեմիյէթը պատերազմի մտնել կամ չմտնելու վերաբերեալ կենսական խնդրոյ մը առթիւ իր տեսակէտը գերիվեր համարած է և իր մասնաւոր նպատակներուն հետապնդմանը համար իր նախագահին (Սայիտ Հալիմի^(**)) ծովեզերեայ բնակարանին մէջ հաւաքուելով՝ հոն որոշումներ կայացուցած ըլլալը ամբաստանեալներէն ումանց կողմէ խոստովանուած և հաստատուած է :

Այս ձեմիյէթին մէջտեղ գալէն ի վեր, երկրին մէջ չտեսնուած եւ չլսուած բազմաթիւ սպառնալի միջոցներով գանգամ տարբերու յարաբերութիւնները պաղեցուցած է եւ պոյթութիւններ կազմակերպած է . և իսլամ եւ ոչ-իսլամ ժողովուրդը երկրէ երկիր գաղթելու ստիպած է եւ դարերով խաղաղութեան եւ դիրակեցութեան

(*) Այդ հրաժարած կամ պաշտօնանկ եղած սակաւաթիւ բարի թուրքերու յաջորդները եղած են կատաղի հայակերներ :

(**) Սայիտ Հալիմի ապարանքը կը գտնուէր վոսփարի արեւմտեան ափին վրայ՝ Ենի-Քէռլի մէջ :

մէջ ապրող Անատոլի ժողովուրդին միջեւ բռնի հակակրօնութիւններ եւ թշնամութիւններ յառաջ բերելու պատճառ եղած է :

Եւ այդ վիճակը ստեղծողները, գործադրողները և ծաւալողները եղած են (Իթթիհատ) Ճեմիյէթին մարդիկը, ընդհանուր ներկայացուցիչները, պատասխանատու քարտուղարները (մուրախխասս վէ քեթիպը մէսուլլարը) և անոնց կապուած կեդրոնական մարմինները (հէյեթաթը մեքթեգիէ), որոնց որոշումները և գործադրութիւնները ըլլալը վկայութեամբ հաստատուած են և ծանօթ հանուր ժողովուրդին :

Վերոյիշեալ բացատրութիւններէն յայտնի կ'երեւի, որ Ճեմիյէթը ամենավերջին միջոցներուն դիմած է հաստատամտութեամբ, անպատճառ իր մասնաւոր մտադրութիւնները զլուխ հանելու համար, և յաջողած է կառավարական ուժերն ալ իրեն ծառայեցնել և պետական իշխանութեանց միջեւ առանձինն բռնակալ դիրք մը բռնած է, և կառավարութեան մէջ կառավարութեան մը վիճակը ստացած է :

Այդ կերպով, բարոյական և Ֆիզիքական բռնակալութեամբ, և յամառօրէն, միապետութեամբ, զազտնի և անպատասխանատու ուժ մը մէջտեղ բերուած է :

Այդ կուսակցութիւնը անշուշտ բաղկացած էր իր անդամներէն : Այդ անձերն ալ, ընկերակցութեանց օրէնքի տրամադրութեանց համաձայն, նոյն կուսակցութեան անունով և հաշուոյն գործուած ոճիրներուն, իրբեւ անդամներ, մասնակից եղած են և (միւթեսիլիէն), յաջորդաբար բնականօրէն պատասխանատու են :

Այդ յատկանշական կէտերով ամբաստանուած են և Պատերազմական Ատեանի առջեւ պիտի դատուին վերոյիշեալ կուսակցութեան ընդհանուր փոխ նախագահը (ախիս ումուսի վեքիլի) ԹԱԼԻԱԹ ՓԱՇԱ, և ընդհանուր ժողովի անդամներէն Էնվեթ և Ճեմալ Էֆենտիները և ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄ ՓԱՇԱՆ՝ կուսակցութեան ընդհանուր նախագահը, որուն հարցաքննութիւնները լրացած են բանտարկուած վիճակի մէջ : Եւ, զարձեալ ընդհանուր ժողովի անդամներէն ԽԱՅՐԻ և ՄՈՒՍԱ ՔԵԱՉԻՄ վսեմաչուք էֆենտիները^(*), և ՔԵՄԱԼ, ՇԻԻՔՐԻ, ԻԲՐԱՀԻՄ^(**) պէյերը և ԱՊՊԱՍ ՀԱԼԻՄ ՓԱ-

(*) Այս վերջին երկուքն ալ Շէյխ իւլ իսլամ եղած են :

(**) Յիշեալ իպրահիմը այն դատական նախարարն է, որ գրեթէ վնասած էր Հայոց Պատրիարքը, երբ դարձան մը կը խնդրէր հայերու սպանութեանց և տարագրութեանց մասին :

ՇԱՆ միասին գործակից եղած են պետութեան օրինական ուժէն գերիվեր ուժ մը հաստատելու մէջ եւ այդ ձեւով ժողովուրդը(*) սարսափի եւ սպառնալիքի տակ պահած են: Եւ գործած են բռնի ուժով կառավարութեան ձեւը շարափոխելու յանցանքը: Ասոնք դատավարութեան ենթարկելու համար բաւականաչափ փաստեր մէջտեղ եկած են: Այդ կերպով, ընդհանուր դատախազութեան պահանջազրով եւ Պատժական օրինազրքի 45րդ յօդուածի եւ 55րդ յօդուածի վերջին պարբերութեան համաձայն, անհրաժեշտօրէն վճիռ տրուած է զանոնք դատի ենթարկելու:

Վերոյիշեալներէն ԻՊՐԱՀԻՄ պէյի ազդեցութիւնը կուսակցութեան մէջ երկրորդական եղած է. ատիկա յանցանքի մեղմացումի պարագայ մըն է, որ կը մնայ դատարանի հայեցողութեան:

Միւս ամբաստանեալներէն ԱԼԻ ՄԻՒՆԻՅ պէյը դէպի Սուրիա ճամբորդելով Ատանայէն անցած էր. այդ նահանգին մէջ կարգ մը հայեր գերծ մնացած էին տարագրութենէ եւ ինք, իրբեւ Իթթիհատական, յաւելեալ եռանդ ցոյց տալով, բոլոր մնացող հայերը (Ատանայի նահանգէն) աքտորել տալու համար ներքին գործոց նախարարութեան հեռագիր ղրկած էր, բան մը՝ որ իր պարտականութենէն դուրս էր: Այդ հեռագիրը գտնուած է իր (Ալի Միւնիֆի) անձնական թուղթերուն մէջ, որ, դարձեալ նկատի առնելու պայմանով, անհրաժեշտ է զինքն ալ դատավարութեան ենթարկել, օրինական տրամադրութեանց համաձայն:

Ամբաստանեալներէն Խալիլ եւ Նեսիմի պէյերէն առաջինը՝ Խալիլ պէյը(**) (հայերու) տարագրութեանց ժամանակ Իթթիհատի ընդհանուր ժողովին մէջը չէր եւ այդ ողբերգական օրերուն Եւրոպա կը գտնուէր, որով մեղսակից չէր եղածներուն:

Պատերազմի սկզբնաւորութեան օրերուն ալ՝ Երեսփոխանական ժողովին նախագահը(***) եղած էր եւ Իթթիհատի կատարած միջամբողութիւններէն հեռու մնացած էր: Երկրորդը (Ահմէտ Նեսիմին) նոյնպէս այդ օրերուն Եւրոպա կը գտնուէր, հետեւաբար այս պարագաները մեղմացուցիչներ են իրենց յանցանքներուն: Պէտք է նկատի

(*) Սարսափի տակ մնացող եղած է միայն հայ ժողովուրդը: Թուրք ժողովուրդը գործակից եղած է կառավարութեան:

(**) Խալիլ պէյը բարդերու ժողովներուն և որոշումներուն ներկայ եղած էր: Անգամ եղած է նաեւ Ընդհանուր Կեդրոնի, Բանկէի որոշումով:

(***) Խալիլ պէյը եղած է նաեւ դատական նախարար, յետոյ արտաքին գործոց նախարար եւ շոյումած է ամերիկեան գետնամ Մորկընթաուն:

առնել զանոնք՝ նոյնպէս ենթարկելով դատավարութեան. վերջին տարիներուն միայն նախարարական աթոռի բարձրացած են և նախարարական եւ նահանգային պաշտօններու վրայ եղած ատեն ալ դէմ եղած են միջամտութեան եւ կատարուած չարիքներուն:

ԻՍՄԱԵԻԼ ՃԱՆՊՈՒԱԹ, ՀԻՒՍԷՅԻՆ ՀԱՇԻՄ եւ ՄՈՒՍԹԱՖԱ ՇԵՐԻՖ պէյերուն մասին ո՛րքան ալ դատավարութեան չենթարկելու որոշում կայացուած ըլլայ, դատարանի նախագահութիւնը հրամայած է անոնց թուղթերը միացնել միւս դատական թուղթերուն, ինչպէս նաեւ ԲԻՖԱԱԹ պէյի թուղթերը:

Այդ որոշումները տրուած են միաձայնութեամբ եւ բոլորը պիտի յանձնուին Պատերազմական Ատեանին:

Մայիս 26, 1919 (1335), 25 Շապան, 1337:

Վերոյիշեալ ամբաստանեալները եւ անոնց բոլոր ընկերները ամբաստանուած են օսմանեան կատարութեան օրինական ձեւը փոփոխելու յանցանքով. մասնակից եղած են ոճիրներուն եւ ընդհանուր դատախազութիւնը պահանջած է քննել այդ պարագան եւ յայտնած է նաեւ որ պատշաճ չէ մի քանիներ դատավարութեան չենթարկելու պարագան: Հետեւաբար բոլորը պէտք է դատուին Պատերազմական Ատեանին առջեւ:

(Ստորագրութիւն)
Պատերազմական Ատեանի նախագահ՝
Փերիզ (գորավար) ՆԱԶԼՄ

Հիւսէին Հաշիմի, Մուսթաֆա Շերիֆի եւ Իսմայիլ Ճանպուրաթի մասին տրուած որոշումը, զանոնք դատի չենթարկելու մասին, թագաւորի հաւանութեան ենթարկուած չէ. ուստի, թագաւորական հրամանագրի և պատժական դատավարական կանոնադրքի 55րդ յօդուածի համաձայն, պէտք է դատարանի առջեւ դատուին անոնք ալ. չէյի իւլ իսլամ ԽԱՅՐԻ Էֆենտին ալ բանտարկելու մասին վճռուեցաւ հրամանագրի հանել:

Մայիս 27, 1919 (1335)

Իթթիհատ եւ Թերագզը կուսակցութիւնը կառավարութեան մէջ կառավարութեան մը ձեւը ստացած ուժի մը վրայ կոթնած մեծ ոճիրներ գործած է:

Այդ կուսակցութեան Կեդրոնի անդամները նկատուած են ամբաստանեալներ, որոնց ինքնութիւնը հաստատուած է:

Աճմէտ Իզգէթ, Չիւրիւք Սուլու Մահմուտ՝ հանրօգուծ շինութեանց նախարար եւ Օսման Նիզամի փաշաներ, եւ շէյխ իւլ իսլամ էսաու էֆենտի, որոնց դէմ թէեւ ձերբակալման հրամանագիր հանուած է, բայց կարելի չէ եղած գործադրել, եւ փախստական եղած հետեւեալներէն՝ նախկին թղթատարական նախարար Ոսկան էֆենտի, Երկրագործական նախարար Սուլէյման էլ Պուսթանի էֆենտի, Ելեմտական նախարար Ճեւիտ պէյ, Ընդհանուր Կեդրոնի անդամ եւ կրթական նախարար տոքթ. Նազըմ պէյ: Ատոնց մասին կատարուած քննութիւնները լրացած են: Ուսումնասիրուած է ընդհանուր դատախազի պահանջագիրը (իտիւսմաէ):

Իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան կազմակերպութիւնը եւ երկրին բոլոր կողմերը իրեն ծառայեցուցած պաշտօնեաներու շրջթայ մը կառավարութեան պարտականութիւնը ինքնագլուխ (իսաուպէիսաու) կատարած եւ երբեմն ալ իրենց ունեցած մեծ ուժին միջոցով ծանր կերպով ճնշումներ բանեցուցած են եւ պետութեան քաղաքականութիւնն ու գործառնութիւնները իրենց կամքին եւ քմայքին ենթարկած են: Իրենց կամայականութեանը շնորհիւ պետական գլխաւոր եւ երկրորդական պաշտօնեաները պաշտօնանկ ըրած եւ հանգստեան կոչած են, եւ սպառնացած՝ տեղական կառավարութեան ժողովներուն եւ պաշտօնեաներուն: Մայրաքաղաքին մէջ իրենց ընդհանուր կեդրոնով, իրենց ընդհանուր ժողովներով, գաւառական կեդրոնական մարմիններով եւ պատասխանատու ներկայացուցիչներով, նաեւ գործնապէս հրամայողի եւ ղեկավարի ընթացք ունեցած են կառավարութեան մէջ:

Այդ կերպով Իթթիհատ եւ Թերագզը կուսակցութիւնը կառավարութիւն մը կազմած է կառավարական պաշտօնական իշխանութիւններէն գերիվեր, անպատասխանատու իշխանութեան մը վիճակով, որ կառավարական ձեւը այլափոխած եւ չարափոխած է: Այդ պարագան Մայիս 28, 1335 (1919) թուակիր թիւ 1 որոշմնագրով (գարարնամէ) մանրամասնութեամբ բացատրուած եւ լուսաբանուած է (թեմիխտ):

Ատանց կրկնելու վերոյիշեալ մանրամասնութիւնները, ճշգրտուած են ամբաստանեալներուն վերոյիշեալ ոճիրները, իրրեւ կազմակերպողներ եւ գործադրողներ: Այդ ամբաստանեալները ըլլալով նաեւ կուսակցութեան ընդհանուր ժողովի անդամ, այդ ժողովին ընդհանուր քարտուղարի հաղորդագրութիւնով, դահլիճի անդամները, բնականէն (ի պաշտօնէ) անդամներ եղած են յիշեալ ընդհանուր ժողովին, որ քոնկրէին որոշումներովը ճշգրտուած է:

Մինչեւ որ հակառակը ապացուցուի, ընդունուած է անհրաժեշտորէն, որ փոսթի եւ հեռագրի նախկին նախարար Ոսկան էֆենտի եւ Երկրագործական նախկին նախարար Սուլէյման էլ Պուսթանի էֆենտի վերոյիշեալ կուսակցութեան անդամ էին, եւ կրթական նախարար տոքթ. Նազըմ պէյ որ թէ՛ ընդհանուր ժողովին եւ թէ՛ ընդհանուր կեդրոնին գործնապէս անդամ եղած է:

Նոյնպէս յիշեալ ժողովին գործնապէս մասնակից ըլլալը խոստովանած է նախկին շէյխ իւլ իսլամ էսաու էֆենտին. իր իսկ յայտարարութեամբ, Երկու անգամ հրաւիրուած է ընդհանուր ժողովի: Եւ թէ՛ այդ ժողովին օրակարգի նիւթը ընտրութիւններու շուրջ էր միայն եւ յայտնած էր որ լուր ունեցած չէր ժողովին միւս խորհրդակցութիւններէն եւ որոշումներէն, ու կուսակցութեան հանդէպ միշտ ընդդիմադիրի դիրք մը բռնած էր: Եւ այդ պատճառով ալ Շէյխ իւլ իսլամի պաշտօնէն հրաժարիլ ստիպուած է:

Այդ պարագան որպէս մեղմացուցիչ կէտ մը կ'ընդունուի, պայմանաւ որ իր գրաւոր յայտարարութեամբը ըսած ըլլայ: Պատեւազմական Ատեանի հայեցողութեանը կը մնայ որոշել, թէ յիշեալը ի՞նչ աստիճան մասնակից եղած է կուսակցութեան գործունէութեան եւ ի՞նչ ջանք կատարած անոր մասնակցելու համար:

Վերոյիշեալ թիւ 1 որոշմնագրով յիշուած պատճառաբանութիւնները եւ փաստաթուղթերը նկատի ունենալով, համաձայն Պատեւական օրէնքի 45րդ յօդուածի վերջին պարբերութեան տրամադրութեան, անոնց դէմ ալ ձերբակալման հրամանագիր հանել որոշուած է:

Հասկցուած է որ ամբաստանեալներէն Աճմէտ Իզգէթ փաշա(*) մասնակցութիւն չէ ունեցած ոչ յիշեալ ժողովին կամ կուսակցութեան եւ ոչ ալ մասնակցութիւն բերած է կուսակցական մէկ այլ մարմնի ժողովներուն: Եւ պատեւազմական նախարար եղած միջոցին եւս, թէեւ ի պաշտօնէ ընդհանուր ժողովի անդամ էր եւ ներկայ պէտք է ըլլար, բայց յիշեալը այդ ատեն, իր վերին հրամանատարի փոխանորդ, կը գանուէր Պապա Էսկի եւ բանակին դուխը. զրազած էր էտիրնէն ազատելու պատերազմով եւ յետոյ հրաւիրուած է հրաժարիլ պատերազմական նախարարի պաշտօնէն. այդ մասին իրեն սպառնալիք եղած է, սարսափի տակ մնացած է, որովհետեւ չէր ուզած ծառայել կուսակցութեան մասնաւոր նպատակներուն եւ թերեւս ալ անոր գործունէութեան արգելք ըլլալու դիրքին մէջ գլուխուած է:

(*) Իզգէթ փաշան ալպանացի էր, քուրք չէր:

Նմանապէս, ամբաստանեալներէն Օսման Նիզամի փաշայի մասին, թէ եւ ընդհանուր դատախազը պահանջած է անոր ալ դատը զատել, սակայն ատոր հարկ չէ տեսնուած եւ մերժուած է: Վերոյիշեալը սկզբունքով անդամ եղած չէ Իթթիհատ եւ Թերազը կուսակցութեան եւ իրեն չի վերաբերիր, Իթթիհատ կուսակցութեան կանոնագրին համաձայն, նախարարներու ի պաշտօնէ ներկայ ըլլալու պարտաւորութիւնը Ընդհանուր ժողովին: Անոր մասնակցութիւնը յայտնի եղած չէ եւ զինք ընտրած են հանրօգուտ շինութեանց նախարար անոր Եւրոպա գտնուած միջոցին եւ կարճ ժամանակ ետք, կրկին Եւրոպա մեկնած է. հետեւաբար Քոնկրէին տուած որոշումներու օրերուն հետու գտնուած է եւ անտեղեակ մնացած:

Ահմէտ Իզզէթ եւ Նիզամի փաշաներուն կապակցութիւնը կուսակցութեան եւ անոր գործունէութեան հետ ապացուցուած չէ: Պատժական դատավարական օրէնքի 123րդ յօդուածին տրամադրութեան համաձայն, կ'արգիլուի անոնց դէմ դատավարութիւն կատարել:

Քննութիւնները տակաւին լրացած չեն ամբաստանեալներէն Զիւրիւք Սուլու Մահմուտ փաշայի եւ ելեւմտական նախարար Ճաւիտ պէյի մասին, ուստի, ըստ եղած պահանջին, վերոյիշեալ երկուքին դատերը տեսնելու մասին որոշում տրուեցաւ:

Յունիս 12, 1919 (1335), 3 Բամագան 1337

Ստորագրութիւն

Պատերազմական Ատեանի նախագահ
Ֆերիզ (զօրավար) ՆԱԶԸՄ

Յունիս 5, 1919 «Թագվիմը Վեֆայի», թիւ 3604 (պաշտօնաթերթ օսմանեան փարլամենթի), Մարտ 8, 1919 (1335) արքայական վաւերացումով, որոշմնագիր կանոնագրի մը համաձայն, կազմուեցան պատերազմական ատեաններ, որոնց դատավարութեան արձանագրութիւնն է (մուհաֆեմաթ գապըթ ֆերիտէսի).—

ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ.— Նախագահ՝ Ֆերիզ (զօրավար) Մուսթաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ (միւրիւա) զօրավար Զեքի փաշա, զօրավար (միւրիւա) Մուսթաֆա փաշա, (միւրալայ) գնդապետ Բեճէպ Ֆերտի պէյ:

Ի ներկայութեան դատուած ամբաստանեալները.— Նախկին չէյիս իւլ իսլամ Մուսթաֆա Քեազիմ էֆենտի, նախկին չէյիս իւլ իսլամ էսատ էֆենտի, Ծերակոյտի նախկին ատենապետ Բիֆաաթ

պէյ, փոստի, հեռագրի եւ հեռաձայնի նախկին նախարար Հաշիմ պէյ:

Ի բացակայութեան դատուած ամբաստանեալները.— Նախկին մեծ վեզիր Թալէաթ փաշա, նախկին պատերազմական նախարար էնվէր(*) էֆենտի, նախկին ծովային նախարար Ճեմալ էֆենտի, նախկին ելեւմտական նախարար Ճաւիտ պէյ, նախկին կրթական նախարար տօքթ. Նազըմ պէյ, նախկին փոսթ-հեռագրի եւ հեռաձայնի նախարար Ոսկան էֆենտի, նախկին առեւտրական եւ երկրագործական նախարար Սուլէյման էլ Պուսթանի էֆենտի, նախկին առեւտրական եւ երկրագործական նախարար Մուսթաֆա Շերիֆ պէյ:

ՊԱՏՃԷՆ ՈՐՈՇՄՆԱԳՐԻ (գաբարնամէ)

Դատավարութեան ընթացքին, երկու կողմերու պահանջները եւ յայտարարութիւնները լսելէ եւ դատին վերաբերեալ բոլոր թուղթերը (վաւերագրերը) մանրամասնութեամբ ուսումնասիրելէ եւ քննելէ ետք, հարկ եղած տնօրինութիւնները ընելու համար կատարուած են խորհրդակցութիւններ: Թէեւ ամբաստանեալները ուրացած են իրենց յանցանքները եւ պաշտպան փաստաբաններն ալ պահանջած են անոնց ազատ արձակումը, ընդհանուր դատախազութեան ամբաստանագիր պահանջագրերով (Խիւսնամէ) Մայիս 3, Մայիս 20, Մայիս 22, Յունիս 9, Յունիս 16 եւ Յունիս 25, 1919 թուակիր, ամբաստանուած էր բարոյական անձը՝ լուծուած Իթթիհատ եւ Թերազը կուսակցութեան, բաղմաթիւ ոճրային արարքներու համար եւ այդ բարոյական անձնաւորութիւնը ներկայացնող Ընդհանուր ժողովի (Մեհլիսի Ումումի) անդամները, ըլլալով վերոյիշեալ ոճիրներու հեղինակները (ֆերայիմ ֆայիլլէրի), ատոնց համար պահանջուած էր դատավարութիւն կատարել եւ պատիժներ որոշել:

Նախ եւ առաջ անհրաժեշտ նկատուեցաւ քննութիւն կատարել: Վերոյիշեալ կուսակցութեան (ֆեմիլէթ) դատի քննութեան համար, ուսումնասիրել յիշեալ կուսակցութեան հաստատումէն ի վեր կատարած բոլոր գործերը եւ շարժումները. յեղափոխութենէն (1908) առաջ՝ կարգ մը անձերու հայրենասիրական գզացումները եւ նպա-

(*) Հաս շեմ յիշուած անունները արդարութեամբ ոմրագործ մախարաք իպրահիմի, կրթական մախարաք ոմրագործ Շիւքրիի եւայլմ: Դատարանը էմվէրը եւ ձեւալը «փաշայի տեղ շեֆնետի» կոչած է, երկուքն ալ զինուորական ասպարէզէն վնասուածներ (սիլըր սաքերիէտէն մագրուս):

տակները եւ կազմակերպութիւնները տակաւին այսօր իսկ դադարի կը մնան: Միայն յեղափոխութենէն ասդին տեղի ունեցած շարժումները եւ գործերը հետեւեալ կերպով կ'ամփոփուին.—

Օսմանցիները, որ արդարութեան եւ ազատութեան ծարաւն ունէին, 1324 (1908) Յուլիս 9ին Ռեսնէի լեռները բարձրացան պայքարելու ազատութեան համար:

Ազատութեան եւ արդարութեան ծարաւի օսմանցիներու համար 1324 (1908) Յուլիս 9ի օրը Ռեսնէի լեռներէն ժայթքած ոգեւորութիւնը ազատութեան զուլայ ջուրն էր, որ մեզի եկաւ երկինքէն իջածի նման: Եւ այն համոզումը գոյացաւ, թէ ատիկա միակ դարմանն էր հարստահարութեանց եւ անիրաւութեանց դէմ եւ, միութարական ոգիով մը լեցուած, այդ աղաղակներուն մինչեւ իրենց բնական վիճակի մէջ մտնելը, որեւէ կողմէ արգելք չեղաւ անոնց ազդեցութեան եւ ծաւալման դէմ: Եւ անոնք աղատ ձգուեցան, անոնց բոլոր շարժումներուն դիւրութիւններ տրուեցան ամենայն անկեղծութեամբ եւ հաւատարմութեամբ: Եւ երբ բնականոն պայմանները կը ստեղծուէին, օսմանեան ընդարձակ երկիրներուն մէջ ամէն կողմ յոյսեր կային արդարութեան եւ ազատութեան հաստատումին մասին: Երբեմն քաղցր աղաղակներ կը լսուէին եւ անոնց ուժերը կը զօրանային:

Բայց, անցնող ժամանակին հետ, անոնց գործած քաղաքական սխալներուն հետեւանքով, օսմանեան երկիրներուն շատ մը մասերը մէկ առ մէկ, պատրուակներով, ձեռքէ կ'ելլէին: Եւ հին ռեժիմին սխալները ցոյց տրուելով, ջանքեր կ'ըլլային որ այդ սխալները սրբապրուէին: Վնասները իրարու յաջորդեցին եւ իտալական ու պալքանեան պատերազմներու հետեւանքներէն ետք, բաւական ժամանակ անցնելէ ետք իսկ, երկրի վարչական բարեփոխման մասին մէջտեղ չեկաւ ուղեգիծ մը հետապնդելու սկզբունք մը: Եւ ադէտին պատճառները երեւան հանելու համար լուրջ ձեռնարկ մը չեղաւ: Յուսացողները յուսախաբ եղան: Եւ ազատութեան ծարաւիները վշտի եւ մտատանջութեանց մատնուեցան: Եւ ազգային բարօրութեան համար գործել կարծուածներուն մէկ մասը անձնատուր եղաւ անհատական ցանկութիւններու եւ բոլորովին սխալ ճամբու հետեւեցաւ: Եւ «Ազատութեան ծարաւի ենք» աղաղակողներուն մէկ մասը այնպիսի պարմանալի գործեր բրաւ, որ երկիրը աւերման ու հեղեղի մատնեցին, երկիրը ցամփեցուցին եւ ցաւալի դրութեան ենթարկեցին: Եւ անոնց մէջ եսասիրութիւն երեւան եկաւ եւ անխորհուրդ քայլերով շիտակ նամբէն շեղեցուցին կառավարութիւնը (հիւքիւմէթի չըղըր-

տան չըղարարլար), արտաքնապէս՝ իրր թէ օրինապահութիւն ընելու երեւոյթին տակ, ներքնապէս իրարու յաջորդող խաբէրայութիւններով կարգ մը մարմիններ մէջտեղ բերին եւ զաւանդուեցան մէջ եղած մասնաճիւղերը ձեռք առին կառավարութիւնը եւ այսպէս՝ ամբարպնդուած եւ զօտեպնդուած, իրենց որոշումներուն ենթարկեցին նախարարաց խորհուրդը: Եւ այդ րրին իրենց ընդհանուր ժողովներուն մէջ մտցնելով զանոնք եւ յաջողցուցին իրենց նպատակները:

Երմտական նախարար ձաւիտ պէյին, Երեսփոխանական Ժողովի Նրդ յանձնախումբին (մեհլիսը մեպուսան պեշիմեհի շէօպէ), ինչպէս արձանագրութեան մէջ գրուած է, Հոկտեմբեր 24-26, 1918 (1334)ի յայտարարութիւններէն կը ճշդուի, թէ Իթթիհատ եւ Թեբազը կուսակցութեան զործադիրը ազգին եւ երկրին ճակատագրին մասին իրր թէ անսխալ եւ յանդուպն քայլեր առեր է, եւ ինքնազուխ պատերազմ յայտարարած է, առանց նոյնիսկ նախարարաց խորհուրդին որոշման ենթարկելու, զոր անհրաժեշտ չէ գտած, մինչդեռ նոյնիսկ թագաւորները ինքնազուխ չեն կրնար պատերազմ յայտարարել:

Այդ ձեւով գործերու ղեկավարութենէն լաւ բան մը դուրս չէր կրնար գալ: Այդ պարագան ամէն մարդ հասկցած էր:

Մինչեւ այն ատեն ընդդիմադիրները, որոնք յարգանք կը տածէին Իթթիհատ կուսակցութեան (մեհլիսիսիմ) հանդէպ եւ սկիզբէն անոր օժանդակած էին, սկսան քննադատել:

Յեղափոխութենէն ետք, անհրաժեշտ նկատուած էր պատերազմական վիճակ յայտարարել, անոնք պատերազմական վիճակ հրատարակեցին առանց զաղարի, մշտատեւ կերպով եւ Բարձրագոյն Դրան վրայ հաւաքարար յարձակում գործեցին խուժանով մը, որ ղեկավարուած էր կուսակցութեան ղեկավարներուն կողմէ: Պատերազմական նախարար Նազրմ փաշան եւ անոր թիկնապահը սպաննուած էին եւ տապալած Քեամիլ փաշայի դահլիճը: Կազմեցին Իթթիհատ թերապրական դահլիճ մը: Ատկէ ետք, պաշտօնանկ ըրին դահլիճներու մէջ փորձառու եւ պատուաւոր անձերը եւ անոնց տեղը դրին իրենց կուսակցութեան պատկանողները: Հասաւ բոպէ մը՝ բրոնապետութեան օրերը փնտռելու: Ամէն ոք սկսաւ բողոքել կամայականութեան եւ բռնապետութեան դէմ:

Դեռ աւելին՝ շատ աւելի մեծ սիւնաւորութիւններ ստեղծեցին ոչ-իսլամ տարրերու դէմ եւ մասնատրապէս հայ ազգին, որ մեր մեծարժան սահմանադրութենէն (միշրութիյէթը միւպաճճէլէ) արդարութիւն եւ խաղաղութիւն կը յուսար, կեղծութիւնը (ատէմը ի-

սապէթի) հասկցաւ. իրենց նախկին ազգային յոյսերուն արդիւնաւորման առիթին սպասելու դիրք առին եւ ստոր պատմաւոր իրենք (Իթթիհատականները) եղան: Եւ զանազան տարրերու միջեւ, նոյն իսկ իսլամներուն միջեւ, ցեղային եւ ազգային խնդիրներ յարուցին, երկպառակութիւն եւ պաղուծիւն յառաջ բերին եւ օսմանեան միութեան վնասեցին: Այս բոլորը կատարուած քննութիւններով եւ ուսումնասիրութիւններով հաստատուած են, ինչպէս կ'երեւի ընդհ. դատախազի պահանջագրերու (իտտիանամէ) բովանդակութենէն:

Պատերազմական ատեանը ճշդած է հետեւեալ 5 կէտերը, զոր կարելի չէ ուրանալ (ետ մղել) կամ պահանջագիրը դադրեցնել (ոչ ընչացնել):

Այդ իրողութիւնները կը վերաբերին Իթթիհատ - Թերագզըի գործած մարմնին, կուսակցութեան բարոյական անձին (շախսը մանելի), անոր(*) վերագրուած անհատական ոճիրները արատաւորած են այդ կուսակցութեան անունը: Այդ մասին բոլորս (դատաւորները) խղճով համոզում գոյացուցած ենք:

Հետեւաբար, այդ կերպով մէջտեղ բերուած յիշեալ ոճիրները կարելի չէ բոլոր անդամներուն վերագրել(?): Այդ ոճիրներուն մասնակից եղող անձերուն մասնակցութեան չափին համաձայն, անհրաժեշտ արդարութեան համար օրինական կարգադրութիւններ պէտք է ընել:

Պաշտպան փաստաբանը իր պաշտպանողականի միջոցին յայտնած էր, թէ սահմանադրական ռեժիմի տակ անհրաժեշտ եղած է քաղաքական կուսակցութիւններու գոյութիւնը եւ թէ այսօր ալ մեր երկրին մէջ տակաւին գոյութիւն ունին ուրիշ կուսակցութիւններ: Մասնաւորապէս «Հիւրիյէթ եւ Իթիլաֆ» կուսակցութիւնը, որ Իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան նման ունի կեդրոն, Ընդհանուր ժողով եւ մասնաճիւղեր, ու ժողովի կանչած են իրենց անդամ նախարարները:

Որոշակցութիւններէ ետք յայտնուած է, որ, արդարեւ, Սահմանադրութիւնով կառավարուող կառավարութիւններուն մէջ կուսակցութիւններու եւ իմբակցութիւններու գոյութիւնը անհրաժեշտ է, բայց ատոնք կառավարութեան գործադիր իշխանութեան վերաբերեալ գործերու բնաւ չեն միջամտեր: Իրենց ազգային ժողովներու մէջ մեծամասնութեամբ իրենց նպատակները որոշելէ ետք,

(*) Սխալ է: Յանգուորը մի միայն իթթիհատի գրառոյցով անձը չէ: Անոր կողմէն մասնակից է ոճիրներուն բարբ ժողովուրդին մեծ մասը:

ազատ ձգած են իրենց վստահութիւնը վայելող նախարարները, ասոնց յայտնելիք կարծիքներուն եւ քուէներուն մէջ:

Միայն թէ կը ջանան որ վաւերացուելիք նոր օրէնքները համաձայն ըլլան իրենց ծրագիրներուն եւ այդ ուղղութեամբ կ'աշխատին: Ատկէ զատ ուրիշ բաներու չեն խառնուիր եւ այն նախարարները, որոնց քայլերը յարմար չեն նկատեր, ոչ թէ սպառնալիքով, այլ անվստահութեան քուէ տալով կը ջանան հրաժարեցնել: Ատկեալ բնական բան մըն է:

Գալով մեր երկրին մէջ եղած կուսակցութիւններուն, մինչեւ որ Ազգային Ժողովը գումարուի, մեծամասնութիւն կազմող կուսակցութիւնը իր շնորհած կառավարութեան գործադիր իշխանութեան վրայ ունէ ազդեցութիւն, միջամտութիւն չի կրնար ընել, իսկ եթէ օրէնքը անտեսելով կառավարութեան օրինական ձեւը փոխելու ըլլայ՝ վերջաւորութիւնը կ'ըլլայ նոյնը՝ այս վիճակը: Այս կառավարութեան զանազան փուլերուն նայելով, պաշտպան փաստաբանին այդ բացատրութիւնները, պաշտպանողականին վերաբերեալ, ոչ մէկ արժէք կը ներկայացնեն:

Մեր (դատարանին) նշած 5 կէտերը հետեւեալներն են. —

1. — Պատերազմական Ատեանի առջեւ տեղի ունեցած դատաւարութեան արդիւնքէն յայտնի եղաւ, որ ՏՐԱՊԻՉՈՆԻ (Վիլայէթի), ԵՈՉԿԱԹԻ (սանճագի), ՊՈՂԱՉԼԱՅԱՆԻ (զազայի) մէջ կատարուած ջարդերը Իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան ղեկավարներուն (Էրֆեան) կողմէ(*) կազմակերպուած եւ գործադրուած են:

Ամբաստանեալներու պաշտպանութեան ընթացքին, ինչպէս հաղորդուեցաւ, իբր թէ վերոյիշեալ ոճիրները գործուելէն ետք միայն լսեալ են լուրը(?): Նոյնիսկ եթէ այդպէս ալ ենթադրուի, դարձեալ, ոճիրները լսելէն ետք իսկ, անոնց կրկնութիւնը արգելելու եւ առաջին ոճիրները գործողներուն վերաբերմամբ ոչ մէկ կարգադրութիւն եղած է(**):

2. — Իթթիհատի ընդհանուր նախագահ (սատրապամ) վարչապետ Սայիտ Հալիմ փաշան, զօրաշարժի յայտարարութեան առաջին օրը, իր ծովկզերեայ բնակարանը հրաւիրած է Ընդհանուր կեդրոնի անդամները (Մերֆէզը Ումումի) եւ յայտնած է անոնց, որ պատե-

(*) Նոյնքան յանցաւոր են բարբ զինուորը, ժամտարմը, գիւղացիք եւ չեթէները:

(**) Դատարանը քեթեւ մը վրայէն կ'ամցնի 1,5 միլիոն անձերու սպառնալիքով եւ 5 միլիոն տուրքի վճարում:

րագմի մասնակցութիւնը շատ վտանգաւոր է եւ պետութեան համար
ամենէն օգտակար ուղղութիւնը չկորսութիւնն է (*): Բացատրու-
թիւն եւ ապացոյցներ տուած է, սակայն չէ կրցած համոզել զանոնք:
Պատերազմի մասնակցած են, երեսփոխանական ժողովի յաջորդա-
կան արձանագրութիւններէն յայտնի է: Իթթիհատ Թերազը կու-
սակցութեան պատասխանատու ներկայացուցիչներէն Րիզա պէյ
գատափարութեան ընթացքին ճշգրտ է, թէ Տրապիզոնի մէջ կազմա-
կերպուած չեքէները պատերազմի յայտարարութենէն առաջ իսկ
մտած են ռուսական իող եւ յարձակումներ գործած են: Այդ պարա-
զան խոստովանուած է: Պատերազմը նախարարաց խորհուրդի որո-
շումով որոշուած է, թէ եւ պատերազմ յայտարարուած է: Այս իրո-
ղութենէն ետք է, որ ելեւմտական նախարար Ճաւիտ պէյ, հանրո-
ղուտ չի՞ ութեանց նախարար Չիւրիւք Սուլու Մահմուտ փաշա, փո-
թի եւ հեռագրի նախարար Ռսկան էֆենտի եւ առեւտրական նախա-
րար Սուլէյման էլ Պուսթանի էֆենտի հրաժարած են: Այս իրողու-
թիւնը կը հաստատէ նաեւ, որ պատերազմը յայտարարուած չէ նա-
խարարաց խորհուրդին որոշումով, այլ Իթթիհատ եւ Թերազըրի
կողմէ զուսպարար որոշուած եւ անոնց կամքով միայն յայտա-
րարուած է:

3.— Նախկին վարչապետ Ահմէտ Իզզէթ փաշայի արձանագրու-
ած վկայութիւններէն կը ճշգրտի, որ անոր պատերազմական նա-
խարարութենէն հրաժարուած Իթթիհատ կուսակցութեան միջամը-
տութեամբ եղած է եւ առաջ եկած է անոր ընդդիմադրութենէն:

4.— Իթթիհատ եւ Թերազըրի Կ. Պոլսոյ կեդրոնը, պարենա-
ւորման գործերը կուսակցութեան Ընդհանուր Քոնկրէի մէջ թըշ-
դուած Բլլալով, իր ներկայացուցիչ Քեմալ պէյի միջոցով կազ-
մակերպած է գործը: Նախ առեւտրական մարմին մը ստեղծ-
ուած է եւ կարգ մը ընկերութիւններու եւ խմբակցութիւններու գոր-
ծերը ձեռք առած են, ժողովուրդին ունեցած-չունեցածը ձեռքէն խը-
լած են: Հանրային հաստատութիւնները փոխանցած են սահմանա-
փակ քիւով մասնաւոր անհատներու եւ վերոյիշեալ ընկերութիւննե-
րուն բազմաթիւ օսմանցիներու (սնունդի պակասէն) հիւանդ եւ ան-
զամարյժ Բլլալուն պատճառ եղած են, շատերը մահացած են: Ար-
դիւնքի տեսակէտով, նուազեցուցած են պետութեան պաշտպանու-
թեան ուժը: Իթթիհատ եւ Թերազըրի Կ. Պոլսոյ կեդրոնը միջամտած
է կառավարական պարտականութեանց եւ այդ հաստատուած է 1916ի

(*) Իմ յոյսով Ե. Յ. Գ. Պ. Քիւրթապէն էր:

(1332) Քոնկրէի մէջ եւ հոն ներկայացուած տեղեկագրի պարունա-
կութիւնը զնահատանքով ընդունուած է:

Այդ մասին բացատրութիւն ուղղուած է եւ քաղաքապետութիւ-
նը գրաւոր պատասխանած է, որմէ ամէն ինչ պարզուած է:

5.— Շէյխ իւլ Իսլամ Մուսա Քեազիմ էֆենտին, Մերակոյտին
մէջ երբ խորհրդակցութիւնը կը կատարուէր կրօնական (չերիփ) դա-
տարանները փոխանցելու համար արդարութեան նախարարութեան,
եղած հարցումին պատասխանելով ըսած էր հետեւեալը.— «Իմ ֆուէս
մի՛ հարցնէք: Կուսակցութիւնը (Փրոգրա) այդպէս կ'ուզէ, ուրեմն
այդպէս ալ պէտք է ըլլայ»: Դատափարութեան ընթացքին վերոյիշեալ
պարագան բացատրուած եւ հասկցուած է:

Այդ կը նշանակէ, որ Իթթիհատ կուսակցութիւնը կը միջա-
մտէր:

Վերոյիշեալ հինգ կէտերը ծանօթ էին բոլորին: Եւ ուրիշ խըն-
դիրներ ալ, որոնց հետեւանքները տեսնուեցան: Պետութեան կարեւոր
խնդիրներուն շուրջ առիթ տրուած չէ դահլիճի անդամներուն իրենց
քուէով եւ խորհուրդով վճռելու: Միջամտութիւններ եղած են ի-
րենց մասնաւոր ջանքերուն եւ նպատակներուն ծառայեցնելու հա-
մար պետութիւնը եւ ասոնք փաստուած են:

Օսմանեան կառավարութեան օրինական ձեւը այն էր, որ երեք
իշխանութեանց բաժնուած էր ան.— Օրէնսդիր, գործադիր եւ դա-
տական: Ան (Իթթիհատը) այդ երեք ուժերէն զերիվեր, չորրորդ ուժ
մը մէջմտել ըրած էր, սպառնալիքի ուժ մը, եւ չարափոխած էր կա-
ռավարութեան ձեւը:

Վերոյիշեալ ոճիրները գործողներն են՝ Իթթիհատ եւ Թերազըր
կուսակցութեան բարոյական անձը ներկայացնող (չախսը մանեւիսի
թեմսիլ էտէն) Ընդհանուր ժողովի անդամները, փախստականները,—
վարչապետ Թալէաթ փաշան եւ պատերազմական նախարար ու զին-
ուորական ասպարէզ վոնտուած էնվէր էֆենտի եւ ծովային նախա-
րար, նոյնպէս զինուորական ասպարէզ վոնտուած ձեմալ էֆենտին,
կրթական նախարար տոքթ. Նալըմ զլխաւոր ոճրագործները ըլ-
լալով (Փայիլը աւլի) իրենց յանցաւորութիւնը որոշուած է, եւ նոյն
ժողովի անդամներէն ելեւմտից նախարար Ճաւիտ պէյ եւ առեւտրա-
կան ու երկրագործական նախարար Մուսթաֆա Շերիֆ պէյ մեղ-
սակիցներ (Փերէն զի մետլետլ) ըլլալին հաստատուած է: Եւ նոյն
կերպով ասոնց ալ յանցաւորութեան մասին միաձայնութեամբ վճիռ
տրուած է: Դարձեալ, նոյն ժողովի անդամներէն եւ ամբողջ դատա-
վարութեան ներկայ եղող Շէյխ իւլ Իսլամ Մուսա Քեազիմ էֆենտին,

որուն ի նպաստ խօսած են պաշտպան փաստարանը եւ ընդհանուր դատախազը, անոր առաքինութիւններէն, նկարագրէն, եւ մեծ գիտուն մը ըլլալով իր յայտնի յատկութիւններէն ճառած են, եւ չեն երեւակայեր իսկ, թէ ան մասնակից կրնայ ըլլալ գործուած ոճիրներուն: Սակայն, Յեղափոխութենէն ի վեր ան կուսակցութեան կարեւոր անդամներէն մին եղած է եւ ընդհանուր դատախազի եւ պաշտպան փաստարանի մը նման բարձրագոյն ուսում ստացած անձերն իսկ համոզած է իր անմեղութեան մասին:

Մինչդեռ, բաւարար ուսում չունեցող եւ տգէտ ժողովուրդին մէջ կուսակցութեան գործերը բանաւոր եւ օրինական ձեւով ներկայացուցած է ան, եւ ջանք չէ ըրած, արգելք չէ եղած սրբազրելու սխալ կարծիքները (զիւմ վէ գեհապ): Յետ դատաւարութեան տեսնուեցաւ, որ ան իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան գիտական եւ կրօնական գործերը վարած է եւ Շերը Շերիֆի՝ (ազնիւ իսլամ կրօնական օրէնքին) հակառակ գործեր կատարած է, խորհուրդներ (մեւրգա) տուած է, ու թէեւ ըսած է, որ իր տուած խրատները պատշաճ չէին, սակայն դանոնք արգելելու ձեռնարկ մը կատարած չըլլալը խոստովանած է, եւ դարձեալ ըսած է, որ իթթիհատ եւ Թերագզը կուսակցութենէն ելլել՝ կը նշանակէ իսլամութենէ հրաժարիլ. նման ըմբռնումներ չեն համաձայնիր անոր առաքինութեան կամ կատարելութեան հետ: Նման մըտադրութիւն մը ցոյց տալը իր յանցանքը ծանրացնող պատճառ մըն է: Յիշելին հարցաքննութեանց եւ քննութեանց ընթացքին տեսնուած է, որ ան կուսակցութեան գիտական ճիւղին մէջ շատ զբաղած ըլլալով, վերոյիշեալ ոճիրները կազմակերպող գլխաւոր ոճրագործներուն (միւրթեֆիպը ալի) մէջ չգտնուելով մեղսակից է միայն (Փերէն գի մետխէլ) եւ այդ կերպով ալ իր յանցաւորութիւնը հաստատուած է միաձայն որոշումով եւ իր հանգամանքը եւս երկու երրորդի քուէով որոշուած է:

Մերակոյտի նախկին նախագահ Րիֆաթ պէյին մասնակցութիւնը իթթիհատ եւ Թերագզը կուսակցութեան հաստատուած չէ, եւ մասնակից ալ եղած չէ կատարուած ոճրային արարքներուն: Միաձայնութեամբ որոշուեցաւ անոր ազատ արձակումը, պայմանաւ որ ուրիշ պատճառով մը բանտարկուած չըլլայ:

Փոսթի եւ հեռագրի նախկին նախարար Հաշիմ պէյ Պերլին կը գտնուէր, երբ առանց իր հաւանութիւնը ստանալու ընտրուած է նախարար եւ Կ. Պոլիս վերադառնալէ ետք, հակառակ իր մերժումին,

նշանակուած է նախարար: Իր նախարարութեան շրջանը զուգարիպած է իթթիհատական նախարարական խորհուրդի վերջին տարիներուն եւ միայն երեք անգամ ներկայ եղած է իթթիհատի ընդհանուր ժողովներուն, ուր կանոնադրէն դուրս որեւէ այլ խնդրով զբաղած չեն: Ան անձամբ մասնակցած չէ խորհրդակցութեանց, այլ եղած է միայն ունկնդիր: Իր այդ յայտարարութիւնը կը հաստատուի կատարուած քննութեամբ: Հետեւաբար, անոր եւս ազատ արձակումը որոշուեցաւ մեծամասնութեամբ, սլայմանաւ որ ուրիշ խնդրով մը ձերբակալուած չըլլայ:

Պատիժներու վճռին դալով, յիշեալներէն Թալէաթի, Էնվերի, Ճեմալի եւ տոքթ. Նազըմի արարքները մեծագոյն յանցանքը ըլլալով, կայսերական քաղաքային (միլիթէ) Պատժական օրինազրքի 45րդ յօդուածի առաջին պարբերութեան համաձայն, եւ Ճաւիտ, Մուսթաֆա Շերէֆ եւ Մուսա Քեազիմ նոյն յօդուածի երկրորդ պարբերութեան եւ նոյն օրինազրքի 55րդ յօդուածի վերջին պարբերութեան համաձայն կը պատժուին: Այդ յօդուածներն են.—

«... Բազմաթիւ անձեր, երբ ոճիր մը կամ յանցանք մը միասնաբար կը գործեն եւ կամ, բազմաթիւ արարքներէ բաղկացած ոճիրի մը կամ յանցանքի մը մէջ, բազմաթիւ անձերէն իւրաքանչիւրը, ոճիրը գլուխ հանելու նպատակով, այդ արարքներէն մին կամ մի քանին կը գործէ, այդ անձերը ոճիրի մասնակից (եւմ ֆիյլը) կը կոչուին եւ բոլորն ալ իր գլխաւոր առանձին ոճրագործներ կը պատժուին»:

«Սահմանադրութեան եւ կառավարութեան ձեւն ու ինքնութիւնը կամ սուլթանութեան գահաժառանգութեան ձեւը չարափոխելու կամ այլափոխելու եւ կամ բռնի սպանութեան փորձ մը կատարելու պարագան երբ հաստատուի, մեղադրեալ անձը մահուան կը դատապարտուի»:

«Ոճիրի մը կամ յանցանքի մը մեղսակիցները (Փերէն գի մետխէլ), եթէ օրէնքի բացառութեան մը ենթակայ չեն, հետեւեալ կերպով կը պատժուին.— Եթէ գլխաւոր ոճիրը գործողը մահուան դատապարտուած է կամ մնայուն կերպով տաժանակիր աշխատութեան, օժանդակ-մեղսակիցները (Փերէն գի մետխէլ), տասը տարիէն պակաս չըլլալու պայմանով, ժամանակաւոր տաժանակիր աշխատանքի պատիժին կը դատապարտուին»:

Վերոյիշեալ պարբերութեանց համաձայն, Թալէաթ, Էնվեր, Ճեմալ եւ տոքթ. Նազըմ կը դատապարտուին մահուան: Եւ,

Ճաւիտ և Մուսթաֆա Շերէֆ և Մուսա Քեազիմ 15ական տարիով տաժանակիր աշխատանքի կը դատապարտուին: Եւ,

Փախստականները կը զրկուին քաղաքացիական իրաւունքներէ եւ անոնց սեփականութիւնները արզելքի տակ զրուելով օրինական ճամբով կը զրաւուին:

Յիշեալներէն Բիֆտաթ և Հաշիմ պէյերը ազատ կ'արձակուին, պայմանով որ իրենց ազատ արձակումը արգելք չհանդիսանայ այն պարագային, երբ Բարձրագոյն Ատեանը ուղէ դատել զանոնք, իրենց պաշտօնին վերաբերեալ զործերու առթիւ: Եւ,

Փոստի նախկին նախարար Օսկան էֆենտի և առեւտրական նախարար Սուլէյման էլ Պուսթանի էֆենտի բաւական ժամանակ առաջ Եւրոպա մեկնած են. կատարուած քննութիւններէն հաստատուած է, թէ անոնք այժմ ևս ծանօթ չեն իրենց զրկուած հրաւիրագրերուն, և եթէ նոյնիսկ տեղեակ ըլլային, իրենց վերադարձը հաւանական չէր. հետեւաբար անոնց դատերը կը մեկուսացուին:

Այս վճիռները տրուած են միաձայնութեամբ, ի բացակայութեան՝ Թալէաթ, Էնվէր, Ճեմալ և տոքթ. Նազըմ, Ճաւիտ, Մուսթաֆա Շերէֆ, Օսկան և Սուլէյման էլ Պուսթանի էֆենտիներու,

Եւ ի ներկայութեան Բիֆտաթ, Հաշիմ պէյերու և Մուսա Քեազիմի:

Յուլիս 5, 1919 (1335), 6 Շէվվալ 1337:

Ստորագրութիւններ.—

Պատերազմական Ատեանի նախագահ, սպայակոյտի Ֆերիզ (զօրավար) Մուսթաֆա Նազըմ Պիմնի Ահմէտ

Պատերազմական Ատեանի անդամ, սպայակոյտի միրլիւա (զօրավար) Ալի Նազըմ

Պատերազմական Ատեանի անդամ, հետեւակազօրաց գնդապետ Ռեհէպ Ֆերտի Պիմնի Մեհմէտ Ալի

Այս վճռագրին համաձայն ըլլալով հանդերձ, դտնուած փաստաթուղթերու հիման վրայ, ինչպէս եւ խոստովանութիւնները նկատի առնելով, ամբաստանեալներէն Հաշիմ պէյը ևս օժանդակ-մեղսակից կը նկատեմ, անոր ալ յանցաւոր ըլլալուն համոզուած եմ եւ քուէ տուած եմ:

(Ստորագրութիւն) Պատերազմական Ատեանի անդամներէն սպայակոյտի միրլիւա (զօրավար)

Մեհմէտ Զէֆի

Մուսթաֆա Քեազիմ էֆենտիին խոստովանութիւնները նկատի առնելով, յիշուած պարագաներուն, Մերքէյը Ումումիին ոճիրներուն մեղսակից չըլլալուն համաձայն եմ թէ եւ, սակայն ան՝ իր կրօնական և զիտական պարտականութիւնները ծառայեցուցած է Ընդհանուր Կեդրոնի ոճիրները ծածկելու և ոչ մէկ արգելք դրած է շարագործութիւններուն. իր պաշտօնէն չէ հեռացած, հետեւաբար ան ևս զլիաւոր ոճրագործներէն մին է: Հաշիմ պէյ ևս, իր խոստովանութեանց համաձայն, սրտով միացած է Ընդհանուր Կեդրոնին և հաւատարիմ եղած է անոր, իր պաշտօնի ընթացքին կամ անկէ առաջ, ոչ մէկ առարկութիւն ըրած է զործադրուած շարիքներուն և ոճիրներուն և մինչեւ իր դատաւարութեան օրը Ընդհանուր Կեդրոնին ոճրագործ չըլլալուն համոզուած է: Ես կողմնակից եմ ան ալ նկատելու մեղսակից-ոճրագործ (ֆերէն զի մետիսէլ):

Ստորագրութիւն Պատերազմական Ատեանի անդամներէն, սպայակոյտի միրլիւա (զօրավար)

Մուսթաֆա Պիմնի Ազիզ, Սուլէյմանիէ

Այս դատավճռին (մագլապայը հիֆիլիէ) տակ զրուած կնիքները Պատերազմական Ատեանի անդամներուն պատկանելը կը հաստատուի

Յուլիս 5, 1919 (1335)

Պատերազմական Ատեան՝

Նազըմ

Պատերազմական Ատեանի արձանագրութեան յանձնախումբի պետ Ապիտին Տաւէր

Պետական պաշտօնաթերթ՝ «Թագվիմի վեֆայի», քիւ 3604:

Մ Ա Հ Ա Պ Ա Տ Ի Ժ

ԲԱԲԵՐԴԻ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Օգոստոս 5, 1920,

«Թերեմիմանը Հազըյգաթ» քուրբերէն քերթէն,

Կ. Պոլիս

«Նուսրէթ պէյ, որդի Պեհրամ էֆենտիի, Բարերդի դայմագամ (փոխ-կառավարիչ) եղած միջոցին, յիշեալ գազային (դաւառակ) հայերը տարագրելու հետեւանքով, դորձած է ոճիրներ, ողբերգական մարդասպանութիւններ, կատարած է սեփականութեանց յափշտակութիւններ, այդ յանցանքներով մասնակից եղած եւ տարագրութեան ատեն ճշուժներ գործադրած եւ պատճառ եղած է որ Բարերդի կառավարական դանձապահ (մալ միւտիւրի) Օվակիմ էֆենտին կախէ ինքզինքը եւ թոյնով ինքնասպան ընել տայ իր կինը եւ իր աղջիկները:

Այդ ամբաստանութիւններէն դատ ամբաստանուած է նաեւ, որ երբ Արզընիի (Տիգրանակերտի նահանգ) միթեսարըֆ (կառավարիչ) եղած էր, Տրապիզոնէն աքսորուած 24 տարեկան տրապիզոնցի Ֆիլոմէն Նուրեանը (Ալեքոյի դուստրը) բռնարարած է, եւ բռնարարած է նաեւ անոր կրտսեր քոյրը, կոյս, 12 տարեկան Նայիմէն, եւ ձերբակալուած է վերոյիշեալ ոճիրներու ամբաստանութեամբ: Ան կը բնակէր Էրէն-Քէօյի մէջ, Պաղտատ ճատտէսի տան մը մէջ: Եանհացի է եւ 44 տարեկան է:

Յետոյ եղած է նաեւ միթեսարըֆ Ուրֆայի:

Նման ոճիրներով ամբաստանուած է նաեւ Բարերդի մէջ տարագրութիւն եւ ջարդ կատարողներէն Մեհմէտ Նեմաթի էֆենտի, որ ծանօթ է Փիրէ Մեհմէտ անունով, 35 տարեկան, գինուորական տեղակալ, հրաժարած՝ գինեալ ուժերէ, կը բնակէր Էրէն-Քէօյի մէջ,

հին կայսրանին մօտերը, էմին էօնիւի մէջ, (Իսթանպուլ) Գարագաչ Նանի թիւ 10 սենեակին մէջ, առեւտուրով կը զբաղէր:

Ասոնց մասին դատարութիւն կատարուեցաւ: Բազմաթիւ դատական նիստերու մէջ մանրակրկիտ քննութեանց արդիւնքէն տեսնուեցաւ, որ յիշեալ Նուսրէթ պէյը յայտարարած է, թէ իր գազային (գաւառակին) ժանտարմարիի ուժը փոխադրուած էր թուրքիկ ժանտարմայական գունդին մէջ: Եւ մնացած 50-60 ժանտարմներով հայ տարագրեալներու կարաւանները զրկելու միջոցին, անոնց ընկերանալու համար բաւարար չըլլալուն հետեւանքով քաղաքապահ զինուորներու հրամանատարութեան դիմած եւ երեք դորձօն վաշտեր ուղած է, սպաներու ղեկավարութեամբ: Եւ խորհրդակցած է անոնց հետ, յիշեալ գունդի հրամանատարին կողմէ գինուորներէ բազկացեալ գորախումբեր եւ բաւարար թիւով ժանտարմներ ընկերացնելով 6000էն 7000 բայրուրդցի հայեր երկու կարաւանով ամբողջութեամբ եւ ապահովութեամբ հասցուցած է Երզնկա, եւ իր գաւառակին մէջ ջարդ ընաւ տեղի ունեցած չէ: Եւ հայ տարագրեալներու լքեալ գոյքերը մասնաւոր յանձնախումբի մը միջոցաւ հաւաքել եւ տոմարի մը մէջ արձանագրել տուած եւ լեցուցած է եկեղեցիներուն մէջ: Եւ ուրացած է իրեն դէմ եղած ամբաստանութիւնները:

Եւ սակայն այդ ատեն Բայրուրդի մէջ ժանտարմրիի վաշտի հրամանատար եւ այսօր ալ յիշեալ վաշտին կցեալ Խարթի մէջ զտնուող ժանտարմի տեղակալ հրամանատար Սալիհ էֆենտին կը վկայէ, որ (վկայութիւնը ստացուած է դատական յանձնախումբի մը միջոցով) (պիլ իսթիմապէ):

«Ժանտարմրիի ուժերուն մեծ մասը թուրքիկ (չարժուն) ուժերու վերածուած էր եւ պատերազմին մասնակցած էր, իսկ մնացեալ փոքր մասը հազիւ բաւարար էր փախուտականները ձերբակալելու եւ անոնց պատկանած գունդերուն զրկելու, ինչպէս նաեւ հետապնդելու ծառայութիւնը յետաձգուած գինուորացուները: Ժանտարմներու վաշտը կապակցութիւն ունեցած չէ տարագրեալներու հետ, եւ տարագրութեանց գործողութիւնները ղեկավարուած են իրզրումէն զրկուած Նեմաթի էֆենտիին կողմէ, եւ անոր հրամանին տակ գործող 30էն 40 անձերով:

Հայերու յիշեալ Նեմաթի էֆենտիին կողմէ Երզնկա զրկուած ըլլալուն եւ հոն յանձնուած ըլլալուն շուրջ ստացադիր առնուած ըլլալու կամ չըլլալու մասին որեւէ տեղեկութիւն չէ տուած:

Զօրաչարժի ընթացքին, Բայրուրդի մէջ, պարենաւորման հացագործարաններուն մէջ ծառայող եւ այժմ առեւտուրով զբաղող

Սիւրմենէի Ձեւալի գիւղէն Հասան օղլու էօմերին վկայութիւնը ըստացուած է նոյնպէս դատական յանձնախումբի մը միջոցով. ըստ այդ վկայութեան՝ «Բայրուրդի գործաւորական վաշտի (քապուռ) սպաներէն երկրորդ տեղակալ՝ Քեֆայի օղլու Քեաշիֆ, Սիւրմենի Քոճրա գիւղէն, եւ էլիբաս օղլու Սապիթ եւ ուրիշ կարգ մը անձանօթ անձեր, հայերը կարաւան առ կարաւան, թշուառ վիճակի մէջ, Բաբերդէն տարագրած են եւ տարագրողներն ալ, երկու ժամ հեռաւորութենէ մը յետոյ, տեսած են որ վերագործած են եւ նոյնիսկ կարաւաններուն մէջ գտնուած հայ մանուկներն ալ ետ բերած են Բաբերդ: Նաեւ տեսած է որ այդ մանուկները մէկ տարեկանէն հինգ տարեկան էին: Եւ ճամբաներու վրայ տարագրուած հայերուն ունեցած սեփականութիւնները եւ գրամները կողոպտելէ ետք, սպաննուած ըլլալնին լսած է»:

Եւ նմանապէս,

Սիւրմենէի Պաշ Թիւճար գիւղէն Ալի էֆենտի, որդի էսատի, դատական յանձնախումբի մը միջոցով վկայած է.

«Հայերը մէկ զիշերուան մէջ, առանց նախապէս լուր տրուելու, գալմագամ Նուսրէթ պէյի հրամանով, փոլիսներով եւ ժանտարմներով, վաշտասուններով (կիւրիւրթի եւ փաքրիքիով) առտուն կանուխ, առանց մարդկային որեւէ զգացումի, տարագրած են բոլորը, եւ անոնց սեփականութիւնները, որ մնացած էին անոնց տուններուն մէջ, Նուսրէթ պէյի հրամանով, հաւաքել տրուած եւ ծախու դրուած են: Հայերու գոյքերու փնտռութիւնները գործին մէջ վկան (Ալի էֆենտի) երկու օր թէեւ պաշտօնեայ եղած է, բայց տեսնելով կատարուած անիրաւութիւնները եւ զեղծումները, չդիմանալով այդ արարքներուն, հրաժարած է: Յիշեալ Նուսրէթ պէյը, էրզրումի վալի Թահսին պէյին բարեկամն ըլլալով, օրէնքին հակառակ ամէն տեսակ արարքներ կատարելէ ետ չէր կենար: Եւ Բայրուրդի հայերուն (15 օրուան մէջ) տարագիր կարաւանները զրկուած էին եւ անոնց ընկերացած էին ժանտարմներ, զինուորներ, պաշտպոզուքներ (խուժան) եւ ինք լսած է որ անոնք ճամբաներուն վրայ սպաննուած են: Անոնց մեծ մասին սպաննուած ըլլալու մասին ինքը յիսկատար համոզում գոյացուցած է: Եւ Նուսրէթ պէյը 150ի շափ որբացեալ աղջիկ եւ մանչ փոքրիկներ բերած լեցուցած է Պին Պաշի Խան կոչուած տեղը եւ թուրք ժողովուրդին ծանուցած է, որ երթան եւ իրենց ուզած տղաքը կամ աղջիկները ընտրեն եւ առնեն: Յետոյ, գարձեալ Նուսրէթ պէյը, իսլամներուն քով գտնուած (հայ որբերը) նորէն հաւաքել տալէ ետք՝ տարագրել տուած է»:

Հսելով Պաշպիտի միւթեսարըֆ վեքիլը (փոխ-կառավարիչ), որ նախապէս գալմագամ եղած էր Բայրուրդի, Ձիա պէյ հետեւեալը վկայեց.

«Բաբերդի տարագրութիւնը եւ ջարդը կատարողներն եղան հոն եկող Սատտի պէյը, որ ծերակուտական Ահմէտ Բիգա պէյին քրորջը որդին եւ ծերակոյտի քարտուղարներէն մէկն է ու պահեստի զինուորական տեղակալ էր: Անոր հետ էր նաեւ Փիրէ Մեհմէտ կոչուած Նեճաթի էֆենտին, եւ լսած է որ ջարդերը ղեկավարողներէն էին անոնք»:

Էրզրումի ժանտարմա ալայ գոմանտանի (գնդապետ) Ատիլ պէյը վկայեց, որ Բաբերդի հայերուն տարագրութիւնը կատարողը էրէն-Քէօյի մէջ այսօր կառքերով գրոսապոտոյո ընող յիշեալ Մեհմէտ Նեճաթի էֆենտին էր, որ 24 ժամուան մէջ ժողովուրդը դուրս հանել տուաւ եւ Բաբերդէն երկու ժամ հեռաւորութեան վրայ, Տէյիք-մէն կոչուած վայրին մէջ, Թեշիլպար Մախսուտէի զինուոր-չեթլներուն հետ յարձակած եւ սպաննած է գանոնք: Ինքը, իր պաշտօնին բերումով, քննութիւն կատարած է, ստուգած եւ Բաբերդի ժանտարմայի հրամանատարութենէն պատասխան ստացած է եւ այդ տեղեկութիւնները հաղորդած է վալի Թահսին պէյին: Եւ Թեշիլպար Մախսուտէի սպաներէն ու Իթթիհատ Թերազզըի Ընդհ. Կեդրոնի անդամներէն այդ ատեն էրզրում գտնուող տղթ. Պէհմէտին Շաքիրը, յիշեալ Ճեմէլէթին (կուսակցութեան) էրզրումի «մուրախասար մեսուք» (պատասխանատու ներկայացուցիչը) եղող Հիլմին, Ահմէտ Բիգա պէյի քրոր որդին՝ տեղակալ Սատտի եւ յիշեալ Նեճաթին եւ անոնց հետ եղած կարգ մը անունները ծանօթ անձեր են:

Նուսրէթ պէյ ինքը յայտարարած էր, թէ չէ ընդունած եւ փոխած է յիշեալ Նեճաթին եւ հայ տարագիրներու կարաւանները, զինուորներու եւ ժանտարմներու հսկողութեամբ, ապահով կերպով Երզնկա զրկած է:

Սակայն այդ բաժնիները ճշմարտութեան հակառակ են:

Այդ կարաւաններուն եւ Բաբերդի շրջանի հայերուն սպանութեանց մասին այդ ատեն Բայրուրդի մէջ գանուող զօրաբաժնի փոխ-հրամանատար (Ֆրիքա գոմախտան վեֆիլի) եւ զինուորական ճիւղի ու շինութեանց գործերու նախագահ փոխ-գնդապետ Մեհմէտ Ալի պէյի վկայութեան համաձայն, Բաբերդի հայերուն՝ յիշեալ Նեճաթի կողմէ տարագրուելը լսած է եւ վերին մարմիններուն հաղորդած է. յիշեալ Մեհմէտ Նեճաթի էֆենտին ալ վերջերս փախած է եւ այժմ փախստական վիճակի մէջ է:

Նմանապէս, Պատերազմական Ատեանին առջեւ, ամբաստան-
եալներու ներկայութեան լսուած են նաեւ տիկիւններ Շահանիկ (Սա-
թենիկ) եւ Աղաւնի, Վարսենիկ եւ Արմենուհի, նաեւ Պաշտօնը Սե-
ֆերեան Էֆենտին եւ Համարաձում անուն պատանին, որոնց վկայու-
թեան համաձայն՝ Նուսրէթ պէյր չեթէներու ղեկավար եղած էր եւ
Բայրուրդի մօտ գտնուող Պին Պաշի խանին եւ Հինտի խանին մէջ,
ինչպէս նաեւ այլ վայրերու մէջ, չեթէներով միասին, կարաւաննե-
րուն հետեւած եւ ընկերացած է ու մտրակով հարուածելով տարա-
զիրները, անոնցմէ դրամ պահանջած է: Եւ ջարդերու կատարման
միջոցին ալ ներկայ գտնուած է եւ ժանտարմներուն հետ զեղեցիկ
աղջիկները յափշտակած ու տարած է:

Յիշեալ վկաները ստուգած են Նուսրէթին ինքնութիւնը:

«Կատարուած պաշտպանողականին էութիւնը ստուգելու հա-
մար պէտք է աւելցնել, թէ բազմազան վայրերու մէջ տեղի ունեցած
ողբերգական ջարդերու շուրջ մինչեւ հիմա Պատերազմական Ատ-
եանին կողմէ կատարուած դատավարութեանց եզրակացութիւնը ե-
ղած է այն, թէ յիշեալ ոսիրները, նախ եւ առաջ, իր քիսատ եւ Թե-
րագըր Գեմիլէթին Ընդհանուր Կեդրոնին մէջ կանխամտածուած եւ
որոշուած են: Յիշեալ Կեդրոնի անդամներէն տաքոյր Պէհաէտտին
Շաֆիր արիւնոուշտ անձին նախագահութեամբ եւ Թեշքիլաթը Մախ-
սուսէ անունը կրող խմբակցութեանց կողմէ կարգ մը ամենաստորին
եւ ամենավարճ չեթէներ մէջտեղ բերած են եւ վերոյիշեալ որո-
շումները, մասնաւոր մեմուրներու (պաշտօնեաներու) միջոցով, գա-
ւառներու պետերուն եւ պաշտօնեաներուն հաղորդուած են եւ անոնց
մեծամասնութեան հաւանութիւնը ստացուած է. այդ վայրենու-
թեանց համարիտ չեղող Եոզկաթի միւթեսարըֆ (կառավարիչ) ձե-
մալ պէյր, Քասթեմունիի վալի Բեշիտ փաշան եւ այլ յայտնի ու-
րիշներ եւ հայրենասէր պաշտօնեաներ պաշտօնանկ ընելով, անոնց
տեղը իրենց կամֆին գործիք եզոյներ եւ իրենց գիշատիչ (միւթե-
րիս) նպատակներուն կոյրկուրայն հետեւողներ, ինչպէս կախազան
հանուած Եոզկաթի միւթեսարըֆ Քեմալի եւ Անգարայի վալի Աքըֆի
մման ՄԱՐԿԿՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻ եղող անձեր ընտրուած, նշանակ-
ուած եւ զրկուած են: Յետոյ, գաղտնի կերպով հաղորդուած հրա-
հանգներու համաձայն, վերեւ յիշուած կերպով կազմակերպած ու
պատրաստած եւ դատապարտելի անձերու միջոցով սկսած եւ զեկա-
վարած են տարագրութիւնները եւ ջարդերը:

Պատերազմական Ատեանի մօտ գտնուած տեղեկագիրներու մէջ

եղած փաստերով եւ վճռական փաստաբույրքերով հաստատուած
են»:

«Ուստի, յիշեալ ամբաստանեալ Նուսրէթ պէյրն այն ըսածնե-
րը, թէ «ինքը Բարերդի հայոց տարադրութիւնը կատարել տուած է
կանոնաւոր զինուորներով, զորս ստացած էր քաղաքապահ ուժերու
հրամանատարէն, եւ պատրաստի ժանտարմներով, վաճառած է էր-
զումէն եկած չեթէճի Մեհմէտ Նեճաթին, չէ ճանչցած անոր պաշ-
տօնական հանգամանքը եւ իր վարչական գաղափարն մէջ ջարդ բնաւ
տեղի ունեցած չէ», այս յայտարարութիւնները ամբողջովին ճշմար-
տութեան հակառակ են, վերեւ յիշուած փաստերու եւ փաստաթուղ-
թերու լոյսին տակ: Հետեւաբար, ան (Նուսրէթ) տեղեկ ըլլալով
հանդերձ այդ բոլոր ողբերգական իրողութեանց, այդ արարքները
արգելելու համար օրինական քայլ մը իսկ չառնելէ զատ, վերոյիշ-
եալ վայրագութիւնները իր վերագաս մարմիններուն հաղորդելու
իսկ հարկ տեսած չէ եւ «Երզնկա զրկուած» անձերուն համար ալ ստա-
ցազիր չուսնելու մասին լուր մնացած է. իսկ հարցաքննութեան ըն-
թացքին ըսած է, թէ առաջին կարաւանները պաշտօնապարտ զրկած
է Երզնկա, բայց այդ գրութեանց պատասխանները չէ ստացած: Այս
առթիւ ալ երբ հարցուեցաւ իրեն, թէ ի՞նչ պատճառով չէ բողոքած
այդ մասին վալիին, պատասխանած է, թէ «այդ ատեն արդէն ամէն
բան լրացած էր»:

«Իթթիհատի իշխանութեան շրջանին, գայմագամութեան կամ
միւթեսարըֆութեան նման կարելուր վարչական պաշտօններու պետ
մը ըլլալը անկատ ձգելով, նոյնիսկ բողոքատարար անկարեւոր պաշ-
տօններու համար միմիայն «իրենց ենթակայ եւ կողմնակից» ըլլալէ
զատ, ուրիշ ոչ մէկ յատկութիւն նկատի առնուած է:

«Այդ բոլոր կէտերը ամենուն ծանօթ իրողութիւններ են:

«Լսուած վկաններէն Ապտուլլահ Խուրեւ պէյր, որ Արզնի Մա-
տենի երկրաչափն էր, յայտնեց թէ ժողովուրդը Նասրէթը կ'անուա-
նէր «Տեմիր Փենչէլի Միւթեսարըֆ» (Երկաթէ ճանկերով կառավա-
րիչ):

Նուսրէթ Բարերդի տարադրութիւնը լրացնելէ յետոյ, անմի-
ջապէս աստիճանի բարձրացում ունեցած է եւ գայմագամութեանէն
բարձրացած է Երզնկայի փոխ-կառավարիչի (միւթեսարըֆ վեֆիլի)
պաշտօնին եւ ատիկէ ետքն ալ նշանակուած է որպէս միւթեսարըֆ
(կառավարիչ) Արզնիի: Եւ հետեւոր վայրերէ տարադրեալ հայերը,
ճամբաներու վրայ տեսակ տեսակ նեղութիւններէ եւ թշուառու-
թիւններէ ետք, ուժասպառ վիճակի մէջ հազիւ հասած էին Արզնի եւ

Նուսրէթ, լսելով թէ անոնք երկու կամ երեք օր խաներու մէջ պիտի մնան եւ հաց պիտի ուտեն, բայց մէկ ճամբարներու վրայ չարաչար աշխատացուց եւ, ըստ Սուսրեւ պէյի վկայութեան, չեղածէն նոր ճամբայ մը մէջտեղ բերել տուաւ: Բայց այդ չարչարանքով աշխատող զոհերուն օրաօր ճանաչում անգամ չէ տրուած, եւ Արղնիի միւթեսարը՝ Էղած ժամանակ եւս մնացած անչտփահաս հայ պատանիները եւ մանուկները «Տիրապետի պիտի դրկուին» լսելով յանձնած է Տիրապետի արհեստը վայր տոբթ: Բեչիտին վայրագութեանց: Արղնիէն վերջն ալ, ըստ իր խոստովանութեան, նշանակուած է Ուրֆայի անկախ միւթեսարութեան պաշտօնին, եւ երկրին զանազան կողմերէն հոն հասած 15·000էն 20·000 հայ տարագրեալներու ղէմ կատարած է ողբերգական արարքներ: Հոս եւս պաշտօնի բարձրացում ունենալով՝ ոճրագործներուն հետ գործակից եղած է, ինչ որ փաստերով կատարելապէս հաստատուած է:

«Նուսրէթ պէյ յայտնած է, թէ վերջէն հրաման մը եկած էր որ ռեւէ հայ ողջ պիտի չմնար, այլապէս մահուան սպառնալիք կ'ըլլար»:

Բարերգի մէջ, կառավարական զանձապահ (մալ-միւտիքը) Յովակիմ ԼՖենտիին հանդերձ բնտանօք անձնասպան ըլլալուն պատճառը Նուսրէթի սպառնալիքն էր զանոնք տարադրելու, մինչդեռ Յովակիմ ԼՖենտիին բնտանօք խայտառակները բնդունած էր եւ տարագրութենէ զերծ կացուցուած էր: Ատկէ յետոյ, Նուսրէթ անոնց տունը երթալով, աղջիկներուն իրեն յանձնուիլը պահանջած է եւ սպաննացած է որ եթէ իր պահանջը մերժուի, բնտանօք պիտի տարագրուին: Անոնք ալ նկատի ունենալով, որ տարագրուելու պարագային, հանրութեան հասած յուրերու համաձայն, պիտի ենթարկուին տարագրեալներու ենթարկուած զայանութիւններուն, պիտի ջարդուին ու բնաջնջուին, այդ մտածումով, կիրք, աղջիկները եւ քոյրը թոյն առնելով մահացած են, իսկ Յովակիմ ԼՖենտի եւ իր մանչ զաւակը ինքզինքին կախելով մահացած են:

«Դատաւարութեան ընթացքին հաստատուեցան այդ պարագաները, թէ եւ Նուսրէթ պէյ ըսած է, թէ անոնց տունը չէ դացած, իսկ անոնց ինքնասպանութեան պարագան օստիկանութենէն տեղեկացած է, եւ այդ տեսակ սրտաճմրկ պարագայ մըն ալ սովորական պարզ եղելութիւն մը նկատած է: Սակայն յիշեալ զոհերէն Յովակիմ ԼՖենտի իր կտակը գրած եւ թողած է տանը պատուհանին մէջ եւ Նուսրէթ անպիտանալ ձեւացած է. իրողութիւն մը, որ փաստերով հաստատուած է:

«Նուսրէթ Արղնիի մէջ միւթեսարը՝ Էղած միջոցին անչափահաս Նայիմէ հայ աղջնակը բռնարարած է, ինչպէս նաեւ բռնարարած է անոր քոյրը՝ Տիլմէնը: Տրտալիցոնի ղէպերու դատաւարութեանց ընթացքին Պատերազմական Ատեանին առջեւ վկայած է վերոյիշեալ Տիլմէնը եւ յայտնած է բռնարարման պարագաները, Նուսրէթ պէյի բացակայութեան: Ատոր ղէմ, Նուսրէթ պատասխանած էր, թէ «ազգային վրէժխնդրութեան համար զինքը ամբաստանած են»:

«Պաշտօնեայի մը անպատիւ գործերու մէջ գտնուիլը չի նշանակեր թէ պետական բոլոր պաշտօնեաները կամ ծառաները եւս նման գործերու մասնակից եղած են» (*):

«Պատերազմական Ատեանին առջեւ, իրրեւ վկայ լսուեցան նաեւ հայեր, որոնք զնահատութեամբ եւ երախտագիտութեամբ արտայայտուեցան այն թուրքերու մասին, որոնք պաշտպան եղան իրենց պատիւին ու կեանքին եւ անոնց զթատրութեան շնորհապարտ ըլլալնին յիշատակեցին: Որով անոնց վկայութիւնները ճիշդ էին:

«Իսկ յետ բռնարարութեան բողոք չյայտնելու կամ բժշկական քննութիւն չպահանջելու պարագան չի նշանակեր ղէպքին չգոյութիւնը: Նման քայլեր պիտի նշանակէին նորանոր ճնշումներ, հետեւաբար Նուսրէթի ինքնասպանութեան խօսքերը անիմաստ էին:

«Նուսրէթի հետ, յիշեալ Փիրէ Մեհմէտ կոչեցեալ Նեճաթի ԼՖենտիին եւս, Բարերգի հայերը տարադրելու պատրուակով, զանոնք սպաննած եւ անոնց սեփականութիւնները կողոպտած է, ու նոյն յանցանքներով կ'ամբաստանուի:

«Նուսրէթ պէյը պատճառ եղած է Յովակիմ ԼՖենտիին բնտանօք ինքնասպան ըլլալուն, բռնարարած է իր կ. Տիլմէնը եւ բռնարարած է պատիւը կոյս Նայիմէին: Այս բոլորը վճռական փաստերու վրայ հիմնուած կը հաստատեն անոր յանցանքը, եւ կատարեալ խղճատանքով համոզում զոյացած է փաստուած յանցանքներու մասին, անոր յանցանքներուն մեծագոյնին եւ երկուքին համար, կայսերական քաղաքային Պատժական Օրինագրքի 45րդ յօդուածին եւ առաջին պարբերութեան համաձայն եւ նոյն Օրինագրքի 170րդ յօդուածին եւ զինուորական պատժական Օրինագրքի 171րդ յօդուածներու պարունակութեանց համաձայն, որոնց բնագիրն է —

«Բացմաթի անձեր, երբ ոճիր մը կամ յանցանք մը կը գոր-

(*) Քիչ վերը դատաւորը ըսած էր, թէ կառավարական պաշտօնեաները իր-բիհատի կողմնակիցներ էին:

ծեն միասնաբար եւ կամ կը գործեն ոճիր մը կամ յանցանք մը բազմաթիւ արարքներէ բաղկացեալ, այդ խումբին անհատներէն իւրաքանչիւրը, ոճիր գործելու մտադրութիւնով, յիշեալ արարքներէն մին կամ մի քանին կը կատարէ, յիշեալ անձերուն գործակիցը կը նկատուի եւ բոլորն ալ իրր առանձին անկախ ոճրագործ կը պատժուին»:

«Նաեւ կանխամտածումով անձ մը սպաննողը կամ հայր, մեծ հայր, մայր կամ մեծ մայր մը, նոյնիսկ առանց կանխամտածման, դիտումով (նպատակաւոր կերպով) եթէ սպաննէ, մահուան կը դատապարտուի»:

«Ըլլայ զինեալ, ըլլայ ոչ-զինեալ, հրապարակային յարձակումով կամ խմբովին, ընտանիքներու, տուններու կամ անձերու վրայ ճնշում գործադրող, խմբովին ուտելիք եւ սաշար, սպրանք կամ առարկաներ թալանող կամ աւերողները մահուամբ կը պատժուին»:

Պատժական Օրինագրքերու վերոյիշեալ տրամադրութեանց համաձայն երկուքն ալ, Նուսրէթ եւ Նեճաթի, մահապատիժի կը դատապարտուին: Եւ Մեհմէտ Նեճաթին կը զրկուի քաղաքացիական իրաւունքներէ, իր սեփականութիւնները կը գրաւուին եւ արգելքի տակ կ'առնուին, եւ ատոնք կը գործադրուին Կանոնագրքի համաձայն:

Նաեւ մէկ օրուան մէջ քսան հազար ժողովուրդ, Էրզրումի հայերէն, տարադրողներ եւ Բարերդի ու Արղնիի մէջ նոյն արարքներու պատճառով ամբաստանուած եւ անունները յիշուած 26 անձերուն համար ալ օրինական հետապնդում կատարելու որոշում տրուեցաւ միաձայնութեամբ, ի բացակայութեան ամբաստանեալներուն:

Յուլիս 20, 1920

Օգոստոս 5, 1920

(«Թերմիմանը Հազըլգաթ»)

Ի՞նչ պատահեցաւ, Բարերդի ոճրագործներու դատավճիռէն յետոյ, պատերազմական ատեաններու առջեւ առկախ մնացած ցեղապանական դատերուն: — Կարելի՞ էր, որ թուրք ոճրագործ մը կախուէր հայ նահատակներու համար:

Պատահեցաւ. —

— Յուլիս 20, 1920ի վճռագրէն յետոյ, որ տպուած էր թրքական «Թերմիմանը Հազըլգաթը» թերթի Օգոստոս 5, 1920ի թիւին մէջ (Սեւրի դաշնագրի ստորագրութենէն հինգ օր առաջ), թուրք իշխանութիւնները սկսան ձերբակալել վճռագիրը ստորագրող թուրք դատաւորները (զինուորականներ կամ քաղաքայիններ):

Ենթադրենք վայրկեան մը, թէ Նիւրեմպերկի մէջ, զերման նացի ոճրագործները դատող Ռուպրիթ ձեքսըն մը կամ իր ընկերակից-դատաւորները Հիթլերի կամ Հիմլերի նացի ընկերներուն կողմէ ձերբակալուէին եւ բանտ նետուէին, դատի յանձնուէին իրենց արձակած դատական վճռագրին համար: Անշուշտ Գերմանիոյ մէջ այդ տեսակ բան մը երեւակայել անկարելի է: Բայց ատիկա պատահեցաւ Թուրքիա կոչուած ոճիրներու այդ երկրին մէջ, եւ զարմանալի չէր:

Էրզրումի թրքական բանակի հրամանատար Քեաղիմ Գարապեքիրի Հայաստանի վրայ յարձակման օրերուն, Նոյեմբեր 8, 1920ին, ձերբակալուեցան Պատերազմական Ատեանի դատաւոր զօրավար Մուսթաֆա եւ իր ընկերները, պատերազմական նախարարի հրամանով եւ զինուորական սատիկանութեան (մեքէէգ գումանտանլըգ) միջոցով, եւ Նոյեմբեր 10, 1920ին թրքական «Իլերի» թերթը գրեց, թէ «Պատերազմական Ատեանի տուած վճիռները այլեւս ի գօրու չեն, եւ զինուորական Վճռարկ Ատեանի վերաքննութեան պիտի ենթարկուին», այսինքն առ ոչինչ պիտի համարուին:

Դեկտեմբեր 7, 1920ին, սպայակոյտի զինուորական ատեան մը, զօրավար Բիֆաթի նախադահութեամբ, շարունակեց դատել դատաւոր զօրավար Մուսթաֆա փաշան եւ ընկերները (դատաւորները), կախուած ոճրագործ դալմազամ Նուսրէթի վճռագրին կապակցութեամբ:

Թուրք ջարդարտը ահուկի աւաղակապետ մը կախուած էր, որ ղեկավարներ էր քսան հազարէ աւելի հայերու սպանող եւ սեփականութեանց բռնադատումները: Նման ոճիրներու համար պատժել յանցաւորը՝ թուրքին համար վիրաւորական էր, չէ՞ որ պատերազմի ընթացքին, թուրքերուն ուղղուած ճիհատով, եւ ներքին նախարարութեան ծածկագիր հեռագիրներով, դահիճներուն հազորդուած էր, թէ զործուելիք ոճիրներուն համար պատիժ չկար: Ահա այս նոյն մտայնութեամբ, Դեկտեմբեր 10, 1920ին, Պատերազմական Ատեանի նախադահը՝ Սուրշիտ փաշա սկսաւ բանտերէն ազատ արձակել թուրք ամբաստանեալները եւ Յունուար 3, 1921ին, թրքական զինուորական Վճռարկ Ատեանը շարունակեց իր մտադրած դատաւարական եղանակները, Մուսթաֆա փաշայի եւ ընկերներուն դէմ նոր բացուած դատին առթիւ եւ վերաքննեց կախուած Նուսրէթ ոճրագործին եւ Բայրուրդի հայերու տարադրութեան թուղթերը, որպէսզի պատրուակ մը դտնէր յայտարարելու համար ոճրագործ ցեղապանին «անմեղութիւն»ը յետ դատապարտութեան, կասեցնէր

առկախ դատերը եւ վերջ տար դատաւարութիւններուն :

Յունուար 5, 1921ին Մուսթաֆա փաշա եւ ընկեր դատաւարները դատապարտուեցան, որովհետեւ ոճրագործ մը պատժած էին :

Յունուար 9, 1921ին, սպայակոյտի զինուորական ատեանը, նախապահութեամբ Նեշէթ փաշայի, շեղեալ նկատեց Նուսրէթի դէմ Պատերազմական Ատեանի միջոցովը : Թուրք դատաւորները ի՞նչպէս համարձակէր էին՝ սկանստեա վիաներու յայտարարութեանց վրայ հիմնուելով մահաւճիւտ արձակելու թուրք պաշտօնեայի մը դէմ, որ իր կատարած ոճիրներուն համար պաշտօնի բարձրացում ստացեր էր : Թուրքիոյ մէջ պէտք էր, ըստ նախընթացի, մահաւճիւտ տրուէր միայն փախտական ոճրագործներուն, որպէսզի միւր արժէք չունենար : Իսկ ի ներկայութեան դատուած ոճրագործներուն դէմ միայն բանտարկութեան միջոց պէտք էր տրուէր, եւ յետոյ շուտով ազատ արձակուէին :

Երկու հայ փաստարաններ՝ Չայլազ եւ Բեմզի, վախով-դողով, արիւն-բրտինք մտեր էին պաշտպանողական մը խօսելու համար ի նպաստ Մուսթաֆա փաշայի եւ ընկերներուն : Արդիւնքը եղաւ այն, որ Մուսթաֆա փաշա երեք ամիս բանտարկուելէ ետք ազատ արձակուեցաւ : Թուրք կառավարութիւնը բոյսրովին ջնջեց պատերազմական ատեանները, ըսել ուզելով, որ ունէ թուրք յանցաւոր չի կրնար նկատուիլ հայերու դէմ գործուած ոճիրներուն համար այնպէս, ինչպէս յիշուած էր Թալէաթի գաղտնի հրամանագրերուն մէջ : Թուրքը հետեւողական է :

Յեղասպան նախարարներ, վայրենիք, երեսփոխաններ, զինուորական ոճրագործ հրամանատարներ այլեւս ազատ կրնային ըլլալ :

Ահա Թուրքիան եւ իր արդարադատութիւնը : Թուրքին մտայնութիւնը միշտ անփոփոխ է : Այս խայտառակութիւնն ալ արձանագրուեցաւ պատմութեան բարձրագոյն դատարանին առջեւ : 20.000 հայերու ջարդի զլխաւոր պատասխանատուներէն միայն մէկ թուրք «սխալմամբ» կախուեցաւ, եւ սակայն թրքութիւնն ալ խայտառակուեցաւ աշխարհի առջեւ : Արդարութեան գործը կը մնար հայ հերոսին, որ շան-սատակ ընէր, Պերլինի մէջ, դահճապետը՝ Թալէաթ փաշան, որ նոյնպէս թուղթի վրայ մահուան դատապարտուած էր, ի բացակայութեան, եւ կ'ապրէր ազատօրէն, իր ոճրագործ փախուստական ընկերներուն հետ, եւ որոնց համար թրքական պատերազմական ատեաններու վճիռները ոչինչ կ'արժէին, նկատելով որ թուրք ոճրագործը պատժող մարդ չկար Թուրքիոյ մէջ :

ԻՆՉՊԼՍ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՆԳԵՑԱԻ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԵԱՆ

Համաշխարհային Ա. Պատերազմի վերջին տարին երկու թուրք սուլթաններ շուկեցին այս աշխարհէն : Առաջինը սուլթան Ապտիւլ Համիտ կոչուած «մեծ մարդասպանն» էր, որ 1894-96ին 300.000 հայերու սպանդին զլխաւոր պատասխանատուն էր եւ որ սատկեցաւ Փետրուար 10, 1918ին, 76 տարեկանին, Կ. Պոլիս, Վոսփորի վրայ, Պէյլէր Պէյի պալատին մէջ, ուր առանձնացած կը մնար 6 տարիներէ ի վեր, առանց զղումի, իր կատարած ջարդերուն համար :

Երկրորդը՝ սուլթան Բեշատ, Մուհամմէտ Ե., որ նախապէս իր մեծ եղբայրը՝ Համիտ Բ. ի երեսուն տարի արգելափակած էր եւ գայն Լեթարկած ապուլի միջոցով մը : 1909 Ապրիլին, Համիտի գահակալութեան շրջանին օղիի եւ հարեմի ծառայած եւ անդիտակից խաղալիքը գարձած էր իթթիհատական ոճրագործ ղեկավարներուն ձեռքը :

Այս սուլթանին՝ Բեշատի օրով կատարուեցաւ հայոց դէմ մեծագոյն ցեղասպանութիւնը : Սուլթան Բեշատի գահաժառանգն էր իշխան Եուսուֆ Իզլետտինը, սուլթան Աղիլի որդին, որ հակառակ էր էնվերի քաղաքականութեան եւ կը պատրաստուէր, 1916 Յունուարին, Չուրիքիա երթալու եւ Դաշնակիցներու ներկայացուցչներուն հետ տեսակցելու : Կ. Պոլսէն մեկնելու օրը, Յունուար 15, 1916ին, առտուն կանուխ, անակնկալ կերպով սպաննուած գտնուեցաւ : Եւ զրոյց տարածուեցաւ, թէ «Եուսուֆ Իզլետտին ինքնասպան եղած էր», մինչդեռ ան սպաննուած էր իթթիհատականներու գաւազրութեամբ :

Սուլթան Բեչատի մահէն ետք, Յուլիս 3, 1918ին, անոր յաջորդեց Վահիետտինը, Մուհամմէտ 2. անունով. նոյնպէս հակառակ էր էնվերին, սակայն սպառնալիքի տակ լուծեան դատապարտուած էր մինչև 1918 Հոկտեմբերի դինադադարը, երբ Թուրքիա պարտուած յայտարարուեցաւ:

1918 Հոկտեմբերի կիսուն, Թուրք ղլխաւոր ջարդարարները արդէն կծիկը դրած էին ղէպի Գերմանիա, դերման ռազմանաւով մը մինչև Օտեսա երթալով, եւ մէկ մասն ալ, մուկերու պէս ծակը մը տած էր Կ. Պոլսոյ մէջ, ինչպէս ճաւիտ պէյը, որ ութ ամիս պահուած մնաց նախկին իթլիաֆահանի մը տան մէջ:

Թուրքիոյ պարտութեամբ Ձինադադարը կնքուած էր Հոկտեմբեր 30, 1918ին. Ձինադադարի պայմաններուն մէջ միայն Թուրքիոյ դինաթաւումը կը ճշգրտէր, սակայն լրիւ չգործադրուեցաւ ատիկա: Իսկ ոչ մէկ պայման կար Թուրք ոճրագործները պատժելու մասին:

Թագաւոր Վահիետտին, հաշտութեան ծանր պայմաններէն ստակալով, հրամայած էր ղահլիճին, պատերազմի յանցաւորները դատելու համար, կազմել պատերազմական ատեաններ, Դեկտեմբեր 1918ին:

Կազմուեցան հարցաքննիչ ատեաններ, վկաները լսելու եւ հայոց ղէմ չարիք գործած Թուրք ոճրագործները դատելու համար, թէ եւ, ի վերջոյ, այդ ալ ֆիսաֆօ մը դարձաւ, թրքական նենգամիտ մեքենայութիւններուն հետեւանքով:

Այս տողերը գրողը, Ձինադադարի վաղորդայնին, յօդուած մը հրատարակած էր Կ. Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Ժողովուրդ» թերթին մէջ, որ կը հրատարակուէր Տիգրան Չալէնի խմբագրութեամբ: Յօդուածին նիւթն էր. — «Ի՞նչպէս սպաննուեցաւ Թոգատի Առաջնորդ Շաւարշ Ծայրագոյն վարդապետը»: Այդ սպանութիւնը տեղի ունեցած էր Յունիս 2, 1915ին, Սերաստիոյ կառավարիչ Մուամմերի հրահանգով: Տարաբախտ վարդապետը խողխողուած էր Թոգատէն երկու ժամ հետու՝ ղէպի Սերաստիա տանող ճամբուն վրայ:

Յօդուածին հրատարակութենէն երկու օր ետք, Պատերազմական Ատեանի հարցաքննիչ յանձնախումբէն կոչնադիր մը ստացայ, խմբագրութեան հասցէով, որպէս վկայ ներկայանալու եւ խնդրոյ առարկայ սպանութեան շուրջ բացատրութիւն տալու համար: Ստորեւ այդ կոչնագրին թարգմանութիւնը.

«Սերաստիոյ Թուրքերու Քննիչ Յանձնախումբէն հրաւիրուած վկաներու յատուկ կոչնագիր

1918 (1334) Դեկտեմբեր 14, Ուրբաթ օր, կէսօրէ ետք, ժամը

1:30ին, Հանրային Ապահովութեան շէնքին մէջ (Էմնիյէթը ումումիյէ) կազմուած Քննիչ Յանձնախումբին առջեւ, վկայութիւն տալու համար, պէտք է ներկայ ըլլաք: Չըլլալու պարագային, Պատժական Օրինագրքի 87րդ եւ 47րդ յօդուածներուն համաձայն, Ձեզի հանդէպ օրինական հետապնդում պիտի ըլլայ, սակայն եթէ Ձեր կողմէ ճանապարհածախս պահանջէք, անհրաժեշտ նկատուած ծախսը պիտի վճարուի:

Դեկտեմբեր 11, 1918

Հիյէթը Թահգիգիյէ Բէիսի
Ստորագրութիւն
(Հարցաքննիչ Ատեանի նախագահ)
ՄԱԶՀԱՐ

Քննիչ Յանձնախումբը կը գտնուէր Իսթանպուլի կողմը, Սանասարեան Խանի 4րդ յարկը: Սանասարեան Խանը պատերազմի շըրջանին զրուուած էր Թալէաթի կառավարութեան կողմէ եւ թրքական ղաղտնի ոստիկանութեան կեդրոն եղած էր. չորրորդ յարկին վրայ «Գըսմը Սիսսի»ի մէջ (քաղաքական բաժանմունք) կը քննուէին եւ կը չարչարուէին հայերը որպէս «քաղաքական յանցաւորներ»:

Ձինադադարին՝ Թուրքերը պարպած էին այդ շէնքը, որուն վարձակալը եղած էր երկար տարիներ Վիթոլ անգլիական մեծ Ապահովագրական Ընկերութիւնը, որ կարեւոր եկամուտ մը կ'ապահովէր Սանասարեանի Խնամակալութեան:

Կոչնագրով որոշուած ժամանակին, քաղաքային հագուստով, ներկայացայ Քննիչ Յանձնախումբին, որուն նախագահն էր Մազհար պէյ, Անգարայի եւ Գոնիայի նախկին վալիին, որ հայկական ջարդերուն հակառակած ըլլալով պաշտօնանկ եղած էր: Յանձնախումբին երկրորդ անգամը յոյն դատաւոր մըն էր եւ երրորդ անգամը, երկար տարիներ Վերաքննիչ Ատեանի նախկին անգամ եւ դատաւոր Յարութիւն էֆենտի Մոստիչեան:

Հարցաքննութեան նիւթն էր Թոգատի Առաջնորդին սպանման պարագայական վկայութիւնները: Հաղորդուած տեղեկութիւններու հետեւանքով, վկայութիւնը վերածուեցաւ Սերաստիոյ ամբողջ նահանգի սպանող գործադրող ոճրագործներուն եւ մասնաւորապէս քաղաքի հինգ հազար հայերու բանտարկութեան եւ սպանութեան, եւ նահանգին երեք հարիւր հազար հայերու բանտարկութեան, սպանութեան եւ տարագրութեան մանրամասն եւ որոշ պարագաներուն, որոնց մասին ձեռք անցուած բոլոր վաւերական տեղեկութիւնները

արձանագրուեցան թուրքերէն լեզուով, ձեռամբ հարցաքննիչ դատաւոր Յ. Մոստիշեանի, էսէր ձեռիտ կոչուած Երկար-ձերմակ ոչ-զժաւոր թուղթի վրայ: Յականէ անուանէ արձանագրուեցան ոճրագործները, իրենց պաշտօնին մանրամասնութիւններով եւ արարքներով, զորս կը գլխաւորէր նահանգապետ Մուսամէր կոչուած դահճապետը: Այդ թուղթերը հիմր պիտի կաղմէին զալիք դատաւարութիւններուն: Դատաւորը այդ թուղթերը ստորագրել տուաւ ինծի որպէս միւտտայի շախսի (անձնական դատ հետապնդող) ծնողաց եւ ազգականներու արեան, որուն հետ կապուած էր նաեւ ազգակիցներու արեան դատը:

Եւ սակայն, այդ դատաւարութեան օրը չեկաւ: Քաջքուեցաւ, քաջքուեցաւ մինչեւ որ կազմակերպուի սկսան քեմալականները, որոնց մեծ մասը նախկին իթթիհատականներ էին: Եւ բոլոր թուղթերը չուեցին Անգարա: Դատական հարցաքննիչին հաղորդուած տեղեկութիւնները եւ ոճրագործներու ցանկը տպագրուեցան 1924ին «Հայրենիք»-ի տպարանէն լոյս տեսած կարապետ Գարիկեանի «Յեղեղապատում»-ին մէջ, էջ 590-596:

1918ին կազմուած Պատերազմական Ատեանին Ա. դատաւարութիւնները տեղի ունեցան Փետրուար 1919ին, Եողկաթի չրջանի Պողալլայանի հայերու ջարդի պատասխանատուներու մասին:

Դատաւարութեան առաջին նիստը տեղի ունեցաւ Փետրուար 6, 1919ին: Մարտ 31, 1919ի 17րդ դատաւարութեան նիստին՝ նրբանցքին մէջ, իբր սպառնալիք, մատուցէր մը պայթեցաւ: Տեղի ունեցած դատաւարութեանց հետեւանքով Պողալլայանի զայմազամ Քեմալ պէյ կախազան բարձրացաւ՝ Ապրիլ 13, 1919ին: Ան իր գործակիցներով, հետեւորդներով, սպաններով, զինուորներով, չեթէներով եւ զինուած զիւզացիներով միասին կոտորել էր 11.000 հայեր:

Ապա, թուրքերու զրպութիւնները սկսան: Ոճրագործը «նահատակ» նկատեցին, կանաչ դրօշներու մէջ փաթթեցին եւ ստտակը կոչեցին «իլի դուրպան» (առաջին զոհ):

1918 Դեկտեմբեր 13ին ձերբակալուած էին Տիգրանակերտի վալի Ջարդարար տոքթ. Բեչիտը (որ (1910ի իթթիհատի Կեղրոնի անգամ ալ եղած էր), եւ Սերաստիոյ Ջարդարար վալի Մուսամբը՝ թունդ ազգայնամոլ իթթիհատական մը: Երկուքն ալ արգելափակուած էին Սանասարեան Խանին վերնայարկին մէջ:

Տոքթ. Բեչիտ, Մարտ 11, 1919ին կրցաւ փախիլ բանտէն: Թուրք եւ անգլիացի ոստիկաններ, Պելիկթաշի մօտերը, Ըխլամուր կոչուած զառիվարին վրայ՝ ետեւէն հասեր էին ձերբակալուելու հա-

մար: Նոյն պահուն, տոքթ. Բեչիտ ատրճանակով ինքնասպան եղած էր, ձեռք չանցնելու եւ դատարանի առջեւ ցեղասպանութեան զաղտնիքները չյայտնելու համար:

«Նիւ Եորք Թայմզ», Ապրիլ 15, 1919ին խմբագրական մը դըրած էր այդ մասին, թուրքերուն հետ ամբաստանելով նաեւ զերմանները, սակայն չիօթած էր կախուած զայմազամ Քեմալը՝ տոքթ. Բեչիտին հետ:

Փախչող իթթիհատական ղեկավարներու դատի մասին, Մարտ 8, 1918ին կայսերական իրատէ մը ելաւ, որով կը ճշդուէր, թէ Պատերազմական Ատեանը իրաւասու էր դատելու իթթիհատականները: 2րդ դատաւարութիւնը տեղի ունեցաւ Մայիս 4, 1919ին, ուր ըսուեցաւ թէ «նախարարները իթթիհատի գործադիր անգամներ էին»: 4րդ դատաւարութիւնը տեղի ունեցաւ Մայիս 8, 1918ին եւ «Թեճետտիւտ»-էն (Իթթիհատի նոր անունը)՝ զրաւուեցաւ իթթիհատի պատկանող 180 հազար ոսկին, կառավարութեան կողմէ (մէկ ձեռքով առաւ՝ միւս ձեռքին տուաւ):

Պատերազմական Ատեանը միշտ քաջքուեցով շարունակելով, ի բացակայութեան գլխաւոր ոճրագործներուն, որոնք Գերմանիա եւ այլ վայրեր կը գտնուէին, անգործագրելի ծանր պատիժներ կ'որոշէր:

Ապրիլ 1, 1920ին իթթիհատականները դրամներ բաշխել էին իրարու «օգնութեան համար» (հայերէն կողոպտուած դրամներ էին):

Իթթիհատականներուն դատաւարութեանց զուգընթաց՝ տեղի կ'ունենային նաեւ Տրապիզոնի դատաւարութիւնները. թուրք խուժանը զրդուելու համար տեղի կ'ունենար Մայիս 19, 1918ին, Ֆաթիհի միթինկը եւ խուճապը. նոյն օրը Մուսթաֆա Քեմալն ալ «Պանտըրմա» շոգենաւով Սամսոն կը հասնէր Կ. Պոլսէն:

Յունիս 10, 1919ին՝ Էնվէր, Թալէաթ, Ճեմալ ի բացակայութեան մահուան դատապարտուեցան («Նիւ Եորք Թայմզ» այդ վճիռը կը յիշէ Յուլիս 11, 1919ին): Նոյն օրը Շէյխ իւլ իսլամ Մուսա Քեաղիմ եւ Ճաւիտ պէյ, զարձեալ ի բացակայութեան, դատապարտուեցան 15ական տարի բանտարկութեան: Անշուշտ բոլորը թուղթի վրայ միայն, երբ Էնվէր Ալի կեղծ անունով կ'երթեկէր Պերլինէն Մոսկուա եւ Թալէաթ՝ Ալի Սալիհ կեղծ անունով, Պերլինի մէջ ինը սենեակնոց բնակարանի մը մէջ ընկերներով կը զուարճանար, թէ եւ վախը սրտին մէջ:

Ի ցոյց մարդկան, տեղի ունեցաւ նաեւ Տրապիզոնի տարազրութեան դատաւարութիւնը: Քստմենլի վայրագութիւններ երեւան եկան թուրք բժիշկներու եւ ծովը նետուած հայ այրերու եւ մանուկ-

ներու մասին: Տրապիզոնի Ճրգ դատավարութիւնը՝ Ապրիլ 5, 1919ին, 13րդը՝ Մայիս 5ին, 18րդը՝ Մայիս 15ին, ուր լուեցաւ դատախազ Ֆերիտոնի ճառը: Մայիս 17ին Տրապիզոնի դատավարութեան 19րդ նիստին լուեցան պաշտպանողականները: Վերջաւորութիւնը... եղաւ արդարութեան հականիչը:

Ատկէ ետք Պատերազմական Ատեանի գործերը թուլցան:

Էնվերի հօրեղբայր Սալիլ փաշա եւ Կիւչիւք Թալէաթ, որոնք պատերազմական նախարարութեան շէնքին մօտ՝ «Պէքիր Աղա Պէօլիւք» կոչուած բանտին մէջ սղատօրէն նստած էին, ընկերակցութեամբ տեղակալ Շատիր, Օգոստոս 8, 1919ին, գիշեր ատեն բանտէն փախան, աւելի ճիշդը՝ թոյլատրուեցան փախչելու եւ անցան Անատոլու: Սալիլ անցաւ Էրզրում եւ անկէ՝ Պաքու եւ ուսու գնդապետի մը հետ անցաւ Մոսկուա՝ Լենինի եւ Գարախանի հետ բանակցելու, իբրեւ Քեմալի ներկայացուցիչը:

Յունուար 19, 1920ին, դարձեալ ի բացակայութեան, մահուան դատապարտուեցաւ տղթ. Պէհաէտին Շաքիր, իսկ տղթ. Նազըմ՝ 15 տարուան բանտարկութեան: Այդ ոճրագործներն ալ կեղծ անուններով ծպտուած իշխանական կեանք կը վարէին Պերլինի մէջ: Տղթ. Պէհաէտին կը կրէր Ալփ անունը եւ կեղծ ինքնութեան թուղթ մը:

Օգոստոս 4, 1919ին Պատերազմական Ատեանը Մուսթաֆա Քեմալին ալ մահուան դատապարտած էր, իբրեւ «Սալիլֆային դէմ անհնազանդ»։ հետագային այդ վճիռն ալ ջնջուեցաւ:

Պատերազմի շրջանին թուրք ոճրագործներու մասին Սելրի դաշնագիրը ՊԱՏԻՃՆԵՐ գլուխին տակ ունի 5 յօդուածներ.— 226, 227, 228, 229 եւ 230:

ՅՕԴՈՒԱՄ 226ը կ'ըսէ.— «Թուրք կառավարութիւնը կ'ընդունի, թէ Դաշնակից Պետութիւնները իրաւունք ունին պատերազմական ատեանի առջեւ դատելու այն անձերը, որոնք պատերազմական օրէնքներու եւ սովորութիւններու հակառակ վարուած են: Եւ երբ այդ անձերը յանցաւոր գտնուին, պիտի պատժուին: Թուրք կառավարութիւնը կը խոստանայ նման մեղադրեալները յանձնել»:

(Իբրեւ տեղեկութիւն աւելցնեմ, թէ Աֆիոն Գարահիսարի մէջ թուրք հազարապետ Մազլում պէյ, որ անգլիացի զերի երիտասարդ սպաները բռնարարած էր, ձերբակալուելով իր պատիժը կրեց Մալթայի մէջ):

ՅՕԴՈՒԱՄ 227.— «Դաշնակիցներու հպատակներուն դէմ ոմիր գործողները պիտի դատուին պատերազմական ատեաններու առջեւ:

Թուրք կառավարութիւնը պիտի հաղորդէ այդ անձերուն ունեցած դիրքը եւ պաշտօնը: Ամբաստանեալները պիտի կրնան պաշտպան փաստաբաններ ունենալ»:

ՅՕԴՈՒԱՄ 228.— «Թուրք կառավարութիւնը կը խոստանայ յանձնել բոլոր վատերագրերը եւ տեղեկութիւնները, որոնք կարելի էր կատարուած ոմիրներու լուսարանութեան եւ ոմրագործներուն պատասխանատուութիւնները ուղղելու համար»:

ՅՕԴՈՒԱՄ 229.— «Այս պահանջները ի գոյու են նաեւ նախկին Օսմանեան կայսրութեան հողամասերուն վրայ գործուած ոմիրներուն համար: Եթէ ամբաստանեալները տարբեր հպատակութիւն ստացած են, Դաշնակից պետութիւնները միշտ իրաւունք ունին պահանջելու զանոնք, դատելու եւ պատժելու համար»:

ՅՕԴՈՒԱՄ 230ը, որ կը վերաբերի մասնաւորապէս թուրք ջարդարներու, կ'ըսէ.— «Թուրք կառավարութիւնը կը խոստանայ յանձնել Դաշնակիցներուն այն անձերը, որոնք պատասխանատու են ջարդերու, որոնք տեղի ունեցած են պատերազմի շրջանին այն հողամասերուն վրայ, որոնք մաս կը կազմէին Օսմանեան կայսրութեան, Օգոստոս 1, 1914ին: Դաշնակից պետութիւնները իրենց կը վերապահեն դատարան կազմելու իրաւունքը, որպէսզի յանցաւորները պատժուին եւ թուրք կառավարութիւնը յանձն կ'առնէ նանչնալ այդ դատարանը:

Եթէ Ազգերու Լիկան իրաւասու դատարան մը կազմել որոշէ, ջարդերու պատասխանատուները դատելու համար, Դաշնակից պետութիւնները իրենց կը վերապահեն իրաւունքը ամբաստանեալ անձերը բերելու այդ դատարանին առջեւ: Եւ թուրք կառավարութիւնը յանձն կ'առնէ նանչնալ այդ դատարանը: Այս պարագային եւս, յօդուած 228ի տրամադրութեան համաձայն, թուրք կառավարութիւնը կը խոստանայ յանձնել վատերագրերը եւ տեղեկութիւնները»:

ԾԱՆՈԹ.— Պէտք է նկատի ունենալ, թէ Սելրի դաշնագիրը ստորագրած են Օգոստոս 10, 1920ին, մէկ կողմէն՝ չորս գլխաւոր պետութիւնները — Բրիտանական Կայսրութիւնը, Ֆրանսա, Իտալիա եւ Ճափոն, եւ ասոնց կողքին՝ դարձեալ 10 պետութիւններ, որպէս դաշնակիցներ — ՀԱՅԱՍՏԱՆ, Պելճիքա, Յունաստան, Հիճազ, Լեհաստան, Փորթուկալ, Ռումանիա, Սերպ-Պոնուարթ-Սլովենիա եւ Չեխոսլովաքիա, իսկ միւս կողմէ՝ Թուրքիա:

Ստորագրող պետութիւններէն ոմանք տարբեր տնտեսական, սեփական շահեր ապահովելու համար զազանի կարգադրութիւններ ըրած են կամ կ'ընեն. Հայաստան սակայն, իբրեւ ստորագրող դաշ-

նակից-պետութիւն, որ այնքան զոհեր տուած է, լիազօր իրաւունք ունի պնդելու իր ամբողջական իրաւունքին վրայ, ճանչցուած և ստորագրուած այդ զաշնագրով: Օրինակի համար, նշենք որ Բրիտանական Կայսրութիւնը Ա. Պատերազմին, իր գաղթապետութիւններով միասին, կորսնցուցած է 1.000.000 անձ, Բ. Պատերազմին՝ 450.000 անձ, շատ աւելի պակաս քան հայ ազգի տուած 2.000.000-ի կորուստը (տես Տ. Թամարն, «Անգլիան Քսաներորդ Դարուն», էջ 31 եւ 20):

Դարձեալ, Սեւրի զաշնագրի 140-151 տասնմէկ յօդուածները կը խօսին ոչ-թուրք տարբերու իրաւունքներուն մասին՝ Թուրքիոյ մէջ, եւ զլիւարարար կը վերաբերին արգելափակուած կիներու, որբերու եւ սեփականութեանց:

ՅՕԴՈՒԱՄ 142ի համաձայն, «թուրք կառավարութիւնը պէտք էր վերադարձնէր պատերազմի շրջանին բռնի իսլամացուածները, արգելափակուածները եւ պարտաւոր էր դիրութիւններ տալ անոնց»: Մինչդեռ շատ-շատերը մնացին ու տակաւին կը մնան անյայտ:

ՅՕԴՈՒԱՄ 144ը, որ կը վերաբերի «ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐ» կոչուած, բայց իրականին մէջ զողջուած շարժուն ինչքերուն եւ բռնի տիրացուած անշարժ կալուածներուն, կ'ըսէ. — «Թուրքիա կ'ընդունի անարդարութիւնը, որ գործադրուած է 1915ի «օրէնքով եւ յաւելուածական հրահանգներով»՝ լիեալ գոյջերու վերաբերմամբ, կը յայտարարէ որ եղած այդ բոլոր կարգադրութիւնները չեղեալ են թէ՛ ներկայիս եւ թէ ապագային համար: Թուրքիա կ'ընդունի որ պիտի վերադարձնէ կամ հատուցանէ գրաւուած անշարժ կալուածները, տունները, խանութները, որոնք կը պատկանէին ոչ-թուրք հպատակներուն եւ որոնց տէրերը ջարդուած կամ տարագրուած են: Անոնց ինչ-քերը՝ շարժուն սեփականութիւն կամ անշարժ կալուած՝ պէտք է վերադարձուի կամ հատուցուի, եւ վնասուի անոնց արժէքը: Այդ սեփականութիւնները պիտի առնուին, որո՛ւն ձեռքը որ ալ գտնուին, առանց դատական ծախսեր վնասելու: Թուրք կառավարութիւնը կ'ընդունի, որ պիտի վնասէ այդ պահանջները: Աւերածները պիտի վերաշինէ եւ ժառանգորդ չունեցողներու սեփականութիւնները պէտք է վերադարձուի իրենց պատկանեալ համայնքին եւ ոչ թէ պետութեան:

Եղած գրաւումները, առուծախի գործողութիւնները պիտի ջնջուին եւ հատուցում պիտի ըլլայ կառավարութեան կողմէ: Եւ թուրք կառավարութիւնը ամէն դիրութիւն պիտի տայ այդ մասին»:

Հայերու բռնագաղթի օրերուն եւ անոր յաջորդող տարիներուն հայերուն շարժուն եւ անշարժ կալուածները, սեփականութիւնները,

ազգային հաստատութեանց շէնքերը բռնագրաւուեցան: Այդ յափըշտակութեանց եւ զոյսութեանց մասին կան հարիւրաւոր զրաւոր փաստեր:

1915 Հոկտեմբեր 4ին (թրքական թուականով էյյուլ (Սեպտեմբեր) 1331 թուակիր Թագվիլը Վեֆայի (թրքական Փարլամենթի նիստերու արձանագրութիւնը) հրատարակուած է, ուր կը յիշուի, թէ թրքական Մերակոյտի այդ օրուան նիստին մէջ ԱՏՄԷտ Ռիզա առաջարկ ներկայացուցած է հետեւեալ կերպով. —

«Պատերազմի ժամանակ ոչ ոք իրաւունք ունի ուրիշին (հայերուն) շարժուն կամ անշարժ ստացուածքները գրաւելու»:

Սակայն եւ այնպէս թուրք կառավարութիւնը շարունակած է իր կողոպուտի զործր: «Լքեալ զոյքեր»ու (Էմվալը մեքրուֆէ) անուան ներքեւ աստղաշարի շահատակութիւններ կ'ըզած եւ նոյնիսկ արձանագրուած են ընդհանուր դատախազներու կողմէ պահուած տոմարներու մէջ: Մէկ մասը, անուանական արժէքներով, առուծախի ենթարկած են, ի հաշիւ պետական գանձին:

Թուրք ոճրագործներու դատաւարութեան ընթացքին, թրքական Պատերազմական Ատեանի առջեւ, թուրք ընդհանուր դատախազը՝ Սամի Պէյ Փետրուար 1919ին, Եողկաթի եւ Պողազլայանի եւ շրջակայ գիւղերու ցեղասպանութեան առթիւ, Փետրուար 8, 1919ի 2րդ նիստին առանց ամենայն ջարդերու պատասխանատուութիւնը ձգելուց հայերու վրայ, հետեւեալ չնաշխարհիկ միտքերը յայտնելով.

— «Հայերը դժգոհութիւններ յայտնեցին, թէ հաւասարութիւն չկայ եւ գանդաւաներ բրին արտաքին աշխարհին, արտաքին թելադրութեամբ զէպրեր յատաջ բերին եւ հայերու մէջ անջատողական ձգտումներ երեւան եկան ու կառավարութիւնը, իբրեւ զգուշական միջոց, տեղահան ըրաւ ժողովուրդը (հայերը) գինուորական կարգադրութեամբ»:

Այդ յերիւրանքներուն փաստարան Հմայեակ Խոսրովեան, որ ներկայ էր այդ նիստին, պատասխանեց թէ ընդհանուր դատախազը փոխանակ ոճրագործները երեւան հանելու եւ արդարութիւնը գործադրել տալու, կ'ամբաստանէ ոճիրին զոհերը իր «անհաւատարիմ»:

«Հոս դատարանին մէջ տղեկ մը կայ, զոր բռնի խլամացուցեր են, հայրը եւ մայրը սպաններ են, ընդհանուր դատախազը կը պատասխանէ, թէ «հայերը յեղափոխութիւն հանեցին»: Ի՞նչ կապ ունի այդ՝ այս դատին հետ: Հայերը 1.200.000է աւելի զոհ տուին (հայերու կորուստը 2.000.000 անձէն ալ աւելի է. Հ. Ղ.), իսկ թրքական Խորհրդարանէն, մամուլէն կամ ընդհանուր դատախազութենէն բողո-

քի ձայն մը իսկ չլսուեցաւ: Հետեւաբար այս դատավարութեան մէջ քաղաքականութիւն խառնող ընդհանուր դատախազը պէտք է ձեռն-
թափ ըլլայ»:

Դատարանի նախագահ Սայրէթ փաշա յայտարարեց, թէ «ե-
կած ենք (դատարան) հայերու աքսորի, կատարուած զեղծումներու,
ոճիրներու եւ զոգութեան նման արարքները քննելու եւ արդարու-
թիւնը գործադրելու»:

Դատը շարունակուեցաւ: Պողաղլայանի դայմագամ ցեղասպան
Քեմալ, 45 տարեկան, որ ջարդէն ետք՝ Եոզկաթի շրջանի փոխ-կա-
ռավարիչ եղած էր, մահուան դատապարտուեցաւ: 40.000էն աւելի
հայ նահատակներու փոխարէն՝ միայն մէկ պատասխանատու պատի-
ժը կրեց: Իսկ իր ընկեր ջարդարարները, փախստական վիճակի մէջ,
մնացին առանց հետապնդումի:

Իսկ Տիգրանակերտի նահանգին կառավարիչ տոքթ. Բեշիտ
կոչուած հրէշը, որ ծածկագրով հաղորդած էր ներքին գործոց նա-
խարարութեան, թէ մաքրագործած էր նահանգէն 121.000 հայեր,
զգալով թէ պիտի սպաննուէր, ինքնասպան եղած էր:

Թուրք կառավարութիւնը արգիլեց այդ եղեռնագործին նկարը
դնել թուրքերէն թերթերու մէջ: Մենք կրցանք այդ նկարը ձեռք
բերել:

Պատերազմական Ատեանի առջեւ թրքական դատավարութիւն-
ները տեղի ունեցան միշտ ալա-թուրքա ձեւով եւ ազատ արձակուե-
ցան Տրապիզոնի, Ակնի, Սերաստիոյ շրջանի եւ այլ վայրերու ձեռ-
րակալուած երկրորդական, երրորդական ոճրագործները, քանի որ
զլխաւոր դահիճները ծակուծուկ մտած կամ փախած էին օտար եր-
կիրներ:

Ստորեւ կու տանք Բաբերդի ոճրագործներուն դէմ արձակուած
Պատերազմական Ատեանի վճռագիր մը, զոր ձեւով մը ձեռք անցու-
ցինք:

Շեշտենք, թէ պատերազմական ատեանները իրենց վճռագրերը
զրեթէ գաղտնի կը պահէին եւ եթէ թուրք թերթերը մանր-մունր
քաղուածքներ ընէին, կառավարական թուրք գրաքննիչները կ'արգի-
լէին անոնց հրատարակութիւնը, ինչպէս նաեւ վերցնել կու տային
նկարները ջարդարարներուն, այն պատճառաբանութեամբ, թէ թուրք
ժողովուրդը կը զրգռուի...

Բաբերդ քաղաքի եւ շրջակայ 30 հայ գիւղերու բնակիչ 20.000
հայերուն դէմ գործուած ցեղասպանական ոճիրին վճռագիրը եւս ար-
գիլուած էր հրատարակել: Սակայն թուրքերէն «Թերմիմանը» Հա-

գըյգաթ» թերթը, Աղա Օղլու Ահմետի (Ահմէտ Աղաէֆ) խմբագրու-
թեամբ հրատարակուած, յանդիման էր հրատարակել Բաբերդի
թուրք ոճրագործներու դատապարտութեան վճռագիրը՝ իր Օգոս-
տոս 5, 1920 թիւին մէջ: Սակայն թուրք կառավարութիւնը գրաւեր
էր հրապարակ ելած թիւերը եւ արգիլել՝ անոնց չըջարեութիւնը:

Բաբերդը, Ուիլսոնեան Հայաստանի թուրք եւ հայ սահմանա-
գրծէն 50 մղոն դէպի արեւելք կը գտնուի: Դատավարութեան ընթաց-
քին վկաները մեծամասնութեամբ թուրքեր էին: Հայերը ընդհան-
րապէս կը գոչուանային թրքական դատարաններու առջեւ վկայ ըլ-
լալէ, ոմանք՝ ապագայի վախի պատճառով, ոմանք ալ թրքական ար-
դարութեան վրայ վստահութիւն չունենալու համոզումով:

Բաբերդցիներու ջարդերու մասին Պատերազմական Ատեանը իր
վճռագրով մահուան դատապարտած էր դայմագամ Նուսրէթը՝
գազային վարչական Ա. պաշտօնեան, անոր եւ իր հետեւորդներուն
գործած անլուր ոճիրներուն պատճառով:

Հայկական քաղաքներու եւ գիւղերու մէջ կատարուած ոճիր-
ներու նմոյշ մըն է այս վճռագիրը, որ զէթ ազօտ կերպով կը ներ-
կայացնէ թրքական ցեղասպանութեան զագանութիւնները, թուրք
վկաներով: 20.000 հայ նահատակներուն թիւը թուրքիոյ 1915ի հա-
յութեան 1%էն ալ պակաս է: Բաբերդի գազան (զաւառակը) միայն
մէկն է 281 միւս գազաններէն, որոնց հայ բնակիչներն ալ նոյն ձեւով
սպաննուեցան կամ տարագրուեցան եւ կամ տարագրութեան ճամ-
բաներու վրայ անգէն եւ անսուղ մեռան, դէպի Միջագետքի անա-
պատները քշուելով:

Բաբերդի դայմագամին նման կային ոճրագործ 280 ուրիշ դայ-
մագամներ եւս, որոնք անպատիժ մնացին, հակառակ թուրքերու
դաշնագրային յանձնառութեանց:

Կարգ մը ամերիկացի եւ այլ գրողներ, անգիտութեան պատ-
ճառով, այն կարծիքը կը յայտնէին, թէ թուրք բանակը կամ զինուո-
րականները բաժին չունէին թուրքերու ցեղասպանական արարքներուն
մէջ, ինչ որ բացարձակապէս սխալ է: Հայաբնակ քաղաքներու եւ
գիւղերու մէջ թրքական քաղաքային վարչութիւնը եւ զինուորական
ու ժանտարմըրիի հրամանատարութիւնները սերտօրէն գործակցած
են, ու Բաբերդի վճռագրին մէջ եւս մանրամասնութիւններ կան այս
մասին:

Գերման զինուորական բժիշկ մը, որ 1915ի վերջերը Պաղտատ
գացած թուրք եւ գերման զինուորներուն հետ էր, իր մէկ գրքին մէջ
(էջ 259-264) կը պատմէ այն զարհուրելի արարքները, զորս թուրք

գինուորականները և գինուորները զործած էին տարագրեալ հայ կի- ներու վրայ, Ռաս իւլ Այնի և Մուսուլի շրջաններուն մէջ: Տես գեր- մաներէն «Աւուային սրտամութիւնը Համաշխարհային Պատերազմին»: Տօքթ. Մակնուս Հիրշֆելտ կը գրէ .-

«10·000 գերման գինուորներ, քուրք գինուորներու հետ միա- սին, Գուր էլ Ամարա կ'երբայինք: Անապատին մէջ վրաններ լարած էին: Հայ կիներու եւ աղջիկներու կարուան մը կար մեր մօտերը: Երբ գիշեր եղաւ, դժոխային աղմուկներ լսուեցան: Այդ գիշեր գեր- ման գինուորները եւ սպաները բնաւ չկրցան քնանալ, յափշտակուած ու առեւանգուած կիներուն եւ աղջիկներուն սիրտ բզկտող ճիչերուն եւ աղաղակներուն պատնասով: Մեր գինուորականները չուզեցին մի- ջամտել «քուրքերու ներքին գործերուն»: Որով բռնաբարուող մեր հաւատակից բոյրերուն աղաղակներուն անտարբեր մնացինք: Երբ ա- ռաւօտ եղաւ, պարզուեցաւ սարսափելի տեսարան մը: Այդ աղջիկնե- րը եւ կիները, սրտնք այդ վայրենի բռնակալներուն կողմէ չարչար- ուեր եւ բռնաբարուեր էին, իրաքանչիւրին կոկորդը կտրուած գրտ- նուեցան:

«Գերման իշխանութիւնները պատասխանատուութեան մեծ քա- ժին մը ունին հայերու դէմ գործուած այս վայրագութիւններուն մէջ» կը շեշտէ տօքթ. Հիրշֆելտ (էջ 263):

Նոյն գերման բժիշկը կը գրէ, թէ «սարսափելի դէպքերու ա- կանատես եղայ, 1915ի վերջերը, Թէլ Ապիատի եւ Ռաս իւլ Այնի մի- ջեւ, ուր մերկ, բռնաբարուած կիներու հսկայ կոյտ մը գտնուած էր, իրարու վրայ դիզուած, եւ ետեւին փայտեր գամուած (էջ 261)»:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Գ Ա Ղ Տ Ն Ի

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՄԸ

Սուլթան Համիտի երեսուներեք տարուան բռնապետական շըր- ջանին՝ հայ սոցիալ ճնշելու և հետզհետէ բնաջնջելու համար, կազ- մուած էին թիւով 94 «համիտի» կոչուած քրտական զոււղեր (ա- լայ): Անոնց հետ թուրք խուժանի և թուրք գինուորներու զործակ- ցութեամբ տեղի ունեցած էին 1894-96ի ջարդերը, ուր հայերուն կո- րուստը եղած էր 300·000 և մօտ 400·000 արկածեալներ, 6 նահանգ- ներու մէջ, այրիներով և որրերով միասին, և քանդումներու, կո- ղոպուտի և հրդեհներու նիւթական վնասը գնահատուած էր մօտա- ւորապէս 400·000·000 տոլար:

Այդ գազանային արարքները Եւրոպայի մէջ արձագանգ գտած էին շնորհիւ Եւրոպական գեսպանատուններու տեղեկագրութիւննե- րուն և հայ զործիչներու ջանքերուն:

Եւրոպական մամուլի և խորհրդարաններու արձանագրու- թեանց մէջ Համիտ որակուած էր «Մեծ մարդասպան», «կարմիր սուլթան»: Այդ օրերուն Եւրոպա կը գտնուէին «յեզափոխուած» Երի- տասարդ թուրքեր, որոնք խմբակցութիւն մը կազմած էին և անուըր գրած՝ «Ինքիգամ եւ Թերագգը», 1892ին: Քիչ ետք՝ անուըր փոխե-

ցին եւ զրին «Իքթիհատը Օսմանի», աւելի ետք՝ նորէն փոխեցին անունը եւ այս անգամ կոչեցին «Իքթիհատ վէ Թերագգը»:

Երիտասարդ Թուրքերէն ոմանք այդուած էին Համիտի եւ անոր գործակիցներուն անմարդկային արարքներէն եւ կ'ուզէին մօտենալ ոչ-թուրք տարրերուն: Այդ խմբակցութեան առաջին հիմնադիրները եղած էին Կ. Պոլսոյ բժշկական վարժարանի ուսանողները, մի քանի ուսուցիչներ եւ Կովկասէն եկած թուրքեր: Իսկ Եւրոպայի մէջ ասոնց լիտրն էր Ահմէտ Րիզան: Ահմէտ Րիզա որդին էր «Ինկիլիզ Ալի» կոչուած թուրքի մը: Իր մայրը հունգարացի էր: Րիզա ուսած էր Կալաթա Սեբայի դպրոցը, Կ. Պոլիս եւ 1889ին կրթական տնօրէն եղած էր Պրուսայի մէջ, ապա Եւրոպա անցած էր (ծնած էր 1859ին եւ մեռած՝ 1930ին):

Ահմէտ Րիզա «Երիտասարդ Թուրքերու» ղեկավար եղած շրջանին Փարիզի մէջ հրատարակած էր Փրանսերէն «Մեշվերէք» կիսամսեայ պարբերաթերթը:

Թուրքիոյ մէջ, համիտեան ռեժիմին տակ գործի վրայ էին 20.000 լրտեսներ: «Կասկածելի» Երիտասարդ Թուրքերը փախած էին Եւրոպա: Եւ անհատներ կը հրատարակէին զանազան թերթեր.— 1875ին «Մուլսպիր» (Լրատու), «Հուրիյէք» (Ազատութիւն), 1879ին «Իքթիլալ» (Անկախութիւն), 1889ին «Միւրիւվվէք» (Վեհանձնութիւն), 1899ին տքթ. Ապտուլլահ Ճեւաթ հրատարակեց «Միւնկիլ» (Սուին), Սամի Փաշաղատէ Սեզայի հրատարակեց «Շուրայը Իւմմէք» (Ազգային Խորհուրդ): Թուրք Ազատ Որմնադիրներէն Եգիպտոս ապստամբած Մեհմէտ Մուրատ հրատարակեց «Միգան» (Հաւասարակչութիւն) թերթը: Այդ ամէնը սակայն բուսան սունկի պէտ, եւ առանց տեւելու փակուեցան:

Իթթիհատի հաստատման թուականը 1892 է: Պերնարտ Լուիս կ'ըսէ 1889:

Ահմէտ Րիզայի «Մեշվերէք»-ով բացուած հակա-համիտեան պայքարը 1895էն մինչեւ 1906, բացի Եւրոպայի մէջ շահած կարգ մը համակիրներէն, ոչ մէկ արդիւնք ունեցած էր:

1906ին, Ահմէտ Րիզա յայտարարեց Փարիզի եւ Սելանիկի իր ընկերներուն, թէ առանց զինուորական ուժի կարելի չէ Սահմանադրութեան ի նպաստ որեւէ քայլ առնել: Այդ շրջանին, Էտիրնէի 2րդ բանակի եւ Սելանիկի 3րդ բանակի սպաներուն մէջ կային սակաւաթիւ իթթիհատականներ միայն: Թրքացած հրեաներ՝ «տէօնմէ»ներ, որոնք «սարքզլը» կը կոչուէին, կը պատկանէին Փրանսական եւ իտալական Ազատ Որմնադիրներու Օթեակներուն: Իրենց գլխաւորն էր

Էմմանուէլ Քարասո, իր թուրք ընկերներէն էին Թալէաթ, Ճաւիտ, տքթ. Նազըմ, Տեթհի, Ճամպուլաթ, Միտհատ Շիւքրի, Պուրսալը Թահիր եւայլն: Մուսթաֆա Քեմալ, իրրեւ մասուն եւ իթթիհատական, աննշան դիրք մը ունէր: Այդ շրջանին Ահմէտ Րիզա, որ ինքզինք Օկիւսթ Քոնթի փոզիքիլիզմի (դրապաշտութեան) հետեւող կը նկատէր, հակառակ էր մեծ պետութեանց միջամտութեան Թուրքիոյ մէջ եւ կողմնակից էր Սուլթանի եւ Սալիֆայի իրաւունքներու պաշտպանութեան: Թալէաթ Սելանիկի լիտրներէն էր, ծնած էր Գրըմալը աւանը, Էտիրնէի նահանգին մէջ, Ռոտոփ լեռնային շրջանը: Այդ շրջանին մէջ էր Պաթաքը, ուր կային 60 պուլկար զիւղեր եւ 1876ին ջարդեր կատարուած էին Թուրքերուն կողմէ, որոնք պուլկարները եկեղեցիներու եւ մարագներու մէջ փակած, ողջ-ողջ այրած էին: Գերմանական Համայնագիտարանը՝ Կոռսէ Պրոֆեսուր Թալէաթի ծննդեան թուական յոյց կու տայ 1872, իսկ իտալական Համայնագիտարանը՝ 1871: Թալէաթ 1906-7, Սելանիկի մէջ, քարտուղարն էր Թղթատարական տնօրէնին: Ապա փորձած էր ուսանիլ Սելանիկի իրաւարանական վարժարանը, բայց չէր յաջողած քննութիւններու մէջ, հեռացած եւ այլևս չէր շարունակած իր ուսումը:

1907ին դաշնակցական ղեկավարները, տեսնելով Երիտասարդ Թուրքերուն համիտական բռնակալութենէն դժգոհութիւնը, ձեռք երկարեցին եւ համաձայնութիւն մը կնքեցին անոնց հետ, ձեռք բերելու համար համիտեան ռեժիմի տապալումը:

Յուլիս 10 (23), 1908ին, Օսմանեան Սահմանադրութեան հրատարակութենէն յետոյ, իթթիհատական ղեկավարները, որոնք Եւրոպայի մէջ «ազատականութեան» հովեր առած էին եւ անոնցմէ ոմանք՝ Աիրարները նոյնիսկ ապակեդրոնացումի կողմնակից էին, լքեցին իրենց ազատականութիւնը եւ բանակի վրայ յենած պետական հեղինակութեան կեդրոնացման քարոզիչներ դարձան:

Գեկտեմբեր 6, 1908ին, Օսմանեան Փարլամենթի առաջին նիստին մէջ թուրք երեսփոխանները ժողովին հաղիւ կէսը կը կազմէին: Մնացած կէսը կը ներկայացնէին արարները, յոյները, հայերը, հրեաները, պուլկարները եւ վլախները, 280 երեսփոխաններու զրեթէ կէսը՝ ոչ-թուրք: Իթթիհատականներուն հաճելի չէր այս կազմը:

Հոկտեմբեր 8, 1908ին Աւստրիա կցած էր Պոսնիա-Հերսեգէնը, եւ իթթիհատական ազգայնամոլներ դառնացած էին ու հաշտ աչքով

չէին նայեր ոչ-թուրքերուն եւ մասնաւորապէս հայերուն, որ հայկական նահանգներուն մէջ դերակշիռ թիւ մը կը կազմէին, ինչպէս նաեւ Կիլիկիոյ մէջ:

1909 Յունուար եւ Փետրուար ամիսներուն, դաղտնի կերպով հակահայ քարոզութիւններ, սպառնալիքներ կ'ըլլային եւ նոյնիսկ ջարդի վտեր կային: Առիթը ներկայացաւ Մարտ 31, 1909ին, եւ Կ. Պոլսոյ մէջ, յետաջրջական շարժման առիթը օգտագործելով, արեան մէջ թաթխեցին Կիլիկիան, որ 1895ի ջարդէն մասամբ ազատած էր: Իթթիհատի Սելանիկի Կեդրոնը եւ Ատանայի Իթթիհատի մասնաճիւղը, կառավարական զինուորներու միջոցով եւ թրքական մոլեռանդ խուժանին գործակցութեամբ, երկու շարժումն ընթացքին 30·000 հայեր նահատակեցին. աղէտեալներու նիւթական ընդհանուր կորուստը եղած էր 350·000·000 տոլար, հրդեհներու եւ հրկիզումներու աւերներն ալ հաշուելով:

Իթթիհատական սպանիւք բաղկացած պատերազմական ատեանի մը միջոցով, 1909ին, զիխաւոր վարչական եւ զինուորական թուրք ոճրագործները զերծ մնացին պատիժէ եւ թուրք ժողովուրդի ստորին դասակարգը սկսաւ յիստորալ: Իսկ թուրք մտաւորականներ թունալից հրատարակութիւններ կ'ընէին, կը հրատարակէին փանթիւրքական գրքոյկներ, պրակներ, էօմըր Սէյֆի, Ալի Ճանիպ, Չիա Կէօք Ալի, Համտուլլահ Սուպհի եւ այլոց միջոցով:

Թալէաթ, որ 1908 Դեկտեմբերին էտիրնէի երեսփոխան եղած էր, քանի մը անգամ ներքին գործոց նախարար եղաւ, 1908ին, 1911ին, 1913ին:

1909 Մայիս 25ին, կրք երկու քննիչ երեսփոխաններ՝ Յակոբ Պապիկեան եւ Եուսուֆ Քեմալ իրենց տեղեկագիրները բերին Ատանայի ջարդին պատասխանատուներու մասին, Թալէաթ պէյ Երեսփոխանական Ժողովի փոխ ատենապետներէն էր եւ ոչ միայն չկարգացուեցան տեղեկագիրները, այլեւ Պապիկեանը, թուրք խոճայի մը միջոցաւ, թունաւոր սիկարէթով մահացաւ: Եուսուֆ Քեմալն ալ Թալէաթի կողմէ Փարիզ զրկուեցաւ, «իրաւարանութիւն ուսանելու համար»: Հակառակ հայ երեսփոխաններու բողոքներուն, Կիլիկիոյ ջարդի քննութեան հարցը թաղուեցաւ Օսմանեան Փարլամենթին մէջ:

Իթթիհատը, պետական իշխանութիւնը ձեռք անցրնելով, դարձած էր զինուորական օլիկարշի մը (սակաւապետութիւն) եւ Օսմանեան կայսրութիւնը աստիճանաբար զէպի քայքայում դիմեց:

«Հաւասարութիւն», «եղբայրութիւն», «արդարութիւն» թուրքի վրայ մնացած էին:

**

1910 Օգոստոսին, Սելանիկի մէջ, Իթթիհատը համաժողով գումարեց: Գաղտնի մէկ նիստին մէջ՝ Թալէաթ պէյ հետեւեալը յայտարարեց. «Մենք ուղեցինք կեաւորը օսմանցի շինել եւ չկարողացանք: Այժմ միակ միջոցը կը մնայ դէնքով ճղմել զանոնք»: Ապա համաժողովը ընդունեց կեդրոնաձիւղ ճնշողական քաղաքականութիւն մը՝ Փանթիւրքիզմի գործադրութեան, ջարդի միջոցներով (տե՛ս, Կուչ-Թեմիզբլի, հատոր 4, էջ 207):

Երիտասարդ թուրքերը նախ ալպանացիները թրքացնել ուղեցին: Զինաթափ բրին զանոնք: Սակայն ալպանացիները ապստամբեցան, կարդ մը ջարդեր տեղի ունեցան Պալքաններու մէջ: Վրայ հասաւ խաւարական պատերազմը՝ Սեպտեմբեր 29, 1911ին (ն. տ.), Իթթիհատական Հազար փաշայի գահալիճը ինկաւ: Անոր յաջորդեց Սալիտ փաշան, որ մասամբ ընդունելի էր Իթթիհատին: Հակա-Իթթիհատականները կը սրահանջէին Քեամիլ փաշան, բայց ան կը մերժէր ըսելով, թէ «մինչեւ որ երիտասարդ սրիկաները (Իթթիհատականները) չմաքուին, չեմ ընդունիր վարչապետութիւնը»:

Հակառակ խաւարական պատերազմի շարունակման, Իթթիհատը 1911 Հոկտեմբերին, դարձեալ Սելանիկի մէջ համաժողով գումարեց: Տարի մը առաջ տրուած որոշումներուն վրայ աւելի չեչտ գրուեցաւ: Որոշում անցուեցաւ որ ջնջուի ոչ-թուրքերու լեզուն եւ թրքացուին այդ տարրերը եւ եթէ այդ կարելի չըլլայ, դէնքով բնաջնջուին: Թուրքերէն ոմանք այդ որոշումներուն համակարծիք չեղան եւ Նոյեմբեր 21, 1911ին մտան «Հիւրբլէթ-Իթթիլաֆ»ի մէջ:

Երբ 1911 Դեկտեմբերին երեսփոխանական ընտրութիւններ տեղի ունեցան, Իթթիլաֆական դարձող երեսփոխանները ընդդիմադիր դարձան Իթթիհատին: Իթթիհատականները իրենց տուած որոշումները չկրցան մասամբ գործադրել: Հազիւ խալարական պատերազմը վերջացած, Հոկտեմբեր 15, 1912ին, Հոկտեմբեր 20, 1912ին սկսած էր Պալքանեան պատերազմը: Հայերը զինուոր էին թուրք բանակին մէջ, երեսփոխանական Ժողովի Նոյեմբեր 1, 1909ին ընդունած քրիստոնեաներու զինուորայրութեան օրէնքին համաձայն:

Իթթիհատի յաջորդական համաժողովները գումարուեցան Կ. Պոլսոյ մէջ, 1912ին, 1913ին, 1916ին, 1917ին եւ 1918ին:

1912ին Պալքանեան Ա. պատերազմի պարտութեան օրերուն՝ կիպրացի ծերունի Քեամիլ փաշան, որ անդլիասէր էր, կը պնտուէր Եգիպտոս: Հակաիթթիհատականներ ուղեցին որ ան Կ. Պոլիս գայ եւ

ստանձնէ պետութեան ղեկը: Ան սուլթանին գրեց հետեւեալը.— «Երկրին բոլոր դժբախտութեանց պատճառը Իթթիհատն է»: Ան կ'առաջարկէր լուծել Իթթիհատը, որուն պաշտօնաթերթին՝ «Թաանին» խմբագիր Հիւսէին ճահիտ (յետոյ «Յալլըն» կոչեցեալ) Քեամիլը որակած էր «գերեզմանէն խօսող» մը:

Իթթիհատը, նկատի ունենալով ընդդիմադիրներուն կարեւոր թիւը Օսմանեան Փարլամենթին մէջ, պարագայ մը, որ արգելք պիտի ըլլար իր յարձակողական քաղաքականութեան եւ ծրագրին, լուծել տուաւ Փարլամենթը եւ նոր ընտրութիւններ կատարուեցան ճշուամբերու տակ: Այս ընտրութեանէն յետոյ՝ թուրք ընդդիմադիրներուն թիւը իջաւ ճի: Իթթիհատը անվիճելի կերպով տիրապետեց եւ իր կեդրոնը Աելանիկէն փոխադրեց Կ. Պոլիս:

Սակայն, պուլկարական բանակը պարտութեան մատնած էր թուրք բանակը եւ հասած էր մինչեւ Չաթալճա: Այս անգամ Քեամիլ փաշա վարչապետ եղաւ (որովհետեւ Երիտասարդ թուրքերը չկըրցան կառավարել) եւ լուծեց Իթթիհատական մեծամասնութիւն ունեցող Փարլամենթը: Հակահարուածը չուշացաւ: Քեամիլի դահլիճին պատերազմական նախարարը՝ Չիրքէզ Նազըմ փաշա սպաննուեցաւ Յունուար 10 (23) 1913ին, Էնվերի եւ Թալէաթի ղեկավարութեամբ ծպտուած թուրք սպաննու եւ խուժանի մը կողմէ, Բարձրագոյն Դրան սանդուխներուն վրայ: Իթթիհատը կրկին ձեռք անցուց ոստիկանութիւնը եւ պետական բոլոր պաշտօնատուները: Իթթիհատի բռնակալական եւ սարսափի քաղաքականութիւնը շարունակուեցաւ: «Ազատութեան», «եղբայրութեան» համար երդում ընողները դարձան մէկ-մէկ զազանային հրոսակներ:

Հայերը՝ կեանքի, պատիւի եւ ինչքի ապահովութեան համար օրինական ամէն միջոց սպառած էին եւ Բարենորոգումներու գործադրութեան համար դիմած էին օտար պետութեանց: Յուլիս 1913ին սկսած բանակցութիւնները վերջապէս յանգած էին եզրակացութեան մը եւ Փետրուար 8, 1914ին (ն. տ.) ուս ղեսպանատան գործակատար Կուլքեւիչ եւ Թուրքիոյ վարչապետ Սալիտ Հալիմ փաշա ստորագրած էին Հայկական Բարենորոգումներու Համաձայնագիրը: Գերմանիա լռելիայն անհամաձայն էր այդ բարենորոգումներուն: Գերմանիա կ'ուզէր իր ազդեցութեան տակ առնել Թուրքիան: Հայկական Բարենորոգումները ջուրը ձգելու համար, Էնվէր եւ ընկերները զաղտնի զինակցութիւն կնքեցին Գերմանիոյ հետ, 1914 Օգոստոս 2ին:

Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին, Յունիս 28, 1914ին, Սարահեւոյի մէջ պոսնիացի սերպ ահաբեկիչ մը՝ Կաւրիլօ Փրինցիփի սպաննած էր Աւստրիոյ դահաժառանգ Արհիդուքս Ֆրանսիս Ֆերտինանսը եւ իր կինը: Այս դէպքէն առաջ եւ յետոյ, Կ. Պոլսոյ մէջ, աւստրիական զինուորական լիազօր տեղակալ մարաշախտ Եոզէֆ Փոմիանքովսքի կը տեսակցի Կ. Պոլսոյ դերման ղեսպան Վանկենհայմի հետ եւ երկու առիթներով դերման ղեսպանը կ'ըսէ Փոմիանքովսքիին.— «Հայաստանի բարենորոգութեանց գործադրութիւնը պետութեան կողմէ բոլորովին ձախողած (Փրոֆէյլթ) եւ անօրոտ դարձած է (նուցլաւ): Հայերուն համար այժմ մէկ միջոց միայն մնացած է, — իրենց կեանքը եւ սեփականութիւնը փրկելու համար պէտք է խլամանան»: Այդ յայտարարութիւնը յատկանշական է, որ տեղի ունեցած է Թուրքիոյ պատերազմի սկսելէն ճիշդ 4 ամիս առաջ: (Տեսնել «Օսմանեան Կայսրութեան Քայքայում»-ը, էջ 163, տպուած Լայիցիկ, 1926ին, — Տէո Յուլիանի մեկնաբանութիւն Օսմանիչէն Ռայխէս, Ամալթէտ Ֆերլակ, Եոզէֆ Փոմիանքովսքի):

«Թուրքիան միայն թուրքերուն» քաղաքականութիւնը աւելի ամրապնդուեցաւ Գերմանիոյ այս զինակցութեամբ: Օսմանեան բանակին ղեկավարութիւնը յանձնուեցաւ գերման զօրավար Լիման Փոն Չանտերսին եւ անոր ընկերացող գերման զօրավարներուն եւ զնդապետներուն:

Հայոց դէմ ցեղասպանութեան ծրագիրը գործադրելու եւ Հայկական Դատը եւ հայ ազգը ընդմիշտ ընդհողելու նպատակով, ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ տեսակցութիւն ունեցաւ Յունուար 20 (Փետրուար 2) 1915ին, Կ. Պոլսոյ դերման ղեսպան Վանկենհայմին հետ, պարզեց անոր՝ գործադրելիք ծրագիրը եւ խնդրեց որ Գերմանիան չմիջամտէ կամ արգելք չըլլայ այդ ծրագիրներուն: Եւ ահա գերման ղեսպանը, ինչպէս իր տեղեկագրին մէջ յիշուած է, կը թելադրէր իր կառավարութեան «արգելք չըլլալ հայոց դէմ առնուելիք քայլերուն»:

Արիւնարբու դահճապետ բժիշկ Պէհաէտտին Շաքիր(*), որ

(*) Պէհաէտտին Շաքիրի ստորագրութիւնը, որ կարիքի մը կամ խելափառի մը ճանկերուն ձեւն ունի, հնչեցնուի միայն, երբ տեսանք իր ճամակագրութիւն վրայ գրուած ճամակներուն նոյն ձեւով ստորագրութիւնները:

Իթիհատի ամենէն ազդեցիկ անդամներէն մէկն էր, «Պատասխանատու Մարմին»ի անունով կը զրէր, Փետրուար 18, 1915ին, թէ «Թուրքիոյ մէջ ոչ մէկ հայ ողջ պիտի թողուի, անոնց սեփականութիւնները պիտի իւրացունեն կառավարութեան կողմէ: Կառավարութեան յայն իրաստութիւններ տրուած են, եւ Իթիհատի պատասխանատու քարտուղարները(*) պիտի հսկեն այդ գործերուն» (իմա՛ սպանութեանց եւ կողոպուտին): Դարձեալ նոյն Պէհաէտտին Շաքիրը՝ Մարտ 25, 1915 թուակիր նամակով կը յայտնէր, թէ «զինուորական հրամանատարներուն(**) հարկ եղած հրահանգները տրուած են սպանութեանց զորքերու կարգադրութեանց համար»:

Իթիհատականներուն հրէշային զործունէութիւնը ժամանակազրական կարգով տեսնելու համար հարկ է կարդալ հետեւեալ ազբիւրները.— Ահմէտ Իզլէթ փաշայի «Յուշերը» (զերմաներէն) 1927ին, Լայիցիկ տպուած: Իբրահիմ Տեմօ. «Իթիհատ-Թերազը կուսակցութեան կազմութիւնը եւ յուշերս անոր հայրենասիրական ծառայութեան եւ ազգային յեղափոխութեան մասին», 1939, Իբրահիմ Ալաէտտին Կէօլսայի՝ «Հանրազիտարան՝ թուրք ականաւորներ»:

(*) Պէհաէտտին Շաքիրի ակնարկած այդ պատասխանատու-ֆարտուղարներն էին.— Միտհաթ Շիւքրի՝ ընդհանուր ֆարտուղար, Կ. Պոլիս, գործակից՝ տաք-Նազըմ, եւ Կեդրոնական Կոմիտէի ուրիշ մէկ անդամը՝ «Կիւշիւֆ Նազըմ» կոչեցեալը: Հիւմի՛ էրգրումի պատասխանատու ֆարտուղարը, Նայիլ՝ Տրապիզոնի պատասխանատու-ֆարտուղարը եւ գործակից՝ Բիգայի, Իբրահիմ՝ Պրուսայի պատասխանատու ֆարտուղարը, գործակից՝ Մեհմէտչէի, եւ Իբրահիմ: Նեքաթի՛ Անգարայի պատասխանատու ֆարտուղարը, Ղանի՛ Էտիքմէի պատասխանատու ֆարտուղարը, Հասան Ֆեհմի՛ Քասթեմունիի պատասխանատու ֆարտուղարը, Ֆերիտ՝ Գոնիայի պատասխանատու-ֆարտուղարը, Ղանի՛ (տրապիզոնցի զինուորական տեղակալ) պատասխանատու ֆարտուղար Սեբաստիոյ, Ազիս՝ պատասխանատու ֆարտուղար Հալեպի, Ատտար գատէ Հազըր՝ պատասխանատու ֆարտուղար Տիգրանակերտի եւլմ.:

(**) Զինուորական հրահանգը տրուած է պաշտօնական վաւերագրին միջոցով, բոլոր օրտուի (բանակի) եւ զու օրտուի եւ Քըրդայի (գորաբաժնի) հրամանատարներուն: Ասանց կարգին են՝ Յոյ բանակի հրամանատար Մահմուտ Քեմալի փաշա (էրգրում), Էմվերի ընկերը, Խալիլ փաշա (Էմվերի հօրեղբայրը), Ֆախրի փաշա (Հալեպ), Քեազիմ (Վան, Պիթլիս), Նուրի, Միւսթէլ Շեւք, Քէօր Իսսան, կովկասեան ցակատ, եւայլն:

րու» (1946), Ահմէտ Պետեի Գուրանի «Մեր յեղափոխական պատմութիւնը եւ եւ Իթիհատ Թերազը», (1948), Լութֆի Էրիճի «Մեր մօտ քաղաքական կուսակցութիւնները եւ կուսակցութեան պատմութիւնը», (1949), Դարիզ Զ. Թունայայի «Քաղաքական կուսակցութիւնները Թուրքիոյ մէջ» (1952):

Տոն Միքուշ զերմանացի զինուորականը կ'ըսէ, թէ Իթիհատականներէն 7 անձեր գաղտնի ժողովի մէջ որոշումներ կու տային եւ հրահանգները կը հաղորդէին կառավարութեան (էջ 72-73):

Այս ցեղասպանութեան հրահանգներուն, գրութիւններուն յորդական քայլերէն մէկը եղած էր Ապրիլ 11 (24)ի ձերբակալութիւնները, Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ, ու անմարդկային ոճիրներ հայարնակ բոլոր վայրերուն մէջ:

Եւ այդ բոլոր վայրագութիւնները վարագուրելու համար կեղծ ու պատիր օրէնքներ եւ կանոնադրական հրահանգներ (թալիմաթնամէներ) պատրաստուած էին:

Կու տանք թարգմանաբար գաղտնի պաշտօնագիր մը (պատրաստուած Թալէաթի կողմէ, հայոց դէմ կատարուելիք տարագրութիւններու եւ ջարդերու մասին), կեղծիքով, նախատինքով եւ սուտերով լեցուն:

Այդ պաշտօնագիրը ներկայացուած էր դահլիճին Մայիս 13ին (1915) եւ «ի զործադրութիւն» ըսուած է Մայիս 16ին (1915), թէ եւ այդ թուականէն առաջ ալ արդէն զործադրուել սկսած էին ոճիրներ: Գաղտնի վաւերագրին թիւն է 280:

Թալէաթի տեղեկագիրը լսող դահլիճի նիստին, բացի Թալէաթէն, ներկայ եղող նախարարներն էին Սայիտ Հալիմ փաշա՝ վարչապետ, Էնվէր՝ պատերազմական նախարար, Ճեմալ՝ ծովային նախարար (Սուրիա գտնուելով բացակայ էր), Պայրի՝ Շէյխ Իւլ Իսլամը, Փիլիպոսէ Իբրահիմ՝ դատական նախարար, Ալի Շիւքրի՝ կրթական նախարար, Ահմէտ Նեսիմի՝ արտաքին գործոց նախարար, Պալի՝ պետական խորհուրդի նախագահ, Մուսթաֆա Շերէֆ՝ առեւտրական նախարար, Քեմալ՝ պարենաւորման նախարար, Ճամպուրաթ՝ ընդհանուր ապահովութեան (ստիկանական) նախարար, Ալի Միւնիթ՝ հանրօգուտ շինութեանց նախարար:

Այս նիստէն ամիսներ առաջ եւ յետոյ որեւէ դիմում՝ հայ երեսփոխանի կամ Պատրիարքի միջոցաւ, իուսափողական պատասխանի եւ երբեմն ալ նախատինքի եւ ծաղրանքի առարկայ կ'ըլլար:

Գաղտնի տեղեկագրին պատճենը հետեւեալն է.—

«ՀԱՅԵՐՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՂԱՐԿՈՒՄԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ»

Ներքին գործոց նախարար վսեմապատիւ Թալէաթ
պէյ էֆենտիի կողմէ վսեմաշուք եւ բարձրապատիւ
(տեւէթյու վէ ֆեխամեթյու) իշխան վարչապետ
Սայիտ Հալիմ փաշայի ներկայացուած
գաղտնի գրութեան պատճենը:
Թիւ 280, Մայիս 13, 1331 (1915)

«Ինչպէս յայտնի է ձեր բարձրապատուութեան, օսմանեան հո-
ղային ամբողջականութեան և պետական բարձր սուլթանութեան դէմ
յարձակողական նպատակներ սնուցանող և կործանարար ցանկու-
թիւններով տարրեր, մասնաւորապէս պետութեան հպատակներուն
միջեւ բաժանում, խռովութիւն ձգելու ու ծանօթ պետութիւններ խա-
բելով քսութիւններով, կարգ մը անձերու կողմէ խոտուածներ առնե-
լով, սպառնալիքներ ընելով, դանապան միջոցներով հայ հասարակու-
թեան (էրմենի նեմաաթ) մէջ անջատողականութեան ջանքեր տեւա-
կանացուցած են: Պետութեան ջանքերուն արդելք եղած և ոստիկա-
նական ուժերու վրայ յարձակումներ կատարած են՝ զինեալ ապստամ-
բութեան ձեւով երբեմն-երբեմն երեւան բերած իրենց գործերով:
Քննադատած են պետութեան խաղաղութեան և ապահովութեան հա-
մար ըրած գործերն ու բարենորոգումները, սրոնց գործնականացու-
մը տեսած ըլլալուն հակառակ, շարունակած են արտաքին խարէու-
թիւնները, մինչ ասիկա զուտ ներքին խնդիր մը ըլլալու հանգաման-
քը պէտք չէր կորսնցուցած ըլլար(*): Եւ տեղական բարենորոգում-
ներու ջանքերը օտարներու գործակցութեամբ պէտք չէ որ ըլլային
եւ պետութեանց բանակցութեանց նիւթ դառնային, օսմանեան նա-
հանգներու մէկ մասին մէջ, տեղական առանձնաշնորհումներու, օ-
տար ազդեցութեան և հսկողութեան տակ՝ մասնաւոր վարչական
կարգադրութիւններով: Օսմանեան պետութեան կողմէ օտար ձեւով
կատարուած բոլոր բարենորոգումները և կազմակերպութիւնները Օս-

մանեան հայրենիքի բաժանումին և անդամահատութեան (ինքբասամ
վէ քեհեզգի) յանդած են, որոնք անցեալի բազմաթիւ փորձառու-
թիւններով և ցաւալի օրինակներով հաստատուած են: Անկախութիւ-
նը և Օսմանեան երկրին ամբողջականութիւնը տեւականացնելու պա-
րագան և միւս կողմէ օտար թելադրութիւններով նման գործերու կա-
տարումը պետութեան ուշադրութեան առարկայ եղած ըլլալը յայտնի
է: Պետութեան կենսական ջանքերու կարգին կարեւոր գործ մըն է
այս մտասանջութիւնը (դայիլէ), զայն հիմնական կերպով լուծելու,
վերջացնելու և ամբողջապէս ջնջելու համար (ֆիլիիէն իգալէսի):
Այդ մասին միջոցներ պատրաստելու և պատրաստ զտնուելու մասին
խորհած և նկատողութեան առած ենք: Վերջերս, պատերազմական
չրջաններու կից վայրերու մէջ, հայ բնակիչներէն մաս մը, երբ կայ-
սերական բանակը օսմանեան սահմանները թշնամի պետութեանց դէմ
պաշտպանելու գործով զբաղած էր, բանակին շարժումները դժուար-
ացուցած(**) և աստիճիններու ու ռազմաթերքի զինուորական փո-
խադրութիւնը գժուարութեան մատնած է: Թշնամիին հետ ջանքեր
և յոյսեր միացուցած է, մասնաւորապէս թշնամի զիժերուն միացած
է և երկրի ներքին մասին մէջ յարձակում գործած է զինուորական
ուժերու և բնակչութեան վրայ, կատարած է ջարդ, աւառարութիւն
և կողոպուտ, և ուստեսեղէն հայթայթած է թշնամիին ծովային
ուժերուն, յանգանութիւնը ունեցած է ամբացեալ վայրերը ցոյց տա-
լու անոր:

Մեր շարժումներուն ապահովութեան համար, այդ տեսակ խռո-
վարար տարրերը որոշած ենք ռազմավայրերէն հեռացնել, նաև այն
զիւզերէն, ուր նման շարժումներ կան կամ ապաստանարան դար-
ձած են անոնց:

Կեդրոնական կառավարութիւնը, տեղական պաշտօնեաներու
հետ խորհրդակցարար, արգէն զինուորական պետերու միջոցով գոր-
ծի սկսած է Վանի, Պիթլիսի և Իրզրումի նահանգներուն մէջ:

(Թալէաթ պէյի կողմէ բացատրութիւն տրուած է նաև, որ
վերջերս տեսնուած անհրաժեշտութեան վրայ, որոշուած է տարա-
զրել հայերը ամբողջութեամբ, հետեւեալ վայրերէն.— Պիթլիս, Իրզը-
րում, Վան, Ատանա, Մարաշ, Հալէպ, Անգարա, Տիարպեքիր, Մա-

(**) Գիտնալով հանդերձ որ թրքական բանակին մէջ շարաշար կերպով կը
ծառայեն, բանակի կամ գործաւորական վաշտերու մէջ, 150-000է աւելի հայ զին-
ուորներ:

(*) Ակնարկութիւնը Պօղոս Նուպար փաշայի պատուիրակութեան գործերու
մասին է:

մուրէթ իւլ Ազիզ, Տրապիզոն, Սիւաս, Ճանիկ, Գայսերի, Խիւտա-վենտիկեար, Գարասի, Նիյոն, Գարահիսար Սահիպ, Գոնիա եւ Իզմիթ) :

Բացառութիւն նկատելով Ատանա քաղաքը, Սիւ քաղաքը, Մերսին քաղաքը, տարազրել հայերը Ատանայի, Մերսինի, Գողանի (Հաճըն), Ճեպիլըպերեթի լիւաներէն (սանճաքներէն), ի բաց առեալ Մարաշ քաղաքէն, տարազրել Մարաշի սանճապէն, ի բաց առեալ Հալեպի նահանգի կեղրոնական գաղապէն, տարազրել հայերը, Իսքենտերունէն, Պէյլանէն, Ճիսրը Շուղուրէն եւ Անթալիայէն, զիւղերէն ու քաղաքներէն, եւ անոնց տարազրութեան գործը արդէն սկսած է զէպի հարաւային նահանգները :

Վանի նահանգին կից հիւսիսային շրջաններու հայերը բացառաբար պիտի տարազրուին Ուրֆայի սանճապէն հարաւը, Հալեպի նահանգին հարաւ արեւելքը եւ Սիւրիոյ վիլայէթին արեւելեան շրջանը, փոխազրելով եւ գետեղելով գանոնք կառավարութեան մատնանշած եւ որոշած վայրերուն մէջ : Այդ գործողութիւնները արդէն սկսած են եւ կը շարունակուին : Ասիկա ընդունուած է պետութեան հիմնական շահերուն համար : Եւ այս հոստոնքը միակերպ ձեւի մը եւ կանոնի մը կապելը անհրաժեշտ ըլլալուն, մտածուած է տարազրուելիքները տեղահանել եւ իրենց որոշուած տեղերը զրկել :

Անոնց անցնելիք ճամբաներուն վրայ, իրենց կեանքի եւ սեփականութեանց ապահովութեան եւ հանդստութեան համար, մինչեւ իրենց որոշեալ տեղերը հասնիլը եւ գետեղումը, Մուհաճիւրներու Վարչութեանն ուստեղէնի յատկացումներ պիտի ըլլան : Տնտեսապէս եւ նիւթապէս օգնելով կարօտեալներուն, համեմատական կերպով, կառավարութեան կողմէ ընտկարաններ պիտի շինուին եւ երկրագործներուն սերմնացու եւ կարօտեալ արհեստաւորներուն գործիքներ պիտի բաշխուին . իրենց լքած քաղաքներուն մէջ սեփականութիւնները եւ կալուածները կամ անոնց արժէքները յարմար ձեւով մը պիտի վերագարձուին (*), եւ անոնցմէ պարպուած գիւղերուն մէջ մուհաճիւրներ ու աշիրէթներ պիտի տեղաւորուին եւ սեփականութիւնները (տուները եւ հողերը) մուհաճիւրներուն պիտի յանձնուին, ա-

(*) Ծնական յարեքայութիւն : Ջարդուած էին 1.600.000է աւելի հայեր, եւ հայոց նիւթական կորուստը եղած էր \$5.000.000.000 տոլար : «Իքթիսատ» յաշարագ «Հալպ» շարունակեց մոյն գիշատիչ քաղաքականութիւնը : — Ո՛չ մէկ սեմթի հատուցում հայերուն :

նոնց արժէքը գնահատելէ յետոյ : Աւաններու եւ քաղաքներու մէջ հայերուն ունեցած անշարժ կալուածները պիտի արձանագրուին, արժէքները պիտի գտնահատուին եւ պիտի բաշխուին մուհաճիւրներուն եւ անոնց շարժածելիքներէն ձիթաստաններ, թթաստաններ, այդիներ, նարինջի պարտէպներ, խանութներ, խաներ, գործարաններ, մթերանոցներ եւ նման սեփականութիւններ աճուրդով պիտի ծախուին կամ վարձու պիտի տրուին եւ զոյացած զումարները, սեփականատէրերու անունով, իրը սուանց պիտի յանձնուին պետական գանձարկղներու (մալ-սամալը), տէրերուն յանձնուելու համար : Կատարուած ծախքերու գումարները պատշաճ նկատուած է վճարել մուհաճիւրներու յատկացեալ գումարներէն :

Այդ գործատնութիւնները կատարելու մասին, արդէն մասնաւոր կանոնադրութիւն (քալիմաքնամէի մալտուս) պատրաստուած է եւ անոր արժանագրութիւններուն գործողութեամբ, լքեալ գոյքերը (էմվալը մերքուքէ) ապահով կերպով կը մատակարարուին եւ կը սրահանուին : Ընդհանուր կերպով, կանոնադրութեան համաձայն, գետեղումներու խնդիրը արագացնելու եւ կանոնաւորելու եւ քննութեան ու հսկողութեան տակ պահելու համար, նախարարութեանն ստացուած հրահանգներու համաձայն պիտի գործուի եւ որոշումներ պիտի տրուին, օժանդակ յանձնախումբեր պիտի կազմուին :

Ամսավճարով պաշտօնեաներ գործի պիտի կոչուին, որոշ իրաւասութիւններով եւ պարտականութիւններով, եւ ուղղակի կերպով կառուած պիտի մնան ներքին գործերու նախարարութեան : Այդ յանձնախումբերը պիտի ունենան 1 նախագահ եւ 2 անդամներ, որոնցմէ մին պիտի ընտրուի ներքին գործերու նախարարութեան պաշտօնատունէն եւ միւսն այլ ելեւմտական պաշտօնատան կողմէ : Նման ձեւով յանձնախումբեր պիտի կազմուին եւ իրենց գործի վայրերը պիտի զբոսնուին : Այն վայրերուն մէջ, ուր յանձնախումբը չէ զրկուած, այս կանոնադրութեան տրամադրութիւններուն համաձայն այդ իրաւունքները տրուած են վայրերուն (*) (նահանգապետ) : Նախարարներու խորհուրդի նիստին մէջ նկատի առնելու եւ որոշում տրուե-

(*) Թալէաթի ակնարկած վալիներէն եւ այլ վարչական պաշտօնեաներէն մաս մը այդ սահման պաշտօնի վրայ էին :

Ընդհանուր կառավարիչներ (վալի).— Երզրում՝ Թահսիմ պէյ, վան՝ Ճեւտէք պէյ, Սեբաստիա՝ Մուսամէր պէյ, Տիգրանակերտ՝ տոքթ. Բեշիտ պէյ, Տրապիզոն՝ Ճեմալ Ազիզի պէյ, Կարթլոյ՝ Սապիթ պէյ, Պիրլիս՝ Ապտիւլ Խալիպ պէյ,

լու մասը ձեր բարձրագատուութեան կամքին եւ հրամանին ենթակայ է» :

Մայիս 13, 1915

(Մակագրուած. «Մուճեպիճնէ ամէլ» «Ի գործադրութիւն ըստ պարունակութեան») :

Մայիս 16, 1915

Այս վաւերաթուղթին թուականէն մէկ օր յետոյ, Մայիս 14 1915ին, թերթերու մէջ հրատարակուած էր 3 յօդուածէ բաղկացեալ հայոց տարագրութեան օրէնք մը :

Այդ օրէնքը, միջ-նախարարական շրջաբերականներու մէջ, կը բաղկանար 8 յօդուածներէ, որոնցմէ 5րդ գաղտնի պահուած էին եւ կը վերաբերէին հայերու ինչքերու գրաւման :

Այդ գաղտնի մասերուն պատճէնը, ուրիշ փաստաթուղթերու կարգին, այս տողերը գրողը անձամբ ընդօրինակած է ծովային նախարարութեան դիւանատան (Էվրագ օտասի) արձանագրութիւններէն, երբ այդ պաշտօնատունը, 1921ին, գրաւուած էր Միջ-Դաշնակցային Մովային Հակակռի Յանձնախումբին կողմէ :

ՋԱՐԴԱՐԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թրքական ջարդարարական ժողովներու արձանագրութիւնները, ինչպէս նաեւ Հայկական Եղեռնի վերաբերեալ պետական փաստաթուղթերը, 1918 Հոկտեմբերին թրքական նախարարութեանց արխիւներուն մէջէն վերցուած էին, պաշտօնական փաստեր չձգելու համար ապագային :

Այդ գրաւոր փաստերուն մաս կը կազմէին նաեւ նախարարներուն՝ իրենց ստորագրասեւիներուն՝ վալիներուն, միւթեսարըֆներուն հետ ունեցած թղթակցութիւնները, պատերազմական նախարարութեան կողմէ բանակի հրամանատարներուն տրուած հրահանգները, շրջաբերականները եւ յարակից գրութիւններ՝ սեփականութեանց գրաւումներու եւ իւրացումներու մասին :

Հայկական Եղեռնի հետ կապ ունէին նաեւ Թեշխիլաքը Մախսուէի՝ պետութեան կողմէ կազմակերպուած այդ ջարդարարական մեքենային թղթակցութիւնները, հեռագիրները եւ ծածկագիրները :

Ազիզ պէյ, որ Թեշխիլաքը Մախսուէի ղեկավար անդամներէն մին էր եւ նախապէս ալ եղած էր ընդհանուր ապահովութեան տնօրէն, 1918 Հոկտեմբերի սկիզբը, Թալէաթի փախուստէն առաջ, թէ՛ Թեշխիլաքը Մախսուէի մասնաւոր կազմակերպութեան փաստաթուղթերը եւ թէ՛ Իթթիհատի Ընդհանուր կեդրոնի թուղթերը, պաշտօնատանց հետ եղած ստուարաթիւ թղթակցութիւնները, պաշտօնէն հեռանալէ առաջ, տարած եւ այլևս չէր վերադարձուցած :

Սակայն եւ այնպէս, երբ զինադադարէն յետոյ կազմուեցաւ Պատերազմական Ատեան մը, ջարդարարները դատելու Ծպատա-

Պրուսա՝ Օսման պէյ, Անգարա՝ Աքըֆ պէյ, Ատամա՝ Իսմայիլ Հագգը պէյ, Եւլմ :

Միւթեսարըֆներէն ումմֆ.— Երզնկա՝ Մեմուտի պէյ, Սամսոմ՝ ձեմալ պէյ, Մալաթիա՝ Ֆուատ պէյ, Կեսարիա՝ Զեֆայի պէյ, Մարաշ՝ Հայտաք պէյ, Իզմիր՝ Մագհար պէյ Եւայլմ :

Գայմագամներն էին (արիւմարբու) միայն Տիգրամակերտի շրջանին մէջ.— Մարտին՝ Պետրի, Սեւերէկ՝ Իհսամ, Պշերի՝ Սապիթ-Խալիս, Լճէ՝ Նուրի, Բալու՝ Նեմիպ գատէ Գատէր, Սիլվամ՝ Զիւլփի Ատիլ եւ հարիւրաւորներ միւս անհամզներուն մէջ :


կոյ» օսմանն ան Երեսփոխանական Ժողովի 5րդ Յանձնախումբի թուղթերուն մէջէն գտնուեցան կարգ մը փաստաթուղթեր, որոնք կը հաստատէին գոյութիւնը ծածկագիր հետազոտներու արխիւարու բանաստեղծներէ չեթէներ կողմէն մասին, 1914 Նոյեմբերէն սկըսեալ: Չեթի առկ կան այժմ Նոյեմբեր 16 և Դեկտեմբեր 16, 1914, Նոյեմբեր 20, Դեկտեմբեր 16 և Դեկտեմբեր 19, 1914 թուակիր զըրութիւններ այլ մասին, այն օրերէն, երբ ոչ Սարգսամիշի թրքական պարտութիւն կոր, ոչ ալ Վանի բնապաշտպանութեան կոխները սկսած էին: Իրմիթի, Պայրբեռերի, Սոմսոնի և Պրուսայի չըջաններուն մէջ մարդասպան-չեթէներու կողմակերպական աշխատանքներ կատարուած էին, 1914 Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսներուն:

Թուրքերը իրենց գործած ոճիրները արդարացնելու համար հրատարակեցին կարգ մը գրքեր:

Առաջին՝ հին թուրքերէնով՝ «Հայ Կուսակցութիւններու Յեղափոխական Ծարձուները Սահմանադրութենէն առաջ և ետք — «էրմենի Գոմիթիլերիմին Հարէֆեարը Իիթիլալիէլերի Մեշրուրիլէրաւն Էվվէլ վէ սոնրա», 1916ին՝ պետական տպարանէն (մաքպա-այը ամիրէ): Զրոյարտութեանց այլ հաւաքածոյին նման, Փրանսերէն գիրք մըն այ՝ «Հար-թրքական Հարցը» (Կա ֆեսիսն Թիւրքո-Արմենիէն) հրատարակուեցաւ Պեանի մէջ (Զուլեյերիա) Ալֆրէտ Բիւսթէմի կողմէ: Բիւսթէմ լեհային հրեայ մըն էր, որ թրքացաւ թուրք կնոջ մը հետ տնտեսանալով և իր Ալֆրէտ անունը փոխեց Ահմետի, գարձաւ Ահմէտ Բիւսթէմ: Գիրքը հրատարակուած է 1918ին:

Ահմէտ Բիւսթէմ, մեծ պատերազմէն առաջ, 1910ական թուականներէն սկսեալ Ուաշինթընի թրքական դեսպանն էր, մինչև 1916, և ճարտիկութեամբ ամերիկեան մամուլին մէջ սուտեր և հերքումներ կը թխէր: Ամերիկեան պետական պաշտօնատունն ալ զրեթէ տարի մը կը լռէր, զանազան քաղաքական հաշիւներով, մինչև 1916ի սկիզբները: 1916ին պետական պաշտօնատունը զեսպան Բիւսթէմը հրախրեց տեսակցութեան մը և առանց բառ մը փոխանակելու՝ անցադիրը ձեռքը առաւ և փոխակց երկրէն: 1919ին Բիւսթէմ եղաւ Մ. Քեմալի հետ: Իր գրքին պարունակութիւնը նոյնն է ինչ որ էր՝ նախորդ թրքական գրքին: «Հայերը անհաւատարիմ» էին, «հայերը զէնք ունէին», «պոմպա ունէին» և «գլխուորական անհրաժեշտութեան համար տարագրուեցան» և նման յանկերգներ: Անտեղեակ ձեւանալով, որ 1914ի աշնան արդէն ջարդարարական ծրագիրներու գործադրութեան սկսուած էր, պատերազմի առիթէն օգտուելով:

Բիւսթէմէն ետք՝ 1928ին Սալիալ էտիպ երկու հատոր «Յու-



(Թարգմանութիւն թրքերէն ընկերէն)

1.— Գերման դեսպան վանկենիայմ Թուրքիոյ մէջ սպրոզ միւս տարրերը ճգմելը (էգմէֆ) կը քաջայերէ:

2.— Յեղասպանութեան զալոնի նիստին մէջ տոքթ. Նազրմ կ'առաջարկէ հայ տարրը արմատէն ջնջել (էրմէնի ունսուրը քեօքիսէն):

3.— Նոյն ժողովին մէջ երեսփոխան Հասան Ֆեւմի կ'առաջարկէ կին, մանուկ, հիւանդ, ծեր սպաննել: Հայ զինուորները բնաջնջել, սեփականութիւնները գրաւել և ազգիկները անկողիներուն մէջ սոնել (տուրքերիլերիի խթիֆրաշ):

4.— Էնվէի՝ «Բնաջնջումի եւ պատժումի ձեւը նախարարաց խորհուրդին յատուկ պարտականութիւն մըն է» կ'ըսէ:

5.— Նոյն ժողովին վերջաւորութեան ճաւիտ պէյ կը յայտարարէ.— Հայերէն մէկ հոգի ողջ չթողուլը՝ ազգային և քաղաքական անհրաժեշտութիւն է: Քուէի դրէֆ:

չեր» հրատարակեց (անդրերէն) հայերու մասին: Նոյն քիչէ եղած սուտերու կրկնութիւնը:

1950ին սրիչ թուրք մը՝ Ասատ Ուրաս (տեղեկութեան մը համաձայն՝ նախկին օստիկանապետ մը) հրատարակեց 785 էջերէ բաղկացած գիրք մը, լատինատառ թուրքերէնով: Անգարայի մէջ տպագրուած է, ոչ-գիտական ուսումնասիրութիւն մը՝ թերի վիճակագրութիւններով, արտաքննապէս անկողմնակալ, բայց ներքնապէս, միւս թուրք խեղաթիւրողներու նման, թուրքը զոհ եւ հայը «յանցաւոր» կը նկատէ . . .

Ուշադրութեան արժանի կարեւոր գիրք մըն է սրիչ թուրքի մը՝ Մելլան Չատէ Րիֆաթի «Թուրքիոյ յեղափոխութեան ներքին եւ արեւ» (Թիւրքիա ինֆլապրանը իչ էիւզիւ) անուն գիրքը հին թուրքերէնով եւ չորս մասերէ բաղկացած: Տպուած է 1929ին, Հալեպի «Էլ Վազըք» տպարանին մէջ: Այս թուրքն ալ, նոյն կերպով, կը կրկնէ այն մտքերը, ինչ որ իթիլաֆական Տամատ Ֆերիտ փաշան 1919 Յունիսին Փարիզի Վեհաժողովին առջեւ ըսաւ. «Թուրքերը աւելի մեծ կորուստ ունեցան, քան հայերը, պատերազմի ընթացքին»:

Ըստ Մելլան Չատէ Րիֆաթի՝ «Իթիլաֆական ընթացքներու շրջանին, մեղապարտ են միայն Իթիլաֆաւոր եւ չեթէները, որոնց թիւը մօտաւորապէս 8-000էն 10-000 էր եւ թէ Անատոլիոյ թուրքը անմեղ է: Եւ տարագրութիւններն ու ջարդերն ալ հայ կամաւորներու շարիքներէն, Վանի կոնսերէն եւ Շապին Գարահիսարի բերդի գրաւումէն ետք անդի ունեցեր են» . . .

Պատմութեան մէջ դէպքեր կը ճշգրտին թուականներով. սակայն բոլոր այդ թրքական գիրքերուն մէջ ճշգրիտ թուական երբեք չէ յիշուած, որպէսզի ամբողջ ճշմարտութիւնը չպարզուի եւ շփոթ ստեղծուի գէպրերու նիշդ մամանակի մասին: Բարեբախտաբար ձեռք անցած են պաշտօնական սրիչ շատ մը վաւերագրեր, որոնք իրենց կրած թուականներով կը յայտնեն ճշմարտութիւնը, եւ ցոյց կու տան բուրքի կանխամտածումը եղեռնի մասին:

Արդար ստեան մը եթէ քննէ վերոյիշեալ թրքական գիրքերը, անոնց բովանդակութեան մեծ մասը աղբանոց կը նետէ:

Կը թուի թէ Մելլան Չատէ Րիֆաթ հակառակ է Իթիլաֆաւորին եւ կը կատարէ կարգ մը յայտնութիւններ, զորս տառացի կը թարգմանենք թուրքերէն բնագրէն:

Ըստ Մելլան Չատէ Րիֆաթի, «Իթիլաֆաւոր եւ Թերազըն իր ձեռքին մէջ ունէր Օսմանեան կայսրութիւնը: Այդ կոմիտէին անդամ զօրավարները եւ սպաները Գերմանիա ուսած էին եւ գերման ուժին

կը վստահէին» (էջ 4):

«Իթիլաֆաւորի գեկափարները գերման ազդեցութեան ենթարկուած էին եւ երբ գերման 2 գրահատորները Թուրքիա եկան, Թուրքիա իբր թէ գնեց դանոնք Գերմանիայէն: Սայիտ Հալիմ՝ Թուրքիոյ վարչապետը Իթիլաֆաւորի կեղծոնը գացած էր այդ լուրը հաղորդելու, հոն սակայն նախապէս գիտէին արդէն եւ կը խօսէին Եգիպտոսի եւ Կովկասի գրաստան մասին, ինչպէս նաեւ բանայու Թուրանի ձամբան (էջ 7): Այդ խորհրդակցութեանց ընթացքին ձաւիտ յայտնած էր, որ երկիրը սնանկ է եւ գրամ չկայ պատերազմի համար: Ինչիւր յատուցեցուց, սը գրամ պիտի ստանայ Գերմանիայէն: Երբ Թուրքիա պատերազմի մասնակցեցաւ, գերմանները Նեղոսցնեւորուն մէջ գերման սպայակոյտ մը հաստատեցին: Գերման ղեկավար Վանկենհայմ, ներկայանալով «Մերքեպր Ումումին» (Իթիլաֆաւորի կեղծոնը), ըսաւ. «Այ ինչ կ'ուզէք: Պուրկարիոյ հետ պիտի գինակցինք: Ձեզի արդէլը եղող միւս տարրերը (հայերը) պիտի ճզմէք, Կովկասը պիտի գրաւէք եւ Թուրանի ձամբան պիտի բանաք (էջ 13): «Եթէ շարաթ մըն ալ սուշոցնէք, ձեր շահերը կը կորսնցնէք»:

Ինչիւր յայտնած է, թէ Գերմանիա ձեռքը մեղի երկարած է եւ չենք կրնար մերժել անոնց գինակցութեան առաջարկը (էջ 25):

Մինչդեռ այդ խորհրդակցութիւններէն 10 օր առաջ արդէն գինակցութիւնը գաղտնի կերպով ստորագրուած էր Օլդոստոս 2, 1914ին:

Ըստ Մելլան Չատէի՝ պատերազմի առիթ տուողներէն մին եղած է սիոնական եւ Ազատ Որմնապիրներու պետերէն՝ հրեայ Գարասոն, սը ազդեցիկ անդամ մըն էր Իթիլաֆաւորի մէջ: Աւելցնենք նաեւ, թէ այդ նոյն Գարասոն էր, որ Աւստրիոյ արտաքին գործոց նախարար հրեայ Էրենթալի միջոցով, Վիննըր Պանք Ֆերայնի խողովակով 1901 Սեպտեմբեր 1ին Համիտին առաջարկած էր սիոնականներու կողմէ փոխ տալ առանց ստիպի 20-000-000 սակի (100-000-000 տոլար) եւ 5-000-000 սակի ալ (25-000-000 տոլար) նուէր, հրեաներու համար հող յատկացնելու նպատակով Թիպերիատի լիճին հարաւը (Պաղեստին) (էջ 73):

ԻԹԹԻՀԱՏԸ, ՊԱՏԵՐԱԶՐԸ
ԵՒ ԹՈՒՐԳ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ «ՆԵՐՔԻՆ ԵՐԵՍ»Ը

«1914ի աշնան պատերազմը աւելի սաստկացած էր: Անգլիական եւ Ֆրանսական մարտանուէրը Տարտանէլը բացած չէին, Նեղոսցները փակ էին, սակայն ծովեզերքները պաշարման սակ կը գրտնուէին:

«Ռուսիա կոմկասեան բանակի կարեւոր ուժերը ընտրած եւ զրկած էր զէպի սահմանադրութիւնները, եւ պաշտպանողական զիրք կը պահէր:

«Վերին հրամանատարի փոխանորդութեան բարձրացողը (ին՝ վէրր) փափաքած էր ուստական ճակատները քննել եւ երբ խմացեր էր որ կոմկասեան ճակատի ուստական ուժերը տկար էին, նոր փառքի մը տիրանալու տղայական մտածումը ունեցեր էր եւ առանց նըկատի ունենալու տարւան կղանակը եւ բանակի պարենաւորման կեդրոնէն՝ հեռանալու պարագան, իր հրամանատարութեամբ ուսեբրուն վրայ յարձակելու ուզած էր: Կոմկասեան ճակատի թուրք հրամանատար Տամաս Հաֆրոյ Իսմայիլ Հազըր փաշա այդ ծրագրին համաձայն չէր գտնուած եւ բանակին զլխաւոր սպաները խորհրդակցութեան հրաւիրած էր: Սպայակոյտի կարգ մը սպաներ թեւազրած էին ձմրան ընթացքին (1914—1915) պաշտպանողական գիրք պահել եւ մինչեւ 1915ի ամառը բանակին բոլոր թերիները լրացնելէ յետոյ միայն յարձակողականի անցնելու:

«Էնդերի հետ գտնուող եւ սպայակոյտի պետ (ղերման) Պոսնատթ փաշա (Ֆոն Շելլենտորֆ) յայտնած է, թէ ուս բանակները տկարացած են գերման յարձակումներէն: Ապա ան ազդած էր էն՝ վերի վրայ եւ թեւազրած, գերմաններու բերք թեթեւցնելու համար, յարձակելու ուստերուն վրայ: Թուրք բանակը, հակառակ սպաներու առարկութեանց, էնդէր ալ իրր վերին հրամանատարի փոխանորդ, իր ունեցած գիրքէն օգտուելով, յարձակողականի անցած էր Սարըղամիշի շրջանին մէջ: 1915 Յունուարին Օսմանեան ամենալաւ բանակը բնաջինջ եղած էր եւ, հաւաստի տեղեկութեանց համաձայն, թուրքերը կորսնցուցած էին 75.000 զինուոր (էջ 82) (*):

«Ռուսերը, Օսմանեան բանակի այս ծանր պարտութենէն օգտուելով, նոր ուժերով հակայարձակումի անցած էին:

«Մէկ կողմէ զէպի Վան, միւս կողմէ ծովեզերքէն, Լազիստանի սանձազէն զէպի Տրապիզոնի նահանգը եւ կեդրոնի ճակատէն ալ էրզրումի եւ Երզնկայի ուղղութեամբ յառաջանալ սկսած էին:

«Հայկական կամաւորներու ջոկատներ յառաջապահ էին ուս բանակին եւ իրենց մտած գիւղերուն եւ աւաններուն մէջ վայրագու-

(*) Սարըղամիշի առջեւ քրքական պարտութեան առթիւ գերման Զինուորական Առաջնորդինը յայտնած է, որ 100.000 թուրք զինուորներու 88.000ը կորուստի մատնուած է. եւ 12.000 քրքական զինուորներ առանց վերաբերուի եւ կոշիկի նահանգած են զէպի էրզրում, 1915 Յունուարի սկիզբը:

թիւններ բրած, կիներ, մանուկներ եւ ձերեր առանց խորութեան սպաննած էին: (*)

«Հայ չեթէները վրէժխնդրութեամբ լեցուած էին: Նախորդ գէպերու շրջանին, ամանց հայրերը, մայրերը, ամանց ալ եղբայրները եւ քույրերը, կիները եւ զատակները սպաննուած կամ բռնարարուած էին, իրենց տունները եւ խրճիթները այրուած կամ կողոպտուած էին: Բնական է, որ անանց սրտին մէջ գտնուած վրէժի զգացումները վառ կը մնային» (**):

«Քաղաքագէտներ Հայ կամաւորներու այդ պարագան գիտէին — եւ այդ պատճառով յառաջապահ ընտրած էին գտնոնք: Մինչդեռ Հայ Դաշնակցութեան Կոմիտէի գեկաւորները՝ Իթթիհատ Թերազորի գեկաւորներուն հետ հասկացողութեան եկած էին, որ երբ պատերազմ ծագէր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ, հայերը յանձն կ'առնէին չէպոք մնալ եւ 1914ին էրզրումի մէջ գտնուած Դաշնակցութեան Տրդ Քոնէրէին այդ յանձնառութիւնը ընդունելու տուած էին (***):

«Իթթիհատ եւ Թերազորի կառավարութիւնը, երբ խմացաւ,

(*) Սխալ են Մեւլան Զատիի այդ տեղեկութիւնները: Ընդհակառակն, թուրք չեթէները աւերած են հայկական գիւղերը՝ էրզրումի եւ այլ շրջաններու մէջ: Զարգած են Արասնուշի հայերը, մարմինները բարձրութիւններէ վար գլորելով եւ քահանան ալ եկեղեցիին առջեւ սպաննած են: Վանի շրջանի հայոց գիւղերը եւ Ուրմիոյ շրջանի հայ եւ ասորի գիւղերը քանցուած էին հալի պէյի եւ ձեւտերի զինուորական, քրքական եւ անկանոն ուժերուն կողմէ՝ 1914 Գեկաւորներին եւ 1915 Յունուարին:

(**) Պատերազմի մէջ երբ կամաւոր մը զինուորական հագուստ կը կրէ եւ կը կոտի, քնամի զինուոր կը նկատուի եւ պատերազմական օրէնքներու ենթակայ է, բայց անանց ընտանեկան պարագաները ոչ մէկ առընչութիւն ունին անոնց հետ, ըստ միջազգային օրէնքի:

(***) Այս կէտն ալ խեղաբիրում է. դարձակցական հայերը բազմաթիւ յայտնուած էին, որ Թուրքիան պատերազմի չմասնակցէր, նկատի ունենալով իր տնտեսական եւ հողային շահերը: Իսկ երբ թուրքերու պատերազմը տեղի ունեցար, քրքահպատակ հայերը իրենց քաղաքացիական պարտականութիւնը պիտի կատարէին երկրին մէջ և առսահպատակ հայերը՝ իրենց նոյն պարտականութիւնը՝ Ռուսիոյ մէջ, ինչպէս որ ալ եղաւ: Թրքական բանակին մէջ, ըստ զինուորական օրէնքի, հայեր, թէեւ գործօն բանակի (մուազզաֆ), պահեստի (էսթիյաթ) ծառայութեան

թէ հայ շեթէներ յառաջապահ եղած են, այս պարագան պատրուակ (վեսիյէ) ընելով, Դաշնակ Կոմիտէի հայ ազգին անունով կնքած համաձայնութիւնը ջնջած է և, ամենէն առաջ, Իսթանպուլի և վերայէթներու մէջ գտնուող բոլոր ծանօթ դաշնակ ղեկավարները մէկ առ մէկ ձերբակալած, ապա դանազան վայրեր զրկած է և ճամբաներու վրայ սպաննել տուած:

«Իսթանպուլին՝ Չօհրապի, Վարդգէսի և Տիրան Քելեկեանի նման բոլորին ծանօթ, յորդուած և համբաւեալ անձեր, որոնք գիտութեան և դադափարի մարդիկ էին, տարազրելով բնաջնջած են: Չօհրապ և Վարդգէս Լիֆնտիները Հալեպի և Տիարպեղբի միջև, իսկ Տիրան Քելեկեանն այ Զորումի և Ամասիոյ միջև մեղացուցած են:

«Խաթակ, Զարգարեան, Ճանկիւլեան, Ակնունի, տոքթ. Տաղաւարեան և նման անձեր ղէպի Տիգրանակերտ տանող ճամբուն վրայ, ձին-Տերեսի կոչուած ծանօթ վայրին մէջ սպաննած են (էջ 83):

«Բանակի մէջ առնուած երիտասարդ հայ զինուորները ամելէ քապուրներու (բանուորական վաշտեր) տրամադրած և զանոնք տաժանակիր աշխատութիւններով մահացուցած են:

«Այդ կացութիւնը հայերը մտատանջութեան մատնած էր և մղած ինքնապաշտպանութեան ու ապստամբութեան(*):

«Վերջապէս Վանը զրաւած էին, Վալի ձեւտէթ պէյը՝ Էնվերի փեսան փախած էր և, մինչև ուսերուն հասնելը, ժամանակաւոր կառավարութիւն մը հաստատած էին հայերը, և իրենց պետ ընտրած Արամ Մանուկեանը. իսկ իսլամ ժողովուրդին վերին աստիճանի

փոխարէն զինուորական տուրք (պետէր) վճարած էին, այսուհանդերձ կրկին բանակ կանչուած էին:

Իսկ Ռուսիոյ մէջ հայերը իրենց թիւին 15 առ հարիւրովը զինուոր եղած էին, մօտ 150.000, ռուսական բանակին մէջ:

Թրքական բանակին մէջ գտնուողներ, պատերազմական մասնաբաժնի 18 թուակիր հրամանագրով, աշխատաւորական գումդերու բաժնուած էին և, աստիճանաբար մեկուսացուելով, գաղտնի վայրերու մէջ մեծամասնութեամբ կոտորուած էին, բուրք զինուորական և քաղաքային իշխանութեանց գործակալութեամբ:

(*) «Ինքնապաշտպանութիւն» և «ապստամբութիւն» բառերը հակասական են: Կեանքի և պատիւի պաշտպանութեան կռիւը ապստամբութիւն չի նշանակեր:

շուրում և տառապանք պատճառած էին(*):

«Իթթիհատ և Թերազգրի պետերը մեծապէս յուզուած էին այս ղէպերուն առթիւ և Էնվերի փեսային փախուստը հայերու ղէմ սաստկացուցած էր ռիւք և գայրոյթը: Մէկ հայ իսկ ողջ չթողելու պայմանով բնաջնջումի որոշում տալու համար, «Միքէէգ Ումումի»ին մէջ (Ընդհանուր Կեդրոն) զաղտնի նիստ մը գումարած են (էջ 83):

«Այս մասին շատեր այս դրածներս յարմար չեն նկատեր, որոշումները այս ձեւով ներկայացնելով: Թէեւ ատիկա աւելի դժուար եղաւ, բայց և այնպէս աւելի կենդանի ձեւն էր և ընթերցողը առանց յոգնելու ճամբարութիւնը կը տեսնէ, ուր իրողութիւնները պատշաճ ձեւով ներկայացուած կ'ըլլան: Կ'երեւան նաեւ դերակատարներուն գիտական կարողութիւնը, անոնց քաղաքական և ընկերային սկզբունքները, և պարզուած կ'ըլլան անոնց համոզումները:

«ՀԱՅԵՐՈՒ ԶԱՐԴԵՐԸ ԵՒ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԱՓԱՉԱՆՑ ՎԱՅՐԵՆԻ ԵՒ ԱՂԵՆԱՐՇ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՃԻՐ ՄԸՆ Է»:

«Հայերը ուսու բանակին կամաւոր-շեթէներ զրկեր են, Վանը զրաւեր են, Էնվերին փեսան՝ ձեւտէթ պէյը փախուստի ստիպեր են, այդ պատճառով Իթթիհատ Թերազգրի ղեկավարները, Մերքէզը Ումումիին մէջ զաղտնի նիստ մը գումարած և այդ ժողովին եզրակացուցած են, մանուկ-երեխայ (չոլուգ-չոնուգ) առանց նկատի առնելու, մէկ հատ իսկ հայ չթողուլ: Այդ որոշումին գործադրութեան համար, «Թեղբիթը Մախսուէ» անուան տակ, արիւնարբու և ոճրապործ անհատներէ, շեթէներ կազմելու և անոնց ղեկավար «ՇԲԵՔԷ ԲԱՂԿԱՅԵԱԼ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԷ ՄԸ» (Իւչլէր ինրա քուրթեսի) ընտրած են՝ տոքթ. Նազմի, տոքթ. Պեհալտին Շաքիրի և կրթական նախարար Շիւքրի(**) անդամակցութեամբ:

(*) Վան քաղաքի մէջ հայերը կոռուած էին ամիս մը, կամաւորներու գալէն, Մայիս 6, 1915էն առաջ: Մինչ բուրքերը, Փետրուար և Մարտ 1915 ամիսներուն ջարդած էին Վանի նահանգին բազմաթիւ հայ գիւղերու բնակիչները և Ապրիլ 6ին Ախլաքի շրջանը, և Ապրիլ 8ին՝ Ատիհեւազի շրջանը: Մեւլան Ջատէ անգէտ կը ձեւանայ այդ մասին:

(**) Թուրք պատմագիրներուն մեծ մասը, մէջն ըլլալով Մեւլան Ջատէ, կը գգուշանան նշգրիտ թուականներ նշանակելէ՝ հայ-բրքական խնդիրներուն մէջ: Մեւլան Ջատէ ճիշդ թուականը չի տար ցեղասպանական գաղտնի ժողովին և կը նշանակէ զայն «Վանի գրաւումէն ետք»: Մինչդեռ բրքական չեթական կազմակերպութիւնները գործի անցած էին 1914 Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսներուն: Այս մասին բրքական Պատերազմական Ատեանի Վնագրին մէջ արձանագրութիւններ կան:

«Այս գէպերը զրեւ անցնելով պէտք չէ բաւականանալ: Այդ մեծազոյն անդթութիւնները չեն կրնար ներկայացուիլ աճյպէս, ինչպէս որ տեղի ունեցան:

«Իթթիհատ և Թերողգրի այդ աղետարեր (ֆէնիլ) եւ պատմական դաղտնի ՆԻՍՏին նկարագրութիւնը, չոն ներկայ եղած թուրք ազդեցիկ անձերուն տուած բացատրութիւնները եւ իրենց պաշտպանութեան եղանակը, իրենց զիտական կարողութիւնները, ընկերային եւ քաղաքական համոզումները պարզել, անկասկած, տրուած այդ որոշումը աւելի հասկնալի կը դարձնէ եւ պատմութեան կը ծառայէ՝ ճշգրելու համար Մեծ Եղեռնի բուն պատասխանատուները(*):

«Այդ գէպերը եւ իրողութիւնները եւ քաղած եմ ժամանակին ձեռնհաս եւ իրաւաստ ազրիւրէ (սուլահիլէթ տար վէ մեւուզիլ քելամ) եւ հիմնած եմ կարգացած դրութիւններու վրայ:

«Հայերու գէմ գործուած այդ քառմնլի ոճիրներուն պատասխանատու անձերը ծանօթացնել եւ խորհրդակցութեանց արձանագրութիւնները (միլիտարիէ գապրթնամեսի) ներկայացնել շատ աւելի պատշաճ դատայ:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ (էջ 84):

«Գաղտնի նիտար գումարուեցաւ Թալէաթի նախագահութեամբ: Առաջին խօսքը տրուեցաւ տրքթ. Նազըմին:

ՏՈՔԹ. ՆԱԶՂՄ, ողևորուած ձայնով, խնդիրը հետեւեալ կերպով բացատրեց եւ մեկնարանեց.—

«Յարգելի եղբայրներ, անարիւն յեղափոխութիւններուն պտուղը տհաս (խամ) ու դառն կ'ըլլայ եւ մարտողութիւնն ալ դժուար: Միշտ վտանգի եւ յեղաշրջումի նշաններ կը տեսնուին: Այդ մասին բազմաթիւ անդամներ խօսած էի: Ահա հայերը.— Այս անգամ պատերազմը առիթ նկատելով, չէզոք մնալու մասին հակառակ իրենց տուած խոստումին, իրենց խօսքը չեն յարգած եւ ռուսական բանակին կամաւոր եղած են: Չեթէներ կազմած են եւ իրենց մտած գիւղերուն, աւաններուն եւ քաղաքներուն ժողովուրդը անդթութեամբ

(*) Հոկտեմբեր 11, 1914ին (հ. տ.) պատրաստուած էր ձիատի բնագիրը՝ քրիստոնեաները քարդիու մասին: Եւ յարակից բուրքերով բուրքերուն վրայ կրօնական պարտականութիւն դրուած էր, իբրեւ աստուածահաճոյ գործ, կազմել մարդասպանական ընկերութիւններ եւ իւրաքանչիւր բուրքի վրայ պարտաւորութիւն կը դրուէր 3 կամ 4 հայեր (ամհաւատներ) սպաննել, գաղտնի կամ հրատարակաւ. պարագայ մը, գոր Մեւլան Ջատէ անտեսած է:

սպաննած են եւ տեղ-տեղ ալ յեղափոխութիւն հանած եւ մեր վրայ յարձակած են եւ մեր բանակներուն նահանջի գծին սպառնացած են»:

«Վանի մէջ Արամ Մանուկեան անունով հայ ղեկավար մը փախուտի մատնած է ձեռնէթ պէլը, որ ազատութեան հերոս Էնվերի փեսան է, ու ժամանակաւոր կառավարութիւն մը կազմած է:

«Շապին Գարահիսարի հայերը եւս, բերդը դրաւելով, անոր բուրգերուն վրայ ապստամբութեան դրօշ պարզած են: Թէեւ Սեբաստիոյ վայրի Մուամմէր անոնց հախճն եկած է, մէկ անձ իսկ ողջ չթողելու պայմանով յաջողած է ամէնքը սպաննել: Լուրեր կը ստանանք, թէ ամէն տեղ յեղափոխութիւն սկսելու պատրաստութիւններ կան: Ահա ներքին գործոց նախարար Թալէաթը հոս է: Հարցուցէք անոր (էջ 84) (*):

ԹԱԼԷԱԹ.— «Այո՛, տրքթ. Նազըմի ըսածները ճիշդ են: Այդ օճերը նորէն ոտքի ելած են: Պէտք է տալ յճառական պատիժը»:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ (Քասթեմունիի երեսփոխան).— Ի՞նչ կ'ուզեն ատոնք: Ինչո՞ւ այս ազատութեան շրջանը չեն զնահատեր: Ատիկա շնորհ մըն էր, կ'ուզեմ պարզել: Ես, ծառանիդ, բռնակալութեան վատ ժամանակը թշուառ վիճակի մէջ անձ մըն էի, 3 քաղաքներու մէջ քարոզելով, խրատներ կու տայի եւ հազիւ հազ քանի մը զրուշ կը ստանայի եւ կեանքս քաշքշելով կ'ապրէի: Փա՛ռք Աստուծոյ, ազատութեան շրջանը եկաւ, երեսփոխան եղայ, երջանիկ եղայ: Ատոնք (հայերը) այլեւս ի՞նչ կ'ուզեն: Ինչո՞ւ ինձի պէս եղած շնորհօվը չեն զոհանար եւ հանգիստ չեն նստիր:

ՏՈՔԹ. ՆԱԶՂՄ.— Ատոնք (հայերը) ի՞նչ կ'ուզեն: Չեզի հասկըցնեմ, խոճա էֆենտի: Անոնք կ'ուզեն մեզ փճացնել, մեր տուներուն (եւրքտ) մէջ նստելով՝ մեր վրայ կ'ուզեն տիրապետել: Եւ կ'ըսեն. «Ո՛վ թուրք, դո՛ւն այս տեղէն ելի՛ր եւ գնա՛, դուն այս տեղին տէրը չես: Այս լեռները, այս անտառները, այս գետերը մերն են, հինէն, սկիզբէն մերն են: Ահա պատմութիւնը մեր վկան է, ըսել կ'ուզեն: Հիմա հասկցա՞ր, խոճա էֆենտի»:

(*) Շապին Գարահիսարի դէպքը սկսած է Յունիս 2/15, 1915ին եւ շարունակուած ինքնապաշտպանութիւնը Յունիս ամսուամ մէջ, մինչ քարդիու եւ տեղահանութեանց մասին հրահանգներ եւ հեռագիրներ կամ Փետրուար, Մարտ եւ Մայիս 1915 ամիսներուն: Քարդիու մասին տեղի ունեցած գաղտնի ժողովներու տեղեկութիւնը հաղորդող Մեւլան Ջատէ այդ բուականն ալ կը շփոթէ:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ.— «Այլա՛հին զօրութեամբ անկցին, բնաջնջուին եւ անոնց պիղծ մարմինները ժայռերէն վար նետուին»:

ԱՂԱ ՕՂՂՈՒ ԱՀՄԷՏ.— «Անէ՛ծքը եւ սոփեստութիւնը մէկդի դնենք: Հասկնանք Վանի դէպքին պատճառը թէ ի՞նչ կերպով յառաջ եկած է, մէկ խօսքով՝ հասկնանք բուն ազգակները եւ անոնց համաձայն միջոցներ ձեռք առնենք անհրաժեշտաբար: Այդ մասին կարելի՞ է շնորհ ընել եւ մանրամասնութիւններ տալ»:

ԹԱԼԷԱԹ.— «Հա՛յ, հա՛յ, ինչո՛ւ չէ: Ես հասկցնեմ ձեզի: Պատերազմի մտնելէ առաջ, Հայ Դաշնակցութեան ղեկավարներուն հետ հասկացողութեան եկած էինք, որ էթէ պատերազմի մտնէինք, հայերը չէզոք պիտի մնային, ոչ մեզի, ոչ ալ ուսերուն որեւէ օգնութիւն պիտի չընէին: Եւ այդ մասին եղած փրօքոքալը, էրդրումի մէջ գումարուած Քոնկրէին եւս ընդունիլ եւ հաստատել տուած էին: Սակայն հիմա ձեւը փոխեցին, հայ կամաւորներ զրկեցին ռուս բանակին, իրենց խօսքին հաւատարիմ չգտնուեցան: Խոստումնին զրգեցին: Ռուս բանակին հետ յարաբերութեան մէջ մտան, զանոնք ետ դարձնելու պատրուակով: Վալի ձեւտէթ պէյի ղիտութեամբ եւ անոր հրամանով Դաշնակցութեան ղեկավար Իշխանը եւ անոր ընկերացող երկու ընկերները ճամբան մեռցնել տալով մաքրագործուեցան: Եւ (վալին) երեսփոխան Վոսմեանը շղթայակապ իր քովը բերել տուած եւ ներս նետել տուած է (իչ էթմիշ — պարկի մէջ դնել տուած է): Մանուկեանն ալ մէջտեղէն վերցնել ուզած է, բայց Մանուկեանը, աւելի ճարպիկ գտնուելով, ապստամբած է եւ ստիպած է վալի ձեւտէթը փախուստի:

«Եւ ժամանակաւոր կառավարութիւն մը հաստատելով, եղած է կառավարութեան պետը: Խնդիրը այս է: Ամէն կողմէ ուժ կը զըրկենք: Ահա Ռոստովի մէջ հրատարակուած ՈՒԹՐՕ ԵՈՒԿԱ Թերթը «10 ՕՐ» վերնագրի տակ յօդուած մը դրած է.— Ապրիլ 6էն մինչեւ 16: Կարգամ թարգմանութիւնը, որ կը բացատրէ դէպքը»:

ԹԱԼԷԱԹ՝ Թուղթը ձեռքին մէջ բռնած կը կարդայ հետեւեալը.—

«Վեց դարէ ի վեր կը սլայքարինք վայրենի եւ անդուժ կառավարութեան մը դէմ, որ այսպէս իրաւունք եւ քաղաքակրթութիւն ոտքի տակ կ'առնէ. հայերու արտասուքով եւ արիւնով յղիացած մարդասպան ձեւտեթին դէմ միշտ պիտի կռուինք: Անոնք Ս. պա-

տերազմ յայտարարեցին եւ երկրին ներսերը կիները, մանուկները, ծերերը, երիտասարդները, հիւանդները եւ հաշմանդամները թշնամիի նման ջարդեցին:

«Մենք՝ Վասպուրահանի հայերս ահա 10 օրէ ի վեր, մեր ամբողջ ուժով, անհատական եւ ազգային էութիւնով կը կռուինք: Այս կռիւը աննախընթաց պիտի մնայ մեր պատմութեան մէջ, եւ ընդհանուր պատերազմի ընթացքին եւս պիտի գնահատուի բոլոր քաղաքակիրթ ազգերուն կողմէ եւ պիտի հիացնէ զանոնք: Ամբողջ աշխարհ պիտի դիտնայ, թէ ալ մը հերոսներով կը կռուինք իրաւունքի եւ արդարութեան համար: Վրէժի Աստուածը մեզի հետ է: Մեր հերոսներուն փառքը եւ պատիւը պիտի ըլլան մեր վարձատրութիւնը»:

ԱՂԱ ՕՂՂՈՒ ԱՀՄԷՏ.— «Հայ Դաշնակցական Կոմիտէն ի՞նչպէս կրնայ ներկայացնել ամբողջ ազգը: Կոմիտէն իրեն պատկանող կարգ մը հայերու անունով խոստում մը կրնայ տուած ըլլալ: Բայց ամբողջ ազգը չի ներկայացնէր: Ասոր համար ալ ամբողջ ազգը պատասխանատու չի բռնուիր: Դուք հայերուն մէկ մասին հետ, այսինքն Դաշնակցութեան հետ համաձայնութեան եկեր էք: Միւս հայերը ատիկա ընդունած չեն կրնար ըլլալ: Ամբողջ հայերը դաշնակցականներէ չեն բաղկանար: Ատոնք բոլոր հայերը իրենց չուրջ հաւաքած չեն, նոյնիսկ շատ մը հայեր այդ Կոմիտէին դէմ են, որովհետեւ դաշնակները ծայրայեղ քաղաքականութիւն վարող չեթեճիներ են: Նաեւ, էֆենտիմ, այդ Կոմիտէին եւ Իթիթիհատ եւ Թերազգրի հետ եղած համաձայնութիւնը պորձնական արժէք մը չունի: Մեր երկրին մէջ գտնուող հայերը, գինուորսդրական օրէնքի համաձայն, գէնքի տակ կանչուած են եւ ոտսերուն դէմ պատերազմի կը քշուին: Նոյն բանը տեղի կ'ունենայ Ռուսիոյ կողմը: Երբ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ պատերազմ կը ծագի, Դաշնակցութեան Կոմիտէին հայերու համար չէզոք մնալու մասին տուած խօսքը ի՞նչ արժէք կ'ունենայ»:

ԹԱԼԷԱԹ.— «Բայց Վանը նուաճող, Շապին Գարահիսարի մէջ ապստամբութեան դրօշ պարզող եւ բերդը գրաւող հայերուն հրամայողները դաշնակցական պետեր են: Երբ այդ դէպքը տեղի կ'ունենար, գէթ դաշնակցականները պէտք էր չէզոք մնացած ըլլային: Իւրաքանչիւր դէպքի մէջ գէթ մէկ հոգի գտնուէր: Ցաւալի է որ դաշնակցական պետերը մեզ խարելու ճամբան բռնած են: Դաշնակցականները յայտնած են, թէ իրենք կը ներկայացնեն ամբողջ ազգը, ինչպէս որ մենք կը ներկայացնենք ամբողջ Թուրքիան: Դաշնակցականները հա-

յուրիւնը ներկայացնելու համոզումը ունեցած են: Եթէ մեզի ստած են, պատասխանատուութիւնը մեր վրայ չ'իյնար: Անոնց կը պատկանի: Լսեցէք ՍԵՆՏԻՆԻԱՆԻ ստորագրութեամբ ՈՒԹՐՕ ԵՌԻԿՕ ԹԵՐ-ԹԻ ԹԻԼ 142ի մէջ երեւցած յօդուած մը՝ «ԵՐԱԶՐ Կ'ԻՐԱԿԱՆԱՆԱԹ» վերնագրին տակ:

«Ահա վերջապէս դարերէ ի վեր հայերու սրտէն բխած բարձրագոյն երազը իրականացաւ: Այդ երազը մանուկներուն ժառանգ ձգուած էր...» (Թալէաթ քանի մը անգամ կը շարունակէ ընդմիջումներով կարգալ (էջ 87):

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ.— «Անկցի՛ն, Վանը մերն է: Սուրբ Իթթիհատ-Թերագրըն է: Ոչ ոք կարող է առնել մեզմէ»:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ.— «Սա Արամ ըսուած խայինը (դաւաճանը) Վանի երեսփոխան անձը չէ՞»:

ԹԱԼԷԱԹ.— Կը շարունակէ կարգալ... «Եւ Վանը գրաւուած է»...

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ.— «Այլահը քեափիր անհաւատներուն հետ չի կրնար ըլլալ: Աստուած մեզի հետ է»:

ԹԱԼԷԱԹ.— Կը շարունակէ կարգալ...

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ.— Թող անկցի՛ն, անկցի՛ն...

ԹԱԼԷԱԹ.— Կը շարունակէ գրութիւնը կարգալ (էջ 84):

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ.— Հայեր, մօտ ատենէն պիտի լա՛ք, ոչ թէ պիտի լաք, այլ պիտի սպաննուիք:

ԹԱԼԷԱԹ.— Կը շարունակէ կարգալ գրութիւնը:

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ.— Անկցի՛ն հայերը, այդ տեղերը սուրբ սուլթանութեան կը պատկանին: Զենք թողուր որ այդ տեղերուն ոեւէ մէկը ձեռք երկարէ:

ՏՈՔԹ. ՆԱԶՐԱ.— Պանիրին նաւը խօսելով առաջ չի քալեր:

Գո՛րծ եւ վճռական դործ պէտք է: Հայերը ուռած պալարի մը կը նմանին, պէ՛րք մը, որ գորակն փոքրիկ բշտիկ մը կը թուի և եթէ վարպետ վիրարոյժի մը նշգրտակով չմաքրուի, անպատճառ կը մեռցնէ: Լաւ գո՛րծ պէտք է և վճռական գործադրութիւն: 1909ին, Ատանայի մէջ, ասղին-անղին մեր բրած ջարդերուն պէս բան մը եթէ պիտի ընենք, օգուտի տեղ մնաս կը պատճառենք: Երբ վճռապէս մտադիր ենք մաքրադործելու միւս տարրերը՝ արարները և քիւրտերը կ'արթննան: Եւ մտանդը մէկի փոխարէն մի քանի հատ կ'ըլլայ, կը մեծնայ և գործողութիւնը կը զժուարանայ: Այս ժողովներուն մէջ բազմաթիւ անգամներ ևս խօսած եմ: Գարձեալ կը կրկնեմ: Եթէ այս մաքրագործումը պիտի չըլլայ բնականուր և վերջնական, մնաս առաջ կու գայ՝ օգուտի փոխարէն: Արմատէն պէտք է փրցնել հայ տարրը: Մեր երկրին մէջ մէկ հայ իսկ պէտք չէ քողուլ, մեռցնելու է հայ անուր: Պատերազմի մէջ ենք: Ասկէ աւելի լաւ պատեհութիւն չի կըրնար ըլլալ (էջ 90):

«Մեծ պետութեանց միջամտութիւն տեղի չի կրնար ունենալ: Եւ աշխարհի մամուլին գոտում-գոշումը ևս չի լսուիր: Եթէ նոյնիսկ ըլլայ, խնդիրը կատարուած իրողութիւն մը եղած կ'ըլլայ և կը վերջանայ: Այս անգամ կ'առաջարկեմ վճռական գործադրութիւնը (հայերու) բնաջնջման գործողութեան: Ոչ մէկ հայ մարդ ողջ թողելու պայմանով անհրաժեշտ է անոնց բնաջնջումը:

«Զեզմէ ոմանք թերևս ըսեն, թէ «այս աստիճան վայրագութիւն կարելի՞ է կամ ի՞նչ մնաս կրնայ առաջ պալ երեխաներէն, մանուկներէն, ծերերէն, հիւանդներէն, որ ատոնց բոլորն ալ սպաննուլու հարկ տեսնուած է: Ո՛վ է յանցաւորը, ոճրագործը ա՛ն է որ պէտք է պատժուի: Տանը մէջ կամ իր տնակին մէջ նստող անօգնական ժողովուրդը, ծծկեր-մանուկները յարձակումի ենթարկել վայրենութիւն է, հակառակ է քաղաքակրթութեան, մարդկութեան, տղթ. նազրմն ալ ծայրայեղ է, արամարանութեամբ չի մտածեր», պիտի բռնէք: Կր խնդրեմ, էֆենտիներ, տկարութեան, սրտի փափկութեան այդ աստիճան մի՛ գոհուիք: Ասիկա մտտ հիւանդութիւն մըն է: Ահա՛ ձեզի պատերազմական դիճակը: Կը հարցնեմ ձեր բոլորին.— Ի՞նչ է պատերազմը: Վայրենութիւն չէ՞: Երկրագործը իր գիւղէն քաշել տանելով պատերազմի ճակատը մեռցնել չէ՞: Արհեստաւորը խանութէն առնելով շրափնելի հարուածներուն տակ գոհելը ի՞նչ է: Ի՞նչ ըրած է ան: Ի՞նչ յանցանք գործած է, որ այդպէս ազետալի մահուան մը կը դատապարտուի: — Վայրենութիւնը բնութեան օրէնքին մէջ է (էջ 90):

«Այս մտքերուն ընդունելի կամ անընդունելի ըլլալը որոշել ըմբռնումի հարց է: Բոլոր կենդանիները, նոյնիսկ բոյսերը զիրար կ'ուտեն: Իրենց կեանքը կ'երկարեն՝ զիրար բնաջնջելով: Այնպէս չէ՞: Կրնա՞ք ատոնց ըսել, թէ իրարու միս մի՛ ուտէք: Զիրար բնաջնջելէ զգուշացէ՛ք, ատիկա վայրենութիւն է: Կրնա՞ք ըսել»:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ.— Այո, էֆենտի, այդ խնդիրը ծառայականս գիտէ: Ուտողի եւ ուտուողի խնդիր է: Բնական գիտութեան գիրքերու մէջ ես ալ կարդացած եմ:

ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ շարունակելով իր խօսքը.—

«Լաւ մտածե՛նք: Մենք այս յեղափոխութիւնը ինչո՞ւ ըրինք: Ի՞նչ էր մեր նպատակը: Սուլթան Համիտի պետական մարզիկը իրենց թիկնաթոռներէն վար առնել եւ անոնց տեղը նստի՞լ էր: Ես չեմ կարծեր որ ատոր համար էր:

«Ես թրջութիւնը վերակենդանացնելու համար ձեզի ընկեր, եղբայր եւ ուղեկից եղայ: Ես միմիայն թուրքին ապրիլը կ'ուզեմ: Եւ կ'ուզեմ որ այս հողերուն վրայ միայն ան ապրի, անկախ կերպով: Թուրքէն զատ՝ միւս տարրերը թո՛ղ բնաջնջ ըլլան, ինչ կրօնի կամ հաւատքի ալ որ պատկանին: Այս երկիրը պէտք է մաքրուի օտար տարրերէն թուրքին կողմէ: Կրօնքը ինծի համար արժէք չունի: Իմ կրօնքս թուրանն է:

ՏՈՔԹ. ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ.— (Ոսօքերը հատիկ-հատիկ ըսելով եւ նախադասութիւններուն միջոց տալով) ըսաւ հետեւեալը.— «Մովսէսի նման ճարտարախօս մը, Յիսուսի նման թափառական մը, Մուհամմէտի նման որը մը երբ մեծ-մեծ կրօնքներ կը հաստատեն այս աշխարհիս մէջ, մեզի պէս կամքի տէր մտածողներ ինչո՞ւ պիտի չկրնան թուրանի կրօնքը եւ գաղափարականը հրապարակ դնել, ընդհանրացնել:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ.— «Աստուծոյ օժանդակութեամբ (էլ ուեաքը պիլլահ): Ատիկա պարզ խօսք մը չէ: Եռանդէն աւելի քեֆէր է (անաստուածութիւն, եւ խրտչելով չորս կողմը կը նայի): Այաֆուց եւ մաֆուց (անհասկնալի բառեր) վէ իւր քեաֆիթին, «մահ անհաւատներուն»:

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ.— (Ոոճա էֆենտիին աճապարանքը տեսնելով

ծաղրանքով) կ'ըսէ.— «Ի՞նչ կ'ըսես, աղօթք կը կարգա՞ս: Խնդրեմ եկո՛ւր գլխուս կարգա, իւֆլիւֆիշ ըրէ (հառաչէ), թերեւս գլխուս ցաւը անցնի եւ վախիս դարման ըլլայ»:

ՏՈՔԹ. ՆԱԶԼՄ խօսքը շարունակելով.—

«Եթէ արմատական մաքրագործում, վերջնական բնաջնջում չըլլայ, վա՛յ մեզի: Այսօր մենք մեր նստած տեղերուն վրայ պիտի չկրնանք նստիլ, վաղը մեր թեւերէն կը բռնեն, կը նետեն, նետելով ալ չեն բաւականանար՝ մեզ կը սպաննեն: Յեղափոխութիւնը գթութիւն չի ճանչնար: Միմիայն իր գաղափարականը ապրեցնել կը մըտածէ. կը քանդէ, կը ջնջէ ինչ արգելքներ որ կան»:

ՏՈՔԹ. ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ.— «Մենք՝ յեղափոխականներս, թուրք ազգի անունով ձեռք անցընելով մեր գիրքերը, Օսմանեան պետութեան եւ ազգութեան սկզբունքներուն վրայ հիմնուելով Իթթի-հատ եւ Թերապիլի իշխանութիւնը հիմնեցինք: Մեր ազգային նպատակն է միմիայն թուրք սերմով սերունդին կեանքը թոյլ տալ:

«Հինէն մնացած օտար ազգերը օտար եւ վնասակար խոտերու կը նմանին, պարտաւորուած ենք արմատներէն փրցնել եւ դուրս նետել եւ մեր ետրտերը (տուն) մաքրագործել:

«Մեր յեղափոխութեան նպատակը եւ սկզբունքը այս են: Ատոր համար է որ Իթթիհատ եւ Թերապիլի իշխանութեան «Նոր թուրքիոյ կառավարութիւն» անունը տուինք: Եւ «օսմանեան» բառին արժէքը զերոյի իջեցուցինք: Իրապէս, օսմանեան (օսմանլը) բառը ի՞նչ արժէք կրնայ ունենալ: Օսմանճրգի անունին կառչելով կառավարութիւնը իր ո՞ր նպատակին կրնայ հասնիլ: Տերփիշի ֆէշիլըին պէս, զանազան ազգերուն թափթփուկները, մուրացիկները (տերպետեր), Օսմանի անունին տակ ծալուելով, գարմանալի խառնուրդ մը կազմած են: Ատոր կառավարութիւն չ'ըստի գիտական տեսութեամբ կամ գիտական օրէնքներու վրայ հիմնուած: Շատ-շատ օսմանճրգը իր այգին, իր ստացուածքը կը փոխանցէ իր գաւակներուն (էջ 91): Զանազան տարրերէ բաղկացած օսմանեան խառնուրդը, իրրեւ ազգային էութիւն, կարելի չ'է բնորոշիլ: Ատիկա կը նմանի այգիի մը մէջ գտնուող ընտանի կենդանիներուն: — Յոյն, հայ, պուլկար, պոչնաք (պոսնացի), սերպ, այլանացի, քիւրտ, չերքէզ, արաբ, վըրացի, լազ եւ նման բազմատեսակ տարրեր իրր թէ ամբողջականութիւն մը կազմեր են «օսմանեան» բառին տակ:

«Այդ համոզումը պէտք է սրբազրել (էջ 91):

«Ապարակի մը մէջ գտնուող սալ, բաղ, հաւ, ոչխար, այծ, կով, եղ, ձի, ինչ վիճակ ալ որ ունենան, իրենց ցեղը (տեսակը) չեն փոխեր, յոյն, հայ, պուլկար, պոսնացի, փոմաք, սերպ, ալպանացի, շերքէզ, վրացի, արար, քիւրտ եւս նոյնպէս նոյն ձեւն (պատկերն) ունին մեր հույրտին մէջ: Անոնք պահելով իրենց ազգութիւնը եւ լեզուն, մնացած են: Երբ առիթ մը գտնեն, թուրքը Էզֆիշ ընելով (ճգմելով) Երկիրները մեր ձեռքէն կ'առնեն եւ կը բաժնուին: Ահա՛ յոյները, սերպերը, պուլկարները եւ ամենէն վերջը առնաւուռները»:

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ. — «Անկցի'ն բոլորը»:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ. — «Ձեր բարձր հրամանաւ թոյլտուութիւն կը խնդրեմ: Ձեր ծառան ալ կը մտածէ բժիշկ եղբորս պէս, միայն թէ ոչ թէ արեւմտեան զիտութեանց համաձայն, այլ արեւելեան կրօնական, շերիական օրէնքներու վրայ հիմնուած: Բարձրեալն Աստուծոյ փոխանորդութեամբ, կ'ուզեմ քանի մը գեղեցիկ սկզբունքներ պարզել իմ կողմէս: Օրէնքը կը թոյլատրէ որ միասակարբ ջարդուի: «Կիւլիստանը» գրող Շէյխ Սաստիին՝ Երջանկայիշատակին մէկ ոտանաւորին վրայ հիմնուելով յայտնեմ, թէ քանի որ հայերէն միաս տեսնուած է եւ ընդգլխացած են մեր տէր ու տիրական եղող իթթիհատի եւ Թերազը սուրբ կուսակցութեան ու ապստամբած են, եւ Էնֆէր փաշայի ապստամբեան հերոսին փեսային ալ ամօթայի փախուստ պատճառած են, այս կամ այնը առանց հաշուելու, մէկ հայ իսկ ողջ չթողելու պայմանով, զանոնք սպաննելը կրօնական պարտաւորութիւն է:

«Ձեր ծառան ալ մասին սուրբ ֆերվա մըն ալ տարւ պատրաստ է: Ձիս մի նկատէք փաթթոցաւոր տղէտ սոֆթա մը: Դժուարութեամբ ապրուստս կը ճարէի, ապատութեան շնորհը տրուեցաւ ինձի, ես Երեսփոխան զարձայ: Մետրեւէներու 50·000 աշակերտներուն ներկայացուցիչը եւ ուսուցիչն եմ: Բացատրեմ խնդիրը: Քանի որ մնասը ընդհանուրին է, մասնաւորը կը գոհուի: Ասիկա գայտէի ֆրեհիլէ է (խորամական փրիստփայութեան սկզբունք), հետեւաբար, ծեր, կին, մանուկ, առանց խարութեան, պէտք է սպաննել բոլորը: Այդ գործը զիւրացնելու համար, ուրիշ գաղափար մը ունիմ: Պարզեմ, եթէ կը թոյլատրէք: — Զօրաշարժի պատճառով ձեռքը զէնք բռնող բոլոր անձերը բանակի մէջ առինք: Անոնք (հայերը) կը զրկենք պատերազմի առաջին ցօրն վրայ, ուստի գիմացէն, մենք ալ Լաեւէն կը կրակենք մեր զրկած մասնաւոր ուժերուն կողմէ եւ

կը փճացնենք բոլորը: Իսկ Երկրին ներսը, տուներու մէջ մնացած տկար, հիւանդ, կին եւ մանուկներ, Երբ հրաման կը տրուի, մեր բարեպաշտ (սալիհ) հաւատացեալները, մէկ վայրկեանի մէջ, կը մաքրագործեն զանոնք: Կը զբաւեն անոնց սեփականութիւնները եւ անոնց աղջիկները կ'առնեն իրենց անկողիններուն մէջ (տուխքերիլերի իսթիֆրաշ Էտերլէր):

«Ընդունելի եւ ամենալաւ կերպը չէ՞ք գտներ իմ այս տեսակէտս» (էջ 97):

ԳԱՐԱ ՔԵՄԱԼ. — «Եաշա' (ապրի'ս), խոճա էֆենտի: Կը տեսնէ՞ք, Եղբայրներ, մեզի արժանի Շէյխ իւլ Իսլամը»:

ԷՆՎԷՐ (Լուրջ ձեւով մը). — «Բնաջնջումի եւ պատժումի կերպերը որոշելը իշխանութեան գլուխը գտնուող նախարարաց խորհուրդին յատուկ պարտականութիւնն է»:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ. — «Հրամանը եւ Ֆերմանը ձեր բարձրապատուութեան կը պատկանի»:

ՃԱԻԻՏ. — «Այժմ, Եղբակացութեան զանք: Տօքթ. Նազըմ, Պէհաէտտին Շաքիր եւ նոյնիսկ խոճա Հասան Ֆեհմի Եղբայրներու տեսակէտները լուսարանեցին խնդիրը պէտք Եղածին չափ: Հայերը դարերէ ի վեր, իրենց ապրած հայրենիքին դէմ, ամէն առիթէ օգտուելով, թուրքի թշնամիին հետ ձեռք-ձեռքի տուին եւ թուրքին դէմ գործեցին (էջ 93): Այն թուրքին, որ կ'ապահովէր հայուն հանգիստը եւ Երջանկութիւնը: Էֆենտինէ'ր, թուրքը այս Երկրին մէջ իշխանութիւն ունի: Թուրքը այրող արեւին տակ կ'աշխատի իր արտին մէջ, քաղաք կը բերէ իր սպրանքը եւ կը ծախէ հայ վաճառականին: Կը հարստացնէ զայն եւ կ'ապահովէ անոր Երջանկութիւնը: Տնտեսական իշխանութիւնը հայուն ձեռքն է: Մէկ հայ իսկ ողջ չթողելու պայմանով, բոլորը բնաջնջել ազգային եւ փաղաքական անհրաժեշտութիւն մըն է: Կարեւոր է նաեւ որ թուրքը հաստատէ իր տնտեսական իշխանութիւնը:

«Քուէի թո'ղ դրուի»:

Թալէաթի հրամանին համաձայն, քուէները կը հաւաքուին, կը դասաւորուին: Արդիւնքը այն կ'ըլլայ, որ մէկ հայ իսկ ողջ չգտնու պայմանով, հայերու բնաջնջումը միաձայնութեամբ կ'որոշուի (էջ 93):

ԹՈՒՐՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ ԻԹԹԻՀԱՏԸ

Վերջին 100 տարուան ընթացքին, Թուրքիոյ մէջ զանազան խճուորումներ տեղի ունեցած են, կազմուած են խմբակցութիւններ, ընկերակցութիւններ և կուսակցութիւններ կրօնական, քաղաքական և այլ նպատակներով, թէև անոնցմէ շատերը, ղեռ սաղմնային վիճակի մէջ, ցրուած և վերջ դտած են, բացի մի քանիէն:

Ուսումնասիրելով Թուրքիոյ ընկերային կարգը, կը տեսնենք որ Թուրքիոյ մէջ զինուորական ուժը եղած է (դրեթէ 400 տարի) ենիչերիններուն զինուորական կազմակերպութիւնը, որ երբեմն սուլթաններու հրամանին տակ, երբեմն ալ անոնց վրայ գերիշխող և մանաւանդ բռնակալ ուժ մըն էր հալաօսմանի՝ հայոց դէմ: 18րդ դարու վերջերը եղաւ ժամանակ, որ այդ ենիչերինները սուլթաններ զահրնկէց բրին և ուրիշներ զահ բարձրացուցին:

Սուլթան Մեհմետի հայրը (Համիտ Բ.ի պապը) Եւրոպացի մասնագէտներ հրաւիրեց թրքական բանակը վերակազմելու, անոր հազուստին ձեռք փոխելու, համազգեստ մը տալու և իր հրամանին ներքեւ կարգապահութիւն հաստատելու նպատակով:

Սուլթան Մահմուտ Բ. ենիչերի անունը փոխեց «Նիզամիէ էֆրատէ մետիտէ»ի (կանոնաւոր նոր զինուոր): Եւ երբ ըստ բաւականի ուժ ունեցաւ իր հրամանին ներքեւ, 1825 թուին բնաջնջեց այդ արիւնարբու ենիչերիները, զանոնք զորանոցներու մէջ հաւաքել տալով և թնդանութի կրակին մատնելով ամէնքը...

Մինչև այդ օրերը Թուրքիոյ մէջ սեւէ կուսակցութիւն գոյութիւն չունէր, բացի յունական «էքնիֆի» էքերի'ա»յէն, որ կազմը-

ւած էր 1815ին: Թուրքերու սովի մոլեռանդութիւնը թոյլ չէր տար սեւէ ոչ-թուրք տարրի քաղաքականապէս կազմակերպուիլ: Թուրքիոյ հպատակները սարուկ կը նկատուէին: Եւրոպական ճնշումի ներքեւ, Մահմուտ Բ.ի որդին, Մեհմետ, 1839ին հրատարակեց հրովարտակ մը, որ կ'ըսէր թէ «քրիստոնէաները հաւասար են իսլամներուն» և «տուրքերու զանձման կանոններ պիտի դրուին» և «կրօնական ազատութիւն պիտի բոլորուի»: Դիւրին զորք չէր սակայն թրքական քարացած միտքը վարժեցնել նման ոսկեգօծ զազախարներու: Անհրաժեշտ եղաւ 1856ին կրկին սուլթանական հրովարտակ մը (խաթթը շերիֆ) հրատարակել, նոյն ոգիով:

Թրքութիւնը չմարտեց այդ հրովարտակը և ահա, 1859ին, սուլթանի Եէյի Ահմետի ղեկավարութեան տակ, 50-60 կրօնամոլներէ բողոքեցաւ և «Ֆետայիլէր ձեմիլէթի» անունով Կ. Պոլսոյ մէջ ընկերակցութիւն մը կը կազմուի» զազանի կերպով քարոզելու համար, թէ «թուրքը հաւասար չի կրնար բոլոր հայուն»: Խլրտումներ կանխելու համար, Ալիյի հրամանով, այդ շարժման ղեկավարներէն մի քանին Աքքեա արտորուեցան:

1861ին, երբ Ալիյ զահակալեց ու նաեւ Եւրոպա այցելեց, ազատամտութեան հով մը փչեց Թուրքիոյ մէջ: Հայ մտաւորականները (որոնց մէկ մասը Ֆրանսա ուսանած էր) յաջողած էին հայոց եկեղեցական-ազգային սահմանադրութիւն մը վաւերացնել տալ Թուրքիոյ կառավարութեան:

Թուրքերու մէջ նոր սկսած ազատասիրական ոգիի ներկայացուցիչներէն մին եղած էր Նազրմ Բեմալը, որ սակայն հալածուեցաւ և փախաւ Եւրոպա 1865ին: Անոր հետեւեցան մի քանի ուրիշներ, Ջիա փաշա, Ալի Սուաւի եւայլն, որոնք իրենք զիրենք կոչեցին «Նիլ Օսմանլըլար»: Հրատարակեցին քանի մը թերթեր, Փարիզ և այլուր, «Մուխպիր» (Լրատու), «Ուլում» (Գիտութիւն), «Խայալ» (Ժողով) և այլն, որոնք խոսի պէս բուսան և խոսի պէս ալ չորցան:

«Նոր Օսմանլըլար»ներէն Թուրքիոյ մէջ քաղաքական հասկացողութիւն ունեցող Ահմէտ Միհալաֆ փաշան կար, որուն խորհրդականն էր Գրիգոր Օսեան: Միհալաֆ կարելի է նկատել «Նոր Օսմանլըլար»ներու «Ներխոտարող Թուրքերու» գլխաւորը: Միհալաֆ 1876ին Թուրքիոյ վարչապետ բոլորով մտահոյ էր, երբ մեծ պետութիւնները կը խորհրդակցէին Թուրքիոյ բաժանման մասին, Կ. Պոլսոյ մէջ դուժարուած խորհրդաժողովին առթիւ, քրիստոնէաներու դէմ Թուրքերու հալածանքը պատրուակ բռնելով:

Միտհատ փճապանութեամբ, Համիտի անուշով, ներկայացաւ ժողովին, սնունդ հրամայուց թրքական Ա. Սահմանադրութիւնը՝ 1876ին, յայտնելով թէ «այլևս օսմաննան բոլոր հպատակները սահմանադրական հաւասար իրաւունքնե՛ր պիտի վայելեն»:

Այդ վարչական խարէութիւնը երկար չտեսցաւ: Հրատարակուած նոր Սահմանադրութեան համաձայն գումարուած Երեսփոխանական ժողովը միայն մէկ նիստ ունեցաւ եւ ապա Ա. Սահմանադրութիւնը քննուեցաւ, Երեսփոխանական ժողովը լուծուեցաւ 1877ին: Միտհատ փաշա դուրս տակ անուեցաւ, իբր «մեղսակից» Սուլթան Ազիզի սպանութեան, եւ արտորուեցաւ Արարիոյ Թայիֆ քաղաքը. այդտեղ, վեց տարի ետք, զիչեր մը խեղդուեցաւ:

Համիտ Բ. գարձաւ բացարձակ միապետ, 32 տարի շարունակ: Ան հայերու բնաջնջման համար կազմեց «Համիտէ» քրտական հեծեւազորաց 82 գունդեր, եւ հայոց ինքնապաշտպանութեան փորձերը որակեց «ապստամբութիւն», հրամայեց 1894-96ի հայկական կոտորածները:

Ինչպէս հայերու, նոյնպէս թուրքերու կողմէ որեւէ բողոք կամ դիմադրութիւն բռնակալութեան դէմ ապարդիւն էր: Փորձողը կա՛մ կը բանտարկուէր եւ կամ կ'արտուէր Ֆեղզան, Աքքեա, եւայլն:

1889ին, թուրք մտաւորական մը՝ Ահմէտ Րիզա, մօրը կողմէ հունգարացի, եղած էր Պրուսայի կրթական տնօրէն: Իբր «Երիտասարդ թուրք» (Ենի Օսմանլը) կասկածելի դարձած էր յաչս կառավարութեան եւ փախած էր Փարիզ, իբր թէ ուսանելու: Հոն եկան իրեն նման քանի մը ուրիշ թուրքեր ալ: Ահմէտ Րիզա հետեւեցաւ, կարճ ժամանակ մը, Օկրեսթ Քոնիթի դրական փիլիսոփայական դպրոցին, Քրանսացի ուսուցիչ Հաֆիթի մօտ: Ան, սակայն, որպէս թուրք, զուրկ էր Քոնիթի ալլախրական ոգիէն: Իր քանի մը ընկերներով եւ հետեւորդներով Փարիզի մէջ կազմեց «Օսմանլը Իթթիհատ եւ Թեքագզը» անունով խմբակցութիւն մը, նախնական կուսակցութիւն մը, որ յետոյ 1897ին ունեցաւ մասնաճիւղ մը ժընեւի մէջ եւ ուրիշ մասնաճիւղ մը՝ Գահիրէի մէջ:

1895-96ի ջարդերուն հետեւանքով՝ թուրք կառավարութիւնը եւ թուրքերը խայտառակուած եւ վարկաբեկուած էին Եւրոպայի ուսաններուն մէջ:

Եւրոպայի մէջ, փախստական թուրք երիտասարդներ, ուսանողներ, մտաւորականներ, հրապարակազիրներ սկսած էին մօտենալ հայ կազմակերպութեանց եւ անոյ լեզու թափել անոնց առջեւ, ցաւակցութիւն յայտնել եւ բաղձանք նաեւ, որ միացեալ ջանքերով պայ-

քարին բռնակալութեան դէմ, յեղափոխական միջոցներով:

Իթթիհատ եւ Թեքագզըի ղեկավարներէն Ահմէտ Րիզա սրտանց հակառակ էր յեղափոխական մեթոտներուն, կը բաղձար որ պետութիւնները միջամակին Թուրքիոյ գործերուն, Թուրքիան բարենորոգէին, ապահովէին անոր հողային ամբողջականութիւնը: Սակայն որեւէ գործակցութիւն կարելի չեղաւ իրագործել թուրք գործիչներու միջեւ:

Ահմէտ Րիզա 1895ին սկսած հրատարակեց «Մեշվերէթ» (Խորհրդակցութիւն) անունով կիսամսեայ Քրանսերէն պարբերաթերթ մը եւ նոյնը թուրքերէն լեզուով, «Շուրայլը Իսմէթ» անունով:

Ասոնցմէ բացի կը հրատարակուէին նաեւ ուրիշ կարճատեւ կեանք ունեցած թերթեր, որոնց կարգին Փարիզի մէջ «Երլարգ» եւ «Հիլալ»՝ Զուրիցիերի մէջ, որոնց գլխաւոր նպատակն էր հայերու քարոզութիւնը չկորսացնել գանձազան միջոցներով:

1902ին՝ «Օսմանլը Իթթիհատ եւ Թեքագզը»ի մասնաճիւղերը Փարիզի մէջ Քոնիկէ մը (պրատամաւորական ժողով) գումարեցին, սակայն երկիւղեղիւստ սակեցուցաւ: Ահմէտ Րիզա(*) եւ իր հետեւորդները իշխանութեան կեղծոնացման սկզբունքին կազմակերպէին, այսինքն չէին ուզեր Օսմանեան կայսրութիւնը կազմող երկիրներու բաժանումը, իսկ ուրիշ հատուած մը համակիր էր ապակեղծոնացման: Համաձայնութիւն չգոյացաւ:

1904ին ժընեւի մէջ կազմուեցաւ «Իթթիհատ վէ Ինգրլայ» անունով ուրիշ խմբակցութիւն մը, որ Թուրքիոյ գանձազան վայրերուն մէջ ունեցաւ կազմակերպական նախնական բջիջներ, որոնց ղեկավարներուն անունները գաղտնի պահուած էին եւ նոյնիսկ զիրար չէին ճանչնար, բացի Փարիզի կամ ժընեւի կեղծոններէն: Կը փախնային Համիտի լրտեսներէն, որոնց թիւը կը հասնէր 30 հազարնոց մակարոյժ բանակի մը:

Ահմէտ Րիզայի ղեկավարած Փարիզի «Իթթիհատ»ը ունէր մասնաճիւղ մը Կովկասի մէջ:

1902ի Քոնիկէի ընթացքին, որ պառակտուած էր, Փարիզի մասնաճիւղի անդամները տուած էին կարգ մը որոշումներ:

Նախապէս ունէին կազմական կանոնադր մը, 30 յօդուածներէ բաղկացեալ, իսկ 1902ին այդ կանոնադրին վրայ յաւելումներ եղան:

(*) Ահմէտ Րիզա 1909ին Օսմանեան Փարլամենթի (խորհրդարանի) ատենապետ էր եւ Ընդհ. Ա. Պատերազմի ընթացքին՝ ծերակուտական:

Յայտարարութիւն մը հրատարակեցին հետեւեալ իմաստով.—

«Միւս իմաններ եւ սիրելի հայրենակից թուրքեր, հայերը մեր երկրին Բարձր Իշխանութեան Պապր Ալիի վրայ, որ յարգանք կը վայելէ բոլոր եւրոպացիներէն, յարձակում գործել համարձակած են: Մեր մայրաքաղաքը ցնցեցին: Կը ցաւինք հայ հայրենակիցներու այս լիրբ շարժման համար: Բայց, նշմարտութիւնը այն է, որ հալածանք, «գուլում», բռնութիւն եւ յոռի վարչութիւն (խտարեսիզլիք) պատճառ եղան որ այս ցաւալի դէպքերը տեղի ունեցան:

«Մենք՝ թուրքերս ալ, միւս բոլոր օսմանցիներուն հետ, բարեկարգում եւ ազատութիւն կ'ուզեմք այս բռնակալ կառավարութենէն: Մեր ձեմիշէթը (կուսակցութիւնը) կ'աշխատի այդ նպատակին համար: Մենք, այսօր, փոխանակ հայերը պատժելու մասին խորհելու, յոռի վարչութեան, գուլումի եւ բռնակալութեան կեղրոն Պապր Ալին, Շէյխ իւլ Իսլամի պաշտօնատուներ եւ Երայրը կոխելով (պասաւազ) այդ պաշտօնատուները բռնակալներուն զլխուն վրայ փլցնենք (Պու տայիրեյերի միութեայիտերին պաշրմա երբալըմ): Զեռք ձեռքի տանք, հաւաքուինք, շատանք եւ ցոյց տանք քաղաքակիրթ աշխարհին, թէ մենք ալ պարտութեան սիրահար եւ անոր արժանի ենք:

Ստորագրութիւն

ՕՍՄԱՆԼԸ ԻԹԹԻՀԱՏ ՎԷ ԹԵՐԱԳԳԸ ՃԵՄԻՅԷԹԸ

(Տե՛ս, քարիք Զ. Թումայա, էջ 122-123):

Նոր կանոնադիրը կը բաղկանար 41 յօդուածներէ: Ե. յօդուածով կը պահանջուէր 1876ի Սահմանադրութեան վերահաստատումը, եւ յաւելուած մը՝ Կեղրոնի անդամներուն պարտադրուած հետեւեալ երդումով.

«Որքան ատեն որ Սուլթան Ապտիւլ Համիտի փայլական եւ բռնակալական վարչութիւնը կը շարունակուի եւ Օսմանեան Սահմանադրութեան տրամադրութիւնները չեն յարգուիր, օսմանեան կառավարութեան ծառայութեանը պիտի չմասնակցիմ. միշտ հաւատարիմ պիտի մնամ եւ պիտի ծառայեմ, կուսակցութեան զազմնիքները դուրս պիտի չհանեմ եւ ձեմիշէթին անունին դրկուած օժանդակութիւնները կուսակցութեան պիտի յանձնեմ, հաւատքիս եւ պատիւիս վրայ կ'երդմում»:

Այդ ատեն «Իթթիհատ»ի Փարիզի Կեղրոնի անդամներն էին Ահմէտ Բիզա, Մահիր Սայիտ, տոքթ. Պէհաւտին Շաքիր (որ ներքին գործերուն վարիչ անուանուեցաւ), տոքթ. Նազըմ, Սամի փաշա զատէ Սեզայի, Ահմէտ Սայիտ, որ կը խմբագրէր «Սաննազ» (Գրօ-

չակ) անունով թերթ մը, իշխան Մեհմէտ Ալի Ֆազըլ փաշա: Իրենց Փարիզի հասցէն էր, 25 Պոնափարք փողոց (տե՛ս, Ահմէտ Պետեի Քուրանի «Թուրքիոյ Յեղափոխութիւնը» գիրքը, էջ 202-204):



Ըստ թրքական Քոնկրէի որոշումներուն, մասնաճիւղերուն հետ դադարի թղթակցութիւնները կը կատարէր տոքթ. Պէհաւտին Շաքիր. ինչպէս նաև թղթակցութիւն կը պահէր ուրիշ երկիրներու իսլամ տարրերուն հետ, սկսելու համար «Իսլամըլըգ»ի, «Քիւրֆըլըգ»ի քաղաքականութեան մը:

Այս առթիւ կու տանք բնագիրը Պէհաւտին Շաքիրի մէկ դադարի նամակին, որ ուղղուած էր Կովկասի թրքութեան:

(Տես Ա. Պ. Քուրանի «Ինքըլայ Թարիխիմիզ վէ Իթթիհատ վէ Թերազը», էջ 214 եւ տոքթ. Թարիզ Զ. Թումայայի «Թիւրքիստա Սիյասի Փարթիլը» երկը, էջ 127):

Նամակի բնագրին թարգմանութիւնը.

«Կովկասի մէջ գտնուող մեր իսլամ եղբայրներուն, Ազիզ եղբայրներ,

Ստացանք ձեր եղբայրական նամակը: Մեր «ձեմիշէթ»ի ժողովին կարդացինք: Իսլամական եւ ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար, Կովկասի բոլոր անկիւններուն մէջ գիտական եւ քաղաքական ընկերութիւններ կազմելնիդ, դպրոցներու եւ հրատարակութիւններու մէջ օսմանեան թուրքերէն գործածած ըլլալնիդ եւ մեզի հետ յարաբերութիւնները սերտացնելու համար դէպի Եւրոպա ներկայացուցիչներ զրկելու մտադրութիւննիդ միաձայնութեամբ կը ծափահարենք:

1.— Կովկասի մէջ եւ նոյնիսկ ամբողջ Ռուսիոյ մէջ ջանքեր թափելու է իսլամները մէկ կէտի շուրջ միացնելու: Զեր դրացիները, — տաղիստանցիներ, չերքէզներ, — պատերազմիկ, քաջ մարդիկ են: Լաւ գիտեն զէնք գործածել: «Հաւատացեալներու մէջ եղբայրութիւն» (իննէ մուսիմին ուլսլէ) Մարգարէի խօսքին համաձայն, ձեզի եղբայրական եւ օգնութեան ձեռք կ'երկարենք: Այդ մասին բնաւ մի կասկածիք:

2.— Լեհերը ոռոսական լուծէն ազատելու համար, մէկ-երկու

տարիէ ի վեր, շատ մեծ հայրենասիրական վճռականութեամբ կ'աշխատին: Բոլորս լսած ենք այդ պարագան:

Կովկասի մէջ գտնուող իսլամները, այդ զոհարերող ազգէն, եթէ ոչ նիւթապէս, գոնէ բարոյապէս ծառայութիւն կը սպասէին: Ըլլա՛յ անոնց հետ, ըլլա՛յ Օտտոման մէջ գտնուող յեղափոխական հրեաներու հետ բարեկամական կապ պահելու օգտակար կ'ըլլայ քանի մը տեսակէտներով:

3.— Ջանաջէք ամէն քաղաքի մէջ գաղտնի ընկերակցութիւններ (կիզլի ֆեմիլիէթլէր) կազմել:

4.— Բոլորին յայտնի է սա պարագան, որ առանց դրամի աշխարհի մէջ որեւէ բան կարելի չ'ըլլար ընել: Ամենէն առաջ, ձեր ընկերակցութիւնը իր ուշադրութիւնը այս կէտին վրայ պէտք է կեդրոնացնէ: Պարտականութիւն կը սեպենք ասիկա իմացնել ձեզի:

5.— Գաղտնի պահեցէ՛ք ձեր «ձեմիլիէթ»-ին (կիզլի քուրմալը-սըմըզ) կեդրոնի անդամներուն անունները:

6.— Առայժմ զոչ չէ եղէ՛ք ոուս կառավարութեան դէմ հրապարակով ապստամբութիւն փորձելէ:

7.— Մեր քշնամին եղա՞ց եւ Չեզ ուսերու լուծէն ազատելու դէմ ամենամեծ արգելիքներէն մին ՀԱՅԵՐՆԵՆ: Մշակեցէ՛ք կանոնաւոր ծրագիր մը գտնուի (հայերը) տկարացնելու համար (էրմենիլերի զայիֆ տիւշիւրմէզ իւշիւն)» (էջ 129):

Ստորագրութիւն

ՏՈՔԹ. ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՔԻՐ

1902ին, Իթթիհատի Փարիզի Քոնկրէին մասնակցողները ընտրած են Ընդհանուր Կեդրոնի անդամներ եւ իրենց կատարելիք գործերը բաժնած են հետեւեալ կերպով.— Իրենց պաշտօնաթերթը պիտի ըլլայ թուրքերէն «ՇՈՒՐԱՅԸ ԻԻՄՄԷԹ»ը (Ազգային Խորհուրդ) եւ վերահսկիչը պիտի ըլլայ Սամի փաշա գատէ Սեղայի պէյը: Այդ իմաստով Փրանսերէն կիսամսեայ «ՄԵՇՎԵՐԷԹ»ը (Խորհրդակցութիւն) պիտի խմբարդէ Ահմէտ Րիզան եւ անոր օգնականը պիտի ըլլայ Մուսթաֆա Ֆադիլ փաշայի թոռը՝ Մահմուտ պէյ:

Մասնաճիւղերու հետ գաղտնի թղթակցութիւնը պիտի պահէ տղթ. Պէհաէտին Շաքիր պէյ, զործակցութեամբ տղթ. Նազրմի:

Քննիչ մը պաշտօն պիտի ունենայ հաղորդակցութեանց, թղթակցութեանց նիւթերը հաղորդելու Կեդրոնի միւս անդամներուն: Այդ գործը պիտի կատարէ Սէյիտ Քենան պէյը:

Մենք այս արարածներով պիտի չզրադէինք, եթէ այդ չարագործները, տարիներ շարունակ, հայոց դէմ ցեղասպանութեան ուճիրներուն մասնակից եւ զեկամար եղած չըլլային: Պէհաէտին Շաքիրի 1902ի նամակը ցոյց կու տայ անոնց կանխամտածումները:

1915-16ի ազգէն 13 տարի առաջ, մենք կը տեսնենք անոնց ստորագրութիւնը կրող նամակներ՝ հայոց բնաջնջումին մասին, անոնց սճրային սրտորաստութիւնները, այդ ուղղութեամբ գաղտնուէն կատարուած աշխատանքները:

1907ի «Իթթիհատ»ի Քոնկրէն, իբրև նպատակ կուսակցութեան, կ'որոշէ հետեւեալները.—

Յօդուած 1.— Նպատակ. Հայրենիքը դերութեանէ ազատելու եւ մարդուն արժանաւայելի կեանք ապահովելու համար, առանց կրօնի եւ ցեղի խորութեան, բոլոր օսմանցիներուն սրբազան պարտականութիւնը թող ըլլայ (այդ իրատեսները ձեռք բերել): Եւ ազգութիւնը պահելու համար, 1876ի Սահմանադրութիւնը տեւական կերպով գործադրելը Կազմակերպութեան նպատակն է:

Յօդուած 2.— Միտին աշխատելու եւ կրօնով եւ ցեղով տարբեր տարրերը: Բայց, եթէ անոնք ցեղի եւ կրօնի տարբերութեան պատճառով բաժանուած յառաջ բերելու աշխատին, Կազմակերպութեան պարտականութիւնն է արգելք ըլլալ ատոր (Թունայի, էջ 129, Ա. Պ. Քուրան, էջ 238):

1906ին, Իթթիհատի պատկանող անձեր Սէլանիկի մէջ կը կազմեն մասնաճիւղ մը, որ Ընդհանուր Կեդրոնէն կը վաւերացուի: Սեյիտ Կեդրոնական Կոմիտէի անդամները եղած են հետեւեալները.— Պուրալը Թահիր (զինուորական), հարիւրապետ Նաքի, Թալէաթ (որ այդ սառն Սէլանիկի փոսթի եւ հեռագրի ընդհանուր տնօրէնութեան գրասենեակին մէջ զլիսուոր գրադիր էր), Միտհատ Շիքրի (կրթական հաշուակալ), սելանիկցի Բահմի (որ յետոյ Իզմիրի կառավարիչ եղած է), հարիւրապետ Էօմէր Նահի, զօրավարի թիկնապահ Քեպուր Նամի, զինուորական տեղակալ (միւլազիմ) Իսմայիլ Ճանպուլաթ, հարիւրապետ Իսմայիլ Հազըր եւ Սուլէյման Ֆեհմի (6 զինուորական եւ 4 ոչ-զինուորական):

1906ին, Սէլանիկի մէջ Իթթիհատի ժողովները տեղի կ'ունենային Իսմայիլ Ճանպուլաթի եւ Միտհատ Շիքրիի տան մէջ(*):

(*) Հայկական ջարդերու շրջանին, Միտհատ Շիքրի Իթթիհատի Կեդրոնի անդամ եւ ընդհանուր ֆարտուղար էր: Իսկ Ճանպուլաթ՝ Թալէաթի օգնականն էր:

1907-1908ին Իթթիհատի իրրեւ «Ֆետայիներ» հրապարակ կուզան էնվէր, Սալահետտին, Նիադի եւ էյուպ Սապրի, էնվէր՝ Թիքվէլի շրջանին եւ միւսները Րեսնէի եւ Օխրիտայի շրջաններուն մէջ (արձ., էջ 116) :

Տոքթ. Նազըմ Փարիզէն Իզմիր կ'անցնի եւ Հոն, հազարապետ Թահիրի հետ, Իթթիհատի բջիջներ կը կազմակերպէ :

1907ին, Իթթիհատի 2րդ Քոնկրէին մէջ կանոնադրի մէջ կարգ մը յաւելումներ եւ փոփոխութիւններ կ'ընեն եւ 39 յօդուածէ բաղկացած նախկին կանոնադրին յօդուածները կը բարձրանան 67ի, ապա կ'աւելցնեն 10 յօդուած «պատմական» բաժնին մէջ :

1907ին, Իթթիհատը խառն Քոնկրէի կը հրաւիրէ Իշխան Սապահետտինը (որ ապակեղրոնացման կողմնակից էր), Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ ներկայ կ'ըլլայ Խ. Մալումեան (է. Ակնունի) : Այս սողերը քաղուած են թուրքերու արձանագրութեանց մէջէն (էջ 107) : Կը համաձայնին որոշ ծրագրի մը շուրջ խառն Քոնկրէ մը կազմել, հետեւեալ պայմաններով, Դեկտեմբեր 27, 28, 29, 1907ին. երեք պահանջներ կը դրուին. —

1. — Գահէն հրաժարեցնել Ապտիւլ Համիտը :

2. — Հիմնովին փոխել ներկայ կառավարական կազմը :

3. — Սահմանադրութիւն հաստատել, ունենալով երեսփոխանական ժողով եւ ծերակոյտ (էջ 155) :

Թրքական արձանագրութեանց մէջ կայ նաեւ հետեւեալ խոստովանութիւնը. — «Ապտիւլ Համիտ ոճիրներ կը գործէր եւ տարրերը իրարու դէմ կը լարէր : Բոլոր տարրերը ընդհանուր ջարդերու ենթարկուեցան — թուրք, հայ, յոյն, պուլկար, քիւրտ, արաբ եւ տիւրքի(*) :

«Համիտ երկրին վաճառականութիւնը եւ կրթական վիճակը փճացուց : Փակեց դպրոցները, ուսուցիչները բանտարկեց, աներեւակայելի զրաքննութիւն հաստատեց եւ երկիրը տգիտութեան մէջ պահեց : Հպատակները երջանկութենէ զուրկ պահեց : Անյազ եւ անպատիւ պաշտօնեաներ պահեց ու անարդար տուրքերով պալատին դանձը լեցուց (թրք. արձ. էջ 155) :

«Խաֆիէներու միջոցով արտաքին աշխարհը մութի մէջ պահելու համար, երկրին ներքին կացութիւնը կեղծեց եւ թերթերը կաշառքներով կշտացուց : Անցազիր տալ արգելած էր, անապահովու-

(*) Թուրքերու ընդհանուր ջարդ եղած չէ Համիտի կողմէ, բացի քանի մը հարիւր իթթիհատականներու ախտէն :

թիւն կը տիրէր : Գիւղացիին սերմնցուն անգամ կը գրաւէր, որով երկրագործութիւնը փճացուց : Հին ժամանակի բարբեր հողերը չորացուց եւ անապատի վերածեց : Այդ իսկ պատճառով, միւս կրօններու եւ ցեղերու պատկանողները, աղատութիւն եւ ապահովութիւն գտնելու նպատակով, Եւրոպա եւ մինչեւ Ամերիկաները գաղթեցին : Այդպէսով, սովի պատճառով, ընդհանուր ջարդերուն ալ պատճառ կ'ըլլար : Ժողովուրդին թիւը կը նուազեցնէր, օտար պետութիւններուն առջեւ պետութիւնը ոչ միայն վարկաբեկ րբաւ, այլեւ զգուանք պատճառեց (նեֆրէթ) : Այդ պետութիւնները 1856ին Փարիզի եւ 1878ին Պերլինի դաշնագրերով բարենորոգումներ որոշեցին : Այդպէս երկիրը բաժանումէ փրկեցին (մուգասեմետէն էսիրկեմիշլիքի տի) : Եթէ այդ բարենորոգումները ժամանակին գործադրուած ըլլային, երկիրը բոլորովին տարբեր կացութեան մը մէջ պիտի գտնուէր : Այդ բարենորոգումները չգործադրուեցան եւ իրաւացի կերպով (մուհիգանէ) ապստամբութիւններու պատճառ եղան : Այդ վատթար վարչութեան պատճառով, երկիրը հետզհետէ պղտիկցաւ : Եթէ այսպէս քիչ մըն ալ շարունակուի, Ալպանիա, Մակեդոնիա, Արաբիա եւ Հայաստան, անկասկած, պիտի բաժնուին պետութենէն կամ այդ պետութիւններուն ընդարձակուելուն պատճառ պիտի ըլլայ եւ կամ մեծ պետութեանց ճանկին մէջ պիտի մնայ (*)» (էջ 154-155, թրք. արձ.) :

Իթթիհատի գումարած «Քոնկրէ»ներու թիւը կը հասնի 9ի : Կու տանք մանրամասնութիւնները (էջ 169-199) .—

Գիտենք, թէ ի՞նչ աստիճան թուրքերը հաւատարիմ եղան իրենց երդումով յայտարարած այդ սկզբունքներուն հանդէպ ոչ-թուրք տարրերու և թէ ի՞նչպիսի նենգամտութեամբ դաւադրեցին այդ տարրերուն Ֆիզիքական գոյութեան դէմ, երբ իշխանութեան գլուխ եկան : Հրէշային կազմակերպութիւններ գաղտնօրէն մէջտեղ բերին, իրենց Քոնկրէներու որոշումներով : Մենք կը տեսնենք այդ իրենց արձանագրութիւններէն :

1908ի Սահմանադրութեան վերահաստատումէն սկսեալ, երկերեսանի Իթթիհատը արտաքնապէս պահեց կուսակցութիւն ըլլալու ձեւ մը (սիյասի փարթի) եւ նոյն ատեն պահեց «Ճեմիէթ»ը, կազ-

(*) Իթթիհատի արձանագրութեան այդ սողերը ցոյց կու տան, որ հայ յեզափոխականները իրաւումէ ունէին պայքարելու այդ բռնակալութեան դէմ եւ յանցագործը բուրք պետութիւնէն էր, ինչպէս կ'երեւի բուրք իրազեկ մարդոց հայս գրաւոր խոստովանութենէն :

մակերայութեան զաղտնի գաւաղրական մասը եւ այդ անտեսանելի մարմինը շարունակեց իր ոճրային գործունէութիւնը մինչեւ 1918ի զինազաղարը:

Այդ թուականէն ետք եւս, թուրք բանակը եւ Իթթիհատը ջերմօրէն քաջալերեցին Մուսթաֆա Քեմալը, որ աչքի առջեւ ունեցաւ իթթիհատական Քոնկրէներու տուած որոշումները եւ շարունակեց անոնց պակաս ձգած գործերը:

Քեմալիզմի, Իթթիհատի եւ անոր չեք էներուն՝ միլիթիզմներուն վրայ յենած ըլլալուն մասին տեսնել՝ Բրիտանական Համայնագիտաբանը (1922, 32րդ հատոր, էջ 801):

Իթթիհատի Քոնկրէները ընդհանրապէս տեղի կ'ունենային Օդոստուէն մինչեւ Հոկտեմբեր եւ կը տեւէին երեք ամիս:

Նման ժողովներ տեղի ունեցան 1908ին, 1909ին, 1910ին եւ 1911ին: Վերոյիշեալ չորս Քոնկրէները՝ Սեթանիկի մէջ: Ապա, Պալքանեան պատերազմի առաջին օրերուն, իրենց Կեղրոնը փոխադրեցին Կ. Պոլիս եւ հոն գումարեցին յաջորդական «Քոնկրէ»ներ 1912ին, 1913ին, 1916ին, 1917ին եւ 1918ին: 1914ին եւ 1915ին, հայոց գէմ ցեղասպանական առաջին երկու տարիներուն, Քոնկրէ տեղի ունեցած չէ եւ 1913ի Փաղտնի Կեղրոնը շարունակած է գործել 1914 եւ 1915 տարիներուն:

Պէտք է նշել, որ Իթթիհատը 1908էն մինչեւ 1918 իր տուած կարեւոր որոշումները զաղտնի պահեց եւ շարունակեց իր երկերէն գործունէութիւնը: Արտաքին ճակատի վրայ կար Իթթիհատի ֆրոնտան, երեսփոխանական ժողովի մէջ, իր ներկայացուցիչ — մեկուսներով, որոնք ունէին Ընդհանուր ժողովը՝ Մեծիսր Ումումին: Իսկ զաղտնի, դաւադրական ճիւղն էր Իթթիհատի ձեւիլէթ կոչուած կազմակերպութիւնը, որ կը գործէր գէնքով եւ սպանոյթիքով:

Այդ գործունէութեանց համար, ընդդիմադիր թուրքերը կ'ըսէին հետեւեալը. — «Իթթիհատ եւ Թերազգը»ն նետեց Համիտը, բայց անոր տեղ հաստատեց Մերիէզը Ումումիի (Ընդհանուր Կեղրոնին) բռնապետութիւնը: Ո՛չ թապաւրը, ո՛չ կառավարութիւնը, ո՛չ ալ Երեսփ. ժողովը կը կառավարէ երկիրը: Վարադոյրի ետեւէն ամէն ինչ սեփականացնող Բիլի մը 8 անձերու, որ կայսրութիւնը իր ձեռքին մէջ առեր է (էջ 182): Երեսփոխանները շարժելու չուանը կը գտնուէր վարադոյրին ետեւ գտնուող խումրին ձեռքը (Մեպուսլարըն իփլիբի էսրար փերտէսի արարնտափի հիպպին էլիմոէ): Այդ սակաւապետութիւնը ինչ որ չէր կրնար խօսքով ընել, գէնքի միջոցով կ'ընէր (Ֆիքրի սուստուրմատըզը անտէ, սիլահա սարըլան պու կիզլի

Օլիկարշի — սակաւապետութիւնը): Իրենց սահմանադրական խոստումները մէկուր գնելով՝ քիւրֆնի եւ միլլիէթնի քաղաքականութիւն մը վարեցին: «ձեւիլէթ»ը պետութեան անունով եւ պետութեան իշխանութիւնով գործեց եւ պաշտօնեաները իրենց գործակալները դարձան» (էջ 183):

1908ի, 1909ի եւ 1910ի Սեթանիկի Քոնկրէներուն մէջ զբաղեցան կանոնադրի, նպաստի, բնորական եւ այլ հարցերով, կառած մնալով թուրքի «գերակայութեան» սկզբունքին: Այդ ուղղութեամբ 1908ին տուին 13 որոշումներ: Չորրորդ որոշումը այն է, որ «ոեւէ երեսփոխան անձնական կարծիք չի կրնար յայտնել՝ առանց Ընդհանուր Կեղրոնի յանձնախումբին հաւանութեան»: Հինգերորդ որոշումով Իթթիհատը գաւառներու մէջ մէկ մէկ պատասխանատու ներկայացուցիչ կը նշանակէ, որ տեղեկագիրներ կը ղրկէ Կեղրոն: Ապա, քանակ յօդուածներով իւրաքանչիւրին ուղղութիւն մը գծած է, «քաղաքական ծրագիր» մը (տե՛ս, Շուրայը Իւմէթ թերթը, Սեպտեմբեր 23, 1908):

1909ին (1325) Իթթիհատը 17 կէտերէ բաղկացեալ ծրագիր մը գծեց (տե՛ս, «Թանին», Մայիս 30, 1325) շեշտելով, որ (ըստ 16րդ որոշման) պետութեան պաշտօնական լեզուն թուրքերէնն է եւ ամէն տեսակ թղթակցութիւն եւ պաշտօնական բանակցութիւն թուրքերէնով պիտի ըլլան:

1911ին (1327) Իթթիհատի «Քոնկրէ» զարձակ գումարուեցաւ Սեթանիկի մէջ: Ժողովականները ծայրայեղօրէն կատաղած էին ոչ-թուրք տարրերու դէմ: Կոխ, ծեծկրուք եւ սպանալիք անպակաս էին: Երկրին հողային ամբողջականութիւնը ապահովելու եւ փան-թուրքիզմը զլուխ հանելու համար ամէն ջանք ընելէ վատ, առանձին իսկ որոշումով կը հրամայուէր «արդեւ ըլլալ ոեւէ ցեղի կամ կրօնի պատկանողներու կողմէ բաժանում յառաջ բերելու»: Ակումբներ հաստատուեցան գաւառներու եւ զիւղերու մէջ՝ այդ նպատակով: Հարածանքի քաղաքականութեան դէմ եղողները սկսան հրաժարիլ: Եւ հրաժարող իթթիհատականները, «անուանափոխ» ըլլալով, հաստատեցին «Հիւրիլէթ-Իթիլաֆ»ը, որ մեծ մասով բաղկացած էր զժգոհ իթթիհատականներէ:

Հրաժարականներուն մէջ յիշուած էր հետեւեալը. — «Քլըպներուն մէջ այնպիսի «փտանկաւոր անձ»երու(*) լայն իրաւասութիւններ տրուած են, որոնց հետ չգործակցելու համար քլըպներէն հե-

(*) «Ջարդի եւ ձուլման կոզմակիցներու»:

ուու մնացի: Նկատելով որ ազգային գերիշխանութիւնը կը ցնցուի, անուս սրբեցէ՛ք ձեր տետրակներէն»: Գրադէտ Թահսիմ Նահիտի եւ այլ բազմաթիւ անձերու հրաժարականները իրարու յաջորդեցին:

1911ի այդ համաթրքացումի աղմկալից ժողովի զազանի նիստերուն մէջ որոշուած էր փոքրամասնութիւնները ձուլել բռնի ուժով:

1912ի Իթթիհատի «Քոնկրէն», դա՛րձեալ զազանի, տեղի ունեցաւ Սելանիկի մէջ:

Ստորեւ կու տանք «Ճեմիյէթ» կոչուած ոճրային մարմնին Կեդրոնին զազանի անդամներու անուանացանկը՝ ժամանակագրական կարգով. այդ անձերը աւելի կամ պակաս չափով շարաշուք ազդեցութիւն ունեցան հայոց դէմ ցեղասպանութեան ոճիրներուն մէջ.—

1908ին անդամներն էին.— Հիւսէյին Գատրի, Միտհատ Շիւքրի, Խայրի, Թալէաթ պէյ, Ահմէտ Րիզա, Էնվէր փաշա, Հապիպ պէյ եւ Իփերլի Հաֆըզ Իպրահիմ:

1909ին գրեթէ անփոփոխ մնացած էր վերոյիշեալ անուանացանկը:

1910ին Կեդրոնին մէջ գործօն դեր ունեցան Հաճի Ատիլ, տոքթ. Նազըմ, էյուպ Սապրի, էօմէր Նաճի, Ջիա, Խայրի, Միտհատ Շիւքրի. ընդհանուր քարտուղար էր Հաճի Ատիլ, որ 1909 Ապրիլին, Ատանայի ջարդի օրերուն, ներքին գործոց նախարար էր:

1911ին, ցեղասպանութեան մասին տրուած որոշումներու նիստէն ետք, անդամներուն թիւը բարձրացուցին 12ի եւ ընտրեցին հետեւեալները.— Հաճի Ատիլ, որ դարձեալ մնաց ընդհանուր քարտուղար, Ջիա Կէօք Ալի, Խայրի, տոքթ. Նազըմ, էյուպ Սապրի, էօմէր Նաճի, Թալէաթ, Ահմէտ Նեսիմի, Հիւսէյն Չատէ Ալի, Ալի Ֆեթհի եւ Խալիլ:

Ասոնց վրայ աւելցան քննիչներ, — Նեսիմի Սարոն, հարիւրապետ Իպրահիմ, տեղակալ Ղանի, փոխ հազարապետ Րիզա, փոխ հազարապետ Իհսան եւ ձեւալ պէյերը:

1912ի Իթթիհատի «Ճեմիյէթ»ի Կեդրոնին անդամներն էին.— էյուպ Սապրի, տոքթ. Նազըմ, տոքթ. Պէհաէտտին Շաքիր, տոքթ. Բուսուխի(*), Ջիա Կէօք Ալի, էմրուլլահ, Քիւչիւք Թալէաթ (որ Իզմիրի Իթթիհատի միւֆեթթիչն էր), Րիզա (որ Պրուսայի միւֆեթթիչն էր) եւ Գարա Քեմալ (որ Պոլսոյ միւֆեթթիչն էր):

(*) Տոքթ. Բուսուխի, Պերիմի մէջ, Թալէաթի սպանութեան օրերուն, ամոր յարկաբաժնի մէջ կը բնակէր:

Կեդրոնի ընդհանուր նախագահը Սայիտ Հալիմն էր եւ անոր փոխանորդը՝ (վեֆելը) Թալէաթ:

1913 Յունուար 10/23ին, Իթթիհատը իր վատ արարքներով եւ ոճիրներով վարկաբեկուած էր: Էնվէր-Թալէաթ քլիֆը 100է աւելի հետևորդներով զահլիճին վրայ յարձակում գործեց եւ սպաննեց պատերազմական նախարար Նազըմ փաշան (չեքէզ) եւ ոճիրներու միջոցով կառավարութեան ղեկը ձեռք անցուց: Թալէաթ եղաւ ներքին գործոց նախարար, փարչապետ եղաւ Մահմուտ Շեքիթ զորավարը, որ իրը փոխ-վրէժ Նազըմին, սպաննուեցաւ հակառակորդներուն կողմէ: Այս անգամ Իթթիհատականները սկսան ճզմել բոլոր հակառակորդները:

Պալքանեան պատերազմի ընթացքին, Էնվէր Էտիրնէն վերագրաւեց եւ դարձաւ պատերազմական նախարար: Ջինալիցութիւն կրնալուեցաւ 1914 Օգոստոս 2ին Գերմանիոյ հետ եւ Իթթիհատը 1914ի եւ 1915ի ցեղասպանութեան օրերուն «Քոնկրէ» շլուժարեց մինչեւ 1916 Օգոստոս:

Մինչ այդ, հայաբնակ նահանգներու եւ այլ քաղաքներու ու գիւղերու մէջ պետական բոլոր սպասարկութիւններով ցեղասպանութեան ոճիրները շարունակուեցան:

1916ին «Ճեմիյէթ»ի Կ. Պոլսոյ Կեդրոնի զազանի անդամները եղան.— Հաճի Ատիլ, Հիւսէյին Ճահիտ, Ճաիտ, Խայրի, Աթըֆ, տոքթ. Նազըմ, տոքթ. Պէհաէտտին Շաքիր, էյուպ Սապրի, Ջիա Կէօք Ալի, Րիզա, Տոքթ. Բուսուխի, Գարա Քեմալ, Թալէաթ, Հիլմի: Նախագահ՝ դարձեալ Սայիտ Հալիմ եւ ընդհանուր քարտուղար՝ Միտհատ Շիւքրի: Բոլորն ալ ցեղասպանութեան կազմակերպիչ ոճրագործներ:

1916ին, այս Քոնկրէին մէջ կուսակցական հաշուետուութիւն չեղաւ: Այդ անունին տակ կառավարութեան վարած ոճրային քաղաքականութիւնը «ուղիղ եւ արդար» գտեր են: Անօթի բախտախնդիրներ, կողոպուտով յղիացած, հարստացած, դրամատուններ կը հաստատէին: Առաջին դրամատունը բացուեցաւ 500·000 ոսկիով (2·500·000 տուրք):

1916ին եւ 1917ին Իթթիհատի Քոնկրէներուն գլխաւոր որոշումները տրուեցան ապագայ տնտեսական գործունէութեան մասին: Կազմեցին ծրագիրներ առևտրական ընկերութիւններու, թուրք լեզուի, զրբու փոփոխման, Շերիի դատարանները ջնջելու, որոշումներ, զորս յետոյ Մուսթաֆա Քեմալ հետևողական կերպով գործադրեց աւելի խիստ, բռնի միջոցներով:

1917ի Իթթիհատի Քոնկրէն ունեցաւ երկու կեդրոններ. — Մին կը կոչուէր «Մեծընտր Ուժումիի Կեդրոն», որուն անդամներն էին՝ Շէյխ իւլ Իսլամ Մուսա Քեաղիմ, Սալիա Հալիմ, Խալիլ, Հաճի Ատիլ, Էնվէր փաշա, Ահմէտ Նեսիմի, ձեմալ փաշա, ձաւիտ, Խալիլ, Շիւքրի, Մուսթաֆա Շերիֆ, Հիւսէյն ձաճիտ եւ Աթըֆ: Իսկ միւս կեդրոնը՝ «Մերքէզը Ուժումի», որուն անդամներն էին՝ տոքթ. Նազըմ, Թալէաթ, Գարա Քեմալ, Բիգա, Չիա Կէօք Ալի, Էյուպ Սապրի, տոքթ. Բուսուխի, տոքթ. Պէհմէտտին Շաքիր, Հիլմի: Նախագահ Թալէաթ եւ ընդհանուր քարտուղար՝ Միտհատ Շիւքրի, ամէնքը հրէշներ, աւելի կատաղի, քան զերմանացի «էս-էյ»ները կամ «էս-էյ»ները:

Իթթիհատի Քոնկրէներու զաղտնի որոշումներու մասին թեթեւակի ակնարկներ կան «Թանին» թերթի մէջ, նաեւ «Շուրայը Իւմ-մէթ»ի մէջ: «Թանին»ը պաշտօնաթերթն էր Իթթիհատի, որուն խմբագրապետն էր Հիւսէյին ձաճիտ (Նալչըն):

«Թանին» Նոյեմբեր 26, 1908ի իր թիւին մէջ կը գրէր. — «Սահմանադրութեան յայտարարութեան առաջին օրերուն՝ Ընդհանուր Կեդրոնին անդամներուն զաղտնի մնացած անունները երեւան ելած են, ուստի որոշուեցաւ որ անունները զաղտնի պահուին բացարձակապէս»:

Իթթիհատի որդեգրած ծրագիրներու եւ որոշումներու մասին տեսնել «Շուրայը Իւմ-մէթ» թերթի 1908ի 7, 12, 22, 27, 29, 38, 39, 41, 43, 44, 45, 47 թիւերը եւ «Թանին»ի Սեպտեմբեր 14, 1909ի (1325) թիւը:

1911ի Քոնկրէն որոշում տուած էր ոչ-թուրք տարրերը ձուլելու. այդ մասին տեսնել «Թանին»ի Օգոստոս 12, 22, 29, 1911 (1327) եւ Սեպտեմբեր 4, 14, 18, 21, 23 եւ 24 եւ Հոկտեմբեր 1, 3, 1911 (1327) թիւերը, ինչպէս նաեւ «Թանին»ի հրատարակած, «Քաղաքական պատմութիւն» խորագրին տակ, Մարտ 1, 1912 (1327)ի յաւելումաձը եւ մասնաւորապէս՝ «Սալնամէի Սերվեթը Ֆուռուց» պատկերազարդ հանդէսին 1912ի (1328) 238, 239 եւ 240 էջերը:

Պատերազմի առաջին երկու տարիներուն Իթթիհատը Քոնկրէն ունեցած չէր եւ 1913ին ընտրուածները շարունակած էին իրենց գործունէութիւնը մինչեւ 1916 Օգոստոսի եւ Սեպտեմբերի ժողովը:

1916 Սեպտեմբերի Քոնկրէն, Ընդհանուր Կեդրոնի ընտրութեան մասին, Ներքին Կանոնադրին մէջ նոր փոփոխութիւններ մտցուց: Այդ ժողովին մէջ էնվէր եւ Շէյխ իւլ Իսլամ Խալիլ բախում ունե-

ցան: Խալիլ քննադատեց Իթթիհատի քիւրճիակաւ (թրքացման) քաղաքականութիւնը:

1917ի Քոնկրէն երկրին մէջ վարչական նոր բաժանումներ կատարեց տարազրտութեան հետեւեորով հայերէ պարպուած քաղաքներու եւ զիւղերու մասին (այդ առթիւ պատրաստուած տեղեկագրի մասին տե՛ս «Թանին»ի Սեպտեմբեր 19, 1917 (1333)ի թիւը, թուրք զաղթականներ տեղաւորելու, ժանտարմանելու եւ փոխանելու նոր կարգադրութիւններ ընելու մասին):

Որոշուեցաւ զրատուած հնութիւններուն համար միւզէներ հաստատել եւ հաւաքել ազգային արխիւները:

1912ԻՆ ԹՈՒՐԿ ԿԱՐԳ ՄԸ ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄՊԱՌՆԱԳԻՐԸ

Կարգ մը թուրք սպաներ սպանապիր մը զրկած էին Երեսփոխանական ժողովի նախագահ Խալիլ պէյին բսելով որ «Եթէ երկիրը արխիւով ներկուած չէր ուզեր տեսնել, Չեր այդ Ֆրոնտըլիլի Քիլպը (Թրքական Երեսփոխանական ժողով) եւ Թատրոնը (զարձեալ Երեսփոխանական ժողովի մասին է ակնարկութիւնը) 48 ժամուան մէջ լուծեցէք»:

Սպանապիրը Յուլիս 11, 1912 (1328) թուակիր էր եւ ստորագրուած էր՝ «Փրկութեան Սպանելու խումբ մը»: Թալէաթ ժողովին մէջ լսելով սպանապիրը կը սրտայ.— «Ալլախը» (փարնոցներ):

1917 (1333)ի Քոնկրէն ներկայացուած տեղեկագրին մէջ ըսուած էր նաեւ հետեւեալը.— «1916էն ի վեր փոսնապար մտատանջութեան մէջ ըլլալով հանդերձ, մեր կարգ մը նպատակներուն համար, լուսթեամբ զօրձր տառջ տարինք, մեր տարեկան ծրագիրը զօրձազրեցինք եւ երկիրը նորաստուար փիճակի մէջ գրինք» (տե՛ս, «Թանին», Սեպտեմբեր 18, 19, 21, 24 եւ Հեկտեմբեր 1, 2 (1333) 1917):

Ռուսական յեղափոխութեան յետոյ, 1917 Մալիսի սկիզբը, Թալէաթ Գերմանիա ալցելեց եւ վերադարձին տեսակցութիւն մը տալով «Նայէ Ֆրայէ Փրեստէ» թերթին, բոս հետեւեալը.— Ռուսիոյ՝ յեղափոխութեամբ կարմայուձման չորջ մանրամասնութիւն պիտի չտամ, միայն բսւմ որ ցարին անկումը Թուրքիոյ նպաստուար եղաւ, որովհետեւ ցարականութիւնը Թուրքիոյ զէմ աւերիչ պատերազմ մղած էր» («Թանին», Մալիս 9, 1917 (1333)):

1917ի Իթթիհատի Քոնկրէկն ետք, 1918ի Քոնկրէկն իբր թէ ինքզինք «լուծեց» և «անուանափոխ» եղաւ, կրելով «Թեճետտիւտ» անունը: Իրականութեան մէջ «լուծում» չկար: Օձի նման «չապիկ փոխել» էր: Այդ կը տեսնենք իր յաջորդական գործունէութեանց մէջ, քեմալիզմի և «Նալլ»ի գործունէութեան մասնակցութեամբ:

1918ի Քոնկրէկի որոշումով, Իթթիհատը կը ծայտուի «Թեճետտիւտ» անունին տակ.— Մուարոսի զինադադարէն առաջ Թալէաթի դահլիճը հրատարած էր: 1918ինը Իթթիհատի վերջին Քոնկրէկն էր, պատերազմի շրջանին: Թալէաթ և Զրա Կէօք Ալի, որպէս նախապահներ, հրատարած էին: Այդ ժողովին ատենապետեցին Մուսուլի երեսփոխան ՄԼՏՄէտ Էմին և Շեմսետտին (էրթողուլի երեսփոխանը): Ոմանք կը թելադրէին կուսակցութիւնը բոլորովին լուծել, ուրիշներ կ'ուզէին կուսակցութեան սկզբունքները պահել և նախկին քաղաքական անձերը առ այժմ հետո պահել: Այս վերջին կէտը ընդունուեցաւ: Նոյեմբեր 5/18, 1918ին, 4 ձեռնպահ, 5 հակառակ և 35 քուէով կուսակցութեան անունը գրին «Թեճետտիւտ» (Վերանորոգում):

Կ. Պոլսոյ կառավարութիւնը, նկատելով Իթթիհատի բախտախընդրութիւնը (մեմարեփեքսըիլի) և երկիրը անդունդը ձգելը (մեմլիքեքի ուչուրմա եուվարլամասը), երբ տակաւին «Թեճետտիւտ»ի Քոնկրէկն վերջացած չէր, Նոյեմբեր 3, 1918ին ձերբակալութիւններու սկսաւ: Եւ Զրա Կէօք Ալի, Սէյիտ պէյ, Միտհատ Շիւքրի և նման 69 անձեր «Պեփիւր Աղա Պէօլիկ» կոչուած բանտը քունեցան: Եւ պատերազմական ատեանները գործի սկսան. անոնց արձակած վճռադրերուն քննարկները արդէն տուած ենք:

Բայց, գաւառներու մէջ, Իթթիհատի մասնաճիւղերու կմախքը մնաց նոյնութեամբ: Եւ մեծամասնութիւնը «մուտաֆայը Հուգուգ» (իրաւունքներու պաշտպանութեան) անունին տակ գործեց: Վերջին երեսփոխանական ժողովին մեծամասնութեամբ Իթթիհատականներ ընտրուած էին, որուն հետեւանքով՝ թաղաւորը լուծեց երեսփոխանական ժողովը և իթիլաֆական կեդր. կառավարութիւն մը կազմուեցաւ:

«Թեճետտիւտ»ի Կեդրոնի անդամներն եղան.— ծերակուտական Հիւսնի փաշա, ծերակուտական Սէյիտ պէյ, Մաւրօ Քորտաթօ, Այտրնի երեսփոխան Եննուս Նատի, Շեմսետտին, Իհսան Օրֆանիտիս, Համտի, Տալիղ Սապրի, Բեչիտ փաշա, Ղալիպ, Պախթիար, տոքթ. Թեւֆիք Բիւշտի, Պապանզատէ Հիքմէթ, Պարսամեան Կարապետ, Մուսթաֆա Տեւզի, Իսմայիլ ճամպուլաթ և Սասոն (6ը Իթթիհատ

տական երեսփոխաններ էին և մին՝ ճամպուլաթ եղած էր նաեւ ներքին գործոց նախարար):

Իթթիհատականներուն մեծ մասը, որ «Թեճետտիւտ»ի անդամ էին, անցան Անատոլու, գործակցեցան Մուսթաֆա Քեմալի, կազմակերպեցին անոր համար գանապան տեղերու մէջ «միլիի»ներու ղեկավարութիւնը և մասնակցեցան անոր կազմած «քոնկրէ»ներուն, կազմեցին մեծամասնութիւնը «Պէօլիք Միլլէթ Մեճլիսի» յորջորջուած քեմալական Ազգային Ժողովին: Ատկէ վատ, գաղտնի կազմակերպութիւններ հիմնեցին էրզրումի և Կարսի մէջ:

Կ. Պոլսոյ մէջ կազմուած Իթթիհատական Քոնկրէկներու զուգահեռ, կազմուեցան թուրքիզմի քարոզչական մարմիններ: 1908 Դեկտեմբեր 25 (Յունուար 8, 1909)ին կազմուեցաւ Թիւրք Տերնեկի՝ (Թրքական Միութիւնը), որուն հիմնադիր անդամներն էին մոյնուանդ Իթթիհատականներ՝ Ահմէտ Միտհատ, Էմրուլլահ, Վելիտ, Նեճիպ, Ասրմ, Գորգմաղ Օղլու Ճելալ, Աղչուրա Օղլու Եուսուֆ (որ հրատարակեց «Թիւրք Նըլը» թերթը), Տուատ Ռայիֆ, Փերիտ և փիլիսոփայ Բիզա Թեֆիկ, որ յետոյ իթիլաֆական եղած էր:

Այդ ատենները, Օգոստոս 18/31, 1911ին կազմուեցաւ Կ. Պոլսոյ մէջ նաեւ «Թիւրք Եուրտըն», որ նոյնպէս մեծամասնութեամբ ազգայնամոլ թուրքերէ կը բաղկանար: Հիմնադիրներն էին Մեհմէտ Էմին (բանաստեղծ), Ահմէտ Հիքմէթ, Աղաօղլու Ահմէտ, Հիւսէյին Չատէ Ալի (այս վերջին երկուքը Իթթիհատի Պիւտոյի անդամ էին), տոքթ. Ազիլ Մուսթաթ և Աղչուրա Օղլու Եուսուֆ (փանթիւրքիստներ):

Անոնց կարգին, Յունիս 20/Յուլիս 3, 1911ին թուրք բժշկական ուսանողները կազմեցին «Թիւրք Օնախի»ն, որուն պաշտօնական հիմնադիրները դարձեալ եղան՝ բանաստեղծ Մեհմէտ Էմին, Ահմէտ Փերիտ, Աղաօղլու Ահմէտ և տոքթ. Տուատ Սալիհ, յետոյ նախագահներէն մին էր՝ Աղչուրա Եուսուֆ: Ասոնց հետ գործակցեցան Նալիտէ Էտիպ, Համտուլլահ Սուպահի, Զրա Կէօք Ալի, Քէօփրիւլի Չատէ Տուատ և Հիւսէյին Չատէ Ալի:

Ասոնք ունէին 35 յօդուածէ բաղկացած ծրագիր մը և 19 յօդուածէ բաղկացած ներքին կանոնագիր մը, որուն նպատակը իբր թէ «Թրքական մակոյթի միացումին և քաղաքակրթական բարձրացումին ծառայել էր»: Յօդուած 2ի նպատակը, սակայն, հետեւիլ էր Իթթիհատին: Այս կազմակերպութիւնները համաթրքացումի քարոզչութեան օժանդակներ դարձան:

Իթթիհատի 1911 Օգոստոս-Նոյեմբերի Քոնկրէկն մէջ, ցե-

դասպանական ինդիվիդուալ առթիւ կուսակցութենէն հրաժարողներուն վրայ նորեր աւելնալով, կազմեցին զատ կուսակցութիւն մը՝ «Հիւրիշէր-Իրիլաֆ» անունով, Նոյեմբեր 8/21 1911ին, որուն հիմնադիր անդամները եղան.— Ամասիոյ երեսփոխան Իսմայիլ Հազզը փաշա, Սերասիոյ երեսփոխան տաքթ. Նադարէթ Տաղասարեան, Թոզաթի երեսփոխան Մուսթաֆա Սապրի, Համայի երեսփոխան Այրաիւլ Համիտ Զէօհրուի, մարաջախա Ֆուսա փաշա, Տամատ Ֆերիտ փաշա, Սուլէյման փաշա, Փրիշթինոյի երեսփոխան Հասան, զնդապետ Սաւարդ, տաքթ. Բիգա Նուր (քամեյէն մը) և Թահիր Սալթուտին: 1912ին սկսան փոխադարձ սպանութիւնները, մինչև որ Իթթիհատը այդ ոճիրներով գործի գլուխ անցաւ և հարածեց բոլոր ընդգիւմադիւնները:

1918ին Թուրքիոյ պարտութենէն ետք, իթթիհատականները վերակազմուեցան: Իսկ 1919ին և 1920ին, իթթիհատականները միանալով քեմալական շէյխներուն, դառանալով մէջ հարածեցին իթթիհատականները և Սեպտեմբեր 11, 1923ին Քեմալի և Իսմէթի կազմած Հալք կուսակցութիւնը շարունակեց նոյն գործը, իրեն հետ ունենալով Սարրերդի ջարդարար Սապիթը, Տիգրանակերտի ջարդարարներէն Զիւլֆին, և այլն: Ապա Իթթիհատը և զինադադարէն ետք ծնած խաչատրղէտ թուրք այլ կուսակցութիւնները ծակամուտ եղած կամ յուժուած էին, քեմալականներու սպառնալիքին հետեւանքով:

1924 Նոյեմբեր 17ին մէջտեղ եկաւ նախկին իթթիհատական և «խալքական»ներէն «Թերազգը-Փերվեր ձիւմիլիքիշէթ Ֆըրգասը» (Յառաջդիմատէր Հանրապետական) կուսակցութիւնը, որ 6 ամիս չտեսած լուծուեցաւ:

Յոյցի համար, 1920 Մայիսին, Մուսթաֆա Քեմալի հրահանգով, կազմուեցաւ թրքական «Կամուրխա կուսակցութիւն» մը, որուն անդամներն եղան իթթիհատականներէն՝ Մահմուտ Էսաթ, Թեֆիկ Բիւշտի, Եսնուս Նաթի, Մահմուտ ձեյալ և այլն և Յրդ Ինթերնասիոնային կապուած՝ Արիֆ Օրուճ, հաղարապետ Սալիհ Զեքի (Տէր Զօրի ջարդարարը) և Շերիֆ Մանաթոֆ և այլն, գործակցելով «Են Չիլ Օրտու»ի հետ: Անդարայի մէջ հրատարակեցին «Ենի Տիւնիա» և «Էմէէֆ» թերթերը: Քեմալ ջնջեց զանոնք Յուլիս 21, 1922ին, իր քաղաքական նպատակներուն ծառայելուէ ետք:

Եզրակացութիւն.—

Թրքական կուսակցութիւնները — «Ենի Օսմանլը», «Օսմանլը-Իթթիհատ», «Իթթիհատ-Թերազգը» և անոր նման թրքամուր ընկերակցութիւնները՝ «Թեհետուա», «Հալք», «Դեմոկրատ», «Ա-

տալէթ» և այլն բոլորն այլ զաղախարականութեան ծառայելէ աւելի անձնական և շահասիրական, և տասիրական պատճառներով կազմուած են և մեծ մասամբ գուրկ են եղած ազնիւ մարդկային զգացումներէ, զինուորական ուժի քմայքին և իթթիհատով ամէն ինչ: Հետեւաբար անկարող են ծառայելու ոչ միայն մարդկային հատուածներուն, այլև նոյնիսկ թուրք ժողովուրդի բարձրացման, որ տակաւին այսօր կը տապալակի ոճիրի, թշուառութեան, աղքատութեան և սղիտութեան մէջ:

Մանաւորաբար Իթթիհատը, բանակի և ուրիշ ոչ-թուրք տարրերու հետ, տապալեց Ապտիւլ Համիտը և 1908—1918 տասնամեակին, փոքր ընդմիջումով մը, տիրակալեց բռնակալութեամբ, թունաւորեց թուրք խումանը և զիւղացիութիւնը, ջարդերով ամայացուց երկիրը: Իթթիհատի շարունակութիւնը եղող «Հալք» կուսակցութիւնը նոյնպէս բռնակալութեամբ, Կամուրխա կուսակցութեան նման, մէկ կուսակցութեան կառավարութեամբ ղեկավարեց: 1950—60 Դեմոկրատ կուսակցութիւնը «Հալք»ի նման յոռի վարչութիւն մը ունէր: 1961ին, բանակի բռնակալութեամբ, բանտարկութիւն, սպանութիւն, փոխադարձ պարտաւնք անպակաս էին:

Թուրքիա կը մնայ յետոյէմ և բռնակալ, որովհետև երկրին մէջ իրապէս ղեմոկրատիկ միջավայր մը չի ստեղծուիր և ճնշումներէ բոլորովին ազատ ընտրութիւններ տեղի չեն ունենար:

Կ. Պոլսոյ Իրաւագիտական համալսարանի փրոֆեսէօր Թարիֆ Զ. Թուրաթա կը խոստովանի հետեւեալը՝ տասը տարի թուրք կուսակցութեանց ներքին կեանքը ուսումնասիրելէ ետք. «Թիւրքիստա Եիւզ սեմեյիֆ սիյասի քարիլիսի պոլյուսնա, էն կեմիշ, պէօյիւֆ վէ երլ-տրրրնր հարիֆեթլիքի տողուրան հատիսէ, շալիս վէ գիւմրէ իսթիլատաւը օլմուշ տրը», (տես իր երկը «Սիյասի Փարթիլէր», էջ 758):

Թարգմանութիւնը.— «Թուրքիոյ մէջ, վերջին 100 տարուան ընթացքին, ամենէն ծաւալուն, մեծ և սոսկալի շարժումներուն ծրնունդ տուող իրողութիւնը անձի և խմբակի բռնապետութիւնը եղած է»:

Ի բերանոյ չումմէլ զատեցար:

Դրեթիլ նոյն մտքերով է, որ կը դատէ Թուրքիոյ մարաջախա և վարչապետ եղած Նչանասուր զինուորական Ահմէտ Իպգէր փաշան, որ զերմաներէն լոյս տեսած իր «Յուշիք»ուն մէջ (տպուած Լայիֆցիկ), կ'ըսէ.

«Երիտասարդ Թուրքերը անպամալուծեցին և քանդեցին եր-

կիրը, բարոյապէս ապականեցին դայն, ի հաշիւ իրենց գրպանին, իրենց անարդ ընկերներով» (էջ 294) :

Թրքական զինուորապաշտութիւնը գերեզմանափորը եղաւ ոչ-թուրք տարրերուն :

Էնվէր-Թալէաթ դահիճները, թրքական բանակով, զինուորական իշխանութիւնով, պատերազմական նախարարութեան միջոցով, եւ ներքին գործոց նախարարութիւնը՝ քաղաքային պաշտօնէութիւնով՝ հայ այրերու, զինուորներու ջարդը, տարազրուութիւնը եւ մնացածներուն սպանութիւնը կազմակերպեցին եւ փճացուցին երկիրը :

Իսկ քեմալականները, շարունակողները վերոյիշեալ իշխանութեանց պործին, Գարապեքիրը եւ այլ զինուորականները իրենց գործիք ըրած, Լենինի, Ստալինի, Զիչերինի, Թրոցքիի հետ ձեռք-ձեռքի, կործանեցին Հայաստանի Հանրապետութիւնը, բաժնեկով հողերը, գրկելով անկախութենէ եւ ազատութենէ :

ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ ՄԱԼԹԱՅԻ ՄԷՁ

1915–16ին հայերու դէմ կատարուած ցեղասպանութեան արարքներուն համար ամբաստանուած հազարաւոր պատասխանատուներէն, 1919–20ին, ամենաչնչին թիւով — միայն 102 — թուրքեր ձերբակալուած էին Կ. Պոլսոյ մէջ, և անոնց մէջն էին վարչապետ, երկպտացի իշխան Սայիտ Հալիմ փաշան, իր դահլիճի անդամներէն մի քանին, թուրք կառավարիչներ, մաս մը զինուորականներ եւ քանի մը երեսփոխաններ : Պատասխանատու ոճրագործներուն հազիւ մէկ հազարերորդը : Որովհետեւ շատ-շատերը՝ բազմահազար թուրք ոճրագործեր պահուած էին եւ ձեռք անցած չէին, զինադադարի շրջանին փախած էին անծանօթ վայրեր :

Ձերբակալուած 102 անձերուն մէկ մասը բանտարկուեցաւ նախ Ստամպուլի մէջ, Սուլթան Պայազիտի բարձունքին վրայ գտնուող պատերազմական նախարարութեան շէնքին ետեւը՝ երկյարկանի քարաշէն շէնքի մը մէջ, որ կը կոչուէր «Պեֆիր աղա Պէօլիւկի» : Այդ բանտ-շէնքի վրայի յարկի անցքը կազմող սրահին երկու կողմերուն վրայ կային սենեակներ : Նոյնը՝ տակի յարկին վրայ : Իսկ ներքնասենեակին մէջ՝ մութ նկուղներ (գնտան) միայն : Այս շէնքը նախապէս զինուորական ոստիկանատուն էր :

1920 Մարտին, ցեղասպաններէն քանի մը հոգի ազատ ձգելէ ետք, մնացածները տարուեցան Մալթա կղզին. ձերբակալուեցան նաեւ ուրիշներ, որոնք ուղղակի փոխադրուեցան Մալթայի բանտ-գորանոցը :

Ինչո՞ւ փոխադրուեցան Մալթա՝ Պեքիր աղա Պէօլիւկի մէջ արգելափակուածները : Որովհետեւ, նախ՝ ոմանք զանազան միջոցներ կը ստեղծէին, ներսէն և դուրսէն, ազդեցութիւններու շնորհիւ,

ազատելու, փախչելու, պահուելու կամ Անատոլու անցնելու եւ միանալու համար Իթթիհատի ծնունդ քեմալական շարժման:

Օրինակ, բանտէն փախաւ Տիգրանակերտի արիւնարբու վալին (ընդհանուր կառավարիչը)՝ տոքթ. Բեշիտ կոչուածը, զոր իր ձեռնասուն չերքէզներէն մին բանտէն փախցուց: Այդ չերքէզը ոճրագործ մըն էր, որ տոքթ. Բեշիտի հետ 1915 Մայիսին առաջին անգամ Տիգրանակերտի մէջ բանտարկուած ականաւոր 630 հայերուն սպանդին մասնակցած էր Տիգրիսի ափերուն, Բլաւանի մօտ: Բեշիտ կրկին ձերբակալուած միջոցին ինքնասպան եղած էր ատրճանակով:

Ոճրագործը փախցնողը, ըստ օրէնքի տրամադրութեան, մեղսակից մըն է ոճիրի: Բեշիտը փախցնող չերքէզը, սակայն, ազատ մնաց հետապնդումէ. հայրը չերքէզ փաշա մըն է եղեր:

Նմանապէս բանտէն փախցուցին էնվերին հօրեղբայրը՝ Պալիլ փաշան, նոյնպէս պատասխանատու ջարդարարներէն: Օգոստոս 7, 1919ին, տեղակալ Սատի անունով անձը գիշեր ատեն Պալիլ փաշան եւ անոր հետ Կիւչիք Թալէաթ կոչուած քուրաննի (փանթուրքիստ) անձը փախցուց եւ անոնք զաղտնի կերպով, Սկիւտարի վրայով, անցան նախ Պրուսա, ապա Անդարա, Սերաստիա, Էրզրում եւ Նախիջեանի վրայով Կովկաս: Ապա Պալիլ փաշան անցաւ Մոսկուա, Լեւինիի եւ Թրոյքիի հետ տեսակցելու իբրեւ Մուսթաֆա Քեմալի լիազոր:

Ինչո՞ւ չդատուեցան եւ չդատապարտուեցան այդ ձերբակալուածները: — Նախ՝ կազմուած թրքական պատերազմական ատեանները, որ իբր թէ արդարութիւնը պիտի գործադրէին եւ պիտի պատժէին թուրք ցեղասպանները, Կ. Պոլսոյ կառավարութեան վրայ ներսէն բանեցուած ազդեցութիւններու ենթարկուած էին եւ դատավարութիւնները, որ սկսած էին, կ'երկարաձգուէին, ժամանակ չահելու եւ նպաստաւոր առիթներ ստեղծելու համար ոճրագործներուն: Կը պատահէր, որ Պատերազմական Ատեանի նախագահը հրատարէր, ինչորը աւելի եւս ձգձգելու համար. օրինակի համար Պայրէթ փաշա, որ իթթիհատականներու զաղտնի ազդեցութեան տակ հրատարեցաւ եւ յետոյ անոր տեղ անցաւ Նեմրութ քերտ զօր. Մուսթաֆա փաշան, որուն վրայ եւս զանազան կողմերէ ազդեցութիւն կը բանեցնէին. այս միջոցին քանի-քանիները ազատ ձգուեցան:

Քայլերական Գերմանիա ապաստան տուած էր զլիաւոր թուրք ցեղասպաններուն՝ Թալէաթի եւ ընկերներուն՝ էնվերի, տոքթ. Պէհաէտտին Շաքիրի, տոքթ. Նազըմի, Պետրիի եւայլն, որոնք Պերլինի մէջ հովանաւորուած էին, կեղծ անուններ կը կրէին եւ որոնք

մէկ մասը ազատ երթեւեկ ունէր խորհրդային երկիրներու մէջ:

Լենին, Թրոյքի եւ իր օգնականները սերտ յարաբերութիւն կը պահէին եւ կը բանակցէին էնվերի, ձեմալի եւ Պալիլի նման մարդկութեան թշնամի պայաններու հետ: Նոյնիսկ ամբողջ 11 ամիս, իր բնակութեանը եւ գործունէութեանը համար, էնվերին յատկացուցած էին Ռուսիոյ նախկին վարչապետ իշխան Կորչաքովի պալատը (Մոսկուայի մէջ):

ձեմալ, Նազըմ, Պետրի, Պէհաէտտին Շաքիր, Սալիհ Չեքի յարգանքով կը դիմաւորուէին սովետական իշխանաւորներու կողմէ, իբրեւ թէ Ասիոյ խաղաղութեան ստորի հանելու եւ պայքարելու համար անպիտան կայսերապաշտութեան դէմ: Անոնցմէ մի քանին սպանուեցան հայերու ձեռքով՝ Հոսմ, Պերլին, Թիֆլիս: Չլուսարանուեցաւ միայն ջարդարար ոստիկանապետ Պետրիի սպանութիւնը, որ տեղի ունեցաւ Քապուլի մէջ (Աֆղանիստան) եւ իր պայուսակին մէջ եղած թուղթերն ալ գողցուեցան:

Մալթա փոխադրուած ոճրագործները, քիչ ժամանակ ետք, յարաբերական ազատութիւն ունեցան շուկայ երթալու, գնումները նելու, նոյնիսկ թատրոն երթալու, եւ իրարու մօտ հաւաքուելու եւ ժողովներ ընելու համար:

Նախ փոխանակութիւն մը եղաւ. ազատ արձակելով Ֆեթհի պէյր եւ Մեհմէտ Բէուֆը, զանոնք փոխանակեցին թուրքերու կողմէ արգելափակուած զինուորականի մը՝ Լորտ Քըրզընի փեսային հետ: Ատով սկսաւ անպատիւ սակարկութիւն մը՝ շահագործելով հայուն արիւնը:

Անպիտանները կամաց-կամաց թուլցուցած էին խիստ հակողութիւնը Մալթայի մէջ: Արգելափակուածներէն Գարա Քեմալ, որ «Թեշքիլթար Մախսուսէ» կոչուած կազմակերպութեան սիւներէն մէկն էր եւ իթթիհատի Կ. Պոլսոյ ճիւղի ընդհանուր քարտուղարը, Հայաստանի մէջ գործող ջարդարարներուն հետ գործօն մասնակցութիւն եւ ղեկավարութիւն ունեցած էր ոճիրներուն մէջ, եւ այս պարագան մինչեւ հիմա չէր պարզարանուած:

Կատարուած ցեղասպանութենէն ետք ան եղած էր պարենաւորման նախարար: Մալթայի մէջ, ան ազատօրէն պտոյտ կ'ընէր ծովեզերքները: Եւ յաջողեցաւ համաձայնութեան զալ բնիկ մալթացիի մը հետ, որ ունէր շարժանաւ մը (մաքըրպուտ), իթթիհատի գողցած ոսկիներուն շնորհիւ այդ մաքըրպուտով ան յաջողած էր կարգ մը իթթիհատական պատասխանատու քարտուղարներ եւ իթթիհատական ղեկավար ընկերներ զաղտնի կերպով ցամաք հանել Սիկի-

լիա կղզիի արևելքը՝ Միրակուղա ծովեզերեայ քաղաքը: Փախստա-
կանները անկէ կ'անցնէին Հոռոմ կամ այլ քաղաքներ:

Իսկ Գարա Քեմալ, երբ յետոյ աղատ ձգուեցաւ, անցաւ Մի-
լանո:

Հոռոմի մէջ քեմալական ղեկավարները՝ Ղալիպ Քեմալի պէյ՝ թըր-
քական անցադրեր կր պատրաստէր եւ դանոնք կը փոխադրէր մաս առ
մաս զէպի թուրքիա: Անոնցմէ մի քանին մնացին Իտալիա եւ մի
քանիներն ալ անցան եւրոպական այլ քաղաքներ: Իշխան Սայիտ Հա-
լիմ, որ թալէաթէն առաջ վարչապետ եղած էր, մնաց Հոռոմ՝ ուր
սպաննուեցաւ:

Մալթայէն այդ փախուստներուն զուգընթաց՝ քեմալական
պատուիրակ Պեքիր Սամի պէյ սակարկութեան սկսաւ, Փարիզ
Պոխանի եւ Լոնտոնի մէջ՝ Լորտ Քրըզընի հետ:

Քեմալական միլիիտները երկար ատեն էնիլերի եւ Պալիլի ջան-
քերով հսկայ քանակութեամբ դերմանական զէնք եւ ռազմամթերք
ստացած էին Ռուսիոյ խողովակով, բացի Սովետներու կողմէ տրը-
ռած նիւթական (գրամական) եւ բարոյական օժանդակութենէն:

Մալթայի մէջ արգելափակուած իթթիհատական զինուորական
եւ քաղաքային այդ անձերը՝ 102 անձ, հետզհետէ 3 խումբերով ա-
ղատ արձակուեցան: Առաջին խումբով 35 անձեր.— Ահմէտ Աղայէֆ,
Ահմէտ փաշա, Ալի Միւնիֆ, Աթըֆ, 9 կովկասցիներ, Ֆայիզ, Ֆախ-
րի, Ֆերիտ, Փէլիփեցի Ֆեթհի, հաղարտպետ Հայտար, Հաճի Ա-
տիլ, Հիւսէյին ձահիտ, Հիւսէյին թոսուն, Իրրահիմ Սալիպ, Ճամ-
պուլաթ, միւֆեթթի Միւհաւա պէյ, Միւթթալ պէյ (էնիլերի ետէ-
րը), Իզմիրցի Նեսիմի, Բահմի, Բիդա, Սալահ ձիմպոզ, զնդ. Սամի,
Շեւքէթ, Ալի Շիքրի, Թեֆիզ Հատի, Ջեքերիէ եւ Ջիա Կէօք Ալփ:

Երկրորդ խումբով արձակուած 22 անձերն են.—

Տոքթ. Ապտիւլ Սելամ փաշա, Ահմէտ Էմին, Ալի ձենանի, փոխ
զնդապետ Ալի Մուամմէր, հաղարտպետ Աբիֆ, Էսատ փաշա, Հիւ-
սէյին Գատրի, Իսլամ պէյ, ձելալ Նուրի, ձեւատ փաշա (արաբկիր-
ցի), Գարա Վասըֆ, Մերսինլի ձեմալ փաշա (չչփոթել նախարար
Ահմէտ ձեմալ փաշայի հետ), Իթթիհատի Կեդրոնի քարտուղար Միտ-
հատ Շիքրի, Միւրսէլ փաշա, Նաման, Սէյիտ, զնդապետ Շեւքէթ,
Սուլէյման Նադիֆ, Եսպուպ եւ Շիքրի:

Երրորդ խումբով աղատ թողուածներն են.— 45 անձ՝ ամե-
նազարչելիները.—

Ապտիւլ Պալիք (վալի), Ահմէտ պէյ, Ահմէտ (վալի), Ալի Իհ-
սան (Սապայիս), Աթըֆ, Պետրի, Ատիլ Պուրհանետարին, տոքթ.

Ֆայիք, տոքթ. Ֆադըլ Պերքը, Ֆեւզի, Հիլմի, փոխ-զնդապետ Հիլ-
մի, հարիւրապետ Իրրահիմ Հազզը, ձեմալ, ձեմալ-Օկիւզ, ձեւտէթ
պէյ (զըզրանլըզլը), Քեմալի, Քեմալի Մեճիտ փաշա, Մահմուտ Քե-
մալի փաշա, Մեհմէտ Նուրի, Մուրատ պէյ, վալի Մուամմէր, Նա-
զըմ, հաղարտպետ Նազըմ, Նեճմի (վալի), Բեշատ, Բիֆաթ, Սամի
պէյ Շիքրի Գայա (մուարրիքներու միւֆեթթիշ), վալի Սուլէյման,
Սուլէյման Քեմալի, Սուլէյման Ֆայիք, Սուլէյման Նաման, Թահիր
Բիւշտի, վալի Թահսին (էրզրումի), փոխ-զնդապետ Թեֆիզ, զըն-
դապետ Թեֆիզ, Վելի Նեճտէթ եւ Եուսուֆ:

Հետեւեալ 44 անձերը, զանազան աղղեցութիւններով, ոմանք
խտալական հովանաւորութեամբ, ոմանք ալ զաղտնի միջոցներով
փախցուած կամ անհետացած են.—

Ալա Կիւնտիւզ, Ալի պէյ (Չեթին Գայա), Աւնի, էրզրումցի
Ազիզ, զնդապետ Պլատտըր, տրայպիդոնցի հարիւրապետ բժիշկ մը
(անունը չէ յիշուած), Էմմանուէլ Քարասո, Կազիմուճի Նեճաթ, Դա-
նի պէյ, Համի, Հիւսամետտին, Հիւսէյին Ջատէ Ալի, Փիրիդատէ
Իրրահիմ, Իլիաս Սամի, Շէյխ Իւլ իսլամ Պայրի, Պալիլ պէյ (Աքն-
քեշէ), Պալիլ, զնդապետ Քեպիմ, Գըրգատէ (Տրայպիդոնի ջարդա-
բար) — Քիւչիք Թալէաթ, Մաթարահի, ձերակուտական եւ ազատ-
որմնադիր Մուսա Քեպիմ, Նուաման Ուստա, Նուրի փաշա, Օսման
Շեւքէթ, Բեշիտ, Բիւշն-էչքէֆ, Սապանճալը Հազզը, վալի Սապիթ
պէյ, գատը քէօյցի Սապրի, Սայիտ Հալիմ, Սէյֆի, Շեւքէթ, Սու-
տի պէյ, Ուպետուլլահ, Վեհիպ, ձիմիլ եւ Եոնուս Նատի:

Սակաւաթիւ անպիացի արղելափակուած քանի մը սպաներու
փոխարէն Մեճի Բրիտանիա աղատ արձակեց այսպէս թուրք ցեղաս-
պան զահիճները, որոնք հետզհետէ Ինկուլու հասան (Սեւ ծովի վը-
րայ նաւահանդիստ մը) եւ անկէ անցան Անգարա եւ անոնցմէ շատերը
տիրացան քաղաքային եւ զինուորական պաշտօններու, Մուսթաֆա
Քեմալի ընդառաջումով:

Այդ արիւնարբու ցեղասպաններէն ոմանք եղան երեսփոխան եւ
նոյնիսկ նախարար: Մուամմէրի նման զահճապետ մը, որ Սեբաս-
տիոյ 250.000 հայերու ջարդը ղեկավարած էր, եղած էր քեմալական
երեսփոխան Կեսարիոյ: Տէր Ջօրի ջարդը ղեկավարող Մուսթաֆա
Ապտիւլ Պալիք եղած էր նախարար սոց. պաշտպանութեան եւ նոյն-
իսկ նախագահ Անգարայի «Ազգ. Մեճ Ժողովին»: Իթթիհատականու-
թիւնը եւ քեմալականութիւնը ի մի ձուլուեցան եւ աւելի զօրացան:

Անպիական պատմութեան մէջ այս վատ արարքը մեծ վար-
կաբեկում մը եղաւ անղղիական ժողովուրդին: Կարելի՞ էր հաւա-

տալ, որ միջազգային դաշնագրերով, Վերսայլով եւ Սելերով, պարտականութիւն ստանձնելէ ետք պատժելու այդ ցեղասպանները, որոնք աշխարհաստան ոճիրներ գործեր էին մարդկութեան դէմ, զանոնք ձերբակալելէ ետք ազատ պիտի ձգուէին, որպէսզի անոնք հովանաւորուին: Յետ ոճիրի մեղսակցութիւն չէ՞ ասիկա: Անգլիոյ մէջ պատմական աւանդութիւն մըն է թէ «թագաւորը չարիք չի գործեր եւ արդարութիւնը կը բաշխուի յանուն թագաւորին»: Մայթա կղզին 1920—1922ին անգլիական իշխանութեան ենթակայ հողամաս էր, անգլիական զինուորական եւ քաղաքային օրէնքներուն ենթակայ էր: Միթէ զերոյ՞ հաւատար էին Փարիզի անգլիական դեսպանին՝ Սըր ձորճ Տիքսըն Կրեհեմի եւ Մեծն Բրիտանիոյ զաղթապետութիւններուն՝ Քանատայի, Աւստրալիոյ, Նոր Զելանտայի, Հարաւային Աֆրիկէի Միութեան եւ Հնդկաստանի ներկայացուցիչներուն ստորագրութիւնները, ինչպէս նաեւ Ֆրանսայի վարչապետ եւ արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Միլըրանին, Էլեմտական նախարար Ֆ. Ֆ. Մարսալին, դեսպան Ժիւլ Քամպոնին եւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մօրիս Փալէօլկին, ինչպէս նաեւ Իտալիոյ ծերակուտական Կոմս Վելիօ Լոնկատէի եւ զօրավար ձիովաննի Մառիէթթի ստորագրութիւնները յանուն Իտալիոյ: Ատոնք ուրացուելու չափ անարժէք էին, որ ստորագրած էին թուրք շարժարարները դատի կանչելու համար:

Ի՞նչպէս թոյլատրեցին որ Կոմս Սֆորցա մը կամ Կոմս Քաֆրինի մը վազանի օգնութիւններ ընծայեն թրքական «Թեչքիլաթը Մախսուսէ»ի եւ դէնք ու ռազմամթերք տան թուրք ցեղասպան քեմալական լիտըրներուն: Ի՞նչպէս թոյլ տուին, որ թուրք փաստարան սպայ մը՝ Մուսթաֆա Նայիլ պէյ իտալական պաշտօնատար ըլլար այդ օրերուն, վայելէր իտալական հովանաւորութիւն եւ ստանար իտալական զիւանազիտական զիւրութիւններ եւ համարձակէր իր այդ պաշտօնին բերումով տեղեկութիւններ քաղել անգլիական, ֆրանսական պաշտօնիքներու մասին եւ պաղտնարար իմացնէր զանոնք Մուսթաֆա Քեմալի (տե՛ս, Հիւսամետտին էրթուրք, «Իֆի Տելրիմ Փերտէ Արֆաւը» թուրքերէն երկը, էջ 408, 1957, Իսթանպուլ, Հիլմի Քիթապ էվի):

Ահա այս վատ արարքներուն մասին էր, որ երբ Անգլիոյ վարչապետներէն Լոյս ձորճ իր ՅՈՒՇԵՐԸ գրեց, ըսաւ.— «Հայերու դէմ գործուած այս անարդարութեան մենք պատասխանատու ենք պատմութեան առջեւ եւ բարոյապէս պարտաւոր ենք պաշտպա-

նել հայ ազգին իրաւունքները (Լոյս ձորճի ՅՈՒՇԵՐԸ, հատոր Բ., էջ 811):

Լոյս ձորճ խարանեց թուրքը ըսելով.— «Թուրք պետութիւնը ղեկավարեց հայերու դէմ գործուած ոճիրները (էջ 650), եւ դաշնակիցներու կարճատեսութիւնը, անհաւատարմութիւնը, եսասիրութիւնը առաջ բերին տխուր պատմութիւն մը (էջ 877). պէտք չէ որ թուրքին արտօնուի օգտուիլ իր ոճիրներէն. ան պէտք է վերադարձնէ հայուն նախնեաց հողը (էջ 836) եւ մենք՝ անգլիացիներս բարոյապէս պարտաւորուած ենք կատարուած սխալը շտկելու, որպէսզի պատմութիւնը մեզ յանցաւոր չնկատէ յաւիտեանս (էջ 811, Լոյս ձորճի ՅՈՒՇԵՐԸ, տպուած Նիւ Հէյվըն, Եէյլ Եունիվըրսիթի Փրէս, 1939):

6 ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՆԵՐՈՒ

Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Մեւլան Ջատէ Րիֆաաթ իր «Թուրքիոյ Յեղափոխութեամ Ներքին Նրքսը» անուն գիրքին մէջ (էջ 82-83) կը գրէ.

«Իթթիհատ և Թերազը թուրք կառավարութիւնը, երբ լսեց թէ հայ չեթէները ոռուսերուն յառաջապահ են (փիշտար), ասիկա պատրուակ ծառայեցնելով, հայ ազգի անունով Դաշնակ Կոմիտէին հետ կնքած համաձայնութիւնը ջնջեց և ամենէն առաջ Իսթանպուլի և վիլայէթներու մէջ բոլոր ծանօթ դաշնակ ղեկավարները մէկիկ-մէկիկ ձերբակալել տուաւ և զանազան վայրեր զրկելով ճամբաներու վրայ մէկական-երկուական սպաննել տուաւ (*):

«Իսթանպուլէն Չօհրապի և Վարդագէսի (Վարդգէս) և Տիրան Քելեկեանի նման, բոլորին ծանօթ և յարգանքի ու վարկի տէր, գիտութեան և մտքի տէր անձեր ևս աքսորելով, բնաջնջել տուաւ (**):

(*) Բնագրին մէջ՝ բառ առ բառ.— «Դաշնակ Քոմիթեսի իլէ ազտ էտիլէն իյ-թիլաֆը պոզմուշ, էն էվվէլ իսթամպուլտա վէ վիլայաթտա, մա գատար մաարուֆ դաշնակ ռուսասը վար իսէ, պիրէր-պիրէր թեւզըֆ էթտիրբէրէֆ, մուխթելիֆ երլերէ սել էթմիշ, վէ եուլարտա, պիրէր-իֆիշէր էուտիրթմիշ իտի»:

(**) «Իսթամպուլտան Չօհրապ, Վարդագէս (Վարդգէս) վէ Տիրան Քելեկեան կիպի հերքեսիմ քամըմուշը, հէօրմէթ վէ իյթիպար կէօսթերտիյի իլիմ վէ ֆիֆիր ստեմլերիմ տախիլ թեպիտ էտերբէֆ իֆմա էթտիրմիշէր իտի»:

Չօհրապ և Վարդգէս էֆենտիները Հալէպ-Տիրապէքիր, Տիրան Քելեկեան էֆենտին ալ Չորումի և Ամասիոյ մէջտեղը սպաննած են (պիթիրմիշէր տիր — վերջացուցեր են) (*):

«Խապազ» (Խաթակ), Չարդարեան, Ճանկուլեան, «Ակնունի» (Ակնունի), տոքթ. Տաղաւարեան և նման ղեկավարներ ևս, Տիրապէքիրի ճամբուն վրայ, հանրաձայնօթ ձի՛ն ՏԵՐԷՍԻ կոչուած վայրին մէջ, բնաջնջել տուաւ (**):

«Զինուոր առնուած հայ երիտասարդները ևս, ամելէ թապուռներու մէջ բաժնուած, տաժանակիր աշխատութիւններով սկսաւ ճգմել:

«Այդ կացութիւնը մտատանջութեան մատնած էր հայերը և, ինքնապաշտպանութեան մտահոգութեամբ, գիրենք մղած էր ընդդէմութեան և սպստամբութեան (գրլամ վէ ըսեան) (***):

(Այս նիւթի մասին տեսնել Գրիկերի լուրջ ուսումնասիրութիւնը «Յուշապատում»ի մէջ և Ա. Ալպոյաճեանի «Գրիգոր Չօհրապ» գիրքը):

Որպէսզի օրէնսդիր իշխանութեան հայ անդամներուն արդարութիւն ընելու համար բողոքի ձայնը անյսելի մնայ, թուրք կառավարութիւնը Օսմանեան Փարլամենտի հայ երեսփոխանները, սպաննելու կանխամտածութեամբ, խարէական միջոցներով Կ. Պոլսոյ մէջ ձերբակալեց: Երկուքը՝ Չօհրապ և Վարդգէս «Տիրապէքիրի Պատերազմական Ատեանին ներկայանալու» պատրուակով Կ. Պոլսէն քշեց դէպի անյայտութիւն: Ոչ հարցաբնութիւն, ո՛չ ամբաստանութիւն և ո՛չ ալ դատաւարութիւն տեղի ունեցած էին: Եթէ դատուելու արժանի լուրջ ամբաստանութիւն մը դոյութիւն ունենար Չօհրապի և Վարդգէսի դէմ, Կ. Պոլսոյ մէջ կար Պատերազմական Ատեան, կար պատերազմական նախարարութիւն ևւայլն: Բայց թրքական ծրագիրը մարդասպանութիւն էր:

Փետրուար 1915ին ոճիրներու գծուած ծրագիրները գործադրուել սկսած էին լայն չափի վրայ՝ զաւառներու մէջ: Այդ մա-

(*) «Չօհրապ վէ Վարդագէս (Վարդգէս) էֆենտիլերի Հալէպ-Տիրապէքիր, Տիրան Քելեկեան էֆենտի տախի Չորում-Ամասիա արասըմտա պիթիրմիշէր իտի»:

(**) «Խապազ (Խաթակ), Չարդարեան, Ճանկուլեան, Ագնոնի (Ակնունի), տոքթար Տաղաւարեան վէ էմսալը ռուսասը տա, Տիրապէքիր եուլումտա, ձի՛ն ՏԵՐԷՍԻ տեմմեֆլէ մաարուֆ մախալտէ իմա էլիմիշէր իտի»:

(***) «Պու ախալ էրմեմիլերի էտիշէլի տիւշիւրիւպ, միւտաֆայը մեֆու դայ-զուսի իլէ, եր եր գըլամ վէ ըսեանտ սել էլիմիշ իտի»:

սին Իթթիհատի պատասխանատու-քարտուղարները հարկ եղած հը-
րահանգները ստացած էին:

1915 Ապրիլի սկիզբը Թուրքիոյ ներքին գործոց նախարարու-
թիւնը զազտնի շրջաբերական-հեռագիր մը զրկած էր Թուրք նահան-
գապետներուն, «հայ երեւելիները ձերբակալելու եւ, զէնքեր ու փա-
խըտական զինուորներ փնտոելու պատրուակով, խստութիւններ
գործադրելու» մասին. Ապրիլ 17, 1915ին յաւելուածական ուրիշ հե-
ռագրով մըն ալ կը հրամայուէր «բանտարկուած» եւ «հեռացուած»
անձերուն անունները զրկել, իսկ զէնքերուն համար կը պահանջուէր
մեծ ծաւալի վրայ նկարները առնել եւ զրկել:

Ահա բնագիրը այդ զազտնի հրահանգին, զոր նահանգապետը
կը փոխանցէ ժանտարմըրի հրամանատարներուն, առ ի գործա-
դրութիւն.—

ԳԱՂՏՆԻ
Ապրիլ 17, 1915

Բարձրապատիւ Հրամանատարութիւն
Փանտարմըրի գունդին
Վսեմապատիւ էֆենտի

Ասիկա յաւելուածն է Ապրիլ 1915ի զազտնի հաղորդագրութեան.—
«Կումիտէներու անդամներու և այլոց ձերբակալման առիթով, կա-
րեւոր եւ վնասակար անձերու (հայերու) քով գտնուած ռուսք եւ ար-
գիլուած զէնքերը, դիզուած վիճակի մէջ, լուսանկարել տալ մեծ չա-
փի վրայ եւ շուտով զրկել մեզի: Ձերբակալուած եւ հեռացուած
(թեւորֆ յէ թեւիտ) անձերուն անուններուն զրկուիլը նոյնպէս ներ-
քին գործոց նախարարութեան հեռագրով հրամայուած է, ուստի,
ըստ այնմ քայլ առնելիք կը յանձնարարուի:

ՎԱԼԻ»

Ներքին գործոց նախարարութեան կողմէ վախներուն ուղղը-
ւած այդ հեռագիրները զազտնի կերպով հաղորդուած էին տեղական
ժանտարմըրի գունդի բոլոր հրամանատարներուն: Այդ բանտարկու-
թիւնները, ձերբակալութիւնները եւ հալածանքները կը կատարուէին
ինչպէս Կ. Պոլսոյ, այնպէս եւ միաժամանակ զրեթէ բոլոր գաւառ-
ներուն մէջ:

Պոլսոյ մէջ Ապրիլ 11/24 1915ին տեղի ունեցած բանտարկու-
թեանց, տարագրութեան, անյայտացումներու մասին՝ Ապրիլ 13,
1915ին եւ Ապրիլ 15, 1915ին Գ. Չօհրապ իր իսկ ձեռագրով հե-
տեւեալ երկու բողոքագրերը խմբագրած էր, ուղղուած ներքին գոր-

ծոց նախարարին եւ վարչապետին, եւ Պատրիարքին կողմէ դիմում
ընել արուած էր, ինչպէս նաեւ Չօհրապ ինքն ալ այցելութեամբ, բե-
րանացի, նոյն բաները կրկնած էր: Նոյն դիմումները Վարդգէս կա-
տարած էր աւելի յանդուպն եւ աւելի համարձակ կերպով:

Ահա Չօհրապի պատրաստած ձեռագրին Թուրքերէն թարգ-
մանութիւնը: Թուրք կառավարութիւնը չհանդուրժեց անոնց բողոքի
ձայնին եւ «Տիգրանակերտ զրկելու» պատրուակով սպաննել տուաւ:

ԲՈՂՈՔԱԳԻՐ Ա.

Ապրիլ 13, 1915

«Այսօր գէնֆի տակ գտնուող 50.000է աւելի հայ գինուորնե-
րուն մէկ մասը սահմանագլուխներուն վրայ արիւն կը քափէ, մէկ
մասն ալ պատերազմի մտնելու, հայրենասիրական պատերազմին
պարտականութեան գլուխ գտնուելու կը սպասէ: Այդպէս ըլլալով
հանդերձ, ցաւալի երեսոյրի մը պատմառով, կայսերական կառավա-
րութիւնը հայերու դէմ իր վտահուրիւնը վերցուցած ըլլալու իրո-
ղութիւններ ցուցաբերած է: Նոյնիսկ Պատրիարքարանէն, Ազգային
ժողովի ատենապետը եւ անդամներուն մէկ մասը, Քաղաքական ժո-
ղովի անդամներէն երկու անձերու հետ, ձերբակալուած են: Կ. Պոլ-
սոյ մէջ բնակողներէն ազգին աչքառու անձերը (Իլէրի կէլէնէր)
ձերբակալուած եւ աքտուած են, ու այս վիճակը իմ խնդրարկու
ազգիս մեծ տխրութիւն պատճառած է:

«Զինուորական փախտականներ ձերբակալելը օրինական է:
Հետապնդումներու պատրուակով գործադրուած խստութիւններուն
դէմ քէն բան մը ըսել կարելի չէ, սակայն դեռ գինուորական կեան-
քին անվարժ ազգիս հանդէպ քիչ մը ներողամտութիւն ցոյց տրուիլը
կը խնդրուի: Այս խնդրանքը անիրաւ չնկատուի: Մեծ ծաւալի վրայ,
առաջին անգամ ըլլալով գործադրուած այս գորաշարժը, հայերու մէջ
առաջ բերած է վախ մը, քուրք տարրին ցոյց տուածէն քիչ մը ա-
ւելի. հետեւաբար քիչ մը ներողամիտ ըլլալը խղճի համաձայն է:
կայսերական կառավարութիւնը կ'ընդունի այդ:

«Զինուորական ծառայութեան խոյս տուողներուն ապագային
կախաղանի պատիժէն ազատելու համար՝ փախտական ըլլալը եւ հե-
տապնդող ուժերուն դիմադարձութիւն ընելը ոճիր է եւ մարդկային
է: Բայց ասոր քաղաքական երեսոյր պէտք չէ տալ: Ակնյայտ է
այդ: Պատերազմական վիճակ ըլլալը եւ հայերուն բնակած վայրե-
րուն քակատի մօտ ըլլալը և գանձեմ քաղաքական նպատակներ հետա-
պնդող ֆէտայիներ նկատելը և, այդ ենթադրութեամբ, աստիճանա-

բար տուններէն ներս և զիրդերու մէջ շշուկներ կը տարածուին և այդ շշուկներէն բոլոր հայ բնակիչներուն եւ նոյնիսկ հայ զինուորներուն դէմ ալ նոյն վերաբերումը ցոյց կը տրուի, որով շատ մը անմեղներ չափազանց հալածանքի ենթարկուած են: Զինուորներուն ձեռքը գտնուած զէնքերը հաւաքուած են եւ խստութիւններ կ'ըլլան:

«Հայրենիքի պաշտպանութեան համար *հազարաւորներ իրենց պատկենքը տալէ զատ, իրենց ունեցած-չունեցածն ալ (ազգին կողմէ) տուած են:* Այս պարագաները շատ խոր եւ մեծ գարնանք եւ յուսահատութիւն առաջ բերած են: Կարգ մը վայրերու մէջ (հայեր) վերջին ծայր յուսահատութեան մատնուած են: Մինչեւ հիմա, բարք եւ հայ տարրերը եղբոր նման կը վարուէին: Այսպէսով բերեալ մեզ իրարմէ բաժնողներուն հացին իւր քուտը է:

«Կայսերական կառավարութիւնը հայերուն ապստամբութեան պատրաստ ըլլալ եւ սպասողական (*միթերապոլ*) դիրք բռնել կը վերագրէ, հայերն ալ իրենց դէմ անիրաւ խստութիւններու եւ, ի վերջոյ, ընդհանուր ջարդի մը ենթակայ ըլլալու վախը ունին. այս երկու մտայնութիւններուն բայտումէն յառաջ եկած երեւոյթները խստութեամբ մարելու անհրաժեշտութիւնը մտածելու արժանի կէտ մըն է, եւ այս չափազանցեալ քիրիմացութիւնը ջնջելը պահանջելովս հանդերձ, կը պնդեմ, որ այս ազգը (հայր) հաւատարմութեան հակառակ ո՛չ մէկ միտք ունի, եւ այդ մասին ի՛նչ ապահովութիւն որ կը պահանջուի, անմիջապէս տալու պատրաստ ենք: Առանց վարանումի կը յայտնեմ Ձեզի այս պարագան:

«Իմ անկեղծ համոզումն է՝ շնորհ, ներողամտութիւն խնդրել մեծապէս պիտի օգնէ: Քիչ մըն ալ այս կերպը գործածել եւ փորձելը անկարելիութիւն մը չէ, Պետութեան եւ Հայրենիքին պաշտպանութեան համար իրենց կեանքը զոհած հայ զինուորներու սիրոյն համար:

«Յարգանքներս մատուցանելով Ձեզի՝ կայսերական կառավարութեան բարձր զբոսութիւնը կը պաշտօնաւորեմ եւ կը խնդրեմ:

«Այս առթիւ հրամանը Ձեր բարձրութեան կը պատկանի»:

Ապրիլ 13, 1915

ԲՈՂՈՔԱԳԻՐ Բ.

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ապրիլ 15, 1915

«Անցեալ կիրակի գիշեր, ասդիէն-անդիէն հաւաքուած, հարիւրաւոր հայերուն ազատ արձակուելու մասին Ձեր բարձր խոստում-

շնորհին առթիւ գործնական քայլի մը չտեսնուելէն բացի, ձերպալուած անձերուն այսօր ո՞ր գտնուելու եւ անոնց ի՞նչ ըլլալու մասին անգամ տեղեկութիւն մը ստանալ անկարելի է: Միւս կողմէն տկար անձի տրուած ապօրինիութենէն օգուտ չեմ տեսած: Եւ հայերուն հանդէպ սխալ ենթադրութիւններ այնպիսի ձեւով միտքերու մէջ գետեղուած են որ այդ սխալ ենթադրութիւններէն ի ցոյց բերուած արտայայտութիւնները բոլորովին պարագայ երեւակայութիւններ չեն:

«Քուն իսկ այս օրերուն, որ պետութեան եւ ազգին ծառայելը անհրաժեշտ էր, անկարող եմք ոչ կայսերական պետութեան օգտակար ըլլալ, ոչ ալ ազգին մտահոգութեան եւ յուսահատութեան, անբախտութեան մէջ եղողներուն գոհացում տալ: Եւստի եմ միայն ի՞նչ ընելիքիս եւ խօսելիքիս մասին: Միայն Ձեր նախարարութեան ներկայացնելով գայս, գուր եւ շնորհ խնդրելով, յարգանքներս մատուցանելու կը համարձակիմ»:

Օգուտ չունեցան այդ դիմումները-ազաջանքները: Թուրք կառավարութիւնը նկատի չառաւ դանտը: Գայի զխոն Աւետարան կարդալու պէս բան մըն էր այս: Եւ երբ, այլեւս, դանակը ոսկորին հասաւ, խստութիւնները յարածուն շարունակուեցան ամբողջ Թուրքիոյ մէջ եւ ահ ու սարսափը երկինք բարձրանալ սկսաւ, Վարդգէս՝ Մայիս 10ին Թալաթի երեսին տուած էր այդ պազանային արարքները, որոնք անպատիժ պիտի չմնային ապագային: Թալաթ անպատկառօրէն պատասխաններ էր. «Ներքին իշխանութիւնը մեր ձեռքին մէջ է եւ մենք կրնանք մեր ուղածը ընել»: Հետեւեալ օրը երեսօրեան Գրիգոր Զօհրապ կ'այցելէ Իթթիհատի ընդհանուր քարտուղար Միտհատ Շիւքրիին, որ բոլոր ջարդարարներուն հետ կապ կը պահէր, եւ յետոյ՝ ներքին գործոց նախարար Թալաթին, բանով անոր որ «օր մը, իրենցմէ հաշիւ պիտի պահանջուի այս կատարուած արարքներուն համար»: Թալաթ շնականօրէն ըսած էր. «Ո՞վ է որ մեզմէ հաշիւ պիտի պահանջէ»:

«Որոգէս մեպուս, եւ պիտի պահանջեմ», ըսեք էր հայ տրիբունը՝ Զօհրապ:

Հետեւեալ օրը՝ Մայիս 12, 1915ին, Վարդգէս եւ Զօհրապ, ոստիկանապետ Պետրի պէյի միջոցով, ձերբակալուած և Պուլէն համբայ հանուած էին «Տիարպեթի դրկուելու», «Իբր թէ պատերազմական ատեանի ներկայանալու համար»:

Ոստիկաններու հսկողութեամբ՝ «մահֆուզէն» Հայտար փաշա-

յի կայարանէն կը տարուին զէպի էսքիշէհը, ապա Գոնիա-Ատանա եւ Հալէպ, ու հասած էին ճամբաներու վրայ ամէն տեսակ նեղութեանց, բանտարկութեանց, ժանտառակի ժանտարմներու հսկողութեան տակ, 36 օրէն, Յունիս 16, 1915ին:

Ասոնց, ինչպէս նաև ուրիշ հայ ղեկավարներու մասին «Տիգրանակերտ զրկուելու» բացատրութիւնը «փառոլա» մըն էր, որ կը նշանակէր «մահուան դատապարտուած»: Պիտի սպաննուէին կանխամտածութեամբ, ասոնց հարցաքննութեան եւ դատաւարութեան, ինչպէս էր դատարան նաև հազարաւոր հայերու ձերբակալման եւ սպանդին:

Զօհրայ եւ Վարդգէս Հալէպ մնացած էին 13 օր: Տեղւոյն (Հալէպի) մէջ, թուրք բարձրաստիճան պաշտօնատար մը ծածուկ կերպով զիմած էր դերման հիւպատոս Բէօլքիին, որ այդ երկուքին համար դերման կառավարութիւնը միջամտէր եւ «դատաւարութիւն» բնուածը յետաձգուէր: Այդ թուրք պաշտօնեային անունը թէև դաղտնի պահուած է, սակայն կ'ենթադրուի որ Պեքի Սամին էր: Որովհետեւ իր նախորդը՝ Հալէպի կուսակալ ձեւալ պէյը հրամարած էր Յունիս 8ին (1915) եւ Պեքի Սամի յաջորդած էր անոր: Այս վերջինը պաշտօնի գլուխ մնացած էր մինչև Սեպտեմբեր 3, 1915, մինչև Պիթիտի նախկին վայր Մուսթաֆա Ապտիւլ Սալիբի՝ նշանաւոր ջարդարարին դալուստը, իբր վայրի Հալէպի:

Հալէպէն-Ուրֆա կառքով 6 օր կը տևէ Ախթերին-էքիզի-Պիրէճիք-Չարմելիք-Ուրֆա ճամբով: Իսկ եթէ երկաթուղիով երթալ հարկ ըլլար կարճ ճամբով, ճարապլուսէն ետք, Արար-Բունարէն անդին, դարձեալ կառքով պէտք էր երթալ Ուրֆա: Յունիս 4ին երկու հայ երեսփոխանները կառքով հասած էին Ուրֆա, ոստիկաններու հսկողութեան տակ: Մէկ օր մնացած Ուրֆայի մէջ, Յունիս 6ի առտուն ճամբայ հանուած կառքով եւ Ուրֆայէն մէկ ժամ (3 մղոն) հեռաւորութեան վրայ՝ Գարաֆէօիլի կոչուած վայրը, երկուքն ալ խուժուած կերպով սպաննուած էին Գարա Քէօյ կոչուած զիւղին արեւմուտքը, ձորին մէջ:

Թուրք կառավարութիւնը մասնաւոր շահադրողութիւն մը ունէր այս ոճիւրին մանրամասնութիւնները ունենալու: Մենք կը տեսնենք այդ յաջորդական վկայութիւններուն մէջ:

Այդ դաւադրութեան մասնակից էին ներքին գործոց նախարարութիւնը, ինչպէս նաև «Թեքիլթի Մախսուսէ»ի չեթէպետները, Սալիլ եւ ձեւակթ պէյերը, ձեւալ վաշան, վայր տոքթ. Բեշիտը եւ աւաղակապետ Չերքէզ Ահմէտը, իր արիւնկալ ընկերներով: Զեր-

քէզ Ահմէտ հազարապետի աստիճան ունէր, կը հրամայէր չերքէզ-թուրք կամաւորներու զուգին: Կռուած էր Վանի մէջ, 1915ի Ապրիլին:

Այդ մասին կայ ակնատես մը, Գերմանիա կրթուած եւ թըրքական ծառայութեան մէջ եղող հազարապետ Տ. ՆՈՎԱԼԷՍ:

Ոճիւրին ներքին ծայրերը պարզելէ առաջ, տեսնենք թէ ի՞նչ ըրաւ թուրք կառավարութիւնը այդ սպանութեան յետոյ: Այս խընդրոյն շրջահայեաց հետախուզութիւնը կարեւոր է, որովհետեւ նոյն անձերն են, որ կատարած են նաև Ուրֆա-Սեւերէկ-Տիգրանակերտ ճամբուն վրայ Ակնուսիի, Սաթակի, Չարդարեանի, Տաղաւարեանի, Ճանկիւլեանի եւ Մինասեանի սպանդը:

Ինչէ՞ր ըրաւ թուրք կառավարութիւնը Զօհրայի եւ Վարդգէսի սպանութիւնը ծածկելու համար:

Թուրք կառավարութիւնը, բոլորովին լուռ մնալով Վարդգէսի սպանութեան մասին, Զօհրայի համար հետեւեալ ստայոյ տեղեկագիրը պատրաստել տուաւ: Ստորև կու տանք բնագիրը Յունիս 8, 1915 թուակիր այդ տեղեկագիրին, որուն կ'ընկերանան յաւելուածական երկու կեղծ տեղեկագիրներ, մին թուրք բժիշկի մը կողմէ եւ միւսը հայ քահանայի մը անունով, կեղծ թուղթերուն ալ վաւերացուած՝ Ուրֆայի քաղաքապետութեան կողմէ:

Յունիս 8, 1915

«Կ. Պոլսոյ երեսփոխաններէն՝ Գրիգոր Զօհրայ էֆենտի, Տիարպեքի ճամբորդած ատեն (ազիւէք էտերէֆ(*)), այստեղէն (Ուրֆայէն) անցնելու ժամանակ անհանդիստ ըլլալուն վրայ, զինք դարձանելու համար, անոր իջեւանած պանդոկը հրաւիրուած էի: Քննելով զինք գտայ, որ հիմնապէս սրտի հիւանդութեան (ասիֆէի գալպ) ենթակայ էր եւ ջղային շնչահեղձութիւն (խուճնագր ասիֆէ) ունէր: Պէտք էր զգած գարմանումները կատարուած էին: Յետոյ ճամբան «մեռած» ըլլալուն լուրը ստանալով, իմացանք որ մեռնողը Գրիգոր Զօհրայ էֆենտին է: «Քննելով մարմինը» տեսայ, որ սրտի հի-

(*) Ոչ բէ կամաւոր ճամբորդած ատեն, այլ բոմուրիսալ տակ՝ զկալ իսկ-խազում հշուած ատեն:

ւանդութենէն կաթուածահար մեռած է: Ուստի այս տեղեկագիրը կը ներկայացնեմ»:

Ուրֆայի Թաղապետական բժիշկ
ԹԱՀՍԻՆ

(Կնիք)

Ուրֆա Լիւայի (Շրջան)

Քաղաքապետական Բժշկութիւն

Թուրքերէն բնագիրներուն լուսապատկերները զանց կ'առնենք:

Զօհրայի մարմինը քահանայի մը կողմէ «օծուած» ըլլալու հեքիաթը:—

Յուլիս 8, 1915

«Դէպի Տիարապէր ճամբորդած ատեն, սրտի «ուշաբարձութիւն» կոչուած հիւանդութենէն մեռած ըլլալով, կրօնական արարողութիւն կատարելու եւ թաղումի համար հրաւիրուեցայ: (Հանդուցեալին անունն իսկ յիշուած չէ): Մօտը հասնելով, բժիշկին կողմէ քննուած եւ սրտի կաթուածէ մեռած ըլլալը կը յայտնէին մեզի: Մեր կողմէ ալ, կրօնական սովորութեանց համաձայն, կատարուեցաւ թաղումը եւ օծուեցաւ (քաղտիս օլունտուղը): Առ այդ այս գրութիւնը, Ուրֆայի Եկեղեցիի քահանան ըլլալով, կը ներկայացնեմ»:

Խնդրարկուս՝

Յուլիս 8, 1915 (Կնիք) ՈՒՐՖԱՅԻ

Հայ Եկեղեցւոյ Բաժնեկրներէն՝

ՔԻՒՐՔՃԻ ՎԱՆԷՍ ՕՂԼՈՒ ՓԱՓԱՁ ՀԱՅՐԱՊԵՏ

Կնիք՝ Ուրֆայի Հայ Եկեղեցւոյ Բաժնեկրներէն Վանէս Օղլու Հայրապետին կնիքը ըլլալը կը հաստատենք:

Ուրֆայի Թաղապետութեան Նախագահ
ՆՈՒՐԻ ՄԻՒՍԼԻԻ(*)

Թուրք տոքթ. Թահսինին սուտ վկայագիրը եւ Հայրապետ քահանային ալ «սրտի ցուէ մեռնող» Զօհրային թաղում կատարելը, Ուրֆայի քաղաքապետին վաւերացումն ալ՝ Յուլիս 8, 1915ին «կատարուած» են:

Զօհրայի եւ Վարդգէսի Յուլիս 6ի սպանութենէն ետք՝ Յու-

(*) Տեղիմ է ըսել՝ «միմարէն գողցողը պատեամը կը պատրաստէ»:

լիս 12, 1915ին Կ. Պոլսոյ գերման ընդհանուր հիւպատոսը՝ Մորթման արձանագրած է որ այդ երկու անձերուն դատաւարութիւնը յետաձգել տալու համար Թալէաթին դիմած է եւ ան մերժած է, եւ Յուլիս 12ին մտադիր է եղեր դիմելու նաեւ Էնվերին:

Անոնց սպանութենէն մէկ շաբաթ յետոյ ուշ էր, որովհետեւ ոճիրը արդէն գործուած էր Յուլիս 6, 1915ին: Ուրֆայի բժիշկին եւ քաղաքապետութեան տեղեկագիրներուն զուգընթաց սակայն, Ուրֆայի միաբնակարարը եւ եփրասի Գժի Մեհգիլի (Կայանի) Հրաւանատարութիւնը, անշուշտ վերէն արուած հրամանի վրայ, գաղտնի քննութիւն կատարած են այս սպանութեանց մասին, եւ իրենց գաղտնի տեղեկագիրները զրկած են Կ. Պոլիս, թէ՛ Թալէաթին եւ թէ՛ Էնվերին (նախարարութեանց հասցէին): Նման տեղեկագիրներ զրկուած են բոլոր հայ բնատարկեալ եւ սպանեալներու մասին, անուններով միասին, ինչպէս յիշուած էր ծածկագիր-հեռագրին մէջ:

1915 Սեպտեմբեր 12ին՝ պատերազմական նախարարութիւնը յաւելեալ մանրամասնութիւններ կ'ուզէ եւ ներքին գործոց նախարարութիւնն ալ, պատերազմական նախարարին գոհացում տալու համար, Հոկտ. 4, 1915ին դաղտնի հեռագրով յաւելուածական թուղթերը կը պահանջէ վերոյիշեալ սպանութեանց մասին, Հալեպի նահանգապետէն: Ահա բնագիրը այդ պահանջագրին եւ անոր հետեւանքով կատարուած արարքները: — Ինչպէս ծածկագիր հեռագրին մէջ ըսուած է: «Զօհրայի մահը «արկածի հետեւանք» եղած է (գազա մեքիմեսի իլէ վեֆաթ): Քիչ ետք Թալէաթի այս սուտն ալ երեւան պիտի ելլէ յաջորդաբար արուելիք փաստաթուղթերու լոյսին տակ:

Ուրեմն սպանութենէն 3 ամիս յետոյ կատարուած այս քննութեանց «թուղթերու լրացում» կը պահանջուէր: Այդ ամսոյն մէջ նաեւ հետեւեալ փնտրողները եւ թղթակցութիւնները տեղի կ'ունենան: Ահա այդ թուղթերուն բնագիրներուն թարգմանութիւնները:—

Պատեմէն մերթիմ գործոց նախարարութեան Հոկտեմբեր 4, 1915 թուակիր ծածկագրին (ուղղուած Հալեպի վալի Մուսթաֆա Ապտիլ Խալիֆին):

«Կարգ մը անհրաժեշտ պատմաւոյններու բերումով (*), Իսթան-

(*) «Դէպի Տիարապէր դրկելու» զրդապատեալը այն էր, որ Զօհրայի եւ Վարդգէսի մարտար եւ համարձակ լեզուներուն եւ արդարութեան ձայնիմ չէին հանդուրժեր:

պուլի երեսփոխան Գրիգոր Զօհրայ էֆենտին հոս (Կ. Պոլիս) մը-
նալը թոյլատրելի չըլլալով, ճրդ բանակի հրամանատարութեան հը-
րամանին յանձնուած էր: Արկածի հետեւանքով մեռած ըլլալու մա-
սին, Ուրֆայի միւթեարքութիւնը եւ Եփրատի Կայանի Հրամանա-
տարութիւնը (Ֆրրաթ Մեկզիլ Գումանտանլըզը) միասնաբար քննու-
թիւն կատարած էին եւ քննութեան վերաբերեալ թուղթերուն, Սեպտ-
12, 1915 թուակիր և 514 թիւ գրութեամբ, պակասները ցոյց տրուած
էին եւ, դանոնք լրացնելու համար, պատերազմական նախարարու-
թիւնը վերադարձուցած էր Մենզիլի (Կայանի) Հրամանատարու-
թեան: Այդ պարագան հաղորդելով Ձեզի, կ'ուզենք, որ Դուք ալ ձեր
կողմէ վստահելի պաշտօնեայ մը նշանակէք եւ վերոյիշեալ քննու-
թիւնները վերահաստատելով փութացնէք:

ԹԱԼԷԱԹ

Ապտիւլ Ահատ Նուրի պէյի ուշադրութեան.—

Անցեալ օր Ձեզի բերանացի խօսած էի: Կարծեմ թէ այդ թուղ-
թերը կը գտնուին Գոլ-Օրտուի հրամանատար Շեւքը փաշայի մօտ:
Հոն փնտոնեցէ՛ք եւ լրացուցէք:

Վալի

ՄՈՒՍԹԱՖԱ ԱՊՏԻՒԼ ԽԱԼԻՔ

ԳԱՂՏՆԻ

Նայիմ էֆենտի ուշադրութեան՝

«Թեգֆերէ»ով մը (գրութեամբ մը) հարցուցէք:

Հոկտեմբեր 6, 1915

ԳԱՂՏՆԻ

Վսեմապատիւ վալիին,

Վերոյիշեալ քննութեանց թուղթերուն Շեւքը փաշային մօտ
չըլլալը հասկցուած է եւ կը հաղորդուի Ձեզի:

(Գաղթականաց) Ընդհանուր Տնօրէնի օգնական
ԱՊՏԻՒԼ ԱՀԱՏ ՆՈՒՐԻ

(Գաղթականաց) Ընդհանուր Տնօրէնի ուշադրութեան՝

«Երէկ յանձնուած են թուղթերը: Ես անձամբ փաշային հետ
տեսնուեցայ: Հետապնդեցէ՛ք խնդիրը»:

Հոկտեմբեր 11, 1915

Վալի

ՄՈՒՍԹԱՖԱ ԱՊՏԻՒԼ ԽԱԼԻՔ

Նայիմ էֆենտի ուշադրութեան.

«Գաղտնի պահեցէք:

(Գաղթականաց) Ընդհանուր Տնօրէնի օգնականի (մուախիմի)
գրութիւնը (թեգֆերէ).—

Հոկտեմբեր 7, 1915

16րդ Գոլ-Օրտուի Հրամանատարութեան

«Պատերազմական նախարարութիւնը 561(*) թիւով եւ Սեպ-
տեմբեր 12 թուակիր զրկուած պաշտօնագրով, Հալեպի Մենզիլի Հրա-
մանատարութեան յայտնած էի որ Գրիգոր Զօհրայ էֆենտի մահ-
ուան քննութեան վերաբերեալ թուղթերը յանձնուած են Եփրատի
Կայանի հրամանատարութեան: Արդեօք յանձնուած են թէ ոչ: Կը
խնդրենք հաղորդել մեզի»:

Անուցի սկզբնատուեր (ընդհանուր տնօրէնի օգնականի)»:

Հոկտեմբեր 29, 1915ին կը հրամայուի գաղտնի կերպով քննու-
թիւններ կատարել թէ.— «Զօհրայ ո՞ր տեղերը, ո՞ր պանդոկը եւ
քանի՞ օր մնացեր է, ճշդելու եւ գտնելու նաեւ նախկին թուղթերը,
որոնք կը գտնուին եզեր Շեւքի փաշային մօտ (Շեւքը փաշա հաւա-
նարար Մենզիլի հրամանատարն էր այդ օրերուն): Այդ ժամանակ
Հալեպի զինուորական կառավարիչն էր Թեֆիք պէյը: Ահա այդ նա-
մակին բնագիրը (**).—

ԾԱԾԿԱԳԻՐ ՀԵՌԱԳԻՐ

(Հալեպի վալիին ուղղուած)

Հոկտեմբեր 29, 1915

«Երեսփոխան Գրիգոր Զօհրայ էֆենտին (այդտեղ) Հալէպ
ո՞ր հոթէլին մէջ, քանի՞ օր բնակեցաւ եւ ո՞ր թուականին Հալեպէն
դուրս հանուեցաւ: Քննութիւն կատարելով իմացէք»:

«Տղա՛ս, ՆԱՅԻՄ էֆենտի, դնա՛ իՅՈՒՊ պէյին: Հոն արձանա-
գրութիւնները կան: Մանրամասնութեամբ քննէ եւ առանձինն թուղ-
թի մը վրայ գրէ՛»:

(*) Բնագրին մէջ թիւ 514 գրուած էր:

(**) Այս գործողութիւնները ինչո՞ւ կ'ըլլային: Եթէ պատմութեամբ առջեւ ֆա-
ուստեան նոյնպէս մը փնտոնու կամ բուն ռիսկը կազմակերպողները իրենց գիրքն
չփնդանելու համար է՝ ի գո՛ւր ջանք:

Ի՞նչ ԳՐԵՑԻՆ ԵՐԿՈՒ ԹՈՒՐՔ ԳՐԱԳԵՏՆԵՐ

Իթթիհատական հեղինակ մը՝ Մելամ Զատէ Ռիֆաթ կը գրէ, թէ «Ձօհրապը եւ Վարդգէսը սպաննուեցան»։ Ուրեմն, «սրտի ցաւէ մեռած» ըլլալու առասպելը կը հերքէ թուրք իթթիհատականը։

Նոյնը կը կրկնէ «Իգտամ» թերթը, հրատարակելով երկու յօդուածներ Անվէտ Ռեֆիգի կողմէ Դեկտեմբեր 26 եւ 29, 1918 թուականներ եւ 7857 եւ 7860 թիւերուն մէջ։ Ան կու տայ Չերքէզ Ահմէտ աւագակին բերնով իսկ պատմուած եւ կատարուած ոճիրին մանրամասնութիւնը։ Սակայն զարմանալին այն է, որ Նոյեմբեր 2, 1916ին Օսմանեան Երեսփոխանական Ժողովին ատենապետը՝ Հաճի Ատիլ պէյ (Իթթիհատի պետերէն, Էտիրնէի նահանգի նախկին կառավարիչ եւ ցեղասպան) Երեսփոխանական Ժողովի անունով կը խնդրէ «ներկայ չեղող Հայ Երեսփոխաններու» մասին բացատրութիւն մը։ Եւ այդ մասին ներքին գործոց նախարարութիւնը կը տեղեկագրէ վարչապետ Սայիտ Հալիմին, որ Նոյեմբեր 15ին կը տեղեկացնէ Երեսփոխանական Ժողովին։

Այսպէսով կը յայտնուի սպանութիւնը ո՛չ միայն Ձօհրապի եւ Վարդգէսի, այլե՛ւ Վոսմեանի, Զրաճեանի եւայլնի։ Ահա բնագիրը այդ տեղեկագրին որ հրատարակուած է Թագվիմը Վեֆայիի մէջ, էջ 99, Նոյեմբեր 28, 1916ի նիստին մէջ։

ՕՍՄԱՆԵԱՆ ՓԱՐԼԱՄԵՆԹԻ ԲԱՐՁՐԱՊԱՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ.

Նոյեմբեր 12, 1916 թուակիր Զեր Բարձրապատուութեան պաշտօնգրին պատասխանն է.—

Ներքին գործոց նախարարութիւնը պաշտօնագրով մը կը հաղորդէ, որ անցեալ Երեսփոխանական Ժողովի նստաշրջանին ներկայ չեղող Երեսփոխաններէն էր ԶՐՈՒՄԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՎԱՐԳԵՍ եւ ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՉՕՀՐԱՊ ԷՖԵՆՏԻՆԵՐԸ ՏԻՐԱԿԵՔԻՐԻ «Պատերազմական Ատեանէն պահանջուած էին» եւ Տիարպեքիր Ղըրկուելու ընթացքին, Չերքէզ Ահմէտի չեթէախումբին մաս կազմողներուն կողմէ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԷԻՆ։ Մարդասպանները Դամասկոսի Պատերազմական Ատեանին կողմէ մահապատիժի ենթարկուած էին։

ՊԻԹԼԻՍԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ (Մինաս) ՉԵՐԱՉ ԷՖԵՆՏԻՆ գորաչարժի յայտարարութենէն առաջ Եւրոպա մեկնած էր եւ վերադարձած չէ։

ԱՐՂՆԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՍՏԵՓԱՆ (Զրաճեան) ԷՖԵՆՏԻՆ այսօր ՈՂՁ ՉԸԼԼԱԼՈՒ մասին տեղւոյն իշխանութիւնը հաղորդած է մեզի։ ՎԱՆԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՎՈՒՄԵԱՆ (Արչակ) ԷՖԵՆՏԻՆ, Վանի աւրատամբեան ընթացքին, Պիթլիսի շրջակայքը ԹԵԼԷՑ ԵՂԱՄ է (սպաննուած է)։

ՓԱՓԱՉԵԱՆ ԷՖԵՆՏԻՆ Մուշի չեթէներուն միացած է եւ զանոնք ղեկավարած ատեն՝ սպաննուելով «գետին տապալած է» (մագքու տիւշմիւշ) (*):

ԿԵՍԱՐԻՈՅ ԵՐԵՍՓՈՒԱՆ ԹՈՒՄԱՅԵԱՆ (Կարապետ) ԷՖԵՆՏԻՆ, անցեալ նստաշրջանէն առաջ, հայրենիքէն հեռացած եւ վերադարձած չըլլալը ստուգուած է։

Ստորագրութիւն (վարչապետ)
ՄԵՀՄԷՏ ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄ

Նոյեմբեր 15, 1916

Արարական թուական

Սեֆէր 2, 1335

(Երեսփոխան Համբարձում Պոյաճեանի մասին, որ կախուած էր Կեսարիոյ մէջ, յիշատակութիւն չկայ պաշտօնագրին մէջ)։

Իրողութիւնը այն է, որ, ըստ վաւերագրերու, ներքին գործոց եւ պատերազմական նախարարութիւնները գործակցած են այս անուշի ոճիրներուն գործադրութեան մէջ։

Վոսմեանը խարէութեամբ հրաւիրուած էր Վանի վալի ճեւտեթի կողմէ տեսակցութեան մը համար եւ դաւադրօրէն ձերբակալուելով տարուած էր Պիթլիս-Տիզրանակերտ նահանգային սահմանազուխին մօտ եւ Պոհթանի կամուրջին վրայ սպաննուած էր, ճեւտեթի, Խայիլի եւ հարիւրապետ Րեշիտի մեղսակցութեամբ։ 6 տարի առաջ, նախկին Երեսփոխան Յակոբ Պապիկեան եւս, որ Ատանայի Ջարդին տեղեկագիրը պիտի ներկայացնէր Օսմանեան Փարլամենթին, իբրեւ ընտրուած Քննիչ Յանձնախումբի անդամ, Յուլիսի սկիզբը, 1909ին թուրք Երեսփոխան խոճայի մը այցելութեան ընթացքին, թունաւոր սիկարէթով մը մեռցուած էր եւ մարմինը սեւցած։

* *

Թրքական հաղորդագրութիւններէն յայտնի է պատրաստուած զանազան թուղթերուն կեղծ ըլլալը կատարուած ոճիրներու մասին։

(*) Երեսփոխան Վահան Փափագեանը բարեբախտաբար ողջ է։

Թուրք վարչապետին նամակը խոստովանութիւնն է կատարուած ոճիրներուն :

Տը Նոկալէս ջարդարար տոքթ . Բեշիտի մասին հետեւեալ տեղեկութիւնները կու տայ .—

«Վալի (Տիգրանակերտի կուսակալ) տոքթ . Բեշիտ պէյը 50 տարեկան է : Փարիզ կըթուած , Կ . Պոլսոյ ազնուական ընտանիքէ մը սերած է : Տիգրանակերտի մէջ զտնուող ամերիկացի բժիշկ մը աքսորել տուած եւ սպաննել տուած է : Իբր թէ ան ջարդերու «սուտ լուրեր հաղորդած է եղեր» :

Նոկալէս կը յայտնէ , թէ հայ զինուորներու ջարդէն տեղեակ էր նաեւ Սեւերէկի միւթեսարրֆ Իհսան պէյը , որ այս «մարդկութեան դէմ դործուած անուշի ոճիրներու մասին տարրական բողոք մը իսկ ըրած չէ» (էջ 150) :

Հազարապետ Տը Նոկալէս , 1917ին երկրորդ անգամ այցելեր էր Տիգրանակերտ : Այս անգամ Տիգրանակերտի պատերուն տակ կը վխտային ազքատ քերտեր , ենթակայ սովի եւ հիւանդութեանց եւ հարիւրաւորներ կը մեռնէին (էջ 392) :

Տոքթ . Բեշիտ ըսեր էր հազարապետ Տը Նոկալէսի .— «Ջարդերու հրամանները եկած են ներքին դործոց նախարար Թալէաթէն» եւ ինք միայն հրամանները դործադրած է :

Հրամանն էր .— «Այրէ՛ , զարկ , մեռցուր» (*) : Թալէաթ աւելցուցեր էր որ «աքսորներուն եւ բնաջնջման բարոյական եւ նիւթական պատասխանատուն ես եմ» (էջ 147) :

Տը Նոկալէս , որ անցած էր Տիարպեքիւրի եւ Ուրֆայի ճամբով , 1915 Յունիսի վերջերը , կ'ըսէ թէ «ճամբաներուն եղերքները լեցուած էին դիակներով» : Ինքը Յուլիս 4ին հասած էր Հայէսլ , երբ Չօհրապ եւ Վարդգէս Հայէսլ եկեր եւ երկու շարաթ ետք մեկներ էին : Նոկալէս ճամբորդած ատեն , երբ Տիգրանակերտէն դէպի Սեւերէկ մեկնած էր , ճամբէն քիչ հեռու նշմարած էր բազմաթիւ «սեւ ծրարներ» : Հետաքրքրուելով մօտեցած էր եւ դիակներու հոտէն իր ձին ծառանալ սկսած էր : Տեսած էր որ ատոնք ամեյլէ քապուրի հայ զինուորներու դիակներ էին : Սուիններով փողոտուած , ծակծկուած էին մարմինները : Տը Նոկալէս կ'եզրակացնէ , որ ջարդերը միայն Տիգրանակերտ քաղաքը սահմանափակուած չէին , այլ ամբողջ նահանգը սպանդանոց մը դարձած էր (էջ 149) :

Տիգրանակերտի մէջ իրեն հետ խօսող ժանտարմայի գունդի

փոխ-գնդապետ Աւրմ պէկն էր , որ իր զունդով կատարած էր այդ զինուորներուն ջարդը (էջ 150) :

Ուրֆա-Սեւերէկ-Տիարպեքիւր ճամբուն վրայ սպաննուած են նաեւ հայ ականաւորներէն հարիւրաւորներ : Ուրֆայէն Տիարպեքիւր 105 մղոն է : Գլխաւոր սպանդանոցներ են՝ Գարաճորուն , Գարապոյուն եւ Գարապաղչէ ըսուած վայրերը :

Գարաճորունը Ուրֆայէն դէպի Սեւերէկ 33 մղոն է : Այդ ճամբուն եղերքին մօտ է նաեւ ձին ՏԵՐԷՍԻ կոչուած վայրը , ուր նահատակուած են Հ . Յ . Դ . ղեկավար Ակնունին եւ անոր ընկերացած հինգ ընկերները : «ձին Տերէսի» կը գտնուի Գարաճատաղի ստորտը դէպի հիւսիս , մէջտեղն է Տիգրանակերտի եւ Սեւերէկի : ձին Տերէսի ձորին մօտը կայ ձին ՏԵՐԷՍԻ դիւղը : Ասոր հարաւը գտնուած Գարաճատաղը 5754 ոտք բարձր է , ձիւնապատ զապաթով : Այս լեռան շուրջ , մինչեւ ստորտը , կան ձորեր եւ բարձրութիւններ : Երբ ստորտը կը հասնի ձին Տերէսի բարձունքը՝ 3600 ոտք է , եւ ձորին խորութիւնը՝ 300 ոտք :

Կ . Պոլսոյ մէջ թուրք Ձինուորական Ատեանի արձանագրութեան կը քաղենք հետեւեալը .

(Թագվիմը Վեֆայի , թիւ 3543)

Դատարանի նիստ՝ Ապրիլ 27 , 1915ի արձանագրութեան .— բառ առ բառ բնագրէն .—

«Սպանութիւնները գործադրուած են Թալէաթ , ձեմալ եւ Էմվէր պէյերու հրամանով ու գիտութեամբ» :

Փաստաթուղթերու 11րդ արցակին մէջ կայ հեռագիր մը , Յուլիս 21 , 1915 թուակիր , որ ուղղուած է Տիգրանակերտի եւ Մամուրէթ իւլ Աղիզի (Խարբերդ) վայրներուն եւ Ուրֆայի եւ Տէր Չօրի միւթեսարրֆներուն , որուն մէջ ըսուած է . «Ճամբաներու վրայ մնացած դիակները քաղիլ եւ զանոնք չնետել ձորերու կամ լիճներու եւ կամ գետերու մէջ : Ճամբաներու վրայ քաղուած (մեռելներու) իրերը (էշիա) այրել» :

Դ . Բանակի (Տէօրտիւննի Օրտու) հրամանատար ձեմալ Պէյն ալ Տիգրանակերտի վալիին Յուլիս 1 , 1915 (1331) թուակիր հեռագրով յայտնած է , հեռագրին վրայ գրուած է ՍՏԻՊՈՂԱԿԱՆ (միւսքանիլ) եւ ԱՆՁՆԱԿԱՆ (զաքա մախսուս տրը) , հետեւեալը .—

«Եւրատ գետէն դէպի հարաւ քշուած դիակները , հաւանական է , ապստամբական շարժման մէջ սպաննուած հայերուն դիակներն են : Ատոնց տեղւոյն վրայ քաղուիլը եւ մէջտեղ քրոզուիլը անհրաժեշտ է» :

(*) Եա'ֆ , վո'ւր , էլտի'ւր :

Փաստաթուղթերու 11րդ արցակի 3րդ փաստաթուղթին պարունակութիւնը հետեւեալն է, որով Տխարպեփրի վալի տոքթ. Բեշիտ կը պատասխանէ ձեմալ պէյի հեռագրին, Յուլիս 3, 1915 թուակիր ծածկագիր հեռագրով, դարձեալ վրան գրուած է ԱՆՁՆԱԿԱՆ բառը:—

«Եփրատը մեր վիլայէթին (Տիգրանակերտի) հետ շատ քիչ կապակցութիւն ունի: (Գետով) քշուած դիակներուն էրգրումի եւ Մամուրէթ-իւլ-Ազիզի կողմերէն եկած ըլլալը հաւանական է: Հոս (Տիգրանակերտի մահանգ) սպտամբական շարժումներու ատեն սպաննուածներուն կամ ուժասպառ ինկածներուն դիակները խոր քարայրներու (տերին մաղարա) մէջ կը նետուին կամ մեծ մասամբ, ինչպէս տեղի կ'ունենայ, կ'այրուին (Իհրաղ) եւ այդ կերպով գործողութիւն կը կատարուի: Թաղելու մասին անգամ կարելի է ըսել քիչ բացառութիւն է»:

Ծ Ա Ծ Կ Ա Գ Ի Ր

Ներքին գործոց նախարարութիւնը Դեկտեմբեր 29, 1915 թուակիր եւ 809 թիով զրկած է հետեւեալ ծածկագիր հեռագիրը:—

«Ճամբաներու վրայ ուժասպառ ինկած (երգրվմը զալմը օլան) ծանօթ անձերուն (հայերուն) դիակները տեսնուած են օտար սպաններու կողմէ: Լսուած է որ ատոնց լուսանկարները տոնուած են: Ատոնց (դիակները) անմիջապէս թաղելը, մէջտեղէն վերցնելը եւ մեզ հաղորդելը խիստ կարեւորութեամբ կը յանձնարարենք:

Ներքին գործոց նախարար՝ ԹԱԼԷԱԹ»

Սիստ կարեւոր է, չէ՞:

Գաղթականներու ընդհանուր անօրէնի օգնականին (ուշագրութեան)

Վալի Մուսթաֆա Սալիբ

Թրքական Ձինուորական Դատարանի արձանագրութիւններէն կը հասկցուի որ Գարաճուրունի եւ ձին Տերէսիի եւ շրջակայ վայրերու սպաննուածներու դիակները խոր քարայրներու մէջ լեցուած են կամ այրած են, ոճիրին հետքերը անհետացնելու համար:

Նոյնը կը հաստատէ նաեւ հաղարապետ Տը Նոկալէս, որ երկու անգամ անցաւ Տիգրանակերտի նահանգէն: Ան կ'ըսէ, թէ հայերու սպանդէն ետք քաղաքը ամայացած էր եւ առեւտուրը բոլորովին անգամալուծուած: Իսկ կատարուած ոճիրներուն հետքերը անհետացը-

նելու ջանքերուն մասին կ'ըսէ թէ «մնայուն հրահանգ մըն էր, անցորդներուն ուշագրութիւնը չհրախրելու եւ դիակները չտեսնելու համար, սրպէսզի զիջակեր կենդանիներ եւ թոչուններ, դիակերութեան միջոցին, չմատնէին եղեռնին վայրը»:

Վերջապէս, Միացեալ Նահանգներու Սրէյթ Տիփարթմընթը եւս (Պետական Պաշտօնատունը) Փետր. 3/16, 1916 թիւով հաճած էր բողոք մը ներկայացնել Ուաշինկթընի գերման ղեկավար Կոմս Պերնըտորֆին, որ ջանան վերջ տալ հայերու դէմ գործուած ոճիրներուն, «մարդկութեան եւ արդարութեան սիրոյն»:

Թրքական մոնիտորական ուղեղը անընդունակ է սակայն ըմբռնելու իմաստը այդ բառերուն:

Ո՞ւր մնացին Թուրքիոյ Խորհրդարանի անդամ՝ սպաննուած երեսփոխաններու, շ. Յ. Դ. ղեկավարներու, ինչպէս նաեւ բիւրաւոր հայ պանծալի նահատակներու աճիւնները: Աստուծոյ միայն ծանօթ է:

Ի յուշ անմահ նահատակներուն, կը կրկնենք բառերը հայ բանաստեղծին.

«Եւ մեր ցալի սրկիիէն,
Անոնց արիւնն ու հոգին.
Հաղորդութիւն վրիժագին,
Մենք կ'ընդունինք սրբօրէն»:

«ԶՈՐՍ ՄԵԾ»ԵՐՈՒ ԳԱՂՏՆԻ

ՆԻՍՏԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1919 Յունուարին, Փարիզի մէջ Դաշնակիցներու Հաշտութեան Վեհաժողովը նիստեր կը գումարէր, գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ իրենց արտաքին գործոց նախարարներուն եւ սակայն քիչ ատենէն յայտնի եղաւ, որ կարեւոր խորհրդակցութեանց գաղտնիքները ժողովէն դուրս կը լսուէին:

Ուստի չորս մեծ պետութեանց պետերը՝ նախագահ Ուուրո Ուիլսըն, Լոյտ ձորձ, Ժորժ Գլեմանսօ եւ Վիթթորո Օրլանտօ, նկատի առնելով այս պարագան, որոշեցին խորհրդակցութիւնները բացարձակապէս գաղտնի կատարել եւ նիստերու արձանագրութիւններն ալ բնաւ չհրատարակել:

«ԶՈՐՍ ՄԵԾ»երը ունեցան 148 գաղտնի նիստեր Մարտ 24, 1919էն մինչեւ Յունիս 28, 1919, 96 օրուան ընթացքին, եւ իրենց արձանագրութիւնը կը բաղկանայ 1101 մեծագիր էջերէ:

Այդ արձանագրութիւնները գաղտնի մնացին 35 տարի, ապա մաս առ մաս երեւան եկան Անգլիոյ մէջ՝ Լորտ Հենքիի ձեռագրով, Իտալիոյ մէջ՝ «Նուովի Ռիֆորտի է Ֆրամէնթի տի Տիյարիօ» հատորով (Միլան 1938) եւ 1944-46ին Ուաշինկթընի, «Փէյփըրս Ռիլէյ-թինկ թու թիւ ֆարէյն Ռիլէյընս թու թիւ Եուսայթըրտ Սթէյթըս, Թիւր Փարիզ Փիւ Քանֆրընս», հատոր 5 եւ հատոր 6, եւ 1955ին Ֆրանսայի մէջ՝ Փօլ Մանթուի նոթերը՝ «Սանթըր Նասիոնալ Տը լա Ռըշերշ Սիանթիֆիք»ի կողմէ:

Նախագահ Հուվըր, Ուիլսընի մասին իր հրատարակած գրքերին մէջ, իր ազդուներէն մէկը նշանակած է «ԶՈՐՍ ՄԵԾ»ԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Կարելի եղաւ միջոցով մը ձեռք բերել այդ արձանագրութեանց ընդերը, որ կը վերարկուի միջազգային զանազան խնդիրներու, բայց մեզ հետաքրքրող գլխաւոր մասերն են ոճրագործներու պատասխանատուութեան եւ պատժումի հարցը եւ Հայաստանի մասին եղած խորհրդակցութիւնները:

Այս գրութիւնը կը կազմենք ուղղակի քաղելով այդ արձանագրութեանց ընդերէն, որ պատմական մեծ արժէք ունի:

Ապրիլ 1, 1919ի (15րդ նիստին մէջ) արձանագրուած է (էջ 114)․—

ԼՈՅՏ ձՈՐՁ․— Գերման պատասխանատու յանցաւորներու մասին տեղեկագիր ստացանք, զոր կրնանք քննել:

ՈՒԻԼՍԸՆ․— Անգլիոյ Չարլս Ա. թագաւորը (*) վատ նկարագիր ունէր եւ պատմութեան ամենամեծ ստախօսն էր, սակայն իր շուրջ ունէր բանաստեղծներ եւ սրբացուեցաւ. իր կրած «չարչարանք»ներուն համար նկատուեցաւ մարտիրոս մը: Նոյնպէս՝ Մերի Սթուըրթ, որ վատահամբաւ կեանք մը ունէր:

ԼՈՅՏ ձՈՐՁ․— Մերի Սթուըրթի պարագան տարբեր է: Ան շատ հրապուրիչ կին մըն էր:

ՈՒԻԼՍԸՆ․— Նափուլէոնն ալ գերման Քայզերին նման փորձեց իր տիրակալութիւնը տարածել աշխարհի վրայ, սակայն Սէնթ Հելենի մէջ իր արդելափակումը դիւցազնավէպի մը վերածուեցաւ:

ԼՈՅՏ ձՈՐՁ․— Ես պիտի ուզէի, որ պատմութեան ամենամեծ ոճիրին պատասխանատուն (Վիլհելմ Բ.) պատժուի:

Վերոյիշեալ նիստին մէջ տեսակէտներ յայտնուեցան Թուրքիոյ մասին եւ պարզուեցաւ, թէ Թուրքիոյ արեւելեան սահմանը պիտի ըլլայ՝ Արեւմտեան Հայաստանի արեւմտեան սահմանը: Իսկ Յունաստանի կողմը Թուրքիոյ սահմանը պիտի ըլլայ ազատագրական

(*) Չարլս Ա.ը գլխատուած էր Յուլիոս 30, 1649ին:

սահման մը միայն: Թուրքիա արեւմտեան սահմանին վրայ պիտի ունենայ նաւահանգիստ մը՝ չունչ առնելու համար, իսկ Կ. Պոլիսը եւ Նեղուցները պիտի դրուին Ազգերու Դաշնակցութեան հովանաւորութեան տակ: Կը մնար միայն հետագային որոշել, թէ Թուրքիոյ մնացած մասը անկախ պիտի ձգուի՞ թէ ոչ պիտի դրուի հովանաւորութեան մը տակ, Կ. Պոլսոյ նման:

Ապրիլ 2, 1919ի 16րդ նիստին մէջ, ժամը 4ին (էջ 121).—

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Ես կ'ուզեմ խօսիլ նորէն ոճիրներու պատասխանատուութեանց մասին: Մեր (անգլիական) Յանձնախումբը որոշած է, որ պատժուին մեծերը, որպէսզի արդիւտի ապագայ պատերազմի վտանգը: Ոճրագործները պէտք է պատասխանատուութեան կոչուին, որովհետեւ անոնք բռնաբարեցին Դաշնակիւններ եւ ատոր հետեւանքով միլիոնաւոր անձեր մեռան, անհատներու դէմ վայրագութիւններ գործուեցան, աղջիկներ յափշտակուեցան եւ պոռնկութեան բռնադատուեցան, բաց ծովերու վրայ նաւեր ընկղմուեցան: Պէտք է որ այդ ոճրագործները պատժուին: Եւ այդ յանցաւորները պէտք է մեզի յանձնուին: Եւ մեզի յանձնուին նաեւ այն բոլոր փաստաթուղթերը, որոնք պիտի լուսարանեն Դատարանը: Պէտք է կազմել արդարութեան ատեան մը, որուն մասնակցին մեծ եւ փոքր ազգերու ներկայացուցիչները եւ արձակուին դատապարտութեան վրձիւներ:

ՈՒԻԼՍԸՆ.— Փոքրամասնութիւն կազմող Ամերիկեան Յանձնախումբը տարբեր տեղեկագիր մը տուած է եւ չ'ուզեր որ պատերազմի հեղինակները հետապնդուին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Թէեւ ձափոնն ալ դէմ է Քայզերը պատասխանատու բռնուելուն: «Միքստո մը չաստուած մըն է եւ պատասխանատու չէ», կ'ըսէ ձափոն:

ՈՒԻԼՍԸՆ.— Ձափոնի առարկութիւնը ծիծաղելի է: Ամերիկայի մէջ Քանկրէսն է որ պատերազմ կը յայտարարէ, բայց իրական պատասխանատուն նախագահն է: Ան որ խորհուրդ կու տայ պատերազմի համար: Նախագահ Մըք Քինլի հակառակ էր պատերազմին, բայց Քանկրէսը պատերազմ յայտարարեց Սպանիոյ դէմ: Մեզի համար դժուար է պատասխանատու բռնել Քայզերը. կ'ըսուի,

թէ ան ցաւելով հրահանգ տուած է պատերազմը սկսելու եւ ըսած է թէ «վերջը պիտի զղջաք»:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մենք կ'ուզենք որ պատժուին պատասխանատուները, ով որ ալ ըլլան: Անգլիական սկզբունքով՝ «Թագաւորը չարիք չ'ըներ»: Պատերազմը սկսելու պատասխանատուն վարչապետն է (օրինակ՝ Ասքուիթը) եւ ոչ թէ Թագաւորը: Գերման Քայզերի պարզան տարբեր է: Ան ուղղակի գործադիր իշխանութիւն ունի, հետեւաբար պատասխանատու է:

ՈՒԻԼՍԸՆ.— Մեր պատժելու իրաւունքին վրայ կը կասկածիմ: Պատերազմիկները կողմ են միաժամանակ, դատաւոր չեն կրնար ըլլալ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Անգլիա եւ Ամերիկա կողմ չեն: Պատերազմեցան արդարութիւն գործադրելու համար:

ՈՒԻԼՍԸՆ.— Մենք արդարութիւն ըրինք զէնքով: Բայց մեզի զէնք չտրուեցաւ յանցաւորներ պատժելու համար:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մեր զէնքի յաջողութեան պատճառով կը պահանջենք յանցաւորները: Ինչպէս որ պատերազմական զերի մը, երբ ոճիր գործած է, կը դատուի:

ՈՒԻԼՍԸՆ.— Վտանգաւոր նախընթաց մը պիտի ըլլայ, եթէ ապագային յաղթող ազգ մը կարող ըլլայ դատելու յարձակող կողմ մը, միջազգային օրէնքով:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Այդ պարագային պէտք է Ազգերու Լիկը դատէ: Դաշնակցերու բռնաբարումը միջազգային ոճիր մըն է:

ՈՒԻԼՍԸՆ.— Պատասխանատուութիւնը հաւաքական է, պէտք չէ անհատականի վերածել: Պէտք է պատժուին միայն ներքին ոճիր գործողները:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Պատերազմի ատեն կը պատժուին պատերազմական օրէնքները բռնաբարողները:

ՈՒԻԼՍԸՆ.— Խաղաղութիւն ստորագրուելէ ետք, պատերազմի շրջանին քայլերը եւ սովորութիւնները կը շարունակուի՞ն:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մենք կրնանք ըսել թէ խաղաղութիւն պիտի չըլլայ, մինչեւ որ յանցաւորները յանձնուին եւ պատժուին:

ՈՒԻԼՍԸՆ.— Ես չեմ ուզեր, որ պատմարանները համակրութիւն մը արձանագրեն Գերմանիոյ ի նպաստ: Գերմանիան պատմութեան անկէճքը եղաւ: Չեմ ուզեր աւելի հեռուն երթալ, չեմ ալ ուզեր որ ըսեն մեզի, թէ «արդար դատի մը մէջ մեր իրաւունքին դուրս ելանք»: Պէտք է զգուշանալ որ պատմութիւնը մեզ չյանդիմանէ վճիռի մը մասին, դատական սկզբունքի մը չզոյրութեան պատճառով:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Իմ կարծիքս այն է, որ պատմութիւնը կրնայ մեզ դատապարտել մեր ցոյց տուած տկարութեան համար: Բացարձակ իրաւունք ունինք պատժելու ոճրագործները, երբ մեր ձեռքին մէջ են: Այդ ոճիրները իրենց նախընթացը չունին:

ՈՒԻԼՍԸՆ.— 1870ի պատերազմին փաստաթուղթերը աչքէ անցուցի: Գերմաններուն այն ատեն ըրածը կը նմանի մեր հիմակուան ընկերքին:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Ո՛չ, գերմանները 1870ին վայրագ եղած էին, բայց հրամանի համաձայն ոճիրներ գործած չէին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եթէ ոճրագործները պիտի չպատժուին, չ'արժեր հաշտութիւն կնքել: Առարկութիւն չունիմ, եթէ Ազգերու Լիկը կազմէ դատարանը:

ՈՒԻԼՍԸՆ.— Տրուելիք վճիռը կարող է զգացումներու ազդեցութեան տակ տրուիլ: Վկայաթուղթերը երբ կը կարդացուին, պէտք է զգոյշ ըլլալ վճիռ տալէ եւ գործել մի միայն դատողութեամբ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Հինգ տարիէ ի վեր ոճիրներ կը լսենք: Աւելի խիստ պատիժներ պէտք է պահանջուին:

ՈՒԻԼՍԸՆ.— Ես անզգայ չեմ: Չեմ ալ ուզեր զգացումով շարժիլ: Ես իմ վրայ չեմ ուզեր ճնշում բանեցնել՝ դատողութեանս անպահովութիւնը պահպանելու համար:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Առանց զգացուելու ոչինչ չ'ըլլար: Յիսուս զգացումով չգործե՞ց երբ Տաճարէն դուրս վոնտեց առեւտուր ընողները:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մեծ անպատեհութիւն մը կը նկատեմ: Կ'ուզուի նախ սկզբունք մը հաստատել, որովհետեւ սոսկալի բաներ պատահած են, բայց «հիմա չենք պատժեր, ապագային կը պատժենք»ը լրջութիւն չէ:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Առաջին դատաւարութիւնը պէտք է ըլլայ վրձնական եւ խիստ, եւ պէտք է կազմէ սկզբնաւորութիւնը մեծ դատի մը:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եւրոպայի խաղաղութիւնը պաշտպանելու համար հաւաքական պատիժ կ'ուզենք: Թող այդ պատիժը տնօրինէ Ազգերու Դաշնակցութիւնը եւ ան պատժելու իր կարողութիւնը պէտք է ցոյց տայ:

ՈՒԻԼՍԸՆ.— Ոճիրներու մասին ձեզի պէս կը մտածեմ: Միայն կ'ուզեմ որ խիզճս զոհացում գտնէ:

Ապրիլ 8, 1919, 25րդ նիստ, ժամը 3ին (էջ 184).—

ՈՒԻԼՍԸՆ.— Ներկայիս տեղեկագիրը յօդուած առ յօդուած քննենք:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— 1.— Ոճրագործներու արարքները, 2.— Միջազգային օրէնքի հակառակ ոճիրներ գործուած են, արձակուած հրամանի վրայ:

ՈՒԻԼՍԸՆ.— Եթէ սպայ մը արգիլուած արարքի մը հնազանդիլ չէ մերժած, գործած է բարոյական ոճիր մը, բայց ատիկա դատական ոճիր մը չէ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Հրաման տուող սպաները պէտք է պատժուին: Գերիները չարչարողներն ալ պատասխանատու են:

ՈՒԻԼՍԸՆ.— Ոճրագործներու արարքներու մասին տարակար-

ծուծիւն չկայ: Միայն ի՞նչպէս պիտի պատժենք եւ ի՞նչ օրէնքով: Միջազգային տատան մը պէտք է բաղկանայ Ֆրանսացիներէ, անգլիացիներէ, պելճիքացիներէ, իտալացիներէ եւ պիտի գործադրէ օրէնքը հօն, ուր ոճիրը գործուած է: Դժուար պիտի ըլլայ ձեռք անցընել ոճրագործները: Դժուար ալ չէ փճացնել ոճիրի հրամաններուն հետքերը: Կը վախճամ թէ վկայութիւններն ալ պակսին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Ոճիր գործողը պատասխանատու է, եթէ ցոյց չի կրնար տալ տրուած հրաման մը ոճիրի գործադրութեան համար: Ոճիր է դաշնադրերու բռնաբարումը: Չորս պետութիւններ 1839ին երաշխաւորած էին Պելճիքայի չէղոքութիւնը: Այդ դաշինքը բռնաբարողը աշխարհի ամենէն վատ ոճրագործն է: Կամ պէտք է արգելափակուի Նափոլոնի նման եւ կամ պէտք է դատենք զինք որ պատժուի, որպէսզի ապագային վնասելէ արգելուի, եւ միաժամանակ արգելուին անոր ապագայի ինթրիկները (*):

ՔԼԵՄԱՆՍՕ.— Հանդիսաւոր դատավարութիւն մը անհրաժեշտ է, եւ լաւ տպաւորութիւն կը ձգէ:

ՈՒԻԼՍՐՆ.— Կ'ուզեմ որ Քայգերը ընդհանուր արհամարհանքի առարկայ դառնայ: Անոր ի նպաստ որեւէ համակրութիւն չստեղծուի:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Պէտք է դերման Կայսրը դատուի իր գործած ոճիրին համար:

ՈՒԻԼՍՐՆ.— Ոճիր կայ, բայց պատիժ չկայ: Ազգերու Լիկը պէտք է նոր օրէնքը անցընէ, սկզբունք մը դնէ եւ պատիժ որոշէ:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Դաշնագիր բռնաբարելը յանցանք է: 3—4 միլիոն դերմաններ մեռան: Ոճրագործը ազա՞տ պիտի մնայ (**):

(*) Եթէ 1919ին թուրք ոճրագործները բոլորը պատժուած ըլլային, թուրքիոյ մէջ ոչ «վարդոզ վերկիսի»ի ոճիրները կը գործուէին եւ ոչ ալ Սեպտեմբեր 6, 1955ի գազամուրիւնները, թուրքիոյ քաղաքներում մէջ՝ ոչ-թուրք տարրերու դէմ:

(**) Թուրքերն ալ բռնաբարած էին Պերլինի դաշնագիրը, Քափիթիլիասիոններու դաշնագրերը, Բարեմորգուներու համաձայնագիրը, Եւայլն:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եթէ Քայգերը առանձինն հրացան մը առած մտնէր Պելճիքայի հողը եւ պելճիքացի պահակը բռնէր զինքը, անշուշտ պիտի դատուէր եւ կախուէր: Ան 1.000.000 զինուոր զրկեր է Պելճիքայի վրայ, ինչո՞ւ ազատ պիտի մնայ:

ՈՒԻԼՍՐՆ.— Կ'ուզեմ որ հանրային կարծիքը իմ խղճիս հակառակ չըլլայ: Իրաւագիտական նրբութիւնները մէկդի դնենք, Քայգերը աշխարհի արհամարհանքին ենթարկենք: Ատկէ մեծ պատիժ չ'ըլլար: Դատարան չքաշենք զինք:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Ճէյմս Բ. թաղաւորը(*) ատելի էր, բայց կողմնակիցներ ունեցաւ եւ խառնակութիւններ ըրաւ: Վիլհելմ Բ-ի համար նոյնը կրնայ պատահիլ: Կ'առաջարկեմ դատել զինք, մի միայն Պելճիքայի չէղոքութեան բռնաբարման յանցանքին համար եւ, երբ Տինանի եւ Լուվենի վկաները պատմեն անոր վայրագութիւնները, դատարաններուն պիտի ըսենք՝ «դատեցէ՛ք»:

ՈՒԻԼՍՐՆ.— Ի՞նչպէս պիտի կաղմէք դատարանը:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Պետութեանց Գերագոյն Ատեններու անդամներէն: Եւ Պելճիքան պէտք է ըլլայ ընդհանուր դատախազը (էջ 188):

ՔԼԵՄԱՆՍՕ.— Իւրաքանչիւր պետութիւն կու տայ մէկական անդամ:

ՈՒԻԼՍՐՆ.— Սերպիան ալ պէտք է մասնակցի:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Դատարաններու մեծամասնութեան քուէն բաւարար պէտք է նկատուի:

ՈՒԻԼՍՐՆ.— Վճիռը պէտք է միաձայնութեամբ տրուի:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եթէ 4ի դէմ 1 ձայնով Քայգերը անպարտ արձակուի, տպաւորութիւնը շատ աւելի վատ պիտի ըլլայ:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Պատժուած են (Ֆրանսայի մէջ) Լուի 16րդը, Անգլիոյ մէջ ալ՝ Չարլս Ա.ը: Պատասխանատուութեան օրէնքը պէտք

(*) Ճէյմս Բ. գահագուրկ եղած էր Անգլիոյ մէջ, Դեկտեմբեր 11, 1688ին:

է գործադրել: Գերման ժողովուրդը Վեհապետին հետ համաձայն էր (սալիքէր): Գերմաններու վայրագութիւնները աննախընթաց են, չարչարած եւ տանջած են կիներ: Դատաւորներուն պիտի ըսենք. «Գտէ՛ք սկզբունքներ եւ հիմնուած անոնց վրայ դատեցէ՛ք պատմութեան ամենամեծ ոճրագործը»:

ՈՒԻՒՍԸՆ.— Օրինական միջոց չկայ Քայգերը ձեռք ձգելու համար:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Հոլանտայի կ'ըսենք.— «Եթէ Քայգերը չյանձնէք, չէք կրնար մասնակցիլ Ազգերու Լիկին»:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Եթէ խաղաղութիւնը պիտի ջնջէ բոլոր պատասխանատուութիւնները եւ ոճրագործներուն ներում պիտի շնորհուի, ժողովուրդներու մէջ ատելութեան սերմեր պիտի ցանուին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Պիտի ըսենք որ խաղաղութիւնը պիտի չստորագրուի մինչեւ յանցաւորները մեզի չյանձնուին:

ՈՒԻՒՍԸՆ.— Ես Ռապրթ Լենսինկին կարծիքը պիտի առնեմ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Անգլիոյ մէջ մեր 7 մասնագէտները որոշեցին ամբաստանել Քայգերը: Անգլիական կառավարութեան տեսակէտը այս է:

ՕՐԼԱՆՏՕ.— 100.000 իտալացի զերիներ մեռան զերմաններու ձեռքով:

Ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը (էջ 194).

1.— Պատերազմական օրէնքներու դէմ գործողները զինուորական ատենի պիտի բերուին եւ դատուին: Անհատի դէմ գործուած ոճիրները պիտի պատժուին՝ վնասուած երկրին զինուորական ատենին կողմէ: Եթէ զանազան հպատակներ կան՝ դատաւորները պիտի ըլլան խառն:

2.— Քայգերը պիտի յանձնուի մասնաւոր դատարանի մը, դատուելու համար: Դատարանին պիտի մասնակցին 5 պետութիւններէ մէկական դատաւորներ: Ան պիտի դատուի միջազգային բարոյականի դէմ գործած ոճիրին համար: Պատիժը պիտի որոշուի դատարանին կողմէ:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Պելճիքա դատախազ ըլլալ չ'ուզեր. ըլլալով միապետութիւն մը՝ չ'ուզեր դատել վեհապետ մը:

ՈՒԻՒՍԸՆ.— Եթէ Պելճիքա չ'ուզեր, խնդիրը դարձեալ չի փոխուիր: Պելճիքայի չէզոքութիւնը բռնաբարուած է, Պելճիքան կը լսուի միայն իբրեւ վկայ: Բնազիրը փոխելու հարց չկայ:

Նիստ 62րդ, Մայիս 5, 1919.—

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մեզի կը յայտնուի թէ զերմանները պիտի մերժեն յանձնել յանցաւորները (*):

ՔԼԵՄԱՆՍՕ.— Գերմանները, պատասխանատուութեան հարցը ճշդելու համար, խառն յանձնախումբ մը կազմել կ'ուզեն: Սակայն, մենք է որ քննութիւն պիտի կատարենք, իրենք կրնան միայն զբաւոր պատասխան մը տալ:

(Պառն յանձնախումբ չ'ընդունուիր):

ՈՒԻՒՍԸՆ.— Պատասխանատուութեան հարց պիտի դրուի՞ նաեւ Աւստրիոյ մասին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Ո՛չ, ներկայ պարագան՝ Քարլ թագաւորի մասին՝ նոյնը չէ: Պատերազմի յայտարարութեան ատեն ան չկար:

ՈՒԻՒՍԸՆ.— Բայց պիտի հետապնդուին աւստրիացիներ, որոնք անհատներու դէմ ոճիրներ գործած են:

ՕՐԼԱՆՏՕ.— Անուններ ունինք բազմաթիւ անձերու, որոնք պէտք է հետապնդուին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Աւստրիական իշխանութեանց այն անձերը, որոնք հրամաններու հեղինակներ են, պէտք է որ պատժուին:

(*) «ԶՈՐԱՅԵՐՈՒ ԱՅՍ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՄԷՉ՝ ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱԳՐԸ (ՔԼԵՄԱՆՍՕ) ԵՒ ԼԱՅՍ ԶՈՐԱ յԱՆԿԱՐԱՅԻՆՈՒ ՄԱՍԻՄ շԱՏ ԱՆԻՒ ԳՈՐԾԱԿԼՈՒՄ ԵԳՈԾ ԵՄ, ԲԱՄ ՈՒԻՍԸՆ ԵՒ ՕՐԼԱՆՏՕ:

Նիստ 78, Մայիս 14, 1919 (էջ 70)

ՕՐԼԱՆՏՕ.— Աւստրիոյ թաղաւորի պարագան Քայզերին չի նմանիր, բայց պիտի պահանջենք Միջազգային Իրաւունքի դէմ ուճիրներ գործող անհասները, որոնք այսօր աւստրիական բանակի մասնակից նկատելու է:

ՌԻԻԼՍԸՆ.— Դժուար է Աւստրիայէն պահանջել անձեր, որոնք իր իրաւասութեան տակ չեն գտնուիր:

ՕՐԼԱՆՏՕ.— Պէտք է միջոցներ գտնել ձեռք անցընելու: Օրինակ, ոճրագործ մը «Պոհեմիա ծնած եմ» ըսելով, որովհետեւ Վիեննա ծնած չէ, անպատիժ պէտք չէ մնայ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Դատարան մը պիտի կազմուի մեծ պետութիւններէն՝ մէկական դատաւորներ անդամ ունենալով:

ՕՐԼԱՆՏՕ.— Դաշնագրին մէջ առանձին յօդուած մը պէտք է դնել՝ տարրեր պետութեանց մօտ ապաստանող ոճրագործներու մասին: Եւ իւրաքանչիւր պետութիւն իր իրաւասութեան տակ եղող ոճրագործները պատժելու է:

Նիստ 120, Յունիս 12, 1919 (էջ 39, ժամը 11իմ).—

ՔԼԵՄԱՆՍՕ.— Պատասխանատուութեանց մասին գերմանները «Սպիտակ Գիրք» մը(*) հրատարակած են: Եւ հակառակաբաններ ունին: Պէ՞տք է պատասխանել:

ՌԻԻԼՍԸՆ.— Պատմական վիճարանութեան չենք ուզեր սկսիլ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Պատասխանատուութեանց չուրջ է եւ անպատասխան չենք կրնար թողուլ:

(*) Ծ. 2.— Քլեմամտոյի ակնարկած գերման «Սպիտակ Գիրք» հետեւեալն է.— Վայսպուխ.— Տոյլանտ շուրտիկ, Տոյլէս Վայսպուխ իւպէո տի Ֆերանթ-վոթլիհէհայթ տէո Ուրհէպըս տէս Քոթիլըս (Գերմանիա յանցաւոր է: Գերման սպիտակ գիրք պատերազմի հեղինակ ըլլալու պատասխանատուութեան մասին):

ՔԼԵՄԱՆՍՕ.— Առանց ուսումնասիրելու «Սպիտակ Գիրք»ը կարելի չ'ըլլար պատասխան մը տալ: Մենք համոզուած ենք, որ Ֆրանսական Հանրային կարծիքին համար անպէտ է այդ գիրքը:

ՌԻԻԼՍԸՆ.— Մերժելու ենք, թէ Գերմանիան պատասխանատու չէ: Կը բաւէ պատասխանել, թէ չենք հաւատար գերման կառավարութեան ըսած որեւէ մէկ բառին:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Պիտի ստուգեմ թէ գերման «Սպիտակ Գիրքին» Ֆրանսերէն թարգմանութիւնը ունի՞նք:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Լաւ է, որ դիտանք բնագիրը: Երբ գերմանները մերժեն ստորագրել դաշնագիրը, գերմաններու պատասխանատու ըլլալը, թշնամութեանց վերսկսելու ատեն, մեր ժողովուրդները պէտք է դիտան: Գերմանները իրենց համալսարաններուն մէջ ամբողջ 50 տարի պատերազմի պատրաստութեան մասին կը քարոզէին:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Գերմաններուն պէտք է շսել նաեւ, որ ընդհանուր գինաթափում պիտի ըլլայ միայն այն ատեն, երբ գերմանները դաշնագրի պայմանները հաւատարմօրէն գործադրեն:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եթէ խիստ վարչութիւն մը պիտի հաստատուի, ես պիտի նախընտրէի որ կարճ ժամանակով գրաւում մը միայն ըլլար:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Պէտք է երաշխաւորութիւն ունենանք, որ եւ մըտական պայմանները պիտի յարգուին: 1871ին գերման բանակը դուրս չելաւ Ֆրանսայէն, մինչեւ որ պատերազմական տուգանքը չվճարուեցաւ: Այսօր կացութիւնը նոյնն է: Դրամը պէտք է վճարուի: Գրաւման Ֆրանսական բանակը կարգապահ է:

Նիստ 141, Յունիս 25, 1919, ժամը 4իմ.—

ՌԻԻԼՍԸՆ.— Ես դաշնագրի վաւերացումի մասին ամերիկեան Քանկրէսին մէջ չեմ կրնար խօսիլ, միայն գրաւոր պատգամ մը կըրնամ տալ: Ամերիկայի մէջ վիճարանութիւնը ամիս մը կը տեւէ: Ծերակոյտի ոեւէ մէկ անդամը կը խօսի այնքան որքան որ կ'ուզէ:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Մէկ ամիս ալ Ֆրանսայի մէջ վիճարանութիւնը կը տեւէ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Դաշնագրի վաւերացումը պէտք չէ երկարի: Եթէ գերմանները հակառակին յանձնել ոճրագործները, պէտք է ազդարարենք անոնց, ըստ թելադրութեան մեր ընդհանուր դատախազ էրնըսթ Փոլոքի: Ի՞նչ միջոցներ ձեռք պիտի առնենք Քայլերը ձեռք ձգելու համար Հոլանտայէն:

ՈՒԻԼՍԸՆ.— Դաշնագիրը գործադրութեան դրուելէ առաջ չենք կրնար պահանջել Քայլերը:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Ան չէզոք երկիր ապաստանած է:

ՈՒԻԼՍԸՆ.— Դատաւորները պէտք է արժանաւոր անձերէ նշանակուին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Դատաւորները պէտք է ըլլան իրազեկ անձեր: Դատաւարութիւնը պէտք է ըլլայ Անգլիոյ կամ Ամերիկայի մէջ: Ֆրանսայի կամ Պելճիքայի մէջ ըլլալու պարագային, անպատեհութիւն կայ: Գերման արշաւանքի դէմ զգացումները տակաւին թարմ են:

ՈՒԻԼՍԸՆ.— Ամերիկացիները չեն ուզեր դատաւարութիւնը կատարել Ամերիկայի մէջ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Անգլիոյ մէջ դատելու է:

(Համաձայն են բոլորը):

Պէտք է պատրաստել մեր ընկերքներու ցանկը, յոռաջիկայ երկու կամ երեք ամսուան համար (էջ 514-516):

Ծ. Հ.— Դժբախտաբար ինչ որ որոշուած է այս գազտնի միտերուն մէջ, մշոյնութեամբ չէ գործադրուած եւ ոմրագործներէն շատեր անպատիժ մնացած են:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Նիստ 141. Յունիս 25, 1919, ժամը 4ին (էջ 516).— (Նիստերը տեղի կ'ունենան Փարիզի մէջ):

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Ե՞րբ պիտի սկսինք վիճել թուրքիոյ խնդիրներու մասին:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Թուրքերու կողմէ յուշագիր մը ստացած ենք, որուն միջոցով կ'ուզեն հասկնալ, թէ ի՞նչ պիտի ընենք Եգիպտոսի եւ Կիպրոսի մասին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Օ՛, ատոնց խորհուրդները, հազար բարի! Շատ մեծ պէտք ունէինք ատոնց! (Ժողովական): Հետեւեալը կ'ուզեմ յայտնել.— Ամերիկայի նախագահը պիտի մեկնի եւ մենք չենք կրնար երեսի վրայ թողուլ թուրքիոյ պատերազմական վիճակը եւ ճրգճրգէլ այսպէս երկու ամիս եւս: Կրնանք այժմ համաձայնիլ թուրքիոյ պարտադրուելիք պայմաններու մասին: Եւ վերապահել ամբողջովին Օսմանեան կայսրութեան հողերու բաժանման խնդիրը, մինչեւ որ դիտանք, թէ Ամերիկան ո՞ր մասնաշրջանները յանձն պիտի առնէ: Չենք կրնար սպասել մինչեւ որ ամերիկեան Մերակոյտը որոշում տայ թուրքիոյ հետ խաղաղութիւն կնքելու մասին:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Եթէ կրնանք համաձայնիլ, ես պատրաստ եմ:

ՈՒԻԼՍԸՆ.— Կը մտածեմ թէ կրնանք ներկայիս ընել հետեւեալը եւ սահմանափակել մեր ընկերքը: Նախ վերցնել թուրքիայէն ինչ որ անոր պիտի չպատկանի այլեւս, որ են.— ՀԱՅԱՍՏԱՆԸ, արաբական երկիրները եւայլն. եւ ստիպել որ կանխաւ ընդունի մեր պայմանները՝ իր հողերու ապագայ ճակատագրի մասին:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Ի՞նչ պիտի ընենք Կոստանդնուպոլսոյ մասին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Դուք (թուրքիոյ) անդամները կը կտրէք: Գլուխն ալ պիտի կտրէ՞ք:

ՈՒԻԼՍԸՆ.— Ներկայիս կրնանք ըսել թուրքերուն հետեւեալը. «Հայաստանը, Միջագետքը, Չմիւռնիան, Սուրիան եւայլն այլեւս ձեզի չեն պատկանիր» եւ կը սկսիք զրաւել այդ շրջանները:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մենք այլեւս զինուոր չունինք Հայաստանի մէջ. եթէ թուրքերուն ըսենք որ «Յունիս 1 (1919)էն սկսեալ Հայաստան կը դադրի ձեզի պատկանելէ», անմիջապէս հոն զինուոր պիտի զրկեն ամէն ոք ջարդելու վերսկսելու համար:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Թուրք կայսրութեան հողերու մասին մեր վեր-

լը, որ զիտցած է կաղձակերպել եւ վարել մեծ կայսրութիւն մը եւ յարգած է քրիստոնէական կրօնքը (*):

«Թուրքիան մտած է բարենորոգումներու ճամբուն մէջ եւ եղած է Արեւմուտքի հետ շփման մէջ: Թուրքիա յառաջդիմութիւն կը փափաքի եւ Օսմանեան կայսրութիւնը երեք մասերէ կը բազկանայ.— Թրակիա, Փոքր Ասիա եւ Արարիա:

ա) Թրակիոյ մէջ խաղաղութիւն հաստատելու համար կարեւոր է, որ Էտիւրնէն պաշտպանութիւն յարձակումներու դէմ: Արեւմտեան Թրակիոյ մէջ Թուրքերը մեծամասնութիւն են, այսօր պուլկարական դարձած. Թուրքիա կը պահանջէ, որ իր սահմանը երկարի մինչեւ Գարա-Սու, որ Թասոս կղզիի դիմացը կը թափի ծով:

բ) Փոքր Ասիան եւ կղզիները պէտք է մնան Թրքական: Եթէ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, հիմնադրուած Հայաստանը մանցուած է Գաղմակից եւ Ընկերակից պետութիւններէն, իր սահմանները կրնան որոշուիլ փոխադարձ համաձայնութեամբ: Ամէն դիւրութիւն պիտի տրուի Օսմանեան կայսրութեան հայերուն, որոնք կ'ուզեն հաստատուիլ Թրքական հողի վրայ: Արդար եւ արդարասէր վերաբերմունք կ'ապահովուի բոլոր փոքրամասնութեանց, որ Օսմանեան կայսրութեան մէջ կը գտնուին:

գ) Արար երկիրները պիտի ստանան վարչական լայն ինքնավարութիւն, Սուլթանի գերիշխանութեան տակ: Սուլթանը կը նշանակէ անոնց կառավարիչները: Մասնաւոր ռեժիմ մը կը պատրաստուի Մեքքէի համար: Թրքական դրօշակը պէտք է ծածանի բոլոր շրջաններուն վրայ: Արդարութիւնը պիտի բաշխուի Սուլթանի անունով: Դրամին վրայ պիտի ըլլայ անոր նկարը: Խաղաղութիւն ստորագրելէ ետք, դաշնակից զինուորները պիտի հեռանան Թրքական հողերէն, բացի ապահովութեան համար համաձայնութեամբ անհրաժեշտ նկատուած ուժերէն: Օսմանեան կառավարութիւնը կը յայտարարէ, որ պատրաստ է վերջնականապէս բարեկամական ձեւով ճշդելու Եգիպտոսի եւ Կիպրոսի իրաւական վիճակը: Օսմանեան կայս-

(*) Ծ. 2.— Թուրքիան երեսը շամ կաշի է. «ձիհատ»ով գործադրուած ամսարկայիմ ռիթմերուն արիւմը դեռ չորցած չէ:

(**) Ծ. 2.— Արդար եւ արգարասէր վերաբերմունք են 1912-13ի «Վարլըզ Վերկիսի»ն եւ 1955 Սեպտեմբեր 6ի քրքական ռիթմերը:

րութեան ժողովուրդները պիտի չընդունին իրենց հողերուն բաժանումը, ոչ ալ մանտէյքի դրութիւն մը: Բոլորը կապուած են Օսմանեան պետութեան: Ամէն կողմէ կը բողոքեն, կ'ուզեն Միութիւն եւ Անկախութիւն»:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Թուրք պատուիրակութեան այս յուշագիրը մեզի հետ կը կատակէ («պոն փլեգամբրբի»):

ՈՒԻԼՍԸՆ.— Երբեք չեմ տեսած նմանօրինակ ապուշութիւն: (Ժը մ'է ժամէ ռիէն վիւ տը փլիւ պէր) (էջ 520):

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Թուրքերու քաղաքական անկարողութեան լաւագոյն փաստը այն է, որ իրենց պետութեան յլուխը դրած են միշտ ուրիշ ցեղերու ներկայացուցիչները:

ՈՒԻԼՍԸՆ.— Անհրաժեշտ է պատասխանել Թուրքերու այդ գրութեան:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մեր պատասխանը տրուած է արդէն Պալթուրի նպատակով: Կ'առաջարկեմ յայտնել թէ ստացած ենք իրենց այդ յուշագիրը: Եւ Թուրք պատուիրակութեան կ'ըսենք. «Տուցեքնիդ գա-ցէք»:

ՈՒԻԼՍԸՆ.— Թուրքերը եկած են միայն իրենց տեսակէտը պարզելու, մենք պարտաւոր չենք անոնց պատասխանելու:

ՔԼԵՄԱՆՍՕ.— Ձեւականութեան համար պատասխան մը տալու է: Անհրաժեշտ է տեսնել զիրենք:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Որեւէ ձեւով ճամբու դնելու է զիրենք: Ես կ'առաջարկեմ առաւօտեան նիստ մը յատկացնել Թրքական ինդրոյն: Տեսնենք թէ լուծում մը պիտի կրնանք գտնել: Կրնանք Թուրք պատուիրակութեան իմացնել:

ՈՒԻԼՍԸՆ.— Մեր որոշումները որեւէ կապ չունին այս երեք (Թուրք) կոպիտ եւ այլանդակ անձերուն (ֆոլոք) հետ:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եթէ միայն կրնայինք խստիւ խաղաղութիւն մը հաստատել:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Վախնամ որ չկրնանք:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Մանտէյթները ե՞րբ պիտի քննենք:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Երբոր ուզէք: Միայն Կ. Պոլսոյ խնդիրը մէկ օրէն միւսը չի լուծուիր (էջ 521):

143րդ նիստ, Յունիս 26, 1919, ժամը 4ին:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Փոքր Ասիոյ մասին պիտի խօսուի Թիթոնիի հետ:

ՈՒԻԼՍԸՆ.— Իտալացիները, եթէ պիտի մնան Դաշնակիցներուն հետ, պէտք է հեռանան Փոքր Ասիայէն եւ Ֆրումէէն:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Պէտք է նկատի ունենալ որ Իտալիա մեր նեղ օրերուն 500·000 մեռեալ ունեցաւ:

ՈՒԻԼՍԸՆ.— Իտալիան միացաւ այն կողմին, որ իրեն աւելի շատ խոստում տուաւ:

148րդ նիստ, Յունիս 28, 1919, ժամը 4·15ին
(Վերսալիի մէջ, վերջին նիստ)

Քլեմանսօ կարգաց չորվեկի մէկ նամակը, որով կ'ուզէր ինքը դատուիլ Քայզերի փոխարէն:

ՈՒԻԼՍԸՆ.— Պեթման չորվեկ իր կեանքին միակ լաւագոյն բանը կ'ընէ:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Դատարանը պիտի պատասխանէ:

ՈՒԻԼՍԸՆ.— Քայզերը Պելճիքայի չէզոքութիւնը բռնաբարեց, միւս յանցաւորները պատերազմ առաջ բերին: Պեթման չորվեկին մեկնաբանութիւնը չ'ընդունուիր:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Ի՞նչպէս պիտի ստիպենք, որ գերմանները յանձնեն յանցաւորները:

ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Եթէ Գերմանիան մերժէ յանձնել մեր պահանջած անուանացանկի վրայի անձերը, այդ պարագային չենք կրնար ազատ արձակել դերման պատերազմական զերիները:

ՔԼԵՄԱՆՍՍՕ.— Անոնցմէ շատերը մինչեւ հիմա ազատ արձակուած են: Գերմաններուն պէտք է ըսենք, որ «զերիներու ազատ արձակումը կախում պիտի ունենայ ամբաստանեալ անձերուն մեզի յանձնուելէն»:

ԶՈՐՍ ՄԵԾԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻԻՆՔԸ

Զորս մեծերու խորհրդակցութեամբ, ձեւակերպումով մարմին առին ոճրագործներու պատժումի համար դաշնագրային հետեւեալ տրամադրութիւնները.—

1.— Վերսալիի դաշնագրի թիւ 227, 228, 229, 230 յօդուածները գերման ոճրագործները դատելու համար խմբագրուած են:

Այս դաշնագիրը ստորագրուած է Յունիս 28, 1919ին, 28 պետութեանց ներկայացուցիչներուն կողմէ (տե՛ս Քառնեկիի հրատ., էջ 121):

2.— Նոյն իմաստով եւ պարունակութեամբ պատժական յօդուածներ դրուեցան Սէն Փերմէն Ան Լէյի դաշնագրին թիւ 173, 174, 175, 176 յօդուածներով՝ պատժելու աւստրիացի ոճրագործները: Այս դաշնագիրն ալ ստորագրուած է Սեպտեմբեր 19, 1919ին, 17 պետութեանց ներկայացուցիչներուն կողմէ (տե՛ս Քառնեկիի հրատ., էջ 326):

3.— Նոյն իմաստով պատժական տնօրինումներ դրուեցան Նէպլի Սիւռ-Սէնի դաշնագրի թիւ 118, 119, 120 յօդուածներուն մէջ, պատժելու համար պուլկար ոճրագործները: Այդ դաշնագիրը ստորագրուած էր Նոյեմբեր 27, 1919ին, 17 պետութեանց ներկայացուցիչներուն կողմէ (Քառնեկիի հրատ., էջ 692):

4.— Նոյն իմաստով պատիժներ տնօրինուեցան Թրիանոնի դաշնագրի թիւ 157, 158, 159, 160 յօդուածներով, պատժելու հունգար ոճրագործները: Այդ դաշնագիրը ստորագրուած էր Յունիս 1, 1920ին, 17 պետութեանց ներկայացուցիչներուն կողմէ (Քառնեկիի հրատ., էջ 517):

5.— Նման պատժական տրամադրութիւններ գրուեցան Սերի դաշնագրի թիւ 226, 227, 228, 229, 230 յօդուածներուն մէջ, պատժելու համար թուրք ոճրագործները, մասնաւորապէս Ջարդարանները, թիւ 230 յօդուածի մանրամասնութիւններով: Այդ դաշնագիրը ստորագրուած էր Օդեսոսու 10, 1920ին, 13 պետութեանց ներկայացուցիչներուն կողմէ (26 ստորագրութիւն), որոնցմէ մին՝ Հայաստանից: Կը սահանջուէր յանձնել ոճրագործները, անոնց վերաբերեալ տեղեկութիւնները և վաւերացրելը (Քառնեկիի հրատ., էջ 862):

Իսկ Հայաստանի մասին՝ Սերի դաշնագրին 140րդ յօդուածը կ'արտայայտուէր անյայտացած անձերը գտնելու և յանձնելու մասին. 141րդ յօդուածով կ'որոշուէր թրքական լքեալ զոյքերու իւրացումի մասին օրէնքը չեղեալ համարել և յափշտակուած շարժուն և անշարժ լքեալ զոյքերը վերադարձնել իրենց սէրերուն: Եւ առանց ժառանգորդի մնացած սեփականութիւնները յանձնել պատկանեալ համայնքին և ոչ թէ թուրք կառավարութեան:

Սերի դաշնագրի 88րդ յօդուածով կը վաւերացուէր Հայաստանի անկախութիւնը, 89րդ և 90րդ յօդուածներով կ'որոշուին Հայաստանի սահմանները: 92րդ յօդուածով կ'որոշուին Վրաստանի և Ատրպէյճանի սահմանները և 93րդ յօդուածով կ'որոշուէին Հայաստանի մէջ գտնուող փոքրամասնութեանց իրաւունքները և Քրանգի-Քի ազատութիւնը:

Նոյն Սերի դաշնագրի 62րդ և 64րդ յօդուածներով կ'որոշուէին Հայաստանի և Քիւրտիստանի սահմանները, ցոյց տրուած մասնաւոր քարտէսով մը, հրատարակուած էջ 788ի մէջ, պատրաստուած՝ զնդապետ Լորէնս Մարթինի կողմէ:

Թիւ 531 յօդուածով կ'որոշուէր Հայաստանի համար ազատ անցք Պաթումէն դէպի Սեւ ծով, և 352 թիւ յօդուածով Տրապիզոնի նաւահանգիստը կը տրուէր Հայաստանի: Եւ Հայաստան կը խոստանար իր բաժինը վճարելու, թուրքիայէն լրացուած հողերու համեմատութեամբ, թրքական հանրային պարտքին, որոշուած թիւ 241 և 244 յօդուածներով:

1919ի աշնան զօր. Հարպրտ իր տեղեկագրով Հայաստանի համար 750 միլիոն տոլարի փոխատուութեան մը պէտքը շեշտած էր հինգ տարիէն վճարելի, Հայաստանը կանգնելու համար իրրև պատնէջ պետութիւն մը թուրքիոյ և Ռուսիոյ միջև: Ամերիկա մերժեց տալ և այսօր այդ գումարին քառապատիկը յումպէտս կուտայ թուրքիոյ, և ատոր փոխարէն իր ստանալիքը հաւանաբար երբեք պիտի չարդարացնէ իր տուածը:

1914-18ի պատերազմի ընթացքին, թուրքերը յափշտակած էին ամերիկեան առևտրական մեծ ընկերութիւններու տղարանքները, որոնց գումարն էր 52.000.000 տոլար, փաստաթուղթերով հաստատուած: Թուրքերը ամերիկացիներուն տալ ուղեցին միայն 2 օ/օր՝ 1.200.000 տոլար, այն ալ 12 տարիէն վճարելի և, մի քանի մասնավճար տալէ ետք, այդ չնչին գումարն իսկ չվճարեցին:

Իսկ այսօր, ամերիկեան կառավարութիւնը, Գանձային Պաշտօնատան արձանագրութեան համաձայն, Հայաստանի տրուած, Ա. Համախարհային պատերազմի վախճանին, 11.959.917 տոլարին վրայ բարդած է 24.999.095 տոլար տոկոս և Հայաստանի պարտքը բարձրացուցած է 36.959.013 տոլարի:

Դժբախտութիւնը այն եղաւ, որ Ուիլսոնի ճակատագրական մէկ սխալով իր հակառակորդ հանրապետականները վրէժ լուծեցին իրմէ և ձախողանքի մատնեցին Ազգերու Լիկը:

Ուիլսոն երբ Փարիզ եկաւ, չէր խորհրդակցած ամերիկեան կուսակցութեանց ղեկավարներուն հետ և, ամէն չարչարանք ու նեղութիւն յանձն առնելով, Փարիզի մէջ արտաքին խաղաղութիւնը չահեցաւ, բայց Միացեալ Նահանգներու մէջ, երկրին ներսը կորսնցուց պայքարը: Ատոր պատճառը հետեւեալն էր:

1912ին, երբ նախազահական ընտրութիւն կատարուեցաւ, հանրապետական Թէոտոր Ռուզվելթ «Յառաջդիմական» անունին տակ բաժնեց Հանրապետականները. Թաֆթ և Թէոտոր Ռուզվելթ պայքարեցան առանձինն և երկուքն ալ պարտուեցան, Ուիլսոն չահեցաւ: 1916ի ընտրութեան ալ Ուիլսոն պարտութեան մատնեց Չարլզ Է. Հիւզը: Մեսեչուսեցի ծերակուտական ծերունի հանրապետական Հենրի Քեպլթ Լաճ, Ուիլսոնի Փարիզ գտնուած ատեն, վերակազմեց հանրապետական ներկայացուցիչները, ընդդիմանալու համար Ուիլսոնի ջանքերուն, մեռցնելու Ազգերու Լիկը և մերժելու Վերսայի դաշնագիրը: Նոյեմբեր 19, 1919ին 39ի դէմ 55 քուէով մերժեցին,

զանազան վերապահումներով (*): Ուիլյամսը պայքարի լծուած էր Փարիզի մէջ՝ Ուէլչ Վհուկին՝ Լոյս ձորճի եւ հին դիւանադէտ Քլեմանսոյի դէմ, պայքարած էր իր իտէալներուն համար, սակայն Ամերիկա վերադարձին, մեց շարաթ վիճարանութիւն կատարուած էր դաշնադրի մասին: Ուիլյամս 19 Օգոստոս 1919ին 3 ժամ արիւն-քրտինք մտած էր ընդդիմողիքներուն պատասխանելու եւ Սեպտեմբեր 1919ին, 22 օրուան մէջ 36 ճառեր խօսած էր, ճամբորդելով Ամերիկայի մէջ 8-000 մղոն: Փամերով ինքնաշարժի վրայ մնացած էր, ժողովրդական ցոյցերու եւ դորահանդէսներու ատեն, յոգնած, ուժասպառ եղաւ եւ որովհետեւ մանուսնոյ պատերազմի 22 ամիսներուն արդէն մաշած էր, ունեցաւ ջղային պրկում եւ երբ Սեպտեմբեր 16, 1919ին տուն վերադարձաւ, կաթուած ունեցաւ եւ իր անձը զոհեց իր զազախարներուն համար:

Յետոյ, Միացեալ Նահանգները, Վերսայլի դաշնադրով ապահովուած ըրտր իրաւունքները ստանալով, դաշինք կնքեցին Գերմանիոյ հետ՝ Օգոստոս 25, 1921ին, Օգոստոս 24ին՝ Աւստրիոյ հետ, եւ Օգոստոս 29, 1921ին՝ Հունգարիոյ հետ:

Ոճրագործները պատժելու մասին Չորս Մեծերը 1919ին 3 ամիս «Ղուր ծեծեցին Փարիզի մէջ», Քայլերը եւ այլ ոճրագործներ, թուրք ջարդարարները գատի քաշելու համար դրեթէ ոչինչ ըրին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը պետութեանց եւ Արդերու Լիկին չկրցածը ըրաւ, համեմատական չափով մը, — պատժեց կարգ մը մեծագոյն ոճրագործներ, շան սատակ ընելով զանոնք: Երբ պաղարիւն դատողութեամբ նկատի առնուի այս պարագան, կը տեսնուի որ միջազգային բարոյականութեան եւ արդարութեան յաղթանակն էր ասիկա, անաչառ պատմութեան անջեւ:

(*) Մ. Հ.— Տես «Սկնաթ կնա աը Լիկ աւ Նէյլըն», Հեմրի Քեպըք Լառ 1925 (էջ 179), եւ «Ամերիքըն Տիփլսեաի», Բապըքք Ֆեբրուի, 1959 (էջ 314):

ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐԿՐ

Ովքե՞ր էին իրական ոճրագործները, որոնք այս աշխարհի մէջ շլուած մեծագոյն եղեռնը յղացան ու գործադրեցին:

Ովքե՞ր էին այն բազմաթիւ գազանները, որոնք օժանդակեցին, խրատեցին, հրամայեցին, գործօն կերպով մասնակցեցան եւ յետոյ եղեռնագործները արդարութեան ճանկէն խլելու համար փախուսանին դիւրացուցին:

Այդ ոճրագործութեանց պատասխանատուներն են.—

ա.— Առաջին աստիճանի ոճիրի հեղինակները, որոնք գործադրեցին այդ արարքները, ըլլա՛յ իրենց սեփական ձեռքով, ըլլա՛յ անմեղ գործակալներու միջոցով: Այս դասին մէջ են՝ Իթթիհատի կազմը ամբողջութեամբ եւ «Թեշքիլաթը Մախսուսէ»ի չեթէական կազմակերպութեան բոլոր անդամները, իրենց քանդիչ կազմածքով եւ սարքով:

Իթթիհատը 1906-1907 տարիներուն 300 գործօն անդամներ միայն ունէր: 1912ին Իթթիհատականներու ընդհանուր թիւը 7-000ի բարձրացած էր, որուն 5-000ը Բուսեյիի մէջ ու 2-000ը Անատուլուի ամբողջ նահանգներուն մէջ:

1915-16ին գրեթէ ամէն թուրք, շատ քիչ բացառութեամբ, հրճիդ գրականութեան եւ ջարդի հանրային քարոզչութեան շնորհիւ Իթթիհատական աւերիչ մտայնութեամբ շաղախուած էր:

բ.— Երկրորդ աստիճանի ոճիրի հեղինակներն են անոնք, որ ուղղակի ներկայութեամբ կամ անուղղակի կերպով օգնեցին ու խրատեցին այդ գազանային արարքներու գործադրութիւնը:

Այդ դասին մէջ են պետական պաշտօնակալներ՝ թուրքիոյ կամ Պերլինի մէջ: Ատոնք զերման զինուորականներ կամ քաղաքային պաշտօնեաներ էին, որոնք զուրսէն կը դիտէին ու կը հսկէին ինչ որ թուրքերը երկրին ներսը կը գործադրէին:

Գերման պաշտօնակալները ոճիրին մասնակից կը նկատուին, քանի որ իրենք մտադրութիւն ունեցած են այդ սպանութեանց օժանդակելու եւ իրենց օգնութիւնը անհրաժեշտ դատած են, ապագային նիւթապէս նպաստաւորուելու համար: Այս մասին փաստաթուղթեր են՝ գերման դեսպան Վանկենհայմի Մայիս 18/31, 1915 թուակիր հեռագիրները եւ Փետրուար 5/18, 1913, Ապրիլ 13/26, 1913, Օգոստոս 8, 1913, Մայիս 7, 1914 գրութիւնները:

Եւ ատոնց համար է որ դեսպան Մորկնթաու ըսաւ.—

«Գերմանիան, որպէս քրիտոնեայ պետութիւն մը, թողուց որ մահմետական ցեղ մը ընանջէ քրիտոնեայ ժողովուրդ մը»:

գ.— Երրորդ խումբին մէջ են անոնք, որ ոճիրէն առաջ հայթայթեցին, խրատեցին, հրամայեցին եւ պատրաստեցին գլխաւոր չարազործները, թէեւ իրենցմէ ոմանք ոճիրի գործադրման պահուն անձամբ ներկայ չէին:

Այս դասին մէջ են հրճիգ գրականութիւն տարածողները, ջարդի եւ մոլեռանդութեան քարոզիչները եւ թերթերու խմբագիրները, թուրք եւ գերման, էօմէր Նաճի եւ նման այլ հարիւրաւոր թուրք քաղաքական եւ զինուորական բժիշկներ ու բազմաթիւ երեսփոխաններ, որոնք զօրաշարժին զուգընթաց թափով գործի լծուեցան:

դ.— Կային նաեւ 4րդ դասակարգի պատասխանատուները, որոնք եղեռնէն յետոյ օղնեցին, օժանդակեցին, քաջալերեցին թուրքերը՝ զիտնալով հանդերձ թէ անոնք զանդուածային սպանութիւններ գործադրող եւ սեփականութեանց յափշտակութիւններ կատարող չարապործներ էին:

Այս խումբին մէջ են՝ մաս մը քեմալականներ եւ մեծ պետութիւններէն ոմանք:

«Մաս մը քեմալականներ» ըսինք, որովհետեւ քեմալականներու մեծամասնութիւնը նախապէս իթթիհատական եղած ըլլալով՝ առաջին աստիճանի եղեռնագործներուն մէջ են:

Յուլիս 31, 1915ին՝ Էնվէր տոքթ. Եքի ներկայութեան ըսած էր, թէ մինչեւ այդ թուականը՝ թուրքերը սպաննած էին 300.000 հայեր, իսկ դեսպան Մորկնթաու կը յիշէ Էնվերի խօսքը, թէ «ա՛լ հայը բարեկամ չի կրնար ըլլալ, լմնցնենք, որպէսզի վրէժ չառնեն»:

Եւ իրաւ ալ Յունիս 1, 1915էն մինչեւ Օգոստոս 6, 1915 տա-

րադրուածներուն թիւն է 1.400.000, այլ թիւին մէջ չեն Պոլսոյ 161.000ը, Իզմիրի 27.000ը եւ Հալեպի 22.000ը:

Այդ աշխարհաստան, ահաւոր եղեռնին զերակատար պատասխանատուներն եղան.—

1.— Թալէաթեան գահիճին 8 անդամ նախարարները, բազմաթիւ խորհրդականները, փոխանորդներ եւ օգնականները:

2.— 80 երեսփոխաններ:

3.— Մերակատականներուն մեծամասնութիւնը, շատ չնչին բացառութեամբ:

4.— Իթթիհատի Կեդրոնի ներկայ եւ նախորդ գործօն 49 անդամները: Ատոնցմէ կարեւոր թիւ մը կը ներկայացնեն զինուորականներ, զինուորական եւ քաղաքային բժիշկները:

5.— 19 վալիներ իրենց եաւերներով (թիկնապահ), ստորադասներով եւ իրենց շրջանակներով, որոնք համաձայն էին իրենց հետ (երկու բացառութիւններ եղան.— Հալեպի ձեւալը եւ Քասթեմունիի Բեշիւրը, որոնք փոխանորդուեցան ուրիշ արիւնարրուներով):

6.— 52 միթեսարըֆներ (մէկ բացառութեամբ.— Եոզկաթի ձեմալէն, որ փոխանորդուեցաւ զարձեալ ուրիշ արիւնակալով մը, Պողազլայանի ջարդին հեղինակ Քեմալով, որ յետոյ կախուեցաւ):

7.— 281 գայմապամներ (երկու բացառութիւններ եղան Տիարպեքիի նահանգէն):

8.— 819 նահիէ-միւտիւներ:

9.— 60 ոստիկանութեան տնօրէններ, ոստիկանական ուժը եւ ոստիկան-զինուորներու ուժը՝ հրամանատարներով միասին:

10.— 18 տեֆթերտարներ:

11.— 280 մալ-միւտիւներ:

12.— 1.800 Մեքլիսը Եիսթիյարիյէի անդամներ:

13.— 3 զօրարանակի հրամանատարներ (3րդ, 4րդ եւ 6րդ), իրենց սպաներով եւ իրենց բժիշկներով միասին:

14.— 32.000 անդամները «Թեքիթիսթը Մախսուսէ»ի չեթէական կազմակերպութեան: Ատոնց մեծամասնութիւնը բանտերէն ազատ արձակուած արիւնարրու եղեռնագործներ էին:

15.— 200.000 անձեր եւ աւելի՝ զանազան քաղաքներու եւ զիւղերու բնակիչներէն եւ բազմաթիւ «պաշտ-պողոտք»ներ (կարգ մը վայրերու մէջ թուրք ժողովուրդը մասնակցած է ոճիրներուն մինչեւ 75 առ հարիւր համեմատութեամբ եւ ուրիշ վայրերու մէջ ալ 66 առ հարիւր համեմատութեամբ):

Գիւրիսն գործ մը չէ սպաննել 2.000.000 անձ, յափշտակել ա-

տնց շարժուն եւ անշարժ կալուածները, կողոպտել եւ իւրացնել 2.000 եկեղեցիներ ու վանքեր եւ 4.000 դպրոցներ:

16.— Յրդ զօրարանակին կապուած Յրդ պահեստի զօրարածիւնը, իր բովանդակ կազմով:

17.— Ձինուորական եւ դիւանադիտական գերման սպաներ ու պաշտօնեաներ, որոնք խորհուրդ տուին, յանձնարարեցին, քաջալերեցին ջարդարարները եւ յետոյ անոնց ապաստանարան դարձան եւ օժանդակեցին:

(Գլխաւորներն եղան՝ Պեթման Հովվէկ, Վանկենհայմ, Լիման Փոն Չանտերս, Հումանն եւ բաղմաթիւ երկրորդական եւ չորրորդական օժանդակողներ, որոնց մէջ են մի քանի հիւպատոս եւ փոխ-հիւպատոսներ):

18.— Մամուլի ներկայացուցիչներ եւ թուրք ու գերման խումբազիրներ:

Վերոյիշեալ 18 խումբի պատկանողները փոխադարձ գործակցութեամբ զլուխ հանել ջանացին հայ ցեղի բնաջնջումը:

Վերջն տրուած հրահանգի համաձայն, ստորին դասակարգի թուրքերը կ'ըսէին.—

«Արքրզ Թուրքիտա՝ Մարդոս, Թորոս, Ղիրադոս, Նիկոզոս դալմիյաճագ: ձեմնէք տեֆթերլերի դափամըշ տըր: էրմեմի իսմի իլէ աոտամ գալմայաճագ»:

Այդ արիւնկղակ մարդասպանները «ազգային հերոսներ» նկատուեցան:

Այիս, Եփրատ եւ Տիգրիս գետերը եւ անոնց հովիտները, ինչպէս նաեւ Տաւրոսի եւ Անթի-Տաւրոսի լեռները, Միջագետքի անապատները ոճրավայր դարձան, մասնաւորապէս 1915ի գարնան, ամրան եւ աշնան, եւ 1916ի Մայիսէն Օգոստոս եւ գրեթէ մինչեւ զինադադարի կնքումը, Հոկտեմբեր 30, 1918:

Այդ ժամանակամիջոցին մէջ էր, որ 66 քաղաքներու եւ 2.500 գիւղերու հայ բնակչութեան բնաջնջումի եղանք գործադրուեցաւ: 2.000 եկեղեցիներ եւ վանքեր կողոպտուեցան եւ քանդուեցան: Ինչպէս նաեւ շարժուն եւ անշարժ կալուածներ յափշտակուեցան:

Սպանուեցան՝ 300.000 այրեր, 400.000 կիներ, 400.000 մանուկներ (որոնց կէսը 1-14 տարեկան), 250.000 հարսներ եւ աղջիկներ, 100.000 հայ զինուորներ (վերապրած զինուորներ 20.000). Նահատակուած զինուորներու 17.000ը միայն Սերաստիոյ մէջ: Ընդամէնը՝ 1.450.000

Վերոյիշեալ թիւերուն մէջ չեն՝	
Չտարապրուած	200.000
Արգելափակուած	150.000
Կովկաս անցած	150.000
Տարապրուելէ ետք հրաշքով ողջ մնացած	100.000
Գումար՝	600.000

Արգելափակուածներէն 150.000ը տակաւին կը մնայ չազատագրուած վիճակի մէջ, որպէս թրքական հպատակ:

Ընդհանուր նիւթական կորուստի գումարն է 5.000.000.000 տոլար:

Հինգ միլիոն տոլար, որ իր մէջ կը պարունակէ զարդեղէն, գոհարեղէն, կանխիկ դրամ, հող, տուն, կահ-կարասի, այգի, արտ, գործիքներ եւ առեւտրական ապրանքներ:

Երբ բնդհանուր պատերազմը լրացաւ եւ արդարութեան ու հաշուեյարդարի ժամը հնչեց, թուղթի վրայ ունեցանք Սեւրի դաշնագրի 144, 228, 230 յօդուածները.—

Յօդուած 144.— «Ջարդերու եւ տարապրութեանց մէջ գործօն մասնակցութիւն ունեցողները հարցաքննութենէ յետոյ պիտի տարապրուին»:

Յօդուած 228.— «Թուրք կառավարութիւնը բոլոր փաստաթուղթերը եւ տեղեկութիւնները պիտի յանձնէ՝ պատասխանատուները ճշդելու համար»:

Յօդուած 230.— «Թուրք կառավարութիւնը յանձն կ'առնէ յանձնելու ջարդերու պատասխանատուները»:

Եւ Դաշնակիցները յօդուած 230ով իրենց կը վերապահեն դատելու եղանակը:

Եւ արդիւնքը եղաւ՝ ոչնչութիւն:

Եւ մէկ ու կէս միլիոն հայերու դիակին հաշիւը բաց կը մնայ տակաւին որպէս յաւիտենական ամօթ մը «քրիստոնեայ», «յաղթական» պետութեանց ճակատին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



	<u>Էջ</u>
Հեղինակը եւ իր գործը — Ս. ՎՐԱՑԵԱՆ	5
Ցեղասպան քուրքը — ԻՔՔԻԿԱՏՐ	9
Կազմակերպութիւն քրքական ջարդարարական մեքենային մագործ գորախումբերուն	33
Թեշփիլաքը Մախսուսէ	50
Վաւերագրերու գողութիւնը	58
Ինչպէս տեղեկագրուեցան Ապրիլ 24ի ձերբակալութիւնները Ամերիկա եւ Գերմանիա	63
Տրապիզոնի նահանգի հայերու ցեղասպանութիւնը	72
Սեբաստիոյ նահանգի հայերուն ցեղասպանութիւնը	86
Թրքական ցեղասպանութեան կազմակերպութիւնը եւ Շապին Գարահիսարի հերոսամարտը	110
Ցեղասպանական ոճիրները Խարքերդի նահանգին մէջ	119
Անգարայի նահանգի հայերուն դէմ ցեղասպանութեան ոճիրները	133
Թրքական ցեղասպանութիւնը Նիկոմիդիոյ, Բիւքանիոյ եւ Պրուսայի շրջաններուն մէջ	155

Յեղասպանութիւնը Ատանայի նահանգին մէջ	165
Ցեղասպանութիւնը Տիգրանակերտի նահանգին մէջ	187
Թրքական ցեղասպանութիւնը Եկեղեցական նակատի վրայ	210
Թրքական ցեղասպանութիւնը Կրթական նակատի վրայ	221
Հայոց լինել գոյփերու եւ կալուածներու թալանը թուրքերու կողմէ	226
Արդարութիւն Ալա թուրքա	242
Ցեղասպանութեան կարեւոր վկայութիւններ, վաւերագրեր, վնասագրեր	261
Մահապատիժ Բաբերդի տարագրութեան առթիւ	292
Ինչպէս արդարութիւնը յանգեցաւ խայտառակութեան	303
Կարեւոր գաղտնի փաստաթուղթ մը	315
Զարդարարական ժողովներու արձանագրութիւնները	329
Թուրք կուսակցութիւնները եւ Իթթիհատը	348
Ոնրագործները Մալթայի մէջ	369
6 հայ պետական երեսփոխաններու սպանութիւնը	376
«Զորս Մեծ»երու գաղտնի նիստերու արձանագրութիւնները	394
Ցեղասպան թուրքը	417

Այս գրքի նիւթերու դասաւորման եւ սրբագրութեան օժանդակած են Հայր ԱՆԴՐԱՆԻԿ ԿՌԱՆՅԱՆ, ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹՂԵԱՆ եւ ԵՐՈՒԱՆԴ ՄՈՆՈՑԱՐԵԱՆ:

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԱԹԻՒ 302

Տպարան ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Պատուէր 280

Տպաքանակ 2000

Պրակ 26 3/4

Աւարտում 10 Մարտ 1968